

## Ալվինա Գյուլունյանի ընդհանուր խմբագրությունը

Խմբագիր՝  
Լիանա Հակոբյան

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԵՆՐԻԿԱՍ ԴԱԿՏԱՐԱՍԸ ԸՆԴԴԵՄ ԼԻՏՎԱՅԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ  
CASE OF HENRIKAS DAKTARAS v. LITHUANIA  
(Որոշում գանգատի ընդունելիության վերաբերյալ)  
Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ կետեր,  
6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետեր, 7-րդ հոդվածի 1-ին կետ

2. ՎԻՏՈԼԴ ԼԻՏՈՒԱՆ ԸՆԴԴԵՄ ԼԵՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌԸ  
CASE OF WITOLD LITWA v. POLAND  
4 ապրիլի 2000թ.  
Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետ

3. ԺԵՍԻՈՒՍՆ ԸՆԴԴԵՄ ԼԻՏՎԱՅԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌԸ  
CASE OF JESIUS v. LITHUANIA  
31 հուլիսի 2000թ.  
Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ կետեր

4. ՀՈՐՎԱՍՆ ԸՆԴԴԵՄ ԽՈՐՎԱԹԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌԸ  
CASE OF HORVAT v. CROATIA  
26 հուլիսի 2001թ.  
Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ, 13-րդ հոդված

5. ԶԻԱՆԱՆՉԵԼԻՆ ԸՆԴԴԵՄ ԻՏԱԼԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌԸ  
CASE OF GIANNANGELI v. ITALY  
5 հուլիսի 2001թ.  
Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ

6. ՄԱԼՀՈՒՍՆ ԸՆԴԴԵՄ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌԸ  
CASE OF MALHOUS v. CZECH REPUBLIC  
12 հուլիսի 2001թ.  
Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ

7. ՌՈՏԱՐՈՒՆ ԸՆԴԴԵՄ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌԸ  
CASE OF ROTARU v. ROMANIA  
4 մայիսի 2000թ.  
Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ, 8-րդ հոդված, 13-րդ հոդված

8. ՖԻԼԻՊՍՆ ԸՆԴԴԵՄ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌԸ  
CASE OF PHILLIPS v. UNITED KINGDOM  
5 հուլիսի 2001թ.  
Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր,  
1-ին Արձանագրության 1-ին հոդված

9. ԿՈՒԴԼԱՆ ԸՆԴԴԵՄ ԼԵՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌԸ  
CASE OF KUDLA v. POLAND  
26 հոկտեմբերի 2000թ.  
Կոնվենցիայի 3-րդ հոդված, 5-րդ հոդվածի 3-րդ կետ,

6-րդ հոդվածի 1-ին կետ, 13-րդ հոդված

10. ՀԱՍԱՆԸ ԵՎ ՉԱՈՒՇՆ ԸՆԴԴԵՍ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՈՐ  
CASE OF HASAN AND CHAUSH v. BULGARIA

26 հոկտեմբերի 2000թ.

Կոնվենցիայի 6-րդ հոդված, 9-րդ հոդված, 11-րդ հոդված, 13-րդ հոդված,  
1-ին Արձանագրության 1-ին հոդված

11. ԲՐՈՒՄԱՐԵՍԿՈՒՆ ԸՆԴԴԵՍ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՈՐ  
CASE OF BRUMARESCU v. ROMANIA

(Արդարացի բավարարման վերաբերյալ լրագուցիչ վճիռ)

23 հունվարի 2001թ.

### ՈՐՈՇՈՒՄ

Հենրիկաս Ղակտարասի՝ Լիտվայի դեմ ներկայացրած թիվ 42095/98 գանգատի  
ընդունելիության վերաբերյալ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երրորդ բաժանմունք)  
2000թ. հունվարի 11-ի նիստում, կազմով՝

Պրն Ժ.-Պ. Կոստայի, նախագահ,

Պրն Նիկոլաս Բրատցայի,

Պրն Լ. Լուկադեսի,

Տկն Ֆ. Թուլկենսի,

Պրն Վ. Ֆուրմանի,

Տկն Հ. Ս. Գրեվի,

Պրն Կ. Թրաժայի,

Տկն Դ. Դոլլեի, Բաժանմունքի քարտուղար,

Հիմնվելով Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 34-րդ հոդվածի վրա,  
Ելնելով ՅՆԵՐԻԿԱՍ Դակտարասի՝ 1998թ. հուլիսի 8-ին ներկայացրած և որպես թիվ 42095/98 գործ 1998թ. հուլիսի 8-ին գրանցված գանգատից,  
Ղեկավարվելով Դատարանի կանոնակարգի 49-րդ հոդվածով,  
Ելնելով 1998թ. դեկտեմբերի 29-ին պատասխանող կառավարության ներկայացրած բացատրություններից և ի պատասխան դրանց՝ 1999թ. փետրվարի 25-ին դիմողի ներկայացրած բացատրություններից,  
Խորհրդակցելով որոշեց.

### **Փաստեր**

Դիմողը Լիտվայի քաղաքացի է, ծնված 1957թ.: Ներկայումս կալանավորված է և գտնվում է Վիլնյուսի Ռաս բանտում:  
Դատարանում նրան ներկայացնում են Կաունասում գործող փաստաբան պրն Գիրդզիուզասը և Վիլնյուսում գործող փաստաբան պրն Վ. Սվիդերսկիսը:  
Գործին առնչվող փաստերը, ըստ կողմերի ներկայացման, կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ:

### **Ա. Գործի առանձին հանգամանքներ**

#### **Քրեական գործի վարույթ**

Դիմողը մեղավոր է ճանաչվել 1976թ. և 1977թ.՝ խուլիգանության համար, իսկ 1987թ.՝ շորթման համար, և դատապարտվել է ութ տարի ժամկետով ազատազրկման: Նա բանտից ազատ է արձակվել 1990 թվականների սկզբին:

Գլխավոր դատախազի տեղակալի թույլտվությամբ (sanckcija) 1996թ. փետրվարի 3-ին դիմողը ձերբակալվել է՝ կանխիչ կալանքի վերաբերյալ նորմի հիման վրա (prevençinis sulaikymas): Կանխիչ կալանքի համար սահմանված էր 60-օրյա ժամկետ, որը հաստատվել էր Վիլնյուսի շրջանային դատարանի քրեական պալատի նախագահի (apygardos teismas) կողմից 1996թ. փետրվարի 5-ին: Դիմողի նկատմամբ կանխիչ կալանքը սահմանվել է Քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա, որը կանխիչ կալանք թույլատրում է բանդիտիզմի, քրեական խմբավորմանը մասնակցության և անձի ահաբեկման համար: 1996թ. փետրվարի 12-ին Վիլնյուսի շրջանային դատարանի նախագահը մերժել է կանխիչ կալանքի կարգադրության դեմ ուղղված դիմողի բողոքը:

Դիմողը կասկածվում էր լիտվացի մի պոպ երգչուհու և վերջինիս ընկերոջը ծեծի ենթարկելու մեջ: 1996թ. փետրվարի 5-ին Գլխավոր դատախազության դատախազներից (Generalin prokuratra) մեկի կողմից հարուցվել է քրեական հետապնդում՝ խուլիգանության մեղադրանքով (այսուհետ՝ «խուլիգանության գործ»):

1996 թ. փետրվարի 18-ին դատախազի կողմից հարուցվել է ևս մեկ քրեական գործ. այս անգամ դիմողը կասկածվել է առևանգված մեքենայի համար 7000 ԱՄՆ դոլարի չափով փրկագին պահանջելուն և այն ստանալուն աջակցելու մեջ (այսուհետ՝ «փրկագնի գործ»):

1996թ. ապրիլի 1-ին դիմողին մեղադրանք է առաջադրվել փրկագնի գործի չորս կետերով: Հիմնական մեղադրանքը վերաբերել է բռնության սպառնալիքով գույք ձեռք բերելուն: Նույն օրը դիմողը հարցաքննվել է վերոհիշյալ մեղադրանքների կապակցությամբ:

1996թ. ապրիլի 1-ին դատախազը կարգադրել է կալանավորել դիմողին՝ վերջինիս նկատմամբ փրկագնի գործով առաջադրված մեղադրանքների կապակցությամբ: Նույն օրը մեկուսարանի պետին ուղղված նամակով դատախազը մեկուսարանի ղեկավարությունից պահանջել է մինչև 1996թ. ապրիլի 15-ը արգելել դիմողի

շփումները պաշտպանության կողմի հետ՝ առանց այդ մասին դատախազության գրավոր թույլտվության:

1996թ. ապրիլի 5-ին Վիլնյուսում սպանվել են փրկագնի գործով երկու վկաները:

1996թ. ապրիլի 15-ին մեկուսարանի պետին ուղղված նամակով դատախազը տեղեկացրել է, որ որոշում է կայացրել ներկա գտնվել դիմողի և նրա պաշտպանների հանդիպումներին, ինչպես նաև վերահսկել գործին առնչվող նամակագրությունը. մեկուսարանի ղեկավարությանը կրկին պահանջ է ներկայացրել չթույլատրել դիմողի շփումները պաշտպանի հետ՝ առանց դատախազի գրավոր թույլտվության:

1996թ. հունիսի 18-ին Վիլնյուսի շրջանային դատարանի դատավորի կողմից դիմողի կալանքի ժամկետը երկարացվել է մինչև 1996թ. օգոստոսի 31-ը, և ապա 1996թ. օգոստոսի 29-ին վերոհիշյալ ժամկետը երկարացվել է մինչև 1996թ. հոկտեմբերի 1-ը:

1996թ. սեպտեմբերի 20-ին խուլիգանության գործը կարճվել է:

Փրկագնի գործի նախաքննությունն ավարտվել է 1996թ. սեպտեմբերի 26-ին: Այդ օրվանից մինչև 1996թ. հոկտեմբերի 1-ը դիմողին և նրա պաշտպանին՝ ծանոթանալու համար, տրամադրվել են գործի նյութերը:

Ծանոթանալով գործի նյութերին՝ դիմողն իր բողոքները ներկայացրել է դատախազին՝ պնդելով, որ իրեն ներկայացված մեղադրանքներն անհիմն են:

1996թ. հոկտեմբերի 1-ին դատախազը մերժել է այդ բողոքները: Դատախազը, *inter alia*, նշել է, որ «մեղավորությունն ապացուցվել է նախնական քննության ընթացքում հավաքված ապացույցներով»:

1996թ. հոկտեմբերի 2-ին Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահը գործը փոխանցել է Վիլնյուսի շրջանային դատարան: Չնայած նրան, որ գործն սկզբնապես հանձնվել էր Կաունասի շրջանային դատարան, Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահը որոշում է կայացրել գործը փոխանցել Վիլնյուսի շրջանային դատարան:

1996թ. հոկտեմբերի 7-ին դիմողը բողոք է ներկայացրել Վիլնյուսի շրջանային դատարան՝ պնդելով, որ իրեն կալանավորելու մասին ներպետական պատշաճ որոշում չի եղել և իր կալանավորումն ապօրինի էր:

1996թ. նոյեմբերի 18-ին դիմողը բացարկ է հայտնել Գլխավոր դատափազի տեղակալին՝ պնդելով, որ նշված պաշտոնյան անկողմնակալ չի եղել և խախտել է ներպետական քրեադատավարական նորմերը՝ թույլատրելով դիմողի կանխիչ կալանքը. դիմողը գտնում էր, որ նշված դատախազը չէր կարող դատաքննության ընթացքում պաշտպանել մեղադրանքը:

1996թ. նոյեմբերի 18-ին Վիլնյուսի շրջանային դատարանի դատավորը դիմողի գործը քննության է նշանակել: Դատավորը մերժել է Գլխավոր դատախազի տեղակալին դիմողի հայտնած բացարկը՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ: Գլխավոր դատախազի տեղակալի դեմ դիմողի հաջորդ բացարկը դատավորը մերժել է 1997թ. փետրվարի 5-ին:

1997թ. փետրվարի 13-ին Վիլնյուսի շրջանային դատարանի դատավորը դիմողին մեղավոր է ճանաչել մեղադրանքի երկու կետով՝ բռնության սպառնալիքով գույք ձեռք բերելու և տուժողին սուտ ցուցմունքներ տալուն դրդելու համար: Նա դատապարտվել է որպես գլխավոր հանցակից՝ բռնության սպառնալիքով գույք ձեռք բերելու հանցագործության կատարման մեջ: Մեղադրանքի մյուս երկու կետերով դիմողն արդարացվել է: Դիմողը դատապարտվել է յոթ տարի վեց ամիս ազատազրկման: Նշանակվել է նաև 15.000 լիտվական լիտա տուգանք և սեփականության բռնագրավում:

Հիմնվելով փրկագնի գործով մի քանի վկաների այն ցուցմունքների վրա, որ դիմողը «հեղինակություն է քրեական աշխարհում», դատավորը դատավճռում նշել է. «դատարանը հանգեց այն եզրակացության, որ [վերոնշված վկաներից մեկը]... տեղյակ լինելով մեքենաները վերադարձնելու Կաունասում գործող եղանակին, դիմել է հանցագործ աշխարհի պարագլուխներից մեկին՝ ամբաստանյալ Յ. Դակտարասին», որը պահանջել և ստացել է փրկագինը:

Դիմողը բողոքարկել է վերոնշյալ դատավճիռը՝ վկայակոչելով ներպետական դատավարական և նյութական իրավունքի բազմաթիվ խախտումներ: Նա նշել է, *inter alia*, որ ոտնահարվել են անձամբ պաշտպանվելու և վկաներին հարցեր ուղղելու իր իրավունքները, և որ դատարանի կողմից իրեն որպես «հանցագործ աշխարհի պարագլուխներից մեկը» ներկայացնելը կանխակալ էր և անօրինական: Այս կապակցությամբ նա ընդգծել է, որ երբևէ չի դատապարտվել քրեական խմբավորման հետ կապ ունենալու մեղադրանքով: Դիմողը պնդում էր, որ իրեն զրկել են անկողմնակալ և անկախ դատարանի կողմից իրականացվող արդարացի դատավարությունից:

1997թ. ապրիլի 23-ին վերաքննիչ դատարանը բողոքը քննության է առել իրավունքի հարցերի տեսակետից և որոշել է գումարել լիազումար նիստ:

1997թ. մայիսի 24-ին վերաքննիչ դատարանը գումարել է լիազումար նիստ, որին ներկա էին դիմողը և նրա երկու ներկայացուցիչները: Վերաննքիչ դատարանը փոփոխություն է կատարել 1997թ. փետրվարի 13-ի դատավճռում: Վերաննքիչ դատարանը գտել է, որ այնքանով, որքանով դիմողը մեղադրվում էր բռնության սպառնալիքով գույք ձեռք բերելու մեջ, նա պետք է դատապարտվեր որպես երկրորդական հանցակից և ոչ թե որպես գլխավոր հանցակից, ինչպես գտել էր առաջին ատյանի դատարանը: Այնուհանդերձ, վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել Վիլնյուսի շրջանային դատարանի կողմից նշանակված պատժաչափը:

Դիմողը վճռաբեկ բողոք է ներկայացրել Գերագույն դատարան (Auks iausuasis Teismas) հայտարարելով, որ ստորին ատյանի երկու դատարաններն էլ խախտել են ներպետական օրենսդրությունը, և որ ինքը չի կատարել իրեն մեղսագրվող հանցանքը:

1997թ. հուլիսի 3-ին Վիլնյուսի շրջանային դատարանի դատավորը, որը կայացրել էր 1997թ. փետրվարի 13-ի դատավճիռը, Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահին ուղղված նամակում վիճարկել է հանցագործությանը դիմողի մասնակցության կապակցությամբ 1997թ. մայիսի 27-ի դատավճռում տեղ գտած՝ վերաքննիչ դատարանի եզրահանգումները: Իր նամակում առաջին ատյանի դատարանի դատավորը պնդել է, որ բռնության սպառնալիքով գույք ձեռք բերելու մեղադրանքով դիմողը պետք է դատապարտվեր որպես գլխավոր, և ոչ թե երկրորդական հանցակից: Դատավորը Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահին առաջարկել է ներկայացնել վճռաբեկ միջնորդություն (*kascinis teikimas*)՝ բեկանելու վերաքննիչ դատարանի դատավճիռը և վերականգնելու առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

1997թ. օգոստոսի 27-ին Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահը վճռաբեկ միջնորդություն է ներկայացրել Գերագույն դատարանի քրեական պալատի դատավորներին: Միջնորդության մեջ, *inter alia*, նշվում էր, որ «վերաքննիչ դատարանը պատշաճ ձևով չէր մեկնաբանել և կիրառել օրենքը...եղած նյութերի հիման վրա հաստատվել է, որ Յ. Դակտարասը... կատարել էր մի խումբ անձանց մտադրությունը և կամքը... և [նա] գլխավորն էր բռնության սպառնալիքով գույք ձեռք բերելու հանցանքի մեջ»: Քրեական պալատի նախագահը հիմնվել է հանցագործության կատարման ժամանակ գործող ներպետական օրենսդրության առանձին դրույթի, այն է՝ Քրեական օրենսգրքի նախկին 150-րդ հոդվածի 3-րդ կետի վրա, որը պետք է կիրառվեր դիմողի արարքի նկատմամբ: Նախագահը միջնորդել է «բեկանել վերաքննիչ դատարանի 1997թ. մայիսի 27-ի դատավճիռը... և վերականգնել Վիլնյուսի շրջանային դատարանի 1997թ. փետրվարի 27-ի դատավճիռը»:

1997թ. սեպտեմբերի 8-ին Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահը նշանակել է զեկուցող դատավոր: 1997թ. սեպտեմբերի 23-ին Նախագահը գործը քննելու համար նշանակել է նաև Գերագույն դատարանի քրեական պալատի երեք դատավորից կազմված կոլեգիալ կազմ:

1997թ. դեկտեմբերի 2-ին տեղի է ունեցել վճռաբեկ բողոքի քննությունը: Մեղադրանքի կողմը ներկայացրել է Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահի վճռաբեկ միջնորդությունը: Լսումներին ներկա էին դիմողը և նրա պաշտպանը: Այդ օրը Գերագույն դատարանը բեկանել է վերաքննիչ դատարանի դատավճիռը և վերականգնել է Վիլնյուսի շրջանային դատարանի դատավճիռը: Վճռաբեկ դատարանը մերժել է դիմողի բողոքը և բավարարել է վճռաբեկ

միջնորդությունը: Գերագույն դատարանը դիմողին ճանաչել է որպես բռնության սպառնալիքով գույք ձեռք բերելու հանցանքի մեջ գլխավոր հանցակից:

### **Դիմողի գործի շուրջ լրատվամիջոցների ծավալած արշավը**

1990 թվականների սկզբից ի վեր լրատվամիջոցները դիմողին ներկայացրել էին որպես տարբեր կազմակերպված հանցագործությունների պատասխանատու՝ ինչպես Կաունասում, այնպես էլ Լիտվայի այլ շրջաններում: Դիմողի կալանավորումը և դրան հաջորդած դատավարությունը նույնպես քննարկման առարկա են դարձել բազմաթիվ հեռուստածրագրերում:

1996թ. փետրվարի 6-ին «Ռեսպուբլիկա» անկախ օրաթերթը տպագրել է մի հոդված, որի վերնագիրն էր «Պաշտոնյաներն ընդդեմ մաֆիայի պարագլուխ Զ.Դակտարասի»: Արդարադատության նախարարը, մեկնաբանելով դիմողի ձերբակալումը, ասել է.

(Թարգմանություն)

«Նախ և առաջ այս ձերբակալումը ողջունելի է...թեպետ որոշման կայացումը շատ ձգձգվեց:»

Նույն հոդվածում բերվում էին Սեյմի (Խորհրդարանի) փոխնախագահի՝ դիմողի ձերբակալման վերաբերյալ ասված հետևյալ բառերը.

(Թարգմանություն)

«Ես համոզված եմ, որ սա պետք է արվեր ... ավելի շուտ: Այս դեպքում, սակայն, ես չեմ կարծում, որ կանխիչ կալանքի անհրաժեշտություն կար: Այս դեպքում արդյունավետ կլիներ կալանավորումը և որքան շուտ թույլատրվի այս կալանավորումը, այնքան լավ: Այնուհանդերձ, եթե գնահատելու լինենք այս ձերբակալումը զուտ քաղաքական տեսանկյունից, ես կարծում եմ, որ Զ.Դակտարասին կալանավորելու պահը այնքան էլ ճիշտ չէր ընտրված... . Բոլոր դեպքերում ... այս ձերբակալումը... անկասկած, ճիշտ քայլ է»:

1996թ. փետրվարի 6-ին «Ռեսպուբլիկա» օրաթերթի լրագրողներից մեկը «Գլխավոր դատախազությունն ընդդեմ Զ.Դակտարասի» հոդվածում գրում է.

(Թարգմանություն)

«Երեկ երեկոյան գլխավոր դատախազի տեղակալ Ա.Պաուլասկուսը հայտարարեց, որ [խուլիգանության գործը] միայն մեկն էր բազմաթիվ պատճառներից, որոնք դրդեցին Գլխավոր դատախազությանը դիմել ավելի վճռական քայլերի: Զ.Դակտարասի գործողությունները հետքեր են թողել ամբողջ Լիտվայով մեկ, և դատախազությունը հավաքել է բավարար քանակությամբ ապացույցներ»:

1996թ. դեկտեմբերի 18-ին երկրի ամենամեծ «Լիեստվոս Ռիտաս» անկախ թերթի թղթակիցներից մեկը «Դատախազ Ա.Պաուլասկուսը կրկին ընդդեմ մաֆիայի պարագլխի» հոդվածում ասում էր.

(Թարգմանություն)

«Ինչպես նշում է [Գլխավոր դատախազի տեղակալ] Ա.Պաուլասկուսը այս գործի կարևորությունը պայմանավորված է Զ.Դակտարասի անձով, որը Կաունասի կազմակերպված հանցավոր խմբի պարագլուխն է: Ա.Պաուլասկուսը հայտարարել է, որ նույնիսկ իրենք՝ հանցագործներն են ասում, որ Զ.Դակտարասը թիվ առաջին հանցագործն է»:

Գլխավոր դատախազի տեղակալը վերոնշյալ հոդվածում նաև ասել է.

(Թարգմանություն)

«Իսկ Զ.Դակտարասի, որպես կազմակերպված հանցավորության ոլորտում ճանաչված պարագլխի, գործողությունները կհետաքննվեն:»

«Ռեսպուբլիկա» թերթի լրագրողներից մեկը 1996թ. դեկտեմբերի 19-ի հոդվածում ասում է.

(Թարգմանություն)

«Երբ [Գլխավոր դատախազի տեղակալ] Ա.Պաուլասկուսին հարցրին, թե արդյո՞ք Զ.Դակտարասի հանցանքները հեշտությամբ կապացուցվեն դատարանում, վերջինս պատասխանեց, որ ինքը կասկած չունի դրանում: Նա ավելացրեց, որ

ամբաստանյալի մյուս հանցանքների հետ կապված նյութերը արդեն հավաքվում են: «Մենք կներկայացնենք այդ նյութերը դատարանին ավելի ուշ, երբ այս գործով ամբաստանյալի նկատմամբ կայացվի դատավճիռ»։ ասել է Ա.Պաուլասկուսը»:

«Ռեսպուբլիկա» թերթի մի լրագրող 1997թ. հունվարի 10-ի հոդվածում գրում է.

(Թարգմանություն)

«Առաջին դատական լսումներից առաջ Գլխավոր դատախազի տեղակալ Ա.Պաուլասկուսը հայտարարեց, որ այս չորս մեղադրանքները [փրկագնի գործում]... մեծ գործի միայն սկիզբն են, և, որ շուտով [դիմողին] կներկայացվեն նոր, շատ ավելի լուրջ մեղադրանքներ...»:

Գլխավոր դատախազության դատախազներից մեկը նույն հոդվածում, խոսելով փրկագնի գործով դիմողին առաջադրված մեղադրանքների մասին, ասել է.

(Թարգմանություն)

«Ես կարող եմ հաստատապես ասել, որ մենք չենք պատրաստվում սահմանափակվել այս դրվագներով: Սա միայն սկիզբն է...: [Դիմողի] խղճին պետք է ծանրանան մի քանի հանցագործություններ. սակայն ամեն ինչ պետք է ապացուցվի... Մենք նաև տեղյակ ենք, որ Յ.Դակտարասը կրակել է Կաունասի մեկ այլ հանցագործի վրա: Բայց այդ կապակցությամբ ոչինչ հնարավոր չէ անել. «տուժողը» ամեն ինչ հերքում է, և նա ավելի շուտ կհամաձայնվեր դատապարտվել ազատազրկման, քան թե մեզ որևէ բան ասել: Ուստի տվյալ իրավիճակում ավելի ճիշտ է կալանավորել ոմն «մաֆիոզի» փոքր, բայց ապացուցված հանցանքի համար, քան թե ազատ արձակել նրան»:

1997թ. փետրվարի 6-ի «Լիետվոս Ռիտաս» թերթում տպագրված հոդվածը մեջբերում է Գլխավոր դատախազի տեղակալի հայտարարությունից.

(Թարգմանություն)

«Ես թույլատրել եմ Յ.Դակտարասի նախնական կալանքը. սակայն դրա օրինականությունը հաստատվել է դատավորի որոշմամբ: Ես մեղադրում եմ Յ.Դակտարասին, որովհետև նա Յ.Դակտարասն է»:

1997թ. փետրվարի 11-ին «Ակիստատա» անկախ թերթի լրագրողը գրում է.

(Թարգմանություն)

«Անցած չորեքշաբթի [Գլխավոր դատախազի տեղակալ] Ա.Պաուլասկուսը հրապարակայնորեն հայտարարեց, որ նա պաշտպանել է մեղադրանքը միայն այն պատճառով, որ դա Յ.Դակտարասի դատավարությունն էր»:

1997թ. մարտի 1-ին «Վեիդաս» անկախ ամսագրում տպագրվեց Գլխավոր դատախազի տեղակալի հետ հարցազրույց: Դիմողի ձերբակալման մասին խոսելիս՝ նա ասաց.

(Թարգմանություն)

«[Խուլիգանության գործը] վերջին կաթին էր: Հասկանալով, որ կատարվածը կլուսաբանվի մամուլում, ինչը և տեղի ունեցավ, մենք հասկացանք, որ դրանից հետո Յ.Դակտարասը ժամանակավորապես կանհետանա: Այդպիսին է ՆՐԱՆՑ ինքնապաշտպանական բնագործը. իրենց վերաբերյալ բացասական տեղեկատվություն լսելուն պես ՆՐԱՆՑ սուզվում են, և հետո շատ դժվար է նրանց գտնել: Բացի դրանից, Յ.Դակտարասին ձերբակալելու ժամանակը վաղուց հասունացել էր: Կարելի էր ենթադրել, որ [պոպ աստղին] ծեծելու մասին հոդվածի արդյունքում մենք կհայտնվեինք նաև քաղաքական գործիչների ճնշման ներքո, և նման պայմաններում սեփական գործողություններն արդարացնելու մեր ճիգերը պարզապես ծիծաղելի կլինեին. ահա թե ինչու որոշվեց ձերբակալել նրան»:

1997թ. վերջին նախագահական ընտրարշավի ընթացքում նախկին գլխավոր դատախազի տեղակալ Ա. Պաուլասկուսի թեկնածությունը ներկայացնող գովազդում լիտվական հեռուստատեսությամբ ցուցադրվել են հատվածներ դիմողի դատաքննության տեսանյութից:

## **Բ. Համապատասխան ներպետական օրենսդրությունը**

Քրեական դատավարության օրենսգրքի գործին առնչվող դրույթները (Baud iamojo proceso kadeksas)

**Կանխիչ կալանքի վերաբերյալ դրույթներ**

Նախկին 50-րդ հոդվածի 1-ին կետը (ուժի մեջ էր մինչև 1997թ. հունիսի 30-ը) թույլ էր տալիս կալանավորումը՝ կանխելու համար երեք տեսակի հանցագործության կատարումը, այն է՝ բանտիտիզմ, մասնակցություն քրեական խմբավորմանը և անձի ահաբեկում: Վերը նշված նորմի համաձայն կալանքի վերցված անձը կարող էր բողոքարկել դատավորի՝ կանխիչ կալանքը հաստատող որոշումը: Վերադաս դատավորի որոշումը վերջնական էր և չէր կարող բողոքարկվել:

### **Կալանավորում**

Համաձայն նախկին 10-րդ և 104-րդ հոդվածների (ուժի մեջ էին մինչև 1996թ. հունիսի 21-ը)՝ անձը կարող էր ձերբակալվել և կալանավորվել դատարանի կամ դատավորի հրամանի հիման վրա, կամ դատախազի թույլտվությամբ: Վերոնշյալ դրույթների՝ ներկայումս գործող տարբերակները նախատեսում են անձի կալանավորումը միայն դատարանի կամ դատավորի որոշման հիման վրա:

Համաձայն 106-րդ հոդվածի 3-րդ կետի (տարբերակը ուժի մեջ էր 1996թ. հունիսի 21-ից մինչև 1998թ. հունիսի 24-ը)՝ կալանավորման ժամկետը երկարացնելու համար դատավորը պարտավոր է հրավիրել դատական նիստ, որին պետք է հրավիրվեն պաշտպանը և դատախազը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև կալանավորված անձը: Համաձայն 249-րդ հոդվածի 1-ին կետի և 250-րդ հոդվածի 1-ին կետի, դատավորն անձամբ կամ դատարանը՝ լուծման ժամանակ պետք է որոշի, թե արդյո՞ք մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցը ճիշտ է ընտրված:

Նախկին 226-րդ հոդվածի 6-րդ կետը (ուժի մեջ էր մինչև 1998թ. հունիսի 24-ը) նախատեսում էր, որ այն ժամանակահատվածը, երբ մեղադրյալը և նրա պաշտպանը ծանոթանում են գործի նյութերին, չի մտնում նախնական քննության և կալանքի ժամկետների մեջ:

Համաձայն 52-րդ, 58-րդ և 267-րդ հոդվածների, մեղադրյալը և ամբաստանյալը կարող են «դիմել»՝ գրավը որպես խափանման միջոց կիրառելու խնդրանքով:

Համաձայն նախկին 372-րդ հոդվածի 4-րդ կետի (ուժի մեջ էր մինչև 1999թ. հունվարի 1-ը) կալանավորելու կամ կալանքը վերացնելու մասին դատարանի որոշումները չեն կարող բողոքարկվել:

Համաձայն 398-րդ հոդվածի 2-րդ կետի, եթե բողոքարկվում է առաջին ատյանի դատարանի դատավճիռը, ապա այն ուժի մեջ է մտնում բողոքի կապակցությամբ դատավճռի կայացումից հետո: Ըստ 398-րդ հոդվածի 4-րդ կետի և 399-րդ հոդվածի 4-րդ կետի, վերաքննիչ դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում դրա հրապարակման պահից: Ուստի ներպետական օրենսդրության համաձայն՝ կալանքի տակ գտնվող անձը համարվում է կալանքի տակ գտնվող առաջին ատյանի դատարանի կողմից դատապարտումից հետո մինչև վերաքննիչ դատարանի կողմից՝ առաջին ատյանի դատարանի դատավճռի դեմ ուղղված բողոքի լուծումը:

### **Դատավարության արդարացիությունը**

Հոդված 14. «Քրեական գործերով արդարադատություն իրականացնելիս դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին: Դատավորները քրեական գործերը լուծում են օրենքի համաձայն և իրենց խղճով, այնպիսի պայմաններում, որոնք թույլ չեն տալիս նրանց վրա արտաքին ազդեցություններ: Արգելված է ցանկացած միջամտություն դատավորի կամ դատարանի գործունեությանը՝ արդարադատություն իրականացնելիս, և հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության»:

Հոդված 76. «Դատարանը, դատախազը, հետաքննիչը և քննիչը պետք է ապացույցները գնահատեն իրենց ներքին համոզմամբ, որոնք պետք է հիմնվեն գործի բոլոր հանգամանքների լրիվ, ամբողջական և անաչառ վերլուծության վրա, համաձայն օրենքին և իրավագիտակցության:

Ոչ մի ապացույց չպետք է կանխակալ ազդեցություն ունենա դատարանի, դատախազի, հետաքննիչի կամ քննիչի վրա»:

### **Դատավորների անաչառությունը և բացարկի հնարավորությունները**

Համաձայն 29-րդ հոդվածի 3-րդ կետի, դատավորը չի կարող մասնակցել դատավարության որևէ փուլի, եթե շահագրգռված է դրա արդյունքով: Համաձայն նույն հոդվածի 4-րդ կետի, դատավարության կողմերը կարող են մատնանշել այն հանգամանքները, որոնք կասկածի տակ են դնում դատավորի անկողմնակալությունը:

Համաձայն 31-րդ հոդվածի, այն դատավորը, որի անկողմնակալության առնչությամբ կան կասկածի օրինական հիմքեր, պետք է ինքնաբացարկ հայտնի: Նույն հիմքերով դատավորին կարող են բացարկ հայտնել ինչպես ամբաստանյալը, այնպես էլ դատավարության մյուս մասնակիցները:

Երբ գործը քննության է առնվում դատավորների կոլեգիալ կազմի կողմից, դատավորներից մեկին հայտնած բացարկի հարցը լուծում է դատավորների կոլեգիան: Երբ բացարկը հայտնվում է ողջ կազմին, դատավորների կոլեգիան ինքն է լուծում բացարկի հարցը՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

Համաձայն 427-րդ հոդվածի 3-րդ կետի, վճռաբեկ պալատի նախագահը, գործը քննության առնելու համար դատավորների կոլեգիալ կազմը ձևավորելիս, պետք է կողմերին հարցնի, թե արդյոք նրանք ցանկություն ունեն՞ բացարկ հայտնելու դատավորներին»:

### **Ընդդատության փոխանցումը մի դատարանից մյուսին**

42-րդ հոդվածը Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահին իրավունք է տալիս առանձին դեպքերում ընդդատությունը փոխանցել մի դատարանից մյուսին՝ ապահովելու համար արդարադատության պատշաճ իրականացումը: Համաձայն 43-րդ հոդվածի և 372-րդ հոդվածի 4-րդ կետի, կողմերն իրավունք չունեն վիճարկելու որևէ կոնկրետ դատարանի իրավագործությունը տվյալ գործի առնչությամբ:

### **Դատախազի մասնակցությունը**

Ըստ 44-րդ հոդվածի, օրենքի համաձայն նշանակված դատախազները գործի վարույթի ընթացքում կատարում են դատախազի գործառույթները: 44-րդ հոդվածը չի բովանդակում որևէ դրույթ, որը նախատեսեր որոշակի հանգամանքներ, որոնց դեպքում կոնկրետ դատախազը կարող է մասնակցել գործի քննությանը:

### **Վճռաբեկ միջնորդություն**

Համաձայն Քրեական դատավարության օրենսգրքի 417-րդ հոդվածի 4-րդ կետի, Գերագույն դատարանի, վերաքննիչ դատարանի, շրջանային դատարանների նախագահները, ինչպես նաև վերը նշված դատարանների քրեական պալատների նախագահներն իրավունք ունեն ներկայացնելու վճռաբեկ միջնորդություն՝ առաջին ատյանի դատարանի՝ ուժի մեջ մտած կամ վերաքննիչ դատարանի դատավճռի կապակցությամբ: Ըստ 417-րդ հոդվածի 5-րդ կետի՝ նման միջնորդությունների առնչությամբ կիրառվում է նույն ընթացակարգը, ինչ դատավարության կողմերի ներկայացրած վճռաբեկ բողոքների դեպքում:

Օրենսգրքի 418-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է վճռաբեկ բողոքին կամ վճռաբեկ միջնորդությանը ներկայացվող պահանջները: Համաձայն նշված դրույթի, վճռաբեկ բողոքի կամ վճռաբեկ միջնորդության մեջ պետք է նշվի վճռաբեկ դատարանի անունը, գործը և գործի վերաբերյալ կայացված որոշումը, որոշման էությունը, բողոքի կամ միջնորդության հիմքերը, ինչպես նաև վճռաբեկ բողոքի էությունը:

## ԳԱՆՊԱՏՆԵՐԸ

1. Հիմնվելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի վրա՝ դիմողի գանգատը վերաբերում է կանխիչ կալանքին և կալանավորմանը: Նա նշում է, որ ձերբակալվել է 1996թ. փետրվարի 3-ին: Նա հայտարարում է, որ իր ձերբակալությունը և կանխիչ կալանքի վերաբերյալ նորմի հիման վրա՝ ձերբակալմանը հաջորդած կալանավորումը չէին համապատասխանում ներպետական քրեական դատավարության պահանջներին: Նման կալանավորումը, ենթադրաբար, չուներ հիմքեր: Չկային նաև դրա օրինականությունը վիճարկելու հնարավորություններ: Այնուհետև դիմողը գանգատ է ներկայացրել առ այն, որ 1996թ. հոկտեմբերի 7-ից մինչև 1997թ. փետրվարի 13-ը նա գտնվել է ապօրինի կալանքի տակ, քանի որ այդ ժամանակահատվածի վերաբերյալ որևէ պատշաճ որոշում չէր կայացվել: Հիմնվելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի վրա՝ դիմողը գանգատ է ներկայացրել նաև իր կանխիչ կալանքի պայմանների վերաբերյալ՝ վկայակոչելով այն փաստը, որ գտնվել է արդեն իսկ դատապարտված անձի հետ միևնույն խցում:

2. Հիմնվելով 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա՝ դիմողը գանգատ է ներկայացրել առ այն, որ նա չուներ Կաունասի շրջանային դատարանի դիմելու հնարավորություն: Նա վկայակոչում է այն փաստը, որ գործն ի սկզբանե պետք է լավեր վերը նշված դատարանում, բայց այն վերջ ի վերջո փոխանցվել է Վիլնյուսի շրջանային դատարան: Դիմողը գանգատվում է նաև Քրեական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածի հիման վրա ընդդատության փոխանցման վերաբերյալ Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահի կայացրած որոշման դեմ: Նա պնդում է, որ վերը նշված որոշումը կամայական է:

3. Հիմնվելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա՝ դիմողը գանգատ է ներկայացրել առ այն, որ Վիլնյուսի շրջանային դատարանում ոտնահարվել է կողմերի հավասարության սկզբունքը, քանի որ առաջին ատյանի դատարանում մեղադրանքը պաշտպանել է Գլխավոր դատախազի տեղակալը: Այս պաշտոնյան մինչ այդ թույլատրել էր դիմողի կանխիչ կալանավորումը և մինչև դիմողին փաստացի մեղավոր ճանաչելը մի քանի անգամ հայտնել էր իր միանշանակ կարծիքը դիմողի մեղավոր լինելու մասին՝ ներկայացնելով նրան որպես կազմակերպված հանցավոր խմբերի պարագլուխ: Դիմողն ապարդյուն փորձել էր բացարկ հայտնել Գլխավոր դատախազի տեղակալին: Այնուհետև դիմողը հայտնում է, որ նախաքննության փուլում այդ պաշտոնյան պատրաստվում էր իր թեկնածությունն առաջադրել նախագահական ընտրություններում և մեկն էր ամենահավանական հաղթողներից. ուստի առաջին ատյանի դատարանում ինքը և Գլխավոր դատախազի տեղակալը չեն գտնվել հավասար հիմքերի վրա:

4. Հիմնվելով 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա՝ դիմողը գանգատվում է առ այն, որ Գերագույն դատարանը, նշյալ դրույթի իմաստով, «անկողմնակալ դատարան» չէ, քանի որ այն քննել և ընդունել է Գերագույն դատարանի նախագահի վճռաբեկ միջնորդությունը: Վերը նշված միջնորդությունը նախաձեռնվել էր առաջին ատյանի դատարանի դատավորի կողմից և Գերագույն դատարանին էր ներկայացվել Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահի կողմից, որն ինքն էր նշանակել վճռաբեկ ատյանի դատավորներին: Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահը միջնորդել էր վճռաբեկ ատյանի դատավորների առջև՝ հստակ մատնանշելով ներպետական օրենսդրության այն կոնկրետ դրույթը, որը պետք էր կիրառել տվյալ գործի առնչությամբ: Վճռաբեկ միջնորդությամբ առաջարկվում էր դիմողին պատժել որպես հիմնական, այլ ոչ թե որպես երկրորդական հանցակից՝ դրանով ավելի անբարենպաստ վիճակ ստեղծելով դիմողի համար, քան ստեղծված էր վերաքննիչ դատարանի դատավճռով: Այնուհետև դիմողը պնդում է, որ վերը նշված միջնորդությունն օգտագործվել է դատախազի կողմից՝ որպես մեղադրանքի կողմի ներկայացրած *sui generis* վճռաբեկ բողոք՝ հաշվի չառնելով այն փաստը, որ դատախազը վերաքննիչ դատարանի դատավճռի դեմ պատշաճ վճռաբեկ բողոք չի ներկայացրել: Այսպիսով, դիմողը եզրակացնում է, որ հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, Գերագույն դատարանի դատավորները չէին կարող անկողմնակալ լինել՝ Կոնվենցիայի վերոհիշյալ դրույթի իմաստով:

5. Հիմնվելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա՝ դիմողը գանգատվում է, որ նրան զրկել են արդարացի դատաքննությունից:

Նա վիճարկում է, որ ներպետական դատարանները, իրեն դատապարտելիս, ոչ պատշաճ կերպով են կիրառել նյութական քրեական իրավունքը: Նա հայտարարում է, որ իրեն պաշտոնապես մեղադրանք է ներկայացվել և պատիժ է նշանակվել համաձայն Քրեական օրենսգրքի համապատասխան դրույթների, որոնք ուժի մեջ էին 1994թ., այն է՝ այն ժամանակ, երբ ենթադրյալ հանցագործությունները կատարվել էին: Սակայն, actus reus-ն ապացուցելիս՝ դատարանները de facto կիրառել են Քրեական օրենսգրքի՝ հետագայում փոփոխված դրույթները, որոնք ընդլայնել են «բռնության սպառնալիքով գույք ձեռք բերելու» հասկացությունը:

Դիմողը պնդում է նաև, որ այս դատավարության շուրջ ծավալված մամուլի արշավը և հատկապես Գլխավոր դատախազի տեղակալի և այլ պետական պաշտոնյաների հայտարարությունները (տես «Փաստեր» բաժինը, էջ 5-7) կանխակալ ազդեցություն են ունեցել գործի դատավարության արդարացիության վրա:

1999թ. մարտի 29-ին դիմողը ներկայացրել է ևս մեկ գանգատ՝ դատավարության արդարացիության վերաբերյալ: Նա վկայակոչել է այն փաստը, որ 1996թ. նմանատիպ գործով Գերագույն դատարանն արդարացրել է ամբաստանյալին բռնության սպառնալիքով գույք ձեռք բերելու մեղադրանքում նրան մեղավոր ճանաչելով որպես հանցակից: Վերը նշված գանգատում դիմողը հայտարարել է, որ իր դեպքում Գերագույն դատարանը չի հետևել իր նախադեպային իրավունքին՝ իրեն դատապարտելով ավելի ծանր հանցանքի՝ բռնության սպառնալիքով գույք ձեռք բերելու համար:

1999թ. հոկտեմբերի 11-ին դիմողը ներկայացրել է ևս մեկ գանգատ՝ արդարացիության վերաբերյալ: Նա պնդում էր, որ դատարանները սխալ էին գնահատել գործի վերաբերյալ տուժողի ցուցմունքները:

6. Հիմնվելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի վրա՝ դիմողը գանգատ է ներկայացրել առ այն, որ խախտվել է իր անմեղության կանխավարկածը: Նա գանգատ է ներկայացրել Վիլնյուսի շրջանային դատարանի 1997թ. փետրվարի 13-ի դատավճռի կապակցությամբ, որում դատավորը նշում էր, որ դիմողը «քրեական աշխարհի պարագլուխներից է»: Այս կապակցությամբ նա նաև գանգատվում է, որ առաջին ատյանի դատարանում մեղադրանքը պաշտպանող Գլխավոր դատախազի տեղակալը, մինչև իրեն փաստացի մեղավոր ճանաչելը, բազմիցս անհիմն կարծիք է հայտնել իր մեղավորության մասին՝ լրատվամիջոցներում իրեն ներկայացնելով որպես «քրեական աշխարհի պարագլուխ» (տես «Փաստեր», էջ 5-7): Դիմողի կարծիքով բազմաթիվ այլ պետական պաշտոնյաներ նույնպես ոտնահարել են անմեղության կանխավարկածը՝ իր գործով դատավարության վերաբերյալ լրատվամիջոցներին տված իրենց հարցազրույցներում (ibid):

7. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա՝ դիմողը գանգատ է ներկայացրել նաև դատախազի 1996թ. հոկտեմբերի 1-ի որոշման կապակցությամբ, որով նա մերժել է դիմողի բողոքները՝ ուղղված ընդդեմ իրեն առաջադրված մեղադրանքների, և որում դատախազը նշել է, որ դիմողի «հանցանքն ապացուցվել է նախաքննության ընթացքում հավաքված ապացույցներով»:

8. Հիմնվելով 6-րդ հոդվածի 1-ին և 3 (բ) և (գ) կետերի վրա՝ դիմողը վկայակոչում է իր պաշտպանության իրավունքների խախտումները: Այս կապակցությամբ նա հայտարարում է, որ 1996թ. հոկտեմբերի 1-ին իրեն կալանավորելու կարգադրության ընդունման պահից սկսած ինքը չի կարողացել հաղորդակցվել իր պաշտպանի հետ կամ փոխանակել գաղտնի տեղեկատվություն՝ առանց դատախազի գրավոր թույլտվության:

9. Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա՝ դիմողը գանգատվում է նաև առ այն, որ բռնության սպառնալիքով գույք ձեռք բերելու մեղադրանքով իր դատապարտման նկատմամբ քրեական օրենքը կիրառվել է հետադարձ ուժով:

## Վարույթը

Գանգատը ներկայացվել է Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողով 1998թ. մայիսի 11-ին և գրանցվել 1998թ. հուլիսի 8-ին:

1998թ. հոկտեմբերի 21-ին Հանձնաժողովը որոշել է գանգատը փոխանցել պատասխանող Կառավարությանը:

1998թ. նոյեմբերի 1-ին, Կոնվենցիայի թիվ 11 արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառմամբ, գործը, Արձանագրության դրույթներին համապատասխան, հանձնվել է Դատարանի քննությանը:

1998թ. դեկտեմբերի 29-ին Կառավարությունը ներկայացրել է իր գրավոր բացատրությունները, որոնց դիմողը պատասխանել է 1999թ. փետրվարի 25-ին: 1999թ. մարտի 29-ին և 1999թ. հոկտեմբերի 11-ին նա ներկայացրել է իր լրացուցիչ բացատրությունները:

1999թ. սեպտեմբերի 21-ին Դատարանը վճռել է հետաձգել գործի քննությունը մինչև Լիտվայի կողմից ad hoc դատավորի նշանակումը:

## ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ

1. Դիմողը գանգատվում է իր կանխիչ կալանքի և կալանավորման առնչությամբ՝ վկայակոչելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի բազմաթիվ խախտումները: Դիմողը պնդում է, որ ոչ միայն տեղի է ունեցել ներպետական օրենսդրության խախտում, այլև բացակայել է այդ խախտումները վիճարկելու հնարավորությունը: Նա նաև գանգատվում է իր կանխիչ կալանքի պայմանների կապակցությամբ՝ պնդելով, որ կալանքի տակ էր գտնվում արդեն իսկ դատապարտված անձի հետ:

5-րդ հոդվածով նախատեսվում է հետևյալը.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել ազատությունից այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով...»

գ. Անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը՝ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով, կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո փախուստը կանխելու համար,...

2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:...

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է ...»:

Այնուամենայնիվ, Դատարանից չի պահանջվում որոշել, թե արդյոք գանգատի այս մասով դիմողի ներկայացրած փաստերը վկայում են Կոնվենցիայի խախտման մասին, քանի որ ըստ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի՝ Դատարանը գտնում է, որ գանգատի տվյալ մասը ներկայացվել է ժամկետանց:

Դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների համար կանխիչ կալանքի ժամկետի վերաբերյալ «վերջնական որոշման» ամսաթիվ է համարվում այն օրը, երբ առաջին ատյանի դատարանը դատավճիռ է կայացնում, այլ ոչ թե այն օրը, երբ դատավճիռը մտնում է ուժի մեջ (տես mutatis mutandis, Վեմհոֆն ընդդեմ Գերմանիայի 1968թ. հունիսի 27-ի վճիռը, Շարք Ա. no. 7, էջ 23, կետ 9):

Դիմողն առաջին ատյանի դատարանի կողմից դատապարտվել է 1997թ. փետրվարի 13-ին: Դրանից հետո նա շարունակում էր համարվել կալանավոր՝ ըստ ներպետական օրենսդրության (Քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 2-րդ կետ), սակայն Կոնվենցիայի տեսանկյունից նա իրավասու դատարանի կողմից դատապարտված անձ էր՝ համաձայն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1 (ա) կետի: Կոնվենցիայի նպատակների համար, դիմողի կանխիչ կալանքն ավարտվել է 1997թ. փետրվարի 13-ին, և, հետևաբար, գանգատի այս մասի առնչությամբ 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված վեցամսյա ժամկետը հաշվվում է այդ օրվանից: Սակայն, գանգատը չէր ներկայացվել մինչև 1998թ. մայիսի 11-ը, որը վեց ամսից ավելի է:

Այսպիսով, Դատարանը գտնում է, որ դիմողը չի պահպանել Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված վեցամսյա ժամկետը:

Սրանից հետևում է, որ գանգատի այս մասը պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն:

2. Դիմողը գանգատվում է, որ գործի ընդդատությունը փոխանցելու վերաբերյալ Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահի որոշման հետևանքով ինքը զրկվել է Կաունասի շրջանային դատարանում իր գործի քննության հնարավորությունից: Նա հիմնվում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա, որը նախատեսում է հետևյալը.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

Դատարանը գտնում է, որ խնդրո առարկա որոշումը վերաբերում է զուտ դատավարական հարցի լուծմանը, որով գործը, ներպետական իրավունքի համապատասխան դրույթի հիման վրա, փոխանցվել է մի դատարանից մյուսին: Ավելին, 6-րդ հոդվածը չի տալիս գործը՝ տվյալ անձի կողմից ընտրված դատարանի կողմից քննության առնելու իրավունք: Դատարանը գտնում է, որ ընդդատությունը փոխանցելու վերաբերյալ տվյալ որոշումը որևէ էական ազդեցություն չի ունեցել դիմողի դատավարության արդարացիության վրա: Այսպիսով, գանգատի տվյալ մասն ակնհայտորեն անհիմն է և պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի հիման վրա:

3. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա՝ դիմողը գանգատվում է, որ Վիլնյուսի շրջանային դատարանում խախտվել է կողմերի հավասարության սկզբունքը, քանի որ առաջին ատյանի դատարանում մեղադրանքը պաշտպանվել է Գլխավոր դատախազի տեղակալի կողմից:

Դատարանը կրկնում է, որ քրեական գործում կողմերի հավասարության սկզբունքը նշանակում է, որ մեղադրանքի և պաշտպանության կողմերին պետք է հնարավորություն տրվի ծանոթանալ հակառակ կողմի ներկայացրած փաստարկներին ու ապացույցներին և դրանց վերաբերյալ հայտնել իրենց նկատառումները: Հնարավոր են տարբեր միջոցներ, որոնցով ներպետական օրենսդրությունը կբավարարի այս պահանջները: Այնուամենայնիվ, ինչ մեթոդ էլ ընտրվի, պետք է երաշխավորվի, որ հակառակ կողմը տեղյակ է ներկայացված փաստարկներին և ունի դրանք մեկնաբանելու իրական հնարավորություն (տե՛ս Բելգիոյն ընդդեմ Լեհաստանի 1998թ. մարտի 25-ի վճիռը, Վճիռների և որոշումների ժողովածուներ 1998-II, էջ 570, կետ 37):

Գործի փաստերից ելնելով՝ Դատարանը նշում է, որ Գլխավոր դատախազի տեղակալը Վիլնյուսի շրջանային դատարանում առաջին ատյանի դատարանում դատաքննության ընթացքում ներկայացնում էր մեղադրանքի կողմը: Դիմողը չի պնդում, որ Գլխավոր դատախազի տեղակալը գործին մասնակցել է՝ խախտելով Քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածը: Ուստի, Դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանում պաշտպանելով մեղադրանքը՝ նա, ներպետական օրենսդրությանը համապատասխան, իրականացնում էր իր գործառնությունները: Դատարանը նկատում է նաև, որ ինչպես դիմողը, այնպես էլ նրա փաստաբանները մասնակցել են Վիլնյուսի շրջանային դատարանի բոլոր այն նիստերին, որոնց ներկա է եղել Գլխավոր դատախազի տեղակալը: Դիմողը չի ներկայացնում որևէ ապացույց առ այն, որ դատարանում գործի քննության ընթացքում տվյալ պաշտոնյայի հետ ինքը գտնվել է անհավասար պայմաններում: Նա չի ներկայացնում նաև որևէ փաստարկ, որը կբացատրեր, թե ինչպես կարող էր Գլխավոր դատախազի տեղակալի ներկայությունն իր համար առաջին ատյանի դատարանում դատաքննության ընթացքում ստեղծել անբարենպաստ պայմաններ մեղադրանքի կողմի համեմատ: Հակառակը, եղած նյութերի հիման վրա Դատարանը նկատում է, որ դիմողը տեղյակ էր Գլխավոր դատախազի տեղակալի ներկայացրած փաստարկներին ու բացատրություններին, և նա հնարավորություն է ունեցել մեկնաբանել դրանք: Ինչ վերաբերում է դիմողի վիճակի վրա դատավարության ազդեցությանը, ապա Դատարանը նկատում է, որ առաջին ատյանի դատարանը,

դատապարտելով դիմողին, Գլխավոր դատախազի տեղակալի պաշտպանած մեղադրանքի չորս կետերից ընդունել է միայն երկուսը:

Այնուհետև Դատարանը նշում է դիմողի այն փաստարկը, որ Գլխավոր դատախազի տեղակալը, որպես մասնավոր անձ նախագահական ընտրարշավի ընթացքում, կարող էր դիմողի դատավարությունն օգտագործել իր սեփական թեկնածությունը գովազդելու համար: Այնուամենայնիվ, այս հանգամանքը, հետադարձ գործողությամբ, չէր կարող ազդել դատավարության արդարացիության վրա:

Այսպիսով, Դատարանը չի գտնում որևէ վկայություն այն բանի, որ Գլխավոր դատախազի տեղակալը դիմողի համեմատությամբ ունեցել է որևէ էական առավելություն՝ ի խախտումն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետից բխող կողմերի հավասարության սկզբունքի:

Յետևաբար, գանգատի տվյալ մասն ակնհայտորեն անհիմն է՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով: Ուստի 35-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն այն պետք է մերժվի:

4. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա՝ դիմողը նաև գանգատվում է, որ իր գործը որպես վճռաբեկ ատյան քննության առած Գերագույն դատարանն «անկողմնակալ դատարան» չէ, քանի որ վճռաբեկ դատավորները նշանակվում են Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահի կողմից: Վերջինիս վճռաբեկ միջնորդության միջոցով դատավորներին ցուցում է տրվել դիմողի գործի առնչությամբ կիրառել նյութական քրեական իրավունքի որոշակի դրույթ:

Իր բացատրություններում Կառավարությունը նշում է, որ գանգատի այս մասի առնչությամբ դիմողը չի սպառել իր իրավունքների պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ բացարկ չի հայտնել վճռաբեկ ատյանում դատավորների կոլեգիալ կազմին ոչ Գերագույն դատարանում գործի քննության ժամանակ, ոչ էլ ավելի ուշ: Կառավարությունը նշում է, որ նույնիսկ եթե ընդունվի, որ դիմողը բավարարել է Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի համապատասխան պահանջները, դիմողը չի ներկայացրել վճռաբեկ դատավորների անկողմնակալության կապակցությամբ կասկած հարուցող որևէ փաստարկ՝ Կոնվենցիայի նախադեպային իրավունքի սուբյեկտիվ և օբյեկտիվ պարզաբանումներին համապատասխան: Վճռաբեկ միջնորդության նպատակն էր երկրի դատական մարմիններին հնարավորություն տալ ուղղելու ստորին ատյանի դատարանի սխալը: Գերագույն դատարանի նախագահը և քրեական պալատի նախագահը չեն մասնակցել գործի քննությանը: Եվ վերջապես, ներպետական քրեական դատավարությունը չի պահանջում, որ Գերագույն դատարանն ընդունի վճռաբեկ միջնորդությունը: Կառավարությունը եզրակացնում է, որ այս գործում Գերագույն դատարանն անկողմնակալ էր, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով:

Դիմողը պնդում է, որ գանգատի այս մասով ինքը չուներ իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց, քանի որ նույնիսկ եթե նա բացարկ հայտներ վճռաբեկ դատավորներին, Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահը կնշանակեր նոր կոլեգիալ կազմ, որից նույնպես կպահանջվեր քննության առնել վճռաբեկ միջնորդությունը: Ուստի ցանկացած ենթադրյալ նոր դատավոր կլիներ Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահի նույնպիսի ճնշման տակ: Դիմողի կարծիքով, վերջինս, ներկայացնելով վճռաբեկ միջնորդություն, կարող էր հրաժարվել վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակելու իր իրավունքից՝ հօգուտ Գերագույն դատարանի նախագահի: Սակայն նա այդպես չի վարվել: Ավելին, վճռաբեկ միջնորդությունը նախաձեռնվել էր առաջին ատյանի դատարանի դատավորի՝ Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահին ուղղված նամակի հիման վրա. այսպիսի ընթացակարգը ներպետական օրենսդրության մեջ իրավական հիմք չուներ: Վերջապես, վճռաբեկ միջնորդությունը Գերագույն դատարանին ներկայացվել է դատախազի կողմից՝ որպես մեղադրանքի կողմի վճռաբեկ բողոք: Դիմողը համարում է, որ այս հանգամանքները բացահայտում են Գերագույն դատարանի կանխակալ դիրքորոշումը տվյալ գործի վերաբերյալ:

Դատարանը հիշեցնում է Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված՝ իրավունքի պաշտպանության ներպետական միջոցներն սպառելու

պահանջը: Այս դեպքում հաշվի են առնվում միայն պաշտպանության գործող ներպետական միջոցները:

Դատարանը նշում է դիմողի փաստարկը, որ վճռաբեկ դատավորներին հայտնված բացարկը չէր կարող վերացնել Գերագույն դատարանի կանխակալության կապակցությամբ նրա դժգոհությունը, քանի որ յուրաքանչյուր նոր դատավորից կապահանջվել քննության առնել Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահի ցուցումները: Չի քննարկվել այն հանգամանքը, որ դիմողն իրավունք չուներ վիճարկելու այդ համակարգը, քանի որ քրեական պալատի նախագահն է, համաձայն համապատասխան ներպետական օրենքների, ներկայացրել վճռաբեկ գանգատի միջնորդություն: Ուստի չկային իրավունքի պաշտպանության արդյունավետ ներպետական միջոցներ, որոնք դիմողը կարողանար սպառել այս կապակցությամբ:

Հետևաբար, Դատարանը մերժում է Կառավարության առարկությունը՝ գանգատի այս մասի կապակցությամբ իրավունքի պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ:

Կողմերի ներկայացրած փաստարկներից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ գանգատի այս մասի կապակցությամբ ծագում են փաստի և իրավունքի խրթին հարցեր, որոնց լուծումը կախված կլինի գործի ըստ էության քննությունից: Ուստի այս գանգատը չի կարող մերժվել որպես ակնհայտորեն անհիմն՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով: Այն անընդունելի համարելու այլ հիմքեր չեն հաստատվել:

5. Հիմնվելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա՝ դիմողը գանգատ է ներկայացրել առ այն, որ ինքը զրկվել է արդարացի դատաքննությունից՝ դատարանների չհիմնավորված սխալ որոշումների և դատավարության շուրջ ծավալված լրատվական արշավի կապակցությամբ:

Կառավարությունն իր ներկայացրած բացատրություններում պնդում է, որ դիմողն իր այն գանգատի առնչությամբ, որ լրատվամիջոցների ծավալած արշավը կանխակալ ազդեցություն է ունեցել դատավարության վրա, չէր սպառել իրավունքի պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ նա զրպարտության համար քաղաքացիական հայցեր չէր ներկայացրել ընդդեմ հարցազրույց տվողների կամ լրագրողների: Դիմողը կարող էր դիմել նաև նշված անձանց դեմ՝ գիտակցաբար իր կեղծ պիտակավորման համար քրեական գործ հարուցելու պահանջով: Նա չի օգտվել այս հնարավորություններից: Ինչ վերաբերում է դատարանների անաչառության վրա լրատվամիջոցների արշավի ազդեցությանը, Կառավարությունը պնդում է, որ դիմողն այս կապակցությամբ չի սպառել իրավունքի պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ բացարկ չի հայտնել առաջին ատյանի դատավորին, ինչպես նաև դատավարությանը մասնակից մյուս դատավորներին: Բոլոր դեպքերում, դիմողի դատավարության շուրջ ծավալված լրատվամիջոցների արշավի կապակցությամբ Կառավարությունը գտնում է, որ լիտվական իշխանությունները չեն կարող պատասխանատու լինել մասնավոր անձանց կողմից անկախ թերթերում և լրագրերում արված հայտարարությունների համար: Դատարանները արդարացիորեն և անկողմնակալորեն են գնահատել իրենց ներկայացրած ապացույցները, քանզի դիմողը մեղավոր է ճանաչվել մեղադրանքի կողմի ներկայացրած մեղադրանքների չորս կետերից միայն երկուսով: Կառավարությունը պնդում է, որ դիմողն ունեցել է արդարացի դատաքննություն, և որ լրատվամիջոցների արշավը ոչ մի ազդեցություն չի ունեցել դատաքննության արդարացիության կամ դատարանների անկողմնակալության վրա:

Դիմողը պնդում է, որ նա անհրաժեշտություն չունեի սպառելու իրավունքի պաշտպանության ներպետական միջոցները՝ իր գործի մասին ելույթ ունեցող թերթերի կամ պետական պաշտոնյաների դեմ քրեական կամ քաղաքացիական գործեր հարուցելով: Ըստ դիմողի, պետական պաշտոնյաներն իրենք պետք է դատապարտեն տպագրված հայտարարությունները, եթե դրանք համարում են անպատշաճ: Սակայն այդպիսի մեղադրանքներ երբևէ տեղ չեն գտել: Նա նշում է, որ մտադրությունը ոչ թե լրատվամիջոցների, այլ պետական պաշտոնյաների հետ դատավիճելն էր, որոնք թույլ տվեցին, որպեսզի լրատվամիջոցների արշավն ընդհանուր առմամբ բացասական ազդեցություն ունենա դատավարության վրա: Ավելին, դիմողը պնդում է, որ ոչ մի բացարկ որևէ կոնկրետ դատավորի նկատմամբ չէր փարատի իր կասկածները նրանց կանխակալ դիրքորոշման առնչությամբ, քանի որ լրատվամիջոցներում տեղ գտած՝ իր

դեմ ուղղված բազմաթիվ անհիմն պնդումները «կարդացել էին Հանրապետության բոլոր դատավորները»:

Ինչ վերաբերում է դիմողի այն գանգատներին, որ Գերագույն դատարանը չի հետևել նախադեպային իրավունքին և սխալ են գնահատվել տուժողի ցուցմունքները, Դատարանը նշում է, որ այս գանգատներն առաջին անգամ Դատարանին ներկայացվել են համապատասխանաբար 1999թ. մարտի 29-ին և 1999թ. հոկտեմբերի 1-ին: Սակայն դիմողի դատապարտման վերաբերյալ վերջնական որոշումը կայացվել էր 1997թ. դեկտեմբերի 2-ին, այսինքն դիմողի գանգատը ներկայացնելուց ավելի քան վեց ամիս առաջ: Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերի համաձայն՝ Դատարանից չի պահանջվում քննության առնել գանգատի այս մասը, քանի որ այն ներկայացվել է ժամկետանց:

Այնուհետև Դատարանը նշում է Կառավարության փաստարկը, որ դիմողը քաղաքացիական և քրեական գործեր չի հարուցել տարբեր թղթակիցների և պետական պաշտոնյաների դեմ՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն իրավունքի պաշտպանության ներպետական միջոցներն սպառելու նպատակով: Սակայն Դատարանը գտնում է, որ վերը նշված դրույթը պահանջում է միայն այն իրավունքի պաշտպանության միջոցների սպառումը, որոնք վերաբերում են Կոնվենցիայի վիճարկվող խախտումներին և կարող են քննարկվող իրավիճակում օգնել ուղղակիորեն: Այս դեպքում Դատարանը համամիտ է դիմողի հետ, որ ոչ մի քրեական կամ քաղաքացիական գործի հարուցում մասնավոր անձանց կամ պետական պաշտոնյաների դեմ, որոնք վերը նշված դատավարության կողմեր չեն, չէր կարող լինել իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների համար: Դատարանը գտնում է, որ տվյալ գործում դիմողից միայն պահանջվում էր նշել իր գանգատները՝ իր դեմ առաջադրված մեղադրանքները քրեական դատավարության ընթացքում լուծող իրավասու ներպետական դատարանների արդարացի չլինելու վերաբերյալ:

Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ դիմողը դատավճռի դեմ իր բողոքում պնդում էր, որ տեղի է ունեցել արդարացի դատաքննության իրավունքի խախտում: Հետևաբար, Դատարանը մերժում է Կառավարության առարկությունները՝ գանգատի այս մասով իրավունքի պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ:

Ինչ վերաբերում է դիմողի գանգատին այն մասին, որ ներպետական դատարաններն իրեն զրկել են արդարացի դատաքննությունից և սխալ դատավճիռ են կայացրել, Դատարանը հիշեցնում է, որ իր խնդիրը չէ վերանայել ներպետական դատական իշխանությունների կողմից թույլ տրված՝ փաստի և իրավունքի ենթադրյալ սխալները, և որ որպես ընդհանուր կանոն ներպետական դատարաններն են, որ պետք է գնահատեն իրենց ներկայացված ապացույցները և կիրառեն ներպետական օրենսդրությունը: Դատարանի խնդիրն է ճշտել, թե արդյոք դատավարությունը՝ իր ամբողջությամբ եղել է արդարացի (տե՛ս, *mutatis mutandis*, Բերնարդն ընդդեմ Ֆրանսիայի 1998թ. ապրիլի 23-ի վճիռը, Ժողովածուներ 1998-II, էջ 879, կետ 37):

Ի պատասխան դիմողի այն պնդմանը, որ լրատվամիջոցների կողմից ծավալված արշավը բացասական ազդեցություն էր ունեցել դատավարության արդարացիության վրա, Դատարանը գտնում է, որ լրատվամիջոցների վնասակար արշավը կարող էր անբարենպաստ ազդեցություն գործել դատաքննության արդարացիության վրա՝ ազդելով հասարակական կարծիքի և, հետևաբար, երկվյալ ատենակալների վրա, որոնք պետք է որոշեն մեղադրյալի մեղավորության հարցը (տե՛ս, *inter alia*, Eur. Comm. HR, no. 10486\83, Հաուսշիլդն ընդդեմ Դանիայի, Dec. 9.10.1986, D. R. 49, էջեր 86,101): Միևնույն ժամանակ Դատարանը նշում է, որ լրատվամիջոցների կողմից ընթացիկ իրադարձությունների լուսաբանումն ազատ արտահայտվելու դրսևորում է, որը երաշխավորված է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով: Եթե դատավարության շուրջ ծավալվում է վնասակար լրատվական արշավ, ապա վճռորոշը ոչ թե դատարանների կանխակալ մոտեցման վերաբերյալ կասկածյալի սուբյեկտիվ պատկերացումն է, այլ այն, թե արդյոք գործի առանձին հանգամանքները հաշվի առնելով, նրա մտավախությունները կարող են համարվել օբյեկտիվորեն

արդարացված (տես, mutatis mutandis, Կաստիլիո Ալզարն ընդդեմ Իսպանիայի 1998թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, Ժողովածուներ 1998-VIII, էջ 3116, կետ 45):

Դատարանը նշում է, որ դիմողի ձերբակալումը և դատավարությունը քննարկվել են բազմաթիվ հեռուստահաղորդումների ընթացքում և լուսաբանվել համազգային ընդգրկումով: Դատարանը գտնում է, որ լրատվամիջոցների հետաքրքրությունը «Դակտարասի գործի» նկատմամբ և հասարակական կարծիքի վրա դրա էական ազդեցությունը մեծապես հետևանք էին 1990 թվականների սկզբին Լիտվայում կազմակերպված հանցավոր խմբավորումների գործունեության: Լրատվամիջոցների հետաքրքրությունը կարող էր նաև խթանված լինել այն փաստով, որ դատավարության ընթացքում սպանվել էին փրկագնի գործով անցնող երկու վկաներ:

Դատարանն ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ մամուլը գրեթե միաձայն դիմողին ներկայացրել է որպես «մաֆիայի պարագլուխ»: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ որոշ դեպքերում իշխանություններն ընդգծել են շտապողական դատաքննության վտանգը (տե՛ս 1996թ. դեկտեմբերի 19-ին և 1997թ. հունվարի 10-ին հրապարակված՝ դատախազների հարցազրույցները, որոնք ներկայացված են «Փաստեր» բաժնում, էջեր 6-7): Անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ դիմողի դեմ առաջադրված մեղադրանքները պետք է լուծվեն պրոֆեսիոնալ դատավորների կողմից, որոնք պետք է որ ավելի քիչ ազդվեին լրատվամիջոցների ծավալած արշավից, քան երդվյալ ատենակալները: Դատարանը նկատում է, որ գործը քննող դատավորները պատշաճ ուշադրություն են դարձրել գործի առանձին հանգամանքներին և ապացույցները գնահատել են մանրակրկիտորեն՝ ամբաստանյալին մեղավոր ճանաչելով առաջադրված մեղադրանքի չորս կետերից միայն երկուսով: Ուստի Դատարանը եզրակացնում է, որ դիմողի մտավախությունները՝ դատարանների վրա լրատվամիջոցների ծավալած արշավի կանխակալ ազդեցության կապակցությամբ, «օբյեկտիվորեն արդարացված չէր»:

Հիմնվելով վերը նշվածի վրա՝ Դատարանը չի կարող հաստատել, որ որևէ փաստ խոսում է այն մասին, որ լրատվարշավն ազդեցություն է ունեցել անկողմնակալության վրա, կամ, ընդհանուր առմամբ, գանգատի այս մասի կապակցությամբ տեղի է ունեցել արդարացի դատաքննության սկզբունքի խախտում՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով:

Սրանից հետևում է, որ գանգատի այս մասն ակնհայտորեն անհիմն է՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով: Այդ պատճառով այն պետք է մերժվի համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 4-րդ կետի:

6.Դիմողը գանգատվում է, որ խախտվել է իր անմեղության կանխավարկածը՝ վկայակոչելով Վիլնյուսի շրջանային դատարանի դատավճիռը, որում դատարանն իրեն անվանել է «հանցագործ աշխարհի պարագլուխներից մեկը»: Այս կապակցությամբ նա նաև հիշատակում է Գլխավոր դատախազի և այլ պետական պաշտոնյաների հայտարարությունները, ովքեր մամուլին տված իրենց հարցազրույցներում իրեն անհիմն կերպով մեղավոր էին համարում: Դիմողը վկայակոչում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը, որը նախատեսում է հետևյալը.

«Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան»:

Կառավարությունն իր բացատրություններում կրկնում է, որ դիմողը պետական պաշտոնյաների՝ մամուլում արված հայտարարությունների վերաբերյալ իր գանգատի կապակցությամբ չի սպառել իրավունքի պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ նա հետամուտ չի եղել հարցազրույց տվողների դեմ քաղաքացիական կամ քրեական գործ հարուցելուն: Ըստ Կառավարության՝ նման գործերի հարուցումը նպատակահարմար էր պետական պաշտոնյաների իրական բառերը հաստատելու համար, որոնք կարող էին աղավաղված լինել լրագրողների կողմից: Ինչևիցե, «Փաստեր» մասում ( էջ 5-7 վերը) վերարտադրված հայտարարությունները չեն պարունակում որևէ խոսք այն մասին, որ դիմողը կատարել է ենթադրյալ հանցագործությունները փրկագնի գործում: Ավելին, վերոնշյալ հոդվածներում մեջբերվել են Արդարադատության նախարարի և Խորհրդարանի փոխնախագահի հայտարարությունները՝ արված 1996թ. սկզբին. նրանցից ոչ մեկը չէր զբաղեցնում այդ պաշտոնները 1997թ., երբ դիմողի գործը քննվում էր դատարանում: Ըստ

Կառավարության՝ այն հանգամանքը, որ դիմողը դատարանի կողմից մեղավոր էր ճանաչվել մեղադրանքի չորս կետերից միայն երկուսով, ցույց է տալիս, որ նա համարվել է անմեղ մինչև օրենքի համաձայն մեղավորության ապացուցումը: Կառավարությունը հավելում է նաև, որ Վիլնյուսի շրջանային դատարանը դատավճռի պատճառաբանական մասում նշելով «անդրաշխարհի պարագլուխներից մեկը» բառերը, ընդամենը վերարտադրել է համապատասխան վկայի հայտարարությունը: Կառավարությունը նշում է, որ առաջին ատյանի դատարանն իրականում մերժել է այն պնդումը, որ դիմողը «հանցագործ աշխարհի պարագլուխներից մեկն» է՝ այս բառակապակցությունը չընդգրկելով առաջին ատյանի դատարանի դատավճռի եզրափակիչ մասում: Ուստի չի կարող համարվել, որ հայտարարությունը հաստատում է դիմողի մեղքը՝ որևէ կոնկրետ հանցանքի համար:

Դիմողը հերքում է Կառավարության առարկությունը և կրկնում է վերը նշված (էջ 17) փաստարկները: Դիմողի կարծիքով 1997թ. փետրվարի 13-ին Վիլնյուսի շրջանային դատարանը իր սեփական նախաձեռնությամբ նշել է այն պնդումը, որ ինքը «հանցագործ աշխարհի պարագլուխներից մեկն» է: Դատարանը չպետք է դա աներ, քանի որ երբևէ քննության չի առնվել այդ պնդման հիմնավորվածությունը: Ավելին, Գլխավոր դատախազի տեղակալի և այլ պետական պաշտոնյաների հայտարարություններն իրականում խախտել են անմեղության կանխավարկածը:

Ի պատասխան իրավունքի պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ Կառավարության պնդման, Դատարանը հիշեցնում է, որ որևէ քրեական կամ քաղաքացիական գործի հարուցում ընդդեմ այն անձանց, որոնք տվյալ դատավարության կողմեր չեն, չի կարող համարվել իրավունքի պաշտպանության միջոց՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների համար (տես էջ 17-18): Այս կապակցությամբ Դատարանը նկատում է, որ դիմողն իր դատավճռի դեմ ուղղված բողոքում պնդել է անմեղության կանխավարկածի խախտման մասին: Յետևաբար, Դատարանը մերժում է Կառավարության առարկությունը՝ զանգատի այս մասի առնչությամբ իրավունքի պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ:

Դատարանը կրկնում է, որ 6-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված անմեղության կանխավարկածը 6-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվող արդարացի դատաքննության տարրերից մեկն է (տե՛ս վերոհիշյալ Բերնարդն ընդդեմ Ֆրանսիայի վճիռը, loc. cit.): Յամապատասխանաբար, Դատարանը պետք է այս զանգատը քննության առնի այս երկու դրույթների տեսանկյունից: Դատարանը կրկնում է նաև, որ անմեղության կանխավարկածը պարտավոր են հարգել ոչ միայն դատավորները, այլև այլ պետական մարմինները (տե՛ս Ալլեն դե Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի 1995թ. փետրվարի 10-ի վճիռը, Շարքեր Ա. no. 308, էջ 17, կետեր 38 և 41): Յաշվի առնելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հիման վրա տեղեկատվություն ստանալու և տարածելու իրավունքը՝ 6-րդ հոդվածի 2-րդ կետը չի կարող խոչընդոտել իշխանություններին հասարակությանը տեղեկացնելու քրեական հետաքննության ընթացքի մասին, սակայն այն պահանջում է, որպեսզի այդ ամենը արվի ամենայն զգուշությամբ և հաշվի առնելով, որ պետք է հարգվի անմեղության կանխավարկածը (loc. cit., կետ 38):

Այսուհանդերձ, անհրաժեշտ է տարբերակել հայտարարությունները, որոնք արտահայտում են տվյալ անձի մեղավորության վերաբերյալ կարծիք, և հայտարարությունները, որոնք պարզապես նկարագրում են «կասկածի վիճակ»: Առաջինները խախտում են անմեղության կանխավարկածը, մինչդեռ վերջինները Դատարանի կողմից քննության առնված տարբեր իրավիճակներում ընդունվել են որպես առարկություն չառաջացնող (տե՛ս, inter alia, Լուտսն ընդդեմ Գերմանիայի 1987թ. օգոստոսի 25-ի վճիռը, Շարքեր Ա no. 123, էջ. 25, կետ 62, Ինգլերտն ընդդեմ Գերմանիայի 1987թ. օգոստոսի 25-ի վճիռը, Շարքեր Ա no. 123, էջ 55, կետ 39, Նյոքլենբրոքիոֆն ընդդեմ Գերմանիայի 1987թ. օգոստոսի 25-ի վճիռը, Շարքեր Ա no. 123, էջ 80, կետ 39, և Լետչերն ընդդեմ Նիդեռլանդների 1996թ. մարտի 26-ի վճիռը, Ժողովածուներ 1996-II, էջ 436, կետ 31):

Դատարանը նկատում է, որ Վիլնյուսի շրջանային դատարանի հիշատակումն այն մասին, թե դիմողն «հանցավոր աշխարհի պարագլուխներից է» բխել է դիմողի դեմ վկայություն տված մի քանի վկաների ցուցմունքներից: Ուստի այս կապակցությամբ կրկնելով վկաների ցուցմունքները՝ դատարանը միտում չուներ ակնարկելու, որ դիմողը մեղավոր է որևէ կոնկրետ հանցանք կատարելու մեջ:

Ինչ վերաբերում է պետական պաշտոնյաների հայտարարություններին, որոնք հրապարակվել են մամուլում՝ մինչև 1997թ. փետրվարի 13-ին դիմողին մեղավոր ճանաչելը, Դատարանը նշում է այն ժամանակվա Արդարադատության նախարարի և Սեյմի փոխնախագահի՝ 1996թ. փետրվարի 6-ին հրատարակված հայտարարությունները (տե՛ս «Փաստեր» բաժինը, էջ 5): Այս բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց կարծիքը հայտնել են քաղաքական համատեքստում՝ նպատակ ունենալով բացատրություններ տալ հասարակությանն այն մասին, թե ինչ դեր են ունեցել վարչական իշխանությունները դիմողի ձերբակալության հարցում: Դատարանը գտնում է, որ այդ կարծիքները թելադրված էին անհերքելի փաստերով, ինչպիսիք են, օրինակ, դիմողի նախկինում ունեցած դատվածությունը և նոր հարուցված դատական գործը՝ խուլիգանության մեղադրանքով, սակայն այդ ամենը չէր կարող հասկացվել որպես կոնկրետ հանցանքի հաստատում: Այս ամենը ճիշտ է նաև դատախազների հայտարարությունների առնչությամբ, որոնք տարբեր լրագրողներ վկայակոչում են 1996թ. փետրվարի 6-ին, 1996թ. դեկտեմբերի 18-ին, 1996թ. դեկտեմբերի 19-ին, 1997թ. հունվարի 10-ին, 1997թ. փետրվարի 6-ին և 1997թ. փետրվարի 11-ին լույս տեսած հոդվածներում (տե՛ս «Փաստեր» բաժինը, էջ 5-7), որոնցում դիմողի «վտանգավոր բնույթը» շեշտվում էր կամ նրա դեմ «կասկածի վիճակը» նկարագրվում էր՝ հասարակությանը քրեական դատավարության մասին տեղյակ պահելու համար: Դրանք դիմողի մեղավորության մասին պաշտոնական հայտարարություններ չէին, որոնք կարող էին հասարակությանը դրդել հավատալու, որ նա մեղավոր է, կամ կանխորոշել իրավասու դատական մարմինների կողմից փաստերի գնահատումը (տե՛ս, *mutatis mutandis*, վերը նշված Ալլեն դե Ռիբեմոնի վճիռը, էջ 17, կետ 41):

Հիմնվելով վերը նշվածի վրա՝ Դատարանը չի գտնում, որ դիմողի գանգատի այս մասի կապակցությամբ խախտվել է անմեղության կանխավարկածը: Ուստի գանգատի այս մասն ակնհայտորեն անհիմն է՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով: Հետևաբար, այն պետք է մերժվի համաձայն 35-րդ հոդվածի 4-րդ կետի:

7. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա՝ դիմողը նաև գանգատ է ներկայացնում դատախազի 1996թ. հոկտեմբերի 1-ի որոշման կապակցությամբ, որում դատախազը նշում է, որ դիմողի «մեղքն ապացուցվել է նախաքննության ընթացքում հավաքված ապացույցներով»:

Կառավարությունը նշում է, որ դատախազը 1996թ. հոկտեմբերի 1-ի իր որոշման մեջ չի արել որևէ հայտարարություն, որը կխախտեր դիմողի անմեղության կանխավարկածի իրավունքը, այլ ուղղակի նշել է այն պատճառները, որոնց հիման վրա մերժել էր դիմողի խնդրանքը՝ դատական գործը կարճելու վերաբերյալ: Կառավարությունը գտնում է, որ դատախազը պետք է համոզված լինի, որ մեղադրյալը կատարել է ենթադրյալ հանցանքը, այլապես կբացակայեր մեղադրանքը պաշտպանելու հիմքը:

Կողմերի ներկայացրած փաստարկներից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ գանգատի այս մասից բխում են փաստի և իրավունքի խրթին հարցեր, որոնց լուծումը կախված կլինի գանգատի ըստ էության քննությունից: Ուստի այս գանգատը չի կարող մերժվել ակնհայտորեն անհիմն լինելու հիմքով՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով: Այն անընդունելի հայտարարելու այլ հիմքեր չեն հաստատվել:

8. Հիմնվելով 6-րդ հոդվածի 1-ին և 3 (բ) և (գ) կետերի վրա՝ դիմողը վկայակոչում է իր պաշտպանության իրավունքների ենթադրյալ խախտումները: Այս կապակցությամբ նա հայտարարում է, որ 1996թ. հոկտեմբերի 1-ին իր կալանավորումը կարգադրելուց ի վեր նա չի կարողացել առանց դատախազի գրավոր թույլտվության խորհրդակցել իր պաշտպանի հետ կամ փոխանակել գաղտնի տեղեկատվություն:

6-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է հետևյալը.

« Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ իրավունքները. ...

...

բ. ունենալ բավարար ժամանակ և հնարավորություններ իր պաշտպանությանը նախապատրաստվելու համար,

գ. պաշտպանվել անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով, կամ եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալ անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը, ...»:

Դատարանը նշում է, որ վերը նշված գանգատը սահմանափակվում է այն պնդմամբ, որ դիմողը չունի բացարձակ իրավունք հաղորդակցվելու իր պաշտպանի հետ առանց դատախազի գրավոր թույլտվության: Սակայն Դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի վերոնշյալ դրույթները չեն երաշխավորում ցանկացած ժամանակ առանց որևէ սահմանափակման պաշտպանի հետ հաղորդակցվելու և նրա հետ գաղտնի տեղեկատվություն փոխանակելու իրավունքը: Դիմողը չի պնդում, որ նրա որևէ խնդրանք՝ հանդիպելու իր պաշտպանների հետ կամ գրելու նրանց, երբևէ մերժվել է: Հետևաբար, Դատարանը չի գտնում, որ դիմողի հաղորդակցությունն իր պաշտպանների հետ վերահսկելու վերաբերյալ դատախազի որոշումն ունեցել է որևէ գործնական հետևանքներ նրա պաշտպանության իրավունքների վրա՝ ըստ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3 (բ) և (գ) կետերի:

Հետևաբար, դիմումի տվյալ մասն ակնհայտորեն անհիմն է՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3 –րդ կետի իմաստով: Ուստի այն պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 4 –րդ կետի հիման վրա:

9. Դիմողն այնուհետև գանգատվում է առ այն, որ քրեական օրենքը հետադարձ կիրառում է ունեցել բռնության սպառնալիքով գույք ձեռք բերելու համար իր դատապարտման նկատմամբ: Նա վկայակոչում է Կոնվենցիայի 7-րդ հոդվածը, որն ամրագրում է.

«1. Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին:

2. Սույն հոդվածը չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալ և պատժել որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված ընդհանուր սկզբունքներին համապատասխան համարվել է քրեական հանցագործություն»:

Դատարանը նշում է, որ դիմողը չի հերքում այն փաստը, որ մեղսագրվող հանցագործության կատարման ժամանակ բռնության սպառնալիքով գույք ձեռք բերելը ներպետական օրենսդրության համաձայն հանցագործություն էր համարվում, ինչպես ամրագրված է վերոհիշյալ դրույթի առաջին կետում: Ավելին, դիմողը չի պնդում, որ իր կատարած գործողությունները չեն կարող համարվել «քրեական»՝ 7-րդ հոդվածի 2-րդ կետի նպատակների համար:

Սրանից հետևում է, որ գանգատի այս մասն ակնհայտորեն անհիմն է՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով: Ուստի այն պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն:

Այս հիմքերով Դատարանը միաձայն

ԸՆԴՈՒՆԵԼԻ Է ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ, առանց գանգատն ըստ էության գնահատելու, դիմողի գանգատներն այն մասին, որ Գերագույն դատարանն անկողմնակալ դատարան չէր, և որ դատախազը խախտել է անմեղության կանխավարկածը 1996թ. հոկտեմբերի 1-ի իր հայտարարության մեջ.

ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ գանգատի մնացած մասերը:

Ս. Դոլլե  
Քարտուղար

Ժ.- Պ. Կոստա  
Նախագահ

ՎԻՏՈԼԴ ԼԻՏՎԱՆ ԸՆԴԴԵՄ ԼԵՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ

CASE OF WITOLD LITWA v. POLAND

(Գանգատ թիվ 26629/95)

Դատարանի 2000թ. ապրիլի 4-ի

Վճիռը

Ստրասբուրգ

**Վիտոլդ Լիտուան ընդդեմ Լեհաստանի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երկրորդ բաժանմունք),  
նիստ գումարելով որպես Մեծ պալատ՝ դատավորների հետևյալ կազմով՝

պրն Մ. Ֆիշբախ՝ *նախագահ*,

պրն Բ. Քոնֆորտի,

պրն Գ. Բոնելո,

տկն Վ. Ստրազնիչկա,

տկն Մ. Տաստաս-Նիկոլովսկա,

պրն Ա. Բակա,

պրն Է. Լևիտս, դատավորներ,

նաև պրն Է. Ֆրայբերգ, *Բաժանմունքի քարտուղար*

1999թ. հոկտեմբերի 7-ի և 2000թ. մարտի 23-ի դրնվակ  
խորհրդակցություններից հետո, 2000թ. մարտի 23-ին ընդունեց հետևյալ վճիռը.

**Վարույթ**

1. Գործը դատարան է հանձնել Մարդու իրավունքների եվրոպական  
հանձնաժողովը («Հանձնաժողով») 1999թ. մարտի 6-ին: Գործի համար առիթ է  
հանդիսացել 1994թ. օգոստոսի 6-ին Լեհաստանի քաղաքացի Վիտոլդ Լիտուայի  
(«դիմող») կողմից Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների  
պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») նախկին 25-րդ հոդվածի

հիման վրա՝ ընդդեմ Լեհաստանի Հանրապետության Հանձնաժողովին ուղղված գանգատը (թիվ 26629/95): Դիմողին ներկայացնում են Կրակով քաղաքում աշխատող փաստաբաններ պրն Պ. Սո Հաջը, Լեհական կառավարությանը՝ պրն Դրժևիկին՝ Արտաքին գործերի նախարարությունից:

Հանձնաժողովն առաջարկում էր որոշել՝ արդյո՞ք գործի հանգամանքները վկայում են պատասխանող պետության կողմից Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իր պարտավորությունների խախտման մասին:

2. 1999թ. մարտի 31-ին Մեծ պալատի հանձնախումբը, Կոնվենցիայի թիվ 11 արձանագրության 5-րդ հոդվածի 4-րդ կետի և Դատարանի կանոնակարգի 100-րդ կանոնի 1-ին կետի և 24-րդ կանոնի 6-րդ կետի հիման վրա որոշում է ընդունել, որ գործը պետք է քննի Դատարանի բաժանմունքներից մեկում կազմավորված Պալատը: Հետագայում, Դատարանի նախագահ պրն Լ. Վիլդհաբերը գործը հանձնարարել է Երկրորդ բաժանմունքին (52-րդ կանոնի 1-ին կետ): Բաժանմունքում ձևավորված պալատի կազմի մեջ մտնում էին Լեհաստանից ընտրված դատավոր պրն Ջ. Մակարչիկը *ex officio* (Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 2-րդ կետ և Դատարանի կանոնակարգի 26-րդ կանոնի 1(ա) կետ) և պրն Մ. Ֆիշբախը՝ Բաժանմունքի փոխնախագահը (26-րդ կանոնի 1-ին կետ և 12-րդ կանոն): Պալատը համալրելու նպատակով նշանակված մյուս անդամներն էին պրն Բ. Քոնֆորտին, պրն Գ. Բոնելոն, տկն Մ. Տաստաս-Նիկոլովսկան, պրն Ա.Բ. Բական և պրն Է. Լևիտսը: Հետագայում, քանի որ պրն Ջ. Մակարչիկն անկարող էր Պալատի անդամ լինել, Լեհաստանի կառավարությունը, Պալատի նախագահի խնդրանքով, նշանակել է այլ ընտրովի դատավոր: Նախագահի կարգադրության համաձայն՝ փոխարինող դատավոր տկն Վ. Ստրազնիչկան փոխարինել է Ջ. Մակարչիկին՝ որպես Պալատի անդամ (26-րդ կանոնի 1(ա) կետ և 29-րդ կանոն):

3. 1999թ. ապրիլի 27-ին Պալատը՝ 59-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն որոշել է անցկացնել լսումներ:

4. Հետագայում Պալատի նախագահը, 59-րդ կանոնի 3-րդ կետի համաձայն, կողմերին հրավիրել է գրավոր բացատրություններ ներկայացնել գործում ծագած հարցերի վերաբերյալ: Քարտուղարը Կառավարության գրավոր բացատրությունն ստացել է 1999թ. սեպտեմբերի 3-ին: Դիմողն իր գրավոր բացատրությունը ներկայացրել է 1999թ. սեպտեմբերի 6-ին:

5. Համաձայն Նախագահի որոշման, որը դիմողի ներկայացուցիչներին նաև թույլ է տվել Դատարանին դիմել լեհերենով (34-րդ կանոնի 3-րդ կետ), լսումները տեղի են ունեցել 1999թ. հոկտեմբերի 7-ին՝ Մարդու իրավունքների պալատում կայացած դռնբաց նիստում:

Դատարանի առջև հանդես են եկել՝

(ա) *Կառավարության անունից՝*

պրն Կ. Դրժևիկին  
պրն Ա. Կալի Սկին  
տկն Բ. Դրժևիկան  
տկն Մ. Վ. Սեկ-Վիադերեկը

*ներկայացուցիչ,  
փաստաբան,  
խորհրդականներ.*

(բ) *դիմողի անունից՝*

պրն Պ. Սո Հաջը  
պրն Կ. Թորը

*փաստաբան,  
խորհրդական.*

Դատարանը լսել է պրն Դրժևիկի և պրն Սո Հաջի ելույթները, ինչպես նաև Դատարանի դատավորների հարցերին՝ պրն Դրժևիկի և պրն Թորի պատասխանները:

## ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### I. Գործի հանգամանքները

6. Դիմողը՝ ծնված 1946 թ., անաշխատունակ է՝ մեկ աչքից՝ կույր, իսկ մյուսի տեսողությունը լրջորեն վնասված լինելու պատճառով:

7. 1994 թ. մայիսի 5-ի կեսօրին, դիմողը՝ ուղեկցող շան հետ, գնում էր Կրակովի թիվ 30 փոստատուն՝ ստուգելու իր փոստարկղերը: Նրան ուղեկցում էր Վ. Բ.-ն: Դիմողի փոստարկղերը բաց էին և դատարկ: Դիմողը բողոքել է փոստատան ծառայողներին, որոնք էլ հետագայում ոստիկանություն են հրավիրել՝ հայտարարելով, որ դիմողը հարբած է և դրսևորում է հակաիրավական վարքագիծ:

8. Նույն օրը, ժամը 12.20-ին ոստիկանները դիմողին տարել են Կրակովի սթափարան (*Izba Witrze wie*), և դիմողը այնտեղ պահվել է 6 ժամ 30 րոպե: Կենտրոնի աշխատակիցները լրացրել են դիմողի սթափարանում մնալն արձանագրող հարցաթերթիկ:

9. Այդ ձև-հարցաթերթիկը եղել է նախատպված: Այն կրել է 006107/94 համարը և վերնագրված էր «Սթափարանում մնալն արձանագրող քարտ»: Այն լրացված է եղել ձեռագրով: Դիմողի ինքնությանը վերաբերող մանրամասն տվյալներից հետո հարցաթերթիկը բաժանված էր 7 մասի: Առաջին մասում, որը վերնագրված էր «Մուտքի խնդրագիր», նշված էր, որ դիմողը սթափարան է բերվել ժամը 12.45-ին: Ձեռքակալության պատճառը մասնակիորեն տպագիր էր, մասնակիորեն՝ ձեռագիր: 1982թ. հոկտեմբերի 26-ի Օրենքի 40-րդ բաժնի 1-ին կետի դիսպոզիցիան տպագիր էր (ստորև՝ 26-րդ կետում, մեջբերում է արված): Ձեռագրով գրված էր՝

«[դիմողը] աղմկոտ վիճաբանություն է սարքել Սrocza Osiedle-ի փոստատանը»:

10. Երկրորդ մասում, որը վերնագրված էր «Բժշկական ստուգում» և ստորագրված էր բժշկի կողմից, գրված էր.

« 1. Հիվանդության պատմություն՝

(1) Օգտագործած խմիչքի տեսակը, քանակը, հանգամանքները, հարբածությանը վերաբերող փաստերը. [ձեռագիր] ոգելից խմիչքի ակնհայտ հոտ, հրաժարվել է կատարել հարբածությունը որոշող տեստ.

2. Սթափարան բերված անձի քննություն.

(1) Վարքը՝ հստակ, անգիտակից, քնկոտ, շատախոս, հանգիստ, կռվարար, սակավախոս, զուսպ.

«հստակ» և «շատախոս» բառերն ընդգծված էին ձեռքով:

(2) Տրամադրությունը՝ ուրախ, տխուր, միջակ, գրգռված.

«միջակ» բառն ընդգծված էր ձեռքով:

(3) Քայլքը՝ հաստատուն, անհաստատ, երերուն.

«անհաստատ» բառն ընդգծված էր ձեռքով:

(4) Խոսքը՝ հստակ, ոչ պարզ, փնթփնթան.

«ոչ պարզ» բառն ընդգծված էր ձեռքով:

(5) Փսիսման հետքեր՝ տեսանելի, անտեսանելի.

«անտեսանելի» բառն ընդգծված էր ձեռքով:

(6) Չարկերակը՝ կանոնավոր, անկանոն, ուժեղ, թույլ.

«կանոնավոր» և «ուժեղ» բառերն ընդգծված էին ձեռքով:

(7) Սիրտը՝ կանոնավոր ռիթմ, անկանոն ռիթմ, հստակ տոներ, անհստակ [տոներ].

«կանոնավոր ռիթմ» և «հստակ տոներ» բառերն ընդգծված էին ձեռքով:

(8) Բիբերը՝ լայնացած, բնականոն, ոչ բնականոն, նեղ, դանդաղ հակազդեցություն, ոչ մի հակազդեցություն.

«բնականոն» բառն ընդգծված էր ձեռքով:

(9) Մաշկը՝ գունատ, կարմիր, արյան բնականոն հոսք, կապույտ.

«արյան բնականոն հոսք» բառերն ընդգծված էին ձեռքով:

(10) Թռքերը՝ [անընթեռնելի ձեռագիր].

(11) Որովայնախոռոչի վիճակը [ձեռագիր] որովայն [անընթեռնելի ածական].

(12) Վնասվածքներ [ձեռագիր] չկան.

(13) Այլ տկարություններ [ձեռագիր] տեսողությունը լրջորեն վնասված է.

(14) Քննված անձի վիճակի նկարագրությունը [ձեռագիր] չափավոր հարբածության վիճակ.

[Տպագիր] Քննության արդյունքում ես պարզեցի, որ բերված անձը՝

«չափավոր հարբածության» վիճակում է և պետք է պահվի սթափարանում մինչև սթափվելը: Դիմողը հրաժարվել է հարբածության աստիճանը որոշող տեստից:

[Դիմողի իրերը] նրանից վերցրել են ոստիկանի ներկայությամբ և տեղավորել սթափարանի պահոցում: Այս առումով կարելի է ասել, որ ոստիկանը չի կողոպտել դիմողին: Ոստիկանի միջամտությունը և դիմողի տեղափոխումը սթափարան հիմնավորված էին:

[Մենք] այսպիսով չենք կարող կիսել [դիմողի] այն կարծիքը, որ ոստիկանը կողոպտել է իրեն, և որ դիմողը ձերբակալվել և տեղափոխվել է սթափարան անհիմն կերպով»:

19. 1995թ. փետրվարի 28-ին Կրակով-ռոդմի-սի համայնքի դատախազը դադարեցրել է դիմողի պահանջով սկսված հետաքննությունը: Այնուամենայնիվ, 1995թ. դեկտեմբերի 1-ին Կրակովի շրջանային դատախազը (*Prokurator Wojewodzki*), դիմողի բողոքի հիման վրա, չեղյալ է հայտարարել վերոհիշյալ որոշումը և կարգադրել է անցկացնել լրացուցիչ հետաքննություն:

20. 1996թ. փետրվարի 19-ին Կրակով-Գրզեգորսկի ոստիկանատան ոստիկանը լսել է Վ.Կ.-ի վկայությունը, որը փոստատան՝ 1994թ. մայիսի 5-ի դեպքերի ականատես վկան էր: Վերջինիս՝ գործին վերաբերող ցուցմունքը հետևյալն էր.

«Ես ճանաչում եմ [դիմողին] 1969թ.-ից, բայց մենք մշտական կապի մեջ չենք և հաճախակի չենք հանդիպում: Մոտ մեկ տարի առաջ, օրը [այժմ] ճշգրիտ չեմ հիշում, ես հանդիպեցի [դիմողին] Նովա Հյուստայում (Կրակովի թաղամաս): Մենք միասին գնացինք օպտիկա, հետո՝ փոստատուն: Նա ինձ չի ասել, թե ինչու է գնում փոստատուն: Նրա շունը իր հետ էր, և քանի որ շների հետ չէր կարելի մտնել գրասենյակ, ես շան հետ սպասել եմ դրսում [դիմողի խնդրանքով] շնակապով պահելով շանը: [Դիմողը] մտել է շենք: Մի որոշ ժամանակ անց նա վերադարձավ հուզված և ասաց, որ կամ իր փոստարկղերը չեն փակել [փոստատան ծառայողները], կամ էլ ինչ-որ մեկը ջարդել է դրանք: Նա անմիջապես հետ դարձավ և նորից մտավ փոստատուն: Հետաքրքրասիրությունից դրդված՝ ես շան հետ հետևեցի նրան: Անմիջապես դրանից հետո երկու ոստիկան ներս մտան շենք և մոտեցան [դիմողին]: Նա ինձ ասաց, որ ես շանը դուրս տանեմ: Միևնույն ժամանակ ոստիկաններից մեկը մոտեցավ ինձ և ստուգեց իմ վկայականը: Ես դուրս եկա շենքից: Երբ ես կանգնած էի դրսում, տեսա, որ ոստիկանը [դիմողին] դուրս բերեց շենքից, ուղեկցեց նրան դեպի պարեկային մեքենան, և նրանք հեռացան: Իմ կարծիքով, [դիմողը] ամբողջ ընթացքում հանգիստ է ևել, բայց ես չգիտեմ, թե ոստիկաններն ինչու են նրան տարել: Ես չեմ տեսել, որ ոստիկաններն ուղեկցելիս հրեն նրան. նրանք բռնել էին [դիմողին] ձեռքերով: Ես չեմ կարող հիշել՝ արդյո՞ք [դիմողը] ոստիկաններին ասել է, որ ինձ մոտ գտնվող շունն իրենն է, թե՛ ոչ...»:

21. 1996թ. փետրվարի 26-ին Կրակով-Գրզեգորսկի ոստիկանությունը դադարեցրել է հետաքննությունը՝ պարզելով, որ ոչ մի հանցանք տեղի չի ունեցել: Որոշման հիմքերը հետևյալն են.

«Այսպիսով, ստացվել են ոստիկանների [1994թ. մայիսի 5-ի դեպքում ներգրավված] վկայությունները: Նրանք հայտարարել են, որ [դիմողին] տարել են [Կրակովի] սթափարան՝ հարբած վիճակում աղմկոտ վիճաբանություն սարքելու պատճառով: Նրանք չեն խփել [դիմողին], այլ պարզապես բռնել են նրան, երբ

տարել եւ նստեցրել են պարեկային մեքենան: Նրանք հայտարարել են, որ [ղիմողը] իր հետ շուն չուներ, եւ որ փոստատան շենքի մոտ կանգնած էր մի մարդ՝ շանը [շնակապից] բռնած, այսինքն՝ Վ. Բ.-ն: Այնուամենայնիվ, ոչ ոք չգիտեր, որ շունը պատկանում էր [ղիմողին]... [Կրակովի] սթափարանի բժիշկը հաստատեց, որ [ղիմողը] հարբած է եղել...»:

Այս որոշումը 1996թ. փետրվարի 26-ին հաստատել է Կրակով-ռոդմի-սի համայնքային դատախազը:

22. 1996թ. մարտի 5-ին Վ. Բ.-ն, ծանոթանալով վերը նշված որոշման հիմքերին, նոտարի առջև արել է հետևյալ հայտարարությունը.

«Ես՝ Վ. Բ.-ս, ստորև, նոտարի առջև հայտարարում եմ, որ, ծանոթանալով [հետաքննությունը դադարեցնելու մասին որոշմանը], համաձայն չեմ [այնտեղ նշված] այն դեպքերի նկարագրությանը, որոնց ես ականատես եմ եղել:

Երբ ինձնից ցուցմունք էին վերցնում, ես լրիվ ժխտել եմ այն զրպարտությունը, որ [ղիմողը] հարբած էր..., Մինչև դեպքը ես նրա հետ մեկ ժամ եմ անցկացրել և ես լիովին բացառում եմ այդպիսի հնարավորությունը:

[Ղիմողը] փոստատանն աղմկոտ վիճաբանություն չի սարքել. նա բարձրացրել է իր ձայնը պարզապես այն պատճառով, որ իր ձայնը լսելի լինի մեծ թվով հաճախորդների ստեղծած աղմուկի պայմաններում...միաժամանակ մոտ 200 մարդ հերթ էր կանգնել փոստատան սպասասեղանների մոտ: ... Նա բարձրաձայն պահանջում էր, որ իրեն թույլ տան խոսել փոստատան վարիչի հետ, որպեսզի բացատրություն ստանա, թե ինչու են իր փոստարկղերը ջարդված: ... Նրա շունը մնացել էր դրսում, որովհետև շենքը լեփ-լեցուն էր, և շունը չէր կարող գտնվել ներսում ... ինչպես պնդում էին ոստիկանները. նրանք [պարզապես] ստում էին: Փոստատան վարիչը չեկավ խոսելու [ղիմողի] հետ, փոխարենը հայտնվեցին ոստիկանները և պահանջեցին, որ մենք ցույց տանք մեր՝ անձը հաստատող փաստաթղթերը: Ես տվեցի իմը, [ղիմողը] հանգիստ տվեց իրենը: Նրանք ուշադիր ուսումնասիրեցին փաստաթղթերը և նշումներ արեցին իրենց նոթատետրերում: [Ղիմողի] փաստաթղթերն ստուգելիս՝ նրանք պետք է տեսնեին, որ նա հաշմանդամ է [այսինքն՝ որ նրա տեսողությունը լրջորեն վնասված է]...: Ինձ վերադարձրին իմ փաստաթղթերը, իսկ [ղիմողին] տարան պարեկային մեքենայով: Իր ձեռքակալության ընթացքում [ղիմողը] իրեն պահել է հանգիստ, նա միայն խնդրել է ոստիկաններին կամ թույլ տալ շանը վերցնել իր հետ, կամ համոզվել, [որ նրան ինչ-որ մեկը կտանի]: Ես դրա ականատեսն եմ եղել: Նրանք չարձագանքեցին նրա խնդրանքին և հեռացան: ...»:

23. 1996թ. ապրիլի 5-ին Կրակով-ռոդմի սի համայնքի դատախազը, ex officio, վերսկսել է 1994թ. մայիսի 5-ի դեպքերի կապակցությամբ հետաքննությունը, բայց 1996թ. մայիսի 23-ին դադարեցրել է՝ պարզելով, որ որևէ հանցանք տեղի չի ունեցել:

## II. ԳՈՐԾԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Ա. Անսթափ վիճակում գտնվող անձանց ձեռքակալությունը՝ 1982թ. հոկտեմբերի 26-ի՝ Սթափություն դաստիարակելու և հարբեցողությանը հակազդելու մասին օրենքի հիման վրա

24. Սթափություն դաստիարակելու և հարբեցողությանը հակազդելու մասին 1982թ. հոկտեմբերի 26-ի օրենքը (այսուհետ՝ «1982թ. հոկտեմբերի 26-ի օրենքը») (*Ustawa o wychowaniu w trze wo ci i przeciwdzia aniu alkoholizmowi*) նախատեսում է միջոցառումներ, որոնք կարող են կիրառվել անձանց երկու կատեգորիայի՝ «հարբեցողների» և «հարբած վիճակում գտնվող անձանց» նկատմամբ: 21-38-րդ բաժինները վերաբերում են «հարբեցողների» կամավոր կամ հարկադիր բուժմանը, իսկ 39-40-րդ բաժինները նախատեսում են միջոցառումներ, որոնք կարող են կիրառվել «հարբած վիճակում գտնվող անձանց» նկատմամբ:

25. Օրենքի 39-րդ բաժնի համաձայն՝ սթափարաններ ստեղծվում և կառավարվում են 50 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

26. Օրենքի 40-րդ բաժինը (տվյալ գործին առնչվող ժամանակահատվածում) նախատեսում է հետևյալը.

«1. Հարբած վիճակում գտնվող անձինք, ովքեր հակաիրավական վարքագիծ են դրսևորում հասարակական կամ աշխատանքի վայրում, վտանգի են ենթարկում իրենց կյանքը կամ առողջությունը, կամ էլ վտանգի են ենթարկում այլ անձանց կյանքը կամ առողջությունը, կարող են տարվել սթափարան կամ որևէ հասարակական առողջապահական հաստատություն, կամ իրենց բնակության վայրը:

2. Սթափարանի բացակայության դեպքում նման անձինք կարող են տարվել [ոստիկանատուն]:

3. [Հարբած] անձինք, ովքեր տարվել են սթափարան կամ [ոստիկանատուն], այնտեղ մնում են այնքան ժամանակ, քանի դեռ դուրս չեն եկել այդ վիճակից, բայց ոչ ավելի, քան 24 ժամ:...

4. Երբ հիմնավորված է [հարբած անձի նկատմամբ] հարկադիր բուժման [հարբեցողության դեմ] վարույթի հարուցումը, [շահագրգիռ մարմինները] [փաստի մասին] անմիջապես զեկուցում են հարբեցողության դեմ պայքարի համապատասխան հանձնաժողովին...»:

27. Օրենքի 40-րդ բաժնի հիման վրա ձերբակալված, այնուհետև սթափարանում պահվող անձն իրավունք չունի ներկայացնել գործ հարուցելու պահանջ՝ վիճարկելով իրեն ազատությունից զրկելու օրինականությունը, քանի որ, ըստ Քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ բաժնի միայն հանցանք կատարելու կասկածանքով ձերբակալված անձը կարող է բողոքարկել իրեն ձերբակալելու որոշումը (տես Գերագույն դատարանի 1992թ. փետրվարի 12-ի թիվ I KZP 43/91, 7 դատավորների ընդունած վճիռը, տպագրված՝ *OSNKW*-ում՝ 1992 թ., թիվ 5-6/32):

28. Հարբած վիճակում գտնվող անձանց սթափարաններ տեղափոխելու, այդպիսի կենտրոնների կազմակերպման, բժշկական օգնության կազմակերպման, սթափարան կամ ոստիկանատուն տեղափոխելու, այնտեղ գտնվելու ծախսերի մասին (չեղյալ հայտարարված՝ Առողջապահության նախարարի 1996թ. հոկտեմբերի 23-ի հրամանագրով) Կառավարման, տեղական տնտեսության և շրջակա միջավայրի պահպանության նախարարի հրամանագրում շարադրված են սթափարանում անձին պահելու մանրամասն կանոնները:

29. Հրամանագրի 9-րդ կետը (տվյալ գործին վերաբերող ժամանակահատվածում) նախատեսում է հետևյալը՝

«1. Սթափարան տեղափոխված անձն անհապաղ ենթարկվում է բժշկական զննության:

2. Բժշկական զննությունից հետո բժիշկը պարզում է՝ արդյո՞ք տվյալ անձը պետք է տեղավորվի սթափարանում..., թե՛ հիվանդանոցում կամ այլ բժշկական հաստատությունում..., կամ չկան արդյո՞ք հարբածության այնպիսի նշաններ, որոնք հիմնավորեն սթափարանում տեղավորելը»:

30. Չկա որևէ դրույթ, որն իշխանություններին պարտադրի՝ ի լրումն այդ ամենի, անցկացնել որևէ զննություն (օրինակ՝ արյան կամ շնչառական տեստ) պարզելու համար տվյալ անձի հարբած լինելը: Հրամանագրի 16-րդ կետում նշված է.

«Հարբածությունն ստուգող տեստը կարող է կատարվել հարբած անձի խնդրանքով...»:

31. Հրամանագրի 21-րդ կետի համաձայն՝ սթափարան տեղափոխված անձը պետք է վճարի մնալու և տեղափոխման ծախսերը՝ հաշվարկված հանրային ոլորտի միջին աշխատավարձի համապատասխանաբար 20 տոկոսի և 4 տոկոսի չափով:

Եթե տվյալ անձը չունի բավարար գումար, սթափարանը, 22-րդ կետի համաձայն, իրավունք ունի կալանք դնել նրա գույքի վրա:

### **Բ. «Հասարակական կարգի խախտում» հասկացությունը**

32. Հասարակական կարգի խախտումը (*zak o'cenie porz dku publicznego*), տվյալ գործին վերաբերող ժամանակահատվածում, Վարչական իրավախախտումների օրենսգրքի 51-րդ բաժնով նախատեսված մանր զանցանք է: Այդ բաժինը, ներկայումս կիրառվող խմբագրությամբ, հետևյալն է՝

«1. Ցանկացած անձ, ով գոչյունով կամ աղմկելով, կամ այլ անկարգ վարքագծով խախտում է հասարակական հանգիստը կամ հասարակական կարգը կամ [քաղաքացիների] գիշերային հանգիստը, կամ նա, ով հասարակական վայրում դրսևորում է հակաիրավական վարքագիծ, դատապարտվում է առավելագույնը 2 ամիս ազատազրկման կամ տուգանքի [100.000 լեհական զլոտիի և] 1.500.000 լեհական զլոտիի սահմաններում...»

2. Եթե տվյալ վարքագիծը խուլիգանական բնույթի է կամ տվյալ անձը գտնվում է անսթափ վիճակում, նա դատապարտվում է ազատազրկման [առավելագույնը 3 ամիս] կամ տուգանվում է [100.000 և 5.000.000 լեհական զլոտիի սահմաններում]»:

### **III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽԱՊԱՏՐՈՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՆՔ**

33. 1949թ. սեպտեմբերի 8-ին Եվրոպայի խորհրդի Խորհրդակցական համագումարը ընդունել է 38-րդ հանձնարարականը: Ապագա 5-րդ հոդվածի նախագծի տեքստն ընդգրկված էր 2-րդ հոդվածում.

«Սույն Կոնվենցիայով, անդամ պետություններն իրենց տարածքում բնակվող բոլոր անձանց համար երաշխավորում են՝

(1) Անձի անձեռնմխելիությունը ըստ Միավորված ազգերի կազմակերպության հռչակագրի 3-րդ, 5-րդ և 8-րդ հոդվածների.

(2) ...

(3) Ազատություն կամայական ձերբակալությունից, կալանքից, արքայից և այլ միջոցառումներից՝ Միավորված ազգերի կազմակերպության Հռչակագրի 9-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածներին համապատասխան:

34. 1950թ. փետրվարի 4-ին պրն Սալենը (Շվեդիա) ներկայացրել է 2-րդ հոդվածի 3-րդ կետի հետևյալ փոփոխությունը, ինչպես նախատեսված էր 38-րդ հանձնարարականում:

«2-րդ հոդվածի 3-րդ կետ՝ ավելացնել վերջում,

«Այս կետը չպետք է բացառի այն անհրաժեշտ միջոցառումները ձեռնարկելու իրավունքը, որոնք նպատակ ունեն պայքարելու թափառաշրջիկության ու հարբեցողության դեմ կամ ապահովելու ալիմենտները վճարելու պարտավորությունների կատարումը»:

35. 1950թ. փետրվարի 6-ին պրն Սալենը հետ է վերցրել իր առաջարկությունը՝

«պայմանով, որ Փորձագետների կոմիտեի զեկույցի մեջ ներառված հիմքերի շարադրումը հստակորեն արտահայտի,

«...որ 6-րդ հոդվածի տեքստը [այս առումով, ընդհանուր դրույթ, որը թույլատրում է երաշխավորվող իրավունքների և ազատությունների սահմանափակումը՝ այլոց իրավունքների ու ազատությունների ձանաչումն ու դրանց նկատմամբ հարգանքն ապահովելու և ժողովրդավարական

հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի և անվտանգության պահանջները բավարարելու նպատակով ընդգրկում է նաև անդամ պետությունների իրավունքը՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ թափառաշրջիկության և հարբեցողության դեմ պայքարելու և ալիմենտները վճարելու պարտավորությունների կատարումն ապահովելու համար»:

36. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի նախնական տարբերակի հետևյալ մեկնաբանությունն արձանագրում էր,

«Շվեդիայի ներկայացուցիչը հետագայում պահանջեց արձանագրել, որ 6-րդ հոդվածը մասնավորապես ընդգրկում է ստորագրող պետության իրավունքը՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ պայքարելու թափառաշրջիկության և հարբեցողության դեմ [l'alcoolisme ֆրանսերեն տեքստում] կամ երաշխավորել ալիմենտները վճարելու պարտավորությունների կատարումը: Կոմիտեն [փորձագետների] վստահ է, որ այս հարցում համաձայնություն կլինի, քանի որ նման սահմանափակումները հիմնավորված են հասարակական կարգի և բարոյականության պահանջներով»:

37. 1950թ. մարտի 6-10-ը Փորձագետների կոմիտեի երկրորդ նիստում քննարկվել է Կոնվենցիայի ներկա 5-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ օրինակը և վերջնականապես վերախմբագրվել որպես 6-րդ հոդվածի նախագիծ: Ներկայացվել է 6-րդ հոդվածի հետևյալ տարբերակը,

«1. Ոչ ոքի չի կարելի գրկել ազատությունից այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

(ա) անձին օրինական կարգով ազատությունից գրկելն իրավասու դատարանի կողմից նրան դատապարտելուց հետո,

(բ) անձի օրինական ձերբակալումը և կալանավորումը՝ դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար, կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

(գ) անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը՝ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում՝ նրան իրավասու իրավապահ մարմինն ներկայացնելու նպատակով, կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

(դ) անչափահասների օրինական մեկուսացումն օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության նպատակով,

(ե) անձանց օրինական մեկուսացումը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդների, գինեմոլների կամ թմրամոլների, կամ թափառաշրջիկների օրինական մեկուսացումը,

(զ) անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը՝ նրա անօրինական մուտքը պետություն կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով»:

38. Այս կետում (ե) ենթակետի ֆրանսերեն տարբերակը հետևյալն է.

« ե) վարակիչ հիվանդություններ տարածելու, հոգեկան հիվանդություն ունենալու, գինեմոլության, թմրամոլության կամ թափառաշրջիկության մեջ կասկածվող անձանց օրինական մեկուսացումը»:

39. Վերջապես, 1950թ. նոյեմբերի 3-ին, Փորձագետների կոմիտեի կողմից Կոնվենցիայի տեքստի վերջին քննարկումից հետո, վերը շարադրված տեքստը փոխարինվել է Կոնվենցիայի ներկա 5-րդ հոդվածի 1-ին կետով. Փորձագետների

կոմիտեի կատարած փոփոխությունները բնութագրվել են որպես «ձևական ուղղումներ և թարգմանությունների շտկումներ»: Այս առիթով էր, որ անգլերեն տեքստում "alcoholic" («հարբեցող») բառը (ե) ենթակետում փոխարինվել է "alcoholics" («հարբեցողներ») բառով:

## **ԳԱՆԳԱՏԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ**

40. Պրն Վիտոլդ Լիտուան Հանձնաժողով է դիմել 1994թ. օգոստոսի 6-ին: Նա հայտարարել է, որ 1994թ. մայիսի 5-ին Կրակովի սթափարանում իրեն պահելն անօրինական էր և կամայական, և այդ իսկ պատճառով տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: Այնուհետև նա պնդել է, որ նույն օրը ոստիկանները հարձակվել են իր վրա և ծեծել՝ ձերբակալության փորձ կատարելիս, և հետագայում սթափարանի աշխատակազմն իր հետ վարվել է ստորացուցիչ ձևով, ինչը հանդիսանում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունք: Եվ, վերջապես, Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա դիմողը պնդել է, որ ձերբակալվելու և այնուհետև սթափարան բերվելու արդյունքում ինքը կորցրել է իր անձնական իրերը և ուղեկից շանը:

41. 1997թ. սեպտեմբերի 25-ին Հանձնաժողովը գանգատը (թիվ 26623/95) ընդունելի է հայտարարել այն մասով, որով այն վերաբերում էր դիմողին՝ Կրակովի սթափարանում պահելու օրինականությանը: Գանգատը մնացած մասով անընդունելի է հայտարարվել: 1998թ. իր գեկույցում (Կոնվենցիայի նախկին 31-րդ հոդված) Հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել (21 ձայնով՝ ընդդեմ 5-ի):

## **ՂԱՏԱՐԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԽՆԴՐԱՆՔՆԵՐԸ**

42. Դիմողը և՛ իր գրավոր բացատրություններում, և՛ 1999թ. հոկտեմբերի 7-ի լսումների ժամանակ, Ղատարանին խնդրել է հաստատել, որ իրեն անօրինական կերպով գրկել են ազատությունից, և որ պատասխանող պետությունը խախտել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը: Նա նաև խնդրել է իրեն տրամադրել արդարացի բավարարում ըստ 41-րդ հոդվածի:

43. Կառավարությունն իր կողմից Ղատարանին խնդրել է պաշտպանել Հանձնաժողովի այն կարծիքը, որ դիմողին ազատությունից գրկելը տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1(ե) կետի շրջանակներում, և հաստատել, որ 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

## **ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ**

### **I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄԸ**

44. Դիմողը հայտարարել է, որ ինքը պահվել է Կրակովի սթափարանում անօրինական կարգով և կամայականորեն: Նա պնդում է, որ իրեն այնտեղ պահելը չի գտնվում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի (ա)-(գ) ենթակետերում թվարկվող՝ անձնական ազատության նորմի բացառությունների շրջանակներում: Սթափարանում դիմողին պահելը համապատասխան օրինական հիմքեր չի ունեցել նաև Լեհաստանի իրավունքում ելնելով գործի հանգամանքներից: Նա պնդել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, որը նախատեսում է.

«Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից գրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

(ա) անձին օրինական կերպով կալանավորելը իրավասու դատարանի կողմից նրան դատապարտելուց հետո,

(բ) անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

(գ) անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում՝ նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով, կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

(դ) անչափահասների մեկուսացումը օրինական կարգադրության հիման վրա դաստիարակչական հսկողության նպատակով, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով,

(ե) անձանց օրինական մեկուսացումը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդների, հարբեցողների կամ թմրամոլների, կամ թափառաշրջիկների օրինական մեկուսացումը,

(զ) անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը՝ նրա անօրինական մուտքը պետություն կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով»:

45. Կառավարությունը վիճարկել է սա: Կառավարությունը միացել է Հանձնաժողովի գեկույցում արտահայտված կարծիքին և պնդել է, որ դիմողի մեկուսացումը տեղի է ունեցել Լեհաստանի օրենքների համաձայն և համապատասխանում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1(ե) կետի պահանջներին՝ դրոյթ, որը թույլ է տալիս «հարբեցողների օրինական մեկուսացումը»:

#### **Ա. Արդյո՞ք դիմողը «գրկվել էր ազատությունից»**

46. Ինչպես պարզել էր Հանձնաժողովը, և ինչը կողմերը չէին վիճարկել Հանձնաժողովի առջև, Ղատարանը գտնում է, որ դիմողին Կրակովի սթափարանում պահելը կարելի է համարել «գրկում ազատությունից»՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով:

#### **Բ. Արդյո՞ք ազատությունից գրկելը հիմնավորված էր 5-րդ հոդվածի 1-ին կետի (ա)-(զ) ենթակետերից որևէ մեկով**

##### **1. Գործի շրջանակները**

47. Դիմողը գտնում էր, որ իր մեկուսացումը չի համապատասխանում 5-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված՝ ազատությունից գրկելու թույլատրելի հիմքերից ոչ մեկին:

48. Կառավարությունը պնդում է, որ, ինչպես գտել է Հանձնաժողովը, դիմողի մեկուսացումը հիմնավորված է 5-րդ հոդվածի 1(ե) կետով, որը սահմանում է «հարբեցողների ... օրինական մեկուսացումը»:

49. Ղատարանը նշում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը պարունակում է ազատությունից գրկելու թույլատրելի հիմքերի սպառիչ ցանկը: Հետևաբար, ազատությունից գրկելը չի կարող լինել օրինական, քանի դեռ այն չի

հիմնավորված 5-րդ հոդվածի (ա)-(զ) ենթակետերից որևէ մեկով: Այնուամենայնիվ, որևէ հիմքի կիրառելիությունն անհրաժեշտորեն չի բացառում մյուսի կիրառելիությունը. ազատությունից զրկելը, կախված հանգամանքներից, կարող է հիմնավորված լինել մեկ կամ ավելի ենթակետերով (տե՛ս, այլ աղբյուրների թվում, Էրկալոն ընդդեմ Նիդեռլանդների 1998թ. սեպտեմբերի 2-ի վճիռը, *ժողովածուներ*, 1998- VI, էջ 2477, կետ 50):

50. Ղատարանը նշում է, որ բացի (ե) ենթակետից Կառավարությունը չի վկայակոչում որևէ այլ հիմք՝ դիմողի մեկուսացումը հիմնավորելու համար: Ուստի, ընդհանուր հիմք է, որ խնդրո առարկա ազատությունից զրկելը տեղի չի ունեցել հոդված 5-ի (ա), (բ), (գ), (դ) և (զ) ենթակետերի հիման վրա: Ղատարանը ոչ մի պատճառ չի տեսնում այլ կերպ մտածելու համար: Հետևաբար, պետք է պարզել, արդյո՞ք, դիմողին ազատությունից զրկելը հիմնավորված էր (ե) ենթակետով, այսինքն՝ այն կարո՞ղ է արդյոք համարվել «հարբեցողների՝ ... օրինական կարգով ազատությունից զրկում»՝ այդ դրույթի իմաստով:

## **2. 5-րդ հոդվածի 1(ե) կետի կիրառելիությունը ներկա գործի նկատմամբ**

51. Երկու կողմերն էլ գտնում են, որ որոշելու համար՝ արդյո՞ք 5-րդ հոդվածի (ե) ենթակետը կիրառելի է այս գործի նկատմամբ, թե՛ ոչ, էական է պարզել, թե ինչ իմաստ պետք է տալ «հարբեցողներ» (Կոնվենցիայի ֆրանսերեն տեքստում "*d'un alcoolique*") բառին:

52. Դիմողը պնդում է, որ բժշկական տեսանկյունից երբևէ հնարավոր չի լինի ասել, որ հարբած վիճակում գտնվելու եզակի դեպքը հավասարազոր է «հարբեցողությանը»: Այս իսկ պատճառով նա պնդում է, որ «հարբած անձինք» չեն կարող նույնացվել «հարբեցողների» հետ, քանի որ վերջին հասկացությունը՝ և՛ գիտական, և՛ առօրյա օգտագործմամբ, նշանակում է ոգելից խմիչք չարաշահող, դրա հարդեպ հակում ունեցող և ոչ թե ժամանակավորապես դրա ազդեցության տակ գտնվող անձ:

53. Դիմողը պնդել է նաև, որ Կոնվենցիայի հասկացություններին պետք է տալ նեղ մեկնաբանություն, հատկապես նրանց, որոնք վերաբերում են անձնական ազատության նորմի բացառություններին: Այդ համատեքստում դիմողը նշել է, որ «հարբեցողներ» հասկացության որևէ այլ մեկնաբանություն չի կարող համատեղելի լինել 5-րդ հոդվածի առարկայի և այդ բառի սովորական իմաստի հետ:

54. Կառավարությունը համաձայնել է Հանձնաժողովի կողմից տրված՝ «հարբեցողներ» հասկացության մեկնաբանությանը: Մասնավորապես, Կառավարությունն ընդունել է, որ այս հասկացության տակ պետք է հասկանալ ոչ միայն այն անձանց, ովքեր ունեն ոգելից խմիչքների հանդեպ հակման որոշակի հոգեկան վիճակ, այլ նաև նրանց, ովքեր ժամանակավորապես անսթափ վիճակում են: Կառավարությունը, այնուամենայնիվ, վիճելի է համարել Հանձնաժողովի զեկույցում հասկացության մեկնաբանման եղանակը:

55. Այսպիսով, Կառավարությունը վճռականորեն առարկել է Հանձնաժողովի տեսակետին: Ըստ այդ տեսակետի, որը հիմնված էր Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. մայիսի 23-ի կոնվենցիայի («Վիեննայի կոնվենցիա») վրա, «հարբեցողներ» հասկացությունը, ինչպես նաև 5-րդ հոդվածում նշված մյուս հասկացությունները պետք է մեկնաբանվեն իրենց սովորական իմաստին համապատասխան: Կառավարությունը կարծում է, որ, ինչպես նշված է Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 4-րդ կետում, խնդրո առարկա հասկացությանը պետք է տալ «հատուկ իմաստ»: Ըստ Կառավարության՝ պայմանավորվող պետությունները մտադիր են «հարբեցողներ» հասկացությանը տալ լայն, դրանով իսկ հատուկ իմաստ: Սա արձանագրված է Կոնվենցիայի նախապատրաստական աշխատանքում, որը ցույց է տալիս, որ 5-րդ հոդվածում, *ratio legis*, «հարբեցողների ... օրինական մեկուսացումը» նպատակ ուներ «ներառել պայմանագրի մեջ մտած պետությունների իրավունքը՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել պայքարելու ... հարբեցողության դեմ»:

56. Կառավարությունը նշել է նաև, որ եթե «հարբեցողներ» հասկացությանը տրվի ճշգրիտ, առօրեական կամ սովորական իմաստ, ապա 5-րդ հոդվածի 1(ե) կետի մեկնաբանությունը կունենա անհերթեթ կամ անիմաստ արդյունք, որովհետև այդ անձանց մեկուսացումը պետք է հիմնվի բացառապես ոստիկանության նախապես գիտենալու վրա, որ տվյալ անձը բժշկական քննությամբ ճանաչված է որպես հարբեցող: Ավելին, ճշգրիտ մեկնաբանությունը նմանապես կհանգեցնի անհերթեթ կամ անիմաստ արդյունքի այն դեպքերում, երբ հարբեցողին մեկուսացնեն իր «սթափ օրերի» ընթացքում, օրինակ՝ բուժական կուրս ընդունելիս: Հետևաբար, այսպիսի սթափ անձը, որը չնայած ախտորոշված է որպես հարբեցող, չի կարող օրինական կերպով մեկուսացնել «հարբեցողների» թվին դասվելու պատճառով:

57. Դատարանը հաստատում է, որ Կոնվենցիայում «հարբեցողներ» հասկացության իմաստը պարզաբանելիս, Դատարանը պետք է առաջնորդվի Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. մայիսի 23-ի կոնվենցիայի 31-33-րդ հոդվածներով, ինչպես դա արվել է այլ գործերի կապակցությամբ, երբ անհրաժեշտ է եղել մեկնաբանել Կոնվենցիան (տե՛ս, օրինակ, Ջոնսթոնը և այլոք ընդդեմ Իռլանդիայի 1986թ. դեկտեմբերի 18-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 112, էջ 24 կետ 51 et seq. և Լիթգուն ընդդեմ Միացյալ Թագավորության 1986թ. հուլիսի 8-ի վճիռը, Շարքեր Ա, A թիվ 102, էջ 48 կետ 114 *in fine* և էջ 49 կետ 117):

58. Այդ առումով Դատարանը կրկնել է, որ այն ձևով, ինչպես ներկայացված է Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածում սահմանված մեկնաբանության ընդհանուր կանոնում, պայմանագրի հասկացությունների ճշգրիտ իմաստի բացահայտման և հաստատման գործընթացը մի ամբողջություն է, մեկ միասնական ընթացք: Այս ընդհանուր կանոնը, սերտորեն միակցված, միևնույն հիմքի վրա է դնում այդ հոդվածի չորս կետերում թվարկված տարբեր տարրերը (տես Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության 1975թ. փետրվարի 21-ի վճիռը, Շարքեր Ա թիվ 18, էջ 14, կետեր 29-30):

59. Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածում թվարկված այդ տարրերի հաջորդականությունը, այնուամենայնիվ, պայմանավորում է այն կարգը, որով պետք է ընթանա պայմանագրի մեկնաբանության ընթացքը: Այդ գործընթացը պետք է սկսվի պայմանագրի հասկացությունների սովորական իմաստի հաստատմամբ՝ պայմանագրի համատեքստում և դրա խնդիրների ու նպատակների լույսի ներքո, ինչպես նշված է 31-րդ հոդվածի 1-ին կետում: Սա, մասնավորապես, վերաբերում է այն կետերին, որոնք, ինչպես Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը, առնչվում են ընդհանուր կանոնի բացառություններին և այդ իսկ պատճառով չեն կարող ստանալ լայն մեկնաբանություն (տե՛ս Դե Վայլդը, Օհմսը և Վերսուփն ընդդեմ Բելգիայի 1971թ. հունիսի 18-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 12, էջ 37, կետ 68, և Վինթերուելփն ընդդեմ Նիդեռլանդների 1979թ. հոկտեմբերի 24-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 33, էջ 16, կետ 37):

60. Դատարանը նկատում է, որ «հարբեցողներ» բառն իր սովորական օգտագործմամբ մատնանշում է այն անձանց, ովքեր ոգելից խմիչքների հանդեպ հակում ունեն: Մյուս կողմից, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետում այս հասկացությունն այնպիսի համատեքստում է, որը ներառում է հիշատակում մի քանի այլ կատեգորիայի անձանց մասին, այն է՝ վարակիչ հիվանդություններ տարածողները, հոգեկան խանգարումներ ունեցողները, թմրանյութերը և թափառաշրջիկները: Այս բոլոր անձանց միջև կապն այն է, որ նրանք բոլորն էլ կարող են ազատությունից զրկվել՝ կամ հարկադիր բուժում ստանալու համար, կամ սոցիալական քաղաքականությամբ թելադրված նկատառումներով, կամ էլ՝ և՛ բժշկական, և՛ սոցիալական հիմքերով: Այդ իսկ պատճառով այս համատեքստում օրինական է եզրակացնել, որ գերակշռող պատճառը, ըստ որի Կոնվենցիան թույլատրում է ազատությունից զրկել 5-րդ հոդվածի 1 (ե) կետում նշված անձանց, ոչ միայն այն է, որ նրանք վտանգավոր են հասարակական անվտանգության համար, այլ նաև այն, որ նրանց իսկ շահերից ելնելով՝ կարող է անհրաժեշտ լինել նրանց

ազատությունից զրկելը (տե՛ս Գուգարդին ընդդեմ Իտալիայի 1980թ. նոյեմբերի 6-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 39, էջ 37, կետ 98 *in fine*):

61. Այս *ratio legis*-ը ցույց է տալիս, թե ինչպես պետք է հասկանալ «հարբեցողներ» հասկացությունը՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1(ե) կետի առարկայի և նպատակի լույսի ներքո: Այն ցույց է տալիս, որ այդ դրույթի առարկան և նպատակը չեն կարող մեկնաբանվել միայն որպես «հարբեցողներին»՝ «հարբեցողության» կլինիկական վիճակում գտնվող անձանց ազատությունից զրկելու թույլտվություն՝ սահմանափակ իմաստով: Դատարանը կարծում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա, ոչ թե բժշկական տեսակետից որպես «հարբեցող» չախտորոշված անձինք, այլ նրանք, ում վարքն ու վարմունքը ոգելից խմիչքների ազդեցությամբ վտանգ է առաջացնում հասարակական կարգի կամ իրենց իսկ համար, կարող են հսկողության տակ պահվել՝ ի պաշտպանություն հասարակական կամ իրենց իսկ շահերի, ինչպիսիք են, օրինակ, նրանց առողջությունը կամ անձնական անվտանգությունը:

62. Սա չի նշանակում, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1(ե) կետը կարելի է մեկնաբանել որպես ազատությունից զրկելու թույլտվություն՝ զուտ այն պատճառով, որ անձը ոգելից խմիչք է օգտագործել: Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ 5-րդ հոդվածի տեքստում ոչինչ չի ենթադրում, որ այս դրույթը պետությանը խոչընդոտում է այդ միջոցը կիրառել ոգելից խմիչքը չարաշահող անձի դեմ՝ տվյալ անձի և հասարակության համար ոգելից խմիչքի պատճառած վնասը կանխելու կամ խմելուց հետո վտանգավոր վարքագիծը կանխելու նպատակով: Այստեղ Դատարանը նկատում է, որ կասկած չի կարող լինել, որ ոգելից խմիչքների չարաշահումը վտանգավոր է և՛ օգտագործողի, և՛ այլոց համար՝ անկախ նրանից, թե օգտագործողը ոգելից խմիչքների հանդեպ հակում ունեցե՞լ է, թե՛ ոչ:

63. Այնուհետև Դատարանը գտնում է, որ «հարբեցողներ» հասկացության այս իմաստը հաստատված է Կոնվենցիայի նախապատրաստական աշխատանքով (տե՛ս վերը՝ կետեր 33-ից 39): Այդ կապակցությամբ, Դատարանը նկատում է, որ Կոնվենցիայի նախնական տարբերակի մեկնաբանության մեջ նշված է, որ համապատասխան հոդվածն ընդգրկում է Կոնվենցիան ստորագրած պետության իրավունքը՝ ձեռնարկելու միջոցներ՝ թափառաշրջիկության և «հարբեցողության» (ֆրանսերեն՝ *"alcoolisme"*) դեմ պայքարելու համար: Այնուհետև արձանագրված է, որ Փորձագետների կոմիտեն վստահ է, որ համաձայնության կգան, «քանի որ այսպիսի սահմանափակումներն արդարացված են հասարակական կարգի և բարոյականության պահանջներով»:

64. Ուստի Դատարանը եզրակացնում է, որ դիմողին ազատությունից զրկելը տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1(ե) կետի շրջանակներում:

#### **Գ. Արդյո՞ք ազատությունից զրկելն «օրինական» էր և ոչ կամայական**

65. Դիմողը նախ և առաջ պնդել է, որ ոստիկանությունը ոչ մի պատճառ չի ունեցել իրեն ձերբակալելու համար, որովհետև նա հարբած չի եղել և իրեն հանգիստ է պահել ձերբակալությունից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո: Դիմողը, ինչպես որ ներկայացրել էր Հանձնաժողովում, վկայակոչել է Վ.Բ.-ի՝ 1996թ. մարտի 5-ին նոտարի առջև արված հայտարարությունները (տե՛ս վերը՝ կետեր 20 և 22):

66. Դիմողը այնուհետև հայտարարել է, որ Կրակովի սթափարան հասնելուն պես նրան շատ մակերեսորեն քննել է բժիշկը, որը չի լսել իր բողոքները ոստիկանի վարքի մասին: Ոչ մի համապատասխան բժշկական տեստ չի իրականացվել՝ պարզելու համար, թե արդյո՞ք նա իրոք հարբած է, թե՛ ոչ: Հետո, ոչ մի հնարավորություն չունենալով բացատրել իր ձերբակալման հետ կապված հանգամանքները, նա ստիպված է եղել հանվել և իր հագուստը հանձնել սթափարանի պահոց:

67. Դիմողը նաև պնդել է, որ իրեն ազատությունից զրկելը հիմնավորված չէ ներպետական օրենսդրությամբ: Մասնավորապես, նա չի մեկուսացվել հասարակական կարգը խախտելու, հանցանք կատարելու կասկածանքով, ոչ էլ անհանգստություն է պատճառել հասարակական վայրում կամ վտանգել իր կամ այլոց կյանքը կամ առողջությունը՝ 1982թ. հոկտեմբերի 26-ի Օրենքի 40-րդ բաժնի իմաստով:

68. Դիմողը համաձայնել է, որ, ընդհանուր առմամբ, կարող են լինել դեպքեր, երբ անսթափ վիճակում գտնվող անձը վտանգ ներկայացնի իր կամ հասարակության համար, բայց իր պարագայում ոչ մի նմանատիպ հանգամանք չի եղել: Այդ կապակցությամբ, դիմողը վկայակոչել է Վինթրուերին ընդդեմ Նիդեռլանդների վճիռը՝ նշելով, որ Դատարանի կողմից առաջ քաշված սկզբունքները՝ «հոգեկան խանգարում ունեցող անձանց» մեկուսացնելու կապակցությամբ, անձինք, որոնք 5-րդ հոդվածի 1(ե) կետում թվարկված են «հարբեցողների» հետ մեկտեղ, պետք է անալոգիայով կիրառվեն «հարբեցողների» նկատմամբ: Այդ սկզբունքների համաձայն՝ մինչև անձի օրինական մեկուսացումը՝ որպես «հոգեկան խանգարում» ունեցողի՝ 5-րդ հոդվածի 1(ե) կետի նպատակների համար, պետք է բժշկական ստույգ օբյեկտիվ հետազոտությամբ հաստատվի այդ անձի հոգեկան խանգարման այն տեսակը կամ աստիճանը, որը կարող է հիմք հանդիսանալ հարկադիր մեկուսացման համար, և այդ խանգարումը պետք է շարունակվի մեկուսացված լինելու ընթացքում: Դիմողը պնդում էր, որ իր դեպքում ոչ մի պատճառ չկար իրեն «հարբեցող» կամ նույնիսկ «հարբած» համարելու համար: Նա ոչ միայն սթափ էր տվյալ ժամանակ, այլ նույնիսկ երբևէ չի եղել որևէ բժշկական ապացույց, հատկապես համապատասխան տեստերի ձևով, որ նա ոգելից խմիչքներ է չարաշահել:

69. Դիմողը այնուհետև վիճարկել է այն ապացույցների վստահելիությունը, որոնց հիման վրա ներպետական դատարանները գտել են, որ նա տվյալ ժամանակ եղել է անսթափ վիճակում: Ժխտելով, որ ինքը հրաժարվել է սթափությունը որոշող տեստի ենթարկվելուց, դիմողը նշել է, որ սթափարանի բժիշկը ոչ միայն չի անցկացրել նման տեստ, այլ նույնիսկ չի չափել իր արյան ճնշումը: Մի խոսքով, դիմողը կարծում է, որ իշխանություններն իրեն մեկուսացրել են և՛ կամայականորեն, և՛ ի խախտումն ներպետական օրենսդրության:

70. Կառավարությունը պնդել է, որ դիմողը մեկուսացվել է հասարակական վայրում անկարգություն անելու պատճառով: Եւ՝ նրա արարքը, և՛ վարքը պատճառ են հանդիսացել նրան սթափարանում պահելու համար՝ 1982թ. հոկտեմբերի 26-ի Օրենքի 40-րդ բաժնի հիման վրա:

71. Կառավարությունը շեշտել է, որ ոչ մի կասկած չի կարող լինել այն փաստի վերաբերյալ, որ դիմողը տվյալ ժամանակ գտնվել է հարբած վիճակում, քանի որ դա պարզել է բժիշկը՝ անսթափ վիճակի որոշակի դրսևորումների հիման վրա: Կառավարությունը նշել է, որ ինչպես արձանագրվել է դիմողի՝ սթափարանում գտնվելն արձանագրող փաստաթղթում, դիմողը մերժել է կատարել սթափությունը որոշող տեստը, որը կհաստատեր նրա արյան մեջ եղած ալկոհոլի ճշգրիտ խտությունը: Կառավարությունը պնդել է, որ ներպետական իշխանությունների կողմից, դիմողին Կրակովի սթափարան տանելիս և սթափվելու համար անհրաժեշտ ժամկետով այնտեղ պահելիս, որևէ կամայականություն չի դրսևորվել:

72. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն ազատությունից զրկելը պետք է լինի «օրինական», որը ներառում է դրա՝ «օրենքով սահմանված կարգի համաձայն» կատարելու պահանջը: Այս առումով, Կոնվենցիան հղում է կատարում ներպետական օրենսդրությանը և սահմանում ներպետական նյութական և դատավարական նորմերին ենթարկվելու պարտականություն:

73. Այն նաև պահանջում է, որ անձին ազատությունից զրկելու ցանկացած միջոց համատեղելի լինի 5-րդ հոդվածի նպատակին, այն է՝ անձին պաշտպանի կամայականությունից (տես Կ.-Ֆ.-ն ընդդեմ Չերմանիայի, 1997թ. նոյեմբերի 27-ի վճիռը, *ժողովածուներ* 1997-VII, էջ 2674, կետ 63):

74. Դատարանը նշում է, որ ներկա գործում վիճարկելի չէ այն փաստը, որ ոստիկանությունը, ձերբակալելով և տանելով դիմողին սթափարան, գործել է 1982թ. հոկտեմբերի 26-ի Օրենքի 40-րդ բաժնով նախատեսված կարգին համապատասխան: Ուստի Դատարանը գտնում է, որ դիմողի մեկուսացումն ըստ Լեհաստանի իրավունքի օրինական հիմքեր է ունեցել:

75. Ղատարանը նաև նշում է, որ 1982թ. հոկտեմբերի 26-ի Օրենքի 40-րդ բաժնում սահմանված միջոցների կիրառման էական օրենսդրական պայմաններն այն են, որ, նախ և առաջ, տվյալ անձը լինի անսթափ վիճակում, և, երկրորդ, որ կամ նրա վարքը լինի հակաիրավական, կամ նա լինի այնպիսի վիճակում, որ վտանգ ներկայացնի իր կամ այլոց կյանքի կամ առողջության համար (տե՛ս կետ 26):

76. Ղատարանի խնդիրը չէ վերանայել՝ արդյո՞ք ներպետական իշխանությունները Լեհաստանի օրենքների համաձայն ճիշտ որոշումներ են ընդունել: Նրա խնդիրն է պարզել՝ արդյո՞ք դիմողի մեկուսացումը որպես «հարբեցողի», «օրինական մեկուսացում էր»՝ Կոնվենցիայի բուն իմաստի սահմաններում, ինչպես Ղատարանը պարզաբանել էր վերը՝ 57- 63 կետերում:

77. Այս առումով Ղատարանը լուրջ կասկածներ ունի, թե արդյո՞ք կարելի է ասել, որ դիմողի վարքը՝ ոգելից խմիչքի ազդեցությամբ, եղել է այնպիսին, որ նա վտանգ է ներկայացրել հասարակության կամ իր համար, կամ վտանգված է եղել նրա առողջությունը, բարեկեցիկ վիճակը կամ անձնական անվտանգությունը: Ղատարանի կասկածները հավաստվում են մեկուսացման բավականին աննշան փաստական հիմքերով և այն փաստով, որ դիմողը գրեթե կույր է:

78. Ղատարանը կրկնում է, որ 5-րդ հոդվածի 1(ե) կետի իմաստով մեկուսացման «օրինականության» անհրաժեշտ տարր է կամայականության բացակայությունը: Անձի մեկուսացումն այնպիսի լուրջ միջոցառում է, որ այն արդարացված է միայն այն դեպքում, երբ այլ, պակաս խիստ միջոցառումներն անբավարար են համարվել անհատի կամ հասարակական շահը պաշտպանելու համար, որը կարող է պահանջել տվյալ անձի մեկուսացում: Սա նշանակում է, որ բավարար չէ, որ ազատությունից զրկելը կատարվում է ներպետական իրավունքի համաձայն. այն նաև պետք է անհրաժեշտ լինի տվյալ հանգամանքներում:

79. Այնուամենայնիվ, դիմողի դեպքում հաշվի չի առնվել այն փաստը, որ 1982թ. հոկտեմբերի 26-ի Օրենքի 40-րդ բաժինը նախատեսել է մի քանի տարբեր միջոցներ, որոնք կարելի է կիրառել անսթափ վիճակում գտնվող անձանց նկատմամբ, որոնց թվում սթափարանում պահելն ամենածայրահեղն է: Իսկապես, այդ բաժնի համաձայն, անսթափ վիճակում գտնվող անձը պարտադիր չէ, որ զրկվի ազատությունից, քանի որ նրան ուստիկանությունը կարող է նույն հաջողությամբ տեղափոխել որևէ հասարակական առողջապահական հաստատություն կամ նրա բնակության վայրը (տե՛ս կետ 26):

80. Ներկա գործում այս հանգամանքները հաշվի չառնելը, չնայած հստակորեն նախատեսված է ներպետական իրավունքով, վերջնականապես համոզել է Ղատարանին, որ դիմողի մեկուսացումը չի կարող համարվել «օրինական»՝ 5-րդ հոդվածի 1(ե) կետի համաձայն: Այսպիսով, տեղի է ունեցել այդ կետի խախտում:

## II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

81. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը նախատեսում է.

«Եթե Ղատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Ղատարանը, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի բավարարում է տրամադրում»:

### Ա. ՎՆԱՍԸ

82. Դիմողը պնդել է, որ կրել է նյութական վնաս՝ 1900 լեհական զլոտիի (PLN) չափով, որը համապատասխանում է իր այն իրերի արժեքին, որ իրենից վերցրել են Կրակովի սթափարանի աշխատակիցները և պահել սթափարանի պահոցում: Նա նաև պահանջել է 600.000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ ի հատուցում իր մեկուսացման պատճառով ստացած բարոյական վնասի և անհանգստության:

83. Կառավարությունը գտնում էր, որ պահանջված գումարի չափը չափազանցված է: Կառավարությունը խնդրել է Ղատարանին՝ որոշել, որ իրավունքի խախտման փաստի հաստատումն արդեն հանդիսանում է համապատասխան և արդարացի բավարարում: Որպես այլընտրանք՝ Կառավարությունը Ղատարանին առաջարկել է արդարացի բավարարման չափը գնահատել՝ հիմք ընդունելով նմանատիպ այլ գործերով դատական նախադեպը և նկատի ունենալով պետության տնտեսական վիճակը:

84. Ղատարանը նյութական վնասի կապակցությամբ պահանջի առնչությամբ նկատել է, որ դիմողն իր իրերը հետ չի պահանջել ներպետական իշխանություններից: Հետևապես, Ղատարանը մերժում է այդ պահանջը:

85. Այնուամենայնիվ, Ղատարանը գտնում է, որ դիմողը իրոք կրել է ոչ նյութական վնաս, որը իրավունքի խախտման փաստի հաստատմամբ բավարար կերպով չի փոխհատուցվել: Արդարացիորեն գնահատելով՝ Ղատարանը այս կապակցությամբ դիմողին տրամադրում է 8. 000 PLN:

#### **Բ. Ղատական ծախսեր և վճարումներ**

86. Դիմողը նաև պահանջել է 23. 530 ԱՄՆ դոլար՝ իրավաբանական ծախսերի դիմաց, որոնք ինքը կրել է Ղատարանին և Հանձնաժողովին դիմելու առնչությամբ:

87. Կառավարությունը նկատել է, որ պահանջվող գումարը չափազանցված է՝ Լեհաստանում սովորաբար գանձվող վճարումների համեմատությամբ, և Ղատարանին խնդրել է այն ամբողջությամբ չընդունել:

88. Ղատարանը նկատել է, որ համաձայն իր նախադեպային իրավունքում սահմանած չափանիշների՝ պետք է հստակեցնել, արդյո՞ք պահանջվող գումարը փաստացի և անհրաժեշտաբար ծախսվել է և ընդունելի է (տե՛ս այլ աղբյուրների թվում, Օգթուրկն ընդդեմ Թուրքիայի 1999թ. սեպտեմբերի 28-ի վճիռը. *ժողովածուներ*, 1999-..., էջ ..., կետ 83): Նշված չափանիշը կիրառելով ներկա գործի առնչությամբ և գումարի չափը որոշելով անաչառ հիմքերով՝ Ղատարանը ողջամիտ է համարել դիմողին տրամադրել 15 000 PLN՝ կրած ծախսերի և վճարումների դիմաց՝ ցանկացած ավելացված արժեքի հարկի հետ մեկտեղ, որ կարող է ենթակա լինել գանձման: Նշված գումարը նվազեցվում է 13,174 ֆրանսիական ֆրանկով, որը նա՝ որպես իրավաբանական օգնություն ստացել էր Եվրոպայի խորհրդից:

#### **Գ. Տոկոսներ՝ փոխհատուցումը չվճարելու դեպքում**

89. Համաձայն Ղատարանի ստացած տեղեկությունների, սույն վճռի ընդունման օրվա դրությամբ Լեհաստանում օրենքով սահմանված՝ կիրառելի տոկոսադրույքները կազմում են տարեկան 21 տոկոս:

#### **ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ**

1. *Վճռում է՝* վեց ծայնով ընդդեմ մեկի, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

2. *Վճռում է* միաձայն.

(ա) որ պատասխանող պետությունը պետք է եռամսյա ժամկետում դիմողին վճարի հետևյալ գումարները.

(I) որպես ոչ-նյութական վնասի փոխհատուցում՝ 8 000 (ութ հազար) լեհական գլոտի,

(II) դատական ծախսերի և վճարումների դիմաց՝ 15 000 (տասնհինգ հազար) լեհական գլոտի՝ ավելացված արժեքի հարկի հետ մեկտեղ. այս գումարը նվազեցվում է 13,174 (տասներեք հազար հարյուր

յոթանասունչորս) ֆրանսիական ֆրանկ գումարի չափով, որը կփոփարկվի լեհական գլոտիի սույն վճռի ընդունման օրվա դրությամբ փոխանակման կուրսով,

(բ) այս գումարներից տարեկան 21 տոկոս պետք է վճարվի՝ սկսած վերոհիշյալ երեք ամիսը լրանալուց հետո մինչև վճարումը,

3. *Մերժում է՝* միաձայն, արդարացի բավարարման մասին՝ դիմողի պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և ծանուցված է գրավոր՝ 2000թ. ապրիլի 4-ին, Ղատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն:

Էրիկ Ֆրայբերգ  
Քարտուղար

Մարկ Ֆիշբախ  
Նախագահ

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետի և Ղատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն՝ սույն վճռին կցվում են հետևյալ կարծիքները.

(ա) պրն Քոնֆորթիի համընկնող կարծիքը,

(բ) պրն Բոնելոյի համընկնող կարծիքը,

(գ) պրն Բակայի չհամընկնող կարծիքը:

Է. Ֆ.  
Մ. Ֆ.

## ԺԵՍԻՈՒՍՆ ԸՆԴՂԵՄ ԼԻՏՎԱՅԻ ԳՈՐԾԸ

### CASE OF JESIUS v. LITHUANIA

(Գանգատ թիվ 34578/97)

Ղատարանի 2000թ. հուլիսի 31-ի  
վճիռը

Ստորասրուրգ

**Ժեսիուսն ընդդեմ Լիտվայի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երրորդ բաժանմունք),  
նիստ գումարելով որպես Պալատ, կազմով՝

Պրն Ժ.-Պ. Կոստայի, *Նախագահ,*

Պրն Վ.Ֆուրմանի,

Պրն Պ.Կ. Ռիսի,

Պրն Ֆ.Թուլկենսի,

Պրն Կ. Յունգվերտի,

Պրն Կ. Թրաժայի,

Պրն Մ. Ուգրեխելիդեի, *դատավորներ,*

և Տկն Ս.Դոլլեի, Բաժանմունքի քարտուղար,  
2000թ. հունիսի 11-ին, դռնփակ խորհրդակցությունից հետո, ընդունեց  
հետևյալ վճիռը.

## **ՎԱՐՈՒՅՑԸ**

1. Գործը հարուցվել է, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») նախկին 25-րդ հոդվածի հիման վրա, Լիտվայի քաղաքացի պրն ժոգաս ժեսիուսի («դիմող») կողմից 1996թ. դեկտեմբերի 30-ին Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողով («Հանձնաժողով») ընդդեմ Լիտվայի ներկայացված թիվ 34578/97 գանգատով: Դիմողը մահացել է 1999թ. ապրիլի 9-ին: Դիմողի այրին 1999թ. ապրիլի 14-ին նամակով ցանկություն է հայտնել շարունակել գործը:

2. Դիմողի շահերը ներկայացրել է Վիլնյուսում աշխատող փաստաբան պրն Կ.Ստանջիսը: Լիտվայի Կառավարությունը («Կառավարություն») ներկայացրել է նրա ներկայացուցիչը՝ Արդարադատության փոխնախարար պրն Գ. Շվեդասը:

3. Գործը Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի («Հանձնաժողով») կողմից Ղատարան է հանձնվել 1999թ. հոկտեմբերի 25-ին՝ Կոնվենցիայի նախկին 32-րդ հոդվածի 1-ին կետով և 47-րդ հոդվածով սահմանված եռամսյա ժամկետում: Հանձնաժողովի խնդրանքը հիմնվում էր նախկին 44-րդ և 48-րդ հոդվածների և այն հայտարարության վրա, որով Լիտվան ճանաչել էր Ղատարանի պարտադիր իրավազորությունը (նախկին 46-րդ հոդված): Խնդրանքի նպատակն էր որոշել, թե արդյո՞ք գործի փաստերը վկայում են պատասխանող պետության կողմից Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերի խախտման մասին:

4. Կոնվենցիայի թիվ 11 արձանագրության 5-րդ հոդված 4-րդ կետի, ինչպես նաև Ղատարանի կանոնակարգի 100-րդ կանոնի 1-ին կետի և 24-րդ կանոնի 6-րդ կետի հիման վրա Մեծ պալատի խումբը 1999թ. դեկտեմբերի 13-ին որոշել է, որ գործը պետք է քննվի Ղատարանի բաժանմունքներից մեկում ձևավորված Պալատի կողմից: Հետևաբար, Ղատարանի նախագահը, 52-րդ կանոնի 1-ին կետի հիման վրա, գործը հանձնել է Երրորդ բաժանմունք:

5. 2000թ. հունվարի 18-ին Երրորդ բաժանմունքի նախագահը Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 1-ին կետին և Ղատարանի կանոնակարգի 26-րդ կանոնի 1-ին կետին համապատասխան ձևավորել է Պալատը:

6. Խորհրդակցելով կողմերի հետ՝ Ղատարանը որոշեց գործի քննությունը կասեցնել:

7. 2000թ. մարտի 21-ին, 23-ին և 29-ին, մայիսի 12-ին և 17-ին կողմերը և՛ Ղատարանի պահանջով, և՛ իրենց նախաձեռնությամբ ներկայացրել են մի շարք փաստաթղթեր:

## **ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

### **1.ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ**

8. Դիմողը, որը հյուրանոցի տնօրեն էր, կասկածվել է 1994թ. կատարված սպանության մեջ: 1995թ. սպանության գործը կասեցվել է ապացույցների բացակայության պատճառով:

9. Դիմողը ձերբակալվել է 1996թ. փետրվարի 8-ին: Նույն օրը Գլխավոր ոստիկանապետը, Գլխավոր դատախազի տեղակալի թույլտվությամբ, կարգադրել է դիմողի «կանխիչ կալանավորումը» (prevençinis sulaikymas)՝ 60 օր ժամկետով: 1996թ. փետրվարի 9-ին Վիլնյուսի մարզային դատարանի դատավորը հաստատել է

կանխիչ կալանավորման վերաբերյալ կարգադրությունը: Կանխիչ կալանքի կարգադրությունը հիմնվում էր այդ ժամանակ գործող Քրեական դատավարության օրենսգրքի 50-1 հոդվածի ընդհանուր դրույթի վրա, որը կանխիչ կալանավորումը թույլատրում էր բանդիտիզմի, հանցավոր խմբավորման և անձի նկատմամբ ահաբեկչության կապակցությամբ: Դիմողը բողոք է ներկայացրել ընդդեմ իր ձերբակալության՝ զանգատվելով, *inter alia*, որ ինքը չի տեղեկացվել կալանավորման պատճառի կամ իր դեմ հարուցված որևէ մեղադրանքի մասին: 1996թ. փետրվարի 19-ին Վիլնյուսի մարզային դատարանի դատավորը մերժել է բողոքը: Վերոհիշյալ որոշմամբ դիմողի նկատմամբ որևէ կոնկրետ մեղադրանք չի ներկայացվել: Կանխիչ կալանավորման հետ կապված որևէ քննություն չի անցկացվել:

10. 1996թ. մարտի 8-ին սպանության գործի վարույթը վերսկսվել է: Դիմողը մեղադրվել է՝ որպես գլխավոր հանցակից, ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանության մեջ: Նա մեղադրվել է իր մեքենայի ենթադրյալ հափշտակողին անօրինական կերպով պատժելու մեջ, որի արդյունքում վերջինս մահացել է: Գործին առնչվող հինգ մեղադրյալներից երեքը ոստիկաններ էին, որոնք ենթադրաբար ձերբակալված գոհին հանձնել էին դիմողին:

11. 1996թ. մարտի 14-ին Գլխավոր դատախազի տեղակալը, Քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի հիման վրա, թույլատրել է դիմողի կալանքը՝ սպանության կասկածանքով: Կալանքը թույլատրված էր մինչև 1996թ. հունիսի 4-ը:

12. 1996թ. մարտի 27-ին դիմողը հարցաքննվել է: 1996թ. ապրիլի 22-ին դիմողը դիմել է դատախազություն՝ պնդելով, որ չկա հանցագործությունը կատարելու կամ նախապատրաստելու մեջ իրեն կասկածելու որևէ ապացույց, և իր կանխիչ կալանքը և հետագա կալանքը չեն համապատասխանում ներպետական քրեական դատավարության նորմերին և Կոնվենցիայի 5-րդ հոդվածին: 1996թ. ապրիլի 24-ին Պանևեժիսի մարզի գլխավոր դատախազը բողոքը մերժել է այն հիմնավորմամբ, որ դիմողի կալանքը կարող էր պարզապես արդարացվել կատարված հանցանքի լրջությամբ:

13. 1996թ. մայիսի 17-ին դիմողը դիմել է Գլխավոր դատախազին՝ պնդելով, որ իր դեմ չկա որևէ հիմնավոր կասկած, և որ կալանքը խախտում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածով պաշտպանվող իր իրավունքները: 1996թ. մայիսի 21-ին մարզային դատախազը մերժել է բողոքը: 1996թ. հունիսի 4-ին դիմողի ներկայացուցչի կրկին ներկայացրած բողոքը մերժվել է Պանևեժիսի մարզի գլխավոր դատախազի կողմից:

14. Նախաքննությունն ավարտվել է 1996թ. մայիսի 29-ին: 1996թ. մայիսի 30-ից մինչև հունիսի 10-ը դիմողին և նրա պաշտպանին հնարավորություն է տրվել գործին ծանոթանալու: Մյուս մեղադրյալներին գործին ծանոթանալու հնարավորություն է տրվել մինչև 1996թ. հունիսի 14-ը:

15. Դիմողը գործի նյութերին ծանոթանալու հնարավորություն ստանալուց հետո բողոք է ներկայացրել դատախազություն՝ վիճարկելով, որ մեղադրանքը և կալանքը հիմնավորված չեն: 1996թ. հունիսի 11-ին Պանևեժիսի մարզային դատախազը մերժել է բողոքը՝ պատճառաբանելով, որ գործը, ամբողջությամբ վերցրած, բավականաչափ ապացույցներ է պարունակում դիմողի մեղավորության վերաբերյալ:

16. 1996թ. հունիսի 13-ին դատախազը տեղեկացրել է մեկուսարանի ադմինիստրացիային, որտեղ դիմողը գտնվում էր կալանքի տակ, որ նրա կալանքի ժամկետն «ինքնաբերաբար երկարացվել է մինչև 1996թ. հունիսի 14-ը»՝ համաձայն այդ ժամանակ գործող Քրեական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի 6-րդ կետի, և որ գործը փոխանցվել է Պանևեժիսի մարզի գլխավոր դատախազին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու համար: Դիմողի կալանքի վերաբերյալ չի կայացվել որևէ որոշում:

17. 1996թ. հունիսի 24-ին Պանևեժիսի մարզային գլխավոր դատախազը նամակով մեկուսարանի ադմինիստրացիային տեղեկացրել է, որ սպանության գործը փոխանցվել է Պանևեժիսի մարզային դատարան, և որ դիմողի կալանքն օրինական է եղել: Կալանքի վերաբերյալ որևէ որոշում չի կայացվել:

18. 1996թ. հուլիսի մեկին Պաննեթիսի մարզային դատարանը տեղեկացրել է մեկուսարանի ադմինիստրացիային, որ 1996թ. հուլիսի 31-ին տեղի կունենա դատական նիստ և դիմողի ու նրա հանցակիցների դատաքննության կապակցությամբ կտրվեն հրահանգներ: Դիմողին կալանքի տակ պահելու վերաբերյալ որևէ կարգադրություն չի կայացվել:

19. 1996թ. հուլիսի 31-ին այդ գործը քննության նախապատրաստելու ժամանակ Պաննեթիսի մարզային դատարանի դատավորը որոշել է, որ դիմողի «կալանքը պետք է մնա անփոփոխ»: Դատավորը դիմողի կալանքի օրինականությանն առնչվող որևէ այլ հանգամանք չի նշել: Դիմողի պաշտպանը ներկա է եղել նիստին:

20. Դատավարությունը Պաննեթիսի մարզային դատարանում սկսվել է 1996թ. սեպտեմբերի 3-ին: 1996թ. սեպտեմբերի 9-ին դատաքննությունը հետաձգվել է՝ նոր իրեղեն ապացույցներ ձեռք բերելու նպատակով:

21. 1996թ. հոկտեմբերի 14-16-ը մարզային դատարանը գործը լսել է դիմողի և նրա պաշտպանի ներկայությամբ: 1996թ. հոկտեմբերի 16-ին դատարանը որոշել է, որ դիմողը պետք է մնա կալանքի տակ: Որոշման մեջ դիմողի կալանքի օրինականությունը հիմնավորող այլ հանգամանքներ չեն նշվել: Դիմողի կալանքի ժամկետը երկարացվել է մինչև 1997թ. փետրվարի 15-ը: Դատարանը նաև կարգադրել է ձեռնարկել լրացուցիչ քննչական միջոցներ:

22. 1996թ. հոկտեմբերի 28-ին դիմողն այդ որոշումը բողոքարկել է Վերաքննիչ դատարան: Նա նաև դիմել է Գլխավոր դատախազին, մեկուսարանի ադմինիստրացիային և օմբուդսմենին: Դիմողը պնդել է, որ մարզային դատարանն իրեն կալանավորելու վերաբերյալ պատշաճ որոշում չի կայացրել, քանի որ պարզապես երկարացրել է կալանքի վերաբերյալ արդեն գոյություն չունեցող որոշման գործողության ժամկետը, որը լրացել էր 1996թ. հունիսի 4-ին: Դիմողը, *inter alia*, նշել է, որ Լիտվայի Սահմանադրության 20-րդ հոդվածը և Կոնվենցիայի 5-րդ հոդվածը խախտվել են ի վնաս իրեն:

23. 1996թ. նոյեմբերի 21-ին օմբուդսմենը Ներքին գործերի նախարարի, Գլխավոր դատախազի, Կալանավայրերի վարչության պետի և մեկուսարանի պետի ուշադրությունը հրավիրել է այն փաստի վրա, որ, իր կարծիքով, «դիմողը 1996թ. հունիսի 14-ից մինչև 1996թ. հուլիսի 31-ը կալանքի տակ պահվել է անօրինական կերպով՝ ի խախտումն Լիտվայի Սահմանադրության 20-րդ հոդվածի...և Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1(c) կետի»:

24. 1996թ. նոյեմբերի 25-ին դիմողը կրկնել է իր բողոքն ընդդեմ կալանքի:

25. 1996թ. նոյեմբերի 27-ին Վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը՝ հիմնվելով այդ ժամանակ գործող Քրեական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 4-րդ կետին: Դիմողին ուղղված իր նամակում Վերաքննիչ դատարանն ընդունել է, որ ստորին աստիճանի դատավորները «հավանաբար» իրավունքի սխալ են թույլ տվել նրա կալանքի հարցը լուծելիս, բայց նաև նշել է, որ նրանց որոշումների դեմ բողոք ներկայացվել չի կարող:

26. Նույն օրը, Պաննեթիսի մարզային դատարանի 1996թ. հոկտեմբերի 16-ի որոշման դեմ ներկայացված դատախազության բողոքի հիման վրա, վերաքննիչ դատարանը չեղյալ է հայտարարել՝ գործով լրացուցիչ քննչական գործողություններ անցկացնելու մասին որոշումը: Դիմողը բողոքել է դրա դեմ:

27. 1996թ. նոյեմբերի 30-ին դիմողն ընդդեմ իր կալանավորման դիմել է Գերագույն դատարանի նախագահին: 1996թ. դեկտեմբերի 30-ին Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահը տեղեկացրել է դիմողին, որ նրա բողոքը քննության ենթակա չէ: Նա ընդունել է, որ դիմողը «1996թ. հունիսի 4-ից մինչև 1996թ. հուլիսի 31-ը կալանքի տակ է գտնվել՝ առանց խափանման միջոցի ժամկետի երկարացման»: Նա այնուհանդերձ շեշտել է, որ «բողոքի հիմքը չի կարող խախտել օրենքի դրույթը, համաձայն որի՝ խափանման միջոց կիրառելու, փոխելու կամ դրա

ժամկետը երկարացնելու մասին որոշումը (Քրեական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 4-րդ կետ) բողոքարկման ենթակա չէ»:

28. 1997թ. հունվարի 14-ին Չերագույն դատարանը փոփոխել է Վերաքննիչ դատարանի 1996թ. նոյեմբերի 27-ի որոշումը, որով չեղյալ էր հայտարարվել Պաննեժիսի մարզային դատարանի 1996թ. հոկտեմբերի 16-ի որոշումը՝ լրացուցիչ քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ: Ղատարանը նաև որոշել է, որ մեկ դատավորի փոխարեն սպանության գործն ըստ էության պետք է քննվեր երեք դատավորի կազմով:

29. Դիմողը քաղաքացիական հայց է հարուցել ընդդեմ մեկուսարանի ադմինիստրացիայի՝ առանց պաշտոնական կարգադրության իրեն կալանքի տակ պահելու համար: 1997թ. փետրվարի 26-ին Շյաուլյայի համայնքային դատարանի դատավորը մերժել է հայցը: Ղատավորը գտել է, որ ադմինիստրացիայի գործողությունները հիմնված են եղել «դատախազի թույլտվության, կալանքի ժամկետը երկարացնելու մասին տեղեկություն պարունակող գրությունների, դատարանի և դատավորի որոշումների վրա»: 1997թ. ապրիլի 28-ին Շյաուլյայի մարզային դատարանը ուժի մեջ է թողել համայնքային դատարանի վճիռը:

30. Դիմողն առողջության հետ կապված պատճառաբանությամբ խնդրել է կալանքը փոխարինել գրավով: 1997թ. մարտի 17-ին Պաննեժիսի մարզային դատարանը մերժել է նրա խնդրանքը: Ղատաքննությունը կրկին կասեցվել է մինչև 1997թ. ապրիլի 28-ը և պահանջվել է լրացուցիչ քննություն: Ղատաքննությունը վերսկսվել է 1997թ. մայիսի 26-ին:

31. 1997թ. հունիսի 9-ին Պաննեժիսի մարզային դատարանն արդարացրել է դիմողին՝ բոլոր մեղադրանքների կապակցությամբ՝ ապացույցների բացակայության պատճառով: Նա ազատվել է կալանքից:

32. Ղատախազությունը և գործով մյուս մեղադրյալները բողոք են ներկայացրել ընդդեմ առաջին ատյանի դատարանի դատավճռի: 1997թ. օգոստոսի 27-ին Վերաքննիչ դատարանը բեկանել է մարզային դատարանի դատավճիռը: Գործը հետ է ուղարկվել դատախազություն՝ հետագա քննության համար:

33. 1997թ. հոկտեմբերի 22-ին Պաննեժիսի մարզային դատախազության դատախազը տեղեկացրել է դիմողին, որ 1997թ. հոկտեմբերի 21-ի որոշմամբ նրա դեմ հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է:

## II. ԳՈՐԾԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

<Տրված են թարգմանությունները>

34. Լիտվայի Սահմանադրության համապատասխան դրույթները.

Հոդված 20, կետ 3. «Հանցագործություն կատարելու մեջ կասկածվող ձերբակալված անձը պետք է 48 ժամվա ընթացքում ներկայացվի դատարան, որպեսզի նրա ներկայությամբ որոշվի, թե արդյո՞ք անհրաժեշտ է կալանք կիրառել: Եթե դատարանը ձերբակալված անձի կալանքի մասին որոշում չի կայացնում, ապա վերջինս անմիջապես ազատ է արձակվում»:

Հոդված 30, կետ 1. «Անձը, որի սահմանադրական իրավունքները կամ ազատությունները ոտնահարվել են, իրավունք ունի դիմելու դատարան»:

35. Նախկին Քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները.

Հոդված 10 (ուժի մեջ էր մինչև 1996թ. հունիսի 21-ը). «Ոչ ոք չի կարող ձերբակալվել առանց դատարանի որոշման կամ դատավորի կարգադրության կամ դատախազի թույլտվության...»:

Հոդված 50 -1 (կանխիչ կալանավորում) (ուժի մեջ էր մինչև 1997թ. հունիսի 30-ը). «...Եթե կան բավարար հիմքեր կասկածելու, որ անձը կարող է կատարել վտանգավոր արարք, որի հատկանիշները նախատեսված են Լիտվայի Հանրապետության քրեական օրենսգրքի 75-րդ [բանդիտիզմ], 227-1 [հանցավոր խմբավորում] և 227-2 [անձի դեմ ահաբեկչություն] հոդվածներով, և նման արարքը

կանխելու համար ոստիկանապետը ... կարող է, հիմնավորված որոշմամբ, դատախազի թույլտվությամբ, կարգադրել անձի ձերբակալումը...:

Համայնքային դատարանի նախագահը, մարզային դատարանի դատավորը կամ մարզային դատարանի պալատի նախագահը, ձերբակալման որոշումը կայացրած ոստիկանապետի և ձերբակալման թույլտվություն տված դատախազի մասնակցությամբ..., 48 ժամվա ընթացքում որոշում է ձերբակալման օրինականության հարցը:

Դատավորը ձերբակալման օրինականության հարցը որոշելիս՝ կարող է իր նախաձեռնությամբ ապահովել նաև ձերբակալված անձի ներկայությունը. սակայն դատավորը կարող է նաև որոշումը կայացնել վերջինիս բացակայությամբ...:

Ձերբակալված անձը կարող է որոշումը բողոքարկել ավելի բարձր ատյանի դատարան:

...Ավելի բարձր ատյանի դատարանի որոշումը վերջնական է և չի կարող բողոքարկվել:

Դատախազի թույլտվությամբ կալանավորված անձը, որի կալանքը հաստատված է դատավորի կողմից, կարող է կալանքի տակ մնալ ոչ ավելի, քան երկու ամիս ...»:

Սկսած 1996թ. հունիսի 21-ից ձերբակալումը կարող է թույլատրվել միայն դատարանի կամ դատավորի կողմից:

Հոդված 104 (համաձայն 1994թ. հուլիսի 19-ի թիվ 1-551 օրենքի, որն ուժի մեջ է եղել մինչև 1996թ. հունիսի 21-ը). «Կալանքը, որպես խափանման միջոց, կարող է կիրառվել միայն դատարանի որոշման, դատավորի կարգադրության կամ դատախազի թույլտվության հիման վրա, երբ տվյալ արարքի համար որպես պատիժ նախատեսված է առնվազն մեկ տարվա ազատազրկում...:

Քրեական օրենսգրքի 105-րդ ... հոդվածում նախատեսված հանցագործությունների դեպքում (ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանություն), կալանքը, որպես խափանման միջոց, կարող է կիրառվել միայն հանցանքի ժանրության հիմքով...:

Կալանքը թույլատրելու հարցը լուծելիս՝ դատախազը ..., անհրաժեշտության դեպքում, անձամբ է լսում կասկածյալին կամ մեղադրյալին...»:

Հոդված 104-1 (ուժի մեջ է եղել 1996թ. հունիսի 21-ից մինչև 1998թ. հունիսի 24-ը). «...Ձերբակալված անձը բերվում է դատավորի մոտ ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում...: Դատավորը լսում է նրան՝ ձերբակալման հիմքերի կապակցությամբ: Դատախազը և ձերբակալված անձի պաշտպանը կարող են մասնակցել հարցաքննությանը: Ձերբակալված անձին հարցաքննելուց հետո դատավորը կարող է հաստատել ձերբակալման կարգադրությունը՝ սահմանելով կալանքի ժամկետը, փոփոխել կամ վերացնել խափանման միջոցը...:

Գործը դատարան փոխանցվելուց հետո դատարանը կարող է կարգադրել փոփոխել կամ վերացնել կալանքը»:

Փոփոխված 104-1 հոդվածը (ուժի մեջ է 1998թ. հունիսի 24-ից) նախատեսում է, որ դատախազը և դատապաշտպանը պետք է մասնակցեն ձերբակալված անձի առաջին դատական հարցաքննությանը, եթե միայն դատավորն այլ որոշում չի կայացրել: Փոփոխված դրույթը նաև թույլ է տալիս դատարանին երկարացնել կալանքի տակ մնալու ժամկետը՝ մինչև կալանքի ժամկետի լրանալը:

106-րդ հոդվածի 3-րդ կետ (ուժի մեջ է եղել 1996թ. հունիսի 21-ից մինչև 1998թ. հունիսի 24-ը). «[Նախաքննության փուլում] կալանքի ժամկետը երկարացնելու նպատակով դատավորը պետք է հրավիրի նիստ, որին կանչվում են

դատապաշտպանը, դատախազը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև կալանավորված անձը»:

Օրենսգիրքը, որն ուժի մեջ է 1998թ. հունիսի 24-ից, կալանավորված անձի ներկայությունը խափանման միջոցի հարցի լուծման հետ կապված լուծման պարտադիր է համարում:

Հոդված 109-1 (ուժի մեջ է եղել 1996թ. հունիսի 21-ից մինչև 1998թ. հունիսի 24-ը). «Կալանավորված անձը կամ նրա պաշտպանն իրավունք ունեն նախաքննության ընթացքում բողոք ներկայացնելու Վերաքննիչ դատարան՝ ընդդեմ կալանքի: Բողոքը քննության առնելու նպատակով կարող են հրավիրվել կալանավորված անձը և նրա պաշտպանը կամ միայն պաշտպանը: Ղատախազի ներկայությունն այդ քննությանը պարտադիր է:

Վերաքննիչ դատարանի դատավորի ընդունած որոշումը վերջնական է և չի կարող վճռաբեկ բողոքի առարկա դառնալ:

Հետագա գանգատարկումը հնարավոր է կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման հարցի քննարկման ժամանակ:»

Գործող 109-1 հոդվածը (ուժի մեջ է եղել 1998թ. հունիսի 24-ից) ներկայումս նախատեսում է ավելի բարձր աստիճանի դատարան բողոքարկելու հնարավորություն, ինչպես նաև լուծման՝ կալանավորի և նրա պաշտպանի ներկայությամբ կամ միայն պաշտպանի ներկայությամբ:

226-րդ հոդվածի 6-րդ կետ (ուժի մեջ է եղել մինչև 1998թ. հունիսի 24-ը). «Այն ժամանակահատվածը, երբ մեղադրյալին և նրա պաշտպանին հնարավորություն է տրվում ծանոթանալու գործի նյութերին, չի հաշվվում նախաքննության և կալանքի ամբողջ ժամկետի մեջ: Մի քանի մեղադրյալների դեպքում, այն ժամանակահատվածը, երբ բոլոր մեղադրյալներին և նրանց պաշտպաններին հնարավորություն է տրվում ծանոթանալու գործի նյութերին, չի հաշվվում նախաքննության և կալանքի ամբողջ ժամկետի մեջ»:

Սկսած 1998թ. հունիսի 24-ից կալանքի որոշումներն այդ ժամկետն այլևս չեն ընդգրկում:

372-րդ հոդվածի 4-րդ կետ (ուժի մեջ է եղել մինչև 1999թ. հունվարի 1-ը). «Խափանման միջոց սահմանող, փոփոխող կամ վերացնող դատական որոշումները բողոքարկման ենթակա չեն...»:

36. Գործին առնչվող՝ Քրեական դատավարության օրենսգրքի այլ դրույթներ. 52-րդ հոդվածի 2(3) և (8) կետերը և 58-րդ հոդվածի 2(8) և (10) կետերը նախատեսում են համապատասխանաբար, որ մեղադրյալները և նրանց պաշտպաններն իրավունք ունեն «ներկայացնելու միջնորդություններ» և «բողոքարկելու հետաքննիչի, քննիչի, դատախազի կամ դատարանի գործողությունները կամ որոշումները»:

249-րդ հոդվածի 1-ին կետ. «Ղատավորը՝ միանձնյա, կամ դատարանը, գործը քննության նախապատրաստելու փուլում գործը քննության նշանակելու վերաբերյալ որոշում կայացնելիս՝ որոշում է ... արդյո՞ք մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցը ճիշտ է ընտրված»:

250-րդ հոդվածի 1-ին կետ. «Երբ որոշվում է, որ մեղադրյալի գործը քննության նշանակելու համար կան բավարար հիմքեր, դատավորը՝ միանձնյա, կամ դատարանը գործը քննության նախապատրաստելու փուլում որոշում է հետևյալ հարցերը կապված... մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի հետ...»:

267-րդ հոդվածի 1-ին կետ. «Մեղադրյալն իրավունք ունի... ներկայացնելու միջնորդություններ,...  
... բողոքարկել դատարանի որոշումները և դատավճիռը»:

277-րդ հոդված. Դատաքննության ընթացքում դատարանը կարող է որոշել՝ կարգադրել, փոփոխել կամ վերացնել ամբաստանյալի խափանման միջոցը»:

37. 1996թ. հունիսի 21-ի Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքով սահմանվել է, որ դատախազի կողմից մինչև 1996թ. հունիսի 21-ը թույլատրված կալանքի ժամկետը դրանից հետո կարող է երկարացվել դատարանի կողմից՝ կալանքի հետ կապված հարցերը կանոնակարգող նոր ընթացակարգով:

### **III. ԼԻՏՎԱՅԻ ՎԵՐԱՊԱՅՈՒՄԸ**

38. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի կապակցությամբ Լիտվայի վերապահումն ուժի մեջ է եղել մինչև 1996թ. հունիսի 21-ը և նախատեսել է հետևյալը. «Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը չի ազդում Լիտվայի Հանրապետության Քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի (փոփոխված տարբերակ՝ թիվ 1-551, 1994թ. հուլիսի 19) գործողության վրա, որը նախատեսում է, որ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող յուրաքանչյուր անձի կալանավորման մասին որոշումը կարող է դատախազի որոշմամբ անփոփոխ մնալ: Այս վերապահումն ուժի մեջ է Լիտվայի համար Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարի»:

### **ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ**

#### **1. ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻ ՄԱՀԸ**

39. Դատարանը նշում է դիմողի մահվան փաստը, և նրա նախաձեռնած դատական գործը շարունակելու նրա այրու ցանկության փաստը:

40. Հանձնաժողովը համարում է, որ դիմողի այրին դիմողի կողմից հարուցված գործը շարունակելու հարցում ունի օրինական շահագրգռություն:

41. Դատարանը հիշեցնում է, որ կալանքի անօրինականությանը վերաբերող գործի քննության ընթացքում դիմողի մահվան դեպքում, նրա ժառանգները կամ իրավահաջորդներն սկզբունքորեն կարող են դիմողի անունից շարունակել մասնակցությունը գանգատի քննությանը (տե՛ս Կրեմպովսկին ընդդեմ Լիտվայի վճիռը, թիվ 37193/97, 20.04.1999): Դատարանը, ինչպես Հանձնաժողովը, գտնում է, որ դիմողի կինն ունի նրա գործը շարունակելու օրինական շահագրգռություն:

### **II. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ**

42. Կառավարությունը նշել է, որ Դատարանը չի կարող քննության առնել դիմողի կանխիչ կալանքի հետ կապված գանգատը, քանի որ չի պահպանվել Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված վեցամսյա ժամկետը: Կառավարությունը ընդունել է, որ դիմողի կանխիչ կալանքը չի ծառայել նույն նպատակին, ինչ

կալանքը: Ավելին, նրա կանխիչ կալանքը թույլատրված է եղել այլ ներպետական ընթացակարգի հիման վրա, քան հետագա կալանքը: Քանի որ կանխիչ կալանքի ժամկետն ավարտվել էր 1996թ. մարտի 14-ին, իսկ գանգատը ներկայացվել էր 1996թ. դեկտեմբերի 30-ին, ապա գործի այս ասպեկտը ներկայացվել էր ժամկետանց:

43. Հանձնաժողովը գտել է, որ չնայած դիմողի կանխիչ կալանքը և կալանքը թույլատրվել էին ներպետական օրենսդրության հասկացությունների համաձայն՝ տարբեր հիմքերով, սակայն դիմողի կարգավիճակի ոչ մի ակնհայտ փոփոխություն չի եղել, երբ նրա կանխիչ կալանքը փոխարինվել է կալանքով: Հանձնաժողովը գտել է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելու նպատակով դիմողի կալանքի ողջ ժամկետը պետք է դիտվի որպես ամբողջություն, և որ կանխիչ կալանքի վերաբերյալ դիմողի գանգատը չի կարող մերժվել վեցամսյա ժամկետի վերաբերյալ կանոնը չպահպանելու պատճառաբանությամբ:

44. Ղատարանը համամիտ է Հանձնաժողովի եզրակացությանը: Այնպիսի շարունակվող վիճակի նկատմամբ պաշտպանության միջոցի բացակայությունը, ինչպիսին կալանքի ժամանակահատվածն է, 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված վեցամսյա ժամկետը սկսում է հաշվվել այդ վիճակը դադարելու պահից, մասնավորապես, կալանքից ազատելու պահից սկսած (տե՛ս, *mutatis mutandis*, 1997թ. դեկտեմբերի 1-ի որոշումը՝ սույն գանգատի ընդունելիության վերաբերյալ): Ի հավելումն դրա, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելիս՝ Ղատարանը հաճախ, առանց ձևական նկատառումների, անդրադառնում է ակնհայտ հանգամանքներին (տե՛ս, *inter alia*, Գուզարդին ընդդեմ Իտալիայի 1980թ. նոյեմբերի 6-ի վճիռը, Շարքեր Ա թիվ 39, էջ 26, կետ 72):

Չնայած 1996թ. մարտի 14-ին դիմողի կանխիչ կալանքը՝ Քրեական դատավարության օրենսգրքի 50-1 հոդվածի հիման վրա, պաշտոնապես փոխարինվել է կալանքով՝ Քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի հիման վրա, սակայն այս փոփոխությունը չի ազդել դիմողի կարգավիճակի վրա, քանի որ նա ոչ տեղափոխվել է մեկ այլ բանտախուց կամ բանտ և ոչ էլ բերվել է իրավասու պաշտոնյայի մոտ՝ փոփոխության մասին տեղեկացվելու համար: Ղատարանը, հետևաբար, գտնում է, որ վեցամսյա ժամկետի վերաբերյալ կանոնի կիրառման առումով դիմողի կալանքի ողջ ժամանակահատվածը պետք է դիտվի որպես ամբողջություն:

Քանի որ դիմողը դեռ եղել է կալանքի տակ, որի դեմ նա բողոքել է՝ 1996թ. դեկտեմբերի 30-ին ներկայացնելով սույն գանգատը, գործը չի կարող քննության չընդունվել՝ գանգատը սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու պատճառաբանությամբ:

45. Ղատարանը, հետևաբար, մերժում է Կառավարության նախնական առարկությունը:

## **ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄԸ**

46. Դիմողը բողոքել է, որ իր կալանավորումը խախտել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը, որի գործին առնչվող մասը նախատեսում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով ...

(գ) անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը՝ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու իրավական մարմինն ներկայացնելու նպատակով, կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո փախուստը կանխելու համար, ...»:

### **1. Կանխիչ կալանք**

47. Դիմողը գանգատվում է, որ 1996թ. փետրվարի 8-ից մինչև մարտի 14-ն իր կանխիչ կալանքը չի համապատասխանել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետին: Մասնավորապես, նման կալանքի համար չի եղել որևէ հիմք, քանի որ այդ ժամանակ նրա դեմ քրեական գործ հարուցված չի եղել: Ավելին, չի եղել նրա կողմից կատարվելիք որևէ հանցագործության վտանգ, որն անհրաժեշտ էր կանխել:

48. Կառավարությունը պնդել է, որ դիմողի կանխիչ կալանավորումը համապատասխանել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1(գ) կետին, քանի որ Քրեական դատավարության օրենսգրքի 50-1 հոդվածի նախկին դրույթը թույլատրում էր կալանավորում՝ բանդիտիզմի, հանցավոր խմբավորման և անձի դեմ ահաբեկչության կանխման նպատակով:

49. Հանձնաժողովն այն կարծիքին էր, որ դիմողի կանխիչ կալանավորումը գերազանցել է ազատության իրավունքի թույլատրելի բացառությունների սահմանը՝ խախտելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը:

50. Ղատարանը նշում է, որ անձը կարող է զրկվել իր ազատությունից միայն 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված նպատակներով: Անձը, 5-րդ հոդվածի 1(գ) կետին համապատասխան, կարող է կալանավորվել միայն քրեական գործի վարույթի համատեքստում՝ հանցագործություն կատարած լինելու կասկածի առկայության դեպքում նրան իրավասու իրավական մարմին ներկայացնելու նպատակով (տե՛ս, *mutatis mutandis*, Լոուլեսն ընդդեմ Իռլանդիայի 1961թ. հուլիսի 1-ի վճիռը, Շարքեր Ա թիվ 3, էջեր 51-52, կետ14; Սիուլան ընդդեմ Իտալիայի 1989թ. փետրվարի 22-ի վճիռը, Շարքեր Ա թիվ 148, էջեր 16-18, կետեր 38-41):

51. Հետևաբար, Ղատարանը գտնում է, որ տվյալ դեպքում կանխիչ կալանքը թույլատրված չէ 5-րդ հոդվածի 1(գ) կետով և Քրեական դատավարության օրենսգրքի 50-1 հոդվածով:

52. Ուստի այս կապակցությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

## **2. Կալանքը 1996թ. հունիսի 4-ից մինչև հուլիսի 31-ը**

53. Դիմողը նաև գանգատվել է, որ ի խախտումն 5-րդ հոդվածի 1-ին կետի՝ 1996թ. հունիսի 4-ից մինչև հուլիսի 31-ը չի եղել որևէ օրինական ներպետական որոշում կամ այլ օրինական հիմք իր կալանքի համար:

54. Կառավարությունը վիճարկում էր, որ այդ ժամանակահատվածում դիմողի կալանքն արդարացված է եղել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, քանի որ լուրջ կասկածներ են եղել, որ նա է կատարել սպանությունը: Ոչ մի ներպետական որոշում չի պահանջվել կալանքի այդ ժամանակահատվածի համար, որի ընթացքում դիմողին և նրա հանցակիցներին հնարավորություն է տրվել ծանոթանալու գործի նյութերին՝ այդ ժամանակ գործած Քրեական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան: Կառավարության կարծիքով, այս դրույթը թույլ է տվել դիմողի կալանքը մինչև 1996թ. հունիսի 21-ը: Կառավարությունը նաև նշել է, որ Լիտվական իրավունքը միայն պահանջում է, որ կալանքի կոնկրետ ժամկետ սահմանվի նախաքննության փուլում, և որ դատաքննության ընթացքում դատարանը կարող է միայն կարգադրել, փոխել կամ վերացնել կալանքը (այդ ժամանակ գործած՝ Քրեական դատավարության օրենսգրքի 104-1 հոդված, 249-րդ հոդվածի 1-ին կետ և 250-րդ հոդվածի 1-ին կետ): Հետևաբար, դիմողի կալանքը 1996թ. հունիսի 24-ից հետո արդարացված է եղել այն փաստով, որ դատական գործը փոխանցվել է Պաննեժիսի մարզային դատարան, որից այնուհետև չի պահանջվել երկարացնել դիմողի կալանքի ժամկետը, կամ էլ հաստատել այն:

55. Հանձնաժողովը գտել է, որ դիմողի կալանքը 1996թ. հունիսի 4-ից մինչև հուլիսի 31-ը թույլատրված չի եղել որևէ օրինական ներպետական որոշմամբ կամ այլ օրինական հիմքով՝ խախտելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը:

56. Ղատարանը կրկնում է, որ 5-րդ հոդվածի 1-ին կետում կիրառվող «օրինական» և «օրենքով սահմանված կարգով» արտահայտությունները հիմնականում վերաբերում են ներպետական իրավունքին և նշում են նյութական ու դատավարական ներպետական նորմերի պահանջները՝ կատարելու պետության պարտավորությունը:

Այնուհանդերձ, կալանքի «օրինականությունը» ներպետական իրավունքի հիման վրա միշտ չէ, որ վճռորոշ տարր է: Ի լրումն դրա, Ղատարանը պետք է համոզվի, որ վիճահարույց ժամանակահատվածում կալանքը համապատասխանել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի նպատակին, որն է՝ կանխել անձին կամայականորեն ազատությունից զրկելը:

Ղատարանը պետք է նաև համոզվի, թե արդյոք ներպետական իրավունքն ինքնին համապատասխանում է Կոնվենցիային, ներառյալ՝ դրանում արտահայտված կամ ամրագրված ընդհանուր սկզբունքներին: Վերջինիս առնչությամբ Ղատարանն ընդգծում է, որ ազատությունից զրկելու կապակցությամբ՝ հատկապես կարևոր է իրավական հստակության ընդհանուր սկզբունքի բավարարումը: Հետևաբար, կարևոր է, որ ներպետական իրավունքի համաձայն՝ ազատությունից զրկելու պայմանները հստակ սահմանված լինեն, և որ օրենքը կիրառման համար լինի կանխատեսելի, որպեսզի բավարարի Կոնվենցիայով սահմանված «օրինականության» չափորոշիչը. այս չափորոշիչը պահանջում է, որ ողջ իրավունքը լինի բավականաչափ ճշգրիտ, որը և թույլ կտա անձին, անհրաժեշտության դեպքում, տվյալ հանգամանքներում հնարավորինս կանխատեսել այն հետևանքները, որին կարող է հանգեցնել տվյալ գործողությունը (տե՛ս Բարանովսկին ընդդեմ Լեհաստանի վճիռը, թիվ 28358/95, ECHR 28.3.2000, կետեր 50-52):

57. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Ղատարանը նշում է, որ կողմերն ընդունում են, որ 1996թ. հունիսի 4-ից մինչև հուլիսի 31-ը դատավորի կամ դատախազի կողմից դիմողի կալանքը թույլատրող որևէ կարգադրություն չի եղել: Հետևաբար, պետք է ենթադրել, որ այդ ժամանակահատվածում դիմողի կալանքը չի համապատասխանել գործող ներպետական օրենսդրությանը (Քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ և 104-րդ հոդվածներ՝ մինչև 1996թ. հունիսի 21-ը, և Քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ և 104-1 հոդվածներ՝ 1996թ. հունիսի 21-ից հետո):

58. Կառավարությունը, սակայն, վիճարկում է, որ այդ ժամանակահատվածի մի մասում դիմողը կալանքի տակ է պահվել Քրեական դատավարության օրենսգրքի նախկին 226-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն. այդ ընթացքում նրան և նրա հանցակիցներին թույլատրվել է ծանոթանալ գործի նյութերին:

59. Ղատարանը նշում է, որ դատախազի 1996թ. հունիսի 13-ի գրությունը (վերը՝ կետ 16), օմբուդսմենի 1996թ. նոյեմբերի 21-ի որոշումը (վերը՝ կետ 23), Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահի 1996թ. դեկտեմբերի 30-ի գրությունը (վերը՝ կետ 27) և պատասխանող Կառավարության կողմից Ղատարանին ներկայացված բացատրությունները (վերը՝ կետ 54) այն հարցի վերաբերյալ, թե դիմողի կալանքի որ հատվածն է կարգավորվում Քրեական դատավարության օրենսգրքի նախկին 226-րդ հոդվածի 6-րդ կետով, տրվել են երեք տարբեր պատասխաններ, որի արդյունքում դիմողի կալանքն այդ դրույթով կարող էր ենթադրաբար արդարացվել մինչև 1996թ. հունիսի 4-ը, 14-ը կամ 21-ը: Ղատարանն անհրաժեշտ չի համարում լուծել Քրեական դատավարության օրենսգրքի նախկին 226-րդ հոդվածի 6-րդ կետի պրակտիկ գործողությանն առնչվող հակասությունը, որովհետև դրա ակնհայտ անորոշությունը նույնիսկ շփոթություն է առաջացրել իրավասու պետական մարմինների մոտ: Հետևաբար, այն չէր համապատասխանում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված «օրինականության» պահանջներին: Ավելին, վերոհիշյալ դրույթը կալանքը

թույլատրում է այնպիսի հիմքերով, որոնք ընդհանուր առմամբ խորթ են 5-րդ հոդվածի 1-ին կետին:

Դրանից հետևում է, որ դիմողին ազատությունից զրկելը՝ Քրեական դատավարության օրենսգրքի նախկին 226-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով օրենքով սահմանված չէ:

60. Կառավարությունը նաև նշել է, որ 1996թ. հունիսի 24-ից սկսած դիմողի կալանքը արդարացվում էր այն փաստով, որ գործը փոխանցվել էր մարզային դատարան: Կառավարության՝ գործին առնչվող ժամանակահատվածում կիրառելի ներպետական օրենսդրության մեկնաբանության համաձայն՝ դրանից հետո դատարանից չի պահանջվել երկարացնել դիմողի կալանքի ժամկետը կամ որևէ այլ կերպ հաստատել այն:

61. Ղատարանը գտնում է, այնուամենայնիվ, որ Կառավարության փաստարկը չի համապատասխանում այն պահանջին, որ դիմողի կալանքը պետք է հիմնված լիներ կալանքի օրինական որոշման վրա, որպիսին չի եղել 1996թ. հունիսի 4-ից մինչև հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում:

62. Բացի դրանից, Ղատարանը կրկնում է, որ կալանավորի կարգավիճակը կանոնակարգող հստակ նորմերի բացակայության պատճառով անձին առանց իրավական հիմքի կալանքի տակ պահելու պրակտիկան, որի արդյունքում անձը կարող է առանց դատական թույլտվության՝ ազատությունից զրկվել անսահմանափակ ժամանակով, չի համապատասխանում իրավական հստակության և կամայականությունից պաշտպանելու սկզբունքներին, որոնք հանդիսանում են Կոնվենցիայի և իրավական պետության ընդհանուր գաղափարները (տե՛ս նախկինում նշված Բարանովսկու վճիռը, կետեր 54-57):

63. Ղատարանը նկատում է, որ գործը 1996թ. հունիսի 24-ին մարզային դատարան փոխանցելու փաստը, չի պատասխանում այն հարցին, թե արդյոք դիմողի կալանքը, որը կարգադրվել էր սահմանափակ ժամկետով՝ հետաքննության փուլում, կարող էր շարունակվել դատաքննության ժամանակ, և եթե՝ այո, ապա՝ ի՞նչ պայմաններով:

Դրանից հետևում է, որ դիմողի կալանքի հիմնավորումը սոսկ այն փաստով, որ գործը փոխանցվել է դատարան, չի կարող հանդիսանալ «օրինական» հիմք՝ դիմողի կալանքը շարունակելու համար՝ համաձայն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի:

Ամփոփելով, 1996թ. հունիսի 4-ից մինչև հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում դիմողին կալանքի տակ պահելու համար որևէ ներպետական վավերական որոշում կամ այլ օրինական հիմք չի եղել:

64. Այսպիսով այդ ժամանակահատվածում տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

### **3. 1996թ. հուլիսի 31-ից մինչև հոկտեմբերի 16-ի կալանքը**

65. Դիմողը նաև գանգատվում էր, որ 1996թ. հուլիսի 31-ի գործը քննության նախապատրաստելու ժամանակ մարզային դատարանը սխալ է թույլ տվել՝ համաձայն Քրեական դատավարության օրենսգրքի 104-1 հոդվածի, երբ որոշել է, որ դիմողի կալանքը պետք է մնա անփոփոխ: Դիմողի կարծիքով, իր կալանքի ժամկետը լրացել էր 1996թ. հունիսի 4-ին, և մարզային դատարանն այլ խափանման միջոց չէր ընտրել: Դիմողի կարծիքով, նա դատարանի օրինական որոշմամբ կալանվել է միայն 1996թ. հոկտեմբերի 16-ին, երբ մարզային դատարանը որոշել է, որ դիմողը պետք է մնա կալանքի տակ: Ուստի, 1996թ. հուլիսի 31-ից մինչև հոկտեմբերի 16-ը նա ազատությունից զրկվել է հակառակ ներպետական օրենքով սահմանված կարգի:

66. Կառավարությունը պնդում էր, որ 1996թ. հուլիսի 31-ի որոշմամբ մարզային դատարանը ներպետական օրենքների պահանջներին համապատասխան թույլատրել է դիմողի կալանքը:

67. Հանձնաժողովը գտել էր, որ 1996թ. հուլիսի 31-ից մինչև հոկտեմբերի 16-ը դիմողի կալանքը թույլատրվել է օրենքով սահմանված ընթացակարգի համաձայն և Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան:

68. Դատարանը կրկնում է, որ 5-րդ հոդվածի 1-ին կետը պահանջում է, որ, *inter alia*, կալանքը համապատասխանի ներպետական օրենքին: Ինչպես Դատարանը նշել է Բարանովսկու վճռում (կետ 50), «թեև ներպետական իրավունքի մեկնաբանությունը և կիրառումն առաջին հերթին ներպետական իշխանությունների, հատկապես դատարանների խնդիրն է, սակայն այլ է վիճակն այն գործերի կապակցությամբ, երբ այդ իրավունքի պահանջները չկատարելը հանդիսանում է Կոնվենցիայի խախտում: Այսպիսի դեպքերում Դատարանը կարող է և պետք է իրականացնի որոշակի իրավասություն՝ վերահսկելու համար, թե արդյոք ներպետական իրավունքը կատարվե՞լ է»:

Կալանքի ժամկետն սկզբունքորեն «օրինական է», եթե այն հիմնված է դատարանի որոշման վրա: Կալանքի վերաբերյալ որոշման մեջ տեղ գտած թերություններն անգամ չեն կարող կալանքի ժամկետն անօրինական դարձնել՝ 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով (տե՛ս Բենհամն ընդդեմ Սիացյալ Թագավորության վճիռը, 1996թ. հունիսի 10, Վճիռների և որոշումների ժողովածուներ 1996- III, էջ 753754, կետեր 42-47; Վիսոկասն ընդդեմ Լիտվայի վճիռը, թիվ49107/99, 6.01.2000; Կամանտաուսկասն ընդդեմ Լիտվայի վճիռը, թիվ45012/98,29.2.2000):

69. Դատարանը նկատում է, որ դիմողը չի վիճարկում, որ 1996թ. հուլիսի 31-ի նիստի ընթացքում, մարզային դատարանը գործել է իր իրավասության սահմաններում՝ այնքանով, որքանով այն ուներ դիմողի կալանքի վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու իրավասություն՝ ըստ Քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ, 104-1 հոդվածների, 249-րդ հոդվածի 1-ին կետի և 250-րդ հոդվածի 1-ին կետի:

Ճիշտ է, մարզային դատարանն իր որոշման մեջ չի նշել, որ «կարգադրում է» նոր խափանման միջոց, և ոչ էլ նշել է, թե ինչ խափանման միջոց է «թողել անփոփոխ»՝ անկախ այն փաստից, որ դիմողի կալանքի ժամկետը լրացել էր 1996թ. հունիսի 4-ին: Այնուհանդերձ, ելնելով ենթատեքստից, մարզային դատարանի որոշումը, այն է՝ որ դիմողը պետք է կալանքի տակ մնա, պետք է որ պարզ լիներ 1996թ. հուլիսի 31-ին բոլոր ներկաներին, ինչպես նաև դիմողի պաշտպանին:

Դատարանը չի գտնում, որ մարզային դատարանը սխալ է թույլ տվել կամ ճիշտ չի կիրառել գործին առնչվող ներպետական օրենսդրությունը:

Հետևաբար, չի հաստատվել, որ 1996թ. հուլիսի 31-ի կալանքի կարգադրությունն անօրինական է եղել՝ ըստ ներպետական իրավունքի, կամ որ դրանից բխող կալանքն անօրինական է եղել 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով:

70. Ուստի 1996թ. հուլիսի 31-ից մինչև հոկտեմբերի 16-ը դիմողի կալանքի սռումով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

#### **4. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱՄՏՈՒՄ**

71. Դիմողը պնդում էր, որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում, որը նախատեսում է.

«Սույն հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ օրենքով դատական իշխանություն իրականացնելու համար լիազորված պաշտոնատար անձի մոտ, և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

##### **1. Դատավորի կամ այլ պետական պաշտոնյայի մոտ անհապաղ տանելը**

72. Դիմողը հայտարարել է, որ իրեն չեն տարել համապատասխան պետական պաշտոնյայի մոտ՝ 1996թ. փետրվարի 8-ին իր ձերբակալման պահից մինչև հոկտեմբերի 14-ը: Նա պնդում էր, որ իր կալանքի սկզբնական շրջանում՝ 1996թ. փետրվարի 8-ից մինչև հունիսի 21-ը, ինքը չի տարվել դատավորի կամ դատախազի մոտ, և որ 1996թ. հունիսի 21-ից հետո ևս, երբ փոփոխված Քրեական դատավարության օրենսգիրքն ուժի մեջ է մտել, նա անհապաղ չի տարվել դատավորի մոտ: Դիմողի կարծիքով, 5-րդ հոդվածի 1-ին կետի կապակցությամբ Լիտվայի վերապահումը անվավեր էր և դա չէր կարող անդրադարձնալ համապատասխան պաշտոնյայի մոտ տարվելու իր իրավունքի վրա:

73. Կառավարությունը վիճարկում էր, որ Լիտվայի վերապահումը՝ 5-րդ հոդվածի 3-րդ կետի կապակցությամբ, մինչև 1996թ. հունիսի 21-ը դրա ժամկետը լրանալը դիմողին զրկել է համապատասխան պաշտոնյայի մոտ անհապաղ տարվելու իրավունքից, և որ դրանից հետո նա կորցրել է 5-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված իրավունքը, քանի որ դրա կիրառումը սահմանափակվում էր ազատությունից սկզբնական զրկմամբ:

74. Հանձնաժողովը հիմնականում համաձայնել է Կառավարության հետ՝ գտնելով, որ 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում տեղի չի ունեցել:

75. Դատարանն առաջին հերթին նշում է, որ դիմողը 1996թ. փետրվարի 8-ին իր ձերբակալման պահից սկսած մինչև մարտի 14-ը պահվել է կանխիչ կալանքի տակ, որի նկատմամբ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1 (գ) կետը չի կիրառվել (վերը՝ կետեր 51-52): Հետևաբար, 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն դիմողին համապատասխան պաշտոնյայի մոտ անհապաղ տանելու երաշխիքը կիրառելի չէր նրա կանխիչ կալանքի նկատմամբ:

76. Դիմողի կալանքը՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1 (գ) կետի իմաստով, թույլատրվել է 1996թ. մարտի 14-ին: Հետևաբար, Դատարանը պետք է գանգատը քննության առնել այդ ամսաթվից սկսած:

77. Երկրորդ՝ Դատարանը նշում է, որ 1996թ. մարտի 14-ից մինչև հոկտեմբերի 14-ը դիմողը պահվել է կալանքի տակ՝ չբերվելով պաշտոնյայի մոտ՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով: Հետևաբար, այս ժամանակահատվածի նկատմամբ Լիտվայի վերապահման ազդեցությունը պահանջում է մանրամասն ուսումնասիրություն:

78. Դատարանը վկայակոչում է Կոնվենցիայի 57-րդ հոդվածը, որը նախատեսում է.

«1. Յուրաքանչյուր պետություն, սույն Կոնվենցիան ստորագրելիս կամ վավերագիրն ի պահ հանձնելիս, կարող է վերապահում անել Կոնվենցիայի ցանկացած դրույթի վերաբերյալ՝ այն առումով, որ այդ ժամանակ իր տարածքում գործող այս կամ այն օրենքը չի համապատասխանում այդ դրույթին: Սույն հոդվածն ընդհանուր բնույթի վերապահումներ չի թույլատրում:

2. Այս հոդվածի դրույթներին համապատասխան կատարված ցանկացած վերապահում պետք է բովանդակի համապատասխան օրենքի հակիրճ շարադրանքը»:

79. Դատարանը կրկնում է, որ «ընդհանուր բնույթի» վերապահումները արգելվելու նպատակն անորոշ կամ լայն ձևակերպումներով վերապահումներից խուսափելն է՝ դրանց կոնկրետ իմաստը և շրջանակը հասկանալի դարձնելու համար (տե՛ս Բելիլոսն ընդդեմ Շվեյցարիայի 1998թ. ապրիլի 29-ի վճիռը, Շարքեր Ա. թիվ 132, էջ 26, կետ 55):

80. Լիտվայի վերապահումն ուժի մեջ է եղել մինչև 1996թ. հունիսի 21-ը և Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի կապակցությամբ սահմանել է, որ դատախազը կարող է թույլատրել անձի կալանքը՝ համաձայն այն ժամանակ գործած Քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի (վերը՝ կետ 38):

81. Ղատարանը, ինչպես և Հանձնաժողովը նկատում է, որ վերապահման մեջ անփութության հետևանքով լեզվական սխալները չեն խանգարում հասկանալ դրա իմաստը և շրջանակը: Վերապահումը բավարար հստակությամբ վկայակոչում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը և համապատասխան ներպետական օրենքը, որը թույլատրում է դատախազի որոշումը: Ղատարանը եզրակացնում է, որ վերապահումը բավականին հստակ և ճշգրիտ է՝ Կոնվենցիայի 57-րդ հոդվածի պահանջները կատարելու համար:

82. Հետևաբար, դիմողի կալանավորումը կարգադրելու ժամանակ նրան համապատասխան պաշտոնյայի մոտ չտանելու փաստը չէր կարող համարվել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում՝ այնքան ժամանակ, քանի դեռ վերապահումն ուժի մեջ է եղել:

83. Մնում է քննության առնել այն հարցը, թե արդյո՞ք դիմողին իրավունք է վերապահվել անհապաղ տարվելու համապատասխան պաշտոնյայի մոտ՝ 1996թ. հունիսի 21-ին վերապահման ժամկետը լրանալուց հետո:

84. Ղատարանը գտնում է, որ 5-րդ հոդվածի 3-րդ կետում «անհապաղ տարվել» բառերը նշանակում են, որ համապատասխան պաշտոնյայի մոտ տարվելու իրավունքը վերաբերում է այն ժամանակին, երբ անձն առաջին անգամ գրկվել է ազատությունից՝ 5-րդ հոդվածի 1-ին (գ) կետին համապատասխան: ՌԻստի պայմանավորվող պետությունների՝ 5-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պարտավորությունը սահմանափակվում է ձերբակալված անձին սկզբնական փուլում համապատասխան պաշտոնյայի մոտ անհապաղ տանելով, չնայած Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը որոշ դեպքերում կարող է պահանջել, որ անձը հետագայում բերվի դատավորի մոտ՝ իր կալանքի օրինականությունն արդյունավետորեն վիճարկելու նպատակով, երբ այն երկար ժամանակ է տևում (տե՛ս, *mutatis mutandis*, Eur.Comm HR, Թրգասկան ընդդեմ Լեհաստանի, թիվ 25792/94, 1998թ. մայիսի 19-ի գեկույցը, կետեր 71-81):

85. Կոնվենցիայի 57-րդ հոդվածի հիման վրա կատարված վերապահումը կգրկվեր իր նպատակից, եթե պետությունից պահանջվեր տվյալ իրավունքը հետադարձ ուժով կիրառել վերապահման ժամանակահատվածի նկատմամբ:

86. Համաձայն սույն գործի փաստերի՝ 5-րդ հոդվածի 3-րդ կետի նկատմամբ կատարված վերապահման ժամկետը լրացել է 1996թ. հունիսի 21-ին: Այդ պահին դիմողը գտնվել էր կալանքի տակ՝ սկսած 1996թ. մարտի 14-ից, այսինքն՝ ավելի քան երեք ամիս: Հետևաբար, մինչև 1996թ. հունիսի 21-ը ցանկացած «անհապաղություն» արդեն գերազանցվել էր (տե՛ս, *mutatis mutandis*, Ասենովը և այլոք ընդդեմ Բուլղարիայի 1998 թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, Վճիռների և որոշումների ժողովածուներ, 1998-VIII, էջ 3299, կետ 147):

Հետևաբար, վերապահման ժամկետի լրանալու պահին Լիտվան այլևս պարտավորություն չուներ դիմողին անհապաղ ներկայացնելու համապատասխան պաշտոնյայի: Հետևաբար, վերապահման ժամկետի լրանալուց հետո նորոգված պարտավորության համար չկար 5-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան որևէ հնարավորություն:

87. Այսպիսով, այս առումով 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում տեղի չի ունեցել:

## 2. Կալանքի տևողությունը

88. Դիմողը նաև գանգատվել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում, քանի որ իր կալանքի ամբողջ տևողությունը՝ 16 ամիս և մեկ օր, եղել է չափազանց: Նա հայտարարել է, որ իշխանությունները չեն ձեռնարկել որևէ համապատասխան դատավարական քայլ՝ իր կանխիչ կալանքի ընթացքում: Նա նաև բողոքում էր, որ իշխանությունները չափազանց հապաղել են նախաքննության և դատաքննության ընթացքում, որն ընդգրկել է ոչ անհրաժեշտ դատավարական վիճաբանություններ և ընդհատումներ՝ լրացուցիչ քննության համար: Դիմողը եզրակացրել է, որ իր կալանքի տևողությունը չէր կարող արդարացվել ըստ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի:

89. Կառավարությունը պնդել է, որ այն ժամանակահատվածը, որը պետք է հաշվի առնել, սկսվում է 1996 թ. մարտի 14-ից և ավարտվում 1997թ. հունիսի 9-ին: Կառավարությունը նշում էր, որ դիմողը, այդպիսով, կալանավորվել էր, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի նպատակների համար, 14 ամիս և 26 օր: Կառավարությունը շեշտել է, որ գործը վերաբերում էր ծանր հանգամանքներում կատարված սպանությանը, և որ դիմողի հետ մեկտեղ մեղադրվում էին նաև երեք ոստիկան: Այն, որ գործը փաստական և իրավական առումով բարդ էր, հաստատվել է նոր ապացույցներ հավաքելու նպատակով դատաքննությունը երկու անգամ հետաձգելու անհրաժեշտությամբ: Կառավարության կարծիքով, դիմողի կալանքը թույլատրվել էր ոչ միայն գործում լուրջ ապացույցների և հանցագործության ծանրության հիման վրա, այլ նաև այն վտանգի հիման վրա, որ դիմողը կարող էր խոչընդոտել ճշմարտության բացահայտմանը: Կառավարությունը գտնում էր, որ դիմողի կալանքի ամբողջ ժամկետը չի գերազանցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետում նշված «ողջամիտ ժամկետը»:

90. Հանձնաժողովի կարծիքով, այս գանգատի կապակցությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում, քանի որ իշխանությունները չեն ներկայացրել դիմողին կալանքի տակ պահելու համար համապատասխան և բավարար պատճառներ:

91. Ղատարանն առաջին հերթին պետք է որոշի այն ժամանակահատվածը, որը պետք է քննության առնվի: Ղատարանը եզրակացրել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին (գ) կետը չի տարածվում 1996 թ. փետրվարի 8-ից մինչև մարտի 14-ը դիմողի կանխիչ կալանքի վրա, և որ 5-րդ հոդվածի 3-րդ կետը կիրառելի չէր վերը նշված ժամանակահատվածի նկատմամբ (կետեր 51, 52 և 75):

Ղատարանն այլևս չի կարող կալանքի տևողության ողջամիտ լինելը գնահատելու նպատակով հաշվի առնել դրա այն հատվածը, որն իր իրավասության շրջանակից դուրս է (տե՛ս Եվր. Հանձն. HR nos.15530-15531, Dec. 10.10.1991, DR 721, էջ 169):

92. Դիմողի կալանքը տևել է 1996 թ. մարտի 14-ից մինչև 1997թ. հունիսի 9-ը, այսինքն՝ 14 ամիս և 26 օր: Ղատարանը, հետևաբար, կգնահատի դիմողի կալանքի տևողության ողջամիտ լինելը՝ այդ ժամանակահատվածի հիման վրա: Ղատարանը հաշվի կառնի նաև այն, որ այն ժամանակ, երբ թույլատրվել էր դիմողի կալանքը, նա արդեն կալանքի տակ էր եղել մեկ ամսից ավելի՝ սկսած 1996 թ. փետրվարի 8-ից:

93. Ղատարանը կրկնում է, որ կալանքի տևողության ողջամիտ լինելը պետք է գնահատվի յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար՝ ըստ դրա առանձնահատկությունների: Շարունակվող կալանքը կարող է արդարացվել տվյալ դեպքում, եթե միայն առկա է հասարակական շահ, որը, չվնասելով անմեղության կանխավարկածը, գերակշռում է ազատության իրավունքին:

Նման հրամայական շահի առկայությունը հավաստող կամ հերքող հանգամանքների քննությունը և ազատ արձակելու վերաբերյալ դիմումների կապակցությամբ ընդունվող որոշումներում դրանց ամրագրումն առաջին հերթին ներպետական դատական մարմինների խնդիրն է: Հիմնականում այս որոշումներում տրված հիմնավորումների, ինչպես նաև դիմողի կողմից իր դիմումում հաստատված փաստերի հիման վրա է, որ Ղատարանը կոչված է որոշելու, թե արդյո՞ք տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում, թե՛ ոչ:

Հիմնավոր կասկածը, որ ձերբակալված անձը կատարել է հանցագործություն, sine qua non պայման է շարունակվող կալանքի օրինականության համար, բայց որոշակի ժամկետից հետո այն դառնում է անբավարար: Ղատարանը պետք է այդ դեպքում հաստատի, թե արդյոք դատական մարմինների ներկայացրած մյուս հիմնավորումները «համապատասխան» և «բավարար» էին՝ ազատությունից զրկելն արդարացնելու համար (տե՛ս Պունցելտն ընդդեմ Չեխիայի Հանրապետության վճիռը, թիվ 31315/96, 25.4.2000, կետ 73):

94. Ըստ սույն դատական գործի փաստերի, դատախազական մարմինների կողմից ներկայացված՝ դիմողի կալանքի միակ պատճառը հանցագործության ծանրությունն էր (վերը նշված կետ 12) և նրա դեմ դատական գործում առկա՝ ապացույցների ուժը (վերը նշված կետ 15): Մարզային դատարանը որևէ պատճառ չի ներկայացրել շարունակվող կալանքն արդարացնելու համար (վերը նշված կետեր 19 և 21):

Դատարանը գտնում է, որ սպանություն կատարելու գործում դիմողի դեմ կասկածը, կարող էր սկզբնապես արդարացնել նրա կալանքը, բայց դա չէր կարող «պատշաճ և բավարար» հիմք հանդիսանալ գրեթե 15 ամիս նրան կալանքի տակ պահելու համար, հատկապես, երբ այդ կասկած անհիմն է համարվել գործը քննած դատարանի կողմից, որն արդարացրել է դիմողին: Հետևաբար, դիմողի կալանքի տևողությունը չափից ավելի է եղել:

95. Այսպիսով, այս առումով տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

#### **5. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ԿԵՏԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱՆՏՈՒՄԸ**

96. Դիմողը նաև պնդում է, որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում: Այդ դրույթը նախատեսում է.

«Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով գրկված է ազատությունից, իրավունք ունի գործ հարուցելու, որով դատարանի կողմից անհապաղ կորոշվի իր կալանքի օրինականության հարցը և կկարգադրվի նրա ազատ արձակումը, եթե կալանավորումն անօրինական է»:

97. Դիմողը բողոքել է, որ ինքն անկարող է եղել վիճարկելու իր կալանքի օրինականությունը՝ ելնելով իր կալանքը թույլատրող դատական որոշումները բողոքարկելու՝ օրենքով սահմանված արգելքից:

98. Կառավարությունը պնդել է, որ ներպետական օրենսդրությունը դիմողին լայն հնարավորություն է տվել իր կալանքի օրինականությունը վիճարկելու համար, որը վերանայվել է Մարզային դատարանի կողմից՝ 1996 հոկտեմբերի 14-16-ի և հուլիսի 31-ի լուծումների ժամանակ:

99. Հանձնաժողովն այն կարծիքն է արտահայտել, որ ի խախտումն 5-րդ հոդվածի 4-րդ կետի՝ դիմողը գրկված է եղել ներպետական օրենսդրության նյութական և դատավարական դրույթներին իր կալանքի համապատասխանությունը վիճարկելու հնարավորությունից:

100. Դատարանը հիշեցնում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը ձերբակալված կամ կալանավորված անձանց իրավունք է տալիս վիճարկելու դատավարական և նյութական հիմքերը, որոնք կարևոր են ազատությունից իրենց գրկելու «օրինականության» համար՝ ըստ Կոնվենցիայի պայմանների: Սա նշանակում է, որ իրավասու դատարանը պետք է քննության առնի ոչ միայն ձերբակալման և կալանքի համապատասխանությունը ներպետական օրենսդրության դատավարական պահանջներին, այլ նաև ձերբակալման համար հիմք հանդիսացած կասկածանքի հիմնավորվածությունը և ձերբակալման և կալանքի նպատակի օրինականությունը (տե՛ս Բռոզանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության 1988 նոյեմբերի 29-ի վճիռը, Շարքեր Ա թիվ 145-Բ, էջ 34-35, կետ 65): 5-րդ հոդվածի 4-րդ կետը չի երաշխավորում որևէ իրավունք, որպես այդպիսին, բողոքարկելու կալանք սահմանելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշումները, քանի որ այդ դրույթը «գործ հարուցելու» մասին է և ոչ թե բողոքարկման: Սկզբունքորեն, մի մարմնի միջամտությունը բավարարում է 5-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջը, այն պայմանով, որ ընթացակարգն ունենա դատական բնույթ և շահագրգիռ անձին տա ազատությունից գրկելուն համարժեք երաշխիքներ (տե՛ս, *mutatis mutandis*, Դե Վիլդեն, Օոմսը և Վերսիփն ընդդեմ Բելգիայի 1971թ. հուլիսի 18-ի վճռը, Շարքեր Ա թիվ 12, էջ 40-41, կետ 76):

101. Դատարանը նշում է, որ մարզային դատարանը կալանքը թույլատրող իր որոշումներում չի վկայակոչել դիմողի զանգատները՝ կապված իր կալանքի անօրինականության հետ (վերը նշված կետեր 19 և 21): Ավելին, Վերաքննիչ դատարանը և Գերագույն դատարանի քրեական պալատի նախագահն ընդունել են,

որ դիմողի կալանքի օրինականությունը բաց է եղել քննարկման համար, բայց դիմողի բողոքները քննության չեն առնվել այն ժամանակ գործող օրենսդրական արգելքի պատճառով (վերը նշված կետեր 25 և 27):

Դիմողի կողմից բանտի ադմինիստրացիայի դեմ քաղաքացիական գործի հարուցումը չէր առնչվում 5-րդ հոդվածի 4-րդ կետին, քանի որ քաղաքացիական դատարաններն իրավասու չէին թույլատրելու դիմողի ազատ արձակումը, ինչպես կարող էր պահանջվել այդ դրույթով: Ամեն դեպքում, քննության առնելով դիմողի քաղաքացիական հայցը՝ դատարանները սահմանափակվել են այն հարցի քննությամբ, թե արդյոք առկա՞ են եղել նրա կալանքը թույլատրող պաշտոնական կարգադրություններ՝ առանց դրանց հիման վրա քննության առնելու կալանքի օրինականությունը (վերը՝ կետ 29):

Որ նշանակում է, որ դիմողը զրկված է եղել իր կալանքի օրինականության համար էական նշանակություն ունեցող դատավարական և նյութական հիմքերը վիճարկելու իրավունքից:

102. Ուստի տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում:

## **6. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ**

103. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը նախատեսում է.

«Եթե Ղատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Ղատարանը, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի բավարարում է տրամադրում»:

### **Ա. Նյութական վնաս**

104. Դիմողը պահանջել է 256,878 լիտվական լիտա (LTL)՝ որպես փոխհատուցում կալանքի արդյունքում իր վաստակի և հնարավորությունների կորստի դիմաց: Նա նաև հայտարարել է, որ մեկուսարանում գտնվելու ժամանակ ծախսվել է 8,600 LTL գումար՝ լրացուցիչ սննդի և 1,500 LTL՝ լրացուցիչ դեղերի և վիտամինների համար:

105. Կառավարությունն այս պահանջները արդարացված չի համարել:

106. Ղատարանը կարծում է, որ գոյություն չունի պատճառական կապ հայտնաբերված խախտումների և ենթադրյալ նյութական վնասի միջև (տե՛ս, *mutatis mutandis*, Բարանովսկին ընդդեմ Լեհաստանի վճիռը, կետ 81, և Պունցելտն ընդդեմ Չեխիայի Հանրապետության վճիռը, վերը նշված կետ 103): Հետևաբար, այս կապակցությամբ դիմողին փոխհատուցում տրամադրելու որևէ պատճառ չկա:

### **Բ. Ոչ նյութական վնաս**

107. Դիմողը նաև պահանջել է 191,600 LTL՝ բանտում իրեն պատճառված բարոյական և ֆիզիկական տառապանքների դիմաց:

108. Կառավարությունը համարել է, որ այդ գումարը չափից ավելի է:

109. Ղատարանը գտնում է, որ դիմողը, իհարկե, կրել է ոչ նյութական վնաս, որը բավարար չափով չի հատուցվում խախտման փաստը ճանաչելով: Ղատարանը գնահատելով արդարացի հիմքերով՝ այս կապակցությամբ դիմողին տրամադրում է 60,000 LTL չափով փոխհատուցում:

### **Գ. Ծախսեր**

110. Դիմողը նաև պահանջել է 85,800 LTL՝ իր գործի ներպետական վարույթի և Կոնվենցիայի մարմիններում իր գործի քննության ընթացքում իրավական ծախսերի դիմաց, և 9,052 LTL՝ իր գործի ներպետական վարույթի ժամանակ իր ճանապարհածախսի դիմաց:

111. Կառավարությունը գտել է, որ վերոհիշյալ պահանջները չափից ավել են:

112. Դատարանը հիշեցնում է, որ ծախսերը փոխհատուցման մեջ ընդգրկելու համար՝ ըստ Կոնվենցիայի 41-րդ հոդվածի, պետք է հաստատվի, որ դրանք անհրաժեշտաբար և իրականում եղել են և ողջամիտ են իրենց չափով ( տե՛ս, inter alia, Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի (GC), թիվ 31195/96, ECHR1999-II, 25.3.1999, կետ 79):

113. Դատարանը գտնում է, որ ներպետական վարույթի ընթացքում դիմողի ճանապարհածախսերը չեն կատարվել Կոնվենցիայի հետ կապված նրա պահանջների առնչությամբ: Դատարանն այդ պատճառով մերժում է փոխհատուցել որևէ գումար այդ ծախսերի համար:

114. Փաստաբանների հոնորարների կապակցությամբ Դատարանը նշում է, որ դրանց զգալի մասը վերաբերում էր նրա դեմ հարուցված քրեական մեղադրանքներից պաշտպանելուն և դրանց ենթադրյալ անարդարացիության վերաբերյալ գանգատներին, որոնք անընդունելի է հայտարարվել Հանձնաժողովի կողմից: Այդ հոնորարները չեն հանդիսանում անհրաժեշտ ծախսեր Կոնվենցիայի այն խախտումների դեմ պաշտպանություն փնտրելու կապակցությամբ, որոնք Դատարանը փաստել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի առնչությամբ: Դատարանը գնահատելով արդարացի հիմքով՝ դիմողին տրամադրում է 40,000 LTL չափով փոխհատուցում՝ իրավաբանական ծախսերի համար՝ զանձվելիք ավելացված արժեքի հարկի հետ մեկտեղ:

## **Դ. Տոկոսներ՝ փոխհատուցումը չվճարելու դեպքում**

115. Ըստ Դատարանի տրամադրության տակ եղած տեղեկությունների՝ սույն վճռի ընդունման օրվա դրությամբ Լիտվայում օրենքով սահմանված կիրառելի տոկոսը տարեկան 9.5 % է:

### **ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ՂԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ**

1. Վճռում է, որ դիմողի այրին կարող է շարունակել գործը նրա փոխարեն,
2. Մերժում է Կառավարության նախնական առարկությունը,
3. Վճռում է, որ դիմողի կանխիչ կալանքի կապակցությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում,
4. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 1996թ. հունիսի 4-ից մինչև հուլիսի 31-ը դիմողի կալանքի առնչությամբ,
5. Վճռում է, որ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 1996թ. հուլիսի 31-ից մինչև հոկտեմբերի 16-ը դիմողի կալանքի առնչությամբ,
6. Վճռում է, որ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում՝ դիմողին դատավորի կամ այլ պաշտոնյայի մոտ անհապաղ չտանելու առնչությամբ,
7. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում՝ դիմողի կալանքի տևողության առնչությամբ,
8. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում,
9. Վճռում է, որ
  - ա) պատասխանող պետությունը պետք է եռամսյա ժամկետում դիմողին վճարի հետևյալ գումարները.
    - (i) 60,000 (վաթսուն հազար) լիտվական լիտա՝ ոչ նյութական վնասի կապակցությամբ,
    - (ii) 40,000 (քառասուն հազար) լիտվական լիտա՝ ծախսերի կապակցությամբ՝ զանձվելիք ավելացված արժեքի հարկի հետ մեկտեղ:

բ) տարեկան 9.5 % սովորական տոկոս պետք է վճարվի վերոհիշյալ եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչ վճարումը,  
10. Մերժում է բարոյական վնասի մասին դիմողի պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և ծանուցված է գրավոր կարգով 2000թ. հուլիսի 31-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի:

Ս.Դոլլ  
Քարտուղար

Ժ.-Պ. Կոստա  
Նախագահ

### ԴԱՏԱՎՈՐ ՔՈՆՖՈՐՏԻ ՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ (Թարգմանություն)

Ես համամիտ եմ դատավոր Բոնելոյի այն կարծիքին, որ 5-րդ հոդվածի 1(ե) կետում առկա բացառությունը, ըստ որի ազատությունից զրկելու թույլտվությունը վերաբերում է միայն ... հարբեցողներին, և չի կարող, հետևաբար, վերաբերել այն անձանց, ովքեր, դիմողի նման, երբեմն գտնվում են անսթափ վիճակում: *In claris non fit interpretatio!*

Ինձ համար դժվար է հասկանալ, թե ինչպես կարող է մեծամասնությունը ներկա գործում հանգել այն եզրակացության, որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի խախտում՝ այն եզրահանգումից հետո, որ 5-րդ հոդվածի 1(ե) կետը կիրառելի է այն անձանց նկատմամբ, ովքեր պատահաբար հարբած են: Այլ կերպ ասած, ինձ համար դժվար է հասկանալ, թե ինչպես, ընդունելով, որ տվյալ դրույթը կիրառելի է, կարելի է համարել, որ լեհական պետության կողմից՝ դիմողին վեցուկես ժամ սթափարանում պահելը կամայական է և ոչ համարժեք. ըստ նրան քննող բժշկի կանխատեսման՝ նրա անսթափ վիճակը պետք է անցներ այս ժամկետում:

Վերը նշված դիտողությունը միտված չէ քննադատելու մեծամասնությանը, և ամեն դեպքում դա տեղին հիմք չէ առանձին կարծիք ունենալու համար: Սա պարզապես ընդհանուր դիտողություն է, որը, կարծում եմ, դիպուկ է տվյալ գործի վերաբերյալ, ինչպես նաև նմանատիպ այլ գործերում, և որը վերաբերում է Դատարանի օժանդակ և վերազգային բնույթին:

Իմ համեստ կարծիքով, երբ Կոնվենցիան հնարավորություն է տալիս հստակ և ճշգրիտ նշել, թե պետությունն ինչպես պետք է վարվի, Դատարանի որոշումը չպետք է կախված լինի գործի աննշան մանրամասների գնահատումից: Այլապես, առկա է ներպետական դատավորների կողմից հարցի կամայական կարգավորումը Դատարանի կամայական կարգավորմամբ փոխարինելու վտանգ՝ առանց շահագրգիռ պետությանը ցույց տալու, թե ինչպես ապագայում խուսափել տվյալ իրավախախտումը կրկնելուց:

### ԴԱՏԱՎՈՐ ԲՈՆԵԼՈՅԻ ՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Ես քվեարկել եմ մեծամասնության հետ առ այն, որ առկա է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, բայց չեմ կարող հաստատել վճռի 60-64-րդ կետերում արված եզրակացությունները: Ըստ Դատարանի՝ 5-րդ հոդվածի 1-ին կետի (ե) ենթակետում նշված՝ անձի ազատության հիմնարար իրավունքից օգտվելու բացառությունը կիրառելի է ներկա գործի առնչությամբ:

Այդ բացառությունը վերաբերում է «հարբեցողների ... օրինական մեկուսացմանը»: Հարց է ծագում արդյո՞ք Կոնվենցիան, թույլատրելով հարբեցողների մեկուսացումը, նաև թույլ է տալիս ազատությունից զրկել այն անձանց, ովքեր հարբեցողներ չեն, բայց գտնվում են հարբածության անցողիկ վիճակում:

Փաստորեն, պետք է շեշտվի այն, որ արձանագրության մեջ բացարձակապես ոչ մի վկայություն չկա այն մասին, որ դիմողը հարբեցող է: Հիմնականում, դեպքի ժամանակ նա գտնվել է չափավոր հարբած վիճակում:

5-րդ հոդվածի 1(ե) կետը թույլ է տալիս «վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով՝ վարակիչ հիվանդների, հոգեկան խանգարումներ ունեցող անձանց, հարբեցողների, թմրամոլների կամ թափառաշրջիկների օրինական մեկուսացումը»: Այս դասակարգումներն ունեն մեկ ընդհանուր գործոն. դրանք վերաբերում են *շարունակական կամ սովորույթ դարձած* սոցիալապես վտանգավոր պայմաններին կամ վերաբերմունքին, և ոչ միանգամայն կամ ժամանակավոր դրսևորմանը: Թափառաշրջիկ է այն անձը, ով թափառական կյանք է վարում, և ոչ թե այն անձը, ով ժամանակավորապես չունի կայուն բնակատեղի: Թմրամոլությունը նույնպես վերաբերում է կրկնվող իրավիճակի և ոչ թե արգելված նյութերի գործածման առանձին դեպքերի: Հոգեկան խանգարումներ ունեցող անձինք նույնպես ներկայացնում են ավելի շուտ հոգեկան պրոցեսների երկարաժամկետ վատառողջություն, քան խոտորված վարքագծի առանձին նոպա:

Այժմ Կոնվենցիան «հարբեցողներին» դասում է շարունակական իրավիճակների խմբին: Մեկնաբանության *ejusdem generis* հիմնական գործիքի շնորհիվ ոչ նորմալ և անընդունելի է միևնույն նախադասության մեջ հինգ կատեգորիաներից չորսը մեկնաբանել շարունակական իրավիճակներին վերաբերող, իսկ մեկը (հարբեցողներ)՝ որպես անցողիկ անսթափ վիճակի առանձին դեպքի վերաբերող: Այլապես, «հարբեցողներ» հասկացությունը կխախտի Կոնվենցիան նախագծողների ջանադրաբար կառուցած սիմետրիան: Եթե «հարբեցող» հասկացությունը ներառեր հարբածության միանգամայն առանձին դեպք, այն կլիներ համանման հասկացությունների շարքից դուրս առանձին մի դեպք:

Մեծամասնությունը համաձայն է (կետ 49), որ «Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը ներառում է ազատությունից զրկելու թույլատրելի հիմքերի սպառիչ ցանկ: Հետևաբար, ազատությունից զրկելը չի կարող լինել օրինական, քանի դեռ այն հիմնավորված չէ 5-րդ հոդվածի (ա)-(գ) ենթակետերից որևէ մեկով»: Այլ կերպ ասած, Ղատարանը չի կարող մեկնաբանման ընթացքն ընդլայնելով՝ ազատությունից զրկելու թույլատրելի հիմքերի ցանկին հավելումներ կատարել, որը սպառիչ կերպով թվարկված է 5-րդ հոդվածի 1-ին կետում: «5-րդ հոդվածի 1-ին կետի տեքստը մանրամասնորեն շարադրում է բացառությունների սպառիչ ցանկը<sup>1</sup>»: Եվ «5-րդ հոդվածի 1-ին կետով թույլատրելի բացառությունները պահանջում են նեղ մեկնաբանություն<sup>2</sup>»:

Մեծամասնությունը նաև համաձայն է (59-60 կետեր), որ Կոնվենցիայի պատշաճ կառուցվածքի պարտադիր պայման է «նրա հասկացությունների *սովորական իմաստի* հստակեցումը և այն, որ հարբեցող բառը «իր սովորական օգտագործմամբ վերաբերում է այն մարդկանց, ովքեր ոգելից խմիչքների հանդեպ *հակում ունեն*» (շեշտադրումն ավելացված է): Այլ կերպ ասած, «հարբեցողներ» բառի սովորական իմաստը (որը պետք է լինի վճռորոշ) բացառում է այն անձանց, ովքեր հակում չունեն ոգելից խմիչքների հանդեպ, այլ երբեմն գտնվում են անսթափ վիճակում:

Այն, որ «հարբեցողների» և «հարբած վիճակում գտնվող անձանց» միջև դրված տարբերությունն առաջնային նշանակություն ունի, հաստատված է պատասխանող պետության օրենսդրությամբ: Սա փաստորեն նախատեսում է միջոցների երկու տարբեր շարք՝ մեկը ոգելից խմիչքի հանդեպ հակում ունեցող անձանց համար և մյուսը՝ այն անձանց համար, ովքեր պարզապես գտնվում են հարբած վիճակում (կետ 24):

<sup>1</sup> Էնգելը եւ այլք ընդդեմ Նիդեռլանդների, 1976թ. 8 հունիսի, Ա 22, էջ 24, Վինթերուերփն ընդդեմ Նիդեռլանդների, 1979թ. 24 հոկտեմբերի, Ա 33, էջ 16

<sup>2</sup> Գուզարդին ընդդեմ Իտալիայի, 1980թ. 6 նոյեմբերի, Ա 39, էջ 36

Մեծամասնությունը եկել է հետևյալ համաձայնության. առաջինը, «հարբեցող» հասկացությունը պետք է հասկանալ իր սովորական իմաստով (անձինք, ովքեր տառապում են խմիչքի նկատմամբ ունեցած կլինիկական հակումով). երկրորդ, անթույլատրելի է 5-րդ հոդվածում ընդգրկված սպառիչ ցանկին հավելումներ կատարել. և, վերջապես, «հարբեցող» հասկացությանը պետք է տալ միայն սահմանափակ մեկնաբանություն: Այդ դեպքում զարմանալիորեն, իմ կարծիքով, սկսում է էապես խեղաթյուրվել «հարբեցողի» սովորական իմաստը՝ ընդլայնելով և ներառելով այն անձանց, ովքեր բոլորովին էլ չեն կարող դասվել «հարբեցողների» կարգին և պատկանում են մարդկանց այն խմբին, ովքեր ժամանակավորապես խմիչքի ազդեցության տակ են: Այս երկու խմբերը անհարմար ձևով խճճել են մի զամբյուղի մեջ:

Այս մոտեցումը, իմ կարծիքով, և՛ նորմալ չէ, և՛ շատ վտանգավոր է: Ղատարանն առաջին անգամ չափազանց հեռացավ առողջ սովորույթից, որով մինչ այժմ դեկավարվել է կրոնական խանդավառությամբ՝ ոչինչ չհավելել ազատությունից զրկելը հիմնավորող բացառությունների ցանկին: Ներկա վճիռը մի մեծ ցատկ է հետ, որ ես ինքս ինձ չեմ կարողանում թույլ տալ: Եվ այս նոր մոտեցումը մտահոգող է, քանի որ, երբ սկսվում է իշխանությունների կողմից անձին ազատությունից զրկելն արդարացնող պատճառների ցանկն ընդլայնելու գործընթացը, հայտնի չէ, թե որտեղ այն կանգ կառնի: Նախկինում կարելի էր ազատությունից զրկել միայն հարբեցողներին: Այժմ դրանք հարբեցողներն են և հարբած անձինք: Իսկ վաղը՞:

Սա հեռու է «Կոնվենցիան որպես գործուն փաստաթուղթ» մեկնաբանելուց: Ես համամիտ եմ Կոնվենցիայի մտահորիզոնն ընդլայնելուն, քանի դեռ այս ծավալումը նպատակ ունի ամրապնդել Կոնվենցիայի նպատակները, այսինքն՝ նպաստել և ամրապնդել մարդու իրավունքների իրավունքի իշխանությունը: Ներկա դեպքում արդյունքը բացահայտորեն հակառակն էր: Ինձ համար սա մարդու իրավունքներից օգտվելու շրջանակները *սահմանափակող* դատական գործունեություն է: Մեծամասնությունն այժմ կառավարություններին օժտում է հավելյալ իշխանությամբ՝ զրկելու անձանց իրենց ազատությունից: Այն էապես սահմանափակել է անհատի պաշտպանությունը: Սա դժվարությամբ է, իմ կարծիքով, շաղկապվում «Կոնվենցիան որպես գործուն փաստաթուղթ մեկնաբանելու հետ»:

Ինձ հայտնի է, որ նույնիսկ այն անձինք, ովքեր հարբեցողներ չեն, այլ ժամանակավորապես գտնվում են անսթափ վիճակում, վտանգ են ներկայացնում իրենց և այլոց համար: Ես հավանություն եմ տալիս այն միջոցառումներին, որոնք նպատակ ունեն սահմանափակել վնաս պատճառելու նրանց հնարավորությունը: Նրանց վտանգավոր ներուժը վերահսկող նորմատիվ ակտերը կստանան իմ աջակցությունը: Դրանք կարող են ընդգրկել նրանց ուղեկցելն իրենց բնակության վայրը կամ հիվանդանոց, փոխադրամիջոցներից օգտվելն արգելելը և դատական կարգով հետապնդումը, եթե հասարակական կարգի խախտում է տեղի ունեցել: Ինչպես ես, այնպես էլ, կարծում եմ, Կոնվենցիան բացառում ենք այն նորմերը, որոնք թույլ են տալիս ոչ հարբեցող անձանց ձերբակալել և կալանավորել, երբ նրանք չեն կատարել որևէ քրեորեն պատժելի արարք:

## ՂԱՏԱՐԱՆԻ ԲԱԿԱՅԻ ՀՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Ես լիովին համամիտ եմ Ղատարանի այն կարծիքին, որ դիմողը զրկվել է ազատությունից, և որ նրան սթափարանում պահելը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1 (ե) կետի շրջանակներում է: Մյուս կողմից, ես չեմ կարող համաձայնել Ղատարանի հետ այնքանով, որքանով դա վերաբերում է մեկուսացման օրինականությանը: Հետևաբար, ես այն կարծիքին եմ, որ տվյալ գործում Կոնվենցիայի խախտում տեղի չի ունեցել:

Ես կարծում եմ, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1(ե) կետի ճշգրիտ մեկնաբանությունը պահանջում է ոչ միայն հասնել «հարբեցողներ» հասկացության գործնական և իրավաբանական պատկերացմանը, այլ նաև նրան, որ այս հասկացությունը և դրա կիրառումը ներդաշնակեն Դատարանի նախադեպային իրավունքին:

5-րդ հոդվածի 1(ե) կետի նպատակների համար «հարբեցողներ» հասկացության նեղ մեկնաբանությունը կարող է տանել դեպի ոչ գործնական պատկերացում: Եթե ոստիկանությունը կարող է ձերբակալել միայն այն անձանց, ովքեր բժշկական տեսանկյունից դասվում են ոգելից խմիչքների հանդեպ հակում ունեցողների թվին, այդ դրույթը կորցնում է իր գործնական նշանակությունը, որովհետև նման տեղեկատվությունը, որպես կանոն, հայտնի չէ ոստիկանությանը՝ անհրաժեշտ գործողությունը կատարելիս: Ոստիկանությունն անզոր կլինի այն անձանց դեմ, ովքեր ոգելից խմիչքների հանդեպ հակում չունեն, բայց ժամանակավորապես անսթափ վիճակում են, երբ ձերբակալումն անհրաժեշտ լինի կանխելու համար հասարակական կարգի լուրջ խախտումները, կամ երբ հարբած անձը վտանգի է ենթարկում իր կյանքն ու անձնական անվտանգությունը:

Ես կարծում եմ, որ կամայական ձերբակալումից անհրաժեշտ պաշտպանությունը ոչ թե «հարբեցողներ» հասկացության ավելի լայն կամ նեղ սահմանման, այլ ուրիշ տարրերի մեջ է: Ոգելից խմիչքի հանդեպ ընդհանրապես հակում ունեցող անձը պարտադիր չէ, որ վտանգավոր լինի տվյալ «սթափ» վիճակում, մյուս կողմից՝ ժամանակավորապես անսթափ վիճակում գտնվող անձը կարող է լուրջ վտանգ հանդիսանալ իր և այլոց համար: Վտանգը հիմնականում նույնն է այս իրավիճակներում, և ես այն կարծիքին եմ, որ 5-րդ հոդվածի 1(ե) կետի համաձայն մեկուսացումը երկու դեպքում էլ կարող է հիմնավորված լինել:

Իմ կարծիքով, վճռորոշն այն է, որ պետք է *կանխել այն անձի կամայական մեկուսացումը*, ով պատկանում է կամ լայն իմաստով, կամ նեղ իմաստով՝ «հարբեցողներ» հասկացության դասին: Այդ իսկ պատճառով օրվա վերջում խստորեն պահանջվում է, որ այդ հիմքերով ինչ-որ մեկին մեկուսացնելու վերաբերյալ ոստիկանության որոշումը հիմնվի բժշկական փորձագիտական օբյեկտիվ կարծիքի վրա, ինչպես, *inter alia*, պահանջվում էր Վինթերուերփի վճռում (Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Վինթերուերփն ընդդեմ Նիդեռլանդների վճիռը, 1979թ. 24 հոկտեմբերի, Շարքեր Ա, թիվ 33): «Այն, ինչ պետք է հաստատվի ներպետական իշխանությունների կողմից, ... օբյեկտիվ բժշկական փորձաքննությունն է» (տե՛ս Վինթերուերփի վճիռը, կետ 39):

Մեջբերված Վինթերուերփի վճիռը հաստատում է, որ «որոշելիս, թե արդյոք տվյալ անձը պե՞տք է մեկուսացվի որպես *հոգեկան խանգարում ունեցող անձ*, թե՛ ոչ, ներպետական իշխանություններին անհրաժեշտ է ունենալ գործողությունների որոշակի ազատություն, քանի որ ներպետական իշխանություններն առաջինն են, որ պետք է գնահատեն կոնկրետ գործով իրենց ներկայացված ապացույցները...» (Վինթերուերփ, կետ 40): Ես կարծում եմ, որ այս սկզբունքն ակնհայտորեն կիրառելի է տվյալ գործի վերաբերյալ:

Ներկա գործում ազատությունից զրկելն ունի բավարար հիմքեր: Անվիճելի է, որ դիմողը բժշկի կողմից հետազոտվել է փոստատան դեպքից քիչ անց: Փաստ է նաև այն, որ բժիշկը հարբածությունն ապացուցող որոշակի ֆիզիկական նշանների հիման վրա եկել է այն եզրակացության, որ դիմողը գտնվում է «չափավոր հարբած» վիճակում, և, ըստ ներպետական դատարանների, նա հասարակական վայրում կարգ է խանգարել:

Հաշվի առնելով ներպետական իշխանությունների կողմից գնահատման սահմանները՝ ես չեմ կարող գտնել որևէ համոզիչ փաստարկ ասելու, որ դիմողին Կրակովի սթափարանում 6 ժամ 30 րոպե պահելը կամայական էր և, հետևաբար, անօրինական՝ ըստ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1(ե) կետի:

ՀՈՐՎԱՏՆ ԸՆԴԴԵՄ ԽՈՐՎԱԹԻԱՅԻ ԳՈՐԾԸ  
CASE OF HORVAT v. CROATIA

(Գանգատ թիվ 51585 / 99)

Ղատարանի 2001թ. հունիսի 26-ի  
վճիռը

Ստրասբուրգ

**Հորվատն ընդդեմ Խորվաթիայի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք), նիստ գումարելով որպես Պալատ, կազմով՝

Պրն Գ. Ռեսի՝ *Նախագահ*,  
Պրն Ա. Պաստոր Ռիդրիխոյի,  
Պրն Ի. Քաբրալ Բարետոյի,  
Պրն Վ. Բուտկեվիչի,  
Տկն Ն. Վաջիկի,  
Պրն Զ. Զեդիգանի,

Պրն Ս. Պելլոնպաայի՝ դատավորներ,  
և պրն Վ. Բերգերի, Բաժանմունքի քարտուղար,

2000թ. նոյեմբերի 16-ի և 2001թ. հուլիսի 10-ի դռնփակ խորհրդակցություններից  
հետո,  
2001թ. հուլիսի 10-ին ընդունել է հետևյալ վճիռը:

## **ՎԱՐՈՒՅԹԸ**

1. Գործը հարուցվել է Խորվաթիայի քաղաքացի Անկիկա Հորվատի կողմից («դիմող») 1999թ. ապրիլի 20-ին, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն, Խորվաթիայի Հանրապետության դեմ Դատարան ներկայացված գանգատի (թիվ 51585/99) հիման վրա:

2. Դիմողին, որին տրամադրվել էր իրավաբանական օգնություն, Դատարանում ներկայացրել է Ջագրեբ քաղաքում պրակտիկ գործունեությամբ զբաղվող փաստաբան պրն Զվոնկո Նոգոլիկան: Խորվաթիայի Կառավարությունը («Կառավարություն») ներկայացնում էր Կառավարության ներկայացուցիչ Լիդիա Լուկինա Կարաչկովան:

3. Դիմողը պնդել է, որ, հակառակ 6-րդ հոդվածի 1-ին կետի, իր հարուցած քաղաքացիական գործը քննության չի առնվել ողջամիտ ժամկետում, և որ, ի խախտումն Կոնվենցիայի 13-րդ հոդվածի, այդ քաղաքացիական գործի վարույթի տևողության կապակցությամբ ինքը չի ունեցել արդյունավետ պաշտպանության միջոց:

4. Գանգատը հանձնվել է Դատարանի Չորրորդ բաժանմունք (Դատարանի կանոնակարգի 52-րդ կանոնի 1-ին կետ): Այդ Բաժանմունքի շրջանակներում, գործը քննության առնելու նպատակով (Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 1-ին կետ), Դատարանի կանոնակարգի 26-րդ կանոնի 1-ին կետով նախատեսված կարգով կազմավորվել է Պալատ:

5. 2000թ. նոյեմբերի 16-ի որոշմամբ Պալատը գանգատն ընդունելի է հայտարարել և կողմերի հետ խորհրդակցելուց հետո որոշել է, որ գործի ըստ էության քննության համար նիստ գումարելու անհրաժեշտություն չկա ( 59-րդ կանոնի 2-րդ կետ in fine):

6. Դիմողը և Կառավարությունը ներկայացրել են գործի հանգամանքների վերաբերյալ իրենց գրավոր բացատրությունները և գրավոր պատասխանել են միմյանց բացատրություններին:

## **ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

### **1. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

7. 1992թ. հոկտեմբերի 19-ին դիմողը Ջագրեբ քաղաքում գործող «M.J.B.» ընկերությանը եռամսյա ժամկետով պարտք է տվել 10,000 գերմանական մարկ՝ 27% տոկոսադրույքով: 1992 թ. նոյեմբերի 23-ին նա Ջագրեբ քաղաքում գործող «Z.I.P.» ընկերությանը մեկամսյա ժամկետով պարտք է տվել 20,390 գերմանական մարկ՝ 20% տոկոսադրույքով:

8. Քանի որ նշված ընկերությունները չեն վերադարձրել իրենց պարտքը, դիմողը հայց է հարուցել ընդդեմ «M.J.B.» և «Z.I.P.» ընկերությունների՝ Ջագրեբ քաղաքի մունիցիպալ դատարանում:

#### **1. «Z.I.P.» ընկերության և Մ.-ի դեմ հարուցված գործի վարույթը**

9. «Z.I.P.» ընկերության և վերջինիս ենթադրյալ սեփականատեր Մ.-ի դեմ հարուցված գործի վարույթն սկսվել է 1995թ. մարտի 29-ին, երբ դիմողը 39 այլ հայցվորների հետ մեկտեղ իրենց գումարները վերադարձնելու նպատակով հայց է հարուցել:

10. 1995թ. մայիսի 17-ին դատարանը դիմողի փաստաբանին խնդրել է ներկայացնել երկրորդ պատասխանողի հասցեն: 1995թ. մայիսի 23-ին դիմողի փաստաբանը ներկայացրել է պահանջվող հասցեն:

11. Գործի քննությունը նշանակվել էր 1995թ. հոկտեմբերի 4-ին, սակայն հետաձգվել էր պատասխանողների չներկայանալու պատճառով: Պարզվել է, որ պատասխանողները չէին ստացել նիստի օրվա վերաբերյալ ծանուցագիրը, քանի որ հասցեն սխալ էր նշված եղել: Դատարանը խնդրել է դիմողի փաստաբանին՝ 30 օրվա ընթացքում ներկայացնել պատասխանողների ճշտված հասցեն:

12. Հաջորդ նիստը նշանակվել էր 1996թ. հունվարի 24-ին, սակայն պարզվել է, որ այդ ընթացքում «Z.I.P.» ընկերությունը դադարել է գոյություն ունենալուց, իսկ քանի որ Մ.-ի հասցեն շարունակում էր անհայտ մնալ, դատարանը դիմողի փաստաբանին հանձնարարել է դիմել Սոցիալական սպասարկման կենտրոն (Centar za socijalnu skrb)՝ Մ.-ի համար իրավական ներկայացուցիչ նշանակելու խնդրանքով:

13. 1996թ. հունիսի 20-ին դիմողի փաստաբանը տեղեկացրել է դատարանին, որ Ջագրեբի Սոցիալական սպասարկման կենտրոնի 1996թ. մարտի 11-ի որոշմամբ նշանակվել է Մ.-ի իրավական ներկայացուցիչը:

14. 1996թ. սեպտեմբերի 13-ին դատարանը դիմողի փաստաբանին առաջարկել է 30 օրվա ընթացքում Ջագրեբի տնտեսական դատարանի գրանցամատյանից տեղեկանք ներկայացնել «Z.I.P.» ընկերության իրավական կարգավիճակի վերաբերյալ:

15. 1999թ. դեկտեմբերի 2-ին նշանակված հերթական նիստը նույնպես հետաձգվել է՝ պատասխանողների բացակայության պատճառով: Դարձյալ պարզվել է, որ «Z.I.P.» ընկերությունը և Մ.-ն չեն ստացել ծանուցագիր, քանի որ հասցեն սխալ է նշված եղել: Դատարանը դիմողի փաստաբանին առաջարկել է 30 օրվա ընթացքում պարզել և դատարանին տեղեկացնել, թե արդյոք «Z.I.P.» ընկերությունն իսկապես դադարել է գոյություն ունենալուց:

16. Ըստ Կառավարության հաջորդ նիստի ժամանակ՝ 2000 թ. հունիսի 7-ին, դատարանը որոշում է կայացրել գործի վարույթը վերադարձնել status quo ante փուլին (zahtjev za povrat u prijasnje stanje): «Z.I.P.» ընկերության բացակայության պատճառով նիստը հետաձգվել է 2000թ. հոկտեմբերի 17-ին: Դատական գործը մինչև օրս քննության ընթացքում է Ջագրեբ քաղաքի մունիցիպալ դատարանում:

## **2. «M.J.B.» ընկերության և B.J.-ի դեմ հարուցված գործի վարույթը**

17. «M.J.B.» ընկերության և դրա ենթադրյալ սեփականատեր Բ. Ժ.- ի դեմ հարուցված գործի վարույթն սկսվել է 1995թ. մարտի 30-ին, երբ դիքողը և 30 այլ հայցվորներ հայց են հարուցել Ջագրեբի մունիցիպալ դատարան՝ իրենց գումարները վերադարձնելու պահանջով:

18. Դատարանը դիմողի փաստաբանին խնդրել է ներկայացնել Բ.Ժ.-ի հասցեն: 1995թ. օգոստոսի 25-ին դիմողի փաստաբանը դատարանին է տրամադրել Բ.Ժ.-ի հասցեն:

19. 1995թ. հոկտեմբերի 2-ին նշանակված նիստը հետաձգվել է պատասխանողի բացակայության պատճառով: Պարզվել է, որ «M.J.B.» ընկերությունն այլևս իր նախկին հասցեում չի գտնվում, և որ Բ.Ժ.-ն գտնվում է կալանքի տակ: Դիմողի փաստաբանը տեղեկացրել է դատարանին, որ Բ.Ժ.- ն արդեն ազատ է արձակվել և խնդրել է, որ պատասխանողներին նոր ծանուցագրեր ուղարկվեն նույն հասցեներով:

20. 1995թ. նոյեմբերի 27-ին նիստը դարձյալ հետաձգվել է պատասխանողների բացակայության պատճառով: Պարզվել է, որ այդ ընթացքում «M.J.B.» ընկերությունը դադարել է գոյություն ունենալուց, իսկ Բ.Ժ.-ի հասցեն փոխվել է: Դատարանը դիմողի փաստաբանին առաջարկել է 30 օրվա ընթացքում տեղեկացնել իրեն, թե արդյոք ընկերությունն իսկապես դադարել է գոյություն ունենալուց և ներկայացնել Բ.Ժ.- ի ճշտված հասցեն:

21. 1995թ. դեկտեմբերի 7-ին դիմողի փաստաբանը դատարանին հայտնել է պատասխանողների ստույգ հասցեները:

22. Հաջորդ նիստը՝ 1996թ. փետրվարի 14-ին, նույնպես հետաձգվել է պատասխանողների բացակայության պատճառով: Բացակայության պատճառները նույնն էին. «M.J.B.» ընկերությունը դադարել է գոյություն ունենալուց, իսկ Բ.Ժ.-ն փոխել է իր հասցեն: Վերջինիս ճիշտ հասցեն պարզելու համար դատարանը որոշել է ծանոթանալ Բ. Ժ.-ի դեմ հարուցված՝ նույն դատարանում քննության առնվող թիվ KO-1574/93 քրեական գործին: Այդ միջոցով դատարանը պարզել է նրա հասցեն:

23. 1996թ. սեպտեմբերի 11-ի կարգադրությամբ դիմողի փաստաբանից պահանջվել է Ջագրեթի տնտեսական դատարանի գրացամատյանից դատարանին ներկայացնել տեղեկանք՝ «M.J.B.» ընկերության իրավական կարգավիճակի վերաբերյալ:

24. 1996թ. սեպտեմբերի 20-ին դիմողի փաստաբանը ներկայացրել է պահանջվող փաստաթուղթը:

25. 1997թ. նոյեմբերի 7-ին նշանակված հերթական նիստը հետաձգվել է պատասխանողների բացակայության պատճառով: Փաստաթղթերում նշվել է, որ նրանք չէին ստացել նիստի օրվա վերաբերյալ ծանուցագիրը:

26. 1998թ. հունվարի 26-ին նշանակված նիստը հետաձգվել է նույն պատճառով: Դատարանը դիմողի փաստաբանին առաջարկել է 60 օրվա ընթացքում ներկայացնել պատասխանողի ճիշտ հասցեն:

27. 1998թ. փետրվարի 6-ին դիմողի փաստաբանը հայտնել է դատարանին, որ Բ.Ժ.-ի ուստիկանությունում գրանցված հասցեն նույնն է, ինչ որ նախկինում: Փաստաբանը միջնորդել է, որ նշանակվի Բ.Ժ.-ի իրավական ներկայացուցիչ:

28. 1998թ. փետրվարի 13-ին դատարանը կարգադրել է դիմողի փաստաբանին, որ վերջինս Սոցիալական սպասարկման կենտրոնից պահանջի Բ.Ժ.-ի համար իրավական ներկայացուցչի նշանակում:

29. 1998թ. ապրիլի 2-ին դիմողի փաստաբանը տեղեկացրել է դատարանին, որ Ջագրեթի սոցիալական սպասարկման կենտրոնի 1998թ. մարտի 26-ի որոշմամբ նշանակվել է Բ.Ժ.-ի իրավական ներկայացուցիչ:

30. Ըստ Կառավարության՝ հաջորդ՝ 1998թ. հուլիսի 2-ի նիստում որոշում է կայացվել գործը՝ Բ.Ժ.-ի բացակայությամբ քննելու մասին: Առկա փաստաթղթերը ցույց են տվել, որ «M.J.B.» ընկերությունը դադարել է գոյություն ունենալուց:

31. 1998թ. հուլիսի 22-ին դատարանը նամակով դիմել է Ջագրեթի տնտեսական դատարան՝ պահանջելով տեղեկանք «M.J.B.» ընկերության իրավական կարգավիճակի վերաբերյալ: 1998թ. սեպտեմբերի 24-ին դատարանը Ջագրեթի տնտեսական դատարանից ստացել է տեղեկանք, որը «M.J.B.» ընկերության փոխարեն՝ սխալմամբ տեղեկություն էր հաղորդում այլ ընկերության իրավական կարգավիճակի մասին:

32. 2000թ. ապրիլի 13-ին դատարանը կրկին հարցում է կատարել Ջագրեթի տնտեսական դատարանին, թե արդյոք «M.J.B.» ընկերությունը դեռևս գոյություն ունի: Նույն օրը դատարանը նաև առաջարկել է դիմողի փաստաբանին ներկայացնել նույն տեղեկությունը: Այս դատական գործը մինչև օրս քննության ընթացքում է Ջագրեթ քաղաքի մունիցիպալ դատարանում:

## II. ԳՈՐԾԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

33. Սահմանադրական դատարանի մասին սահմանադրական օրենքի՝ գործին առնչվող դրույթները (ուժի մեջ է 1999թ. սեպտեմբերի 24-ին - այսուհետև՝ «Սահմանադրական դատարանի մասին օրենք» – Ustavni zakon o Ustavnom sudu) նախատեսում են.

**Բաժին 59 (4).** «Սահմանադրական դատարանը կարող է, բացառիկ դեպքերում, սահմանադրական զանգատը քննության առնել մինչև պաշտպանության առկա միջոցների սպառումը, եթե համոզվում է, որ վիճարկվող օրենքը կամ ողջամիտ ժամկետում համապատասխան գործողություններ չկատարելը կոպտորեն խախտում է կողմի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, և եթե դատարանը քննության չառնի սահմանադրական զանգատը, կողմին կսպառնան լուրջ և անուղղելի հետևանքներ»:

## ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ

### I. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՍՊԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

34. Կառավարությունը Դատարանին առաջարկում է մերժել գանգատն այն հիմքով, որ դիմողը չի սպառել ներպետական պաշտպանության միջոցները: Այս կապակցությամբ Կառավարությունը պնդում է, որ դիմողը չի ներկայացրել սահմանադրական գանգատ՝ Սահմանադրական դատարանի մասին նոր վերախմբագրված օրենքի 59(4) բաժնի համաձայն: Այդ օրենքը բացառիկ դեպքերում սահմանադրական դատարանին թույլատրում է սահմանադրական գանգատը քննության առնել մինչև պաշտպանության առկա միջոցներն սպառելը, եթե ակնհայտ է այն վտանգի առկայությունը, որ համապատասխան պետական մարմնի կողմից որոշում չընդունվելու արդյունքում կարող են խախտվել կողմի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները և ծագել լուրջ ու անուղղելի հետևանքներ:

35. Կառավարությունը նաև պնդում է, որ, բացի սահմանադրական դատարանի մասին օրենքի 59 (4) բաժնի համաձայն սահմանադրական գանգատ ներկայացնելուց, դիմողը կարող էր նաև դիմել ինչպես Ջագրեթի մունիցիպալ դատարանի նախագահին, այնպես էլ Արդարադատության նախարարություն՝ պահանջելով արագացնել դատաքննությունը:

36. Դիմողն առարկել է Կառավարությանը:

37. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածում նշված՝ ներպետական պաշտպանության միջոցները սպառելու վերաբերյալ նորմը պարտավորեցնում է այն անձանց, ովքեր ցանկանում են պետության դեմ հարուցված գործը ներկայացնել միջազգային դատական մարմնի առջև, առաջին հերթին օգտագործել ներպետական իրավական համակարգով նախատեսված միջոցները: Հետևաբար, պետություններն իրենց գործողությունների համար ազատվում են միջազգային դատական մարմնի առջև պատասխան տալուց, քանի դեռ ներպետական իրավական համակարգի շրջանակներում հարցը շտկելու հնարավորություն ունեն: Այդ նորմը հիմնվում է Կոնվենցիայի 13-րդ հոդվածում արտացոլված ենթադրության վրա, որ վիճարկվող խախտման կապակցությամբ ներպետական իրավական համակարգում առկա է պաշտպանության արդյունավետ միջոց՝ անկախ նրանից, Կոնվենցիայի դրույթները ներառված են ներպետական իրավունքում, թե՛ ոչ: Այս իմաստով սկզբունքային նշանակություն է ստանում այն հանգամանքը, որ Կոնվենցիայով սահմանված պաշտպանության մեխանիզմն օժանդակ է մարդու իրավունքների պաշտպանության ներպետական համակարգերի առնչությամբ (տես, *inter alia*, Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության 1976թ. դեկտեմբերի 7-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 24, էջ 22, կետ 48 և Աքսոյն ընդդեմ Թուրքիայի 1996թ. դեկտեմբերի 18-ի վճիռը, Վճիռների և որոշումների ժողովածուներ, 1996-VI, էջեր 2275, 2276, կետ 51):

38. Կոնվենցիայի 35-րդ հոդվածի համաձայն՝ դիմողը պետք է օգտագործի պաշտպանության առկա բոլոր միջոցները, որոնք բավարար են վերականգնելու նրա ենթադրյալ խախտված իրավունքները: Այդ պաշտպանության միջոցները պետք է լինեն բավականաչափ հստակ և ճշգրիտ ոչ միայն տեսականորեն, այլև գործնականում, այլապես դրանք չեն բավարարի մատչելիության և արդյունավետության պահանջները (տես, *inter alia*, Վերնիլոն ընդդեմ Ֆրանսիայի 1991թ. փետրվարի 20-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 198, էջեր 11-12, կետ 27, և Դալիան ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 26120/95, կետ 38, ECHR 1998 – I):

39. Ավելին, պաշտպանության ներպետական միջոցների սպառման ոլորտում գործում է նաև ապացուցման բեռի բաշխումը: Եթե Կառավարությունը պնդում է, որ պաշտպանության ներպետական միջոցները չեն սպառվել, ապա պարտավոր է Դատարանին ապացուցել, որ տվյալ միջոցը տվյալ ժամանակահատվածում արդյունավետ էր՝ և՛ տեսականորեն, և՛ գործնականում, այսինքն՝ մատչելի էր, ի

վիճակի էր բավարարել դիմողի բողոքը և ենթադրում էր պահանջի պատշաճ բավարարման հնարավորություն: Սակայն, երբ Կառավարությունը կատարում է ապացուցման իր այդ պարտավորությունը, ապա այս դեպքում արդեն դիմողի խնդիրն է ապացուցել, որ Կառավարության կողմից նշված միջոցն իրականում սպառվել է, կամ որ, հաշվի առնելով գործի որոշակի հանգամանքները, տվյալ միջոցն այս կամ այն պատճառով բավարար և արդյունավետ չէր, կամ որ առկա են որոշ հանգամանքներ, որոնք իրեն ազատում են այդ պահանջից:

40. Դատարանը ցանկանում է շեշտել, որ պաշտպանության ներպետական միջոցներն սպառելու վերաբերյալ նորմը կիրառելիս պետք է պատշաճորեն հաշվի առնվի այն փաստը, որ այն կիրառվում է մարդու իրավունքների պաշտպանության այն մեխանիզմի համատեքստում, որը պայմանավորվող կողմերը համաձայնել են ստեղծել: Հետևաբար, ընդունվել է, որ պաշտպանության ներպետական միջոցների վերաբերյալ նորմը պետք է կիրառվի որոշակի ճկունությամբ և առանց չափազանցված ձևականությունների (տես Քարդոտն ընդդեմ Ֆրանսիայի 1991թ. մարտի 19-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 200, էջ 18, կետ 34): Բացի դրանից, Դատարանը նաև ընդունել է, որ տվյալ նորմը ոչ բացարձակ է, ոչ էլ մեխանիկորեն կիրառելի. այն հարցին պատասխանելիս, թե արդյոք այդ նորմի պահանջը կատարվե՞լ է, կարևոր է հաշվի առնել յուրաքանչյուր առանձին գործի հանգամանքները (տես Վան Օստերվիժկն ընդդեմ Բելգիայի 1980թ. նոյեմբերի 6-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 40, էջ 18, կետ 35): Սա նշանակում է, որ Դատարանը պետք է հաշվի առնի ոչ միայն շահագրգիռ պայմանավորվող կողմի իրավական համակարգում պաշտպանության ձևական միջոցների գոյությունը, այլև այն ընդհանուր իրավական և քաղաքական համատեքստը, որում դրանք գործում են, ինչպես նաև դիմողի անձնական հանգամանքները (տես Աքդիվարն ու այլոք ընդդեմ Թուրքիայի 1996թ. սեպտեմբերի 16-ի վճիռը, Վճիռների և որոշումների ժողովածուներ 1996-IV, էջ 1210-1211, կետեր 65-68):

41. Տվյալ գործում, Դատարանը նշում է, որ Սահմանադրական դատարանի մասին օրենքի 59 (4) բաժնի հիման վրա գործ կարող է հարուցվել միայն այն դեպքում, եթե Սահմանադրական դատարանը, գանգատի նախնական քննությունից հետո, որոշում է այն քննության ընդունել: Այսպիսով, թեև անձն իրավունք ունի գանգատ ներկայացնել ուղղակիորեն Սահմանադրական դատարան, վարույթի պաշտոնական հարուցումը կախված է Սահմանադրական դատարանի հայեցողությունից:

42. Ավելին, որպեսզի կողմը կարողանա նշված դրույթի համաձայն սահմանադրական գանգատ ներկայացնել, անհրաժեշտ է, որ միաժամանակ բավարարվեն երկու պարտադիր պայման: Առաջին՝ դիմողի սահմանադրական իրավունքները պետք է կոպտորեն խախտված լինեն ողջամիտ ժամանակահատվածում որոշում կայացված չլինելու փաստի արդյունքում, և երկրորդ՝ դիմողին պետք է սպառնա լուրջ և անուղղելի հետևանքների վտանգ:

43. Դատարանը նկատում է նաև, որ «կոպիտ խախտում» և «լուրջ և անուղղելի հետևանքներ» արտահայտությունները ենթակա են տարաբնույթ և ընդարձակ մեկնաբանման: Տվյալ գործի առնչությամբ պարզ չէ, թե ինչ չափով են դիմողին սպառնում անուղղելի հետևանքներ՝ հաշվի առնելով, որ նրա գործը վերաբերում է դրամական պահանջի վերաբերյալ քաղաքացիական հայցի:

44. Այնուհետև Դատարանը նշում է, որ շատ օրենքների ձևակերպումներ բացարձակ հստակ չեն: Չափազանց խիստ և կոշտ ձևակերպումներից խուսափելու և փոփոխվող հանգամանքներին համընթաց քայլելու անհրաժեշտությունը նշանակում է, որ շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպված են այս կամ այն աստիճանի անորոշությամբ (տես, օրինակ, *mutatis mutandis*, Մյուլերն ընդդեմ Շվեյցարիայի 1988թ. մայիսի 24-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 133, էջ 20, կետ 29, և Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի 1993թ. մայիսի 25-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 260 - Ա, էջ 19, կետ 40): Նման դրույթների մեկնաբանումն ու կիրառումը կախված է պրակտիկայից (տես, *mutatis mutandis*, վերը նշված Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի վճիռը, էջ 19, կետ 40 և և Մանգուլդ Պինոն ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 43491/98, 2000թ. դեկտեմբերի 5, չիրատարակված): Տվյալ գործի առնչությամբ, Կառավարությունը Դատարանին ներկայացրել է միայն մեկ գործ, որը Սահմանադրական դատարանը քննության էր առել Սահմանադրական դատարանի մասին օրենքի 59 (4) բաժնի հիման վրա՝ նշված միջոցի բավարար և արդյունավետ լինելը հիմնավորելու համար: Դատարանի գործը

չէ որոշումներ կայացնել խորվաթական իրավունքին առնչվող հարցի վերաբերյալ, որը դեռևս լուծված չէ (տես, *mutatis mutandis*, Դե Լոնգ, Բալջետի և Վան դեն Բրինկի 1984թ. մայիսի 22-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 77, էջ 19, կետ 39): Հետագա դատական նախադեպի բացակայությունը, այնուամենայնիվ, ցույց է տալիս, որ ներկայումս այս միջոցը գործնական կիրառման իմաստով բավականին անհստակ է: Դատարանը գտնում է, որ Կառավարության կողմից ներկայացված եզակի գործը բավական չէ ցույց տալու ներպետական ձևավորված նախադեպային իրավունքի առկայությունը, որը կապացուցի այդ պաշտպանության միջոցի արդյունավետությունը:

45. Ելնելով վերոշարադրյալից՝ Դատարանը գտնում է, որ Սահմանադրական դատարանի մասին օրենքի 59 (4) բաժնին համապատասխան գանգատ ներկայացնելը չի կարող դիմողի գործում որոշակիության բավարար աստիճանով համարվել պաշտպանության արդյունավետ միջոց:

46. Ինչ վերաբերում է Կառավարության պնդմանը, թե դիմողը չի ձեռնարկել որևէ քայլ, որը կարող էր արագացնել գործի վարույթի ընթացքը, ապա Դատարանը հիշեցնում է, որ քաղաքացիական գործի վարույթի տևողության առնչությամբ այն մեթոդների հարցը, որոնք դիմողի կողմից կարող էին օգտագործվել դատաքննության ընթացքն արագացնելու համար, վերաբերում է գանգատի էությանը (տես X-ն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության, գանգատ թիվ 8961/80, Հանձնաժողովի 1981թ. դեկտեմբերի որոշում, DR 26, էջ 200, 205, և Դ.-ն ընդդեմ Բելգիայի, գանգատ թիվ 12686/87, Հանձնաժողովի 1990թ. հոկտեմբերի 3-ի որոշում, DR 66, էջեր 109, 110):

47. Անհրաժեշտ է նաև նշել, որ Կառավարության կողմից ներկայացված այլ միջոցները, այն է՝ դատավարության ընթացքն արագացնելու վերաբերյալ Ջագրեբի մունիցիպալ դատարանի նախագահին կամ Արդարադատության նախարարությանը ներկայացվող խնդրագրերը հիերարխիկ բնույթի դիմումներ են, որը, ըստ էության, ավելին չէ, քան վերահսկող մարմնին ներկայացվող տեղեկատվություն՝ խնդրանքով օգտագործել իր լիազորությունները, եթե նպատակահարմար է գտնում: Նման դիմում ստանալու դեպքում վերահսկող մարմինը կարող է միջոցներ ձեռնարկել, կամ չձեռնարկել, այն պաշտոնյայի նկատմամբ, որի դեմ է ուղղված հիերարխիկ դիմումը, եթե գտնում է, որ այն ակնհայտորեն անհիմն չէ: Հակառակ դեպքում որևէ միջոց չի ձեռնարկվի: Եթե դիմումին ընթացք է տրվում, ապա վարույթը բացառապես վերահսկող մարմնի և շահագրգիռ պաշտոնյաների միջև է: Դիմողը կարող է և հանդես չգալ որպես այդ վարույթի կողմ և կարող է միայն տեղեկացվել, թե վերահսկող մարմինը ինչ լուծում է տվել իր դիմումին (տես *mutatis mutandis*, Ժ. Կարրերը, Ս. Ֆուչսը և Ֆ. Կոդրնժան ընդդեմ Ավստրիայի, թիվ 7464/76 գանգատ, Հանձնաժողովի 1978թ. դեկտեմբերի 5-ի որոշում, DR 14, էջեր 51, 54):

48. Վերը նշված հանգամանքներից ելնելով՝ Դատարանը նշում է, որ գոյություն չունի որևէ իրավական պաշտպանության միջոց, որը թույլ կտար այս կամ այն անձին բողոքել խորվաթիայում դատաքննությունների չափազանց երկարաձգվող ընթացքի դեմ (տես *mutatis mutandis*, Թոմ Մոտան ընդդեմ Պորտուգալիայի, թիվ 32082/96, ECHR 1999-IX) և գտնում է, որ դիմողն ուներ բոլոր հիմքերը համարելու, որ ներպետական մակարդակում գոյություն չունեն այնպիսի իրավական միջոցներ, որոնք կարող են արդյունավետ լինել իր գանգատի համար: Այսպիսով, Դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի նպատակների համար չկար պաշտպանության որևէ համապատասխան և արդյունավետ միջոց, որը դիմողից պահանջվում էր սպառել: Այսպիսով, Դատարանը որոշում է, որ Կառավարության առարկությունը՝ ներպետական պաշտպանության միջոցները չսպառելու հիմքերի վերաբերյալ, չի կարող ընդունվել:

## II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄԸ

49. Դիմողը բողոքում է, որ պարտքի վճարման վերաբերյալ իր կողմից ներկայացված քաղաքացիական հայցի կապակցությամբ հարուցված վարույթը չի

ընթացել ողջամիտ ժամկետում, ինչպես նախատեսված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում, որը նախատեսում է.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ... ունի ... դատարանի կողմից ողջամիտ ժամկետում ... դատաքննության իրավունք»:

#### **Ա. Այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է հաշվի առնել**

50. Դատարանն առաջին հերթին նշում է, որ գործերի վարույթներն սկսվել են համապատասխանաբար 1995թ. մարտի 29-ին և 1995թ. մարտի 30-ին, երբ դիմողն իր պարտքերի վճարման վերաբերյալ քաղաքացիական հայց է հարուցել Ջագրեբի մունիցիպալ դատարան: Սակայն այն ժամանակահատվածը, որն ընկնում է Դատարանի իրավագործության տակ, սկսվում է ոչ թե վերը նշված ամսաթվերից, այլ 1997թ. նոյեմբերի 5-ից, երբ Կոնվենցիան ուժի մեջ է մտել Խորվաթիայի վերաբերյալ (տես Ֆոթին և այլոք ընդդեմ Իտալիայի 1982թ. դեկտեմբերի 10-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 56, էջ 18, կետ 53): Այս գործերի վարույթները դեռևս ավարտված չեն առաջին ատյանի դատարանում: Այսպիսով, նշված դատավարություններն ընթանում են արդեն ավելի քան վեց տարի, որից երեք տարին և ութ ամիսն ընկնում են Դատարանի իրավագործության տակ և կարող են քննության առնվել վերջինիս կողմից:

51. Դատարանը նշում է նաև, որ քննության առարկա ժամանակահատվածի ողջամտությունը որոշելու համար պետք է հաշվի առնել գործի վիճակը 1997թ. նոյեմբերի 5-ի դրությամբ (տես, ի թիվս այլ աղբյուրների, Ստիրանովսկին ընդդեմ Լեհաստանի վճիռը, թիվ 28616/95, կետ 46, ECHR 1998 – VIII): Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ Խորվաթիայի համար Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահին երկու դատավարությունների ժամկետը կազմել է մոտավորապես երկուսուկես տարի:

#### **Բ. Կիրառվող չափանիշներ**

52. Դատարանը կրկնում է, որ դատաքննությունների տևողության ողջամտությունը պետք է գնահատվի՝ հաշվի առնելով գործի հանգամանքների համակցությունը, ինչպես նաև Դատարանի նախադեպային իրավունքում սահմանված չափանիշները, մասնավորապես, դատական գործի բարդությունը, դիմողի և համապատասխան մարմինների վարքագիծը, ինչպես նաև դիմողի համար քննության առարկայի կարևորությունը (տես Յունեմ ընդդեմ Լեհաստանի 1999թ. հոկտեմբերի 15-ի վճիռը GC, թիվ 26614/95, 1999թ. հոկտեմբերի 15, չիրատարակված, կետ 60, ինչպես նաև Comingersoll S.A. ընդդեմ Պորտուգալիայի GC, թիվ 35382/97, ECHR 2000 – IV):

#### **Գ. Դատարանի գնահատականը**

53. Կառավարությունը պնդում է, որ երկու գործերն էլ ունեն որոշակի բարդություն, քանի որ ոչ հայցվորները և ոչ էլ Ջագրեբի մունիցիպալ դատարանն ի վիճակի չէին ճշտելու պատասխանողների ստույգ հասցեները:

54. Դիմողը պնդել է, որ նշված հասցեները պարտավոր է պարզել ոստիկանությունը:

55. Դատարանն ընդունում է, որ պատասխանողների հասցեների ճշգրտումը որոշակի դժվարություն է ներկայացրել: Սակայն, համաձայն Խորվաթիայի օրենսդրության, այն դեպքում, երբ պատասխանողի հասցեն հայտնի չէ, հնարավոր է դիմել Սոցիալական սպասարկման կենտրոն՝ պատասխանողի իրավական ներկայացուցիչ նշանակելու խնդրանքով: Թեև դիմողը գործը հարուցել էր 1995թ. մարտի վերջին, մեկ տարի է տևել մինչև իրավական ներկայացուցչի նշանակումը Մ.-ի դեմ հարուցված վարույթում և երեք տարի՝ մինչև Բ.ժ.-ի դեմ հարուցված վարույթում: Հակառակ դեպքում, Դատարանը չի գտնում որևէ հանգամանք, որի պատճառով տվյալ գործերը կարելի լիներ որակել որպես բարդ բնույթ ունեցող:

56. Դիմողի վարքագծի առնչությամբ Կառավարությունը նշել է, որ նա ազդել է դատաքննության տևողության վրա, քանի որ չի ներկայացրել պատասխանողների ստույգ հասցեները: Բացի դրանից, նա չի դիմել Ջագրեբի մունիցիպալ դատարանի նախագահին կամ Արդարադատության նախարարություն՝ դատաքննությունն արագացնելու խնդրանքով:

57. Դիմողի վարքագծի առնչությամբ պետք է նշել, որ Կառավարությունը ցույց չի տվել, որ դատավարության ընթացքն արագացնելու՝ դիմողին տրված հնարավորությունն իրական էր: Չնայած Կառավարության ներկայացրած տեղեկատվությանը՝ Դատարանը հաստատված չի համարում, որ նման քայլը կարող էր հաջողության որևէ հեռանկար ունենալ՝ հատկապես հաշվի առնելով իրավասու դատական մարմինների՝ իրենց հայեցողությամբ գործելու հնարավորությունը: Նման հանգամանքներում չի կարելի համարել, որ դիմողի ենթադրյալ պասիվությունը դանդաղեցրել է դատավարության ընթացքը:

58. Ինչ վերաբերում է իշխանությունների վարքագծին, ապա Կառավարությունը պնդել է, որ ներպետական դատարանները պատշաճ ջանք են գործադրել գործերի վարույթի ընթացքում: Կառավարությունը նաև նշում է, որ Ջագրեբի մունիցիպալ դատարանը չափազանց ծանրաբեռնված է դատական գործերով, և որ քաղաքացիական հայցեր քննող յուրաքանչյուր դատավորի վարույթում գտնվում է հազարից ավելի դատական գործ:

59. Դատարանը նշում է, որ այն ժամանակամիջոցում, որը պետք է հաշվի առնվի, «Z.I.P.» ընկերության և Ս.-ի դեմ հարուցված դատավարությունն անգործության էր մատնված 1997թ. նոյեմբերի 5-ից մինչև 1999թ. դեկտեմբերի 2-ը, ինչը կազմում է ավելի քան երկու տարի: «M.J.B.» ընկերության և Բ.Ժ.-ի դեմ հարուցված դատավարությունն անգործության էր մատնված 1998թ. հուլիսի 22-ից մինչև 2000թ. ապրիլի 13-ը, ինչը կազմում է մեկ տարի ութ ամիս և 21 օր: Յետևաբար, Դատարանը համոզիչ չի համարում ձգձգումների վերաբերյալ Կառավարության բացատրությունները: Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի անդամ պետությունների խնդիրն է այնպես կազմակերպել իրենց իրավական համակարգը, որ իրենց դատարաններն ապահովեն յուրաքանչյուրի՝ քաղաքացիական իրավունքներին և պարտավորություններին վերաբերող վեճերով ողջամիտ ժամկետում վերջնական որոշում ստանալու իրավունքը (տե՛ս G.H.-ն ընդդեմ Ավստրիայի վճիռը, թիվ 31266/96, կետ 20, 3 հոկտեմբերի 2000թ., չիրատարակված):

60. Հաշվի առնելով իր նախադեպային իրավունքով սահմանած չափանիշները և գործի բոլոր հանգամանքները՝ Դատարանը գտնում է, որ վիճարկվող վարույթի տևողությունը, որը մինչև այժմ շարունակվում է առաջին ատյանի դատարանում, չի բավարարում ողջամիտ ժամկետի պահանջը: Հետևաբար, երկու դատական գործերի դեպքում էլ տեղի է ունեցել Կոնվենցիայ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

### **III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 13-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄԸ**

61. Դիմողը պնդել է նաև, որ չի ունեցել արդյունավետ պաշտպանության միջոց, որի օգնությամբ կարող էր բարձրացնել իր գործերի վարույթների չափազանց երկար տևողության հարցը: Նրա կարծիքով, հետևաբար, խախտվել է Կոնվենցիայի 13-րդ հոդվածը, համաձայն որի՝

«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ, եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

62. Կառավարությունը Դատարանին առաջարկել է գանգատի այս մասը ճանաչել ակնհայտորեն անհիմն: Կառավարությունը պնդել է, որ դիմողը հնարավորություն ուներ դիմելու Ջագրեբի մունիցիպալ դատարանի նախագահին կամ Արդարադատության նախարարություն՝ գործի վարույթի ընթացքն արագացնելու խնդրանքով, ինչպես նաև ներկայացնել գանգատ՝ Սահմանադրական դատարանի մասին օրենքի 59(4) բաժնի հիման վրա: Կառավարության կարծիքով, այս հնարավորություններն իրենցից ներկայացնում են արդյունավետ պաշտպանության միջոցներ՝ դիմողի գործերի վարույթի տևողության առնչությամբ:

63. Ղատարանն առաջին հերթին կրկնում է, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի ճիշտ մեկնաբանումն այն է, որ տվյալ դրույթը երաշխավորում է արդյունավետ պաշտպանության միջոց ներպետական իշխանությունների առջև՝ 6-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ գործը ողջամիտ ժամկետում լսելու պահանջի ենթադրյալ խախտման համար (տե՛ս Կուդլան ընդդեմ Լեհաստանի վճիռը, թիվ 30210/96, կետ 156, ECHR - ՄԻԵԽ, 2000 - XI):

64. Ինչ վերաբերում է գործի վարույթի ընթացքն արագացնելու՝ Ջագրեբի մունիցիպալ դատարանի նախագահին կամ Արդարադատության նախարարությանն ուղղված խնդրագրերին, ապա Ղատարանը կրկնում է, որ նմանատիպ խնդրագրերը հանդիսանում են հիերարխիկ դիմում և չեն կարող պաշտպանության միջոց համարվել քաղաքացիական գործով վարույթի տևողության կապակցությամբ (տե՛ս վերը՝ կետ 47):

65. Ինչ վերաբերում է Սահմանադրական դատարանի մասին օրենքի 59 (4) բաժնի հիման վրա ներկայացվող գանգատին, ապա Ղատարանը կրկնում է, որ այն չի հանդիսանում արդյունավետ պաշտպանության միջոց քաղաքացիական գործով վարույթի տևողության կապակցությամբ, ինչպես վերը բացատրվել է (կետեր 41-45):

66. Այսպիսով, Ղատարանը գտնում է, որ տվյալ գործում տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում, քանի որ դիմողը չի ունեցել այնպիսի պաշտպանության միջոց, որի օգնությամբ կարողանար իր գործերի կապակցությամբ իրացնել «ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը», ինչպես երաշխավորված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում:

#### **IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ**

67. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը նախատեսում է.

«Եթե Ղատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Ղատարանը, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի բավարարում է տրամադրում»:

#### **Ա. ՎՆԱՍՆԵՐ**

68. Ոչ նյութական վնասների կապակցությամբ դիմողը հավակնում էր 70,000 խորվաթական կունասի (HRK):

69. Կառավարությունը Ղատարանին խնդրել է տրամադրվելիք արդարացի բավարարման գումարը գնահատել՝ հիմնվելով իր նախադեպային իրավունքի վրա:

70. Ղատարանն ընդունում է, որ դիմողը կրել է ոչ նյութական վնաս՝ իր հարուցած քաղաքացիական գործերի վարույթների տևողության արդյունքում: Իր գնահատումներում հիմնվելով արդարության սկզբունքի վրա և հաշվի առնելով գործի հանգամանքները, մասնավորապես, երկու զուգընթաց դատավարությունները, դրանց ընդհանուր տևողությունը և դիմողի անձնական հանգամանքները, Ղատարանը, որպես ոչ նյութական վնասների փոխհատուցում, տրամադրում է 20,000 HRK:

#### **Բ. Ղատական ծախսեր և ծախքեր**

71. Դիմողը, որը Եվրոպայի խորհրդի կողմից իր գործը ներկայացնելու կապակցությամբ ստացել էր իրավաբանական օգնություն, դատական ծախսերի և ծախքերի դիմաց որևէ փոխհատուցում չի պահանջել: Հետևաբար, Ղատարանը այս կապակցությամբ որևէ գումար չի տրամադրում:

#### **Գ. Տոկոսներ՝ փոխհատուցումը չվճարելու դեպքում**

72. Ղատարանի տրամադրության տակ եղած տեղեկության համաձայն՝ սույն վճռի ընդունման օրվա դրությամբ խորվաթիայում կիրառվող տոկոսադրույթը կազմում է 18%:

## ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ

1. Մերժում է Կառավարության առարկությունը ներպետական պաշտպանության միջոցների սպառման վերաբերյալ,
2. Վճռում է, որ երկու դատաքննությունների դեպքում էլ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում,
3. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում,
4. Վճռում է.  
(ա) որ պատասխանող պետությունը, համաձայն Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի, սույն վճռի ընդունման պահից սկսած եռամսյա ժամկետում դիմողին, որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, պետք է վճարի 20,000 (քսան հազար) խորվաթական կունաս,  
(բ) որ տարեկան 18% դրույթաչափով սովորական տոկոս պետք է վճարի նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարումների կատարումը:
5. Մերժում է արդարացի բավարարման վերաբերյալ դիմողի պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և գրավոր ծանուցվել է 2001թ. հուլիսի 26-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի:

Վինսենթ Բերգեր  
Քարտուղար

Գեորգ Ռես  
Նախագահ

[ՋԻԱՆԱՆՋԵԼԻՆ ԸՆԴԴԵՄ ԻՏԱԼԻԱՅԻ ԳՈՐԾԸ](#)

[CASE OF GIANNANGELI v. ITALY](#)

[\(Գանգատ թիվ 41094/98\)](#)

[Դատարանի 2001թ. հուլիսի 5-ի  
վճիռը](#)

[Ստորասրուրդ](#)

## **Զիանանցելին ընդդեմ Իտալիայի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երրորդ բաժանմունք),  
նիստ գումարելով որպես Պալատ, կազմով՝

Պրն Կ. Լ. Ռոզակիսի, *Նախագահ,*

Պրն Ա. Բ. Բակայի,

Պրն Զ. Բոնելոյի,

Պրն Պ. Լորենզենի,

Պրն Մ. Ֆիշբախի,

Տկն Մ. Տաստաս-Նիկոլովսկայի,

Պրն Վ. Զագրեբելսկո՝ *դատավորներ,*

1999թ. հոկտեմբերի 21-ի և 2001թ. հունիսի 14-ի դռնփակ խորհրդակցության  
արդյունքում

2001թ. հունիսի 14-ին ընդունում է հետևյալ վճիռը:

## **ՎԱՐՈՒՅԹԸ**

1. Գործի համար առիթ է հանդիսացել Իտալիայի քաղաքացի պրն Սանդրո Զիանանցելիի կողմից («դիմող») 1997թ. դեկտեմբերի 30-ին, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») նախկին 25-րդ հոդվածի համաձայն, Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովին («Հանձնաժողով») Իտալիայի դեմ ներկայացված գանգատը (no. 41094/98):

2. Դիմողին ներկայացնում էր պրն Ռոսին և պրն Մ. Անտոնիո Ռոսին՝ Լ'Աբբիլայից երկու պրակտիկ փաստաբաններ: Իտալական Կառավարությունը («Կառավարություն») ներկայացնում էին ներկայացուցիչը՝ պրն ՌԷ. Լենզան, որին օգնում էր համաներկայացուցիչը՝ պրն Վ. Էսպոսիտոն:

3. Դիմողի գանգատը հիմնվում էր Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա և առնչվում էր քրեական դատավարության տևողությանը:

4. Գանգատը Ղատարան հանձնվեց 1998թ. նոյեմբերի 1-ին, երբ ուժի մեջ մտավ Կոնվենցիայի թիվ 11 արձանագրությունը (թիվ 11 արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետ):

5. Գանգատը հանձնվեց Ղատարանի Երկրորդ բաժանմունք (Ղատարանի կանոնակարգի 52-րդ կանոնի 1-ին կետ): Այդ բաժանմունքի կազմում գործը քննելու նպատակով կազմավորվեց պալատ, ինչպես նախատեսված է Ղատարանի կանոնակարգի 26-րդ կանոնի 1-ին կետով:

6. 1999թ. հոկտեմբերի 6-ի որոշմամբ՝ Ղատարանը գանգատն ընդունելի հայտարարեց:

## **ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

7. Դիմողը ծնվել է 1959թ. և ներկայումս բնակվում է Սալմոնում (Լ' Աբբիլա):

8. 1991թ. փետրվարի 16-ին դիմողը դուրս է գրել չեկ, ըստ որի վճարում պետք է կատարվեր ոմն X-ի, որը 1991թ. փետրվարի 20-ին վճարումն ստանալու համար այն ներկայացրել էր բանկ: Քանի որ համապատասխան չեկերի գրքույկը նախկինում գողացված էր եղել Y-ից, բանկն այդ մասին տեղեկացրել է ոստիկանությանը: Վերջինս առգրավել է չեկը և դեպքի մասին զեկուցել Սալմոնի մագիստրոների դատարանին՝ առընթեր դատախազությանը:

9. 1992թ. նոյեմբերի 10-ին դատախազը քրեական հետապնդում հարուցել ընդդեմ դիմողի՝ փողերի լվացման, կեղծման և խարդախության մեղադրանքներով: Հետապնդում հարուցելու վերաբերյալ որոշումը դիմողին

է ներկայացվել 1992թ. նոյեմբերի 12-ին, որն այդ միջոցով տեղեկացել է իրեն առաջադրված մեղադրանքներին:

10. 1993թ. դեկտեմբերի 9-ին մագիստրը առաջին մեղադրանքի մասով գործի վարույթն անջատել է մյուս երկուսից: Նույն օրը կայացրած որոշմամբ նա կարճել է գործը՝ վերջին երկու մեղադրանքների մասով՝ դիմողի դեմ պաշտոնական քրեական բողոքի բացակայության հիմքով: Առաջին մեղադրանքի կապակցությամբ հարցաքննվել է մի վկա և գործի վարույթը կասեցվել մինչև 1994թ. հունիսի 16-ը:

11. 1994թ. հունիսի 16-ի նիստը հետաձգվել է մինչև 1995թ. մարտի 1-ը, քանի որ փաստաբանները 1994թ. հունիսի 13-18-ը գործադուլի մեջ էին: Այնուհետև նիստը նշանակվել է 1995թ. մարտի 2-ին: Այնուամենայնիվ, այս նիստը ևս հետաձգվել է մինչև 1996թ. փետրվարի 15-ը՝ դիմողի պաշտպանի կողմից օրինական ձգձգման պատճառով: Այնուհետև նիստը նշանակվել է 1997թ. հունվարի 23-ին: Այս նիստում, այնուամենայնիվ, գործի լսումը հետաձգվել է մինչև 1997թ. հուլիսի 10-ը՝ չափազանց ծանրաբեռնվածության պատճառով, այնուհետև կասեցվել է մինչև 1997թ. նոյեմբերի 20-ը՝ մի վկայի հարցաքննելու նպատակով, որը խուսափում էր դատարան ներկայանալուց:

12. 1997թ. նոյեմբերի 20-ի դատավճռով, որը քարտուղարությունում գրանցվել է 1997թ. նոյեմբերի 27-ին, մագիստրն արդարացրել է դիմողին: Այս դատավճիռը վերջնական է դարձել 1998թ. հունվարի 4-ին:

## **ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ**

### **1. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱՆՏՈՒՄԸ**

13. Դիմողը գանգատվում էր իր քրեական գործի վարույթի տևողությունից: Նա գտնում էր, որ խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, որը նախատեսում է.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է ... ցանկացած քրեական մեղադրանք, ունի ... դատարանի կողմից ... ողջամիտ ժամկետում ... դատաքննության իրավունք»:

#### **Ա. Քննության ենթակա ժամանակահատվածը**

14. Գործի վարույթն սկսվել է 1992թ. նոյեմբերի 12-ին, երբ դիմողը տեղեկացվել է իրեն առաջադրված մեղադրանքների մասին, և ավարտվել է 1998թ. հունվարի 4-ին, երբ Սալմոնի մագիստրների դատարանի դատավճիռը դարձել է վերջնական:

15. Այդպիսով գործի վարույթը տևել է հինգ տարի, մեկ ամիս և քսաներեք օր:

#### **Բ. Գործի վարույթի ողջամիտ տևողությունը**

16. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ գործի վարույթի տևողությունը պետք է գնահատվի՝ ելնելով գործի մասնավոր հանգամանքներից և հաշվի առնելով Դատարանի նախադեպային իրավունքում սահմանված չափանիշները, մասնավորապես, գործի բարդությունը և դիմողի ու տվյալ գործով զբաղվող մարմինների վարքագիծը (տե՛ս, ի թիվս այլ աղբյուրների, Պելլիսիերն ու Սասին ընդդեմ Ֆրանսիայի [GC], no. 25444/94, կետ 67, ECHR

1999-II, և Ֆիլիպսն ընդդեմ Հունաստանի (no.2) 1997թ. հունիսի 27-ի վճիռը, ժողովածուներ 1997—IV, էջ 1083, կետ 35):

17. Ըստ դիմողի, գործի վարույթի ամբողջ տևողությունը խախտում է «ողջամիտ ժամկետի» պահանջը: Կառավարությունը վիճարկում էր այս պնդումը՝ նշելով, որ մի քանի նիստ հետաձգվել է կամ դիմողի պաշտպանի, կամ վկայի բացակայության, կամ փաստաբանների գործադուլի պատճառով:

18. Ղատարանն առաջին հերթին նկատում է, որ գործը բարդ չէ: Ինչ վերաբերում է դիմողի վարքագծին, Ղատարանը նկատում է, որ 1995թ. մարտի 2-ի նիստը կասեցվել էր մինչև 1996թ. փետրվարի 15-ը՝ դիմողի պաշտպանի կողմից օրինական ձգձգման պատճառով: Նույնիսկ եթե այս կասեցումը պահանջված լիներ դիմողի կողմից և կարելի լիներ նրան պատասխանատու համարել այս ձգձգման համար, դա, միևնույն է, չի արդարացնի ձգձգումը, որը մինչև հաջորդ նիստը տևել է մեկ տարի (տե՛ս Ջանան ընդդեմ Թուրքիայի 1997թ. նոյեմբերի 25-ի վճիռը, ժողովածուներ 1997-VII, էջ 2552, կետ 79): Ղատարանը նաև նկատում է, որ 1994թ. հունիսի 16-ի նիստը հետաձգվել է փաստաբանների՝ 1994թ. հունիսի 13-18-ը տեղի ունեցած գործադուլի պատճառով: Այս կապակցությամբ, Ղատարանը կրկնում է, որ փաստաբանների գործադուլի պատճառով քրեական գործի վարույթի ձգձգումը չի կարող վերագրվել պետությանը, մինչդեռ գործադուլի ավարտից հետո մինչև նոր նիստն ընկած ժամանակահատվածը վերագրվում է իշխանությունների վարքագծին (տե՛ս Պորտինգոնն ընդդեմ Հունաստանի 1998թ. սեպտեմբերի 23-ի վճիռը, ժողովածուներ 1998- VI, էջ 2633, կետ 33): Ղատարանը տեղյակ է այն դժվարություններին, որոնց կարող են հանգեցնել գործադուլները՝ ավելացնելով դատարանների ծանրաբեռնվածությունը (տե՛ս mutatis mutandis, Պապագեորգյան ընդդեմ Հունաստանի 1997թ. հոկտեմբերի 27-ի վճիռը, ժողովածուներ 1997 – VI, էջ 2291, կետ 48): Բացի դրանից, հաշվի առնելով այն փաստը, որ հաջորդ նիստը նշանակվել է 1995թ. մարտի 1-ին, ինչը գործադուլի ավարտից ավելի քան 8 ամիս անց էր, Ղատարանը գտնում է, որ այս ժամանակահատվածը, թերևս մասամբ, պետք է վերագրվի իշխանություններին:

19. Ինչ վերաբերում է պետական մարմինների վարքագծին, Ղատարանը նկատում է, որ եղել է անգործության մի ժամանակահատված, որը չի արդարացվում: Այդ ժամանակահատվածը վերաբերում է 1992թ. նոյեմբերի 12-ի, երբ հետապնդում հարուցելու մասին որոշումը հանձնվել է դիմողին, և 1993թ. դեկտեմբերի 9-ի, երբ տեղի է ունեցել առաջին նիստը, միջև ընկած ժամանակաշրջանին: Ավելին, 1996թ. փետրվարի 15-ի նիստը մագիստրի կողմից կասեցվել է մինչև 1997թ. հունվարի 23-ը և հետագայում՝ մինչև հուլիսի 10-ը՝ մագիստրի նախաձեռնությամբ: Այդ ձգձգումները, որոնք տևել են բավականին երկար ժամանակ՝ 2 տարի և 5 ամիս, չի կարող պատճառաբանվել գործերի այն ծավալով, որը Սալմոնի մագիստրն ստիպված է եղել քննության առնել տվյալ ժամանակահատվածում: Այս կապակցությամբ, Ղատարանը կրկնում է, որ 6-րդ հոդվածը պայմանավորվող պետություններին պարտավորեցնում է իրենց դատական համակարգը կազմակերպել այնպես, որպեսզի կարողանա բավարարել իրեն ներկայացվող պահանջները, այդ թվում՝ գործերը ողջամիտ ժամկետում լսելու պարտավորությունը (Պորտինգոնն ընդդեմ Հունաստանի 1998թ. սեպտեմբերի 23-ի վճիռը, զեկույցներ 1998-VI, էջ 2633, կետ 33):

20. Հաշվի առնելով գործի քննությունն իրականացնող մարմինների վարքագիծը՝ Ղատարանը գտնում է, որ մի դատական աստիճանում գործի քննության 5 տարի մեկ ամիս և 23 օր տևողությունը չափազանց մեծ է: Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-դ հոդվածի 1-ին կետի խախտում:

## **II. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառումը**

21. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը նախատեսում է.

«Եթե Ղատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Ղատարանը, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի բավարարում է տրամադրում»:

## **Ա. Վնասը**

22. Դիմողը հայցում է 4.000.000 ITL՝ գործի քննության յուրաքանչյուր տարում իր կրած ոչ նյութական վնասի դիմաց:

23. Կառավարությունը պնդում է, որ Կոնվենցիայի խախտման ճանաչումը հանդիսանում է բավարար արդարացի բավարարում:

24. Ղատարանն ընդունում է, որ դիմողը քրեական գործի քննության տևողության հետևանքով կրել է ոչ նյութական բնույթի վնաս: Գնահատելով արդարացի հիմքերով և հաշվի առնելով գործի հանգամանքները՝ Ղատարանը դիմողին տրամադրում է 13,000,000 ITL:

## **Բ. Ծախսերը**

25. Դիմողը Հանձնաժողովում և Ղատարանում իր գործը ներկայացնելու կապակցությամբ կատարած ծախսերի դիմաց պահանջում է 22,915,728 ITL: Այս կապակցությամբ, դիմողի փաստաբանները պահանջում էին, որ իրենց վարձատրությունը (11.457.864 ITL յուրաքանչյուրին) ուղղակիորեն վճարվի իրենց: Դիմողը չի պահանջում ներպետական դատարաններում իր կատարած ծախսերի փոխհատուցում:

26. Կառավարությունը հարցի գնահատումը թողնում է Ղատարանին՝ արդարացի հիմքերով:

27. Ինչ վերաբերում է Կոնվենցիայի մարմիններում դիմողի կրած ծախսերին, Ղատարանն արդարացի հիմքերով նրան տրամադրում է 5.000.000 ITL: Ղատարանը նաև նկատում է, որ դիմողի փաստաբանները, ի պատասխան Ղատարանի քարտուղարության պահանջի, չեն ներկայացրել իրենց պաշտպանյալի կողմից ստորագրված հայտարարագիր, որում մատնանշված լինեն այն գումարները, որոնք վճարվել են հաշվին: Այս հանգամանքներում, Ղատարանը չի կարող ընդունել փաստաբանների պահանջը՝ իրենց վարձատրությունն անմիջականորեն իրենց վճարելու վերաբերյալ: Ուստի վճարումը պետք է կատարվի դիմողին:

## **Դ. Տոկոսներ՝ փոխհատուցումը չվճարելու դեպքում**

28. Ղատարանին հայտնի տեղեկության համաձայն՝ սույն վճռի ընդունման օրը Իտալիայում կիրառվող՝ օրենքով սահմանված տոկոսադրույքը տարեկան 3,5 % է:

1. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում,

2. Վճռում է, որ՝

ա) պատասխանող պետությունը սույն վճռի վերջնական դառնալուց հետո եռամսյա ժամկետում, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, դիմողին պետք է վճարի հետևյալ գումարները. 13.000.000 (տասներեք մլն) ITL՝ ոչ նյութական վնասի դիմաց, և 5.000.000 ( հինգ մլն) ITL՝ ծախսերի դիմաց,

բ) սույն վճռից հետո վերոնշյալ եռամսյա ժամկետի լրանալուց հետո պետք է վճարվի տարեկան 3,5% սովորական տոկոս,

Մերժում է արդարացի բավարարման վերաբերյալ՝ դիմողի պահանջների մնացած մասը:

Կատարված է անգլերենով, ծանուցված է գրավոր կարգով 2001 թ. հուլիսի 5-ին՝ Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն:

Էրիկ Ֆրիդեգոգ  
Քարտուղար

Քրիստոս Ռոզակիս  
Նախագահ

ՄԱԼՀՈՒՍՆ ԸՆԴԴԵՄ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
CASE OF MALHOUS v. CZECH REPUBLIC

(զանգատ թիվ 33071/96)

Դատարանի 2001թ. հուլիսի 12-ի

## վճիռը

### Ստրասբուրգ

#### **Մալիուսն ընդդեմ Չեխիայի Հանրապետության գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, նիստ գումարելով որպես Մեծ պալատ՝ դատավորների հետևյալ կազմով.

պրն Լ. Վիլդհաբեր, *Նախագահ*,  
տկն Է. Պալմ,  
պրն Բ. Լ. Ռոզակիս,  
պրն Ա. Պաստոր Ռիդրիխտ,  
պրն Պ. Կ. Ռիս,  
տկն Ֆ. Թուլկենս,  
տկն Վ. Ստրագնիչկա,  
պրն Ս. Բիրսան,  
պրն Պ. Լորենզեն,  
պրն Կ. Յունզվերտ,  
պրն Նիկոլաս Բրատցա,  
պրն Զ. Կասադեվալ,  
պրն Մ. Պելլոնպաս,  
տկն Հ.Ս. Գրեվ,  
տկն Ա. Բ. Բակա,  
պրն Ռ. Մարուստե,  
տկն Ս. Բոտուչարովա, *դատավորներ*,

ինչպես նաև պրն Մ. դե Սալվիա, իրավախորհրդատու Բարտոլոմայոսյան համար,

դռնփակ խորհրդակցություն անցկացնելով 2001թ. հունիսի 27-ին,  
2001թ. հունիսի 27-ին ընդունեց հետևյալ վճիռը:

#### **ՎԱՐՈՒՅԹԸ**

1. Գործը հարուցվել է Չեխիայի քաղաքացի պրն Ժան Մալիուսի («դիմող») կողմից Չեխիայի Հանրապետության դեմ՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») նախկին 25-րդ հոդվածի համաձայն, 1996թ. մայիսի 10-ին Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողով («Հանձնաժողով») ներկայացված գանգատի (թիվ 33071/96) հիման վրա: Քանի որ դիմողը մահացել էր 1998թ. մայիսի 1-ին, Դատարանը թույլ է տվել նրա զարմիկին՝ նշանակված ժառանգ պրն Ժան Բուեկին փոխարինել դիմողին:

2. Դիմողին, իսկ այնուհետև նաև պրն Բուեկին, որին տրամադրվել էր իրավաբանական օգնություն, Դատարանում ներկայացնում էր պրն Թոմաս Շոնֆիլդը, որը Պրահայում գործող փաստաբան է: Չեխական կառավարությանը («Կառավարություն») ներկայացնում էր վերջինիս ներկայացուցիչ պրն Էմերիխ Սլավիկը՝ Արդարադատության նախարարությունից:

3. Դիմողը պնդել է, որ իր սեփականատիրական իրավունքների վերականգնման վարույթի ընթացքում խախտվել են իր իրավունքները, և որ ինքն այդ վարույթի ընթացքում զրկված է եղել անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունքից:

4. Գանգատը Ղատարան է հանձնվել 1998 թ. նոյեմբերի 1-ին, երբ ուժի մեջ էր մտել Կոնվենցիայի թիվ 11 արձանագրությունը (թիվ 11 արձանագրություն, 5-րդ հոդվածի 2-րդ կետ):

5. Գանգատը հանձնվել է Ղատարանի Երրորդ բաժանմունք (Ղատարանի կանոնակարգի 52-րդ կանոնի 1-ին կետ): 1999թ. մայիսի 11-ին այդ Բաժանմունքի պալատը՝ հետևյալ դատավորների կազմով՝ պրն Նիկոլաս Բրատցա, պրն Ժ.-Պ. Կոստա, պրն Լ. Լուկադես, պրն Պ. Կ. Ռիս, պրն Կ. Յունգվերտ, տկն Հ. Ս. Գրեվ, պրն Վ. Ֆուրման, պրն Կ. Թրաժա, ինչպես նաև տկն Ս. Դոլե, ընդդատությունը զիջել է Մեծ պալատին. կողմերից որևէ մեկը չի առարկել դրա դեմ (Կոնվենցիայի 30-րդ հոդված և 72-րդ կանոն):

6. Մեծ պալատի կազմը որոշվել է Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի, ինչպես նաև Ղատարանի կանոնակարգի 24-րդ կանոնի համաձայն:

7. Գանգատի ընդունելիության և ըստ էության քննության արդյունքում ընդունված 2000թ. դեկտեմբերի 13-ի որոշմամբ Մեծ պալատը գանգատը հայտարարել է մասամբ ընդունելի՝ այն մասով, որը վերաբերում էր դիմողի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա հիմնված գանգատին՝ այն մասին, որ իր սեփականատիրական իրավունքի վերականգնման վարույթի ընթացքում ինքը զրկված է եղել հրապարակային լուսման հնարավորությունից:

8. Թե պրն Բուեկը, թե Կառավարությունը ներկայացրել են գործի հանգամանքների վերաբերյալ գրավոր բացատրություններ: Քանի որ Մեծ պալատը, խորհրդակցելով կողմերի հետ, որոշել էր, որ գործի ըստ էության լուսման կարիք չկա (Կանոնակարգի 59-րդ կանոնի 2-րդ կետ), կողմերը միմյանց բացատրություններին պատասխանել են գրավոր: Պրն Բուեկը ներկայացրել է Կոնվենցիայի 41-րդ հոդվածին համապատասխան արդարացի բավարարման պահանջ, ինչի կապակցությամբ Կառավարությունը ներկայացրել է իր դիտողությունները:

## **ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

9. 1949թ. հունիսին դիմողի հորը պատկանող գյուղատնտեսական հողատարածքները հարկադիր օտարման են ենթարկվել Ղոքսիի շրջանային ժողովրդական խորհրդի (Okresni narodni vybor) կողմից՝ Չեխոսլովակիայի Նոր հողային բարեփոխումների մասին թիվ 46/1948 օրենքի («1948 օրենք») հիման վրա: Դիմողի հայրը որևէ փոխհատուցում չէր ստացել: 1957թ. այս հողատարածքների մի մասը, համաձայն 1948թ. օրենքի, սեփականության իրավունքով տրվել է ֆիզիկական անձանց: 1977թ. դիմողի հայրը մահացել է, և վերջինիս գույքի նկատմամբ հաստատվել են դիմողի իրավունքները:

10. Չեխոսլովակիայում կոմունիստական վարչակարգի անկումից հետո 1991թ. հունիսի 24-ին ուժի մեջ է մտել Հողի և գյուղատնտեսական այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունքների կարգավորման մասին թիվ 229/199 օրենքը («Հողի սեփականության օրենք»): Օրենքը սահմանում էր, որ 1948թ. օրենքն այլևս ուժի մեջ չէ, և որ այդ օրենքի հիման վրա առանց փոխհատուցման օտարված գույքը որոշակի պայմաններով կարող է վերադարձվել նախկին սեփականատիրոջը կամ վերջինիս ժառանգին, եթե այդ գույքը դեռևս գտնվում է պետության կամ իրավաբանական անձի տնօրինության ներքո: Այդուհանդերձ, եթե այդպիսի գույքը սեփականության իրավունքով հանձնվել է ֆիզիկական անձանց, նախկին սեփականատերերը կամ նրանց ժառանգները, բացառությամբ որոշ դեպքերի, կարող են հավակնել միայն համարժեք այլ գույքի կամ դրամական փոխհատուցման:

11. Հողի սեփականության մասին օրենքի հիման վրա՝ դիմողն իրավունքների վերականգնման համաձայնագիր է կնքել 2 իրավաբանական անձանց հետ (Հռադեկ Կրալովեի պետական անտառային ձեռնարկություն և Լինի Կրասնա Վեսի գյուղատնտեսական կոոպերատիվ) համապատասխանաբար 1993թ. դեկտեմբերի 10-ին և 1994թ. մայիսի 4-ին: 1994թ. հոկտեմբերի 12-ի երկու որոշումներով Սլադա

Բուլետավի հողային գրասենյակը («Հողային գրասենյակ») մերժել է իրավունքների վերականգնման համաձայնագրերի հաստատումը: Հիմնվելով Հողի սեփականության մասին օրենքի 32-րդ մասի վրա՝ գտել է, որ հողատարածքների մի մասը հատկացվել է տարբեր սեփականատերերի՝ համաձայն 1948թ. օրենքի, և որ այդ սեփականատերերը, լինելով ֆիզիկական անձինք, ապացուցել են իրենց սեփականության իրավունքը՝ հողահատկացման փաստաթղթերի առկայությամբ: Հողային գրասենյակն իր որոշումներն ընդունել է հետևյալ փաստաթղթերի հիման վրա. դիմողի հոր ժառանգության վերաբերյալ Մլադա Բուլետավի նախկին պետական նոտարիատի 1977թ. մայիսի 26-ի որոշումը, դիմողի հոր գույքի բռնագրավման վերաբերյալ Ղոքսիի շրջանային ժողովրդական խորհրդի 1949թ. հունիսի 7-ի որոշումը, բռնագրավման դեմ դիմողի հոր հայցի վերաբերյալ վարույթի՝ Լինի տեղական ժողովրդական խորհրդի 1949թ. հունիսի 7-ի արձանագրությունը, Լիբերելի երկրամասային ժողովրդական խորհրդի 1949 թ. նոյեմբերի 29-ի որոշումը, որով փոփոխությունների է ենթարկվել բռնագրավման մասին որոշումը, քաղվածք Լինիի և Կրասնա Վես շրջաններին վերաբերող հողային մատյանից: Հողային գրասենյակի տրամադրության տակ կար նաև Մլադա Բուլետավի հողային ռեգիստրի գրասենյակի կողմից 1994թ. սեպտեմբերի 23-ին ընդունված հողահատկացման փաստաթղթերի պատճենները:

12. Հողային գրասենյակի 1994 թ. սեպտեմբերի 28-ի ծանուցման տեքստից պարզ է դառնում, որ վերջինս նախատեսել էր լուծումներ անցկացնել 1994թ. հոկտեմբերի 12-ին, որին հրավիրվել էին դիմողը և նրա փաստաբանը, ինչպես նաև պետական անտառային ձեռնարկության, գյուղատնտեսական կոոպերատիվի և Մլադա Բուլետավի հողային ֆոնդի ներկայացուցիչները: Ըստ լուծումների արձանագրության՝ միայն դիմողը և պետական անտառային ձեռնարկության ու գյուղատնտեսական կոոպերատիվի ներկայացուցիչներն էին ներկա գտնվել լսմանը: Դիմողը հրաժարվել է այս վարչական վարույթի վերաբերյալ մեկնաբանություններից և չի ստորագրել արձանագրությունը: Երկու իրավաբանական անձանց ներկայացուցիչներն էլ լքել են լուծումները նախքան դրանց ավարտը:

13. 1994թ. նոյեմբերի 11-ին դիմողը դիմել է Պրահայի մունիցիպալ դատարան («Մունիցիպալ դատարան»)՝ վարչական երկու որոշումների դեմ: Նա պահանջել է ողջ սեփականության վերադարձ՝ վիճարկելով շահագրգիռ ֆիզիկական անձանց կողմից՝ այդ գույքի մի մասի ձեռքբերման փաստի ապացուցված լինելը և պահանջելով հողահատկացման համապատասխան փաստաթղթերին ծանոթանալու հնարավորություն:

14. 1995թ. մայիսի 31-ին Մունիցիպալ դատարանը միավորել է երկու դիմումները և պաշտպանել է 1994թ. հոկտեմբերի 12-ի որոշումները: Դատարանը գտել է, որ Հողային գրասենյակն իրավացիորեն է մերժել գույքը վերադարձնելու վերաբերյալ համաձայնագրերն ամբողջությամբ հաստատելու պահանջը, քանի որ դրանք վերաբերում էին նաև այն գույքին, որը հատկացվել էր ֆիզիկական անձանց, ուստի չէր կարող վերադարձվել սկզբնական սեփականատիրոջը: Վերոհիշյալը հաստատվել է՝ հիմնվելով համապատասխան բոլոր փաստաթղթերի, այդ թվում՝ նաև վարչական գործում առկա՝ հողահատկացման փաստաթղթերի վրա: Դիմողը, ցանկության դեպքում, վարչական վարույթի ընթացքում ունեցել է ցանկացած ժամանակ դրանց ծանոթանալու հնարավորություն՝ վարչական դատավարության օրենսգրքի 23(1) մասով նախատեսված կարգով: Մունիցիպալ դատարանը որոշել է, որ դիմողի գործով լուծումների անհրաժեշտություն չկա, քանի որ փաստերը իրավացիորեն հաստատվել էին վարչական մարմնի կողմից, և իր առջև միայն իրավունքի հարցերն էին: Այս առումով դատարանը վկայակոչել է քաղաքացիական դատավարության օրենսգրքի 250 (F) մասը:

15. Գործը վերադարձվել էր Հողային գրասենյակ՝ համաձայն Հողի սեփականության մասին օրենքի 9 (3) մասի (տե՛ս ստորև՝ կետ 25), որը նոր որոշումը կայացրել է

1995թ. հուլիսի 25-ին: Հողային գրասենյակը, Մունիցիպալ դատարանի կարծիքին համապատասխան, որն իր համար պարտադիր էր քաղաքացիական դատավարության 250 (R) մասի ուժով, հաստատել էր Դիմողի սեփականության իրավունքները այն հողատարածքների նկատմամբ, որոնք չէին հատկացվել ֆիզիկական անձանց 1948թ. օրենքով: Միևնույն ժամանակ տեղեկացրել է դիմողին, որ վերջինս կարող էր փոխհատուցում ակնկալել Հողի սեփականության մասին օրենքի 11-րդ կամ 16-րդ հոդվածների համաձայն, այն հողատարածքների փոխարեն, որոնք իրեն չէին կարող վերադարձվել:

16. 1995թ. սեպտեմբերի 14-ին և հոկտեմբերի 15-ին դիմողը սահմանադրական դիմում է ներկայացրել՝ հայտարարելով, *inter alia*, իր սեփականության իրավունքների խախտման մասին, որ իրեն հնարավորություն չի տրվել ներկայացնել հետագա ապացույցները, և որ Մունիցիպալ դատարանը չի տեղեկացրել իրեն 2 գործերի միավորման մասին: Նա վկայակոչել է Հիմնարար իրավունքների և ազատությունների խարտիայի 36-րդ և 38-րդ հոդվածները:

17. 1995թ. նոյեմբերի 29-ին Սահմանադրական դատարանը մերժել է դիմողի դիմումը՝ իբրև ակնհայտորեն անհիմն: Դատարանը գտել է, որ Մունիցիպալ դատարանի կողմից դիմողի հայցի քննության ժամանակ չի խախտվել նրա՝ դատական պատշաճ վարույթի սահմանադրական իրավունքը: Հաշվի առնելով վարչական որոշումների դատական վերանայման առանձնահատկությունները՝ Դատարանի գործառույթը սահմանափակված է գործի իրավական վերազնահատմամբ՝ վարչական իշխանությունների կողմից հաստատված փաստերի հիման վրա: Դիմողը չէր վկայակոչել Հողային գրասենյակի կողմից անտեսված փաստերը և պարզապես անհամաձայնություն հայտնելով Գրասենյակի որոշման հետ, որևէ նշանակալի առարկություն չէր ներկայացրել դրա հաստատած փաստերի դեմ: Ավելին, ըստ Սահմանադրական դատարանի՝ Մունիցիպալ դատարանը չէր խախտել սահմանադրական իրավունքը՝ գործով առանց լսումների որոշում կայացնելով, քանի որ դա, համաձայն քաղաքացիական դատավարության օրենսգրքի 250(F) մասի, միանգամայն օրինական էր, երբ գործը վերաբերում է միայն իրավունքի հարցերի գնահատմանը:

18. 1998թ. մայիսի 1-ին դիմողը մահացել է: Այնուամենայնիվ, նրա փաստաբանը Հողային գրասենյակ է ներկայացրել Հողի սեփականության մասին օրենքի 11(2) մասի համաձայն փոխհատուցման պահանջ՝ այլ հողատարածք հատկացնելու միջոցով: Ըստ Կառավարության՝ այդ պահանջի կապակցությամբ Հողային գրասենյակը դեռևս որոշում չի կայացրել:

19. 1998թ. հոկտեմբերի 29-ին դիմողի ժառանգության գործով դատական լսումները կասեցվել են Պրահայի երկրորդ շրջանային դատարանի այն եզրակացության հիման վրա, որ դիմողը որևէ գույք չի թողել: Ակնհայտորեն դատարանը տեղյակ չի եղել Հողային գրասենյակի 1995թ. հուլիսի 25-ի որոշման մասին:

20. 2000թ. փետրվարի 22-ին դիմողի զարմիկը՝ պրն Բուեկը, շրջանային դատարանից պահանջել է վերսկսել ժառանգության գործով լսումները: Նա ներկայացրել է իր հորեղբոր 1998թ. մարտի 22-ի կտակը, որով նա նշանակվում էր բացարձակ ժառանգ, մինչդեռ դիմողի երկու չափահաս երեխաները զրկված էին ժառանգությունից: Ժառանգության վերաբերյալ դատական լսումներն ի վերջո վերսկսվել են 2000թ. օգոստոսի 21-ին: 2001թ. մարտի 28-ին Պրահայի երկրորդ շրջանային դատարանը հաստատել է պրն Բուեկի և դիմողի երկու երեխաների միջև կնքված համաձայնությունը՝ հավասար հիմունքներով դիմողի գույքը բաժանելու վերաբերյալ:

## II. Համապատասխան ներպետական օրենսդրությունը

### 1. Հողի սեփականության մասին օրենք

21. Հողի սեփականության մասին օրենքը կարգավորում է 1948 թ. փետրվարի

25-ից 1990թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում պետությանը կամ այլ իրավաբանական անձի զիջված կամ փոխանցված գյուղատնտեսական և այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնումը (1-ին մասում սահմանված): 6 (1) մասը թվարկում է այն գործողությունները, որոնք հանգեցնում են իրավունքների վերականգնման հնարավորության, ներառյալ, (b) ենթակետում, բռնագրավումն առանց փոխհատուցման՝ համաձայն 1948 թ. օրենքի:

22. Ըստ 5-րդ մասի՝ սկզբունքորեն գույքը վերադարձնելու պարտավորություն ունեն պետությունը կամ ցանկացած իրավաբանական անձ, որին տվյալ անշարժ գույքը պատկանել է օրենքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ: Ֆիզիկական անձինք պարտավոր են անշարժ գույքը վերադարձնել օրինական պահանջատիրոջը միայն 8-րդ մասում նախատեսված պայմանների առկայության դեպքում, այն է՝ եթե նրանք կամ նրանց ազգականներն այն ձեռք են բերել պետությունից կամ այլ իրավաբանական անձից՝ տվյալ պահին գործող օրենքի խախտումով կամ ցանկացած կիրառելի գնային նորմերով սահմանվածից ցածր արժեքով, կամ ապօրինի արտոնության հիման վրա: Նման դեպքերում սեփականության իրավունքի վերականգնումն իրականացվում է դատական կարգով՝ օրինական պահանջատիրոջ հայցի հիման վրա, որը պետք է հարուցվի 1992թ. դեկտեմբերի 31-ից ոչ ուշ կամ Հողային գրասենյակի՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման պահանջի վերաբերյալ հայցը մերժելու վերջնական որոշման կայացումից հետո 6 ամսվա ընթացքում: Ցանկացած այլ դեպքում ֆիզիկական անձին հատկացված հողատարածքը, որի նկատմամբ սեփականատիրական իրավունքը հաստատված է հողահատկացման փաստաթղթով, ենթակա չէ վերադարձման (մաս 32(3), որը, սակայն, վերացվել է Չեխիայի Սահմանադրական դատարանի որոշմամբ (թիվ 166/1995, ուժի մեջ՝ 1995 թ. օգոստոսի 15-ից):

23. Ավելին, սեփականության իրավունքի վերականգնում տեղի ունենալ չի կարող Օրենքի 11 (1) մասում շարադրված դեպքերում, որոնք ներառում են, *inter alia*, այն դեպքերը, երբ գույքի անձնական օգտագործման իրավունք է տրվել ֆիզիկական անձին, բացառությամբ 8-րդ մասում նշված հանգամանքների: Նման դեպքերում Հողային գրասենյակն օրինական պահանջատիրոջը, նրա համաձայնությամբ, պետք է հատկացնի այլ համարժեք պետական գույք, նախապատվությամբ միևնույն տարածքում՝ գյուղատնտեսական հողերի վերաբաշխման վերաբերյալ օրենսդրության սկզբունքներին համապատասխան (11(2)մաս):

24. Եթե գույքը չի վերադարձվում և պահանջատերը չի ստանում փոխհատուցում՝ այլ անշարժ գույքի տեսքով, նա ունի ֆինանսական փոխհատուցման իրավունք՝ սահմանված կարգին համապատասխան (մաս 16):

25. Ինչ վերաբերում է ընթացակարգին, Օրենքի 9(1) մասը նախատեսում է, որ օրինական պահանջատերը պետք է հայց ներկայացնի համապատասխան հողային գրասենյակ և միևնույն ժամանակ սեփականության վերադարձման պահանջ ներկայացնի տվյալ պահին անշարժ գույքը տնօրինող ֆիզիկական կամ իրավաբանական անձին: Վերջինս 60-օրյա ժամկետում պետք է պահանջատիրոջ հետ կնքի գույքի հանձնման վերաբերյալ համաձայնագիր («սեփականության վերադարձման համաձայնագիր»): Համաձայն 9(2) մասի՝ սեփականության վերադարձման ցանկացած համաձայնագիր պետք է հաստատվի համապատասխան հողային գրասենյակի կողմից: Եթե հողային գրասենյակը չի հաստատում սեփականության վերադարձման համաձայնագիրը, անձը կարող է դիմել դատարան: Եթե դատարանը նույնպես մերժում է համաձայնագրի հաստատումը, այն պետք է վերադարձվի հողային գրասենյակ՝ գործի վերաբերյալ ըստ էության որոշում կայացնելու համար (9(3) մաս): Այդ որոշումը կրկին դատական վերանայման առարկա է:

## **2. Վարչական դատավարության օրենսգիրք**

26. Հողային գրասենյակներում իրականացվող վարույթները կարգավորվում են թիվ 71/1967 օրենքով (Վարչական դատավարության օրենսգիրք):

27. 3-րդ և 4-րդ մասերը կարգավորում են վարչական մարմնում վարույթի հիմնական սկզբունքները: Վարույթը պետք է ընթանա օրենքին համապատասխան, կողմերին պետք է տրվի իրենց իրավունքների և շահերի արդյունավետ պաշտպանության, գործին առնչվող փաստը վիճարկելու և վարույթի վերաբերյալ առաջարկություններ անելու հնարավորություն: Բացի դրանից, կողմերն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Վարչական մարմնի որոշումները պետք է հիմնված լինեն արժանահավատ եղանակով հաստատված փաստերի վրա:

28. Համաձայն 21-րդ մասի՝ վարչական մարմինը պետք է նշանակի բանավոր լսում, եթե դա պահանջվում է ըստ գործի բնույթի, մասնավորապես, եթե նման լսումը կնպաստի տվյալ դեպքի պարզաբանմանը: Վարույթի կողմերը պետք է ծանուցագրով հրավիրվեն բանավոր քննությանը և քննության ընթացքում նրանց առաջարկվի դիտողություններ և առաջարկություններ անել: Բանավոր քննությունը դռնբաց չէ, եթե այլ բան չի նախատեսվում հատուկ իրավական նորմով, կամ եթե վարչական մարմինը որոշում չի ընդունում քննությունը դռնբաց անցկացնելու մասին:

29. Համաձայն 23 (1) մասի՝ վարչական վարույթի կողմերը և դրանց ներկայացուցիչներն իրավունք ունեն ծանոթանալու փաստաթղթերին և դրանցից քաղվածքներ անելու, բացառությամբ քվեարկության արձանագրությունների:

30. Համաձայն 32 (1) մասի՝ վարչական մարմինները պարտավոր են փաստերը հաստատել հստակ և ճշգրիտ: Այդ նպատակով նրանք պարտավոր են հավաքել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ու տվյալները:

## **3. Քաղաքացիական դատավարության օրենսգիրք**

31. Համաձայն Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ մասի՝ վարչական մարմինների որոշումների օրինակությունը ենթակա է դատական վերահսկողության:

32. Նշված ժամանակահատվածում 250 (Բ) մասը (վերացված է Չեխիայի Սահմանադրական դատարանի թիվ 269/96 որոշմամբ, ուժի մեջ է 1997 թ. մայիսի 1-ից) իրավունք է տալիս դատարանին պարզ գործերով որոշում կայացնել առանց քննության, մասնավորապես, այն դեպքերում, երբ կասկած չկա վարչական մարմնի կողմից փաստերի ճշգրիտ հաստատման վերաբերյալ, և խնդիրը կապված է միայն իրավունքի հարցերի հետ:

33. Համաձայն 250 (I)(1) մասի, դատարանները՝ վարչական մարմինների որոշումները վերանայելիս փաստերը հաշվի են առնում այնպես, ինչպես դրանք եղել են վարչական որոշման ընդունման պահին:

34. Համաձայն 250 (M)(3) մասի՝ դատական վարույթի կողմերը վարչական վարույթի կողմերն են և այն վարչական մարմինը, որի որոշումը պետք է վերանայվի:

35. Համաձայն 250 (Q) մասի, երբ վարչական մարմնի որոշումը վերանայող դատարանը ըստ 250 (F) մասի, որոշում է կայացնում առանց բանավոր քննության, ապա կարող է օգտագործել այնպիսի ապացույց, որն անհրաժեշտ է տվյալ որոշումը վերանայելու համար:

36. Համաձայն 250 (R) մասի, եթե դատարանը չեղյալ է հայտարարում վարչական մարմնի որոշումը, վերջինիս համար նոր որոշում ընդունելիս դատարանի արտահայտած օրինական կարծիքը պարտադիր է:

37. Համաձայն 250 (S) մասի՝ վարչական որոշումը վերանայող դատարանի որոշումը վերանայման ենթակա չէ, բացառությամբ երկրորդ ենթակետում նախատեսված դեպքերի (որոնք տվյալ գործին չեն վերաբերում):

38. Համաձայն 156-րդ մասի՝ որոշումը պետք է հրապարակվի դռնբաց նիստում: Համաձայն հաստատված պրակտիկայի՝ դռնբաց նիստում հրապարակված որոշումը պետք է արձանագրվի արձանագրությունում նաև այն դեպքերում, երբ որոշումը կայացվել է առանց բանավոր քննության:

**4. Հողային կարգավորման և հողային գրասենյակների մասին թիվ 284/1991 օրենք**

39. Համաձայն 11(1) մասի՝ շրջանային հողային գրասենյակները շրջանային գրասենյակների ինքնավար դեպարտամենտներ են:

**5. Շրջանային գրասենյակների մասին օրենքը**

40. Նշված ժամանակահատվածում շրջանային գրասենյակների կարգավիճակը և իրավասությունները կարգավորվել են թիվ 425/1990 օրենքով: Այս ակտը վերացվել է 2000 թ. նոյեմբերի 12-ին՝ շրջանային գրասենյակների մասին նոր (թիվ 147/2000) օրենքի ուժի մեջ մտնելով:

41. Ըստ մաս 2-ի՝ շրջանային գրասենյակները վարչական մարմիններ են, որոնք համապատասխան տարածքում իրականացնում են տեղական պետական կառավարում: Օրենքը կարող է շրջանային գրասենյակներին լիազորել տեղական պետական կառավարում իրականացնել այլ տարածքում: Համաձայն 14-րդ մասի՝ շրջանային գրասենյակների գործունեությունը ուղղորդվում և վերահսկվում է կառավարության կողմից:

42. Համաձայն 8(1) մասի՝ շրջանային գրասենյակի ղեկավարը նշանակվում և ազատվում է կառավարության կողմից՝ ներքին գործերի նախարարի առաջարկությամբ:

43. Համաձայն 8(5) մասի՝ շրջանային գրասենյակների պաշտոնյաները ենթարկվում են գրասենյակների ղեկավարներին:

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ**

**1. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վիճարկվող խախտումը**

44. Դիմողը պնդում է, որ սեփականության վերադարձման վարույթում ինքը գրկված է եղել անկախ և անկողմնակալ դատարանի կողմից հրապարակային քննության հնարավորությունից:

45. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը (այնքանով, որքանով առնչվում է գործին) սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ... ունի ... անկախ և անաչառ դատարանի կողմից ... արդարացի և հրապարակային քննության իրավունք: Վճիռը կամ դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ դրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ այդ են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի անձնական կյանքի պաշտպանությունը, կամ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը»:

**Ա. Կողմերի ներկայացրած բացատրությունները**

**1. Կառավարությունը**

46. Կառավարությունն ընդգծել է, որ սեփականության իրավունքի վերականգնման գործերով հողային գրասենյակները կարող են ընդունել երկու տեսակի որոշումներ. առաջին՝ Հողի սեփականության մասին օրենքի 9 (2) և 9 (3) մասերով նախատեսված որոշում, որը թույլատրում կամ մերժում է սեփականության վերադարձման համաձայնագրի հաստատումը, և երկրորդ՝ Օրենքի 9 (4) մասով նախատեսված որոշում, որը հաստատում է օրինական պահանջատիրոջ սեփականության իրավունքները, եթե համաձայնագրի հաստատումը մերժվել է:

47. Տվյալ դեպքում առաջին տեսակի վարույթում Հողային գրասենյակը, գործելով Վարչական դատավարության օրենսգրքի 21-րդ մասի համաձայն, բանավոր քննություն է անցկացրել 1994թ. հոկտեմբերի 12-ին: Ըստ այդ քննության արձանագրությունների՝ դիմողը և շահագրգիռ երկու իրավաբանական անձանց ներկայացուցիչները ներկա են եղել: Ինչևէ, դիմողը վարույթի ընթացքում հանդես չի եկել վիճելի հողատարածքների պատկանելության վերաբերյալ որևէ նշանակալի առարկությամբ: Ըստ Կառավարության մասնավոր անձանց այս հողատարածքների հատկացման փաստաթղթերը վարույթի սկզբից ի վեր ընդգրկված են եղել վարչական գործում, որին ծանոթանալու հնարավորություն դիմողն ունեցել է: Կառավարությունը նշել է, որ 1994թ. հոկտեմբերի 12-ին քննության ժամանակ դիմողը իրականում հայտարարել է, թե հրաժարվում է սեփականության վերադարձման համաձայնագրից՝ տեղեկանալով այն մասին, որ որոշ հողատարածքներ չեն կարող իրեն վերադարձվել:

48. Հետագա դատաքննության ընթացքում Մունիցիպալ դատարանն ընդամենը քննության է առել այն հանգամանքները, որոնց վրա Հողային գրասենյակը հիմնել է իր որոշումները, և որոնք ակնհայտ էին վարչական գործում, քանի որ խնդրո առարկա հողատարածքների նկատմամբ ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի վերաբերյալ որևէ կասկած չի եղել: Նման պայմաններում, Կառավարության կարծիքով, գործի հրապարակային լսումը չէր կարող որևէ էական նշանակություն ունենալ դիմողի գործի համար: Չնայած Մունիցիպալ դատարանը հրապարակային լսումներ չի անցկացրել, 1995թ. մայիսի 31-ի որոշումը, որով այն պաշտպանում էր սեփականության վերադարձման համաձայնագրերի հաստատումը մերժելու վերաբերյալ Հողային գրասենյակի երկու որոշումները, հրապարակվել էր դռնբաց նիստում՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 156-րդ մասով նախատեսված կարգով:

49. Կառավարությունն ավելացրել է, որ այս որոշումը գործով վերջնական չէ, վիճելի հողատարածքների նկատմամբ դիմողի սեփականության իրավունքների շրջանակի սահմանումը Հողային գրասենյակի հետագա քննության առարկա է: Այս համատեքստում ընդգծվել է, որ դիմողը կարող էր բողոքարկել Հողային գրասենյակի 1995թ. հուլիսի 25-ի որոշումը, ինչպես սահմանված է Հողի սեփականության մասին օրենքի 9(6) մասում: Եթե նա այդպես վարվեր, ապա կարող էր Մունիցիպալ դատարանից պահանջել այդ վարչական որոշումը վերանայել հրապարակային լսումներում: Ավելին, դիմողը կարող էր քաղաքացիական հայց հարուցել իրավասու շրջանային դատարանում՝ համաձայն Հողի սեփականության մասին օրենքի 8(1) մասի՝ վիճարկելով նշված ֆիզիկական անձանց՝ իր հոր սեփականության իրավունքի փոխանցման օրինականությունը:

## 2. *Դիմողը*

50. Դիմողը վիճարկել է Կառավարության փաստարկները, մասնավորապես Կառավարության այն պնդումը, որ վիճելի հողատարածքները ֆիզիկական անձանց հատկացնելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը ընդգրկված են եղել վարչական գործում 1991թ. վարչական քննարկումների հենց սկզբից: Նա նշել է, որ այդ փաստաթղթերը Հողային գրասենյակի կողմից կազմվել են 1994թ. սեպտեմբերի 23-ին, ուստի չէին կարող կցված լինել վարչական գործին նախքան այդ օրը, որն ինքնին ավելի ուշ էր, քան կնքվել էին սեփականության վերադարձման համաձայնագրերը՝ համապատասխանաբար 1993 թ. դեկտեմբերի 10-ին և 1994 թ. մայիսի 4-ին:

51. Դիմողը նշել է նաև, որ Հողային գրասենյակը կամ Մունիցիպալ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ չնայած վիճելի հողերը հարկադիր օտարման էին ենթարկվել 1949թ. և հանձնվել ֆիզիկական անձանց 1957թ., այնուամենայնիվ, մնացել են Պետական անտառային ձեռնարկության կամ գյուղատնտեսական կոոպերատիվի վերահսկողության տակ: Ուստի ֆիզիկական անձինք միայն ձևականորեն էին դրանց սեփականատերը, բայց երբեք չէին օգտագործել դրանք: Դիմողը պնդել է, որ վարչական գործը չի պարունակել հողի սեփականության մասին մանրամասներ ներկայացնող որևէ փաստաթուղթ: Նման պայմաններում չի կարելի ասել, որ գործի փաստերը լիովին հաստատվել են Հողային գրասենյակի կողմից: Այնուհանդերձ, կիրառելով քաղաքացիական դատավարության օրենսգրքի 250 (F) մասը, Մունիցիպալ դատարանը դիմողին զրկել է այս առարկությունները հրապարակային քննության ժամանակ ներկայացնելու հնարավորությունից:

52. Դիմողը նշել է, որ այդ նույն ժամանակաշրջանում Սահմանադրական դատարանը սեփականության վերադարձման մի շարք գործերով չեղյալ է հայտարարել այն որոշումները, որոնք ընդունվել են առանց հրապարակային քննության՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 250 (F) մասով նախատեսված կարգով: Վկայակոչելով Հիմնարար իրավունքների և ազատությունների խարտիայի 38-րդ հոդվածը և Կոնվենցիայի 6-րդ հոդվածը՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ հակասող փաստարկներ պարունակող գործերը չեն կարող համարվել պարզ գործեր: Այսպես, օրինակ, թիվ 2 US 269/95 որոշմամբ Սահմանադրական դատարանը հստակորեն սահմանել է, որ «սեփականության իրավունքի վերականգնման գործերը չեն կարող վերաքննվել առանց հրապարակային քննության՝ հաշվի առնելով այդ գործերի բարդությունը և այն հանգամանքը, որ սեփականության իրավունքից զրկելու նախկին ակտերն ընդունվել են բավականին վաղուց»: Նմանաբար, 1994թ. նոյեմբերի 29-ին Սահմանադրական դատարանը չեղյալ է հայտարարել սեփականության իրավունքի վերականգնման գործով Պրահայի Մունիցիպալ դատարանի վճիռը, որն ընթացել է առանց հրապարակային քննության (որոշում թիվ PL. US 41/94), նշելով, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 250 (F) մասում նշված պարզ գործերն ըստ օրենսդրի՝ այն գործերն են, երբ անհրաժեշտ ապացույցներն առկա են, գործը բավականաչափ պարզ է և խնդրո առարկա են միայն իրավունքի հարցերը:

53. Դիմողը նշել է նաև, որ ինքը չի հրավիրվել Մունիցիպալ դատարանի 1995թ. մայիսի 31-ի վճռի հրապարակմանը:

54. Ի վերջո, դիմողը պնդել է, որ Հողային գրասենյակի 1995թ. հուլիսի 25-ի որոշումը չի կարող այլևս վիճարկվել Մունիցիպալ դատարանում, քանի որ այդ դեպքում գործը կքննվեր իբրև *res judicata*: Այն փաստը, որ սահմանադրական գանգատի ներկայացման պահին պաշտպանության բոլոր հնարավոր միջոցներն արդեն օգտագործվել էին, հաստատվում է նաև Սահմանադրական դատարանի կողմից, որը Սահմանադրական դատարանի մասին օրենքով նախատեսված կարգով, որը պահանջում է պաշտպանության բոլոր միջոցների սպառումը, չի մերժել նրա դիմումը:

## **Բ. Դատարանի գնահատականը**

55. Դատարանը վերահաստատում է, որ դատաքննության հրապարակայնությունը հանդիսանում է 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված հիմնարար սկզբունք: Նման հրապարակայնությունը դատավարության կողմերին պաշտպանում է գաղտնի, հանրային վերահսկողությունից զրկված արդարադատության իրականացումից, սա նաև այն միջոցներից է, որոնք ապահովում են դատարանի նկատմամբ վստահությունը: Արդարադատության հրապարակայնությունը և թափանցիկությունը նպաստում են 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների, մասնավորապես,

արդարացի դատաքննության իրականացմանը, ինչի երաշխավորումը ցանկացած ժողովրդավարական, հասարակության հիմնարար սկզբունքներից է՝ Կոնվենցիայի իմաստով (տե՛ս, օրինակ, Դիենեն ընդդեմ Ֆրանսիայի 1995 թ. սեպտեմբերի 26-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 325-A, էջեր 14-15, կետ 33):

56. Սույն գործում դիմողը սկզբունքորեն իրավունք ուներ հրապարակային քննության, քանի որ 6-րդ հոդվածի 1-ին կետի բացառություններից որևէ մեկը տեղ չէր գտել (տե՛ս՝ Հակասոնի և Ստուրենսոնի 1990 թ. փետրվար 21-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 171-A, էջ 20, կետ 64): Այս բացառությունները չեն վկայակոչվել ներպետական վարույթներում: Մասնավորապես, Սահմանադրական դատարանը, որը, *inter alia*, քննել էր տվյալ գործում հրապարակային քննության բացակայության հարցը, չէր վկայակոչել բացառությունները: Եվ ոչ էլ Կառավարությունն է վկայակոչել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասությունը:

57. Ղատարանը նշում է, որ գործով միակ քննությունը տեղի է ունեցել 1994թ. հոկտեմբերի 12-ին՝ Մլադա Բուլեսլավի հողային գրասենյակում: Ըստ այդ լսումների արձանագրության՝ դիմողի սեփականության իրավունքի վերականգնման պահանջները քննարկվել են իր և երկու իրավաբանական անձանց ներկայացուցիչների ներկայությամբ, որոնցից պահանջվել է դիմողին վերադարձնել նախկինում նրա հորը պատկանած՝ բռնագրավված սեփականությունը: Այնուամենայնիվ, Հողային գրասենյակը չի կարող համարվել այնպիսի մարմին, որը բավարարում է ղատարանի համար անհրաժեշտ անկախության պահանջները՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով: Ղատարանը նշում է, որ Հողային գրասենյակը Շրջանային գրասենյակի ինքնավար վարչություն է. Շրջանային գրասենյակն իրականացնում է տեղական պետական կառավարում՝ Կառավարության վերահսկողության ներքո (տե՛ս կետեր 40-43): Շրջանային գրասենյակի ղեկավարի նշանակումը վերահսկվում է գործադիր իշխանության կողմից, իսկ նրա պաշտոնյաները ենթարկվում են գործադիր իշխանությանը (տե՛ս նաև Կադուբեկն ընդդեմ Սլովակիայի 1998 թ. սեպտեմբերի 2-ի վճիռը, *Վճիռների և որոշումների ժողովածու*, 1998 VI, էջ 2531, կետ 57): Ամեն դեպքում, այս վարչական մարմնի լսումները հրապարակային չէին և բաց էին միայն կողմերի ու նրանց ներկայացուցիչների համար:

58. Հողային գրասենյակի 1994թ. հոկտեմբերի 12-ի որոշումներն իրոք վերանայման ենթակա էին, և դիմողը դիմել է Մունիցիպալ դատարան և Սահմանադրական դատարան: Այնուամենայնիվ, այս ատյաններից և ոչ մեկը հրապարակային քննություն չի անցկացրել: Ինչ վերաբերում է Մունիցիպալ դատարանի վարույթին, Ղատարանը նշում է, որ դիմողը հստակորեն չի պահանջել հրապարակային քննություն: Այստեղ հարցը նրանում է, թե արդյոք պետք է համարել, որ դիմողը հրաժարվել է քննության իր իրավունքից (տե՛ս նախկինում մեջբերված Հակասոնի և Ստուրենսոնի վճիռը, էջեր 20-21, կետ 67, Շուլլեր-Ջգրագենն ընդդեմ Շվեյցարիայի 1993թ. հունիսի 24-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 263, էջեր 19-20, կետ 58, Ջունտորբելն ընդդեմ Ավստրիայի 1993թ. սեպտեմբերի 21-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 268-A, էջ 14, կետ 34):

59. Ղատարանը նշում է, որ Մունիցիպալ դատարանը հրապարակային քննություն չանցկացնելու իր որոշման մեջ չի հիմնվել դիմողի կողմից՝ նման լսումներ անցկացնելու պահանջ չներկայացնելու փաստի վրա: Այն ավելի շուտ *ex officio* քննել է, թե արդյոք քննություն թույլատրելու համար քաղաքացիական դատավարության օրենսգրքի 250 (F) մասում նախատեսված պայմանները առկա՞ են՝ եզրահանգելով, որ սա հենց այդ դեպքն է (տե՛ս կետ 14): Սահմանադրական դատարանը հաստատել էր Մունիցիպալ դատարանի եզրակացությունները: Նման պայմաններում Ղատարանը չի կարող վճռորոշ կարևորություն տալ դիմողի կողմից՝ լսումների հստակ պահանջ չներկայացնելու փաստին, այլ պետք է իրականացնի հարցի ինքնուրույն գնահատում՝ նկատի առնելով և հիմք ընդունելով 6-րդ հոդվածը:

60. Այս առնչությամբ Ղատարանը նշում է, որ Մունիցիպալ դատարանի իրավասությունը չէր սահմանափակվում միայն իրավունքի հարցերով, այլ նաև ընդգրկում էր վարչական մարմնի կողմից հաստատված փաստերի ճշմարտացիության գնահատումը: Մունիցիպալ դատարանը, անհրաժեշտության

դեպքում, նաև կարող էր ընդունել ապացույցներ (տե՛ս կետ 35): Դիմողի՝ Մունիցիպալ դատարան ներկայացրած փաստարկները, իրենց հերթին (տե՛ս կետ 13), ցույց են տալիս, որ նրա դիմումը կարող էր բարձրացնել նաև փաստի հարցեր (տե՛ս Ֆրեդինն ընդդեմ Շվեդիայի 1994թ. փետրվարի 23-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 283, էջ 11, կետ 22): Առանց վիճարկելու վարչական մարմնի կողմից փաստերը հստակ հաստատած լինելու վերաբերյալ Մունիցիպալ դատարանի եզրակացությունը, Դատարանը, հաշվի առնելով նաև դիմողի համար հարցի կարևորությունը, գտնում է, որ տվյալ դեպքում 6-րդ հոդվածի 1-ին կետը պահանջում է բանավոր քննություն այդ ատյանում:

61. Դատարանն այնուհետև նշում է, որ հետագա վարչական վարույթներում Հողային գրասենյակը, որի համար պարտադիր էր Մունիցիպալ դատարանի 1995թ. մայիսի 31-ի որոշումը, այլևս կողմերի մասնակցությամբ գործի քննություն չի կատարել: Դատարանը գտնում է, որ չնայած դիմողը կարող էր պահանջել Հողային գրասենյակի 1995թ. հուլիսի 25-ի որոշման դատական վերանայում, սակայն իրատեսական չէ ենթադրել, որ նման վերանայման վարույթում, որը վերաբերում է Մունիցիպալ դատարանի ավելի վաղ ընդունած եզրակացության հիման վրա կայացված վարչական որոշմանը, դատարանը կնախաձեռներ բանավոր քննություն՝ քննարկելու համար հիմնականում նույն հարցերը, որոնք նախկինում իր կողմից համարվել էին 250 (F) մասի կիրառման ոլորտում ներառվող: Ավելին, Սահմանադրական դատարանը, վերը նշված իր որոշման մեջ, որն ընդունվել էր Հողային գրասենյակի 1995թ. հուլիսի 25-ի որոշման առկայությամբ չի ենթադրում, որ կարող են տարբեր դատողություններ լինել այդ որոշման դատական վերանայման հնարավորության մասին: Այս պայմաններում Դատարանը չի կարող հաշվի առնել Հողային գրասենյակի կողմից ընդունված երկու վարչական որոշումների ենթադրյալ տարբեր բնույթները, որը մատնանշվում է Կառավարության կողմից (տե՛ս կետ 46): Դատարանը հիշեցնում է, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 250 (F) մասը նշված ժամանակահատվածում դեռևս ուժի մեջ էր, և Սահմանադրական դատարանը դրա կիրառումը դիմողի գործում անառարկելի է համարել:

62. Դատարանն այնուհետև նշում է, որ քննությունը Սահմանադրական դատարանում ևս հրապարակային չի եղել: Այնուամենայնիվ, այդ քննարկումները սահմանափակվել են սահմանադրականության խնդրի քննությամբ և չեն ներառել սեփականության իրավունքի վերականգնման վարույթում դիմողի քաղաքացիական իրավունքների ուղղակի և ամբողջական որոշակիացումը: Ուստի, այս վարույթների ժամանակ հրապարակային քննության անցկացումը չէր կարող փոխարինել լսումներին վարույթի վճռական փուլում, երբ դիմողի՝ սեփականության իրավունքի վերականգնման հետ կապված պահանջները քննության էին առնվում ըստ էության: Վերջապես Դատարանը գտնում է, որ դիմողը պարտավոր չէր դատական վարույթ հարուցել Հողի սեփականության մասին օրենքի 8-րդ մասի հիման վրա. տվյալ գործով Դատարանը քննարկում է միայն Օրենքի 9-րդ մասի հիման վրա փաստացի հարուցված գործը:

63. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ տեղ է գտել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, քանի որ սեփականության իրավունքի վերականգնման վարույթում դիմողը զրկված է եղել անկախ և անկողմնակալ ատյանում հրապարակային քննության հնարավորությունից, ինչի դեմ և բողոքում է:

## II. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառումը

64. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.

«Եթե դատարանը գտնում է, որ տեղ է գտել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրության խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական օրենսդրությունն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի բավարարում է տրամադրում»:

## Ա. Վնասը

65. Նյութական վնասի կապակցությամբ դիմողի զարմիկը՝ պրն. Բուեկը, պահանջել է 1,489,051 կրոն (CZK)՝ իբրև փոխհատուցում այն հողերի համար, որոնք չէին կարող վերադարձվել դիմողին, և 588,852 CZK՝ իբրև փոխհատուցում 1994թ. մայիսի 4-ից իր եկամուտների կորստի համար, երբ Լինի Կրասնա Վեսի գյուղատնտեսական կոոպերատիվը սեփականության վերադարձման համաձայնագիր է կնքել դիմողի հետ (տե՛ս կետ 11) մինչև 2001թ.:

66. Կառավարությունը պնդում է, որ որևէ պատճառական կապ չկար դիմողի զարմիկի կողմից պահանջվող գումարի և սեփականության իրավունքի վերականգնման վարույթի ընթացքում տեղ գտած 6-րդ հողվածի 1-ին կետի ենթադրյալ խախտման միջև:

67. Դատարանը հիշեցնում է, որ տվյալ գանգատի ընդունելիության կապակցությամբ որոշումն ընդունելիս ինքը ճանաչել է պրն. Բուեկի locus standi-ն՝ 1998 թ. մայիսի 1-ին դիմողի մահվանից հետո գանգատը ներկայացնելու համար (տես կետ 7): Դատարանը նշում է, որ գանգատը ներկայացնելու՝ պրն. Բուեկի իրավունքի ճանաչումը որևէ կերպ չի ազդել դիմողի կողմից ներկայացված գործի սկզբնական շրջանակի վրա: Դատարանը գտնում է, որ նման հանգամանքներում դիմողի մահվանից հետո գանգատը ներկայացնելու իրավունք ստացած անձը կարող է նաև զբաղեցնել դիմողի տեղը՝ Կոնվենցիայի 41-րդ հոդվածով և Դատարանի կանոնակարգի 60-րդ հոդվածով նախատեսված արդարացի բավարարման առումով:

68. Դատարանը նշում է, որ նյութական վնասի կապակցությամբ պահանջվող գումարը վերաբերում է դիմողին չվերադարձված հողերի արժեքին և այդ հողերի օգտագործումից ակնկալվող եկամուտների կորստին: Դիմողի զարմիկը, փաստորեն, փոխհատուցում է պահանջում իր հորեղբոր գույքի բռնագրավման համար, որը, նրա կարծիքով, ապօրինաբար է կատարվել: Այնուամենայնիվ, դիմողի գանգատը Կոնվենցիային կից թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով անընդունելի է հայտարարվել: Միակ գանգատը, որը մնացել է Դատարանի առջև՝ հարցի ըստ էության լուծման համար, վերաբերել է անկախ և անկողմնակալ ատյանում հրապարակային քննության բացակայությանը՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով: Այս առումով, Դատարանը չի կարող ենթադրել, որ եթե ազգային դատարաններում հրապարակային քննություններ լինեին, ապա իրավունքի վերականգնման գործընթացային արդյունքներն այլ կլինեին:

69. Ավելին, Դատարանը նշում է, որ 1998թ. հունիսի 3-ին դիմողի փաստաբանը Հոդային գրասենյակ է ներկայացրել փոխհատուցման պահանջ՝ այլ հողատարածքներ հատկացնելու համար՝ ըստ Հողի սեփականության մասին օրենքի 11(2) մասի, և որ այս պահանջի կապակցությամբ Հոդային գրասենյակը դեռևս որոշում չի կայացրել (տե՛ս կետ 18), և այն տվյալ գանգատի առարկա չէ:

70. Դատարանը գտնում է, որ դիմողի զարմիկը չի ապացուցել իր պահանջած դրամական փոխհատուցման պատճառական կապը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման հետ, որը հաստատվել է Դատարանի կողմից: Հետևաբար, դրամական վնասի փոխհատուցման նրա պահանջը պետք է մերժվի:

71. Դատարանը նշում է, որ դիմողի զարմիկը 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման առնչությամբ փոխհատուցում չի պահանջել ոչ նյութական վնասի համար: Ամեն դեպքում, այս իրավախախտման հիմքում ընկած Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 250 (F) մասի կիրառումը պրն. Բուեկի վրա անձնապես չի ազդել, քանի որ այս դրույթն արդեն վերացված է եղել այն ժամանակ, երբ նա ստանձնել է հորեղբոր գործի շարունակությունը: Նման հանգամանքներում Դատարանը գտնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման ճանաչումն արդեն իսկ հանդիսանում է բավարար

արդարացի փոխհատուցում ցանկացած ոչ նյութական վնասի համար, որը դիմողին կարող էր պատճառված լինել այս խախտման հետևանքով:

## **Բ. Ծախքեր և ծախսեր**

72. Դիմողի զարմիկը Ղատարանից պահանջել է իրեն հատկացնել 340.420.50 CZK հաշվարկված ներպետական օրենսդրությամբ նախատեսված դրույքաչափով՝ այն բոլոր ծախքերի և ծախսերի կապակցությամբ, որոնք նա կրել է ինչպես ներպետական մարմիններում, այնպես էլ Կոնվենցիայի մարմիններում գործի վարույթի ընթացքում: Պրն Բուեկն այնուհետև նշում է, որ դիմողի ծախսերը փակվել էին Հանձնաժողովի կողմից նրան տրամադրված իրավաբանական օգնության միջոցով (տես կետ 2):

73. Կառավարությունն առարկում է, թե նշված գումարները չափազանցված են, և դիմողի զարմիկը ցույց չի տվել, որ իր նշած ծախսերն անհրաժեշտաբար են կատարվել: Կառավարությունը նշում է նաև, որ դիմողին և նրա զարմիկին Կոնվենցիայի մարմինների կողմից տրամադրվել է իրավաբանական օգնություն:

74. Ղատարանը գտնում է, որ ըստ իր նախադեպային իրավունքի՝ ծախսերի փոխհատուցում ստանալու համար տուժող կողմը պետք է դրանք կրած լինի Կոնվենցիայի խախտումը կանխելու կամ խախտված իրավունքը վերականգնելու ջանքերի ժամանակ, և դա պետք է հաստատվի Ղատարանի կողմից՝ բավարարում ակնկալելու համար: Պետք է նաև ցույց տրվի, որ ծախսերը կատարվել են փաստացիորեն և անհրաժեշտաբար, և որ դրանց քանակը ողջամիտ է՝ (տե՛ս Ֆիլիսն ընդդեմ Հունաստանի (թիվ 1) 1991թ. օգոստոսի 27-ի վճիռը, Շարքեր Ա, էջ 25, կետ 74, ինչպես նաև Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի 1999թ. մարտի 25-ի վճիռը, *Վճիռների և որոշումների ժողովածուներ* 1997-II, էջ 227, կետ 79): Ղատարանը նշում է, որ պրն Բուեկը հաստատել է այն, որ Կոնվենցիայի հաստատություններում վարույթների հետ կապված իր հորեղբոր կրած ծախսերը փակվել են Հանձնաժողովի կողմից նրան տրամադրված իրավաբանական օգնության միջոցով: Նշվում է նաև, որ ժառանգության գործի վարույթի կապակցությամբ կատարված ծախսերը չէին կարող առնչվել սեփականության իրավունքի վերականգնման վարույթի հետ կապված խախտումների կանխման և վերականգնման հետ: Հետևաբար, Ղատարանը գտնում է, որ պահանջի այս մասը պետք է մերժել: Ինչ վերաբերում է Կոնվենցիայի մարմիններում պրն Բուեկին ներկայացնելու հետ կապված ծախսերին, Ղատարանը հիշեցնում է, որ կաշկանդված չէ ներպետական չափորոշիչներով և պրակտիկայով, թեև կարող է որոշ չափով օգտվել դրանցից (տես Տոլստոյ Միլոսլավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության 1995թ. հուլիսի 13-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 316, էջ 83, կետ 77, ինչպես նաև Բասկայան և Օլչուոլլուն ընդդեմ Թուրքիայի 1999թ. հուլիսի 8-ի վճիռը, *Վճիռների և որոշումների ժողովածուներ* 1999-IV, կետ 98): Նշելով, որ գանգատը միայն մասամբ է բավարարվել և, արդարացի հիմքով որոշում կայացնելով, Ղատարանը դիմողի զարմիկին տրամադրում է 85.000 CZK (համարժեք մոտավորապես 17.000 FRF)՝ Հանձնաժողովի և Ղատարանի վարույթներում կրած ծախսերի առնչությամբ. այս գումարը նվազեցվում է Եվրոպայի խորհրդի կողմից իրավաբանական օգնության կարգով ստացված 4,100 ֆրանսիական ֆրանկով, որը, դիմողի զարմիկի ցանկությամբ, պետք է փոխանցվի իր փաստաբանի՝ Չեխիայի Հանրապետությունում ունեցած բանկային հաշվեհամարին:

## **Գ. Տոկոսներ՝ փոխհատուցումը չվճարելու դեպքում**

75. Համաձայն Ղատարանի ունեցած տեղեկությունների, սույն վճռի ընդունման օրը Չեխիայի Հանրապետությունում օրենքով սահմանված կիրառելի տոկոսադրույքը կազմել է տարեկան 8%:

## ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ

1. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:
2. Վճռում է,
  - ա) որ իրավախախտման փաստի ճանաչումն ինքնին հանդիսանում է պատշաճ արդարացի բավարարում այդ իրավախախտման հետևանքով դիմողին պատճառված ցանկացած ոչ նյութական վնասի դիմաց,
  - բ) որ պատասխանող պետությունը պետք է եռամսյա ժամկետում դիմողի զարմիկին վճարի 85.000 (ութսունհինգ հազար) CZK կրած ծախքերի ու ծախսերի համար. այս գումարը նվազեցվում է 4,100 (չորս հազար հարյուր) ֆրանսիական ֆրանկով, որն արդեն վճարվել է Եվրոպայի խորհրդի կողմից իրավաբանական օգնության կարգով,
  - գ) որ եռամսյա ժամկետի լրանալուց հետո, տարեկան 8% տոկոսադրույքի չափով գումար պետք է վճարվի մինչև վճարումների կատարումը,
3. Մերժում է դիմողի զարմիկի ներկայացրած պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով և հրապարակված է դռնբաց նիստում՝ Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 2001թ. հուլիսին:

Մ.դե Սալվիա  
Քարտուլար

L. Վիլդհաբեր

Նախագահ

(Գանգատ թիվ 28341/95)

Դատարանի 2000թ. մայիսի 4-ի  
վճիռը

Ստորաբուլոզ

**Ռոտարուն ընդդեմ Ռումինիայի գործով,**  
Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, նիստ գումարելով որպես Մեծ պալատ, դատավորների հետևյալ կազմով.

Պրն Լ. Վիլդհաբեր, *Նախագահ,*  
Տկն Է. Պալմ,  
Պրն Ա. Պաստոր Ռիդրիխտ,  
Պրն Գ. Բոնելո,  
Պրն Զ. Մակարչիկ,  
Պրն Ռ. Թուրմեն,  
Պրն Ժ.-Պ. Կոստա,  
Տկն Ֆ. Թուլկենս,  
Տկն Վ. Ստրազնիչկա,  
Պրն Փ. Լորենզեն,  
Պրն Մ. Ֆիշբախ,  
Պրն Վ. Բուտկեվիչ,  
Պրն Զ. Կասադեվալ,  
Պրն Ա. Բ. Բակա,  
Պրն Ռ. Մարուստե,  
Տկն Ս. Բոտուչարովա,  
Տկն Ռ. Վեբեր, *ad hoc, դատավոր,*  
ինչպես նաև պրն Մ. Դե Սալվիա, *Քարտուղար,*

2000թ. հունվարի 19-ի և մարտի 29-ի դեմիակ խորհրդակցություններից հետո  
2000թ. մարտի 29-ին ընդունել է հետևյալ վճիռը:

## **ՎԱՐՈՒՅԹԸ**

1. Գործը Դատարան է հանձնվել մինչև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի<sup>1</sup> («Կոնվենցիա») թիվ 11 արձանագրության ուժի մեջ մտնելը կիրառելի դրույթների համաձայն՝ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի («Հանձնաժողով») և Ռումինիայի քաղաքացի պրն Ա. Ռոտարուի («դիմող») կողմից՝ համապատասխանաբար 1999թ. հունիսի 3-ին և 29-ին (թիվ 11 արձանագրության 5-րդ հոդվածի 4-րդ կետ և Կոնվենցիայի նախկին 41-րդ և 48-րդ հոդվածներ):

2. Գործը հարուցվել է՝ Կոնվենցիայի նախկին 25-րդ հոդվածի համաձայն 1995թ. փետրվարի 22-ին Ռումինիայի դեմ Հանձնաժողովին ներկայացված գանգատի (թիվ 2834/155) հիման վրա:

Դիմողը պնդել է, որ խախտվել է իր անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը, ինչը դրսևորվել է նրանում, որ Ռումինիայի հետախուզական ծառայությունները պահել և օգտագործել են իր մասին անձնական բնույթի տեղեկություններ պարունակող գործ: Խախտվել է նաև դատարան դիմելու իր իրավունքը և ներպետական մարմիններից իրավական պաշտպանություն ստանալու իրավունքը, որոնք կարող էին քննության առնել նրա դիմումը՝ իր մասին տեղեկություններ պարունակող գործը ոչնչացնելու կամ դրանում շտկումներ կատարելու վերաբերյալ:

Հանձնաժողովը գանգատն ընդունելի է հայտարարել 1996թ. հոկտեմբերի 21-ին: 1999թ. մարտի 1-ի իր զեկույցում (Կոնվենցիայի նախկին 31-րդ հոդված) Հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ և 13-րդ հոդվածների խախտում:

3. Ղատարանում դիմողին ներկայացնում էին պրն Ի. Օլտեանուն՝ Բուխարեստում (Ռումինիա) գործող իրավապաշտպան, և դիմողի որդին՝ պրն Ֆ. Ռոտարուն: Կառավարությունը ներկայացնում էր իր ներկայացուցիչ տկն Լ. Ռիզոիուն:

4. 1999թ. հուլիսի 7-ին Մեծ պալատի հանձնախումբը որոշել է, որ գործը պետք է քննության առնվի Մեծ պալատի կողմից (Ղատարանի կանոնակարգի 100-րդ կանոնի 1-ին կետ): Պրն Բիրզանը, որը Ռումինիայից ընտրված դատավորն էր և մասնակցել էր Հանձնաժողովում գործի քննությանը, հեռացվել է Մեծ պալատի կազմից (28-րդ կանոն): Կառավարությունը, հետևաբար, նշանակել է տկն Վեբերին՝ որպես ad hoc դատավոր (Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 2-րդ կետ և Ղատարանի կանոնակարգի 29-րդ կանոնի 1-ին կետ):

5. Դիմողը և Կառավարությունը ներկայացրել են իրենց գրավոր բացատրությունները:

6. Գործի լուծմը տեղի է ունեցել դռնբաց նիստում Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում 2000թ. հունվարի 19-ին:

Ղատարանում կողմերին ներկայացնում էին՝

*ա) Կառավարությունը.*

Տկն Ռ. Ռիզոիուն,

*ներկայացուցիչ,*

Պրն Մ. Սելզին՝ իրավական հարցերով խորհրդական, Արդարադատության նախարարություն,

Պրն Թ. Քոլլ Ին, վարչական օգնական,

Եվրոպայի խորհրդում Ռումինիայի

մշտական պատվիրակություն

*խորհրդականներ,*

*բ) դիմողին*

Պրն Ի. Օլտեանաու,

*վիսատաբան*

Պրն Ֆ Ռոտարու

*դիմողի ներկայացուցիչը և որդին*

Ղատարանը լսեց տկն Ռիզոիունին, պրն Սելզինին, պրն Օլտեանունին և պրն Ռոտարունին:

## **ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

### **I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ**

#### **1. Դիմողի դատապարտումը 1948թ.**

7. Դիմողը ծնված՝ 1921թ., մասնագիտությամբ իրավաբան է: Այժմ նա թոշակառու է և ապրում է Բարլադում:

8. 1946թ., կոմունիստական վարչակարգի հաստատումից հետո, Վասլուի շրջանի պրեֆեկտը մերժել է դիմողի, որն այն ժամանակ ուսանող էր, խնդրանքը՝ թույլատրել տպագրելու իր երկու պամֆլետները՝ «Ուսանողի հոգին» և «Բողոքներ»՝ այն հիմքով, որ դրանք արտահայտում են հակապետական տրամադրություններ:

9. Չբավարարվելով այդ մերժումով՝ դիմողը երկու նամակ է գրել պրեֆեկտին, որոնցում նա բողոքում էր նոր ժողովրդական վարչակարգի կողմից իր արտահայտվելու ազատության խախտման դեմ: Այդ նամակների հետևանքով 1948թ. հուլիսի 7-ին դիմողը ձերբակալվել է: 1948թ. սեպտեմբերի 20-ին Վասլուի ժողովրդական դատարանը դիմողին դատապարտել է մեկ տարվա ազատազրկման վիրավորանք հասցնելու մեղադրանքով:

## **2. Թիվ 118/1990 օրենսդրական հրամանագրի հիման վրա գործի հարուցումը**

10. 1989թ. կոմունիստական վարչակարգի տապալումից հետո նոր կառավարությունն ընդունել է թիվ 118/1990 օրենքի ուժ ունեցող հրամանագիրը, որը որոշակի իրավունքներ էր տալիս այն անձանց, ովքեր հետապնդվել էին կոմունիստական վարչակարգի կողմից, և որոնք մասնակցություն չէին ունեցել ֆաշիստական գործունեությանը (տե՛ս ստորև կետ 30):

11. 1990թ. հուլիսի 30-ին դիմողը Բարլադի առաջին աստիճանի դատարանում գործ է հարուցել Ներքին գործերի նախարարության և Պաշտպանության նախարարության, ինչպես նաև Վասլուի շրջկենտրոնի աշխատանքի վարչության դեմ՝ պահանջելով, որ 1948թ. դատավճռով սահմանված իր ազատազրկման ժամկետը հաշվի առնվի իր աշխատանքային ստաժը հաշվարկելիս: Նա նաև պահանջել է, որպեսզի իրեն վճարվի համապատասխան թոշակ:

12. Դատարանը վճիռ է կայացրել 1993թ. հունվարի 11-ին: Հիմնվելով, ի թիվս այլ հանգամանքների, դիմողի կողմից դատարան կանչված վկաների (P.P. և G.D.) հայտարարությունների, ինչպես նաև 1948թ. դատավճռի և Իսպիի համալսարանից ստացված փաստաթղթերի վրա, դատարանը նշել է, որ 1946-1949թթ. դիմողը հետապնդվել է քաղաքական նկատառումներով: Հետևաբար, դատարանը բավարարել է նրա դիմումը և թիվ 118-1990 օրենքի ուժ ունեցող հրամանագրի հիման վրա նշանակել է փոխհատուցում:

13. Այդ դատական գործի վարույթի ընթացքում Ներքին գործերի նախարարությունը դատարան է ներկայացրել 1990թ. դեկտեմբերի 9-ի թվագրումով մի նամակ, որը ստացել էր Ռումինական հետախուզական ծառայությունից (*Serviciul Roman de Informa ii – “ՌՀՕ”*): Նամակում գրված էր.

« Ի պատասխան 1990թ. դեկտեմբերի 11-ի Ձեր նամակին՝ ներկայացնում ենք մեր ստուգումների արդյունքներն Աուրել Ռոտարուի վերաբերյալ, որը բնակվում է Բարլադում.

(ա) վերոհիշյալ անձն Իսպիի համալսարանի ճշգրիտ գիտությունների ֆակուլտետում սովորելու տարիներին եղել է Քրիստոնյա ուսանողների միության անդամ, որը «լեգեոներ»-ական [Legionar] տիպի շարժում է: <sup>3</sup>

<sup>3</sup> Այն է՝ պատկանում էր Միքայել Հրելտակացետի լեգեոնին, որը ծայրահեղ աջաթևյան, ազգայնական, ռումինական հակասեմիթական, աշխարհագորային շարժում էր, որը կազմավորվել էր 1927թ. –ին անջատվելով մեկ այլ նմանատիպ մտայնություններով շարժումից՝ Քրիստոնեական-ազգային պաշտպանության լիգայից: Լեգեոներական շարժումից առաջացան մի շարք քաղաքական կուսակցություններ, որոնք երեսնականներին և քառասնականներին իրենց ազդեցությունը ունեցան Ռումինիայի քաղաքականության վրա:

բ) 1946թ. նա դիմել է Վասիլուի գրաքննչական գրասենյակին՝ իր՝ «Ուսանողի հոգին» և «Բողոքներ» վերտառությամբ երկու պամֆլետները տպագրելու համար թույլտվություն ստանալու խնդրանքով: Սակայն նրա խնդրանքը մերժվել էր այդ պամֆլետներում արտահայտված հակապետական տրամադրությունների պատճառով,

գ) նա անդամակցել է Ազգային գյուղացիական կուսակցության երիտասարդական թևին, ինչը երևում է 1948թ. նրա արած հայտարարությունից,

դ) նա չունի դատվածություն և, հակառակ իր պնդմանը, նշված ժամանակահատվածում ազատագրված չի եղել,

ե) 1946-1948թթ. նա մի քանի անգամ կանչվել է անվտանգության ծառայությունների կողմից՝ իր հայացքների համար և հարցաքննվել իր արտահայտած կարծիքներ առնչությամբ:

### **3. Վնասների հատուցման վերաբերյալ հայցն ընդդեմ ՌՀԾ-ի**

14. Դիմողը հայց է հարուցել ՌՀԾ-ի դեմ՝ հայտարարելով, որ երբևէ չի եղել Ռումինական լեգեոներական շարժման անդամ, որ սովորել է ոչ թե Իսաիի համալսարանի ճշգրիտ գիտությունների ֆակուլտետում, այլ իրավաբանական ֆակուլտետում, և որ ՌՀԾ-ի 1990թ. դեկտեմբերի 19-ի նամակում բովանդակվող մի շարք այլ փաստեր կեղծ են և զրպարտիչ: Համաձայն քաղաքացիական իրավախախտումների համար պատասխանատվության վերաբերյալ՝ քաղաքացիական օրենսգրքի դրույթների, նա ՌՀԾ-ից հատուցում է պահանջել իրեն պատճառված բարոյական վնասի համար: Նա նաև, առանց որևէ կոնկրետ իրավական նորմի վրա հիմնվելու, փորձել է հասնել մի կարգադրության ընդունման, որով ՌՀԾ-ն պետք է ոչնչացներ կամ շտկեր այն գործը, որը տեղեկություններ էր բովանդակում անցյալում իր՝ ենթադրաբար լեգեոներական լինելու վերաբերյալ:

15. 1993թ. հունվարի 6-ի վճռով Բուխարեստի առաջին ատյանի դատարանը մերժել է դիմումը՝ այն հիմնավորմամբ, որ քաղաքացիական իրավախախտումների համար պատասխանատվության վերաբերյալ օրենսդրական դրույթներն այդպիսի հնարավորություն չեն տալիս:

16. Դիմողը բողոքարկել է վճիռը:

17. 1994թ. հունվարի 18-ին Բուխարեստի շրջանային դատարանը գտել է, որ անցյալում դիմողի լեգեոներական լինելու վերաբերյալ տեղեկությունը կեղծ է: Սակայն դատարանը մերժել է բողոքն այն հիմնավորմամբ, որ տվյալ դեպքում ՌՀԾ-ն չի կարող մեղավոր համարվել, քանի որ այն պարզապես վիճարկվող տեղեկության ավանդապահն էր, և մեղքի բացակայության պարզայայտ չեն կարող կիրառվել քաղաքացիական պատասխանատվության վերաբերյալ դրույթները:

Դատարանը նշել է, որ այս տեղեկությունները հավաքվել էին պետության անվտանգության ծառայությունների կողմից, և 1949թ. այդ ծառայությունների լուծարումից հետո այդ տեղեկատվությունը փոխանցվել է Securitate (Պետական անվտանգության բաժնին), որն էլ, իր հերթին, 1990թ. տեղեկատվությունը փոխանցել է ՌՀԾ-ին:

18. 1994թ. դեկտեմբերի 15-ին Բուխարեստի վճռաբեկ դատարանը մերժել է 1994թ. հունվարի 18-ի վճռի դեմ դիմողի բողոքը՝ հետևյալ ձևակերպումներով.

«...Դատարանը գտնում է, որ դիմողի վճռաբեկ բողոքն անհիմն է: Որպես նախկին պետական անվտանգության ծառայությունների արխիվների ավանդապահ՝ ՌՀԾ-ն թիվ 705567/1990 նամակով Ներքին գործերի նախարարությանն է փոխանցել տեղեկություններ դիմողի ուսանողական տարիների գործունեության վերաբերյալ՝ ինչպես այն շարադրվել էր պետական անվտանգության ծառայությունների կողմից: Ուստի, ակնհայտ է, որ դատարանը իրավասու չէ վերացնելու կամ ճշգրտելու ՌՀԾ-ի նամակում նշված տեղեկությունները, քանի որ ՌՀԾ-ն պարզապես նախկին պետական

անվտանգության ծառայությունների արխիվների ավանդապահն է: Մերժելով նրա դիմումը՝ դատական մարմինները չեն խախտել ոչ Սահմանադրության 1-ին հոդվածը, ոչ էլ Քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածը, այլ դատական գործը վարել են հիմնվելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված դատավարական նորմերի վրա:

#### **4. Վնասի հատուցման վերաբերյալ հայցն ընդդեմ դատավորների**

19. 1995թ. հունիսի 13-ին դիմողը վնասների հատուցման վերաբերյալ հայց է հարուցել բոլոր այն դատավորների դեմ, որոնք մերժել էին կեղծ տեղեկությունները ոչնչացնելու կամ ճշգրտելու վերաբերյալ իր դիմումը: Նա իր հայցը հիմնավորել է քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածով, որը վերաբերում է արդարադատության իրականացումը մերժելուն, ինչպես նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածով: Ըստ դիմողի՝ և՛ շրջանային դատարանը, և՛ Վասյուի վճռաբեկ դատարանը մերժել են նրա հայցի գրանցումը:

Այս կապակցությամբ նա 1998թ. օգոստոսի 5-ին նոր գանգատ է ներկայացրել Հանձնաժողովին, որը գրանցվել է որպես թիվ 46597/98 գործ և ներկայումս Ղատարանի վարույթում է:

#### **5. Վերանայման վերաբերյալ դիմումը**

20. 1997թ. հունիսին Արդարադատության նախարարը տեղեկացրել է ՌՀԾ-ի տնօրենին, որ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը դիմողի գանգատն ընդունելի է հայտարարել: Ուստի նախարարը խնդրել է ՌՀԾ-ի տնօրենին մեկ անգամ ևս ստուգել, թե արդյո՞ք դիմողը եղել է լեզեոներական շարժման անդամ, և եթե ապացուցվի, որ այդ տեղեկությունները կեղծ են, ապա այդ մասին տեղեկացնել դիմողին, որպեսզի նա կարողանա այդ փաստն օգտագործել վերանայման վերաբերյալ դիմում ներկայացնելիս:

21. 1997թ. հուլիսի 6-ին ՌՀԾ-ի տնօրենը տեղեկացրել է արդարադատության նախարարին, որ 1990թ. դեկտեմբերի 19-ի նամակում տեղ գտած տեղեկություններն այն մասին, որ դիմողը եղել է լեզեոներական շարժման անդամ, գտնվել են իրենց արխիվներում: Արխիվներում մասնավորապես հայտնաբերվել է Իսաիի անվտանգության գրասենյակի կազմած մի աղյուսակ, որտեղ 165 համարի տակ հայտնաբերվել է ոմն Աուրել Ռոտարուն՝ «Ճշգրիտ գիտությունների ֆակուլտետի ուսանող, Քրիստոնյա ուսանողների միության շարքային անդամ, լեզեոներ»: ՌՀԾ-ի տնօրենը նշել է, որ աղյուսակը թվագրված էր 1937թ. փետրվարի 15-ին և կարծիք է հայտնել, որ՝ «քանի որ այդ ժամանակ պրն Ռոտարուն ընդամենը 16 տարեկան էր, նա չէր կարող լինել ճշգրիտ գիտությունների ֆակուլտետի ուսանող: [Այսպիսով], մենք գտնում ենք, որ տեղի է ունեցել ցավալի սխալ, որը մեզ ստիպել է ենթադրել, որ Բարլադի բնակիչ պրն Աուրել Ռոտարուն և այն անձը, որն աղյուսակում նշված է որպես լեզեոներական տիպի կազմակերպության անդամ, նույն անձնավորությունն է»:

22. Այդ նամակի պատճենն ուղարկվել է դիմողին, որը 1997թ. հուլիսի 25-ին դիմել է Բուխարեստի վերաքննիչ դատարան՝ վերանայելու 1994թ. դեկտեմբերի 15-ի իր որոշումը: Իր դիմումով նա պահանջում էր չեղյալ հայտարարել իրեն գրպարտող փաստաթղթերը, բարոյական վնասի դիմաց վճարել մեկ լեյ, ինչպես նաև փոխհատուցել դատական գործի սկսվելուց ի վեր բոլոր ծախսերն ու վճարումները՝ հաշվի առնելով լեյի արժեզրկումը:

23. ՌՀԾ-ն հայտարարել է, որ վերանայման վերաբերյալ դիմումը պետք է մերժվի, քանի որ ՌՀԾ-ի տնօրենի 1997թ. հուլիսի 6-ի նամակի արդյունքում դիմումը կորցրել է իր նպատակը:

24. 1997թ. նոյեմբերի 25-ի վերջնական որոշմամբ Բուխարեստի վերաքննիչ դատարանը չեղյալ է հայտարարել 1994թ. դեկտեմբերի 15-ի որոշումը և բավարարել է դիմողի հայցը՝ հետևյալ ձևակերպումներով.

«Ռումինիայի հետախուզական ծառայության 1997թ. հուլիսի 5-ի թիվ 4173 նամակից երևում է, որ արխիվներում ( գրադարակ թիվ 53172, հատոր 796, էջ 243) կա մի աղյուսակ, որը պարունակում է լեզեոներական կազմակերպության այն բոլոր անդամների անունները, որոնք բնակվում էին Իասիում, և որում 165 համարի տակ գրանցված է հետևյալը. «Ռոտարու Աուրել- Ճզրիտ գիտությունների ֆակուլտետի ուսանող, Քրիստոնյա ուսանողների միության շարքային անդամ, լեզեոներ»:

Քանի որ այն ժամանակ, երբ կազմվել էր աղյուսակը, այսինքն՝ 1937թ. փետրվարի 15-ին, դիմողը հազիվ 16 տարեկան էր, և քանի որ նա չի հաճախել դասախոսությունների Իասիի համալսարանի Ճզրիտ գիտությունների ֆակուլտետում, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ լեզեոներական կազմակերպության անդամների ցուցակներն ընդգրկող փաստաթղթերի հետագա ստուգումներից պարզվել է, որ «Աուրել Ռոտարուն» ոչ մի կապ չունի Բարլադում բնակվող անձնավորության հետ, որի անձնական տվյալները համընկնում են դիմողի տվյալներին, Ռումինիայի հետախուզական ծառայությունը գտնում է, որ ցավալի սխալ է թույլ տրվել, և որ աղյուսակում նշված անձը դիմողը չէ:

Հաշվի առնելով այս նամակը, Դատարանը գտնում է, որ դա բավարարում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 322-5 հոդվածի պահանջները, քանզի այն ամբողջովին փոխում է նախկինում հաստատված փաստերի էությունը: Փաստաթուղթը պարունակում է մանրամասներ, որոնք հնարավոր չի եղել ներկայացնել դատավարության ավելի վաղ փուլերում՝ դիմողի կամքից անկախ պատճառներով:

Այսպիսով, և Securitate-ի կազմավորման ժամանակը, և այն, թե ինչպես էին կազմակերպվել նախկին անվտանգության ծառայությունները՝ գործի հետ առնչություն չունեցող պարագաներ են: Նմանապես, չնայած իր ճշմարտացիությանը, այն փաստը, որ Ռումինիայի հետախուզական ծառայությունը պարզապես նախկին անվտանգության ծառայությունների արխիվների ավանդապահն էր, նույնպես գործի համար նշանակություն չունի: Կարևոր է այն փաստը, որ ՌՀԾ-ի 1990թ. դեկտեմբերի 19-ի թիվ 705567 նամակը (Ռազմական միավոր թիվ 05007) պարունակում է մանրամասներ, որոնք կապ չունեն դիմողի հետ, ուստի դրանք դիմողի առնչությամբ կեղծ տեղեկություններ են և պահպանվելու դեպքում լրջորեն կվնասեն նրա պատիվն ու արժանապատվությունը:

Վերոհիշյալ հանգամանքներից ելնելով և վերոնշյալ օրենսդրական դրույթների հիման վրա վերաքննության վերաբերյալ դիմումը հիմնավորված է և պետք է բավարարվի: Հետևաբար տվյալ գործի վերաբերյալ կայացված բոլոր նախորդ որոշումները պետք է չեղյալ համարվեն և դիմողի հարուցած հայցը պետք է բավարարվի»:

25. Դատարանը որևէ կարգադրություն չի կայացրել վնասների կամ ծախսերի հատուցման վերաբերյալ:

## **II. ԳՐԾԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ**

### **Ա. Սահմանադրություն**

26. Սահմանադրության՝ գործին առնչվող դրույթները նախատեսում են.

Հոդված 20. «(1) Քաղաքացիների իրավունքներին և ազատություններին վերաբերող սահմանադրական դրույթները պետք է մեկնաբանվեն և կիրառվեն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին և այն դաշնագրերին ու այլ պայմանագրերին համապատասխան, որոնց Ռուսիայի մասնակից է:

(2) Ռուսիայի մասնակցությամբ՝ մարդու հիմնարար իրավունքներին վերաբերող դաշնագրերի ու պայմանագրերի և ներպետական օրենսդրության միջև հակասության դեպքում գերակայում են միջազգային փաստաթղթերը»:

Հոդված 21. «(1) Յուրաքանչյուր ոք կարող է դիմել դատարան՝ իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

(2) Այս իրավունքի իրականացումը չպետք է սահմանափակվի որևէ օրենսդրական ակտով»:

## **Բ. Քաղաքացիական օրենսգիրք**

27. Քաղաքացիական օրենսգրքի՝ գործին առնչվող դրույթները նախատեսում են.

Հոդված 3. «Ղատավորը, որը հրաժարվում է գործը քննության առնել այն հիմքով, որի առումով օրենքը բաց է, անորոշ է կամ ոչ լիակատար, կարող է դատական կարգով հետապնդվել արդարադատության իրականացումը մերժելու մեղադրանքով»:

Հոդված 998. «Յուրաքանչյուր ոք պարտավոր է վերականգնել իր գործողություններով այլոց պատճառված վնասը»:

Հոդված 999. «Յուրաքանչյուր ոք պատասխանատու է ոչ միայն իր գործողություններով, այլ նաև անգործությամբ և անփութությամբ պատճառված վնասի համար»:

## **Գ. Քաղաքացիական դատավարության օրենսգիրք**

28. Քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ գործին առնչվող դրույթները նախատեսում են.

Հոդված 322-5. «Վերջնական որոշման վերանայման վերաբերյալ դիմում կարելի է ներկայացնել... այն դեպքում, եթե որոշման կայացումից հետո հայտնաբերվում է գրավոր ապացույց, որը թաքցրել էր հակառակ կողմը, կամ որը հնարավոր չի եղել ներկայացնել կողմերի կամքից անկախ պատճառներով...»:

## **Դ. Ֆիզիկական և իրավաբանական անձանց մասին 1954թ. N 31 հրամանագիրը**

29. Ֆիզիկական և իրավաբանական անձանց մասին 1954թ. N 31 հրամանագրի՝ գործին վերաբերող դրույթները նախատեսում են.

Հոդված 54. « (1) Յուրաքանչյուր ոք, ում ... պատվի, հեղինակության ... կամ որևէ այլ ոչ տնտեսական իրավունք խախտվել է, կարող է դիմել դատարան՝ պահանջելով արգելել վերը նշված իրավունքները ոտնահարող գործողությունները:

(2) Նմանապես, յուրաքանչյուր ոք, ում այս իրավունքները խախտվել են, կարող է պահանջել դատարանից անօրինական գործողության համար պատասխանատու

անձին կարգադրել կատարելու ցանկացած գործողություն, որը դատարանն անհրաժեշտ է համարում նրա իրավունքները վերականգնելու համար»:

Հոդված 55. «Այն դեպքում, երբ անօրինական գործողությունների համար պատասխանատու անձը դատարանի սահմանած ժամկետում չի կատարում դատարանի կողմից կարգադրված պարտավորությունը՝ վերականգնելու համար խախտված իրավունքը, դատարանը կարող է սահմանել տուգանք, որը պետք է շարունակաբար վճարվի պետությանը ... »

**Ե. 1945թ. մարտի 6-ին իշխանության եկած բռնապետական վարչակարգի կողմից քաղաքական նկատառումներով հետապնդված անձանց որոշակի իրավունքներ տալու մասին 1990թ. մարտի 30-ի թիվ 118 օրենքի ուժ ունեցող հրամանագիրը**

30. Քննարկվող ժամանակահատվածում թիվ 118/ 1990 հրամանագրի՝ գործին առնչվող դրույթները նախատեսում են.

Հոդված 1. «Հետևյալ ժամանակահատվածները հաշվի են առնվում ավագությունը որոշելիս և որպես այդպիսին հաշվվում են կենսաթոշակի հաշվարկման և ավագությունից բխող ցանկացած այլ իրավունքի նպատակի համար: Դրանք 1945թ. մարտի 6-ից հետո ընկած այն ժամանակահատվածներն են, երբ անձը քաղաքական նկատառումներով.

(ա) քաղաքական հանցանքների համար ազատազրկվել է դատական վերջնական որոշմամբ կամ դատավարության ընթացքում գտնվել է կալանքի տակ... »

Հոդված 5. «Յուրաքանչյուր վարչական շրջանում ստեղծվում է նախագահից և առավելագույնս վեց անդամներից բաղկացած հանձնաժողով, որը պետք է ստուգի, թե արդյոք բավարարվել են 1-ին հոդվածի պահանջները...

Նախագահը պետք է ունենա իրավաբանի որակավորում: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են երկու ներկայացուցիչ աշխատանքի և սոցիալական ապահովության վարչություններից, և առավելագույնը չորս ներկայացուցիչ՝ նախկին քաղաքական բանտարկյալների և բռնապետության զոհերի միությունից:»

Հոդված 6. « Շահագրգիռ անձինք կարող են հաստատել, որ իրենք բավարարում են 1-ին հոդվածով սահմանված պայմանները՝ համապատասխան մարմինների կողմից ընդունված պաշտոնական փաստաթղթերի կամ ... ապացուցողական նշանակության որևէ այլ նյութի միջոցով...»

Հոդված 11. «Այս հրամանագրի դրույթները չեն կիրառվում այն անձանց նկատմամբ, ովքեր դատապարտվել են մարդկության դեմ ուղղված հանցանքների համար, կամ այն անձանց նկատմամբ, որոնց առնչությամբ, 5-րդ և 6-րդ հոդվածներում սահմանված ընթացակարգի համաձայն, հաստատվել է, որ նրանք զբաղվել են ֆաշիստական գործունեությամբ՝ ֆաշիստական տիպի կազմակերպությունների շրջանակներում»:

**Զ. Ռումինական հետախուզական ծառայության կազմավորման և գործունեության վերաբերյալ 1992 թ. փետրվարի 24-ի թիվ 14 օրենքը**

31. Ռումինական հետախուզական ծառայության կազմավորման և գործունեության վերաբերյալ 1992 թ. փետրվարի 24-ի թիվ 14 օրենքի (Տպագրվել է 1992 թ. մարտի 3-ի պաշտոնաթերթում – Official Gazette)՝ գործին վերաբերող դրույթները նախատեսում են.

Բաժին 2. «Ռումինական հետախուզական ծառայությունը կազմակերպում և իրականացնում է բոլոր այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են այն տեղեկությունները հավաքելու, ստուգելու և օգտագործելու համար, որոնք անհրաժեշտ են ցանկացած գործողություն բացահայտելու, կանխելու և խափանելու համար, որն օրենքի տեսանկյունից սպառնում է Ռումինիայի ազգային անվտանգությանը»:

Բաժին 8. «Ռումինական հետախուզական ծառայությունն իրավասու է իր տրամադրության տակ ունենալու և օգտագործելու բոլոր համապատասխան ռեսուրսները՝ ապահովելու, ստուգելու, դասակարգելու և պահպանելու համար ազգային անվտանգության տեսանկյունից կարևորություն ներկայացնող տեղեկությունները, ինչպես սահմանված է օրենքով»:

Բաժին 45. «Ռումինական հետախուզական ծառայության բոլոր հատուկ փաստաթղթերը պետք է լինեն գաղտնի, պահվեն իր իսկ արխիվներում և տրամադրվեն միայն Տնօրենի համաձայնությամբ, ինչպես նախատեսված է օրենքով:

Ռումինական հետախուզական ծառայությանը պատկանող փաստաթղթերը, տվյալները և տեղեկությունները չպետք է հրապարակայնացվեն արխիվ մտնելուց հետո քառասուն տարվա ընթացքում:

Ռումինական հետախուզական ծառայությունը, դրանք պահելու և օգտագործելու նպատակով, իր տրամադրության տակ է վերցնում Ռումինիայի տարածքում գործած բոլոր նախկին հետախուզական ծառայություններին պատկանող՝ ազգային անվտանգությանը վերաբերող արխիվները:

Նախկին *Securitate-ի*՝ ազգային անվտանգությանը վերաբերող արխիվները չպետք է հրապարակայնացվեն սույն Օրենքի ընդունումից հետո քառասուն տարվա ընթացքում»:

**Է. Քաղաքացիների համար՝ Securitate-ում իրենց վերաբերյալ պահվող անձնական գործերի մատչելիության մասին 1999թ. հոկտեմբերի 20-ի թիվ 187 օրենքը, որն ընդունվել է այդ կազմակերպության՝ քաղաքական ուստիկանական բնույթը բացահայտելու նպատակով**

32. 1999 թ. դեկտեմբերի 9-ին ուժի մեջ մտած՝ 1999թ. հոկտեմբերի 20-ի թիվ 187 օրենքի՝ գործին առնչվող դրույթները նախատեսում են.

Բաժին 1. «Ռումինիայի բոլոր քաղաքացիները և բոլոր այն օտարերկրացիները, որոնք 1945 թվականից հետո ստացել են Ռումինիայի քաղաքացիություն, իրավունք ունեն ծանոթանալու *Securitate-ի* կողմից պահվող՝ իրենց վերաբերյալ անձնական գործերին:

Այս իրավունքն իրականացվում է պահանջի հիման վրա և հնարավորություն է տալիս տվյալ անձին ստուգել գործը և պատճենահանել դրանում առկա կամ դրա բովանդակությանն առնչվող ցանկացած փաստաթուղթ:

(2) Բացի դրանից, յուրաքանչյուր ոք, որի անձնական գործից պարզվում է, որ նա եղել է *Securitate-ի* հսկողության տակ, պահանջի դեպքում իրավունք ունի իմանալու *Securitate-ի* այն գործակալների և համագործակիցների անունները, որոնք մասնակցել են իր անձնական գործը կազմելուն:

(3) Եթե օրենքով այլ բան սահմանված չէ, (1)և (2) ենթաբաժիններում նշված իրավունքները կարող են տրվել ողջ մնացած ամուսնուն/կնոջը և հանգուցյալի՝ մինչև երկրորդ կարգի ազգականներին:

Բաժին 2. «(1) Հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության մատչելիության իրավունքի ապահովման նպատակով՝ Ռումինիայի բոլոր քաղաքացիները, ... լրատվամիջոցները, քաղաքական կուսակցությունները, ... իրավունք ունեն տեղեկացվելու, եթե հետևյալ պաշտոնները զբաղեցնող կամ դրանց հավակնող անձը եղել է *Securitate-ի* գործակալ կամ համագործակից.

(ա) Ռումինիայի նախագահը,

(բ) Սենատի կամ Պառլամենտի անդամը

... »:

Բաժին 7. Սույն օրենքի դրույթների կատարման համար ստեղծվում է *Securitate-ի* արխիվներն ուսումնասիրող Ազգային խորհուրդ (այսուհետև՝ Խորհուրդ), որի գլխավոր գրասենյակը կլինի Բուխարեստում:

Խորհուրդն ինքնուրույն իրավաբանական անձ է և ենթակա է Պառլամենտի վերահսկողությանը...»:

Բաժին 8. «Խորհուրդը կազմված է տասնմեկ անդամներից բաղկացած կոլեգիայից:

Խորհրդի կոլեգիայի անդամները նշանակվում են Պառլամենտի կողմից՝ պատգամավորական խմբերի առաջարկության հիման վրա՝ ըստ երկու պալատների քաղաքական կազմի... վեց տարի ժամկետով՝ վերընտրվելու իրավունքով»:

Բաժին 13. « (1) Այս օրենքից օգտվողները բաժին 1(1)-ի համաձայն, Խորհրդից կարող են պահանջել.

(ա) թույլ տալ իրենց ծանոթանալ *Securitate-ի* կողմից մինչև 1989թ. դեկտեմբերի 22-ը կազմված գործերից,

(բ) թույլ տալ պատճենահանել գործում առկա փաստաթղթերը,

(գ) տալ տեղեկանքներ *Securitate-ի* անդամ լինելու կամ չլինելու, դրա հետ համագործակցելու կամ չհամագործակցելու վերաբերյալ,

...»:

Բաժին 14. «(1) Բաժին 13 (1)(գ)-ով նախատեսված տեղեկանքները կարող են վիճարկվել Խորհրդի կոլեգիայի առջև»:

Բաժին 15. «(1) Հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններից օգտվելու իրավունքը կարող է իրականացվել Խորհրդին խնդրանք ներկայացնելու միջոցով...:

...

(4) Ի պատասխան 1-ին բաժնով նախատեսված խնդրանքի՝ Խորհուրդն ստուգում է իր տրամադրության տակ եղած վկայությունը և անհապաղ տեղեկանք է տալիս...»:

Բաժին 16. « (1) Յուրաքանչյուր շահառու կամ անձ, որի վերաբերյալ պահանջվել է ստուգում կատարել, կարող է Խորհրդի կոլեգիայի առջև վիճարկել 15-րդ բաժնի համաձայն տրված տեղեկանքը:...

Կոլեգիայի որոշումը կարող է վիճարկվել ... վերաքննիչ դատարանում...»:

## ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ

### 1. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### Ա. Դիմողի՝ տուժողի կարգավիճակը

33. Որպես նախնական բացատրություն, Կառավարությունը հայտարարել է, ինչպես նախկինում հայտարարել է Հանձնաժողովի առջև, որ դիմողն այլևս չի կարող տուժող համարվել՝ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով: Կառավարությունը նշել է, որ դիմողը շահել է իր գործը Բուխարեստի վերաքննիչ դատարանում, քանի որ այդ դատարանն իր 1997թ. նոյեմբերի 25-ի վճռով չեղյալ է հայտարարել Ռումինական հետախուզական ծառայության (*Servicul Roman de Informa ii- "The RIS"*) 1990թ. դեկտեմբերի 9-ի նամակում բովանդակվող մանրամասները, իսկ Կառավարության կարծիքով, դիմողի իրավունքների միակ խախտումը բխում էր հենց այդ նամակից:

Բոլոր դեպքերում, շարունակել է Կառավարությունը, դիմողի տրամադրության տակ այժմ կա 1999թ. հոկտեմբերի 20-ի թիվ 187 օրենքով սահմանված ընթացակարգը, որը տալիս է նրան Կոնվենցիայի կողմից պահանջվող բոլոր երաշխիքներն իր իրավունքները պաշտպանելու համար:

34. Դիմողը պահանջել է, որ Դատարանը շարունակի գործի քննությունը: Նա առարկել է, որ իր գանգատի համար հիմք ծառայած հանգամանքները 1997թ. նոյեմբերի 25-ի որոշման արդյունքում էական փոփոխության չեն ենթարկվել: Նախ և առաջ, Հանձնաժողովի կողմից գանգատի ընդունելիության վերաբերյալ որոշումից հետո գուտ այն փաստի ընդունումը, որ սխալ է կատարվել, չի կարող համարվել Կոնվենցիայի խախտմանը համարժեք հատուցում: Երկրորդ, նա դեռևս չի ստացել թույլտվություն օգտվելու իր անձնական գործից, որը ոչ միայն պահվում էր ՌՀԾ-ի կողմից, այլ նաև օգտագործվում էր: Հետևաբար չի կարելի բացառել, որ նույնիսկ 1997թ. նոյեմբերի 25-ի որոշումից հետո ՌՀԾ-ն կարող էր օգտագործել իր՝ ենթադրյալ լեգեոներական լինելու վերաբերյալ կամ անձնական գործում պարունակվող այլ տեղեկություններ:

35. Դատարանը զոի հասկացության առնչությամբ կրկնում է, որ անձը, որոշակի հանգամանքներում, կարող է իրեն իրավունքների խախտման զոի հայտարարել գաղտնի միջոցների կամ այդ միջոցները թույլատրող օրենսդրության գոյության փաստի իսկ ուժով՝ անկախ այդ միջոցների՝ իր նկատմամբ օգտագործելուց (տե՛ս Կլասը և այլոք ընդդեմ Գերմանիայի 1978թ. սեպտեմբերի 6-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 28, էջ 18, § 34): Ավելին, «դիմողի օգտին կայացված որոշումը կամ միջոցն սկզբունքորեն բավարար չէ նրան տուժողի կարգավիճակից զրկելու համար, եթե ներպետական իշխանությունները հստակ կամ ըստ էության չեն ձանաչել Կոնվենցիայի խախտումը և այնուհետև չեն տրամադրել հատուցում (տես Ամուրն ընդդեմ Ֆրանսիայի 1996թ. հունիսի 25-ի վճիռը, Վճիռների և որոշումների ժողովածուներ, 1996- III, էջ 846, կետ 36, և Դալբանն ընդդեմ Ռումինիայի [GC], թիվ 2814/95, կետ 44 ՄԻԵԿ 1999- VI):

36. Տվյալ գործում Դատարանը նշում է, որ դիմողը բողոքել է իր վերաբերյալ տեղեկություններ բովանդակող գաղտնի գործ պահելու դեմ, որի գոյությունը հրապարակայնորեն բացահայտվել է դատավարության ընթացքում: Դատարանը գտնում է, որ այս առումով նա կարող է համարվել Կոնվենցիայի խախտման զոի:

Դատարանը նաև նշում է, որ Բուխարեստի վերաքննիչ դատարանը 1997թ. նոյեմբերի 25-ի իր վճռում գտել է, որ 1990թ. դեկտեմբերի 19-ի նամակում ներկայացված մանրամասներն այն փաստի մասին, որ դիմողը եղել է լեգեոներ, կեղծ էին և, հավանաբար, վերաբերում էին նույն անունը կրող մեկ այլ անձի, և դրանք չեղյալ է հայտարարել:

Ընդունելով, որ այդ վճիռը որոշ չափով հատուցում է տրամադրել նրա վերաբերյալ կեղծ տեղեկություններ բովանդակող գործի գոյության դիմաց, Դատարանը կարծում է, որ այդ հատուցումը միայն մասնակի է և, համաձայն իր նախադեպային իրավունքի՝ ամեն դեպքում, դա բավարար չէ նրան տուժողի կարգավիճակից զրկելու համար: Բացի գաղտնի գործի առկայությամբ պայմանավորված նրա՝ զոիի կարգավիճակի վերաբերյալ վերոնշյալ նկատառումներից, Դատարանը հաշվի է առնում մասնավորապես հետևյալ հանգամանքները:

Այն տեղեկությունը, որ դիմողը ենթադրաբար եղել է լեգեոներ, դեռ գրանցված է ՌՀԾ-ի գործերում և 1997թ. նոյեմբերի 25-ի վճռի մասին որևէ հիշատակում չկա տվյալ գործի մեջ: Բացի դրանից, վերաքննիչ դատարանը չի արտահայտել որևէ տեսակետ այն փաստի վերաբերյալ (և իրավասու էլ չէր արտահայտելու), որ Ռումինիայի օրենսդրությունը թույլ է տալիս ՌՀԾ-ին պահել և օգտագործել նախկին հետախուզական ծառայությունների կողմից կազմված

գործերը, որոնք տեղեկություններ են բովանդակում դիմողի մասին: Ղատարանին դիմողի ներկայացրած գանգատի առանցքային հարցն այն էր, որ ներպետական օրենսդրությունը բավարար պարզությամբ չի սահմանում ՌՀԾ-ի գործունեության կարգը և քաղաքացիների համար չի նախատեսում ներպետական մարմիններում պաշտպանության արդյունավետ միջոցներ:

Վերջապես, Բուխարեստի վերաքննիչ դատարանը 1997թ. նոյեմբերի 25-ի իր վճռով չի կարգավորել դիմողի բարոյական վնասի և ծախսերի ու ծախսերի հատուցման պահանջը:

37. Ինչ վերաբերում է 1990թ. հոկտեմբերի 20-ի թիվ 187 օրենքին, որի վրա հիմնվում է Կառավարությունը, Ղատարանը գտնում է, որ հաշվի առնելով գործի հանգամանքները, այն չի առնչվում գործին (տես ստորև՝ կետ 71):

38. Ղատարանը գտնում է, որ դիմողը կարող է համարվել «գոհ»՝ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով: Ուստի առարկությունը պետք է մերժվի:

### **Բ. Պաշտպանության ներպետական միջոցների սպառում**

39. Կառավարությունը նաև նշել է, որ գանգատն անընդունելի է, քանի որ չեն սպառվել պաշտպանության ներպետական միջոցները: Կառավարությունը պնդել է, որ դիմողն ունեցել է պաշտպանության միջոց, որը չի օգտագործել, այն է՝ Ֆիզիկական և իրավաբանական անձանց մասին թիվ 31/1954 հրամանագրի հիման վրա հայցի հարուցումը: Համաձայն այդ օրենքի՝ դատարանը կարող է սահմանել ցանկացած միջոց՝ կանխելու համար անձի հեղինակությանը սպառնացող վտանգը:

40. Ղատարանը նշում է, որ առկա է սերտ կապ այս հարցի կապակցությամբ Կառավարության պնդման և Կոնվենցիայի 13-րդ հոդվածի հիման վրա դիմողի ներկայացրած գանգատի հանգամանքների միջև: Հետևաբար, Ղատարանն այս առարկությունը միացնում է գանգատի ըստ էության քննությանը (տես՝ ստորև՝ կետ 70):

## **II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱՒՏՈՒՄԸ**

41. Դիմողը գանգատվում է, որ ՌՀԾ-ն իր տրամադրության տակ ունի և յուրաքանչյուր պահի կարող է օգտագործել իր անձնական կյանքի մասին տեղեկություններ, որոնց մի մասը կեղծ է և զրպարտիչ: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտումը, որը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների և հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով»:

### **Ա. 8-րդ հոդվածի կիրառելիությունը**

42. Կառավարությունը չի ընդունել 8-րդ հոդվածի կիրառելիությունը՝ առարկելով, որ ՌՀԾ-ի 1990թ. դեկտեմբերի 19-ի նամակում պարունակվող տեղեկությունները վերաբերում են դիմողի ոչ թե անձնական, այլ հասարակական կյանքին: Որոշելով զբաղվել քաղաքական գործունեությամբ և տպագրել պամֆլետներ՝ դիմողն անուղղակիորեն հրաժարվել է անձնական կյանքին հատուկ «ծպտյալությունից»: Ինչ վերաբերում է ոստիկանության կողմից նրա

հարցաքննությանը և դատվածության վերաբերյալ տեղեկատվությանը, ապա դրանք հրապարակային տեղեկություններ են:

43. Ղատարանը կրկնում է, որ գաղտնի գործում անհատի անձնական կյանքի վերաբերյալ տեղեկությունների գրանցման և դրանց հրապարակման վրա տարածվում է 8-րդ հոդվածի 1-ին կետը (տե՛ս Լինդերն ընդդեմ Շվեդիայի 1987թ. մարտի 26-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 116, էջ 22, կետ 48 ):

Անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքում որոշ չափով պետք է ներառել նաև այլ անձանց հետ շփվելու և հարաբերվելու իրավունքը: Ավելին, չկա որևէ սկզբունքային պատճառ՝ «անձնական կյանք» հասկացությունից մասնագիտական և գործարարական բնույթի գործունեության բացառումն արդարացնելու համար (տե՛ս Նիեմեթսն ընդդեմ Գերմանիայի 1992թ. դեկտեմբերի 16-ի վճիռը, ժողովածուներ, 1997-III, էջ 1015-16, կետեր 42-46):

Ղատարանն արդեն ընդգծել է այս լայն մեկնաբանության համապատասխանությունը Անձնական տվյալների ավտոմատ մշակման կապակցությամբ անձանց պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի 1981թ. հունվարի 28-ի Կոնվենցիայի հետ, որն ուժի մեջ է մտել 1985թ. հոկտեմբերի 1-ին և որի նպատակն է՝ «...յուրաքանչյուր անհատի համար ապահովել ... իր իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը, և մասնավորապես հարգանքը նրա անձնական կյանքի իրավունքի նկատմամբ՝ կապված իր վերաբերյալ անձնական տվյալների ավտոմատ մշակման հետ» (1-ին հոդված): Նման անձնական տվյալները սահմանված են 2-րդ հոդվածում որպես «ցանկացած տեղեկություն այն անձի վերաբերյալ, որի ինքնությունը հաստատված է կամ կարող է հաստատվել» (տե՛ս Ամմանն ընդդեմ Շվեյցարիայի [GC], թիվ 27798/95, կետ 65 ՄԻԵԽ 2000-...):

Ավելին, հրապարակային տեղեկությունը կարող է ներառվել անձնական կյանքի շրջանակում, երբ այն իշխանությունների կողմից շարունակաբար հավաքվում և պահվում է գործերում: Մեծամասամբ սա վերաբերում է այն դեպքերին, երբ նման տեղեկությունը կապված է անձի հեռավոր անցյալի հետ:

44. Տվյալ գործի կապակցությամբ Ղատարանը նշում է, որ ՌՀԾ-ի 1990թ. դեկտեմբերի 19-ի նամակում բովանդակվող տեղեկությունը վերաբերում է դիմողի կյանքին, մասնավորապես, ուսանողական տարիներին, քաղաքական գործունեությանը և դատվածությանը, որի մի մասը հավաքվել էր ավելի քան 50 տարի առաջ: Ղատարանի կարծիքով, նման տեղեկությունը, որը շարունակաբար հավաքվում և պահվում է պետական գործակալների կողմից, ներառվում է «անձնական կյանքի» շրջանակներում՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների համար: Ղա հատկապես վերաբերում է այս գործին, քանի որ տեղեկությունների մի մասը կեղծ է հայտարարվել և կարող է վնասել դիմողի հեղինակությանը:

Հետևաբար, 8-րդ հոդվածը կիրառելի է:

## **Բ. Համապատասխանությունը 8-րդ հոդվածին**

### ***1. Արդյո՞ք եղել է միջամտություն***

45. Կառավարության ներկայացմամբ՝ անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին միջամտության համար անհրաժեշտ է բավարարել երեք պայման. պետք է հավաքված լինեին տեղեկություններ շահագրգիռ անձի վերաբերյալ, այդ տեղեկությունները պետք է օգտագործված լինեին, և շահագրգիռ անձը պետք է զրկված լիներ դրանք հերքելու հնարավորությունից: Տվյալ գործում, սակայն, և՛ դիմողի վերաբերյալ տեղեկություններ պահելը, և՛ դրանց օգտագործումը տեղի են ունեցել մինչև Ռուսիայի կողմից Կոնվենցիայի

վավերացումը: Իսկ ինչ վերաբերում է տեղեկությունները հերքելու հնարավորության վիճարկվող բացակայությանը, Կառավարությունը նշել է, որ, ընդհակառակը, դիմողն ազատ էր հերքելու ոչ ճիշտ տեղեկությունները, բայց նա չի օգտագործել համապատասխան պաշտպանության միջոցները:

46. Ղատարանը նշում է, որ ինչպես պետական մարմինների կողմից անհատի անձնական կյանքի վերաբերյալ տեղեկությունների հավաքումը և դրանց օգտագործումը, այնպես էլ դրանք հերքելու հնարավորության մերժումը հանդիսանում են միջամտություն Կոնվենցիայի 8-րդ հոդվածով ապահովված անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին (տե՛ս հետևյալ վճիռները՝ Լինդերն ընդդեմ Շվեդիայի, վերը մեջբերված, էջ 22, կետ 48; Կոպն ընդդեմ Շվեյցարիայի, 1998թ. մարտի 25, ժողովածուներ 1998 – II, էջ 540, կետ 53, և Ամանն ընդդեմ Շվեյցարիայի, վերը մեջբերված, կետեր 69 և 80):

Տվյալ գործում ՌՀԾ-ի 1990թ. դեկտեմբերի 19-ի նամակից ակնհայտորեն երևում էր, որ ՌՀԾ-ն պահել է տեղեկություններ դիմողի անձնական կյանքի վերաբերյալ:

Չնայած այդ նամակն իրոք նախորդում է Ռումինիայի համար Կոնվենցիայի՝ 1994թ. հունիսի 20-ին ուժի մեջ մտնելուն, Կառավարությունը չի նշել, որ դրանից հետո ՌՀԾ-ն դադարել է պահել դիմողի անձնական կյանքի վերաբերյալ տեղեկություններ: Ղատարանը նաև նշում է, որ որոշ տեղեկություններ օգտագործվել են նշված ամսաթվից հետո, օրինակ, կապված վերանայման դիմումի հետ, ինչը հանգեցրել է 1997թ. նոյեմբերի 25-ի որոշմանը:

Եվ այդ տեղեկությունը պահելը, և՛ դրա օգտագործումը, դիմողին այդ տեղեկատվությունը հերքելու հնարավորություն տալը մերժելու հետ մեկտեղ, հանդիսանում են միջամտություն նրա ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին, ինչը երաշխավորված է 8-րդ հոդվածի 1-ին կետով:

## 2. Միջամտության հիմնավորվածությունը

47. Հիմնական հարցն այն է, թե արդյո՞ք միջամտությունը հիմնավորված է ըստ 8-րդ հոդվածի 2-րդ կետի: Այս կետը, որը սահմանում է Կոնվենցիայով երաշխավորվող իրավունքից բացառություն, պետք է նեղ մեկնաբանություն ստանա:

Չնայած այն փաստին, որ Ղատարանն ընդունում է, որ ժողովրդավարական հասարակությունում կարող են օրինականորեն գոյություն ունենալ հատուկ ծառայություններ, այն կրկնում է, որ քաղաքացիների գաղտնի վերահսկողության ծառայությունները Կոնվենցիայի համաձայն ընդունելի են միայն այն դեպքում, երբ դրանք հստակորեն անհրաժեշտ են ժողովրդավարական ինստիտուտների պաշտպանության համար (տե՛ս վերը՝ Կլասը և այլոք ընդդեմ Գերմանիայի վճիռը, էջ 21, կետ 42):

48. Եթե նման միջամտությունը չի հակասում 8-րդ հոդվածին, ապա այն պետք է լինի «համաձայն օրենքի», 2-րդ կետին համապատասխան հետապնդի օրինական նպատակ և, ավելին, պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում այդ նպատակին հասնելու համար:

49. Ըստ Կառավարության՝ քննության առարկա միջոցներն օրենքի համաձայն էին: Տվյալ տեղեկությունը ՌՀԾ-ի կողմից հրապարակվել էր թիվ 118/1990 օրենքի ուժ ունեցող հրամանագրով սահմանված ընթացակարգի համաձայն, որը նպատակ ուներ հատուցում տրամադրել կոմունիստական վարչակարգի կողմից հետապնդվող անձանց: Այդ հրամանագրի 11-րդ հոդվածի համաձայն՝ որևէ հատուցում չէր կարող տրամադրվել այն անձանց, որոնք մասնակցել էին ֆաշիստական գործունեության:

50. Ըստ դիմողի՝ իր վերաբերյալ տեղեկություններ պահելն ու օգտագործելն օրենքի համաձայն չէր, քանի որ ներպետական օրենսդրությունը բավականաչափ հստակությամբ չի սահմանում այն հանգամանքները, որոնց դեպքում պետական մարմիններն իրավունք ունեն հավաքելու տեղեկություններ քաղաքացիների անձնական կյանքի մասին և օգտագործելու դրանք: Ավելին,

ներպետական օրենսդրությունը հստակորեն չի սահմանում նաև պետական մարմինների կողմից իրենց այդ իրավունքի իրականացման կարգը և չի նախատեսում որևէ պաշտպանություն այդ իրավունքի չարաշահման դեմ:

51. Ըստ Հանձնաժողովի՝ ներպետական օրենսդրությունը բավականաչափ հստակորեն չի սահմանում այն հանգամանքները, որոնց դեպքում ՌՀԾ-ն կարող է հավաքել, հրապարակել և օգտագործել դիմողի անձնական կյանքին վերաբերող տեղեկություններ:

52. Ղատարանը կրկնում է իր սահմանած նախադեպային իրավունքը, համաձայն որի «օրենքի համաձայն» արտահայտությունը ոչ միայն պահանջում է, որ վիճարկվող միջոցը պետք է հիմք ունենա ներպետական օրենսդրության մեջ, այլ նաև վերաբերում է խնդրո առարկա օրենքի որակին՝ պահանջելով, որ այն մատչելի լինի շահագրգիռ անձի համար և իր հետևանքներով լինի կանխատեսելի (տե՛ս վերը՝ որպես ամենավերջին աղբյուր, Ամանն ընդդեմ Շվեյցարիայի վճիռը, կետ 50):

53. Տվյալ գործում Ղատարանը նշում է, որ 118/1990 օրենքի ուժ ունեցող հրամանագրի 6-րդ հոդվածը, որը Կառավարությունը նշել է որպես վիճարկվող միջոցի հիմք, յուրաքանչյուր անհատի թույլ է տալիս ապացուցել, որ ինքը բավարարում է այն պահանջները, որոնք անհրաժեշտ են որոշակի իրավունքներ ստանալու համար՝ ներկայացնելով համապատասխան մարմինների կողմից տրված պաշտոնական փաստաթղթեր, կամ ապացուցողական արժեք ունեցող որևէ այլ նյութ: Սակայն այս դրույթը չի սահմանում նման ապացույց ձեռք բերելու կարգը և ՌՀԾ-ին չի վերապահում որևէ իրավունք՝ հավաքելու, պահելու կամ հրապարակելու անհատի անձնական կյանքի վերաբերյալ տեղեկություններ:

Ուստի Ղատարանը պետք է որոշի, թե արդյոք ՌՀԾ-ի կազմավորման և գործունեության մասին թիվ 14/1992 օրենքը, որի վրա նույնպես հիմնվում էր Կառավարությունը, կարող է իրավական հիմք ապահովել այս միջոցների համար: Այս կապակցությամբ Ղատարանը նշում է, որ խնդրո առարկա օրենքը լիազորում է ՌՀԾ-ին հավաքել, պահել և օգտագործել ազգային անվտանգությանը վերաբերող տեղեկություններ: Ղատարանը կասկածում է, որ դիմողի վերաբերյալ հավաքված տեղեկություններն առնչվում են ազգային անվտանգությանը: Այնուամենայնիվ, Ղատարանը կրկնում է, որ դա առաջին հերթին ներպետական իշխանությունների և հատկապես դատարանների գործն է մեկնաբանել և կիրառել ներպետական օրենքը (տե՛ս վերը Կոպն ընդդեմ Շվեյցարիայի վճիռը, էջ 541, կետ 59), և նշում է, որ 1997թ. նոյեմբերի 25-ի իր վճռում Բուխարեստի վերաքննիչ դատարանը հաստատել է, որ ՌՀԾ-ի համար՝ որպես նախկին անվտանգության ծառայությունների արխիվների ավանդապահ, այդ տեղեկատվությունը պահելն օրինական էր:

Այսպիսով, Ղատարանը կարող է եզրակացնել, որ դիմողի անձնական կյանքի մասին տեղեկություններ պահելն ունի հիմքեր ռումինական օրենսդրության մեջ:

54. Ինչ վերաբերում է օրենքի մատչելիությանը, Ղատարանը համարում է, որ այդ պահանջը բավարարված է՝ նկատելով, որ թիվ 14/1992 օրենքը տպագրվել է Ռումինիայի պաշտոնական լրագրում՝ 1992թ. մարտի 3-ին:

55. Ինչ վերաբերում է կանխատեսելիության պահանջին, ապա Ղատարանը կրկնում է, որ նորմը «կանխատեսելի» է, եթե այն ձևակերպված է բավարար հստակությամբ, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր անհատի, անհրաժեշտության դեպքում, համապատասխան խորհրդի միջոցով կարգավորել իր վարքագիծը: Ղատարանը շեշտել է այս գաղափարի կարևորությունը գաղտնի վերահսկողության կապակցությամբ հետևյալ ձևակերպմամբ (տե՛ս Մալոնն ընդդեմ Միացյալ Թագավորության 1984թ. օգոստոսի 2-ի վճիռը, էջ 32, կետ 67, կրկնված Ամանն ընդդեմ Շվեյցարիայի, վերը՝ կետ 56):

«Դատարանը ցանկանում է կրկնել, որ «օրենքի համաձայն» արտահայտությունը ոչ թե զուտ վերաբերում է ներպետական օրենքի առկայության, այլ նաև վերաբերում է «օրենքի» որակին՝ պահանջելով, որպեսզի այն համապատասխանի իրավական պետության սկզբունքին, ինչն ակնհայտորեն ամրագրված է Կոնվենցիայի նախաբանում... Ուստի, այդ արտահայտությունը ենթադրում է, և սա հետևում է 8-րդ հոդվածի առարկայից և նպատակից, որ ներպետական օրենսդրությունը պետք է նախատեսի իրավական պաշտպանության միջոցներ՝ ընդդեմ 1-ին կետով պաշտպանվող իրավունքներին պետական մարմինների կամայական միջամտության... Հատկապես, երբ գործադիր իշխանությունն իր լիազորություններն իրականացնում է գաղտնաբար, կամայականության ռիսկն ակնհայտ է:

... Քանի որ գործնականում գաղտնի հսկողության միջոցների կիրառման վերաբերյալ տեղեկատվությունը հասու չէ շահագրգիռ անձանց կամ ընդհանրապես լայն հասարակության վերահսկողությանը, գործադիր իշխանությանը օրենքով վերապահված գործողությունների օրինական ազատությունը՝ արտահայտված անվերահսկելի իշխանությամբ, կհակասի իրավական պետության սկզբունքին: Հետևաբար, օրենքը պետք է բավարար հստակությամբ մատնանշի իրավասու մարմիններին տրված գործողությունների ազատության սահմանները և դրանց իրականացման կարգը՝ հաշվի առնելով խնդրո առարկա միջոցի օրինական նպատակը, որպեսզի անձին տրամադրվի համապատասխան պաշտպանություն կամայական միջամտությունից»:

56. Այսպիսով, այս գործի հիմքում ընկած իրավական նորմերի «որակը» պետք է ուսումնասիրվի՝ մասնավորապես, պարզելու համար, թե արդյոք ներպետական օրենսդրությունը բավարար հստակությամբ է սահմանում այն հանգամանքները, որոնց պարագայում ՌՀԾ-ն կարող է հավաքել և օգտագործել դիմողի անձնական կյանքին վերաբերող տեղեկություններ:

57. Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ թիվ 14/1992 օրենքի 8-րդ բաժինը սահմանում է, որ ազգային անվտանգությանն առնչվող տեղեկությունները կարող են հավաքվել, գրանցվել և պահվել գաղտնի գործերի մեջ:

Ներպետական օրենսդրության մեջ ոչ մի դրույթ չի նախատեսում այս լիազորությունների իրականացման որևէ սահմանափակում: Այսպես, օրինակ, ներպետական օրենսդրությունը չի սահմանում, թե ինչ տիպի տեղեկատվություն կարող է գրանցվել, անձանց ինչ խմբերի նկատմամբ կարելի է կիրառել հսկողության այնպիսի միջոցներ, ինչպիսիք են, օրինակ, տեղեկությունների հավաքումը և պահումը, թե որ հանգամանքների դեպքում կարելի է կիրառել այս միջոցները կամ թե ինչ ընթացակարգով է պետք առաջնորդվել: Նաև, օրենքը այդ տեղեկատվությունը պահելու համար չի սահմանում որևէ ժամկետային սահմանափակում:

Բաժին 45-ը լիազորում է ՌՀԾ-ին պահել և օգտագործել Ռումինիայի տարածքում գործող նախկին հետախուզական ծառայությունների արխիվները և թույլատրում է ՌՀԾ-ի փաստաթղթերի գնումը՝ Տնօրենի համաձայնությամբ:

Դատարանը նշում է, որ այս բաժինը չի պարունակում որևէ հստակ, մանրամասնված դրույթ այդ գործերից օգտվելու իրավունք ունեցող անձանց մասին, ինչպես նաև գործերի բնույթի, ընթացակարգի և ստացված տեղեկությունների օգտագործման մասին:

58. Այն նաև նշում է, որ չնայած օրենքի 2-րդ բաժինը լիազորում է համապատասխան մարմիններին թույլատրել միջամտություններ, որոնք անհրաժեշտ են կանխելու համար ազգային անվտանգությանն սպառնացող վտանգները, այս միջամտությունները թույլատրող հիմքը սահմանված չէ բավարար հստակությամբ:

59. Դատարանը պետք է նաև համոզված լինի, որ գոյություն ունեն համապատասխան և արդյունավետ պաշտպանության միջոցներ ընդդեմ կամայականության, քանի որ ազգային անվտանգության պաշտպանությանն ուղղված գաղտնի հսկողության համակարգը ենթադրում է ժողովրդավարությունը

խաթարելու և նույնիսկ վերացնելու վտանգ՝ այն պաշտպանելու հիմքով (տե՛ս՝ վերը Կլասը և այլոք ընդդեմ Գերմանիայի վճիռը, կետեր 49-50):

Որպեսզի գաղտնի հսկողության համակարգերը համապատասխանեն 8-րդ հոդվածին, դրանք պետք է ունենան օրենքով սահմանված երաշխիքներ, որոնք կիրառվում են համապատասխան ծառայությունների գործունեության վերահսկողության նկատմամբ: Վերահսկողության ընթացակարգերը հնարավորինս հետևողականորեն պետք է հետևեն ժողովրդավարական արժեքներին և, մասնավորապես, իրավական պետության սկզբունքին, որը պարզորոշ ամրագրված է Կոնվենցիայի նախաբանում: Իրավական պետության սկզբունքը ենթադրում է, *inter alia*, որ անհատի իրավունքներին գործադիր իշխանության միջամտությունը ենթակա է արդյունավետ վերահսկողության, որը սովորաբար պետք է իրականացվի դատական իշխանության կողմից, համենայն դեպս գոնե որպես վերջին հնարավորություն, քանի որ դատական վերահսկողությունը տրամադրում է անկախ, անկողմնակալ և պատշաճ ընթացակարգի լավագույն երաշխիքները (տե՛ս վերը՝ Կլասը և այլոք ընդդեմ Գերմանիայի վճիռը, էջ 25-26, կետ 55):

60. Տվյալ գործի կապակցությամբ Ղատարանը նշում է, որ տեղեկություններ հավաքելու և պահելու ռումինական համակարգը չի նախատեսում այդպիսի երաշխիքներ, թիվ 14/1992 օրենքը չի նախատեսում որևէ վերահսկողության ընթացակարգ՝ լինի դա միջոցի կիրառման ժամանակ կամ հետո:

61. Այսպիսով, Ղատարանը գտնում է, որ ներպետական օրենսդրությունը պատշաճ պարզությամբ չի նշում պետական մարմիններին տրամադրված լիազորությունների շրջանակը և իրականացման կարգը:

62. Ղատարանը եզրակացնում է, որ ՌՀԾ-ի կողմից դիմողի անձնական կյանքի վերաբերյալ տեղեկություններ պահելն ու օգտագործելը «օրենքի համաձայն» չէր՝ փաստ, որը բավարար է 8-րդ հոդվածի խախտում հանդիսանալու համար: Ավելին, տվյալ գործում այդ փաստը խոչընդոտում է Ղատարանին վերանայել կիրառված միջոցների հետապնդած նպատակի օրինականությունը և որոշել, թե արդյո՞ք դրանք, ենթադրելով, որ նպատակն օրինական էր, «անհրաժեշտ էին ժողովրդավարական հասարակությունում»:

63. Հետևաբար, տեղի է ունեցել 8-րդ հոդվածի խախտում:

### ***III. Կոնվենցիայի 13-րդ հոդվածի վիճարկվող խախտումը***

64. Դիմողը պնդել է, որ ներպետական մարմինների առջև պաշտպանության որևէ միջոցի բացակայությունը, որի միջոցով հնարավոր կլինեք քննության առնել իր դիմումը՝ իր վերաբերյալ տեղեկություններ պարունակող գործը ոչնչացնելու և սխալ տեղեկությունները շտկելու մասին, հակասում է նաև 13-րդ հոդվածին, որը նախատեսում է.

«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ, եթե խախտումը կատարել է ի պաշտոնե գործող անձը»:

65. Կառավարությունն առարկել է, համարելով, որ դիմողն ստացել է բավարարում 1997թ. նոյեմբերի 25-ի վճռի միջոցով, որում ՌՀԾ-ի 1990թ. դեկտեմբերի 19-ի նամակում պարունակվող մանրամասները հայտարարվել են առ ոչինչ: Ինչ վերաբերում է ՌՀԾ-ի կողմից պահվող գործում տեղեկությունների ոչնչացմանը կամ շտկմանը, Կառավարությունը համարում է, որ դիմողը չի ընտրել համապատասխան պաշտպանության միջոցը: Նա կարող էր հայց հարուցել 1954թ. թիվ 31 հրամանագրի 54-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա, որը դատարանին

լիազորում է սահմանել ցանկացած միջոց՝ վերականգնելու խախտված իրավունքը, տվյալ գործում՝ դիմողի պատիվը և հեղինակությունը:

Կառավարությունը նաև նշել է, որ այժմ դիմողը կարող է հիմնվել 1999թ. թիվ 187 օրենքի վրա՝ Securitate-ի կողմից իր վերաբերյալ բացված գործն ստուգելու համար: Այդ օրենքի 15-րդ և 16-րդ բաժիններին համապատասխան դիմողը կարող էր դատարանում վիճարկել իր գործում առկա տեղեկությունների ճշմարտացիությունը:

66. Հանձնաժողովի կարծիքով, Կառավարությունը չի կարողացել ցույց տալ, որ Ռումինիայի օրենսդրությունը նախատեսում է այնպիսի պաշտպանության միջոց, որն արդյունավետ է ինչպես գործնականում, այնպես էլ իրավաբանորեն, և թույլ կտա դիմողին բողոքել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտման դեմ:

67. Դատարանը կրկնում է, որ հետևողականորեն մեկնաբանել է 13-րդ հոդվածը. ըստ այդ մեկնաբանության՝ 13-րդ հոդվածը պահանջում է ներպետական օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոց միայն այն խախտումների կապակցությամբ, որոնք կարող են համարվել «վիճելի»՝ Կոնվենցիայի տեսանկյունից (տե՛ս, օրինակ, Սակն ընդդեմ Թուրքիայի թիվ 23657/94 վճիռները, կետ 112, ՄԻԵԽ 1999- IV): 13-րդ հոդվածը երաշխավորում է ներպետական մակարդակում այնպիսի պաշտպանության միջոցի առկայություն, որը կապահովի Կոնվենցիայում ամրագրված իրավունքների և ազատությունների ըստ էության իրացումը՝ ինչ կարգով էլ դրանք ապահովված լինեն ներպետական իրավակարգում: Այսպիսով, այս հոդվածը պահանջում է ներպետական պաշտպանության միջոցի նախատեսում, որը թույլ կտա «իրավասու ներպետական մարմին» ինչպես քննության առնել Կոնվենցիայի համապատասխան հոդվածի վերաբերյալ զանգառի առարկան, այնպես էլ տրամադրել պատշաճ հատուցում՝ չնայած Պայմանավորվող պետություններն ունեն որոշակի ազատություն սահմանելու, թե ինչ կարգով պետք է կատարեն այս հոդվածով ստանձնած իրենց պարտավորությունները: Պաշտպանության միջոցը պետք է լինի «արդյունավետ»՝ ինչպես գործնականում, այնպես էլ իրավաբանորեն (տե՛ս Վիլեն ընդդեմ Լիխտենշտեյնի [GC], թիվ 2839/95, կետ 75, ՄԻԵԽ, 1999-VII):

68. Դատարանը նկատում է, որ դիմողի զանգառը՝ ՌՀԾ-ի կողմից, իր անձնական կյանքի վերաբերյալ տեղեկություններ պահելու և օգտագործելու դեմ՝ ի խախտումն 8-րդ հոդվածի, անկասկած կարելի է համարել «վիճելի»: Այդ իսկ պատճառով նա ուներ պաշտպանության ներպետական արդյունավետ միջոցի իրավունք՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի իմաստով:

69. 13-րդ հոդվածում նշված «մարմինը» չի կարող բոլոր դեպքերում լինել դատական մարմին՝ կոնկրետ իմաստով: Սակայն տվյալ մարմնի լիազորությունները և ընթացակարգային երաշխիքները կարևոր են որոշելու համար, թե արդյո՞ք այդ մարմնի առջև պաշտպանության միջոցն արդյունավետ է (տե՛ս վերը նշված Կլասը և այլոք վճիռը, էջ 30, կետ 67):

Բացի դրանից, երբ խոսքը վերաբերում է գաղտնի հսկողությանը, օբյեկտիվ վերահսկողության մեխանիզմը կարող է բավարար լինել այնքան ժամանակ, քանի դեռ միջոցները շարունակում են մնալ գաղտնի: Միայն այն ժամանակ, երբ միջոցները գաղտնագերծվում են, այդ պաշտպանության միջոցները պետք է հասու լինեն անհատին (ibid, էջ 31, կետեր 70-71):

70. Տվյալ գործում Կառավարությունը հայտարարել է, որ դիմողը կարող էր հայց հարուցել թիվ 31/1954 հրամանագրի 54-րդ հոդվածի հիման վրա: Դատարանի կարծիքով, այս պնդումն անընդունելի էր:

Առաջին հերթին, Դատարանը նշում է, որ հրամանագրի 54-րդ հոդվածը նախատեսում է ընդհանուր բնույթի հայցեր դատարաններում, որոնք կոչված են պաշտպանելու ապօրինի խախտված ոչ նյութական իրավունքները: Սակայն, Բուխարեստի վերաքննիչ դատարանն իր 1997թ. նոյեմբերի 25-ի վճռում նշել է, որ ՌՀԾ-ն իրավասու էր՝ համաձայն ներպետական օրենսդրության, պահելու դիմողի վերաբերյալ տեղեկություններ, որոնք փոխանցվել էին նախկին հատուկ ծառայությունների գործերի հետ:

Երկրորդ, Կառավարությունը չի հաստատել որևէ ներպետական որոշման գոյություն, որը կարող էր նախադեպ հանդիսանալ այս հարցում: Այսպիսով ցույց չի տրվել, որ այդ պաշտպանության միջոցը կարող էր արդյունավետ լինել: Հաշվի առնելով այս ամենը, Կառավարության նախնական առարկությունը պետք է մերժվի:

71. Ինչ վերաբերում է թիվ 187/1999 օրենքով նախատեսված մեխանիզմին, ենթադրելով, որ ստեղծված է նշված խորհուրդը, Ղատարանը նշում է, որ ոչ այն դրույթները, որոնց վրա հիմնվում է պատասխանող Կառավարությունը, ոչ էլ այդ օրենքի այլ դրույթներ հնարավորություն չեն տալիս վիճարկելու պետական գործակալների կողմից անհատի անձնական կյանքի վերաբերյալ տեղեկություններ պահելը կամ դրանց ճշմարտացիությունը: 15-րդ և 16-րդ բաժինների համաձայն ստեղծված վերահսկողական մեխանիզմը վերաբերում է միայն Securitate-ի որոշ համագործակիցների և գործակալների ինքնության վերաբերյալ տեղեկությունների հրապարակմանը:

72. Ղատարանը չի տեղեկացվել Ռումինիայի օրենսդրության այլ դրույթների մասին, որոնք թույլ են տալիս վիճարկել հետախուզական ծառայությունների կողմից դիմողի անձնական կյանքի վերաբերյալ տեղեկություններ պահելը կամ հերքել դրանց բովանդակությունը:

73. Ղատարանը, հետևաբար, եզրակացնում է, որ դիմողը հանդիսանում է 13-րդ հոդվածի խախտման գոհ:

#### **IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄԸ**

74. Դիմողը բողոքել է, որ դատարանների մերժումը՝ քննության առնել ծախսերի և վնասների վերաբերյալ իր դիմումները, խախտել է դատարանում գործը լսելու իր իրավունքը՝ հակասելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածին, որ սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ... իրավունք ունի ... դատաքննության ... դատարանի կողմից...»:

75. Կառավարությունը որևէ բացատրություն չի ներկայացրել:

76. Հանձնաժողովը որոշել է գանգատը քննության առնել պետությունների կողմից 13-րդ հոդվածով ստանձնած ավելի ընդհանուր պարտավորության հիման վրա, ըստ որի՝ պետությունները պարտավոր են տրամադրել արդյունավետ պաշտպանության միջոց, որը հնարավորություն կտա բողոքել ընդդեմ Կոնվենցիայի խախտման:

77. Ղատարանը նշում է, որ բացի վերը քննված գանգատից՝ կապված այն հանգամանքի հետ, որ չի եղել պաշտպանության այնպիսի միջոց, որով կարելի կլիներ դիմել իր վերաբերյալ տեղեկություններ բովանդակող գործը ոչնչացնելու կամ շտկելու պահանջով, դիմողը նաև բողոքել է, որ Բուխարեստի վերաքննիչ դատարանը, չնայած նրան, որ օրինականորեն ընդունել է վնասների և ծախսերի հատուցման պահանջը, 1997թ. նոյեմբերի 25-ի վերանայման վճռում հարցն ըստ էության չի լուծվել:

78. Կասկածից վեր է, որ ոչ նյութական վնասների և ծախսերի հատուցման վերաբերյալ դիմողի հայցը քաղաքացիական էր՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, և Բուխարեստի վերաքննիչ դատարանն իրավասու էր քննության առնելու այն (տե՛ս Ռոբինսոն ընդդեմ Միացյալ Թագավորության 1997թ. սեպտեմբերի 23-ի վճիռը, ժողովածուներ 1997-V, էջ 1809, կետ 29):

Ղատարանը, հետևաբար, գտնում է, որ վերաքննիչ դատարանի թերացումը՝ քննության առնելու նշված հայցը, խախտել է դիմողի արդար դատաքննության իրավունքը՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով (տե՛ս Ռուիզ

Տորիջան ընդդեմ Իսպանիայի 1994թ. դեկտեմբերի 9-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 303-Ա, էջ 12, կետ 30):

79. Ուստի, նաև տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

## **V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ**

80. Դիմողն ակնկալել է արդարացի բավարարում՝ ըստ Կոնվենցիայի 41-րդ հոդվածի, որը սահմանում է.

«Եթե Ղատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Ղատարանն անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի բավարարում է տրամադրում»:

### **Ա. Վնասներ**

81. Դիմողը պահանջել է 20.000.000.000 լեյ (ROL)՝ ի հատուցում բարոյական վնասի, որը պատճառվել է իր մասին կեղծ և զրպարտիչ տեղեկություններ հրապարակելու և իշխանությունների կողմից մի քանի տարի շարունակ սխալն ընդունելը և շտկելը մերժելու արդյունքում ձևավորված անվստահության հետևանքով:

82. Կառավարությունն առարկել է այս պահանջի դեմ՝ այն համարելով անհիմն և հատկապես հաշվի առնելով, որ դիմողն այս հարցը չի բարձրացրել ներպետական դատարաններում:

83. Ղատարանն ուշադրություն է հրավիրում իր նախադեպային իրավունքի վրա, համաձայն որի՝ սոսկ այն փաստը, որի դիմողը ներպետական դատարաններում չի բարձրացրել վնասների հատուցման պահանջ, չի ենթադրում, որ Ղատարանը պետք է մերժի այդ պահանջները՝ անհիմն լինելու պատճառով, այն, ավելին, խոչընդոտ է ստեղծում դրանց ընդունելիության համար (տե՛ս Դե Վիլդը, Ումսը և Վերսիպն ընդդեմ Բելգիայի 1972թ. մարտի վճիռը 50-րդ հոդված, Շարքեր Ա, թիվ 14, էջ 10, կետ 20): Բացի դրանից, տվյալ գործում Ղատարանը նշում է, որ հակառակ Կառավարության պնդմանը, դիմողը ներպետական դատարաններում փորձել է ստանալ իր կրած ոչ նյութական վնասների հատուցում մեկ լեյ խորհրդանշական գումար, բայց այս պահանջին Ռումինիայի դատարանները չեն անդրադարձել:

Այնուհետև Ղատարանը նշում է, որ Բուխարեստի վերաքննիչ դատարանը չեղյալ է հայտարարել ենթադրյալ զրպարտչական տեղեկությունները՝ այդպիսով մասամբ բավարարելով դիմողի պահանջները: Սակայն Ղատարանը գտնում է, որ դիմողը փաստացի կրել է ոչ նյութական վնաս՝ հաշվի առնելով ի խախտումն 8-րդ հոդվածի գաղտնի գործերի համակարգի առկայությունը, պաշտպանության արդյունավետ միջոցի բացակայությունը, արդար դատաքննության մերժումը, ինչպես նաև այն փաստը, որ հարկավոր էին տարիներ մինչև դատարանը կորոշեր, որ իրավասու է չեղյալ հայտարարել զրպարտող տեղեկությունները:

Ղատարանն այսպիսով գտնում է, որ խնդրո առարկա դեպքերը հանգեցրել են լուրջ միջամտության պրն Ռոտարուի իրավունքներին և, որ 50.000 (\$րանսիական \$րանկ) գումարն արդարացի հատուցում է կրած ոչ նյութական վնասների դիմաց: Այդ գումարը պետք է փոխանակվի ռումինական լեյի այն փոխանակման կուրսով, որը կիրառվում է հարցի լուծման պահին:

### **Բ. Ծախքեր ու ծախսեր**

84. Դիմողն ակնկալել է 38.000.000 ROL՝ որպես փոխհատուցում, որը բաշխել է հետևյալ կերպ.

(ա) 30.000.000 ROL, որը համարժեք է ներպետական վարույթների ընթացքում կրած ծախսերին, ներառյալ՝ 20.000.000 ROL՝ որպես ճանապարհածախս և օրապահիկ գումար՝ կապված Իասի և Բուխարեստ այցելությունների հետ, և 10.000.000 ROL՝ այլ ծախսեր (դրոշմատուրք, հեռախոսազանգեր, պատճենահանում և այլն),

(բ) 8.000.000 ROL, որը համարժեք է Կոնվենցիայի հաստատությունների առջև կրած ծախսերին, ներառյալ՝ 6.000.000 ROL թարգմանչական և քարտուղարական ծախսեր, և 1.250.000 ROL՝ որպես Բարլադից Բուխարեստ ճանապարհածախս, ինչպես նաև 1.000.000 ROL՝ դիմողի որդուն Ֆրանսիա մուտքի թույլտվության համար:

85. Կառավարությունն այդ գումարը համարել է չափից ավելի, հատկապես հաշվի առնելով, որ, ինչպես Կառավարությունը նշել է, դիմողն անձամբ չի ներկայացել ներպետական վարույթներում վճիռների կայացմանը:

86. Դատարանը կրկնում է, որ որպեսզի ծախսերն ընգրկվեն Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն տրամադրվող բավարարման մեջ, պետք է ապացուցվի, որ դրանք փաստացի և անհրաժեշտաբար օգտագործվել են և ողջամիտ են իրենց ծավալով (տե՛ս, ի թիվս այլ աղբյուրների, Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի թիվ 31195/96 վճիռը, կետ 79, ՄԻԵԽ 1999-II): Այս կապակցությամբ պետք է հիշել, որ Դատարանը կարող է դիմողին որպես բավարարում տրամադրել ոչ միայն այն ծախսերն ու ծախսերը, որոնք ծախսվել են Ստրասբուրգի հաստատություններում, այլ նաև այն գումարները, որոնք ծախսվել են ներպետական դատարաններում՝ Դատարանի կողմից հաստատված Կոնվենցիայի խախտումը կանխելու կամ այդ խախտումը վերացնելու համար (տե՛ս Վան Գեյսխենն ընդդեմ Բելգիայի թիվ 26103/95 վճիռը, կետ 45, ՄԻԵԽ 1999-I):

87. Դատարանը նշում է, որ դիմողին ոչ ոք չէր ներկայացնում ներպետական դատարանների առջև, որ նա ինքն է ներկայացրել իր գործը Հանձնաժողովում, և որ Դատարանում վարույթի ընթացքում դիմողը ներկայացված էր միայն լուսնների ժամանակ: Այն նաև նշում է, որ Եվրոպայի խորհուրդը վճարել է Ռոտարուն 9.759.72 FRF՝ որպես իրավաբանական օգնություն:

Դատարանը դիմողին տրամադրում է նրա պահանջած ամբողջ գումարը, այն է՝ 13.450 FRF. այս գումարը նվազեցվում է Եվրոպայի խորհրդի կողմից որպես իրավաբանական օգնություն տրամադրված գումարով: Տարբերությունը պետք է փոխանակվի ռումինական լեյի՝ հարցի լուծման պահին կիրառելի փոխարկման կուրսով:

#### **Գ. Տոկոսներ՝ փոխհատուցումը չվճարելու դեպքում**

88. Դատարանն անհրաժեշտ է համարում ընդունել սույն վճռի կայացման պահին Ֆրանսիայում կիրառելի՝ օրենքով սահմանված տոկոսադրույքը, այն է՝ տարեկան 2.74%:

#### **ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ՂԱՏԱՐԱՆԸ**

1. Միաձայն մերժում է Կառավարության նախնական առարկություն այն մասով, որ դիմողն այլևս զոհ չէ,

2. Միաձայն՝ Կառավարության նախնական առարկությունը՝ պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու կապակցությամբ, միացնում է գործի հանգամանքներին և միաձայն մերժում է այն՝ գործի հանգամանքները քննության առնելուց հետո,

3. Վճռում է՝ տասնվեց ձայնով՝ ընդդեմ մեկի, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում,
4. Վճռում է միաձայն, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում,
5. Վճռում է միաձայն, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում,
6. Վճռում է միաձայն, որ
  - ա) պատասխանող պետությունը պետք է եռամսյա ժամկետում դիմողին վճարի 50.000 ֆրանսիական ֆրանկ՝ ի հատուցում ոչ նյութական վնասի, և 13.450 ֆրանսիական ֆրանկ՝ ծախսերի և ծախքերի դիմաց. այս գումարը նվազեցվում է 9759 ֆրանսիական ֆրանկ և 72 սանտիմով, որը պետք է փոխարկվի ռումինական լեյի՝ վճռի կայացման պահին կիրառելի փոխարկման կուրսով,
  - բ) տարեկան 2.74 % սովորական տոկոսադրույք պետք է վճարվի վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև գումարի վճարումը:
7. Միաձայն մերժում է դիմողի՝ արդարացի բավարարման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով, և հրապարակվել է դռնբաց նիստում, Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 2000թ. մայիսի 4-ին:

Լուզիուս Վիլդհաբեր  
Նախագահ

Միշել Դե Սալվիա  
Քարտուղար

- Ըստ Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետի և Ղատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ կետի՝ սույն վճռին կցվում են հետևյալ առանձին կարծիքները.
- (ա) Պրն Վիլդհաբերի համընկնող կարծիքը, որին միացել են պրն Մակարչուկը, պրն Թուրմենը, պրն Կոստան, տկն Թուլկենսը, պրն Կասադեվալը և տկն Վեբերը,
  - (բ) Պրն Լորենզենի համընկնող կարծիքը,
  - (գ) Պրն Բոնելոյի մասնակի չհամընկնող կարծիքը:

Լ.Վ.  
Մ.դ.Ս.

**ԴԱՏԱՎՈՐ ՎԻՆԴՀԱԲԵՐԻ ՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ,  
ՈՐԻՆ ՄԻԱՑԵԼ ԵՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ՄԱԿԱՐՉՈՒԿԸ, ԹՈՒՐՄԵՆԸ, ԿՈՍՏԱՆ,  
ԹՈՒԼԿԵՆՍԸ, ԿԱՍԱՂԵՎԱԼԸ ԵՎ ՎԵԲԵՐԸ**

Տվյալ գործում դիմողը բողոքել է իր անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի խախտման դեմ, այն պատճառով, որ Ռումինական հետախուզական ծառայությունը (ՌՀԾ) պահել և օգտագործել է անձնական

բնույթի տեղեկություններ պարունակող գործ, որում պարունակվող տեղեկությունները հիմնականում վերաբերում էին 1946-1948 թթ.: Ըստ մեկ կոնկրետ մուտքագրված տեղեկության՝ 1937թ. համալսարանում սովորելու ժամանակ (երբ դիմողը փաստորեն հազիվ 16 տարեկան էր), նա եղել է «լեզեոներական տիպի» շարժման, այն է՝ ծայրահեղ աջաթեյան, ազգայնական, հակասեմիթական և աշխարհագրային շարժման անդամ: Այս մուտքագրված տեղեկությունը, որը բացահայտվել է ներքին գործերի նախարարի նամակում 1990թ. վերջին, 1997թ. Բուխարեստի վերաքննիչ դատարանի կողմից ձանաչվել է կեղծ: Սակայն այդ տեղեկությունը շարունակում է գրանցված մնալ ՌՀԾ-ի գործերում, այն դեպքում, երբ 1997թ. վճռի մասին այդ գործերում նշված է: Ավելին, ոչ ծախսերը և ոչ էլ վնասները չեն հատուցվել: ՌՀԾ-ի դեմ հարուցված վնասների հատուցման հայցը 1994թ. մերժվել է: Թվում է, որ Ռումինիայի օրենսդրությունը դեռևս հնարավորություն չի տալիս վիճարկել ՌՀԾ-ի կողմից դիմողի անձնական կյանքի վերաբերյալ տեղեկություններ պահելը կամ հերքել նման տեղեկատվության ճշմարտացիությունը, կամ պահանջել դրանց ոչնչացումը:

Այս դրդապատճառներից ելնելով՝ մեր Ղատարանը գտնում է 8-րդ, 13-րդ և 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտումներ: Իր նախադեպային իրավունքին համապատասխան (տե՛ս Մալոն ընդդեմ Միացյալ Թագավորության 1984թ. օգոստոսի 2-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 82, կետեր 80 և 87, Կրուսլին և Հյուվիզն ընդդեմ Ֆրանսիայի 1990թ. ապրիլի 24-ի վճիռը, Շարքեր Ա, 176-Ա, կետեր 36-37, և 176-Բ, կետեր 35-36, Հալֆորդն ընդդեմ Միացյալ Թագավորության 1997թ. հունիսի 25-ի վճիռը, Ժողովածուներ 1997- III, էջ 1017, կետ 51, Կոպն ընդդեմ Շվեյցարիայի 1998թ. մարտի 25-ի վճիռը, Ժողովածուներ 1998-II, էջ 543, կետեր 75-76, և Ամմանն ընդդեմ Շվեյցարիայի վճիռը, թիվ 27798/95, կետեր 61-62 և 77-81, ՄԻԵԽ 2000-...), Ղատարանը գտնում է, որ ներպետական օրենսդրական նորմերը, որոնք թույլ են տալիս գաղտնի գործերում հավաքել, գրանցել և պահել ազգային անվտանգությանն առնչվող տեղեկություններ, չեն ապահովում կանխատեսելիության բավարար մակարդակ: ՌՀԾ-ի կողմից դիմողի անձնական կյանքի վերաբերյալ տեղեկություններ հավաքելն ու օգտագործելը, ուստի, «օրենքի համաձայն» չէ և այդ իսկ պատճառով խախտվել է 8-րդ հոդվածը: Ես անվերապահորեն համաձայն եմ այս եզրակացությանը:

Սակայն այս գործի կապակցությամբ կցանկանայի ավելացնել, որ անկախ օրինական հիմքի համարժեքությունից, ես լուրջ կասկածներ ունեմ այն հարցի վերաբերյալ, որ դիմողի իրավունքներին միջամտելը հետապնդել է օրինական նպատակ՝ համաձայն 8-րդ հոդվածի 2-րդ կետի: Ավելին, ես կասկած չունեմ, որ ժողովրդավարական հասարակությունում այսպիսի միջամտությունների անհրաժեշտություն չի կարող լինել:

Ինչ վերաբերում է օրինական նպատակին, Ղատարանը պարբերաբար ընդունել է, որ պատասխանող Կառավարության կողմից մատնանշված նպատակն օրինական է, եթե այն ներառվում է 8-րդ հոդվածի 2-րդ կետից մինչև 11-րդ հոդվածով սահմանված կատեգորիաների մեջ: Սակայն, ըստ իս, ազգային անվտանգության կամ որևէ այլ նպատակի կապակցությամբ, որպեսզի այդ նպատակը համարվի օրինական, պետք է թերևս ողջամիտ և իրական կապ լինի այդ նպատակի և անձնական կյանքին միջամտելու միջոցների միջև: Ըստ իս, վկայակոչել շատ թե քիչ խտրականություն չղնող անհատների անձնական կյանքին վերաբերվող տեղեկությունների գրանցման միջոց, որը հետապնդում է ազգային շահերի պաշտպանության օրինական նպատակ, ակնհայտորեն պրոբլեմատիկ է:

Ռոտարուի գործում, նախկին վարչակարգի օրոք անօրինական և կամայական ձևով հավաքված տվյալներն ուսանող տղայի գործունեության մասին, որոնց մի մասն ուներ 50 տարվա, իսկ մի գործում՝ 63 տարվա

վաղեմություն, և որոնց մի մասն ակնհայտորեն կեղծ էր՝ շարունակում են պահվել գործերում՝ առանց կամայականության դեմ պատշաճ և արդյունավետ որևէ երաշխիքի: Այս Ղատարանի խնդիրը չէ ասել, թե արդյո՞ք այդ տեղեկությունները պետք է ոչնչացվեն կամ, որ պետք է ապահովվեն այդ տեղեկություններին հասու լինելու և դրանք ուղղելու համակողմանի իրավունքները, կամ արդյոք որևէ այլ համակարգ կհամապատասխանի Կոնվենցիային: Բայց դժվար է հասկանալ, թե այս հանգամանքներում ազգային անվտանգության որ շահն է արդարացնում շարունակելը պահել նման տեղեկությունները: Այդ պատճառով ես համարում եմ, որ Ղատարանը պետք է իրավասու լինի որոշելու, որ վիճարկվող միջոցը տվյալ գործում չի հետապնդել օրինական նպատակ՝ 8-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով:

Նման եզրակացության դեպքում այլևս անհրաժեշտ չէր լինի պարզել, թե արդյո՞ք վիճարկվող միջոցն անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում, քանի որ այդ հարցի պատասխանը կախված է օրինական նպատակի առկայությունից: Սակայն, եթե Ղատարանը նախընտրել է ընդունել ազգային անվտանգության օրինական նպատակի առկայությունը, ապա պետք է հիշեցնել, որ պետությունները չունեն գործողությունների անսահմանափակ ազատություն՝ անհատների նկատմամբ գաղտնի վերահսկողություն կամ գաղտնի գործերի համակարգ կիրառելիս: Պետության՝ իր ազգային անվտանգությունը պաշտպանելու շահը պետք է հավասարակշռվի դիմողի անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին միջամտության լրջության հետ: Մեր Ղատարանը շարունակաբար շեշտել է, որ «ազգային անվտանգության պաշտպանության նպատակով գաղտնի վերահսկողության համակարգը վտանգում է և նույնիսկ կարող է խաթարել ժողովրդավարությունը՝ այն պաշտպանելու հիմնավորմամբ» (Լինդերն ընդդեմ Շվեդիայի 1987թ. մարտի 26-ի վճիռը, Շարքեր Ա թիվ 116, կետ 60, տե՛ս նաև Կլասն ընդդեմ Գերմանիայի 1978թ. սեպտեմբերի 6-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 28, կետեր 42 և 49, և, *mutatis mutandis*, Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության 1996թ. նոյեմբերի 15-ի վճիռը, Ժողովածուներ 1996-V, էջ 1866, կետ 131, և Թինելի ու որդիներ ՍՊԸ-ն և Մակելտուֆ 1988թ. հուլիսի 10-ի վճիռը, Ժողովածուներ 1998-IV, էջ 1662, կետ 77):

Սա է պատճառը, որ Ղատարանը պետք է համոզված լինի, որ քաղաքացիների գաղտնի վերահսկողությունը խստիվ անհրաժեշտ է պաշտպանելու համար ժողովրդավարական ինստիտուտները, և որ առկա են համապատասխան արդյունավետ երաշխիքներ ընդդեմ կամայականության:

Հաշվի առնելով այս գործի բոլոր հանգամանքները և օրինական նպատակի վերաբերյալ վերոշարադրյալի համաձայն պետք է եզրակացվի, որ վիճարկվող միջամտությունը բոլորովին անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում՝ ազգային անվտանգության նպատակներին իրագործելու համար:

Այսպիսով, նույնիսկ եթե Ռոտարուի գործում լինեին կանխատեսելի իրավական հիմքեր, մեր Ղատարանը, միևնույն է, պետք է ճանաչեր 8-րդ հոդվածի խախտումը՝ կամ այն հիմքով, որ չկար գաղտնի գործերի կամայական համակարգը շարունակելու օրինական նպատակ, կամ էլ այն պատճառով, որ դրա շարունակումն ակնհայտորեն անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում:

## **ԴԱՏԱԿՈՐ ԼՈՐԵՆՁԵՆԻ ՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ**

Այս գործում ես քվեարկել եմ մեծամասնության եզրակացությունների, ինչպես նաև դրանց պատճառների օգտին: Սակայն դա չի նշանակում, որ ըստ էության ես համաձայն չեմ նրա հետ, ինչ ասված է դատավոր Վիլդհաբերի համընկնող կարծիքում՝ 8-րդ հոդվածի 2-րդ կետի կապակցությամբ: Միակ պատճառը, որ ես չեմ միացել այդ կարծիքին, այն է, որ Դատարանը հետևողականորեն ընդունում է, որ երբ 8-րդ հոդվածով սահմանված իրավունքներին միջամտելը «օրենքի համաձայն» չէ, կարիք չկա քննելու, թե արդյոք բավարարված են 8-րդ հոդվածի 2-րդ կետի մյուս պահանջները: Ես գտնում եմ, որ կարևոր է հետևել այդ նախադեպային իրավունքին:

## **ԴԱՏԱԿՈՐ ԲՈՆԵԼՈՅԻ ՄԱՍՆԱԿԻ ԶՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ**

1. Մեծամասնությունը գտել է, որ խախտվել է 8-րդ հոդվածը՝ ընդունելով, որ դրա դրույթները կիրառելի են տվյալ գործի փաստերի նկատմամբ: Ես քվեարկել եմ մեծամասնության հետ՝ Կոնվենցիայի այլ խախտումների կապակցությամբ, բայց ես չեմ կարող ընդունել 8-րդ հոդվածի կիրառելիությունը:

2. 8-րդ հոդվածը պաշտպանում է անհատի անձնական կյանքը: Այդ պաշտպանության հիմքում ընկած է յուրաքանչյուր անձի իրավունքը՝ իր կյանքի առավել անձնական հարցերը հեռու պահել հասարակության հետաքրքրասիրությունից և վերահսկողությունից: Մեր անձի և մեր հոգու մեջ կան ինքնամփոփ գոտիներ, որոնք Կոնվենցիան պահանջում է, որպեսզի փակ մնան: Անօրինական է ստուգել, պահել, դասակարգել կամ հրապարակել այն տվյալները, որոնք առնչվում են մեր գործունեության, հակումների և համոզմունքների այն ամենախոր ոլորտներին, որոնք թաքնված են գաղտնիության պատերի հետևում:

3. Մյուս կողմից, այն գործունեությունը, որն իր բնույթով հասարակական է, և որը փաստացի սնվում է հրապարակայնությունից, դուրս է 8-րդ հոդվածի պաշտպանության շրջանակներից:

4. Պետական անվտանգության ծառայությունների կողմից պահվող գաղտնի տվյալները, որոնք դիմողը պահանջել էր տեսնել, վերաբերում էին ըստ էության. (ա) ոմն Աուրել Ռոտարուի ակտիվ անդամակցությանը քաղաքական շարժմանը; (բ) երկու քաղաքական պամֆլետ հրատարակելու նրա դիմումին; (գ) նրա մասնակցությանը քաղաքական կուսակցության երիտասարդական շարժմանը և (դ) այն փաստին, որ նա չուներ դատվածություն (կետ13):

5. Առաջին երեք կետերը բացառապես վերաբերում են հասարակական գործունեությանը: Կցանկանալի ավելացնել, որ հատկապես՝ հասարակական, քանի որ քաղաքական և հրատարակչական գործունեությունն, իր գոյության և հաջողության համար պահանջում է առավելագույն հրապարակայնություն և կախված է դրանից: Գրանցումներում չէր նշվում, որ դիմողը քվեարկել է որևէ կոնկրետ քաղաքական կուսակցության օգտին, ինչը անշուշտ կներխուժեր գաղտնիության այն գոտին, որտեղ մուտքն արգելվում է: Ըստ էության, գրանցումները ցույց են տալիս, թե ինչպես է Աուրել Ռոտարուն հրապարակայնորեն արտահայտել իր ռազմատենչությունը որոշակի հասարակական կազմակերպություններում:

6. Ինչպե՞ս է անհատի բացառապես հասարակական գործունեությանը վերաբերող գրանցումներ պահելը խախտում նրա անձնական կյանքի իրավունքը: Մինչև հիմա Ղատարանը ընդունել է, ըստ իս, անառարկելորեն, որ 8-րդ հոդվածի պաշտպանությունը տարածվում է այնպիսի գաղտնիքների վրա, ինչպիսիք են բժշկական և առողջությանը վերաբերող տվյալները, սեռական ակտիվությունը և հակումները, ընտանեկան ազգականությանը և, հնարավոր է, մասնագիտական ու գործարար հարաբերությունները և ինտիմ այլ ոլորտներ, որոնց նկատմամբ հասարակական հետաքրքրասիրությունը կարելի է դիտարկել որպես անձի բնական պատնեշների անթույլատրելի խախտում: Հասարակական ակտիվությունը հասարակական-քաղաքական կուսակցություններում, ես կարծում եմ, շատ քիչ ընդհանրություն ունի ratio-ի հետ, որն անձնական կյանքի պաշտպանությունը բարձրացնում է մարդու հիմնարար իրավունքի մակարդակի:

7. Դիմողի անձնական գործի չորրորդ տարրը վերաբերում էր նրան, որ նա դատվածություն չի ունեցել: Ղատարանը նույնիսկ դա ճանաչել է որպես դիմողի անձնական կյանքի իրավունքի խախտում: Ղատարանն ընդգծել է, որ անվտանգության ծառայությունների գրանցումները (ներառյալ 50 տարվա վաղեմություն ունեցող տեղեկությունները) ներառում են տվյալներ դիմողի դատվածության մասին, և եզրակացրել է, որ «պետական գործակալների կողմից նման տեղեկություններ պարբերաբար հավաքելն ու գործում պահելը մտնում են «անձնական կյանքի» շրջանակների մեջ՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների համար»:

8. Սա, ըստ իս վտանգավոր կերպով ընդլայնում է 8-րդ հոդվածի շրջանակները: Հայտարարելով, որ ոստիկանության կողմից դիմողի դատվածության վերաբերյալ գրանցումներ պահելը (նույնիսկ երբ, ինչպես տվյալ գործում, այդ գրանցումը վկայում էր, որ անձը դատվածություն չուներ) կիրառելի է դարձնում 8-րդ հոդվածը, կարող է սպառնացող հեռուն գնացող հետևանքներ ունենալ «ազգային անվտանգության շահերի, հասարակության անվտանգության և հանցագործությունների ու անկարգությունների կանխարգելման», այն է՝ բոլոր այն արժեքների համար, որոնք ակնհայտորեն պաշտպանված են 8-րդ հոդվածով:

9. Ես կընդունեի, չնայած զուտ հանդուրժելով, որ ոստիկանության կողմից դատվածության վերաբերյալ գրանցումներ պահելը կարող է դիտարկվել որպես անհատի անձնական կյանքին միջամտություն, սակայն շտապում եմ ավելացնել, որ այսպիսի միջամտությունն արդարացված է հանցագործությունների դեմ պայքարի և ազգային անվտանգության շահերով: Ղատարանն անհրաժեշտ չի համարել այդպես վարվել:

10. Իհարկե, իմ անհամաձայնությունը կապված է միայն Ղատարանի կողմից դատվածության մասին տեղեկություններ պահելը քննադատելուն: Այդ տեղեկությունների բովանդակության կամայական և անօրինական գաղտնագերծումը կարող է հարցեր բարձրացնել 8-րդ հոդվածի համաձայն:

11. Ղատարանը կարծես հատուկ կշիռ է տալիս այն փաստին, որ «տեղեկությունների մի մասը հայտարարվել է կեղծ և կարող է վնասել դիմողի հեղինակությանը» (կետ 44): Այս դատողություններն առաջացնում են երկու առանձին հարց. տեղեկությունների կեղծ լինելը և դրանց զրպարտչական բնույթը:

12. Դիմողի՝ անձնական գաղտնի գործի մեջ պարունակվող տեղեկությունների մի մասը փաստորեն վերաբերում էր մի այլ անձի, որը կրում էր նույն անունը, և ոչ թե իրեն: Սա, անկասկած, նշանակում է, որ այս տեղեկությունները դիմողի առնչությամբ կեղծ էին: Բայց արդյո՞ք հասարակական ոլորտին վերաբերող հարցերի կեղծ լինելն այդ հասարակական տեղեկությունները դարձնում են անձնական տվյալներ: Այս պնդումների հաջորդականության տրամաբանությունն ինձ համար ուղղակի անհասկանալի է մնում:

13. Նորից, ես պատրաստ եմ ընդունել, որ անվտանգության ծառայությունների կողմից դիմողի վերաբերյալ պահվող «կեղծ» տեղեկությունները կարող են վնասել նրա հեղինակությունը: Բավականին փորձառու կերպով Ղատարանը վերջերս կարծես հանգում է այն համոզման, որ «հեղինակություն» հասկացությունը հանգիստ կարող է համարվել 8-րդ հոդվածի առարկա: Բացելով այս նոր հեռանկարները 8-րդ հոդվածի համար՝ ոգևորիչ նոր ազդակ կհաղորդվի մարդու իրավունքների պաշտպանությանը: Սակայն, ըստ իս, Ղատարանը պարտավոր է բարեփոխումներ իրականացնել ամբողջ ճակատով, և ոչ թե գրեթե թաքուն անցկացնել այն որպես անձնական կյանքի իրավունքի ուրվագիծ:

14. Եթե ես կիսեի մեծամասնության կարծիքը, որ անձնական կյանքի իրավունքը տարածվում է նաև հասարակական նշանակության տեղեկությունների վրա, այդ պարագայում ես կհամարեի, որ 8-րդ հոդվածը խախտվել է, քանի որ ես անվերապահորեն ընդունում եմ Ղատարանի եզրակացությունը, որ անվտանգության ուժերի կողմից դիմողի վերաբերյալ տեղեկություններ պահելը և օգտագործելը «օրենքի համաձայն» չէր (կետեր 57-63):

ՖԻԼԻՊՍԸ ԸՆԴՂԵՄ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱԼ

CASE OF PHILLIPS v. UNITED KINGDOM

(Գանգատ թիվ 41087/98)

Դատարանի 2001թ. հունիսի 5-ի  
վճիռը

Ստորաբուլո

**Ֆիլիպսն ընդդեմ Միացյալ թագավորության գործով,**  
Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (չորրորդ բաժանմունք), նիստ գումարելով որպես Պալատ՝ դատավորների հետևյալ կազմով՝

պրն Գ. Ռես՝ նախագահ,  
պրն Ա. Պաստոր Ռիդրիխտ,  
պրն Ջ. Մակարչուկ,  
պրն Նիկոլաս Բրատցա,  
պրն Վ. Բուտկեվիչ,  
տկն Ն. Վաշիկ,  
պրն Ջ. Յեդիգան,

նաև պրն Վ. Բերգեր, *Բաժանմունքի քարտուղար,*

2001թ. փետրվարի 8-ին և հունիսի 14-ի դռնփակ խորհրդակցություններից հետո  
հունիսի 14-ին ընդունեց հետևյալ վճիռը.

**Վարույթ**

1. Գործի համար առիթ է հանդիսացել 1998թ. ապրիլի 20-ին Մեծ Բրիտանիայի քաղաքացի պրն Սթիվեն Ֆիլիպսի («դիմումատու») կողմից Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») նախկին 25-րդ հոդվածի հիման վրա՝ ընդդեմ Մեծ Բրիտանիայի և Յուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովին («Հանձնաժողով») ուղղված գանգատը (թիվ 41087/98):

2. Դիմողին ներկայացնում էին Նյուփորթում, Գենթ, աշխատող սոլիսիտոր պրն Ռ. Ջեյմսը և Լոնդոնում աշխատող բարիստեր պրն Ռ. Փիրս Վիթլին: Բրիտանական կառավարությունը («Կառավարություն») ներկայացնում էր Արտաքին և Ֆեդերատիվ վարչության ներկայացուցիչ օր. Դ. Ֆիլդսենդը:

3. Դիմողը, հայտարարել է, *inter alia*, որ թմրաբիզնեսի մեղադրանքով իր դատապարտումից հետո բռնագրավման որոշումն ընդունած դատարանի ենթադրությունը, որը հիմնվում էր օրենքով նախատեսված կանխավարկածի վրա, խախտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված իր անմեղության կանխավարկածի իրավունքը:

4. Գանգատը Դատարանին է հանձնվել 1998թ. նոյեմբերի 1-ին, երբ Կոնվենցիայի թիվ 11 Արձանագրությունը ուժի մեջ է մտել (թիվ 11 Արձանագրության 5-րդ հոդվածի 2-րդ կետ):

5. Գանգատը հանձնվել է Դատարանի չորրորդ բաժանմունքին (Դատարանի կանոնակարգի 52-րդ կանոնի 1-ին կետ): Այն մասնակիորեն ընդունելի է հայտարարվել 2000թ. նոյեմբերի 30-ին:

6. Գործի հանգամանքների վերաբերյալ բացատրություններ են ներկայացրել և՛ դիմողը, և՛ Կառավարությունը (59-րդ կանոնի 1-ին կետ):

7. Լսունք տեղի է ունեցել դռնբաց նիստում, Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 2001թ. փետրվարի 8-ին (59-րդ կանոնի 2-րդ կետ):

Դատարանի առջև հանդես են եկել՝

(ա) *Կառավարության անունից՝*

օր Յ. Ֆիլդսենդ, Արտաքին և ֆեդերատիվ վարչություն,  
պրն Դ. Պերրի,  
օր Ս. Դայսոն, Պետական վարչություն,  
պրն Պ. Վալանս,

*ներկայացուցիչ,  
փաստաբան,*

*խորհրդակալաններ.*

(բ) *դիմողի անունից՝*

պրն Ռ. Փիրս Վիթլի,  
պրն Ի. Չանդարանա,  
պրն Ռ. Ջեյմս,

*փաստաբան,  
կրտսեր փաստաբան,  
սոլիսիտոր:*

Դատարանը լսեց պրն Ռ. Փիրս Վիթլիի և պրն Պերրիի ելույթները:

## ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

8. 1996թ. հունիսի 27-ին Նյուպորտի թագավորական դատարանում դիմողը մեղադրվել է 1995թ. նոյեմբերին մեծ քանակությամբ մարիխուանայի խեժ ներմուծելու կապակցությամբ, որն արգելված է 1979թ. Մաքսային և աքցիզային հարցերի կարգավորման ակտի 170(2)-րդ մասով: 1996թ. հունիսի 12-ին նա այդ հանցագործության կապակցությամբ դատապարտվել է ինը տարվա ազատազրկման: Դիմողը եղել է նախկինում դատված, բայց ոչ երբեք թմրանյութերի հետ առնչվող գործերով:

9. Կատարվել է քննություն դիմողի ունեցվածքի կապակցությամբ՝ 1994թ. Թմրաբիզնեսի մասին օրենքի (տե՛ս ստորև՝ «1994թ. օրենքը») 2-րդ մասի համաձայն:

1996թ. մայիսի 15-ին Մաքսային և աքցիզային վարչության թմրաբիզնեսի ֆինանսական հետաքննության աշխատակիցը տեղեկացրել է դիմողի սոլիսիտորներին, որ ինքը քննում է նրանց հաճախորդի ֆինանսական գործերը և ցանկանում է հարցաքննել նրան՝ օգնելու դատարանին որոշել, արդյո՞ք նա ստացել է շահույթներ թմրաբիզնեսից, թե՛ ոչ: Դիմողը հրաժարվել է մասնակցել հարցաքննությանը:

10. Հետաքննության աշխատակիցը 1994թ. օրենքի 11-րդ մասի համաձայն պատրաստել է գրավոր հաղորդում, որը ծանուցվել է դիմողին և ներկայացվել է դատարան:

Հաղորդման մեջ աշխատակիցը նկատել էր, որ դիմողը չունի եկամտի հայտարարագրված հարկվող աղբյուր, չնայած նա գրանցված սեփականատերն է չորս սենյակի վերափոխված տան և դրանով նա 1991թ. դեկտեմբերին սկսել է իր «Անկողին և նախաճաշ» բիզնեսը: Դիմողի շինության շինարարական ընկերության հաշվի քննությունը ցույց է տվել կանխիկ գումարների և չեքերի մուտքեր 1994թ. օգոստոսից մինչև 1995թ. նոյեմբերը, որոնց ընդհանուր գումարը կազմել է ավելի քան 17000 Մեծ Բրիտանիայի ֆունտ ստեռլինգ (GBP), որը հետաքննիչի կարծիքով հավանաբար հանդիսանում է չորս սենյակների վարձակալությունից ստացած եկամուտը: Դիմողը, պարզվել է, որ դարձել է լրատվական գործակալության տնօրեն 1992թ. հունիսին, որտեղ նրա ծնողները բաժնետերեր են և խանութ է գնել 1992թ. սեպտեմբերին 28493.25 GBP-ով, որից 12,2000 GBP-ը վճարվել է կանխիկ: Նա հինգ մեքենաների գրանցված սեփականատեր էր, որոնց ենթադրյալ ընդհանուր գումարը կազմում է մոտավորապես 15,000 GBP և պարզվել է, որ նա 1995թ. հոկտեմբերին

ծախսել է 2,000 GBP՝ գնելու համար BMW 520i ավտոմեքենա և մոտավորապես 88,400GBP՝ 1995թ. նոյեմբերին մարիխուանայի ներմուծման հետ կապված ծախսերի համար (ինչի առնչությամբ էլ նա դատապարտվել էր): Տեսուչը եզրակացրել էր, որ դիմողը ստացել է եկամուտ թմրաբիզնեսից և դրա ընդհանուր եկամուտը կազմել է 117,838,27 GBP:

Դիմողի իրական ակտիվի առնչությամբ տեսուչը նկատում է.

«Ֆիլիպսի իրական ակտիվի չափը հավանաբար անձամբ մեղադրյալի գիտությամբ է և կարծում եմ բնական է ենթադրել, որ թմրանյութերի ցանկացած հաջողակ առևտրական (ինչպիսին որ մեղադրյալն է) կարող է հոգալ հնարավորության սահմաններում ապահովել, որ իր առևտրի եկամուտները այնպես թաքցվեն, որ հնարավոր չլինի գտնել դրանց հետքը : Օրինակները ներառում են այն փաստերը, որ նրա գործարքները միշտ կատարվել են կանխիկ գումարներով, որ երբեք չեն եղել գրանցումներ, և որ որոշ ֆինանսական գործարքներ, օրինակ BMW 520i ավտոմեքենան, գրանցվել են կեղծ անուններով:»

11. Ի պատասխան, դիմողը ներկայացրել է գրավոր հայտարարություն, որում ժխտել է թմրաբիզնեսից շահույթ ստանալու փաստը: Նա բացատրել է, որ 1990/91թթ. ինքը մեղադրվել է ավտոմեքենայի գողության մեջ և ստիպված է եղել ավտոմեքենայի տերերին ապահովագրած ապահովագրական ընկերությանը վճարել 25,000 GBP: Նա հայտարարել է, որ վաճառել է տունը 50,000 GBP-ով ոմն X-ի՝ այս պարտքը մարելու համար և վաճառքից ստացած գումարի մի մասը՝ 12,000 GBP՝ ծախսել է գնելու համար լրատվական գործակալության շենք՝ իր ծնողների համար, որովհետև նրանց էլ էր գումար պարտք: Նա ժխտել է, որ սեփականության մաս է ունեցել լրատվական գործակալությունում: Երբ նա ազատ է արձակվել 1994թ. ապրիլին նա սկսել է հեռախոսների վաճառք, սա է 17,000 GBP գումարի աղբյուրը իր շինարարական ընկերության հաշվում: Նա ժխտել է, որ իր անունով գրանցված մեքենաներից որևէ մեկի սեփականատերն է՝ տարբեր ձևերով բացատրելով, որ յուրաքանչյուրը գնվել և վաճառվել է ընկերոջ համար կամ գողացվել է առանց ապահովագրության: Արդյունքում, նա հայտարարել է, որ իր իրական ակտիվը մոտ 200 GBP է շինարարական ընկերության հաշվում և տեղական իշխանություններից վարձակալած ավտոտնակի սարքավորումները: Դիմողը ներկայացրել է փաստաթղթային ապացույցներ և երդմամբ հաստատված գրավոր վկայություններ՝ ի հաստատումն, նախ և առաջ, որ նա այլևս տան սեփականատեր չէ:

12. Հետաքննիչը ներկայացրել է երկրորդ հաղորդումը՝ 1994թ. ակտի 11(1)-րդ մասի համաձայն: Նա պնդել էր, *inter alia*, որ դիմողը դեռևս տան սեփականատերն է և սեփականության իրավունքի փոխանցումը ոմն X-ի երբևէ չի գրանցվել:

13. Թագավորական դատարանում բռնագրավման վերաբերյալ լսումների ժամանակ դիմողը ցուցմունք է տվել և վկաներ է հրավիրել: 1996թ. դեկտեմբերի 24-ին դատավճիռ կայացնելով, դատավորը նկատել է.

«Մեղադրող կողմի պարտականությունն է հաստատել, իհարկե, հավանականության հիման վրա, որ նա (մեղադրյալը) շահույթ է ստացել թմրաբիզնեսից, որ որևէ վճարումներ կամ եկամուտներ է ստացել թմրաբիզնեսով զբաղվելիս: Այստեղ չկա որևէ ուղղակի վկայություն դրա վերաբերյալ, և Թագավորական դատարանը կոչ է անում ինձ ենթադրություններ անել օրենքի 4(3)-րդ մասի համաձայն, այն է՝ ա) որ դատապարտումից հետո ունեցած գույքը և 1989թ. նոյեմբերի 18-ից հետո, համապատասխան օրը իրեն փոխանցված գույքը ստացվել է որպես այդպիսի շահույթ, (բ) որ 1989թ. այդ օրվանից սկսած նրա ցանկացած ծախսերը համընկնում են իր թմրանյութերի առևտրի առնչությամբ ստացած գումարին: Ես այսպես պետք է անեմ, քանի դեռ նա ցույց չի տվել, որ հավանականությունից բխող ենթադրությունը ճշմարիտ չէ, կամ ես բավարար համարեմ, որ նրա նկատմամբ կարող է կատարվել անարդարություն, եթե կատարվի այդ ենթադրությունը:»

Դատավորն ընդհանուր առմամբ մեկնաբանել է, որ փորձելով ժխտել ենթադրությունը և առարկել մեղադրողի ներկայացրած մեղադրանքները, դիմողը չի կատարել ակնհայտ, սովորական և պարզ քայլեր, որոնք հաստատապես կձեռնարկվեին, եթե փաստերի նրա շարադրանքը ճշմարիտ լիներ: Օրինակ, փոխարենը որպես վկա վկայակոչելու տան ենթադրյալ գնորդին, X-ին, և այլ անձանց, ումից նա պնդում է, որ գնել է և ունի որ վաճառել է ավտոմեքենաները, դիմողը վկայական չէլ է իրեն, իր հորը և սուլիսիտորին:

14. Դատավորը գտել է, որ մեղադրողի այն ենթադրությունը, որ դիմողը դեռևս տան սեփականատերն է, ճշմարիտ է և որոշել է, որ X-ի վկայած 50000GBP գնման վճարումը իրականում եղել է թմրանյութերի առևտրից ստացած շահույթ: Դատավորը նշել է.

«արվելիք ենթադրությունը հստակ է, և մեղադրյալը չի ապացուցել, որ այն սխալ է, ոչ էլ կարողացել է ցույց տալ, որ կա անարդար վարվելու վտանգ:

Ապացուցման քաղաքակիրթ հիմքով չկա որևէ վկայություն, որ [X]-ը հանցակից է այն հանցագործությանը, որում մեղադրյալը մեղադրվել է: Նրանք միասին ճանապարհորդել են Յամայկա մոտավորապես այն ժամանակ, երբ մարիխուանայի խտացված հումքը պատրաստ է եղել տեղափոխման: Թմրանյութերի փոխադրման կարգավորման կենտրոնում հայտնաբերված բջջային հեռախոսահամարը գրանցված է [X]-ի անունով: Ինչպես երդվյալ ատենակալները, այնպես էլ ես չեմք հավատում պրն Ֆիլիպսին: Այն, ինչ տեղի է ունեցել այստեղ, իմ կարծիքով հենց այն բնույթի մեխանիզմ է, որը ծածկ է ապահովում գումարների այն փոխանցումների համար, որոնք անձը կարող է որպես շահույթ ստանալ թմրաբիզնեսից: Այստեղ առկա է սեփականության ակնհայտ սովորական, ձևական, առևտրական փոխանցում, որը պատշաճորեն կատարվել է սուլիսիտորների միջոցով սովորական ճանապարհով, որը երբեք մինչև վերջ ձևականորեն չի ավարտվել և իմ կարծիքով դա իհարկե կեղծիք է և գույքը ... դեռևս մեղադրյալի սեփականությունն է...»:

15. Մեղադրող կողմը պնդել է, որ դիմողը ստացել է նաև 28000 GBP կանխիկ գումար X-ից: Դիմողն ընդունել է, որ նա ստացել է այդ գումարը, բայց պնդել է, որ X-ը պարզապես վճարել է այն չեքի դիմաց, որը դուրս էր գրել դիմողի հայրը՝ գնելու համար դիմողի մասը ընտանեկան բիզնեսում, որն ընդհանուր առմամբ կազմել է 50000GBP: Այս փոխանակման կապակցությամբ դատավորը նկատել է.

«Այդ չեքի դիմաց X-ի կողմից վճարելու որևէ խելամիտ բացատրություն ես չեմ ստացել ընդհանրապես, և իմ կարծիքով անհնարին է տեսնել որևէ խելամիտ պատճառ բացի այն, որ նա ոչ թե վճարել է չեքի դիմաց, այլ որ դա եղել է պարզապես վճարում: Ես չեմ հավատում ոչ միայն մեղադրյալին, այլ նաև նրա հորը: Ինձ թվում է ընտանեկան հավատարմությունը ճնշել է նրա ազնվությունը:

Չնայած մեղադրյալն այժմ որևէ փաստացի շահ չունի խանութի շենքի պահպանումից, որը ընտանեկան բիզնեսի աղբյուրն է, ես չեմ ընդունում իր և իր հոր ներկայացրած փաստերը, որ նա շահ չունեի ընտանեկան բիզնեսից: Նույնիսկ ընտանիքի շրջանակներում, ես կարծում եմ, որ բիզնեսի բաժնեմասի ձեռքբերումը 50000 GBP-ով ամբողջովին առանց փաստաթղթերի պարզապես անհավատալի է: Նորից, հավասարակշռելով հավանականությունները, պարզ է դառնում, որ սա մեխանիզմ է, որով քողարկվել է [X]-ի կողմից մեղադրյալին 28000GBP գումար վճարելու իրական հիմքը, այն է՝ վճարում թմրանյութերի առևտրի դիմաց:»

16. Դիմողի՝ ավտոմեքենաների հետ կապված գործարքների առնչությամբ դատավորը նկատել է.

«Ընդունելով նրա վճարած գումարների նվազագույն հաշվարկները, պարզ է, որ ընդհանուր առմամբ նա ստացել է 11400GBP կանխիկ գումար: Նա երդվյալներին հայտնել է, որ միշտ իր բոլոր գործարքները կատարել է կանխիկ, ոչ միայն նշվածները, այլ նաև ուրիշները, նա իրեն ատենակալների մոտ ներկայացրել է որպես առևտրական գործակալ, որը մի փուլում մասնագիտացած է եղել ավտոմեքենաների վաճառքում, իսկ վերջերս բջջային հեռախոսների առևտրում՝ ցանկանալով զբաղվել ցանկացած առևտրով, որը միայն շահույթ կապահովի: Նա ասաց, որ երբեք գրառումներ չի պահել: Նա ընդունում է և պնդում, որ ավտոմեքենաների գործարքներում եղել է ինչպես անազնիվ, այնպես էլ օրինավոր, և դա այդպես էլ կա: Գործին առնչվող ժամանակահատվածում նա դատապարտվել է ավտոմեքենաների հետ գործարքներում անազնիվ և հանցավոր վարքի առնչությամբ և այդ կապակցությամբ դատապարտվել է ազատազրկման բավական երկար ժամկետով: Իմ առջև եղած փաստաթղթերում կան նաև ավտոմեքենաների սովորական վաճառքի օրինական վճարումների ապացույցներ:

Բայց այն փաստը, որ նա կարող է ունենալ կանխիկ գումարի այլ աղբյուրներ՝ թե օրինական և թե ապօրինի, իմ կարծիքով չի ժխտում գործում երկրորդ ենթադրությունը, որ չեն եղել կամ հնարավոր չեն ոչ լիարժեք, ոչ մասնակի հաշիվներ:

ես տեսնում եմ, թե ինչը կարող է հանդիսանալ այս գործարքների մասը և ես բավարար եմ համարում 17400GBP գումարը համարել շահույթ:»

17. Դատավորն ընդունել է, որ դիմողը թմրաբիզնեսից շահույթ է ստացել 91400GBP-ի չափով:

Այնուհետև նա հաշվարկել է դիմողի իրական ակտիվի արժեքը հետևյալ կերպ.

«Վերոհիշյալ հիմքերից ելնելով՝ ես համոզված եմ, որ [դիմողը] [տան] փաստացի սեփականատերն է: Ընթացիկ գնահատման բացակայությամբ, բայց հաշվի առնելով երկար ժամանակահատվածում տան շուկայում կատարված վերջին աննշան գների աճի վերաբերյալ դատարանի ունեցած տեղեկատվությունը, ես համոզված եմ, որ 50000GBP, որը նա նշել է որպես ապացույց, սեփականություն է, որը արժեք այդքան 1992-ին, այսինքն երկար, միապաղաղ փուլի ընթացքում, և գտնում եմ, որ 50000GBP-ն արդարացված գին է այդ սեփականության վաճառքից գոյացած եկամուտների նկատմամբ այժմ կամ մոտ ապագայում:

Կրկին վերը նշված հիմքերից ելնելով՝ ես համոզված եմ, որ մեղադրյալը դեռևս [լրատվական գործակալության] մեկ երրորդ մասի փայատերն է իր ծնողների հետ: Նա և նրա հայրը ասել են, որ բիզնեսն արժեք 150,000GBP 1993-ին: Այս էր, որ միտում ուներ լինել նրա ներկայացրած 500,00GBP-ի հիմքը: Չկա որևէ ապացույց, որ այժմ այն ավելի պակաս արժեք և այդ իսկ պատճառով ես գտնում եմ, որ նրա իրական բաժնեմասը այդ բիզնեսում կազմում է 50000GBP: Քանի որ ես համոզված եմ 100000GBP իրական գումարների կապակցությամբ, այդ թիվը գերազանցում է 91400 GBP և 5-րդ մասի համաձայն վերականգնվող գումարը համարում եմ այդքան:»

Նկատի ունենալով ընտանեկան բիզնեսում դիմողի ունեցած բաժնեմասի չափը որոշելու հետ կապված դժվարությունները՝ դատավորը թույլ է տալիս նրան բռնագրավման կարգադրությունը կատարել երեք տարում՝ չվճարման դեպքում նախատեսելով երկու տարի ազատազրկում:

18. 1997թ. հունվարի 28-ին դիմողին չի թույլատրվել բողոքարկել դատապարտումը և պատժաչափը (բռնագրավման որոշումը ներառյալ): Նրա դիմումը՝ վերանայելու դատապարտումն ու պատժաչափը բողոքարկելու թույլտվությունը մերժվել է 1998թ. հունվարի 22-ին, վերաքննիչ դատարանի լիազուսմար նիստում:

## I. ԳՈՐԾԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍՐՈՒԹՅՈՒՆ

### Ա. Թմրանյութերի առևտրի մասին 1994թ. օրենքը

19. 1994թ. օրենքի 2-րդ մասը նախատեսում է, որ Թագավորական դատարանը կարող է բռնագրավման որոշում ընդունել այն դեպքում, երբ մեղադրյալը դատապարտվում է թմրաբիզնեսով զբաղվելու կապակցությամբ մեկ կամ ավելի հանցանքներ կատարելու մեղադրանքով, և, ըստ դատարանի, թմրաբիզնեսի կապակցությամբ երբևէ ստացել է ցանկացած վճարում կամ օգուտ:

20. 1994թ. օրենքի 5-րդ մասով նախատեսվում է, որ բռնագրավումը պետք է կատարվի այն գումարի չափով, որը ըստ դատարանի գնահատման համապատասխանում է դատապարտյալի՝ թմրաբիզնեսից ստացած միջոցներին, քանի դեռ դատարանը բռնագրավման որոշումն ընդունելիս չի ստացել բավարար հիմքեր, որ միայն ավելի պակաս գումարն է իրական:

21. Որոշելիս, թե արդյոք և ինչ չափով է մեղադրյալը շահույթներ ստացել թմրանյութերի առևտրից, 1994թ. օրենքի 4(2) և (3) մասը դատարանից պահանջում է ենթադրել, որ դիմողի կողմից՝ իր դատապարտումից ի վեր կամ քրեական գործի հարուցումից առաջ 6 տարվա ընթացքում ձեռք բերված գույքը ստացվել է որպես վճարում՝ կապված թմրաբիզնեսի հետ և նրա կողմից նույն ժամանակահատվածում կատարված ցանկացած ծախս վճարվել է թմրաբիզնեսից ստացված շահույթներից Այս օրենքով սահմանված ենթադրությունը մեղադրյալը կարող է ժխտել որոշակի գույքի կամ ծախսի առնչությամբ, եթե դրանք ճիշտ չեն կամ եթե դրանց կիրառումը կառաջացնի անարդարության լուրջ վտանգ (մաս 4(4)):

22. 1994թ. օրենքի միջոցով կիրառելի՝ ապացուցման պահանջվող չափանիշները նրանք են, որոնք կիրառվում են քաղաքացիական դատավարությունում, այն է՝ հավանականությունները հավասարակշռության մեջ (մաս 2(8)):

23. Վերոհիշյալ դրույթներին բավական նման դրույթներ նախկինում նախատեսված են եղել 1986թ. թմրաբիզնեսի հանցագործությունների մասին օրենքով

(տե՛ս «1986թ. օրենքը»՝ քննության է առնվել Դատարանի կողմից իր՝ Վելչն ընդդեմ Միացյալ թագավորության 1995թ. փետրվարի 9-ի վճռում, Շարքեր Ա թիվ 307-Ա):

**Բ. Նոր բրիտանական նախադեպային իրավունքը թմրանյութերի հետ կապված բռնագրավման կարգադրությունների նկատմամբ Կոնվենցիայի կիրառման վերաբերյալ**

**1. Մաքինտոշն ընդդեմ Նորին Գերագանցություն թագուհու փաստաբանի՝ Շոտլանդիայի վերաքննիչ դատարանի դատավճիռը**

24. 2000թ. հոկտեմբերի 13-ի դատավճռում Շոտլանդիայի վերաքննիչ դատարանը երկու ձայնով ընդդեմ մեկի որոշել է, որ սույն գործում կիրառված բռնագրավման համաճանան ընթացակարգն անհամատեղելի է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի հետ: Լորդ Պրուսերը, ում հետ համաձայնվել է Լորդ Ալամբրիջը նկատել էր *inter alia*.

«Խնդրելով դատարանին բռնագրավման մասին որոշում ընդունել մեղադրողը խնդրում է հաշվարկել խնդրատուի՝ թմրաբիզնեսից ստացած եկամուտները: Այսինքն նա խնդրում է դատարանին հասնել այն փուլին, որ կարելի է ասել, որ նա զբաղվում է թմրաբիզնեսով: Եթե սա քրեական է, ինձ թվում է, որ այն գրեթե նույնական է փաստացի հանցանքի, փաստացի մեղադրանքի հետ՝ շոտլանդական հասկացություններով: Իհարկե չկա ոչ մի մեղադրական ակտ կամ բողոք և ոչ մի դատապարտում: Եվ լիազորված փաստաբանը մատնանշել է մեկ այլ տարբերություն ևս, որ շոտլանդական բողոքը կամ մեղադրական ակտը պետք է լինի կոնկրետ և պետք է ապահովված լինի ապացույցներով, մինչդեռ այս որոշակի ենթադրությունը կոնկրետ չէր և հիմնավորված չէր որևէ ապացույցով: Բայց այն մոտեցումը, որ վերջին իրավիճակում անմեղության կանխավարկածի նվազ անհրաժեշտություն կա, ինձ թվում է հիշեցնում է Կաֆկային և չարիքի պատկերումը որպես առաքինություն: Առանց որևէ պատկերացման, թե նա ինչ կարող է արած լինել կամ առանց որևէ հիմքի, որը կարդարացմի նրա հետ վարվելը որպես այդ կատարած անձի, մեղադրյալի համար անմեղության կանխավարկածի կարիքը, իմ կարծիքով, ավելի մեծ է: ... Ես չեմ տեսնում որևէ հիմք, որի հիման վրա կարելի է ասել, որ [նման] ենթադրությունները ... չեն ոտնահարի անմեղության կանխավարկածը՝ մեղադրյալին թողնելով ապացուցել, որ ենթադրությունները սխալ են: ...»

**2. Ռ.-ն ընդդեմ Բենջամին և այլոց Անգլիական վերաքննիչ դատարանի վճիռը**

25. 2000թ. դեկտեմբերի 21-ին վերաքննիչ դատարանը միաձայն վճռել է, որ թմրանյութերի առնչությամբ բռնագրավման կարգադրությունը չի հանգեցնում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման: Վճիռ կայացնելիս, դատարանի նախագահը բռնագրավման գործընթացը քննության է առել այն հիմքով, որ 6-րդ հոդվածը՝ որպես ամբողջություն, ներառյալ 6-րդ հոդվածի 2-րդ կետը կիրառվել են: Նա եզրակացրել է, որ ընդհանուր առմամբ, բռնագրավման համակարգը արդարացի հավասարակշռություն է ստեղծում մեղադրյալի համար արդարադատության և թմրաբիզնեսի շահույթները վերահսկելու գործում հասարակական շահի միջև:

**3. Մաքինտոշն ընդդեմ Նորին Գերագանցություն թագուհու փաստաբանի՝ Պետական խորհրդի վճիռը**

26. Մեղադրանքի կողմը բողոքել է ընդդեմ վերաքննիչ դատարանի որոշման (տե՛ս վերը՝ կետ 22) և 2001թ. փետրվարի 5-ին Պետական խորհրդի դատական կոմիտեն միաձայն որոշել է, որ 6-րդ հոդվածի 2-րդ կետը կիրառելի չէ, քանի որ բռնագրավման վարույթի ընթացքում մեղադրյալը «չի մեղադրվել հանցանքի մեջ», այլ, դրա փոխարեն,, գտնվել է պատժի նշանակման փուլում այն հանցանքի կապակցությամբ, որի համար դատապարտվել էր: Ավելին, պետական խորհուրդը վճռել է, որ նույնիսկ

եթե 6-րդ հոդվածի 2-րդ կետը համարվի կիրառելի, բռնագրավման կարգադրություն ընդունելիս արված ենթադրությունը անհիմն կամ խիստ համարել չի կարելի:

## **ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ**

### **I. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վիճարկվող խախտում**

27. Դիմողը բողոքել է, որ բռնագրավման չափը հաշվարկելիս Թագավորական դատարանի կիրառած օրենքով սահմանված ենթադրությունը խախտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված անմեղության կանխավարկածի իր իրավունքը: 6-րդ հոդվածը նախատեսում է,

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: ...

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները՝

a) իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին, ...»

### **Ա. 6-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառումը**

28. Կառավարությունը նշել է, որ բռնագրավման կարգադրությունը պետք է համարել պատժամիջոց թմրաբիզնեսով զբաղվելու հանցանքի համար, որի կապակցությամբ դիմողը դատվել է և մեղավոր է ճանաչվել. բռնագրավման վարույթ չի նշանակում մեղադրում որևէ լրացուցիչ հանցանքի համար, և հետևապես 6-րդ հոդվածի 2-րդ կետը չի կարող կիրառվել:

29. Դիմողը պնդում էր, որ բռնագրավման կարգադրություն ընդունելու վարույթը ոչ թե պարզապես կազմում է այն հանցանքի համար պատժի նշանակման մասը, որի համար նա դատապարտվել է, այլ առանձին դատական գործընթաց է, որը ներառում է նրան «քրեական հանցանքի մեջ մեղադրելը» 6-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով: Նա հենվում էր Շոտլանդիայի վերաքննիչ դատարանում *Մաքինտոշի* վճռի վերլուծության վրա (տե՛ս վերը՝ կետ 24):

30. Անվիճելի է, որ նրա քրեական հետապնդման ընթացքում, որը հանգեցրել է դատապարտմանը 1996թ. հունիսի 27-ին Մաքսային և աքցիզային կարգավորման հարցերի 1979թ. օրենքի 170(2)-րդ մասին հակառակ՝ մարիխուանայի խեժի ներմուծման առնչությամբ, դիմողը «մեղադրվել է քրեական հանցանքի մեջ» և հետևաբար իրավունք ուներ, և ստացել է, 6-րդ հոդվածի 2-րդ կետի պաշտպանությունը: Դատարանի համար բռնագրավման վարույթների նկատմամբ այս հոդվածի կիրառմանը վերաբերող հարցերը հետևյալն են. առաջին, արդյո՞ք դիմողի դատապարտումից հետո մեղադրողի դիմումը բռնագրավման կարգադրության կապակցությամբ հավասարազոր է նոր «մեղադրանք» հարուցելուն՝ 6-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով, և երկրորդ, եթե նույնիսկ այդ հարցին պետք է տալ ժխտական պատասխան, արդյո՞ք 6-րդ հոդվածի 2-րդ կետը այնուամենայնիվ ունի որոշ կիրառություն՝ պաշտպանելու համար դիմողին բռնագրավման վարույթի ընթացքում արված ենթադրություններից:

31. Որոշելու համար արդյո՞ք բռնագրավման վարույթի ընթացքում դիմողը «մեղադրվել է քրեական հանցանք կատարելու մեջ»՝ 6-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով, Դատարանը պետք է հաշվի առնի երեք չափանիշ, այն է՝ վարույթի որակումը ներպետական օրենսդրությամբ, դրանց էական բնույթը և պատժամիջոցի տեսակն ու խստությունը, որը դիմողը հավանական է, որ ունենա (տե՛ս Ա.Պ., Մ. Պ. և Տ. Պ.-ն ընդդեմ Շվեյցարիայի 1997թ. օգոստոսի 29-ի վճիռը, կետ 39 և, *mutatis mutandis*, Վելչն ընդդեմ Միացյալ թագավորության 1995թ. փետրվարի 9-ի վճիռը, Շարքեր Ա թիվ 307-Ա, կետեր 27-28):

32. Ինչ վերաբերվում է վերը նված չափանիշներից առաջինին՝ վարույթի որակմանը ներպետական օրենսդրությամբ, մինչ վերջին ժամանակներս Միացյալ թագավորության դատական որոշումներ բաժանվել են այն հարցի շուրջ, թե արդյո՞ք մեղադրողի դիմումը բռնագրավման կարգադրության համար համարվում է «քրեական մեղադրանքի» առաջադրում 6-րդ հոդվածի 2-րդ կետի ինքնուրույն իմաստով (տե՛ս վերը՝ կետեր 24-26), պարզ է, որ այդպիսի դիմումը չի ներառում որևէ նոր մեղադրանք կամ հանցանք ներպետական քրեական իրավունքի հասկացությունների իմաստով: Ինչպես դատարանի նախագահը նշել է *Բենջամին* վճռում (տե՛ս վերը՝ կետ 25), «անգլիական ներպետական օրենսդրության մեջ բռնագրավման կարգադրությունները դատապարտման գործընթացի մասն են կազմում, որը հաջորդում է մեղադրյալի դատապարտման այն քրեական հանցանքների համար, որոնցում նա մեղադրվում է»:

33. Անդրադառնալով գործին առնչվող երկրորդ և երրորդ չափանիշներին՝ վարույթի բնույթին և տեսակին և խնդրո առարկա պատժի խստությանը, ճշմարիտ է, որ 1994թ. օրենքով պահանջվող ենթադրությունը, որ նախորդ վեց տարիների ընթացքում դիմողի ունեցած ողջ գույքը հանդիսանա թմրաբիզնեսից ստացած շահույթ, ներպետական դատարանից պահանջում է ենթադրել, որ նա ներգրավված է եղել թմրանյութերի հետ կապված մեկ այլ անօրինական գործունեության մեջ մինչև այն հանցանքի կատարումը, որի համար նա դատապարտվել է: Ի հակադրություն մեղադրող կողմի սովորական պարտականության՝ ապացուցել մեղադրյալի դեմ հարուցված մեղադրանքների տարրերը, դիմողի վրա է դրված, հավանականությունների հավասարակշռման հիման վրա, խնդրո առարկա գույքը՝ թմրանյութերի առևտրով զբաղվելու միջոցով ձեռք բերած չլինելու փաստն ապացուցելու պարտականությունը: Դատավորի կողմից արված հարցաքննությանը հետևել է բռնագրավման կարգադրությունը՝ 91400GBP գումար բռնագրավել մեղադրյալից: Եթե դիմողը չվճարի այս գումարը, նա պետք է ևս երկու տարի անցկացնի բանտում, բացի այն ինը տարվա ժամկետից, որը նա արդեն ստացել էր 1995թ. նոյեմբերի հանցանքի առնչությամբ:

34. Այնուամենայնիվ, այս վարույթի նպատակը թմրաբիզնեսի հետ կապված որևէ այլ հանցանքի համար դիմողի դատապարտումը կամ արդարացումը չէ: Չնայած Թագավորական դատարանը ենթադրել է, որ նա եկամուտ է ստացել թմրաբիզնեսով զբաղվելիս անցյալում, սա, օրինակ, չի անդրադարձել նրա քրեական անցյալի վրա, որին ավելացել է միայն նրա դատապարտումը 1995թ. նոյեմբերի հանցանքի համար: Այս հանգամանքներում չի կարելի ասել, որ դիմողը մեղադրվել է «քրեական հանցանքի մեջ»: Փոխարենը, 1994թ. օրենքով նախատեսված ընթացակարգի նպատակն է՝ հնարավորություն տալ ներպետական դատարանին հաշվարկել այն գումարը, որով բռնագրավման կարգադրությունը պատշաճորեն կընդունվի: Դատարանը գտնում է, որ այս վարույթը համանման է դատարանի կողմից պատշաճորեն դատապարտված մեղադրյալի նկատմամբ տուգանքի չափը, կամ ազատագրվման ժամկետը որոշելուն: Սա, իհարկե, այն եզրակացությունն է, որին նա հանգել է Վելչն ընդդեմ Միացյալ թագավորության 1995թ. փետրվարի 9-ի վճռում (Շարքեր Ա թիվ 307-Ա) երբ, քննելով իրավիճակի լրջությունը, նա որոշել է, որ բռնագրավման կարգադրությունը հանդիսանում է «պատժամիջոց»՝ 7-րդ հոդվածի իմաստով:

35. Չնայած իր վերոհիշյալ եզրակացությանը, որ բռնագրավման կարգադրությունը ընդունելը չի ներառում որևէ նոր «մեղադրանքի առաջադրում» 6-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով, Դատարանը նաև քննության է առել այն հարցը, թե արդյո՞ք այդ դրույթը պետք է այնուամենայնիվ որոշակի կիրառություն ունենա՝ պաշտպանելու համար դիմողին բռնագրավման վարույթի ընթացքում արվող ենթադրություններից:

Այնուամենայնիվ, քանի որ պարզ է, որ 6-րդ հոդվածի 2-րդ կետը կարգավորում է քրեական վարույթն իր ամբողջության մեջ և ոչ պարզապես մեղադրանքի ըստ էության քննությունը (տե՛ս, օրինակ, Մինելին ընդդեմ Շվեյցարիայի, 1983թ. մարտի 25-ի վճիռը, Շարքեր Ա թիվ 62, կետ 30, Սեկանինան ընդդեմ Ավստրիայի, 1993թ. օգոստոսի 25-ի վճիռը, Շարքեր Ա , թիվ 266-Ա և Ալեն դե Ռիբենոնն ընդդեմ Ֆրանսիայի 1995թ. փետրվարի 10-ի վճիռը, Շարքեր Ա թիվ 308), 6-րդ հոդվածի 2-րդ կետով

նախատեսված անմեղության կանխավարկածի իրավունքը ծագում է միայն կոնկրետ հանցանքի կապակցությամբ որում «մեղադրվում է»: Եթե մեղադրյալը պատշաճորեն մեղավոր է ճանաչվել այդ հանցանքի համար, 6-րդ հոդվածի 2-րդ կետը չի կարող կիրառվել մեղադրյալի բնավորության և վարքի վերաբերյալ կատարված դատողությունների նկատմամբ՝ որպես պատժի նշանակման գործընթացի մի մաս, քանի դեռ նման մեղադրանքները չունեն այնպիսի բնույթ և աստիճան, որ համարվեն նոր «մեղադրանքի» հարուցում՝ Կոնվենցիայի ինքնուրույն իմաստով, ինչպես նշված է վերը՝ 28-րդ կետում (տե՛ս Էնգելը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների 1976թ. վճիռը, Շարքեր Ա թիվ 22, կետ 90):

36. Ուստի, որպես եզրակացություն, Դատարանը գտնում է, որ 6-րդ հոդվածի 2-րդ կետը կիրառելի չէ դիմողի դեմ հարուցված բռնագրավման վարույթի նկատմամբ:

#### **Բ. 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառումը**

37. Չնայած դիմողը 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսվող արդարացի դատաքննության իրավունքի հարցը չի բարձրացրել իր սկզբնական գանգատում, Դատարանում լսումների ժամանակ նրա խորհրդատուն ավելացրել է, որ այս դրույթը նույնպես կիրառելի է և խախտվել է: Կառավարությունը չի ժխտել, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է, բայց պնդել է, որ խախտում տեղի չի ունեցել:

38. Ամեն դեպքում, Դատարանը կրկնում է, որ նա գործի փաստերին օրենքում տրված որակումների վարպետ է և դիմողի կամ Կառավարության մոտեցումներով կաշկանդված չէ (տե՛ս, օրինակ Գերան և այլոք ընդդեմ Իտալիայի 1998թ. փետրվարի 19-ի վճիռը, ժողովածուներ 1998-Լ, կետ 44): Նա գտնում է, որ խնդրո առարկա վարույթի բնույթից ելնելով, տեղին է քննության առնել ներկա գործի փաստերը՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված արդարացի դատաքննության իրավունքի տեսանկյունից:

39. 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է «... ցանկացած քրեական մեղադրանքի որոշման ողջ վարույթի նկատմամբ», ներառելով այն վարույթը, որով սահմանվում է պատժաչափը (տե՛ս որպես արդի օրինակ, Ֆինդլեյն ընդդեմ Միացյալ թագավորության 1997թ. փետրվարի 25-ի վճիռը, ժողովածուներ 1997-Լ, կետ 69): Դատարանը վկայակոչում է իր վերոհիշյալ եզրակացությունը, որ բռնագրավման կարգադրության ընդունումը համանման է պատժի նշանակման ընթացակարգին (տես վերը՝ կետ 32): Այստեղից հետևաբար բխում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է խնդրո առարկա վարույթի նկատմամբ:

#### **Գ. Համապատասխանությունը 6-րդ հոդվածի 1-ին կետին**

40. Դատարանը գտնում է, որ ի լրումն 6-րդ հոդվածի 2-րդ կետում հատկապես մատնանշված լինելու, քրեական գործում անձի անմեղության կանխավարկածի իրավունքը և մեղադրողին ներկայացվող պահանջը՝ կրելու նրա դեմ առաջադրված մեղադրանքներն ապացուցելու պարտականության բեռը, կազմում է 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված արդարացի դատաքննության ընդհանուր գաղափարի մասը (տե՛ս, *mutatis mutandis*, Սաունդերսն ընդդեմ Միացյալ թագավորության 1996թ. դեկտեմբերի 17-ի վճիռը, ժողովածուներ, 1996-VI, կետ 68): Այս իրավունքը, սակայն բացարձակ չէ, քանի որ փաստի կամ իրավունքի կանխավարկածները գործում են ցանկացած քրեական իրավունքի համակարգում և սկզբունքորեն արգելված չեն Կոնվենցիայով, քանի դեռ պետությունները մնում են որոշակի սահմաններում՝ հաշվի առնելով հարցերի կարևորությունը և հարգելով պաշտպանության կողմի իրավունքները (տե՛ս Սալաբյակուն ընդդեմ Ֆրանսիայի 1988թ. հոկտեմբերի 7-ի վճիռը, Շարքեր Ա թիվ 141-Ա, կետ 28):

41. Դատարանը կոչված չէ քննության առնելու *in abstracto* 1994թ. օրենքի համապատասխանությունը Կոնվենցիային, որը թմրաբիզնեսով զբաղվելու հանցանքի համար դատապարտված անձին պատիժ նշանակող դատարանից պահանջում է ենթադրել, որ դատապարտումից ի վեր նրա ունեցած կամ քրեական գործի հարուցմանը նախորդող 6 տարիների ընթացքում ունեցած ցանկացած գույք, ստացվել է որպես վճար թմրաբիզնեսի կապակցությամբ և նույն ժամանակահատվածում դիմողի կողմից արված ցանկացած ծախս վճարվել է թմրաբիզնեսից ստացած շահույթներից: Փոխարենը Դատարանը պետք է որոշի արդյո՞ք դիմողի գործում այս ենթադրության կիրառման ձևը խախտել է 6-րդ հոդվածի

1-ին կետին հատուկ արդարացի դատավարության հիմնարար սկզբունքը (տե՛ս վերը նշված Սալաբյակուի վճիռը, կետ 30, և վերը նշված Սաունդերսի վճիռը, կետ 69):

42. Այս հարցի քննության ժամանակ Դատարանի ելակետն այն էր, որ պետք էր կրկնել նրա վերոհիշյալ եզրակացությունը, որ օրենքով նախատեսված ենթադրությունը չէր կիրառվել հեշտացնելու դիմողին մեղավոր ճանաչելը, այլ փոխարենը նպատակ ուներ հնարավորություն տալ ներպետական դատարանին հաշվարկել այն գումարը, որը բռնագրավման որոշումը պատշաճորեն կամրագրի (տե՛ս վերը՝ կետ 34): Այսպիսով, չնայած օրենքով նախատեսված կանխավարկածի միջոցով հաշվարկված բռնագրավման գումարը զգալի է՝ 91400 GBP, և չնայած դիմողին սպառնում է այն վտանգը, որ վճարումը չկատարելու դեպքում կենթարկվի երկու տարվա ազատազրկման, թմրաբիզնեսով զբաղվելու համար դատվածության պայմաններում այն դեր չի խաղում:

43. Այնուհետև, քանզի ենթադրությունը հրամայական էր, երբ պատիժ նշանակող դատարանը գնահատում էր թե արդյոք և ինչ չափով է դիմողը շահույթ ստացել թմրաբիզնեսից, համակարգը առանց երաշխիքի չէր: Ուստի գնահատումը կատարվել է դատարանի կողմից դատական ընթացակարգով, ներառյալ՝ դռնբաց լսումը, մեղադրող կողմի բարձրացրած հայտարարությունը և դիմողի հնարավորությունը՝ ներկայացնելու իրեղեն և բանավոր ապացույցներ: Դատարանը իրավասու էր կատարել ավելի պակաս գումարի բռնագրավման կարգադրություն, եթե հավանականությունների հավասարակշռմամբ, համոզվեր, որ միայն ավելի պակաս գումարը կարող էր վճարվել: Կարևոր երաշխիքը սակայն այն էր, որ 1994թ.օրենքի հիման վրա արված ենթադրությունը կարող էր հերքվել, եթե դիմողը ցույց տար, կրկին հավանականությունները հավասարակշռելով, որ նա իր սեփականությունը ձեռք է բերել ոչ թմրաբիզնեսի միջոցով: Այնուհետև, դատավորն իր հայեցողությամբ կարող էր չկիրառել ենթադրությունը, եթե գտնում է, որ դրա կիրառումը կհանգեցնի անարդարության լուրջ վտանգի:

44. Դատարանը նշում է, որ չկար որևէ ուղղակի վկայություն, որ դիմողը զբաղված է եղել թմրաբիզնեսով մինչև իր դատապարտմանը հանգեցրած դեպքերը: Թմրանյութերի առևտրից ստացած շահույթների հիման վրա, բռնագրավման կարգադրության գումարը հաշվարկելիս, ուստի, դատավորը հայտարարել է, որ հիմնվում է օրինական կարգով արված ենթադրության վրա (տե՛ս վերը՝ կետ 13): Իրականում, սակայն, մանրամասն ուսումնասիրելով դատավորի քայլերը, որի արդյունքում նա ստացել է 91400 GBP վերջնական գումարը, Դատարանը նշում է, որ հաշվի առնված յուրաքանչյուր կետի կապակցությամբ դատավորը համոզվել է կամ դիմողի կամ մեղադրողի ներկայացրած ապացույցների հիման վրա, որ դիմողը սեփականություն է ունեցել, կամ գումար է ծախսել, և որ ակնհայտ է, որ հետևությունն այն է, որ դրանց աղբյուրը եղել է անօրինական: Այսպիսով դատավորը գտել է «ապացուցման քաղաքակիրթ հիմքերի վրա իրական վկայություններ», որ տան վաճառքը X-ին իրական չէր, այլ փոխարենը, թաքցնում էր թմրանյութերի գումարների փոխանցումը (տե՛ս վերը՝ կետ 14): Ինչ վերաբերվում է հավելյալ 28000GBP-ին, որ ենթադրաբար դիմողը ստացել է X-ից՝ կանխիկ, դատավորն ասել է. «Ոչ մի խելամիտ բացատրություն ես չեմ ստացել [X]-ի մասնակցության վերաբերյալ և անհնարին է, իմ կարծիքով որևէ խելամիտ պատճառ տեսնել բացի այն, որ ... դա եղել է սովորական վճարում:» Նմանապես, հաշվարկելով ավտոմեքենաների վրա դիմողի ծախսած գումարները, դատավորն իր ենթադրությունը կառուցել է ծախսված գումարի չափի վերաբերյալ դիմողի նվազագույն նախահաշվարկի վրա (տե՛ս վերը՝ կետ 16): Քանի որ դիմողը չէր կարող ներկայացնել իր գումարների աղբյուրները բացատրող որևէ արձանագրություն, դատավորը ենթադրել է, որ դրանք թմրանյութերի առևտրի շահույթ են: Դատավորի եզրահանգումների վրա հիմնվելով չի կարող լինել որևէ առարկություն դատապարտման կապակցությամբ դիմողի միջոցները նրա ունեցվածքի մեջ ներառելու դեմ, եթե նույնիսկ օրինական կանխավարկածը չկիրառվեր:

45. Այնուհետև Դատարանը նկատում է, որ եթե դիմողի ֆինանսական գործունեության հաշվետվությունը ճշմարիտ լիներ, Դատարանի համար դժվար չէր լինի հերքել օրենքով սահմանված ենթադրությունը. ինչպես նշել է դատավորը, այն

ապացուցողական քայլերը, որոնք նա կարող էր կատարել, ցույց տալու համար իր գումարի և սեփականության օրինական աղբյուրները, «լիովին ակնհայտ էին, սովորական և պարզ» (տե՛ս վերը՝ կետ 13): Դիմողը չի կարող բողոքել անարդարությունից՝ ելնելով այն փաստից, որ դատավորը միգուցե իր հաշվարկում ներառել է նաև փաստաթղթերով չհիմնավորված գործունեությունից, օրինակ «ավտոմեքենաների ազդանշանից» ստացած եկամուտները:

46. Վերջապես դիմողի իրական ֆինանսական ակտիվի չափը հաշվարկելիս, կարևոր է այն փաստը, որ դատավորը հաշվի է առել միայն տուևը և ընտանեկան բիզնեսում դիմողի ունեցած մեկ երրորդ մասնաբաժինը՝ կոնկրետ գույքեր, որոնք ապացույցների հիման վրա ևս գտել է, որ դեռևս պատկանում են դիմողին: Դատավորն ընդունել է դիմողի վկայությունը այս ֆինանսների արժեքը հաշվելիս: Մինչ Դատարանը կարծում է, որ ընթացակարգի արդարության հարցը կարող է ծագել այն հանգամանքներում, երբ բռնագրավման ենթակա գումարը հիմնված է ենթադրյալ թաքնված ֆինանսների արժեքի վրա, սա բոլորովին էլ այն գործը չէ, ինչպես ներկայացնում է ներկա դիմողը:

47. Ընդհանուր առմամբ, հետևաբար, Դատարանը գտնում է, որ թմրաբիզնեսի մասին 1994թ. օրենքի համապատասխան դրույթների կիրառումը դիմողի նկատմամբ տեղի է ունեցել ողջամտության սահմաններում՝ ի նկատի ունենալով վտանգված արժեքների կարևորությունը և այն, որ մեղադրյալի իրավունքները լիարժեքորեն հարգվել են:

Այստեղից հետևում է, որ Դատարանը չի գտնում, որ օրենքով սահմանված ենթադրությունը զրկել է դիմողին արդարացի դատաքննությունից բռնագրավման վարույթում: Արդյունքում, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

## II. ԹԻՎ 1 ԱՐԾԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈՂՎԱԾԻ ՎԻՃԱԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄ

48. Դիմողը նաև բողոքել է, որ 1994թ. օրենքի համաձայն դատարանի ունեցած լիազորություններն անհիմն կերպով ընդլայնված են և խախտում է թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը, որը նշում է.

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոք չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ՝ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում, իր հիմնական շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս տուրքերի կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:»

Նա պնդել է, որ վերոհիշյալ հոդվածից բխող սկզբունքները գրեթե համանման են 6-րդ հոդվածի 2-րդ կետում նշվածներին, և որ չի ապահովվել արդար հավասարակշռումը հանրության շահի և անհատի իրավունքների միջև:

49. Կառավարությունը հայտարարել է, որ 1994թ. օրենքը նախատեսված էր պայքարելու համար թմրաբիզնեսի լուրջ հիմնախնդիրների դեմ՝ պատժելով դատապարտվող հանցագործներին, կանխելով այլ հանցանքներ և կրճատելով այն եկամուտները, որոնք ուղղված են ֆինանսավորելու թմրանյութերի ապագա առևտուրը: Օրինական ենթադրության կիրառումը համարժեք է այս նպատակին, հաշվի առնելով, *inter alia*, ֆինանսական ակտիվների և թմրաբիզնեսի միջև կապ հաստատելու դժվարությունը:

50. Դատարանը նշում է, որ գանգատի առարկա հանդիսացող «գույքը» մի գումար է՝ 91400 GBP, որը դիմողը պետք է վճարի Թագավորական դատարանի որոշման համաձայն և որը չվճարելու դեպքում նա ենթակա է երկու տարվա ազատազրկման: Դատարանը գտնում է, որ այս միջոցը հանդիսանում է միջամտություն դիմողի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքին և, հետևապես, թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը հետևապես կիրառելի է:

51. Ինչպես նախկինում նշվել է, դրամական հատուցման հարկադրանքը Կոնվենցիայի իմաստով հանդիսանում է «պատժամիջոց»: Հետևապես այն թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի շրջանակում է, որը, *inter alia*, թույլ է տալիս Պայմանավորվող պետություններին վերահսկել սեփականության օգտագործումը՝

տուգանքների վճարումն ապահովելու նպատակով: Սակայն այս դրույթը պետք է մեկնաբանվի 1-ին հոդվածի առաջին նախադասության ընդհանուր սկզբունքի լույսի ներքո և, հետևաբար պետք է գոյություն ունենա համամասնության ողջամիտ հարաբերակցություն կիրառված միջոցների և հետապնդվող նպատակների միջև (տե՛ս, ի թիվս այլ աղբյուրների, Ալան Յակոբսոնն ընդդեմ Շվեդիայի (թիվ 1) 1989թ. հոկտեմբերի 25-ի վճիռը, Շարքեր Ա թիվ 163, էջ 17, կետ 55)

52. Ինչ վերաբերում է բռնագրավման որոշմամբ հետապնդվող նպատակին, ինչպես նկատել է Դատարանը իր վերը նշված Վելչի վճռում (էջ 14, կետ 36), այս լիազորությունները տրվել են դատարաններին՝ որպես թմրաբիզնեսի պատուհասի դեմ պայքարի մի գեներ: Այսպիսով, բռնագրավման որոշման ընդունումը գործում է որպես զսպման միջոց ընդդեմ թմրաբիզնեսով զբաղվող անձանց, ինչպես նաև նպատակ ունի անձին զրկել թմրանյութերի առևտրից ստացած շահույթներից և բացառել այդ եկամուտների հավանական ապագա օգտագործումը թմրանյութերի առևտրում:

53. Դատարանն արդեն նշել է, որ բռնագրավման որոշման համաձայն վճարելիք գումարը զգալի է, այն է՝ 91400GBP: Սակայն, այն համապատասխան է այն գումարին, որը ինչպես գտնում է Թագավորական դատարանի դատավորը դիմողը ստացել է որպես շահույթ թմրանյութերի առևտրից նախորդ վեց տարիների ընթացքում և դա այն գումարն է, որը նա կարող էր ունենալ իր ունեցվածքը վաճառելով: Դատարանը վկայակոչում է իր այն վերոհիշյալ եզրակացությունը, որ կարգադրությունն ընդունելու ընթացակարգն արդար էր և հարգվել են մեղադրյալի իրավունքները:

54. Այս հիմքին հակառակ, և ելնելով հետապնդվող նպատակի կարևորությունից՝ Դատարանը չի կարծում, որ դիմողի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքին միջամտությունը համարժեք չէր: Այս ամենից հետևում է, որ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

#### ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. *Վճռում է՝* հինգ ձայնով ընդդեմ երկուսի, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը կիրառելի չէ:

2. *Վճռում է՝* միաձայն, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է, բայց նշված դրույթի խախտում տեղի չի ունեցել:

3. *Վճռում է՝* միաձայն, որ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Կատարված է անգլերեն և ծանուցված է գրավոր 2001թ. հուլիսի 5-ին՝ Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն:

Վինսենթ Բերգեր  
Քարտուղար

Գեորգ Ռես  
Նախագահ

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետի և Դատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն սույն վճռին կցվում է Սըր Նիկոլաս Բրատզայի և տկն Վաջիի մասնակի չհամընկնող կարծիքը:

Գ. Ռ.  
Վ. Բ.

#### ԴԱՏԱՎՈՐ ԲՐԱՏՅԱՅԻ ԵՒ ԴԱՏԱՎՈՐ ՎԱԶԻԿԻ ՄԱՍՆԱԿԻ ԶՅԱՄՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Մինչ մենք համաձայն ենք Դատարանի մեծամասնության եզրակացությանն այն մասին, որ սույն գործում տեղի չի ունեցել Կոնվենցիայի խախտում, մենք չենք կարող լիովին կիսել մեծամասնության հիմնավորումը 6-րդ հոդվածի հիմքով արված

գանգատի վերաբերյալ: Մասնավորապես, մենք չենք կարող ընդունել մեծամասնության այն տեսակետը, որ 6-րդ հոդվածի 2-րդ կետը չի կարող կիրառվել դիմողի դեմ հարուցված բռնագրավման վարույթի նկատմամբ:

Մեծամասնության կարծիքը հիմնավորվում է այն ենթադրությամբ, որ մինչ 6-րդ հոդվածի 2-րդ կետը կարգավորում է քրեական վարույթներն իրենց ամբողջության մեջ և ոչ պարզապես մեղադրանքի ըստ էության քննությունը, այն պահից, երբ մեղադրյալը հանցագործության մեջ մեղավոր է ճանաչվում, 6-րդ հոդվածի 2-րդ կետը չի կարող կիրառվել մեղադրյալի բնավորության և վարքի մասին արվող ենթադրությունների նկատմամբ՝ որպես պատժի նշանակման գործընթացի բաղկացուցիչ մաս, քանի դեռ ենթադրություններն այնպիսի բնույթի և աստիճանի չեն, որ համարվեն նոր «մեղադրանք»՝ 6-րդ հոդվածի ինքնավար իմաստով:

Մեր կարծիքով, սա նշանակում է քրեական մեղադրանքի կապակցությամբ դատաքննության համատեքստում շատ նեղ իմաստով անդրադառնալ 6-րդ հոդվածի 2-րդ կետի դերին:

Պետական խորհրդում Նորին գերազանցության փաստաբանը և Շոտլանդիայի գլխավոր փաստաբանն ընդդեմ Մաքինտոշի գործով վճռում լրդ Բինգհամ Քորնիլը ճշգրիտ կերպով նկատել է, որ Դատարանի վճիռն էնգելի գործում «որոշակիորեն անօգուտ էր» պատասխանողի համար՝ առաջարկելով, ինչպես նա արեց վճռի 90-րդ կետում մեջբերված հատվածում, որ 6-րդ հոդվածի 2-րդ կետը դառնում է գործին չառնչվող, եթե անձը մեղավոր է ճանաչվել օրենքին համապատասխան և որ որպես դատապարտման մաս, դատարանը կարող է հաշվի առնել այլ քրեական հանցանքների կատարման հետ կապված փաստեր՝ առանց այդ կետի պահանջները խախտելու վտանգի:

Սակայն Դատարանի՝ էնգելի վճռի մի հատված պետք է կարդալ, մենք կարծում ենք, որոշ զգուշությամբ՝ մի շարք պատճառներով:

Դատաճռի այդ հատվածից պարզ է, որ պատիժը սահմանելիս հաշվի առնված փաստերն անվիճելի էին՝ դրանք «հաստատված փաստեր էին, որոնց ճշմարտությունը [երկու դիմողները] չեն վիճարկում»: Այս առումով դրանք չեն տարբերվել այլ «փաստերից», որոնք դատապարտող դատարանը սովորաբար հաշվի է առնում պատիժը սահմանելիս, ինչպես օրինակ, մեղադրյալի նախորդ դատապարտումները: Էնգելի գործում չվիճարկվող «փաստերը» դիմողների կողմից նախորդ դեպքերում երկու փաստաթղթերի բաշխումն է, որոնք «ժամանակավորապես արգելվել են Փաստաթղթերի բաշխման հրամանագրի հիման վրա»: Դիմողների սխալ վարքի այս նախորդ օրինակները հաշվի են առնվել դատապարտող դատարանի կողմից պատիժը սահմանելիս՝ միայն որպես «[դիմողների] ընդհանուր վարքի ցուցիչներ», այն է՝ հավանաբար, իրավանորմերը խախտելուն և իշխանություններին ընդհանուր առմամբ չհարգելուն պատրաստ լինելը: Հետևաբար Դատարանը անդրադառնում է դրանց որպես «անձի անհատականությանը վերաբերող գործոնների»:

Այստեղ իրավիճակը, ինչպես ճշգրտորեն վիճարկում է դիմողը, շատ տարբեր է: Էական «փաստերը», այն է՝ արդյո՞ք դիմողի սեփականություն հանդիսացող գույքը կամ միջոցները թմրաբիզնեսից ստացված եկամուտ են, թե՛ ոչ, ուղղակիորեն հարցականի տակ են: Դրանք են բռնագրավման վարույթի առանցքում և փաստեր են, որոնք պետք է որոշի դատապարտող դատարանը: Ավելին, ի տարբերություն էնգելի գործի, նշված փաստերը հաստատվում են և հաշվի են առնվում ոչ պարզապես կալանավորման ժամկետը որոշելիս դիմողի անհատականությունը գնահատելու նպատակով, այլ նաև հանցավոր գործունեությունից ստացված զգալի գումարից զրկելու նպատակով, որը որոշում է դատարանը օրենքով սահմանած կանխավարկածի օգնությամբ:

Էնգելի գործը ամեն դեպքում որոշվել է Դատարանի գոյության համեմատաբար վաղ շրջանում և առաջին գործն էր, որում ուղղակիորեն մատնանշված էր 6-րդ հոդվածի 2-րդ կետը: 2-րդ կետի կիրառման շրջանակը և դաշտը էական զարգացում են ապրել ավելի արդի նախադեպային իրավունքում: Մասնավորապես, Մինելիի և Սեկանինայի գործերում (տե՛ս Մինելիի ընդդեմ Շվեյցարիայի 1983թ. մարտի 25-ի վճիռը, Շարքեր Ա թիվ 62, Սեկանինան ընդդեմ Ավստրիայի 1993թ. օգոստոսի 25-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 266-Ա) որոշվել է, որ 6-րդ հոդվածի 2-րդ կետը կարելի է կիրառել նույնիսկ քրեական մեղադրանքի կապակցությամբ անձի արդարացումից հետո և երբ մեղադրյալի դեմ դատավարությունը մոտենում է իր ավարտին:

Հավանաբար ավելի կարևոր է, որ էնգելի գործում Դատարանը անմեղության կանխավարկածի խախտման վերաբերյալ գանգատը քննարկել է բացառապես 6-րդ

հողվածի 2-րդ կետի հիման վրա և չի դիտարկել այդ կետը 1-ին կետում նախատեսվող արդար դատավարության ընդհանուր պարտավորության լույսի ներքո: Այդ գործով Դատարանի վճռից հետո եղել են երկու կարևոր զարգացումներ:

Առաջին հերթին, այժմ հստակ հաստատված է, որ 6-րդ հողվածի ընդհանուր պահանջները կիրառվում են քրեական վարույթի բոլոր փուլերում մինչև ցանկացած դիմումի վերջնական լուծումը, ներառյալ՝ պատժի նշանակման հարցը: Սա Դատարանը սահմանել է էքլի գործում (տե՛ս էքլն ընդդեմ Գերմանիայի 1982թ. հուլիսի 15-ի վճիռը, Շարքեր Ա թիվ 51) դատավարությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու պահանջի առնչությամբ: Այն կիրառվել է Ֆինդլիի գործում (տե՛ս Ֆինդլիյն ընդդեմ Միացյալ թագավորության 1997թ. փետրվարի 25-ի վճիռը, Վճիռների և որոշումների ժողովածու 1997-Ի, էջ 263) դատարանի անկախության և անաչառության մասին գանգատի համատեքստում, ըստ որի դիմողը մեղավոր է ճանաչվել և որտեղ միակ հարցը եղել է պատժի նշանակման հարցը: Վերջերս այդ սկզբունքը կիրառվել է Թ.-ի և Վ.-ի գործերում (տե՛ս Թ.-ն ընդդեմ Միացյալ թագավորության և Վ.-ն ընդդեմ Միացյալ թագավորության 1999թ. դեկտեմբերի 16-ի վճիռը) որտեղ որոշվել է, որ գումարի չափի սահմանումը պետք է լինի քրեական մեղադրանքը որոշելու մաս, որը, հետևաբար պետք է կատարի դատական մարմինը՝ բավարարելով անկախության և անաչառության պահանջները:

Մյուս զարգացումը Դատարանի պատրաստակամությունն է 6-րդ հողվածի այլ կետերի պահանջները դիտել որպես 1-ին կետում արդարացի դատաքննության պահանջի յուրահատուկ դրսևորումներ: Սա հատկապես այսպես է, երբ վերաբերում է 3-րդ կետի դրույթներին, որտեղ Դատարանը հաստատապես քննության է առել առանձին ենթակետերի պահանջների խախտումների մասին գանգատները 1-ին կետի արդարության համընդհանուր պահանջի հետ կապակցված: Իսկապես հնարավոր չէ գտնել այն նախադեպային իրավունքը, որը այսքան պարզորոշ կերպով բացահայտում է 2-րդ և 3-րդ կետերի կապը: Բայց այսպիսի կապը իրոք գոյություն ունի և անմեղության կանխավարկածը արդարացի դատաքննության հիմնարար տարրն է: Ավելին, այս ազդեցության պարզ մատնանշումներ կան Դատարանի նախադեպային իրավունքում: Լյուքզի գործում (տե՛ս Լյուքզն ընդդեմ Գերմանիայի 1987թ. օգոստոսի 25-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 123-Ա, էջ 22 կետ 52) Դատարանը նշում է, որ ինքն «անընդհատ նշել է, որ 1-ին կետը մարմնավորում է այն հիմնական կանոնը, որի հատուկ կիրառություններն են ներկայացնում 2-րդ և 3-րդ կետերը»: Ջոն Մյուրեյի գործում (տե՛ս Ջոն Մյուրեյն ընդդեմ Միացյալ թագավորության, 1996թ. փետրվարի 8-ի վճիռը, Վճիռների և որոշումների ժողովածու 1996-Ի, էջ 30) մեղադրյալի լռության հետևանքով արված անբարենպաստ ենթադրությունը Դատարանը քննարկել է և 1-ին և 2-րդ կետերի շրջանակներում, լռության իրավունքը, ինքն իրեն չմեղադրելու իրավունքը և այն սկզբունքը, որ մեղադրող կողմը պետք է կրի հանցանքի ապացուցման ծանրությունը, դիտարկվել են որպես 1-ին կետի՝ արդարացի դատաքննության դրսևորումներ, ինչպես նաև 2-րդ կետի՝ անմեղության կանխավարկածի հատուկ պահանջներ: Ներկա գործին ավելի մոտ Սալաբյակուն ընդդեմ Ֆրանսիայի (1988թ. հոկտեմբերի 7-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 141-Ա) և Փհամ Յուանգն ընդդեմ Ֆրանսիայի (1992թ. սեպտեմբերի 25-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 243) գործերում Դատարանը դիմողների գանգատներն իրենց նկատմամբ կանխավարկածի կիրառման մասին քննության է առել երկու կետերի հիմքերով՝ նշելով, որ նախորդ գործում Դատարանն իր քննությունը սկսվել է 2-րդ կետի հիման վրա, որովհետև «անմեղության կանխավարկածը, որը 6-րդ հողվածի 1-ին կետով երաշխավորված արդարացի դատաքննության իրավունքի մի դրսևորումն է, գործի համար կարևոր նշանակություն ունի»: (տե՛ս կետ 25 և կետ 31):

Ծշմարիտ է, որ Սալաբյակուի և Փհամ Յուանգի գործերում, ի տարբերություն ներկա գործի, Դատարանը առնչվել է կանխավարկածների կիրառմանը ոչ թե պատժի նշանակման փուլում, այլ գործն ըստ էության քննելու փուլում և մինչև դիմողներին մեղավոր ճանաչելը: Այնուամենայնիվ, ինչպես վերաքննիչ դատարանը մատնանշել է Ռ.-ն ընդդեմ Բենջաֆիլդի և այլոց գործում, Դատարանը Մինելիի գործում շեշտել է, որ 6-րդ հողվածի 2-րդ կետը, ինչպես և 6-րդ հողվածի 1-ին կետը, «կարգավորում է քրեական վարույթն ամբողջությամբ՝ անկախ մեղադրանքի արդյունքներից, և ոչ

պարզապես մեղադրանքի ըստ էության քննությունը»: Ավելի կոնկրետ, խիստ նմանություն ենք տեսնում այն գործերի միջև, որտեղ կանխավարկածները կիրառվել են դատաքննության փուլում՝ հանցանքների մեջ մեղադրվող մեղադրյալի մեղքը որոշելու նպատակով և այն գործերի, ինչպիսին որ ներկա գործն է, որտեղ կանխավարկածները կիրառվել են դատապարտումից հետո և որպես պատժի նշանակման պրոցեսի մաս՝ որոշելու համար, թե մեղադրյալի որ ֆինանսական ակտիվն է համարվելու թմրաբիզնեսից ստացած շահույթ և հետևապես ենթակա բռնագրավման: Ինչ կարծիքով, վերաքննիչ դատարանը Բենջաֆիլդի գործում ճիշտ էր որոշել, որ բռնագրավման գործընթացը պետք է քննարկվի այն հիմքով, որ այն 6-րդ հոդվածի և 1-ին և 2-րդ կետերի պահանջների առարկան է և ճիշտ է նկատել, որ «արդարության» պահանջն այս համատեքստում էականորեն կարևորում է Սալաբյակուի և Փիամ Յուանգի վճիռներում Դատարանի կողմից սահմանած պահանջները:

Ինչ վերաբերում է այն հարցին, արդյո՞ք օրենքով սահմանված կանխավարկածները, ինչպես կիրառվել են դիմողի գործում, անցնում են ողջամտության սահմանները, որոնցով պահանջվում է, որ նրանք սահմանափակվեն և արդյո՞ք հարգվել են պաշտպանության իրավունքները, մենք լիովին համաձայն ենք Դատարանի մեծամասնության եզրակացությանը և հիմնավորմանը:

**ԿՈՒՂԱՆ ԸՆԴՂԵՄ ԼԵՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ**  
**CASE OF KUDLA v. POLAND**

**(Գանգատ թիվ 30210/96)**

**Ղատարանի 2000թ. հոկտեմբերի 26-ի**  
**վճիռը**

**Ստրասբուրգ**

**Կուղլան ընդդեմ Լեհաստանի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, նիստ գումարելով որպես Սեօ պալատ՝ դատավորների հետևյալ կազմով.

պրն Լ. Վիլդիաբեր, *Նախագահ*,  
տկն Է. Պալմ,  
պրն Ժ.-Պ. Կոստա,  
պրն Ա. Պաստոր Ռիդրիխտ,  
պրն Գ. Բոնելո,  
պրն Ջ. Մակարչիկ,  
պրն Պ. Կ. Ռիս,  
պրն. Ռ. Թուրմեն,  
տկն Ֆ. Թուլկենս,  
տկն Վ. Ստրազնիչկա,  
պրն Պ. Լորենզեն,  
պրն Ս. Ֆիշբախ,  
պրն Ջ. Կասադեվալ,  
տկն Յ. Ս. Գրեվ,  
պրն Ա. Բ. Բակա,  
տկն Ս. Բոտուչարովա,  
պրն Ս. Ուգրեխելիձե,

նաև պրն Փ. Ջ. Մահոնեյը, *Քարտուղարի տեղակալ*,

2000թ. հունիսի 7-ի և հոկտեմբերի 18-ի դռնփակ խորհրդակցություններից հետո ընդունեց հետևյալ վճիռը:

**ՎԱՐՈՒՅԹԸ**

1. Գործը, մինչև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») թիվ 11 արձանագրության<sup>1</sup> ուժի մեջ մտնելը կիրառվող դրույթների հիման վրա, Ղատարան են հանձնել Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը («Հանձնաժողով»)՝ 1999թ. հոկտեմբերի 30-ին և Լեհաստանի քաղաքացի պրն Անջեյ Կուղլան («դիմումատու») 1999թ.

---

<sup>1</sup> *Քարտուղարի նշումը*՝ թիվ 11 արձանագրությունն ուժի մեջ է մտել 1998թ. նոյեմբերի 1-ին:

դեկտեմբերի 2-ին (Կոնվենցիայի թիվ 11 արձանագրության 5-րդ հոդվածի 4-րդ կետ և նախկին 47-րդ և 48-րդ հոդվածներ):

2. Գործի համար առիթ է հանդիսացել դիմողի 1995թ. ապրիլի 12-ին Հանձնաժողովին ուղղված՝ Կոնվենցիայի նախկին 25-րդ հոդվածի հիման վրա ընդդեմ Լեհաստանի Հանրապետության գանգատը (թիվ 30210/96):

3. Դիմողը, մասնավորապես, հայտարարել է, որ ինքը կալանքի տակ գտնվելու ընթացքում պատշաճ հոգեբուժական բուժում չի ստացել, և որ իր կալանավորումը չափազանց երկարատև էր, չի հարգվել իր՝ «ողջամիտ ժամկետում դատաքննության» իրավունքը, և որ ինքը չի ունեցել պաշտպանության արդյունավետ միջոցներ՝ որոնց միջոցով կարողանար բողոքարկել իր դեմ հարուցված քրեական գործի քննության չափազանց երկարատև ընթացքը:

4. Հանձնաժողովը գանգատը մասնակիորեն ընդունելի է հայտարարել 1998թ. ապրիլի 20-ին: 1999թ. հոկտեմբերի 26-ի իր զեկույցում (Կոնվենցիայի նախկին 31-րդ հոդված) Հանձնաժողովը կարծիք է հայտնել, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում (տասնչորս ձայնով՝ ընդդեմ տասներեքի), որ տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում (միաձայն), և որ անհրաժեշտություն չկա քննել՝ արդյո՞ք տեղի է ունեցել 13-րդ հոդվածի խախտում (տասնութ ձայնով՝ ընդդեմ իննի)<sup>1</sup>:

5. Դատարանում դիմողին, որն ստացել էր իրավաբանական օգնություն, ներկայացնում էին Կրակով քաղաքում աշխատող փաստաբաններ պրն Կ. Թորը և պրն Պ. Սո Հաջը (Լեհաստան): Լեհաստանի կառավարությունը («Կառավարություն») ներկայացնում էր Կառավարության ներկայացուցիչ պրն Կ.Դրժևիկին Արտաքին գործերի նախարարությունից :

6. 1999թ. դեկտեմբերի 6-ին Մեծ պալատի խումբը որոշել է, որ գործը պետք է քննի Մեծ պալատը (Դատարանի կանոնակարգի 100-րդ կանոնի 1-ին կետ): Մեծ պալատի կազմը որոշվել է Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի և Դատարանի կանոնակարգի 24-րդ կանոնի համաձայն: Դատարանի նախագահը կարգադրել է, որ արդարադատության պատշաճ իրականացման շահերից ելնելով գործը պետք է քննի այն նույն Մեծ պալատը, որը քննել է Միկուլսկին ընդդեմ Լեհաստանի գործը (գանգատ թիվ 27914/95) (24-րդ և 71-րդ կանոններ, 43-րդ կանոնի 2-րդ կետ):

7. Դիմողը և Կառավարությունը ներկայացրել են իրենց գրավոր բացատրությունները:

8. Հետագայում Մեծ պալատի նախագահը Կառավարությանը հանձնարարել է ներկայացնել դիմողի բժշկական զննումների արձանագրությունները, որոնք կատարվել են, երբ 1993 թվականի հոկտեմբերի 4-ից հետո դիմողը գտնվել է կալանքի տակ՝ Կրակովի մեկուսարանում: Կառավարությունը համապատասխան փաստաթղթերը ներկայացրել է 2000թ. մայիսի 12-ին: Պատճենները դիմողին են ուղարկվել 2000թ. մայիսի 25-ին:

9. Լուումները տեղի են ունեցել դռնբաց նիստում, Սարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 2000թ. հունիսի 7-ին (59-րդ կանոնի 2-րդ կետ):

Դատարանում հանդես են եկել՝

(ա) *Կառավարության անունից՝*

պրն Կ. Դրժևիկի,  
տկն Մ. Վ. Սեկ-Վիադերեկ,  
պրն Ա. Կալի Սկի  
պրն Վ. Դոյուբան,

*Ներկայացուցիչ,*

*փաստաբան,  
խորհրդական.*

(բ) *դիմողի անունից՝*

պրն Կ. Թոր,  
պրն Պ. Սո Հաջ,

*փաստաբան.*

<sup>1</sup> Քարտուղարի նշումը. Հանձնաժողովի կարծիքի ամբողջական տեքստը եւ զեկույցում ընդգրկված վեց առանձին կարծիքները կիրատարակվեն որպես հավելված դատավճռի վերջնական տպագրված տարբերակում (Դատարանի ընտրովի վճիռների եւ որոշումների պաշտոնական ժողովածուներում), իսկ Հանձնաժողովի զեկույցի պատճեն կարելի է ստանալ քարտուղարությունում:

Դատարանը լսեց պրն Սո Յաջի, պրն Դոժևիկի, պրն Ա. Կալի Սկիի, տկն Մ. Վ. Սեկ-Վիադերեկի և պրն Թորի ելույթները:

## ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

#### Ա. Դիմողի կալանավորումը և նրա դեմ հարուցված վարույթը

10. 1991թ. օգոստոսի 8-ին դիմողը բերվել է Կրակովի շրջանային դատախազի մոտ (*Prokurator Wojewodzki*) խարդախության և կեղծարարության մեղադրանքով, և կալանավորվել է: Քանի որ դիմողը դատախազին տեղյակ է պահել, որ ինքը տառապում է տարբեր տկարություններով, մասնավորապես, դեպրեսիայով, որոշվել է, որ նա ենթարկվի բժշկական հետազոտության: Մի քանի օր անց կատարված զննությունից պարզվել է, որ դիմողը կարող է կալանքի ենթարկվել: Նրան տեղավորել են Կրակովի մեկուսարանում (*Areszt ledczy*):

11. Այնուհետև, առանց տարեթիվ նշելու, դիմողը բողոքել է կալանավորման կարգադրության դեմ: 1991թ. օգոստոսի 21-ին Կրակովի շրջանային դատարանը (*S d Wojewodzki*) մերժել է նրա բողոքը, պարզելով, որ կան բացահայտ փաստեր առ այն, որ նա կատարել է այն հանցանքները, որոնցում մեղադրվում է: Անդրադառնալով նրա բժշկական հետազոտության արդյունքներին՝ դատարանը չի գտել այնպիսի հանգամանքներ, որոնք կարդարացնեին նրան ազատ արձակելը՝ առողջության հետ կապված հիմքերով:

12. 1991թ. օգոստոսից մինչև 1992թ. հուլիսի վերջը դիմողը ներկայացրել է երեսուն դիմում՝ իրեն ազատ արձակելու համար, և բողոքներ՝ իրեն ազատելը մերժելու դեմ:

13. Միևնույն ժամանակ, 1991թ. հոկտեմբերին դիմողը բանտում ինքնասպանության փորձ է կատարել: 1991թ. նոյեմբերի 4-ից նա անժամկետ հացադուլ է հայտարարել:

14. 1991թ. նոյեմբերին իշխանությունները կարգադրել են դիմողին ենթարկվել բժշկական հետազոտության:

1991թ. նոյեմբերի 25-ին Ջագելոնյան համալսարանի դատական հոգեբուժության ֆակուլտետի փորձագետները ներկայացրել են համապատասխան զեկույց: Բժիշկները եզրակացրել են, որ դիմողը չի կարող կալանքի տակ պահվել սովորական մեկուսարանում, և խորհուրդ են տվել նրա կալանքը շարունակվելու դեպքում նրան տեղավորել բանտային հիվանդանոցի հոգեբուժական բաժնում: Հետագայում դիմողը տեղափոխվել է Բիտոմի բանտային հիվանդանոց, որտեղ նրան տեղավորել են ներքին հիվանդությունների բաժնում, և նա հոգեբուժում է ստացել: Դիմողը հիվանդանոցում գտնվել է անհայտ ժամկետով: Հետո նրան դարձյալ տեղափոխել են դարձյալ Կրակովի մեկուսարան:

15. 1992թ. հունվարի 20-ին և փետրվարի 27-ին դիմողը հետազոտվել է դատաբժշկական մասնագետների կողմից: Նրանք եզրակացրել են, որ նա պետք է մեկուսարանում ստանա հոգեբուժում, բայց անհրաժեշտություն չկա նրան տեղավորել բանտային հիվանդանոցի հոգեբուժական բաժանմունքում:

16. 1992թ. ապրիլի 30-ին դիմողի գործը հանձնվել է Կրակովի շրջանային դատարան: Ընդհանուր առմամբ, նրա եւ նրա ինը մեղսակիցների դեմ հարուցվել է քսանինը մեղադրանք: Գործը կազմում էր տասնինը հատոր: Դատախազը խնդրել էր դատարանին լսել իննսունութ վկաների ցուցմունքներ:

17. 1992թ. հունիսի 15-ին, դատարանի պահանջով, Կրակովի հոգեբուժական հիվանդանոցի և Ջագելոնյան համալսարանի բժշկական ֆակուլտետի բժիշկները զեկույցել են դիմողի հոգեկան վիճակի մասին: Նրանց զեկույցը, *inter alia*, հետևյալն էր.

«Հիվանդի մոտ առկա են ինքնասպանության կայուն միտումներ: Բժշկական հետազոտության արդյունքում մենք հայտնաբերեցինք, որ նա տառապում է խորացած դեպրեսիայի ախտանիշով՝ զուգակցված ինքնասպանության մասին

մտքերով: Ինքնասպանության մասին մտքերի ինտենսիվության և արդեն իսկ ինքնասպանության փորձ կատարելու փաստերից ելնելով, նա պետք է ստանա հոգեբուժում: Նրա կալանավորումը լրջորեն վտանգի է ենթարկել նրա կյանքը (հետագայում ինքնասպանություն կատարելու փորձի լուրջ հավանականություն) ...»:

18. 1992թ. հուլիսի 27-ին Կրակովի շրջանային դատարանը չեղյալ է հայտարարել կալանավորման կարգադրությունը:

19. 1992թ. հոկտեմբերի 26, 27 և 28-ին և դեկտեմբերի 14 և 15-ին դատարանը քննություն է անցկացրել դիմողի գործով: 1993թ. փետրվարի 8-ի նիստը տեղի չի ունեցել դիմողի բացակայության պատճառով: Նրա փաստաբանը ներկայացրել է տեղեկանք առ այն, որ դիմողը բացակայում է հիվանդության պատճառով. այնուամենայնիվ, դատարանը կարգադրել է, որ դիմողը երեք օրվա ընթացքում բժշկական տեղեկանք ներկայացնի դատական բժշկի կողմից, «որը չկատարելու դեպքում, նրա ներկայությունն ապահովելու համար նախազգուշական միջոցներ (*rodki zapobiegawcze*) ձեռնարկելու պարտավորությունը կդրվի նրա վրա»: Դիմողը չի ներկայացրել պահանջվող տեղեկանքը, բայց 1993թ. փետրվարի 12-ին տեղյակ է պահել դատարանին, որ սանատոր բուժում է ստանում winosj cie-ում և պետք է այնտեղ մնա մինչև 1993թ. մարտի 7-ը: Քանի որ դիմողը չէր տեղեկացրել դատարանին այն հասցեն, ուր կարող էին ուղարկել դատական ծանուցագրերը, 1993թ. փետրվարի 18-ին դատարանը հետախուզում հայտարարելու մասին որոշում է կայացրել՝ նրա գտնվելու վայրը պարզելու և նորից կալանավորելու համար՝ լսումներին չներկայանալու հիմքով: Հաջորդ նիստը, որը պետք է կայանար 1993թ. մարտի 16-ին, տեղի չի ունեցել դիմողի բացակայության պատճառով:

20. 1993թ. փետրվարի 18-ի՝ կալանավորման մասին որոշումը չի կատարվել մինչև 1993թ. հոկտեմբերի 4-ը, երբ դիմողը ձերբակալվել է ոստիկանության կողմից ճանապարհատրանսպորտային երթևեկության խախտում կատարելու կապակցությամբ: Նա տեղավորվել է Կրակովի մեկուսարանում:

21. Շրջանային դատարանը նիստերը նշանակել է 1993թ. հոկտեմբերի 6-ին, 15-ին և նոյեմբերի 17-ին, բայց բոլորն էլ հետաձգել է այն պատճառով, որ դիմողի մտավոր վիճակը (մասնավորապես՝ կենտրոնանալու դժվարություններ ունենալը) թույլ չէր տալիս նրան պատշաճ կերպով մասնակցել դատավարությանը: Բանտի բժշկի՝ 1993թ. նոյեմբերի 17-ի գրառումներում նրա վիճակը նկարագրվել էր հետևյալ կերպ.

«Ի վիճակի է մասնակցելու այսօրվա դատավարությանը (սահմանափակ ակտիվ մասնակցությամբ՝ կենտրոնանալու դժվարություններ [անընթեռների բառեր] ունենալու պատճառով)»:

Հետագա փորձագիտական եզրակացության համաձայն (որը դատարանն ստացել էր 1993թ. վերջին)՝ դիմողն այդ ժամանակաընթացքում «չէր տառապում հոգեկան հիվանդությամբ», և նրա հոգեկան վիճակը «չէր կարող խոչընդոտել նրան կալանքի տակ պահելուն»:

22. Այդ ընթացքում, 1993թ. հոկտեմբերի 18-ին դիմողի փաստաբանը բողոքել է կալանավորման որոշման դեմ՝ փաստարկելով, որ դիմողը 1992թ. ազատ արձակվելուց հետո տևական բուժում է ստացել իր ծանր դեպրեսիայի կապակցությամբ, և դատավարությանը չներկայանալու պատճառը նրա հոգեկան վիճակն է եղել, սակայն բողոքը մերժվել է:

23. 1993թ. հոկտեմբերի և 1994թ. նոյեմբերի ընթացքում դիմողը ներկայացրել է ևս քսանմեկ դիմում՝ ազատ արձակվելու համար, և բողոքարկել է յուրաքանչյուր մերժում. ե՛լ դիմումները, ե՛լ բողոքները որևէ արդյունք չեն տվել:

24. 1993թ. դեկտեմբերի 13-ին, 14-ին և 16-ին դատարանը նշանակել է նիստեր: 1994թ. հունվարի վերջին նշանակված լսումները հետաձգվել են, քանի որ 1994թ. հունվարի 26-ին դիմողն ինքնասպանության փորձ է կատարել՝ չափից ավելի դեղաքանակ ընդունելով (տե՛ս ստորև՝ 63-64-րդ կետեր):

25. Դատավարությունը շարունակվել է 1994թ. փետրվարի 14-ին, 15-ին և 16-ին: 1994թ. մարտի 9-ի և 10-ի նիստերը հետաձգվել են նախազահող դատավորի հիվանդության պատճառով: Հետագա լսումները տեղի են ունեցել 1994թ. հունիսի 14-ին, 15-ին և 16-ին: Այդ ընթացքում դիմողը հոգեբուժական հետազոտություն է անցել Ռոք ավ բանտի հիվանդանոցում (տե՛ս ստորև՝ կետ 58):

26. Հաջորդ նիստը տեղի է ունեցել 1994թ. հուլիսի 11-ին: 1994թ. հուլիսի 12-ի և 14-ի նիստերը հետաձգվել են, քանի որ դիմողը հրաժարվել է իր պաշտպանից: Դատավարությունը շարունակվել է 1994թ. սեպտեմբերի 20, 21 և 22-ին, հոկտեմբերի

25-ին և 26-ին և նոյեմբերի 14-ին և 15-ին: 1994թ. դեկտեմբերի 20, 21 և 22-ին կայանալիք նիստերը հետաձգվել են, քանի որ դիմողի հանցակիցներից մեկն այդ ժամանակ տեղափոխվել էր հիվանդանոց:

27. Այդ ընթացքում, 1994թ. նոյեմբերի 17-ին դիմողը բողոքել է Կրակովի շրջանային դատարանի նախագահին՝ իր երկարատև կալանքի և իր գործի քննության ընթացքի կապակցությամբ: Նա, մասնավորապես բողոքել է, որ իր բոլոր ինը հանցակիցներն ազատ են արձակվել, իսկ ինքը դեռևս կալանքի տակ է՝ չնայած այն փաստին, որ իր կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածն ընդհանուր առմամբ արդեն գերազանցում է երկու տարին: Նա պնդել է, որ նիստերի արձանագրություններում չեն գրանցվել վկաների ցուցմունքները, որ դատարանն արձանագրություններում չի գրանցել իր և իր փաստաբանի ներկայացրած բացատրությունները ու թույլ չի տվել իրեն ազատորեն արտահայտել գործի փաստերի իր տարբերակը: Իր դեմ հարուցված քրեական գործի դատավարությունը, որը մինչ այդ օրը տևել է ավելի քան չորս տարի, իր բնորոշմամբ, «մղձավանջ» է եղել:

28. 1994թ. դեկտեմբերի 7-ին դիմողը դիմել է դատարան բողոքելով մեկուսարանում իր բուժման դեմ: Նախագահող դատավորը բացատրություններ է պահանջել մեկուսարանի իշխանություններից: Նրանք տեղեկացրել են դիմողի բժշկական հետազոտությունների քանակի, դրանց մանրամասնությունների մասին և ներկայացրել համապատասխան բժշկական արձանագրությունների պատճենները:

29. Մոտավորապես նույն ժամանակահատվածում դիմողը նորից խնդրել է դատարանին ազատ արձակել իրեն՝ առողջական հիմքերով: Նա խնդրանքը նաև հիմնավորել է իր ընտանեկան վիճակով, պնդելով, որ իր երկարաժամկետ կալանքը լուրջ լարվածություն է իր ընտանիքի համար: 1994թ. դեկտեմբերի 8-ին Կրակովի շրջանային դատարանը մերժել է բողոքը:

30. 1995թ. հունվարի 4-ին դիմողի բողոքի հիման վրա Կրակովի վերաքննիչ դատարանը (*S d Apelacyjny*) հաստատել է Շրջանային դատարանի որոշումը և ընդունել, որ դիմողի կալանավորումը պետք է շարունակվի՝ հաշվի առնելով այն հիմնավորված կասկածները, որ նա կատարել է իրեն մեղսագրվող հանցագործությունները և այն փաստը, որ նա կալանավորվել է քննությունից թաքնվելու վտանգի առկայության հիմքով: Դատարանը նաև նշել է, որ չնայած դիմողի ընտանիքը ծանր կացության մեջ է, սակայն նման հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ նրան ազատ արձակելու համար:

31. 1995թ. հունվարի 25-ին դիմողի փաստաբանը դիմել է Կրակովի շրջանային դատարան՝ կալանավորման որոշումը վերացնելու և ազատ արձակելու դիմողին՝ ուստիկանության հսկողությամբ: Նա ընդգծել է, որ 1995թ. հունվարի 23-ին դիմողը կրկին ինքնասպանության փորձ է կատարել մեկուսարանում՝ փորձելով կախել իրեն (տե՛ս ստորև՝ կետեր 69-70): Այս դեպքը՝ նրա քրոնիկ դեպրեսիայի հետ մեկտեղ, պարզ զգուշացում է, որ երկարատև կալանքը կարող է վտանգել նրա կյանքը: Այնուհետև նա նշել է, որ դիմողը կրկին կալանավորվել է միայն այն պատճառով, որ չի ներկայացրել նիստերին: Այդ հիմքը չի կարող այլևս արդարացնել նրա կալանքի տակ գտնվելը՝ այն պատճառով, որ նրա դեմ եղած ցուցմունքներն արդեն լսվել են, և դիմողին կալանքի տակ պահելը չի կարող ծառայել դատավարության պատշաճ իրականացման նպատակին:

32. 1995թ. փետրվարի 13-ին Կրակովի շրջանային դատարանը մերժել է այդ բողոքը: Դատարանն ընդունել է, որ մեկուսարանի իշխանությունների զեկուցման համաձայն դիմողի ինքնասպանության փորձը նպատակ ուներ ուշադրություն գրավել, և նրա կալանավորման սկզբնական հիմքերը դեռ ուժի մեջ են: 1995թ. փետրվարի 10-ի համապատասխան զեկույցը հետևյալն է.

«Ջետագայում, [Շրջանային] դատարանի պահանջով մեղադրյալի առնչությամբ մենք հաստատում ենք, որ Անջեյ Կուդլան, որը գտնվում է ձեր տրամադրության տակ, ս.թ. հունվարի 23-ին, ժամը 4.45-ին ինքնասպանության փորձ է կատարել՝ իր գործի վրա ուշադրություն հրավիրելու նպատակով:

Չեթապահ բժշկի, հոգեբանի և հոգեբույժի տրամադրած տեղեկության համաձայն և դրանից ելնելով, պարզվել է, որ բանտարկյալը տառապում է անհատական խանգարումներով, որոնք արտահայտվում են հակազդող դեպրեսիայի

ձևով: Բանտարկյալի կատարածի արդյունքը նրա պարանոցի թեթևակի քերծվածքն էր՝ զոլի տեսքով, որն առաջացել էր պարանից՝ կախվելուց հետո. ոչ մի նյարդաբանական փոփոխություններ չեն հայտնաբերվել:

Բանտարկյալը կատարել է այս ցուցադրական գործողությունը, քանզի գտնում է, որ քրեական դատավարությունը երկարատև է, և որովհետև նա չի ընդունում իր դեմ առաջադրված մեղադրանքները:

Չնայած իր հուզական խնդիրներին՝ նա վերահսկում է իրավիճակը և ճնշում է գործադրում [բանտային իշխանությունների վրա]:

Մեկուսարանի պետի որոշմամբ նա չի ենթարկվել կարգապահական պատասխանատվության իր վարքի համար: Հոգեուղղորդիչ զրույցները [անցկացվել են նրա հետ] նպատակ են ունեցել բացատրել նրա վարքից ծագող՝ բանտարկյալի կյանքին և առողջությանն սպառնացող իրական վտանգները:

Չետագա հոգեբուժական եզրակացության մեջ (ինքնասպանության փորձից հետո կատարված). նշված է, որ նկատվել է հակազդող դեպրեսիայի ախտանիշների հետադիմություն:

Նա շարունակում է մնալ մյուսների հետ նույն բանտախցում՝ այն պատճառով, որ տառապանքի սուբյեկտիվ զգացումից ծագում է ինքնառջնացնող վարքի հնարավորություն: Նա բնութագրված է որպես դժվար բանտարկյալ և այդ իսկ պատճառով գտնվում է մեկուսարանի անվտանգության և բժշկական անձնակազմի անընդհատ ուշադրության և հսկողության ներքո:

[Կնիքը և ստորագրությունն անընթեռնելի են]:»:

33. 1995թ. փետրվարի 25-ին դիմողի փաստաբանը բողոք է ներկայացրել Շրջանային դատարանի որոշման դեմ պնդելով, որ դիմողի հոգեկան առողջությունն էապես վատացել է և նա անընդհատ տառապում է դեպրեսիայով: Նա խնդրել է դատարանին փոխարենը հիմնվելու մեկուսարանի պաշտոնատար ամձանց պնդումների վրա հոգեբուժական և այլ բժշկական փորձագետներ նշանակել գնահատելու համար դիմողի առողջական վիճակը: Նա նաև նշել է, որ դատավարության տևողությունն աննախադեպ է և ընդգծել է, որ դիմողն արդեն երկու տարի և չորս ամիս գտնվում է կալանքի տակ:

34. 1995թ. մարտի 2-ին Կրակովի վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը: Դատարանը որոշել է, որ փորձագետ բժիշկներ հրավիրելու անհրաժեշտություն չկա, և որ դիմողի կալանավորումը շարունակվելու է դատավարության պատշաճ իրականացումն ապահովելու նպատակով: Չետագայում, 1995թ. մարտի 8-ից մինչև 1995թ. հունիսի 9-ը դիմողը չորս անգամ դիմել է իրեն ազատ արձակելու խնդրանքով և բողոքարկել է իրեն կալանքի տակ պահելու վերաբերյալ որոշումները: Բոլոր բողոքներն էլ եղել են ապարդյուն:

35. 1995թ. մարտի 13, 14 և 15-ին, ապրիլի 3, 4 և 5-ին, մայիսի 4, 5, 30 և 31-ին դատարանը նիստեր է անցկացրել և լսել վկաների ցուցմունքները: Որոշ վկաներ, որոնք նախկինում չէին ներկայացել, դատարան էին բերվել ոստիկանության օգնությամբ:

36. 1995թ. հունիսի 1-ին Կրակովի շրջանային դատարանը՝ խարդախության և կեղծարարության մեղադրանքով, դիմողին դատապարտել է վեց տարվա ազատազրկման և 5000 լեհական զլոտիի (PLN) չափով տուգանքի: 1995թ. հունիսի 2-ին դիմողը և իր փաստաբանը բողոքներ են ներկայացրել:

37. 1995թ. օգոստոսի 1-ին դիմողը բողոքել է Արդարադատության նախարարին, որ դատարանը չի պատրաստել իր դատավճռի հիմքերի շարադրանքը՝ օրենքով սահմանված յոթնօրյա ժամկետի ընթացքում: Նա նշել է, որ ձգձգումն արդեն տևում է երկու ամիս:

38. Որոշ ժամանակ անց դիմողը խնդրել է իրեն ազատ արձակել՝ պատճառաբանելով, որ իր՝ երկարատև կալանքի տակ գտնվելը վնասակար հետևանքներ է ունեցել իր առողջության և իր ընտանիքի բարեկեցության համար: 1995թ. օգոստոսի 14-ին Կրակովի շրջանային դատարանը մերժել է նրա բողոքը: 1995թ. օգոստոսի 31-ին դիմողի բողոքի քննության արդյունքում Կրակովի վերաքննիչ դատարանը որոշումը թողել է անփոփոխ և նկատել, որ դիմողի կալանքի տակ գտնվելը հիմնավորված էր ներկայացված մեղադրանքի լրջությամբ:

39. Մեկ այլ դիմումով, առանց ամսաթիվ նշելու, դիմողը բողոքել է Արդարադատության նախարարին՝ իր գործով դատավարության երկարատևության վերաբերյալ, նշելով, որ Կրակովի շրջանային դատարանն իրեն չի տրամադրել

դատավճռի հիմքերի շարադրանքը՝ օրենքով սահմանված ժամկետում: Դա էականորեն երկարաձգել էր վերաքննիչ դատարանում գործի վարույթը: 1995թ. օգոստոսի 28-ին Արդարադատության նախարարության քրեական գործերով բաժնի վարիչը, ի պատասխան այդ բողոքի, տեղեկացրել է, որ դատավճռի հիմքերի շարադրանքն ամենայն հավանականությամբ կազմել է ավելի քան 200 էջ և օրենքով սահմանված ժամկետում չկատարելու պատճառը զեկուցող դատավորի բացակայությունն է:

40. 1995թ. սեպտեմբերի 27-ին Շրջանային դատարանի պահանջով դիմողը հետազոտվել է Կրակովի Ջագելոնյան համալսարանի դատական բժշկության ֆակուլտետի՝ Կոլեգիում մեդիկումի դատական հոգեբույժների կողմից: Նրանց զեկույցի համապատասխան մասը հետևյալն է.

«... Ինչպես կարելի է տեսնել գործում և համաձայն բժշկական փորձագետների եզրակացությունների, մեղադրյալը հետազոտվել է Ռոք-ավ Բանտի հիվանդանոցի հոգեբուժական բաժանմունքում: Հիվանդանոցում կատարված հետազոտությունների ընթացքում նկատվել են ինքնասպանության փորձեր, գիտակցության երկարատև, անորոշ կորուստներ: Ռոք-ավի հոգեբույժ փորձագետների զեկույցի ... մանրամասն եզրակացությունները ցույց են տալիս, որ մեղադրյալը ցուցաբերում է անհատական խանգարումներ և ունի իրավիճակային հակազդեցության հակում, ինչը նրան առանձնապես չի խանգարում մեկուսարանում պայմանով, որ այնտեղ ապահովված է ամբուլատոր հոգեբուժական օգնություն:

[Դիմողը] բացատրեց, որ նա դեռ գտնվում է մեկուսարանում, իրեն շատ վատ է զգում, ունի անընդհատ գլխացավեր, որոնք կենտրոնացած են գագաթի մասում և ճառագայթում են դեպի ծոծրակը: Նա շատ հաճախ շնչահեղձ է լինում և դժվարությամբ է շնչում, հատկապես գիշերները: Այս առիթով նա աշխատակիցներից օգնություն է խնդրել, և նրանք իրեն տեղափոխել են բժշկական բաժանմունք: Հիմնականում բժիշկը նշանակում էր ռելանիում [դիագնոստիկ], որը չէր հանգստացնում նրա ցավերը: Նա պնդում էր, որ շարունակում է ռելանիում օգտագործել՝ ամենաքիչը 30մգ գիշերը և 15մգ՝ օրվա ընթացքում: Դեղամիջոցը «կառավարում էր իրեն», ինչպես նա ասաց, և նա չէր կարողանում գործել առանց այն ընդունելու: Նա անընդհատ հոգնածություն էր զգում, գիշերները չէր քնում և տառապում էր բանտում երկար ժամանակ գտնվելուց: Նա մտածում էր դրա մասին աղճատված, քանի որ ինքն արդեն «ավելին էր անցկացրել բանտում», քան իրեն կարող էին դատապարտել: Մեղադրյալի հետ զրույցի ընթացքում, պարզվեց, որ նրա պարանոցի ստորին մասում մաշկը քերծված է: Երբ բացվեց նրա շապիկի օձիքը, պարզվեց, որ դա գծակերպ քերծվածք է պարանոցի դիմային մասի շրջանում, ինչպիսի խոր ակոս որ լինում է կախված զոհերի մոտ: Մեղադրյալը բացատրեց, որ ... ինքը ցանկանում էր իրեն կախել սավանի օգնությամբ, բայց վերակենդանացել է: Սա ինքնասպանության հաջորդ փորձն էր, և նա չկարողացավ բացատրել, թե ինչու է այդպես վարվել: Նա նշեց, որ լինում են պահեր, երբ իրեն թվում է, թե իր գիտակցությունն ընդհատվում է, և այդ ժամանակ նա փորձում է իրեն զրկել կյանքից՝ հիմնականում կախվելով, ինչպես նաև դեղահաբեր ընդունելով կամ ածելիով իրեն վնասելով: Նա պնդում էր, որ եղել է դեպք, երբ ինքն ընտանեկան վիճաբանությունից հետո դուրս է եկել տանից և արթնացել մի քանի շաբաթ հետո՝ օթևանում winouj cie-ում: Նա չի հասկացել, թե ինչպես է այնտեղ հայտնվել, կամ ինչ է պատահել իր հետ այդ շաբաթների ընթացքում:

Հետազոտված անձն այժմ լավ է մտնում բանավոր շփման մեջ, կողմնորոշվում է, նրա տրամադրությունը ինչ-որ չափով մեղմացել է, լարված է, ոյուրագրգիռ և ունի անարդարության խոր զգացում: Նա պնդում է, որ իր հետ վարվում են անարդարացիորեն: Նա ստանում է դեղամիջոցներ, որոնք չեն բարելավում իր հոգեկան վիճակը, և կարծում է, որ իր բուժումը միայն «նդում է իրեն հոգետրոպ վարքի»:

Հոգեբուժական հետազոտությունից հետո մեղադրյալն ուղարկվել է EEG բաժանմունք՝ մասնագիտական հետազոտություն անցնելու համար:

Այդ հետազոտության արդյունքները կցված են զեկույցին:

ՁԵԿՈՒՅՑ. Մեղադրյալի՝ Անջեյ Կուդլա, արական սեռի, 33 տարեկան, հետազոտությունը և հիվանդանոցում մի քանի շաբաթ տևողությամբ բժշկական և հոգեբանական նախորդ հետազոտությունների արդյունքները ցույց տվեցին, որ նրա ներկայիս հոգեկան վիճակը նրա անհատական խանգարումների, դժվար իրավիճակներում անհավասարակշռության նախահակվածության արդյունք է: Այս խանգարումներն իրենց բնույթով հոգեկան խանգարում չեն, բայց ինքնասպանության հետագա փորձերը լուրջ վտանգ կսպառնան նրա առողջությանը: Այդ իսկ պատճառով մենք կարծում ենք, որ եթե դատավարությունը պահանջում է, որ մեղադրյալը հետագա ժամանակահատվածն անցկացնի մեկուսարանում, նա պետք է տեղավորվի հիվանդանոցային բաժանմունք և պետք է գտնվի մասնագիտական հսկողության տակ: Ինչպես նաև պետք է ապահովել նրա այցելությունը հոգեբույժի և հոգեբանի մոտ:

#### ՓՈՐՉԱԳԵՏ

Բժիշկ Էլ Բիետա Սկուպի

#### ՓՈՐՉԱԳԵՏ

Բժիշկ Անջեյ Ջիլբա»:

41. 1995թ. հոկտեմբերի 6-ին դիմողը ստացել է դատավճռի հիմքերի շարադրանքը և որոշ ժամանակ անց բողոք ներկայացրել: Գործը փոխանցվել է Կրակովի վերաքննիչ դատարան 1995թ. նոյեմբերի 14-ին:

42. 1996թ. փետրվարի 22-ին վերաքննիչ դատարանը չեղյալ է հայտարարել դատապարտումը և կարգադրել է գործի նոր քննություն՝ այն հիմքով, որ առաջին ատյանի դատարանը սխալ է կազմավորվել և եղել են մի շարք դատավարական դրույթների խախտումներ: Վերաքննիչ վարույթի ընթացքում դիմողի փաստաբանը խնդրել է դատարանին վերացնել կալանքի որոշումը, բայց արդյունքի չի հասել:

43. 1996թ. ապրիլի 11-ին գործն ուղարկվել է Շրջանային դատարան: Շրջանային դատարանը դիմողի մասով գործն անջատելու որոշում է ընդունել և այնուհետև դիմողը մյուս այլ մեղադրյալներից առանձին է մասնակցել գործի քննությանը:

44. 1996թ. ապրիլի 30-ին դիմողը խնդրել է, որ իր նկատմամբ կիրառվող խափանման միջոցը վերացվի կամ փոփոխվի: 1996թ. մայիսի 28-ին Կրակովի շրջանային դատարանը որոշում է ընդունել, որում նշված է, *inter alia*: «... Գործի ներկա փուլում դատավարության պատշաճ իրականացման համար կարող է կալանքի փոխարեն կիրառվել այլ խափանման միջոց: ... Դատարանն այդ իսկ պատճառով վերացնում է կալանավորման որոշումը՝ պայմանով, որ դիմողը որոշումն ընդունելու օրվանից մեկ ամսվա ընթացքում վճարի 10000 PLN գրավ ... »:

45. Դիմողը բողոքել է այս որոշման դեմ և խնդրել, որ գրավի չափը պակասեցվի և այն սահմանվի՝ ելնելով իր նյութական վիճակից, կամ, հակառակ դեպքում, դատարանը դատավարության պատշաճ իրականացումն՝ ապահովի իր նկատմամբ սահմանելով ոստիկանական վերահսկողություն:

46. 1996թ. հունիսի 11-ին դատարանը զեկույց է ստացել՝ նշանակված հոգեբույժ փորձագետից: Փորձագետը գտնում էր, որ դիմողը գտնվում է քրոնիկ դեպրեսիվ վիճակում՝ զուգակցված ինքնասպանության մասին մտքերով: Ըստ փորձագետի՝ դիմողն ի վիճակի էր մասնակցելու նիստերին, բայց շարունակվող կալանքը կարող է լուրջ սպառնալիք լինել նրա կյանքի համար, որովհետև հավանական էր ինքնասպանության փորձի կրկնումը:

47. 1996թ. հունիսի 20-ին Կրակովի վերաքննիչ դատարանը մերժել է դիմողի բողոքը 1996թ. մայիսի 28-ի որոշման դեմ՝ որոշելով, որ գրավի համար նախատեսված գումարը չափազանցված չէ՝ հաշվի առնելով կատարված հանցագործություններով պատճառված վնասի չափը և այն հանցագործությունների լուրջ բնույթը, որոնցում նա մեղադրվում է: Դատարանը մեծ նշանակություն է տվել այն փաստին, որ 1992թ. հուլիսին կալանավորման առաջին որոշումը չեղյալ հայտարարելուց հետո դիմողը թաքնվել է քննությունից և կրկին կալանավորվել՝ հենց այդ հիմքով: Գրավը, հավելել է դատարանը, նախատեսված է ապահովելու դատավարությանը նրա ներկայությունը և կանխելու նրա կողմից որևէ հետագա գործողություն, որն ուղղված կլինի դատավարությունների պատշաճ իրականացմանը խոչընդոտելուն: Նկատի ունենալով գործի բոլոր հանգամանքները՝ որոշվել է գրավի համապատասխան չափ:

48. Կարճ ժամանակ անց դիմողը բողոքել է օմբուդսմենին (*Rzecznik Praw Obywatelskich*), որ իր կալանքի ընդհանուր ժամկետն արդեն կազմում է ավելի քան

երեք տարի: Բողոքն ուղղված է եղել Կրակովի վերաքննիչ դատարանի նախագահին, որը 1996թ. հուլիսի 12-ին նամակ է ուղարկել դիմողին: Նամակի համապատասխան մասը հետևյալն է.

« ... Դուք մեղադրվել եք խարդախության և կեղծարարության մեջ՝ 1992թ. ապրիլի 30-ին: Մեղադրական եզրակացությունը վերաբերում էր տասը հանցակիցների և պետք է հարցաքննվեին իննսուներս վկաներ: Դատավարությունը ձգձգվել է այն պատճառով, որ Դուք թաքնվել եք մինչև 1993թ. հոկտեմբերին Ձեր կալանավորումը: Դուք նաև մի շարք անգամներ դիմել եք ազատ արձակվելու համար: ... Դատարանի դատավճռի ընդունման օրվա և գործը վերաքննիչ դատարան ուղարկելու օրվա միջև ընկած ժամանակահատվածում դատավարության ձգձգման պատճառը Ձեր գործի ծավալն էր և դատավճռի հիմքերի շարադրանքի ծավալը (29 հատոր՝ յուրաքանչյուրը 140 էջ): ... Հիմքերի առումով պաշտոնական հաշվետվությունը պատրաստ էր մինչև 1995թ. օգոստոսի 16-ը և ուղարկվել է 1995թ. սեպտեմբերի 16-ին, որովհետև զեկուցող դատավորն արձակուրդում էր: Միակ ձգձգումը տեղի է ունեցել ազատ արձակելու վերաբերյալ Ձեր՝ 1996թ. ապրիլի 30-ի դիմումի կապակցությամբ որը քննության է առնվել 1996թ. մայիսի 28-ին, քանի որ 1996թ. մայիսի 1- 5-ը պաշտոնական տոն է...»:

49. Այդ ընթացքում դիմողը կրկին դիմել է Կրակովի շրջանային դատարան՝ ոստիկանական հսկողությամբ ազատ արձակվելու համար, կամ պակասեցնելու 1996թ. մայիսի 28-ին դատարանի որոշած գրավի չափը: 1996թ. հուլիսի 2-ին դատարանը մերժել է դիմումը: Դիմողի փաստաբանը բողոքել է այդ որոշման դեմ և փաստարկել, որ 1996թ. հունիսի 11-ի հոգեբուժական զեկույցից ելնելով՝ դիմողը պետք է ազատ արձակվի, քանի որ նրա կյանքը վտանգված է:

50. 1996թ. հուլիսի 18-ին Կրակովի վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը՝ նշելով, որ դիմողի կյանքի նկատմամբ սպառնալիքը «բացարձակ չէ», որովհետև նա կարող է հոգեբուժում ստանալ մեկուսարանում: Դատարանը գտել է, որ նկատի ունենալով դիմողի վարքագիծը 1992թ. հուլիսին ազատ արձակվելուց հետո, նրա կալանքը պետք է շարունակվի՝ դատավարության պատշաճ ընթացքն ապահովելու համար, կամ նա պետք է վճարի 10000 PLN գրավ:

51. 1996թ. հուլիսի 31-ին դիմողը կրկին խնդրել է շրջանային դատարանին պակասեցնել գրավի գումարի չափը կամ իրեն ազատ արձակել՝ ոստիկանական հսկողությամբ: Նա պնդել է, որ չունի բավականաչափ ֆինանսական միջոցներ վճարելու այդչափ զգալի գումար: 1996թ. օգոստոսի 19-ին դատարանը մերժել է նրա դիմումը՝ որպես ակնհայտորեն չհիմնավորված: Դատարանը նշել է, որ գրավի հետ կապված հարցերի առնչությամբ դիմողի փաստարկները «չհիմնավորված վիճաբանություն են արդարադատության մարմինների» հետ, և որ գրավը կարող է վճարել ոչ միայն ինքը՝ դիմողը, այլև երրորդ անձինք:

52. Հետագայում դիմողը խնդրել է շրջանային դատարանին ազատ արձակել իրեն, որպեսզի կարողանա ապահովել պահանջվող գրավի վճարումը: 1996թ. սեպտեմբերի 10-ին դատարանը մերժել է այս խնդրանքը, որոշելով, *inter alia*

«... Տրամաբանական է, որ [դիմողը] ազատ կարձակվի գրավը վճարելուց հետո: Մեղադրյալի պահանջը՝ շրջել դեպքերի հաջորդականությունը, դատավարական կանոնների և բանականության դեմ է, և այդ իսկ պատճառով պետք է մերժվի ... »:

53. Նոր դատաքննությունը պետք է սկսվեր 1996թ. հոկտեմբերի 10-ին, բայց հետաձգվել է, որովհետև դիմողի հանցակիցներից մեկն այդ ընթացքում կալանավորվել էր այլ քրեական գործով:

54. 1996թ. հոկտեմբերի 29-ին, երբ դիմողի ընտանիքը դատարանին վճարել է 10000 PLN գրավը, Կրակովի շրջանային դատարանը վերացրել է կալանքի մասին որոշումը:

55. Մյուս երկու նիստերը նշանակված են եղել 1997թ. մարտի 18-ին և ապրիլի 17-ին, բայց դատաքննությունը կրկին հետաձգվել է, մեկ այլ հանցակցի հիվանդ լինելու պատճառով: Հաջորդ նիստերը նշանակվել են 1997թ. հոկտեմբերի 6-ին, 21-ին և 23-ին: Շրջանային դատարանը հետագայում նիստեր նշանակել է 1998թ. հետևյալ օրերին՝ հունվարի 15-ին, փետրվարի 26-ին, մարտի 19-ին, ապրիլի 6-ին և 28-ին,

հունիսի 2-ին, 22-ին և 24-ին, հուլիսի 13-ին, սեպտեմբերի 23-ին, հոկտեմբերի 3-ին և 30-ին, նոյեմբերի 17-ին և 24-ին: 1998թ. դեկտեմբերի 4-ին դատարանը դատավճիռ է կայացրել: Դիմողը մեղավոր է ճանաչվել և դատապարտվել վեց տարվա ազատազրկման:

56. Նա դատավճիռը բողոքարկել է 1999թ. ապրիլի 19-ին: 1999թ. հոկտեմբերի 27-ին Կրակովի վերաքննիչ դատարանը փոփոխել է դատարանի դատավճիռը և դիմողի դատապարտումը իջեցրել 5 տարվա ազատազրկման:

57. Այնուհետև դիմողը վճռաբեկ բողոք (*kasacja*) է ներկայացրել: 2000թ. փետրվարի 24-ին Կրակովի վերաքննիչ դատարանը գտնելով, որ դիմողը բավարարել է այդպիսի բողոքի համար համապատասխան ձևական պահանջները, նրա դիմումն ուղարկել է Գերագույն դատարան (*S d Najwi szy*): Գերագույն դատարանում գործի քննությունն ավարտված չէ:

#### **Բ. Կալանքի ընթացքում՝ 1993թ. հոկտեմբերի 4-ից մինչև 1996թ. հոկտեմբերի 29-ը դիմողի ստացած բուժումն ըստ Կրակովի մեկուսարանի բժշկական գրանցամատյանում կատարված գրանցումների**

58. Դիմողը գտնվել է Կրակովի մեկուսարանում 1993թ. հոկտեմբերի 4-ից մինչև 1996թ. հոկտեմբերի 29-ը՝ միայն մեկ ընդհատումով. 1994թ. մարտի 9-ին նա տեղափոխվել է Ռոք-ավ բանտի հիվանդանոց, որտեղ մինչև 1994թ. մայիսի 26-ը նա անցել է հոգեբուժական հետազոտություն՝ նրա դեմ հարուցված այլ քրեական գործերի առնչությամբ:

59. Բժշկական գրանցամատյանը վկայում է, որ դիմողը բժշկի կողմից հետազոտվել է կալանումից կարճ ժամանակ անց: 1993թ. հոկտեմբերի 6-ին դիմողը խնդրել է, որ իրեն քննի հոգեբույժը: Հետազոտությունը անցկացվել է 1993թ. հոկտեմբերի 15-ին: Դիմողն ախտորոշվել է որպես *reactio situacione*-ով հիվանդ (իրավիճակային հակազդում): Ավելի վաղ երեք անգամ նրան հետազոտել կամ ընդունել է մեկուսարանի բժիշկը:

60. 1993թ. նոյեմբերին դիմողին ութ անգամ հետազոտել են բանտի բժիշկները: Արձանագրվել է, որ նա տառապում է քրոնիկ անքնությանը և ախորժակի բացակայությանը, իսկ հետագայում՝ կրկնվող գլխացավերով, գլխապտույտներով և դժվարությամբ կենտրոնանալով:

61. 1993թ. դեկտեմբերի 10-ին դիմողին հետազոտել է հոգեբույժը: Նա ախտորոշվել է որպես անհատական խանգարումներով և դեպրեսիվ հակազդումով հիվանդ: Այդ ամսվա ընթացքում բանտի ամբուլատոր բաժանմունքում ևս չորս անգամ նա հետազոտվել կամ ընդունվել է բժիշկների կողմից: Նա գանգատվել է անքնությունից և խնդրել է փոխել դեղամիջոցները: 1993թ. դեկտեմբերի 24-ին բժիշկը խորհուրդ է տվել հետազոտվել հոգեբույժի մոտ:

62. 1994թ. հունվարի 4-ին դիմողն սկսել է գանգատվել աչքերի առջև մթազնելուց և գլխացավերից:

63. 1994թ. հունվարի 26-ին դիմողն ինքնասպանության փորձ է կատարել՝ չափից ավելի դեղաքանակ ընդունելով: Հերթապահ բժիշկը կատարել է հետևյալ արձանագրությունը.

«Հիվանդն անգիտակից վիճակում է, ոչ մի բանավոր շփում ... [իր բանտախցի բանտարկյալների] արված հաղորդումից պարզ է դառնում, որ նախորդ օրը նա ընդունել է իր երեկոյան դեղաչափը ... ոչ ոք չի տեսել, որ նա որևէ այլ դեղամիջոց ընդունի:

Ախտորոշում՝ *intoxicatio medicamentosa acuta per os susp.* [կասկածվում է սուր դեղամիջոցային թունավորում բերանի միջոցով]:

Բժշկական հանձնարարականներ՝ հիվանդանոցային հետազոտություն և շտապ հոգեբուժում»:

64. Դիմողն ընդունվել է բանտի հիվանդանոց և այնտեղ է մնացել 1994թ. հունվարի 27-ից մինչև 28-ը՝ "*status post intoxicationem medicamentosam*" ախտորոշմամբ: Կատարվել են մի քանի բժշկական հետազոտություններ (արյան-բջջային մորֆոլոգիա, մեզի թունաբանական հետազոտություն, էլեկտրասրտաբանական հետազոտություն):

65. 1994թ. փետրվարի 27-ին դիմողին հետազոտել է հոգեբույժը և ախտորոշել է նևրոտիկ խանգարումներ:

66. 1994թ. մայիսի 26-ից (Ռոք ավ բանտային հիվանդանոց վերադառնալու օրը) մինչև 1994թ. նոյեմբերի սկիզբը դիմողը խորհրդակցել է բանտի ամբուլատոր բաժանմունքի բժիշկների հետ տասներեք անգամ: Նա բողոքել է գլխավորապես անհանգիստ քնից և մի քանի օր կրկնվող գլխացավերից, ինչպես նաև սառնությունից և մաշկի վատառողջությունից: 1994թ. սեպտեմբերին նա մի քանի անգամ հոգեբույժի ընդունելություն է խնդրել: Նրան հետազոտել է հոգեբույժը 1994թ. նոյեմբերի 9-ին և ախտորոշել է որպես նյարդախտային խանգարումներով հիվանդ:

67. Այդ ընթացքում, 1994թ. նոյեմբերի 5-ին բանտի հերթապահ բժիշկը դիմողի համար խնդրել է նոր տեսակցություն հոգեբույժի հետ: Հոգեբույժը քննել է դիմողին 1994թ. դեկտեմբերի 7-ին և հաստատել նրա նախորդ ախտորոշումը: Արձանագրություններում գրանցված է, որ դիմողը բողոքել է գլխապտույտից և քնի խանգարումներից:

68. 1995թ. հունվարի 2-ին հերթապահ բժիշկը դիմողի համար խնդրել է հոգեբույժին հերթական այցելություն: 1995թ. հունվարի 11-ին և 13-ին բժիշկը նշել է, որ դիմողը չի ներկայացել: 1995թ. հունվարի 16-ին դիմողն ստացել է չպարզված դեղամիջոց:

69. 1995թ. հունվարի 23-ին դիմողն ինքնասպանության փորձ է կատարել՝ կախելով իրեն: Այդ օրը բժիշկները երկու նշում են արել բժշկական մատյանում: Առաջին նշումի համապատասխան հատվածը, որը գրել է հերթապահ բժիշկը, հետևյալն է՝

«Մոտավորապես առավոտյան ժամը 4.30-ին նա ինքնասպանության փորձ է արել՝ կախելով իրեն պատի վրայի սանհանգույցից: Արյան ճնշումը՝ 110/60 ... : Չափաքանցքին երևում էր փոքր քանակությամբ փրփրակալած արյուն: Պարանոցի վրա հայտնաբերվել են մաշկի քերծվածքներ՝ ինչպես կախված զոհերի սպիները: ... Նա չի ցանկանում բանավոր շփման մեջ մտնել...»

Ախտորոշում՝ կախվելու միջոցով ինքնասպանության փորձ:

Բժշկական հանձնարարական՝ հոգեբուժական փորձաքննություն ...»:

Երկրորդ նշումը, որը կատարել է ներքին հիվանդությունների մասնագետը, հետևյալն է՝

«Ընդհանուր վիճակը լավ է: ...Ի վիճակի է տրամաբանական շփման: Նա նշեց, որ սա ինքնասպանության իր առաջին փորձը չէ:

Ախտորոշում՝ ինքնասպանության փորձին հաջորդող վիճակ:

Բժշկական հանձնարարական՝ հոգեբուժական փորձաքննություն: Բուժման նպատակով հիվանդանոց տեղափոխելու անհրաժեշտություն չկա»:

70. 1995թ. հունվարի 24-ին դիմողին հետազոտել է հոգեբույժը, որը կատարել է հետևյալ գրառումը՝

«Լավ բանավոր շփում, զգայարանները՝ բավարար: Նա մինչև 1994թ. հունիսը գտնվել է Ռոք-ավ բանտային հիվանդանոցի հոգեբուժական բաժանմունքում : Ինքնասպանության փորձ. «Այլևս չեմ կարող դիմանալ»: Նա անհանգիստ է: Անհանգիստ քուն, ախորժակի բացակայություն, սրտխառնոց, փսխում: Գործի քննությունը շարունակվել է երեք տարի՝ առանց դատավճռի կայացման, նախկինում դատված չի եղել: Նա վախեցած է իր արարքներից. «Չգիտեմ՝ ինչ կատարվեց հետս»:

Ախտորոշումը՝ կախվելու միջոցով ինքնասպանության փորձին հաջորդող վիճակ: Իրավիճակային դեպրեսիվ հակազդում»:

71. 1995թ. փետրվարի 3-ին դիմողին կրկին հետազոտել է հոգեբույժը: Բժշկի նշումները.

«Լավ հաղորդակցում: Լիակատար կողմնորոշում, հավասարակշռված տրամադրություն: Հոգեհիվանդության ախտանշաններ չկան: Բողոքում է. «Ես ինձ լավ չեմ զգում, բավականին տանջվել եմ, լավ չեմ քնում, ես ինձ կկախեմ»:

Ախտորոշումը՝ անհատական խանգարում, ինքնազրեհիվ հակազդում»:

72. 1995թ. մարտին դիմողին բժիշկները հետազոտել են վեց անգամ: Հետազոտություններից երկուսը կատարել են հոգեբույժները: Առաջին

հետազոտությունից հետո բժշկական տեղեկանքի համապատասխան մասը հետևյալն է.

«Կրակով, 7 մարտի 1995թ.

ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Բանտարկյալի առողջական վիճակի մասին

Բանտարկյալի բողոքները, նախորդ հիվանդությունները և վիրահատությունները. նա բողոքում է հետևյալից՝ կենտրոնանալու դժվարություններ, հոգեշարժ ցնցումներ, ներքին լարվածության զգացողություն, կրկնվող ցավեր վերորովայնային (էպիգաստրալ) շրջանում: Բժշկական պատմությունը ցույց է տալիս ինքնասպանության հաճախակի փորձեր՝ կախվելու և դեղամիջոցների չափից մեծ քանակ ընդունելու միջոցով: Նա պարբերական հոգեբուժական հսկողության տակ է:...

1995թ. մարտի 7-ի հոգեբուժական խորհրդատվություն: Իրավիճակային հակազդում՝ դեպրեսիայի նշաններով: Ի վիճակի է մասնակցելու դատաքննությանը...»:

1995թ. մարտի 31-ին տեղի ունեցած երկրորդ հետազոտությունից հետո բժիշկը նշել է. «Լավ հաղորդակցում, լիարժեք կողմնորոշում, դիսֆորիկ տրամադրություն: Բողոքները՝ լարվածություն ... քնի խանգարումներ, կենտրոնանալու դժվարություն:

Ախտորոշում՝ նյարդախտային խանգարում»:

73. 1995թ. ապրիլի սկզբից մինչև դեկտեմբերի վերջը դիմողը կամ իր խնդրանքով, կամ բանտի բժիշկների խնդրանքով հոգեբույժների կողմից հետազոտվել է առնվազն ամիսը մեկ անգամ: Բացի դրանից, նա բուժվել է այլ հիվանդություններից: Ինչ վերաբերում է դիմողի հոգեկան վիճակին, բժշկական մատյանից պարզ է դառնում, որ նա անընդհատ բողոքել է դեպրեսիայից, անհանգիստ քնից, լարվածությունից, կողմնորոշվելու դժվարությունից, իր վիճակի բարելավման անհնարինությունից:

74. 1996թ. հունվարի սկզբից մինչև օգոստոսի վերջն ընկած ժամանակահատվածում դիմողին բժիշկները հետազոտել են երեսուներկու անգամ, որից տասներկու հետազոտություն կատարել են հոգեբույժները:

## II. ԳՈՐԾԻՆ ԱՈՆՉՎՈՂ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

75. Գործին առնչվող ժամանակահատվածում կալանավորումը կարգավորող նորմերն ամփոփված են 1996թ. ապրիլի 19-ի Քրեական դատավարության օրենսգրքի (*Kodeks post powania karnego*) «Խափանման միջոցներ» (*rodki zapobiegaweze*) վերնագրով 24-րդ գլխում: Օրենսգիրքն արդեն ուժի մեջ չէ: Այն չեղյալ է հայտարարվել և փոխարինվել 1997թ. հունիսի 6-ի օրենքով (սովորաբար անվանվում է «Քրեական դատավարության նոր օրենսգիրք»), որն ուժի մեջ է մտել 1998թ. սեպտեմբերից:

76. Օրենսգրքում որպես «խափանման միջոցներ», *inter alia*, նախատեսված են կալանքը, գրավը և ոստիկանական հսկողությունը:

209-րդ հոդվածը սահմանում է խափանման միջոցները կիրառելու ընդհանուր հիմքերը: Այդ հոդվածը նախատեսում է .

«Խափանման միջոցները կարող են կիրառվել դատավարության պատշաճ իրականացումն ապահովելու համար, եթե մեղադրյալի դեմ եղած ապացույցները բավարար կերպով հիմնավորում են այն կարծիքը, որ նա կատարել է քրեական հանցագործություն»:

217-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է կալանավորման հիմքերը: Այս հոդվածի համապատասխան մասը, մինչև 1996թ. հունվարի 1-ը գործող տարբերակով, նախատեսում է.

«1. Կալանավորում կարող է սահմանվել, եթե,

(1) առկա է հիմնավորված վտանգ, որ մեղադրյալը կդիմի փախուստի կամ կթաքնվի, մասնավորապես, երբ նա չունի բնակության հաստատուն վայր [Լեհաստանում], կամ նրա ինքնությունը հստակ չի պարզվում, կամ՝

(2) առկա է հիմնավորված վտանգ, որ մեղադրյալը կփորձի հարկադրել վկաներին տալու կեղծ ցուցմունքներ, կամ որևէ այլ անօրինական միջոցով կփորձի խափանել դատավարության պատշաճ ընթացքը, կամ՝

(3) մեղադրյալը մեղադրվում է ծանր հանցագործության կատարման մեջ, կամ կրկին հանցանք է կատարել, ինչպես սահմանված է օրենսգրքով, կամ՝

(4) մեղադրյալը մեղադրվում է այնպիսի հանցանք կատարելու մեջ, որը լուրջ վտանգ է ներկայացնում հասարակության համար...»:

1996թ. հունվարի 1-ին 217-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը չեղյալ են հայտարարվել և հոդվածն ամբողջությամբ վերանայվել է: Այդ օրվանից գործող համապատասխան ենթակետերում նշված է,

«(1) առկա է հիմնավորված վտանգ, որ մեղադրյալը կդիմի փախուստի կամ կթաքնվի, մասնավորապես, երբ նրա ինքնությունը չի կարող որոշվել, կամ նա չունի մշտական բնակատեղի [Լեհաստանում], կամ,

(2) [ինչպես եղել է մինչև 1996թ. հունվարի 1-ը]»:

217-րդ հոդվածի 2-րդ կետը նախատեսում է.

«Եթե մեղադրյալը մեղադրվում է ծանր կամ դիտավորյալ հանցագործության կատարման մեջ [որը կատարելու համար նա կարող է] դատապարտվել օրենքով սահմանված առավելագույն ժամկետով՝ առնվազն 8 տարվա ազատազրկման, կամ եթե առաջին ատյանի դատարանը դատապարտել է նրան նվազագույնը 3 տարվա ազատազրկման, դատավարության պատշաճ ընթացքն ապահովելու համար կալանքը շարունակելու անհրաժեշտությունը կարող է կախված լինել ծանր պատիժ սահմանելու հավանականությունից»:

Օրենսգրքը սահմանում է կոնկրետ խափանման միջոցներ կիրառելու պայմանները: Օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետը, 218-րդ և 225-րդ հոդվածները հիմնվում են այն դրույթի վրա, որ կալանավորումը ծայրահեղ խափանման միջոցն է, և այն չպետք է կիրառվի, եթե բավարար են ավելի մեղմ միջոցները:

213-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսում է.

«Խափանման միջոցները [ներառյալ կալանավորումը] անմիջապես վերացվում կամ փոխվում են, եթե դրանց հիմքերը դադարում են գոյություն ունենալ, կամ ի հայտ են գալիս նոր հանգամանքներ, որոնք հիմնավորում են տվյալ միջոցի վերացումը կամ փոփոխումը մեկ այլ՝ պակաս խիստ միջոցով»:

225-րդ հոդվածը նախատեսում է.

«Կալանավորումը կիրառվում է միայն այն դեպքում, երբ այն հարկադրական է, այս միջոցը չի կիրառվում, եթե գրավը կամ ոստիկանական հսկողությունը, կամ երկուսն էլ համարվում են բավարար»:

«Չարկադիր կալանավորման վերաբերյալ» դրույթները (օրինակ, կալանքը՝ երեք տարուց ավելի ազատազրկման դատապարտման դեմ բողոքի քննության ընթացքում) 1996թ. հունվարի 1-ին փոխարինվել են 1995թ. հունիսի 29-ի Քրեական դատավարության օրենսգրքի և այլ քրեական օրենքների փոփոխությունների ու լրացումների մասին օրենքով:

Վերջապես, 218-րդ հոդվածը նախատեսում է.

«Եթե չկան հակառակ կերպ վարվելու հատուկ պատճառներ, կալանավորումը կարող է վերացվել, մասնավորապես, եթե.

(1) լրջորեն վտանգվում է մեղադրյալի կյանքը կամ առողջությունը, կամ՝

(2) այն չափազանց ծանր հետևանքներ կունենա մեղադրյալի կամ նրա ընտանիքի համար:

77. Ըստ լեհական օրենսդրության՝ «գրավի դիմաց ազատ արձակումը» չի նշանակում ազատ արձակում՝ պայմանով, որ կալանավորված անձը պարտավորվում է որոշակի գումար վճարել դատարան չներկայանալու դեպքում, այլ նշանակում է ազատ արձակում՝ պայմանով, որ պահանջվող գումարը դատարանին վճարեն կամ ինքը՝ կալանավորը, կամ վստահված անձինք՝ մինչև նրան ազատ արձակելը:

78. Օրենսգրքի 219-րդ հոդվածը վերաբերում է կալանավորման ընթացքում մեղադրյալի բուժմանը: Այն նախատեսում է հետևյալը.

«Եթե մեղադրյալի առողջական վիճակը պահանջում է բուժում առողջապահական հաստատությունում, նա չի կարող կալանքի տակ մնալ՝ բացառությամբ նման առողջապահական հաստատությունում»:

79. Քրեական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածը նախատեսում է, որ մեղադրյալը ցանկացած ժամանակ կարող է ազատ արձակվելու դիմում ներկայացնել:

«Մեղադրյալը կարող է ցանկացած ժամանակ դիմել խափանման միջոցը վերացնելու կամ փոփոխելու խնդրանքով:

Նման դիմումը քննության է առնում դատախազը կամ՝ մեղադրական եզրակացությունն ընդունելուց հետո գործը քննող իրավասու դատարանը՝ երեք օրվա ընթացքում»:

80. Օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին կետը դատարանի դատավճռի դեմ բողոք ներկայացվելու դեպքում այդ դատավճռի հիմքերի վերաբերյալ հաղորդումը պատրաստելու համար սահմանում է ժամկետ: Համապատասխան դրույթը հետևյալն է. «Դատավճռի հիմքերի վերաբերյալ հաղորդումը պետք է պատրաստ լինի բողոքը ներկայացնելու օրվանից 7 օրվա ընթացքում. Բարդ գործերի դեպքում, երբ հնարավոր չէ այն պատրաստել սահմանված ժամկետում, դատարանի նախագահը պետք է որոշակի ժամկետով երկարացնի ժամկետը ...»:

81. Օրենսգիրքը սահմանում է բողոքարկման կարգով պաշտպանության 2 հիմնական միջոց, որոնք կոչվում են «բողոքարկման միջոցառումներ». բողոք, որը 374-րդ հոդվածի հիման վրա et seq., կարող է բերվել միայն դատավճիռների դեմ, և առարկություն - բողոք, որը 409-րդ հոդվածի հիման վրա et seq., կարող է բերվել դատավճիռներից բացի այլ որոշումների, խափանման միջոցների վերաբերյալ որոշումների դեմ: Չի եղել (և այժմ էլ չկա) ոչ մի հատուկ դրույթ, որը նախատեսի պաշտպանության միջոցներ ընդդեմ քրեական գործի քննության ընթացքում դատական ատյանների անգործության:

## **ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ**

### **I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱՆՏՈՒՄԸ**

82. Դիմողը բողոքել է, որ, 1993թ. հոկտեմբերի 4-ից գտնվելով կալանքի տակ, պատշաճ հոգեբուժական բուժում չի ստացել: Նա գտնվել է Կրակովի մեկուսարանում, որտեղ չի եղել հոգեբուժական բաժանմունք, և որտեղ ոչ մի լուրջ ջանք չի գործադրվել իր քրոնիկ դեպրեսիան բուժելու համար: Նրա պնդմամբ, սրա արդյունքն են բանտում ինքնասպանություն գործելու նրա փորձերը, և դա հանդիսանում է անմարդկային ու ստորացուցիչ վերաբերմունք՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով, որը նախատեսում է.

« Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, կամ պատժի»:

83. Դիմողը պնդել է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածն իշխանություններին պարտավորեցնում է թերևս քննության առնել, թե արդյոք իր առողջական վիճակն այնպիսին չէ, որ հարկ կա նրան տեղավորել համապատասխան բժշկական հաստատությունում (տե՛ս վերը՝ կետ 78): Իհարկե, նրանք իրազեկ էին, որ ինքն ունի ինքնասպանություն գործելու միտումներ, որոնք ակնհայտորեն խորացել էին կալանավորման ծայրահեղ պայմանների պատճառով: Նրանք այդ հետևանքների վերաբերյալ ունեին լիարժեք ապացույցներ, որովհետև մինչ այդ նա ազատ էր արձակվել դատավարության ընթացքում, քանի որ տևական կալանքը վտանգում էր նրա կյանքը:

84. 1993թ. հոկտեմբերի 3-ից մինչև 1996թ. հոկտեմբերի 29-ը, այսինքն՝ երեք տարի, նա կրկին գտնվել է կալանքի տակ: Այդ ժամանակահատվածում նա միայն մեկ անգամ է բուժում ստացել «բժշկական հաստատությունում»՝ 219-րդ հոդվածի իմաստով: 1994թ. մարտին դատարանը նրան մի քանի ամսով տեղավորել է Ռոք-ավ բանտային հիվանդանոցի հոգեբուժական բաժանմունքում: Դիմողի կարծիքով՝ դատարանն այսպես է վարվել միայն այն պատճառով, որ իր վիճակն զգալիորեն վատացել էր 1994թ. ինքնասպանության առաջին փորձից հետո:

85. Դիմողն այնուհետև նշել է, որ կարճատև մասնագիտական բուժումից հետո նա նորից տեղափոխվել է Կրակովի մեկուսարան, որտեղ նա չի ստացել ոչ մի բուժում, որը կկանխեր նրա ինքնասպանության հետագա փորձերը, և որտեղ նա կալանավորված է եղել բանտային ծանր պայմաններում՝ դատապարտված հանցագործների հետ: Սա նա համարել է հոգեբանորեն անտանելի, և 1995թ. հունվարի 23-ին նա կրկին ինքնասպանության փորձ է կատարել: Նա պնդում է, որ

բանտի իշխանություններն ինքնասպանության փորձը կամայականորեն և անհիմն կերպով որակել են ոչ անկեղծ, որպես ուշադրություն գրավող բնույթի, և դատարանին էլ դեպքը ներկայացրել են այդ ձևով: Նրանք չեն նշել, որ դեպքի հաջորդ օրը հոգեբույժն իր վարքն ախտորոշել է որպես «իրավիճակային դեպրեսիվ հակազդում»:

Նա ավելացնում է, որ չնայած այդ ախտորոշմանը, իշխանությունները ոչ մի էական քայլ չեն արել բարելավելու իր վիճակը կամ իրեն ապահովելու համապատասխան հոգեբուժական օգնությամբ: Դատարանը ոչ միայն չի ապահովել իր առողջության և բանտարկության պայմանների նկատմամբ տևական հսկողություն, այլ նաև չի ընդունել իր առողջական վիճակի մասին բժշկական ոչ մի նշում: Մասնավորապես, նա բանտարկված է եղել 1996թ. հունիսի 11-ից մինչև հոկտեմբերի 29-ը, չնայած առաջին օրերին հոգեբույժ փորձագետն իր վիճակը բնութագրել է նույնիսկ որպես չափազանց լուրջ և նշել է, որ տևական բանտարկությունը վտանգի է ենթարկում նրա կյանքը: Արդյունքում, հաշվի չառնելը, որ իրեն կալանքի տակ պահելը կարող է վտանգել իր կյանքը, և չապահովելով իրեն համապատասխան բժշկական օգնությամբ, հանդիսանում են Կոնվենցիայի 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունք:

86. Կառավարությունը վիճարկել է նշելով, որ, բացի դիմողի սուբյեկտիվ զգացմունքներից, բողոքարկվող վերաբերմունքն ունեցել է 3-րդ հոդվածի շրջանակներում պահանջվող խստության նվազագույն աստիճան: Կառավարությունը նախ և առաջ նշել է, որ Դատարանին ներկայացրած բժշկական եզրակացությունների լույսի ներքո ոչ մի կասկած չի առաջանում, որ շահագրգիռ մարմիններն ուշադիր և հաճախակի հետևել են դիմողի առողջական վիճակին, և այդ վիճակին համապատասխան ապահովել են բժշկական օգնությամբ:

87. Ինչ վերաբերում է այն հարցին, արդյո՞ք իշխանությունները կատարել են Քրեական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածով նախատեսված՝ դիմողին «համապատասխան բժշկական հաստատությունում» տեղավորելու իրենց պարտավորությունը, Կառավարությունը նշել է, որ բժշկական արձանագրությունները ցույց են տալիս, որ նա ըստ անհրաժեշտության տարվել է բանտային հիվանդանոցներ: Բացի Ռոք-ավում վերոհիշյալ հետազոտությունից, նա ինքնասպանության երկրորդ փորձից հետո տեղավորվել է հիվանդանոցում: Այսպիսով, իշխանությունների կողմից այս առնչությամբ որևէ բացթողում չի եղել:

88. Կառավարությունն ավելացրել է նաև, որ չի կարելի ասել, որ դատարանները չեն ստուգել դիմողի ստացած պատշաճ բժշկական օգնությունը կամ չեն համոզվել, արդյո՞ք նրա վիճակում տևական կալանքը հնարավոր է: Նրանք հաճախակի հարցում են արել բանտային ծառայություններին դիմողի առողջական վիճակի մասին և ըստ անհրաժեշտության ուսումնասիրել են հոգեբուժական հետազոտությունների արդյունքները, և նույնիսկ միջամտել են դիմողի վիճակը բարելավելու նպատակով: Օրինակ, դատարանն անմիջապես արձագանքել է դիմողի բողոքին (1994թ. դեկտեմբերի 7-ին արված)՝ բանտում ստացած հոգեբուժման կապակցությամբ, և բանտային համապատասխան ծառայություններից բացատրություն է պահանջել: Ի հավելումն, դատարանը որոշ դեպքերում հոգեբույժներից պահանջել է եզրակացություններ դիմողի առողջական վիճակի մասին:

89. Ի անփոփումն, Կառավարությունը խնդրել է Դատարանին պաշտպանել Հանձնաժողովի՝ չհանընկնող կարծիք ներկայացրած անդամների կարծիքը, որոնք գտնում են՝ թեև կարելի է վիճարկել, որ իշխանությունները պետք է ավելի շատ ուշադրություն դարձնեին դիմողի հոգեկան վիճակին, նրանք, այնուամենայնիվ, նրան չեն ենթարկել այնպիսի խստության տառապանքի, որը կարող է հանդիսանալ անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունք:

90. Ինչպես Դատարանը նշել է բազմաթիվ առիթներով, Կոնվենցիայի 3-րդ հոդվածն ամրագրում է ժողովրդավարական հասարակության ամենահիմնարար արժեքներից մեկը: Այն բացարձակ ձևակերպումներով արգելում է տանջանքը կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը, կամ պատիժը՝ անկախ հանգամանքներից և գոհի վարքից (տե՛ս ի թիվս այլ աղբյուրների՝ *Վ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* [GC] վճիռը, թիվ 24888/94, կետ 69, ECHR 1999-IX, և *Լաբիտան ընդդեմ Իտալիայի* [GC] վճիռը, թիվ 26772/95, կետ 119, ECHR 2000-IV):

91. Սակայն վատ վերաբերմունքը պետք է ունենա խստության նվազագույն չափ, որպեսզի դրա նկատմամբ կիրառելի լինի 3-րդ հոդվածը: Այս նվազագույն չափի որոշումը, իրերի բնույթից ելնելով, հարաբերական է. այն կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են, օրինակ, վերաբերմունքի բնույթն ու համատեքստը, կատարման ձևն ու մեթոդը, դրա տևողությունը, դրա ֆիզիկական և հոգեբանական ազդեցությունները և, որոշ դեպքերում, զոհի սեռը, տարիքը և առողջական վիճակը (տե՛ս, օրինակ, Ռանիսենն ընդդեմ Ֆիլանդիայի 1997թ. դեկտեմբերի 16-ի վճիռը, *Վճիռների և որոշումների ժողովածու* 1997-VIII, էջ 2821-22, կետ 55):

92. Դատարանը վերաբերմունքը համարում է «անմարդկային», որովհետև, *inter alia*, այն կանխամտածված է, կիրառվել է ժամեր շարունակ և առաջացրել է կամ մարմնական վնասվածքներ, կամ ուժեղ ֆիզիկական կամ հոգեկան տառապանք: Վերաբերմունքը համարվում է «նվաստացնող», եթե զոհերի մոտ առաջացնում է վախի, տանջանքի և անլիարժեքության զգացումներ, որոնք ընդունակ են նրանց նվաստացնելու և ստորացնելու: Մյուս կողմից, Դատարանը մշտապես շեշտել է, որ տառապանքը կամ նվաստացումը պետք է ամեն դեպքում գերազանցեն տառապանքի կամ նվաստացման այն ակնհայտ տարրը, որը կապված է օրինական (լեգիտիմ) վերաբերմունքի կամ պատժի հետ (տե՛ս, *mutatis mutandis*, Թայրերն ընդդեմ Միացյալ Թագավորության 1978թ. ապրիլի 25-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 26, էջ 15, կետ 30, Սերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության 1989թ. հուլիսի 7-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 161, էջ 39, կետ 100, և *Վ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, տե՛ս վերը):

93. Անձին ազատությունից զրկելու միջոցները երբեմն պարունակում են նման տարր: Բայց և այնպես, չի կարելի ասել, որ կալանքի կիրառումն ինքնին Կոնվենցիայի 3-րդ հոդվածին վերաբերող հարց է բարձրացնում: Ոչ էլ այդ հոդվածը կարելի է մեկնաբանել որպես ընդհանուր պարտավորություն՝ կալանավորին ազատ արձակել առողջական հիմքերով կամ նրան տեղավորել քաղաքացիական հիվանդանոցում, որպեսզի նա կարողանա ստանալ բուժման որոշակի տեսակ:

94. Այնուամենայնիվ, այս հոդվածի համաձայն պետությունը պետք է ապահովի անձի կալանքի այնպիսի պայմաններ, որոնք համատեղելի են նրա մարդկային արժանապատվության հետ, պետք է երաշխավորի, որ կալանքի իրականացման ձևն ու եղանակը չեն ենթարկում նրան անհանգստության կամ զրկանքի՝ այնպիսի չափով, որը գերազանցում է կալանքի տակ գտնվելու վիճակին ներհատուկ տառապանքի անխուսափելի աստիճանը, և որ հաշվի առնելով բանտարկության գործնական պահանջները, նրա առողջությունը և բարեկեցությունը պատշաճորեն ապահովված է՝ ի թիվս այլ միջոցների, նրան ապահովելով անհրաժեշտ բժշկական օգնությամբ (տե՛ս, *mutatis mutandis*, Աերթսն ընդդեմ Բելգիայի 1998թ. հուլիսի 30-ի վճիռը, *ժողովածուներ* 1998-V, էջ 1966, կետեր 64 et seq.):

95. Դատարանը նախ և առաջ նկատում է, որ սույն գործում չի վիճարկվում, որ դիմողը և մինչև կալանքը, և դրա ընթացքում՝ 1993թ. հոկտեմբերի 4-ից մինչև 1996թ. հոկտեմբերի 29-ը, տառապել է քրոնիկ դեպրեսիայով և բանտում երկու անգամ ինքնասպանության փորձ է արել: Նրա վիճակը նաև ախտորոշվել էր որպես անհատական կամ նյարդախտային խանգարում և իրավիճակային դեպրեսիվ հակազդում (տե՛ս վերը՝ կետեր 58-67 և 69-72):

96. Դատարանն այնուհետև նկատում է, որ Կառավարության՝ Դատարանին ներկայացրած բժշկական տեղեկանքները (բայց ոչ Հանձնաժողովին) ցույց են տալիս, որ կալանքի ընթացքում դիմողը պարբերաբար խնդրել և արժանացել է բժշկական ուշադրության: Նրան հետազոտել են տարբեր բժիշկ մասնագետներ, և նա հաճախակի ստացել է հոգեբուժական օգնություն (տե՛ս վերը՝ կետեր 59-74): 1993թ. հոկտեմբերի սկզբից մինչև դեկտեմբերի վերջը հոգեբույժները մի քանի անգամ հետազոտել են նրան բանտում (տե՛ս վերը՝ կետեր 59-61): 1993թ. վերջին դատարանը եզրակացություն է ստացել հոգեբույժից, որը հաստատում էր, որ նրա առողջական վիճակն այդ ժամանակ թույլ էր տալիս՝ կալանքի տակ պահել նրան (տե՛ս վերը՝ կետ 21 *in fine*):

Ինքնասպանության առաջին փորձից կարճ ժամանակ անց՝ մի դեպք, որը Դատարանին ներկայացված ապացույցներից ելնելով չի թվում որպես իշխանությունների կողմից նկատելի թերացման հետևանք, դիմողը Ռոք-ավ բանտային հիվանդանոցում 1994թ. մարտի 9-ից մինչև մայիսի 26-ը ստացել է մասնագիտական բուժում՝ հոգեբուժական հետազոտության ձևով (տե՛ս վերը՝ կետ 58): Հետագայում, Ռոք-ավում հետազոտությունից հետո նա անցել է Լա երկու

ամբուլատոր հետազոտություն՝ 1994թ. նոյեմբերի 9-ին և դեկտեմբերի 7-ին (տե՛ս վերը՝ կետեր 66-67):

97. Սակայն այս ամենը նրան հետ չի պահել 1995թ. հունվարին ինքնասպանության երկրորդ փորձից (տե՛ս վերը՝ կետ 69): Այնուամենայնիվ Դատարանը, թեև անհրաժեշտ չի համարում կարծիք հայտնել՝ արդյո՞ք այդ փորձը նպատակ ուներ ուշադրություն գրավել, ինչպես պնդում են իշխանությունները, թե պատճառված տառապանքի հետևանքով խանգարման արտահայտություն էր, իրեն ներկայացված նյութերում չի գտնում ոչինչ, որը ցույց տա, որ իշխանությունները կարող են պատասխանատվություն կրել կատարվածի համար:

98. Նմանապես, Դատարանն իշխանությունների կողմից հետագա որևէ անգործություն դիտել չի կարող՝ դիմողին հոգեբուժական հսկողության տակ պահելու առումով: Ընդհակառակը, Դատարանը գտնում է, որ 1995թ. սկզբից մինչև 1996թ. հոկտեմբերի 29-ին ազատ արձակվելը՝ դիմողին հոգեբույժը հետազոտել է առնվազն ամիսը մեկ անգամ: Միայն 1996թ., այսինքն՝ մինչև ազատ արձակվելը, նա անցել է 12 նման հետազոտություն (տե՛ս վերը՝ կետեր 70-74):

99. Դատարանն ընդունում է, որ դիմողի հոգեբանական վիճակի բնույթն է նրան դարձրել ավելի խոցելի, քան շարքային կալանավորվածը, և նրա կալանավորումը որոշակի չափով սաստկացրել է անհանգստության, տառապանքի և վախի զգացումները: Դատարանը նաև հաշվի է առնում այն փաստը, որ 1996թ. հունիսի 11-ից մինչև հոկտեմբերի 23-ը դիմողը պահվում էր կալանքի տակ, չնայած հոգեբույժների այն կարծիքին, որ տևական կալանքը կարող էր վտանգել նրա կյանքը՝ ինքնասպանության փորձը կրկնելու հավանականության պատճառով (տե՛ս վերը՝ կետեր 46-50): Սակայն ներկայացված ապացույցների հիման վրա և զնահատելով համապատասխան փաստերը՝ որպես մի ամբողջություն, Դատարանը գտնում է՝ հստակ չէ, որ դիմողը ենթարկվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված մակարդակի վատ վերաբերմունքի:

100. Հետևապես, սույն գործով այդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

## II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄԸ

101. Դիմողը, երկրորդ հերթին բողոքել է, որ իր կալանավորումը եղել է երկարատև և նա ենթադրում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում, որի համապատասխան մասը նախատեսում է.

«Սույն հոդվածի 1-ին կետի (c) ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք ... ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննությանը ներկայանալու երաշխիքներով»:

### Ա. Քննության ենթակա ժամանակահատվածը

102. Խնդրո առարկա գործի վարույթի ընթացքում դիմողը երկու անգամ կալանավորվել է: Առաջին անգամ նա կալանավորվել է 1991թ. օգոստոսի 8-ին և կալանքի տակ է գտնվել մոտ մեկ տարի, այն է՝ մինչև 1992թ. հուլիսի 27-ը: Այնուհետև նա կալանավորվել է 1993թ. հոկտեմբերի 4-ին և դրանից հետո մոտ երեք տարի կալանքի տակ է գտնվել մինչև գրավի դիմաց 1996թ. հոկտեմբերի 25-ին ազատ արձակվելը (տե՛ս վերը՝ կետեր 10, 18-20 և 54):

103. Սակայն, քանի որ Կոնվենցիայի նախկին 25-րդ հոդվածի նպատակների համար անհատական գանգատի իրավունքը ճանաչող՝ Լեհաստանի հայտարարությունն ուժի մեջ է մտել 1993թ. մայիսի 1-ից, մինչև այդ օրը դիմողի կալանավորումը դուրս է մնում Դատարանի իրավագործության շրջանակներից *ratione temporis*:

104. Այնուհետև Դատարանը կրկնում է, որ նկատի ունենալով էական կապը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի և այդ հոդվածի 1(c) կետի միջև, առաջին

ատյանում դատապարտված անձը չի կարող համարվել կալանավորված՝ «հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմին ներկայացնելու նպատակով», ինչպես նշված է վերջին դրույթում, այլ 5-րդ հոդվածի 1(a) կետով նախատեսված վիճակում է, որը թույլատրում է ազատությունից զրկելը «իրավասու դատարանի կողմից նրան դատապարտելուց հետո» (տե՛ս, օրինակ, Բ.-ն ընդդեմ Ավստրիայի 1990թ. մարտի 28-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 175, էջ 14-16, կետեր 36-39): Համապատասխանաբար, դիմողի կալանքը 1995թ. հունիսի 1-ից, այն է՝ առաջին ատյանում իր սկզբնական դատապարտման օրվանից, մինչև 1996թ. փետրվարի 22-ը, երբ նրա վերաբերյալ դատավճիռը բեկանվել, իսկ գործը կարճվել է, չի կարող հաշվի առնվել 5-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով:

105. Հետևապես, Դատարանը գտնում է, որ քննության ենթակա ժամանակահատվածն ընդգրկում է երկու առանձին ժամկետներ՝ առաջինը տևել է 1993թ. հոկտեմբերի 4-ից մինչև 1995թ. հունիսի 1-ը, իսկ երկրորդը՝ 1996թ. փետրվարի 22-ից մինչև հոկտեմբերի 29-ը, որը, ընդհանուր առմամբ, կազմում է երկու տարի չորս ամիս և երեք օր:

#### **Բ. Կալանքի տևողության ողջամտությունը**

106. Դիմողը պնդել է, որ իշխանություններն իրեն կալանելու համար բավարար հիմքեր չեն ունեցել: Նախ և առաջ, որևէ հիմնավոր պատճառ չի եղել 1993թ. հոկտեմբերի 4-ից նրա կալանավորման համար, քանի որ նա ներկայացրել է բժշկական տեղեկանք, որ բացակայում է հիվանդության պատճառով և, հետևաբար, նրա բացակայությունը լսումներից՝ 1993թ. փետրվարին և մարտին պատշաճ կերպով արդարացված է եղել: Այնուհետև, սկզբից էլ ակնհայտ է եղել, որ կալանքից բացի այլ խափանման միջոցների կիրառումը, այն է՝ գրավը կամ ոստիկանական հսկողությունը, կամ երկուսն էլ կապահովեին նրա ներկայությունը դատավարությանը:

107. Ամեն դեպքում, նա նշում է, որ երկու տարի չորս ամիս տևած մինչդատական կալանքը չի կարող համարվել «ողջամիտ»: Իհարկե, խնդրո առարկա գործի վարույթի ընթացքում նա կալանքի տակ գտնվել է ոչ միայն այդ երկու տարի չորս ամիսը, որը Դատարանի իրավագործության *ratione temporis* և 5-րդ հոդվածի 3-րդ կետի շրջանակներում է, այլ, ընդհանուր առմամբ, չորս տարի և 13 օր:

108. Կառավարությունը պատասխանել է, որ 1993թ. հոկտեմբերի 4-ին դիմողին կրկին կալանավորելու հիմնական պատճառը ոչ թե 1993թ. փետրվարին և մարտին դատարան չներկայանալն էր, այլ դիմողի առողջական վիճակի մասին դատաբժշկական փորձագետի բժշկական տեղեկանքը նրա փաստաբանի կողմից ուշացումով ներկայացնելը:

109. Կառավարությունը պնդում է, որ դիմողի կալանավորումը տեղի է ունեցել նրա սեփական վարքագծի պատճառով: Այն տեղի է ունեցել նրա փախուստի վտանգից ելնելով, քանի որ նա փախուստի էր դիմել 1992թ. հուլիսին ազատ արձակվելուց հետո: Հետագայում դատարանը որոշել է դիմողին ազատ արձակել գրավի դիմաց: Նվազեցնելու համար նրա փախուստի վտանգը՝ գրավը սահմանվել է 10000 լեհական զլոտի (PLN)՝ մի գումար, որը համապատասխանում է խնդրո առարկա հանցանքների պատճառած վնասին, բայց որը դիմողը համարել է չափազանց և մի քանի ամիս շարունակ չի վճարել: Նրա ազատ արձակման հետաձգման պատճառը, հետևաբար, պահանջվող գումարի վճարման ուշացումն էր, որը նա ինքն է թույլ տվել: Իշխանությունները, Կառավարության կարծիքով, նրա գործը քննելիս ցուցաբերել են պատշաճ ջանացողություն և նրանց վարքի պատճառով չի եղել անգործության ոչ մի ժամանակահատված: Այս ամենը հաշվի առնելով՝ Կառավարությունը խնդրել է Դատարանին ընդունել, որ դիմողի կալանքի տևողությունը չի գերազանցում «ողջամիտ ժամկետը»՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով:

110. Դատարանը կրկնում է, որ կալանքի ժամանակահատվածի ողջամտության հարցը չի կարող որոշվել վերացականորեն: Մեղադրյալի կալանքի տակ գտնվելու տևողության ողջամիտ լինելը պետք է գնահատվի յուրաքանչյուր գործում՝ դրա առանձնահատկություններից ելնելով: Տվյալ գործում տևական կալանքը կարող է արդարացվել միայն այն դեպքում, եթե կան հասարակական շահի իրական պահանջների հատուկ հատկանիշներ, որոնք, չվտանգելով ինքնուրույնաբար անմեղության կանխավարկածը, գերակշռում են Կոնվենցիայի 5-րդ հոդվածով

նախատեսված՝ անձի ազատությունը հարգելու դրույթին (տե՛ս, ի թիվս այլ աղբյուրների, վերը նշված *Luzhuta* վճիռը, կետեր 152 et seq.):

Առաջին հերթին ներպետական դատական իշխանությունների խնդիրն է համոզվել, որ տվյալ գործում մեղադրվող անձի մինչդատական կալանքը չի գերազանցում ողջամիտ ժամկետը: Այստեղ նրանք պետք է, պատշաճորեն հաշվի առնելով անմեղության կանխավարկածի սկզբունքը, քննության առնեն հասարակական շահի վերոհիշյալ պահանջների գոյության բոլոր կողմ կամ դեմ փաստերը, որոնք արդարացնում են շեղումը 5-րդ հոդվածի սկզբունքից, և դրանք պետք է նշեն ազատ արձակման վերաբերյալ դիմումների կապակցությամբ իրենց ընդունած որոշումներում: Հիմնականում այս որոշումներում նշված պատճառների և իր բողոքներում դիմողի ներկայացրած՝ փաստաթղթերով հիմնավորված փաստերի հիման վրա է Դատարանը կոչված որոշելու՝ արդյո՞ք տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում, թե՛ ոչ (տե՛ս Մյուլերն ընդդեմ Ֆրանսիայի 1997թ. մարտի 17-ի վճիռը, *ժողովածուներ* 1997-II, էջ 388, կետ 35):

111. Հիմնավորված կասկածի առկայությունը, որ ձերբակալված անձը հանցանք է կատարել *sine qua non* պայման է տևական կալանավորման օրինականության համար, բայց ժամանակի ընթացքում այլևս չի կարող լինել բավարար պայման: Դատարանը պետք է այնուհետև պարզի՝ արդյո՞ք դատական իշխանությունների ներկայացրած այլ հիմքերը շարունակում են արդարացնել ազատությունից զրկելը: Եթե նման հիմքերը «պատշաճ» և «բավարար» են, Դատարանը պետք է նաև համոզվի, որ ներպետական իշխանությունները «առանձնահատուկ ջանացողություն» են ցուցաբերել գործը քննելիս (նույն տեղում):

112. Դատարանը նկատում է, որ տվյալ գործում վիճելի չէ այն փաստը, որ հետախուզման և նրան կրկին կալանավորելու հիմնական պատճառն այն էր, որ նա սահմանված ժամկետում չէր ներկայացրել բժշկական տեղեկանք և չէր նշել այն հասցեն, ուր պետք է իրեն ուղարկվեին դատական ծանուցագրերը՝ *winosuj cie*-ում բուժման ընթացքում (տե՛ս վերը՝ կետ 19): Այս երկու փաստերով են Կրակովի շրջանային դատարանը և Կրակովի վերաքննիչ դատարանը հիմնավորել իրենց հետևությունն այն մասին, որ առկա է դիմողի փախուստի վտանգ, որն արդարացնում է նրա կալանավորումը՝ դատավարության պատշաճ ընթացքն ապահովելու համար: Դատարաններն այդ կարծիքը կրկնել են իրենց գրեթե բոլոր որոշումներում, որոնցով մերժել են դիմողի՝ 1993թ. հոկտեմբերի 4-ի ձերբակալումից հետո ներկայացրած դիմումները (տե՛ս վերը՝ կետեր 29-34):

113. Կրկին, նրա փախուստի վտանգն այն հիմնական գործոններից մեկն էր, որը Շրջանային դատարանը հաշվի է առել՝ դիմողից պահանջվող գրավի չափը որոշելիս (տե՛ս վերը՝ կետեր 44-47): Այդ վտանգն արդարացրել է նրա կալանքը՝ մինչև գրավի չափը սահմանելու վերաբերյալ որոշման ընդունումը (տե՛ս վերը՝ կետեր 49-54) և, անկախ հիմնավորված կասկածից, որ դիմողը կատարել է խարդախության և կեղծարարության հանցանքներ, իհարկե, հիմնական պատճառն էր, որ նա կալանքի տակ է գտնվել քննության ժամանակահատվածում:

114. Դատարանը համաձայնում է, որ այդ հիմքը, ի լրումն այն կասկածի, որ դիմողը կատարել է խնդրո առարկա հանցանքները, կարող էր սկզբնական շրջանում արդարացնել նրա կալանավորումը: Սակայն ժամանակի ընթացքում այդ հիմքն անխուսափելիորեն դարձել է նվազ պատշաճ և, հաշվի առնելով, որ մինչև 1993թ. հոկտեմբերի 4-ին դիմողի կրկին կալանավորումը, նա արդեն մոտ մեկ տարի գտնվել է կալանքի տակ (տե՛ս վերը՝ կետեր 10-18 և 102-103), միայն շատ համոզիչ պատճառները կհավաստիացնեն Դատարանին, որ դիմողի հետագա կալանքը՝ ևս երկու տարի չորս ամիս ժամկետով, հիմնավորված էր 5-րդ հոդվածի 3-րդ կետով:

115. Ներկա գործում Դատարանը չի գտել նման պատճառներ, հատկապես, երբ դատարանները, չնայած որ անընդհատ վկայակոչել են դիմողի կողմից դատարանի կարգադրությունը չկատարելու երկու վերոհիշյալ դեպքերը, չեն նշել ոչ մի այլ հանգամանք, որն ակնհայտորեն ցույց կտար, որ վտանգն իրականում առկա է եղել խնդրո առարկա ամբողջ ժամանակահատվածում:

116. Դատարանը, համապատասխանաբար, եզրակացնում է, որ դատարանների որոշումներում նշած պատճառները բավարար չեն արդարացնելու համար դիմողի կալանավորումը խնդրո առարկա ժամանակահատվածում:

117. Յետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

### III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄԸ

118. Դիմողն այնուհետև պնդել է, որ չի հարգվել «ողջամիտ ժամկետում դատավարության» իր իրավունքը և, հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, որի համապատասխան մասը հետևյալն է.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են ... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի ... դատարանի կողմից ողջամիտ ժամկետում ... դատաքննության իրավունք... »:

#### Ա. Քննության ենթակա ժամանակահատվածը

119. Գործի վարույթի սկսվելու օրվա կապակցությամբ որևէ տարածայնություն չի եղել. ընդհանուր հիմք է, որ համապատասխան օրը եղել է 1991թ. օգոստոսի 8-ը, երբ դիմողին մեղադրանք է ներկայացվել: Բայց կողմերը տարակարծիք են այն հարցում՝ արդյո՞ք գործի վարույթը կարելի է համարել դեռևս չավարտված՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով:

120. Դիմողը պնդել է, որ «իր դեմ հարուցված մեղադրանքը» դեռևս որոշված չէ, որովհետև իր վճռաբեկ բողոքի քննությունը դեռևս չի ավարտվել Գերագույն դատարանում:

121. Կառավարությունը վիճարկել է, որ դատաքննությունն ավարտվել է 1999թ. հոկտեմբերի 27-ին, երբ Կրակովի վերաքննիչ դատարանը կայացրել է վերջնական դատավճիռ, և նշանակություն չունի, թե դիմողը վճռաբեկ բողոք ներկայացրել է, թե՛ ոչ, որովհետև վճռաբեկ բողոքը պաշտպանության բացառիկ միջոց է, որի միջոցով կարող են վիճարկվել միայն վերջնական դատավճիռները:

122. Դատարանը կրկնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը պետություններին չի հարկադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ: Այնուամենայնիվ, այն պետությունը, որն ստեղծել է այդպիսի դատարաններ, պետք է ապահովի, որ իրավասու անձինք այդ դատարաններում օգտվեն 6-րդ հոդվածով նախատեսված հիմնարար երաշխիքներից (տե՛ս, ի թիվս այլ աղբյուրների, Դելկուրտն ընդդեմ Բելգիայի 1970թ. հունվարի 17-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 11, էջ 13-14, կետ 25, և Բրուելա Գոմես դե լա Տորն ընդդեմ Իսպանիայի 1997թ. դեկտեմբերի 19-ի վճիռը, *ժողովածուներ*, 1997-VIII, էջ 2956, կետ 37):

Չնայած վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանների նկատմամբ 6-րդ հոդվածի կիրառման կարգը կախված է խնդրո առարկա գործի վարույթի առանձնահատկություններից, կասկած չկա չի կարող, որ վերաքննիչ կամ վճռաբեկ վարույթները 6-րդ հոդվածի շրջանակներում են (տե՛ս, *mutatis mutandis*, Թվալիբն ընդդեմ Յունաստանի 1998թ. հունիսի 9-ի վճիռը, *ժողովածուներ*, 1998-IV, էջ 1427-28, կետ 46): Համապատասխանաբար, այսպիսի վարույթների տևողությունը պետք է հաշվի առնել պարզելու համար դատավարությունների ընդհանուր տևողության ողջամտությունը:

123. Յետևաբար, և չունենալով որևէ վկայություն առ այն, որ դիմողի գործի վերաբերյալ Գերագույն դատարանն արդեն ընդունել է որոշում, Դատարանը գտնում է, որ դատավարությունը տևել է ավելի քան ինը տարի: Սակայն, հաշվի առնելով իր իրավագործությունը *ratione temporis* (տե՛ս վերը՝ կետ 103) իմաստով, Դատարանը կարող է հաշվի առնել միայն յոթ տարի և հինգ ամիս ժամանակահատվածը, որն սկսվել է 1993թ. մայիսի 1-ից, բայց պետք է նկատի ունենա, թե այդ պահին գործի վարույթը որ փուլում է գտնվում (տե՛ս, օրինակ, Յյունենն ընդդեմ Լեհաստանի [GC] վճիռը, թիվ 26614/95, կետեր 58-59, 1999թ. հոկտեմբերի 15-ին, չիրատարակված):

#### Բ. Խնդրո առարկա ժամկետի տևողության ողջամիտ լինելը

124. Դատարանը կորոշի դատավարության տևողության ողջամիտ լինելը՝ ելնելով գործի որոշակի հանգամանքներից և հաշվի առնելով նախադեպային իրավունքով սահմանած չափանիշները, մասնավորապես՝ գործի բարդությունը և դիմողի ու գործին առնչվող իշխանությունների վարքագիծը: Վերջին հանգամանքի առնչությամբ պետք է հաշվի առնել նաև այն, ինչը նշանակություն է ունեցել դիմողի համար (տե՛ս, ի թիվս այլ աղբյուրների, Ֆիլիսն ընդդեմ Հունաստանի (թիվ 2) 1997թ. հունիսի 27-ի վճիռը, *Ժողովածուներ*, 1997-IV, էջ 1083, կետ 35, և Պորտիմգտոնն ընդդեմ Հունաստանի 1998թ. սեպտեմբերի 23-ի վճիռը, *Ժողովածուներ* 1998-VI, էջ 2630, կետ 21):

125. Դիմողը պնդել է, որ դատական իշխանություններն իրենք են իր գործը բարդացրել, քանի որ վատ են կազմակերպել դատավարությունը: Նախ և առաջ, եղել են դիմողի հետ մեկտեղ մեղադրված ինը հանցակիցներ, չնայած նրանց դեմ հարուցված մեղադրանքները ոչ մի առնչություն չեն ունեցել դիմողի դեմ հարուցվածների հետ: Դրա արդյունքում դատարան է կանչվել ինսուսուսթ վկա, որոնցից, սակայն, միայն յոթի ցուցմունքն էր առնչվում դիմողի գործին: Երկրորդ, սզբնական դատաքննության ընթացքում դատարանը պատշաճ չէր կազմված, որն էլ պատճառ է դարձել, որ դատավճիռը բեկանվի գործը հանձնվի նոր դատաքննության: Երրորդ, դատարանը դիմողի գործն անջատելու վերաբերյալ ուշացած որոշում է կայացրել և վերջապես իր գործին անդրադարձել է առանձին, այն բանից հետո, երբ իր վերաբերյալ առաջին ատյանի դատարանի սկզբնական դատավճիռը բեկանվել է: Եթե դա արվեր ի սկզբանե, իր դեմ հարուցված մեղադրանքը կորոշվեր ավելի վաղ:

126. Դիմողը նաև վիճարկել է, որ իր գործի քննությանն իշխանությունների անարդյունավետ մոտեցումը երկարատև դատավարության հիմնական պատճառն է: Ավելին, տասնինը երկարատև ամիս՝ 1996թ. փետրվարից մինչև 1997թ. սեպտեմբերը, Շրջանային դատարանը դատավարական անհրաժեշտ ջանք չի գործադրել: Դատարաններն, ուստի, լիովին պատասխանատու են իր չափազանց երկարատև դատաքննության համար:

127. Կառավարությունը չի համաձայնել և փաստարկել է, որ գործը բարդ էր ապացույցների բազմաթիվության, դիմողին և նրա հանցակիցներին ներկայացված մեղադրանքների քանակի և մեծաթիվ վկաներ հարցաքննելու պատճառով:

128. Կառավարության կարծիքով, դիմողն էապես նպաստել է դատավարության երկարաձգմանը: Նա մի շարք անգամներ չի ներկայացրել լսումներին: Նա թաքնվել է, որի պատճառով դատավարությունն ընդհատվել է 1993թ. մարտից մինչև հոկտեմբեր: Հետաձգումների պատճառ է եղել նաև այն, որ նա անցել է հոգեբուժական հետազոտություններ և նրան հիվանդանոցներում տեղավորելու անհրաժեշտություն է առաջացրել: Արդյունքում, երկարատև դատավարության պատճառը հիմնականում եղել է նրա վարքագիծը:

129. Վկայակոչելով գործին առնչվող իշխանությունների վարքագիծը, Կառավարությունը նշել է, որ իրենց կողմից չի եղել անգործության որևէ դրսևորում: Ընդհակառակը, դատարաններն անհրաժեշտ ջանք են ցուցաբերել գործի նկատմամբ, և չնայած նրանց կողմից եղել են որոշ չնչին հետաձգումներ, «ողջամիտ ժամկետի» պահանջն, այնուամենայնիվ, դիմողի գործով կատարվել է:

130. Դատարանը գտնում է, որ չնայած գործի որոշակի բարդությանը, չի կարելի ասել, որ դրանով արդարացվում է դատավարության երկարատևությունը:

Շճմարիտ է, որ 1993թ. փետրվարին և մարտին դիմողը չի ներկայացրել դատարան, և որ արդյունքում դատավարությունը հետաձգվել է մինչև 1993թ. հոկտեմբեր (տե՛ս 19-20 կետերը): Այնուամենայնիվ, Դատարանը չի տեսնում որևէ վկայություն այն բանի, որ դատավարության ցանկացած հաջորդող փուլում դիմողը ցուցաբերել է դանդաղ կոտություն կամ այլ կերպ խոչընդոտել է դատավարության պատշաճ ընթացքը: Այդ առումով Դատարանը եզրակացնում է, որ նրա վարքագիծն էականորեն չի երկարաձգել դատավարության տևողությունը:

Կառավարությունը պնդել է, որ դատարանները, չնայած պատասխանատու են որոշ ձգձգումների համար, ընդհանուր առմամբ գործը լսել են ողջամիտ ժամկետում: Դատարանը, այնուամենայնիվ, կարծում է, որ արագ արդարադատություն իրականացնելու պարտականությունը նախ և առաջ նրանց պարտքն է, հատկապես,

երբ իր դատավարության հիմնական մասի ընթացքում դիմողը գտնվել է կալանքի տակ և տառապել է լուրջ դեպրեսիայով: Սա նրանց կողմից պահանջում էր առանձնահատուկ ջանք այս գործի նկատմամբ:

Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ դիմողի նկատմամբ կայացված առաջին դատավճիռը 1996թ. փետրվարի 22-ին բեկանելուց հետո, մյուս դատավարությունը նշանակվել է 1996թ. հոկտեմբերի 10-ին, բայց սկսվել է միայն 1997թ. մարտի 18-ին, այսինքն՝ ավելի քան մեկ տարի ուշացումով: Այնուհետև այն հետաձգվել է մինչև 1997թ. հոկտեմբեր (տե՛ս վերը՝ կետեր 42 և 53-55): Անվիճելի է, որ հետաձգումը, զոնե որոշ մասով, առաջացել է դիմողի հանցակիցներին վերաբերող դեպքերի պատճառով (տե՛ս վերը՝ կետեր 53 և 55): Այնուամենայնիվ, դատավարության դանդաղումը, որի արդյունքն ընդհանուր առմամբ մոտ 1 տարի 8 ամիս տևած ձգձգումն էր, որի համար Դատարանը չի գտնում որևէ բավարար հիմնավորում և որը համարում է անհամատեղելի 6-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվող ջանացողությանը:

131. Համապատասխանաբար, Դատարանը չի կարող սույն գործի քննության ժամանակահատվածը համարել ողջամիտ:

Հետևապես, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

#### **IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 13-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱԽՏՈՒՄԸ**

132. Դիմողը պնդել է, որ նա չի ունեցել պաշտպանության որևէ միջոց, որով ներպետական իշխանությունների առջև կբարձրացներ իր գործի դատավարության չափազանց երկարատևության հարցը: Հետևապես, իր կարծիքով, խախտվել է Կոնվենցիայի 13-րդ հոդվածը, որը նախատեսում է.

« Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ, եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

133. Սույն գործում Դատարանը կոչված է որոշելու 13-րդ հոդվածով նախատեսված՝ պայմանավորվող պետությունների՝ անձին «ներպետական մարմինների առջև իրավական պաշտպանության միջոց» տրամադրելու պարտավորության շրջանակը, եթե դիմողի պաշտպանության ենթակա՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքը 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված «ողջամիտ ժամկետում գործը քննելու» իրավունքն է: Դիմողը փաստարկել է, որ 13-րդ հոդվածը պետք է մեկնաբանել որպես այդ դեպքում իրավական պաշտպանության «արդյունավետ միջոց» պահանջող, իսկ Կառավարությունը վիճարկել է դա: Հանձնաժողովն անհրաժեշտ չի համարել պարզաբանել այդ հարցը:

#### **Ա. Կողմերի փաստարկները**

##### *1. Դիմողը*

134. Դիմողը ե՛լ իր գրավոր բացատրություններում, ե՛լ Դատարանի լսումների ժամանակ, հենվում էր Հանձնաժողովի՝ չհամընկնող կարծիք ներկայացրած անդամների կարծիքի վրա, որոնք եզրակացրել են, որ ոչ միայն անհրաժեշտ է նրա գանգատը քննել 13-րդ հոդվածի հիմքով, այլ նաև, որ եղել է այդ հոդվածի խախտում: Ի լրումն, նա անդրադարձել է Հանձնաժողովի գեկույցին՝ Միկուլսկին ընդդեմ Լեհաստանի (գանգատ թիվ 27914/95, Հանձնաժողովի 1999թ. սեպտեմբերի 10-ի գեկույցը, չիրատարակված) գործով, որում Հանձնաժողովը չգտնելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ դիմողի քրեական գործի դատավարության տևողության առնչությամբ, կարծիք է հայտնել, որ տեղի է ունեցել 13-րդ հոդվածի խախտում այն առումով, որ չի եղել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, որով ինքը կկարողանար իր գործի դատավարության չափազանց մեծ տևողության վերաբերյալ գանգատն ըստ էության վիճարկել իրավասու ներպետական իշխանությունների առջև:

135. Դիմողը գտնում էր, որ ինչպես արել է Հանձնաժողովը Միկուլսկու գեկույցում, նույնիսկ եթե որոշակի գործերում 6-րդ հոդվածի 1-ին կետը կարող է համարվել *հատուկ իրավունք*՝ 13-րդ հոդվածի առնչությամբ, օրինակ այն գործերում, որոնցում

անձը բողոքել է, որ չի հարգվել դատարան դիմելու իր իրավունքը, նույնը ճիշտ չէ ողջամիտ ժամկետում դատավարության իրավունքի խախտման մասին գանգատների համար: Նման գործերում Կոնվենցիայի 13-րդ հոդվածն սկզբունքորեն կիրառվում է անկախ նրանից, թե 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում հայտնաբերվել է, թե՛ ոչ:

136. Նա նաև նշել է, որ 13-րդ հոդվածով նախատեսված՝ անձի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը կախված չէ նրանից, թե արդյոք Կոնվենցիայի իրավունքների խախտումն փաստորեն հայտնաբերվել է, թե նա պատճառաբանված գանգատ ունի իր այդ իրավունքների խախտման մասին:

137. Ըստ դիմողի՝ Լեհաստանի օրենսդրությունը չի նախատեսում որևէ իրավական պաշտպանության միջոց, որով նա կարողանար արդյունավետորեն վիճարկել իր քրեական գործի դատավարության ձգձգումը և կիրառել «ողջամիտ ժամկետում դատավարության» իր իրավունքը: Հետևաբար, նրա՝ «պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի» իրավունքը 13-րդ հոդվածի իմաստով չի հարգվել:

## 2. Կառավարությունը

138. Կառավարությունը բոլոր հարցերում առարկեց դիմողին: Կառավարությունն իր գրավոր բացատրություններում համամիտ է Հանձնաժողովի մեծամասնության կարծիքին և պնդել է, որ անհրաժեշտություն չկա քննել, արդյո՞ք սույն գործում առկա է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում՝ դատավարության չափազանց երկար տևողության դեմ՝ «պաշտպանության արդյունավետ ներպետական միջոցի» ենթադրյալ բացակայության առումով:

139. Լսումների ընթացքում Կառավարությունը նաև պնդել է, որ Միկուլսկու գործով Հանձնաժողովի մոտեցումն անհամատեղելի է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 13-րդ հոդվածի միջև փոխհարաբերակցության վերաբերյալ Դատարանի նախադեպային իրավունքի հետ, և որ Հանձնաժողովի կարծիքն այդ գործով բոլորովին պայմանավորված չէր վերջին դրույթով՝ *ratio legis*-ով: Այդ ենթատեքստում Կառավարությունը շեշտել է, որ Դատարանը կայացրել է մի շարք վճիռներ. (Կառավարությունը մասնավորապես անդրադարձավ Կադուբեկն ընդդեմ Սլովակիայի (1998թ. սեպտեմբերի 2-ի վճիռը, *ժողովածուներ* 1998-VI) և Բրուալլա Գոմես դե Լա Թորի (վճիռը տե՛ս վերը), գործերին), որտեղ մշտապես շեշտվել է, որ կան «13-րդ հոդվածի պահանջները պակաս խիստ են, քան 6-րդ հոդվածի պահանջները և կլանվում են այդ հոդվածի պահանջների մեջ», կան «6-րդ հոդվածի 1-ին կետի դերը 13-րդ հոդվածի հարաբերությամբ՝ *lex specialis* է, և 13-րդ հոդվածի պահանջները կլանվում են 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով»: Ուշադրության է արժանի, որ Դատարանը նույն *lex specialis* մոտեցումը կիրառել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի նկատմամբ, որը 6-րդ հոդվածի 1-ին կետի նման երաշխավորում է խիստ դատավարական բնույթի իրավունք:

140. Կառավարությունը նաև վկայակոչել է Պիզետին ընդդեմ Իտալիայի 1993թ. փետրվարի 26-ի վճիռը, Շարքեր Ա թիվ 257-C, *Ջուզեպե Տրիպուզին ընդդեմ Իտալիայի* թիվ 40946/98 վճիռը, 2000թ. հունվարի 25, չիրատարակված, և *Բոուլին ընդդեմ Ֆրանսիայի* թիվ 38952/97 վճիռը, 1999թ. դեկտեմբերի 7, չիրատարակված գործերը՝ պնդելով, որ Դատարանը «ողջամիտ ժամկետում դատաքննության» իրավունքի խախտում հայտնաբերելուց հետո հետևողականորեն պնդել է, որ անհրաժեշտություն չկար քննելու դատավարության չափազանց երկար տևողության դեմ պաշտպանության միջոցների բացակայության մասին 13-րդ հոդվածի վրա հիմնված գանգատը: Կառավարությունը շեշտել է, որ Հանձնաժողովն ինքն է վկայակոչել այդ ձևակերպումը՝ սույն գործում անդրադարձնալով Պիզետի վճիռին: Սակայն Միկուլսկու գործում Հանձնաժողովն այդ վճիռը համարել է ոչ տեղին, քանզի չի հայտնաբերել ողջամիտ ժամկետում դատավարության իրավունքի խախտում, բայց գտել է, որ դիմողն, այնուամենայնիվ, «ունեցել է պատճառաբանված գանգատ», որ իր իրավունքը խախտվել է և, հետևապես 13-րդ հոդվածի նվազ խիստ երաշխիքները դեր են կատարել:

141. Այդպիսի եզրակացությունը, Կառավարության պնդմամբ, անհամատեղելի է Պիզետիի գործում Յաննաժողովի մոտեցման հետ, որտեղ Յաննաժողովը գտել է, որ 13-րդ հոդվածը կիրառելի չէ այն դեպքում, երբ Կոնվենցիայի վիճարկվող խախտումը տեղի է ունեցել դատական վարույթների համատեքստում (տե՛ս վերը վկայակոչված Պիզետիի վճիռը, Յաննաժողովի կարծիքը, կետեր 41-42):

142. Կառավարությունը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 13-րդ հոդվածի միջև փոխհարաբերության վերաբերյալ Դատարանի ներկա՝ հստակ նախադեպային իրավունքը վերանայելու համար չի տեսնում որևէ համոզիչ պատճառ: Կառավարությունը մասնավորապես քննադատել է Միկուլսկու գործում Յաննաժողովի այն փաստարկը, ըստ որի՝ հաշվի առնելով դատավարության չափազանց երկար տևողության վերաբերյալ զանգատների մեծ թիվը, ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքի նկատմամբ 13-րդ հոդվածի կիրառումը կարող է նշանակալի գործնական կարևորություն ունենալ ներպետական մակարդակում 6-րդ հոդվածի դատավարական հիմնարար երաշխիքներից մեկը գործողության մեջ դնելու հարցում: Ընդհակառակը Կառավարությունը փաստարկել է, որ ստեղծելով առանձին պաշտպանության միջոց, որը բոլոր գործնական նպատակների համար կնշանակի բողոքարկման լրացուցիչ իրավունքի ստեղծում, կարող է միայն երկարաձգել վարույթի տևողությունը ներպետական դատարաններում:

143. Այդ կապակցությամբ Կառավարությունը պնդել է, որ եթե պետությունն իր արդարադատության համակարգում ունի կուտակված գործեր, խելամիտ չէ իրավիճակը շտկել՝ պետությանը պարտադրելով դատավարությունների ձգձգման դեմ բողոքելու համար ստեղծել նոր դատական կամ այլ միջոցներ: Դատավարության երկար տևողությունը պետք է դիտվի որպես կառուցվածքային անգործություն, և դրա դեմ պայքարելու համար անհրաժեշտ կլինեն առավել բազմակողմանի միջոցառումներ:

Այնուհետև Կառավարությունն ավելացրել է, որ *բառացի մեկնաբանությունը* կհանգեցնի այն անհետեթ եզրակացությանը, որ «պաշտպանության արդյունավետ միջոց ներպետական իշխանության առջև անհրաժեշտ է նաև» այն անձանց համար, ովքեր բողոքել են 13-րդ հոդվածի խախտման առնչությամբ: Այս բոլոր պատճառներից ելնելով, Կառավարությունը եզրակացրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը 13-րդ հոդվածի առնչությամբ *lex specialis* է և, հետևապես, վերջին դրույթը չի կիրառվում այն գործերի նկատմամբ, որոնցում դիմողի զանգատը՝ դատավարության երկար տևողության վերաբերյալ, քննության է առնվել 6-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա:

144. Վերջապես, Կառավարությունը նշել է, որ եթե Դատարանը գտներ, որ անհրաժեշտություն կա գործը քննության առնել 13-րդ հոդվածի հիման վրա, չէր լինի այդ հոդվածի որևէ խախտում: Կառավարությունն ընդունել է, որ Լեհաստանում չկա որևէ առանձին, հատուկ պաշտպանության միջոց՝ բողոքելու դատական վարույթի երկար տևողության դեմ: Այնուամենայնիվ, Կառավարությունն այն կարծիքին էր, որ դիմողն իր քրեական գործի դատավարության ընթացքում կարող էր գործի վարույթի երկար տևողության հարցը բարձրացնել իր կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշումների դեմ բողոքներում կամ Քրեական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի հիման վրա՝ ազատ արձակելու վերաբերյալ դիմումներում (տե՛ս վերը՝ կետ 79): Դիմողը կարող էր նաև բողոք ներկայացնել գործը քննած դատարանի նախագահին կամ Արդարադատության նախարարին: Սրա արդյունքում այդ անձինք գործը կվերցնեին իրենց վարչական վերահսկողության տակ: Վարչական հսկողությունն սկզբունքորեն կարող էր հանգեցնել դատավորի կարգապահական տույժերի, եթե նա դատը վարած լիներ ոչ արդյունավետորեն և դանդաղ:

Չնայած դա չէր կարող ապահովել նման բողոքի ուղղակի բավարարումը, այնուամենայնիվ, Կառավարությունը պնդել է, որ իր կողմից մատնանշված պաշտպանության միջոցների ամբողջությունը բավարարում է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջները:

## **Բ. Դատարանի գնահատականը**

*1. Արդյո՞ք 13-րդ հոդվածի հիման վրա զանգատը քննության առնելու անհրաժեշտություն կա*

146. Նախորդ շատ այլ գործերում, որոնցում Դատարանը 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում է գտել, անհրաժեշտ չի համարել որոշել նաև դրան համատեղ 13-րդ հոդվածի հիման վրա տրված գանգատը: Ավելի հաճախ դրա պատճառը ոչ թե այն հանգամանքներն էին, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը ենթադրաբար *lex specialis* է առաջացնում 13-րդ հոդվածի վերաբերմամբ:

Այսպես, եթե անձի կողմից մատնանշվող Կոնվենցիայով ամրագրված իրավունքը ներպետական օրենսդրությամբ ճանաչված «քաղաքացիական իրավունքն է», օրինակ՝ սեփականության իրավունքը, 6-րդ հոդվածի 1-ին կետով տրամադրվող պաշտպանությունը նույնպես առկա կլինի (տե՛ս, օրինակ, Սփորոնգը և Լյոնրոթն ընդդեմ Շվեդիայի 1982թ. սեպտեմբերի 23-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 52, էջ 31-32, կետ 88): Նման հանգամանքներում 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված երաշխիքները, որոնք ենթադրում են, որ դատական վարույթների լիարժեք հնարավորություններն ավելի խիստ են, քան 13-րդ հոդվածինը, և կլանվում են այդ հոդվածով (տե՛ս, օրինակ՝ վերը մեջբերված Բրուելա Գոմես դե լա Թորեսի վճիռը, էջ 2957, կետ 41):

Դատարանը նման տրամաբանություն է կիրառել այն գործերի նկատմամբ, որոնցում դիմողի դժգոհությունն ուղղված է եղել այն բանի դեմ, որ գոյություն ունեցող վերաքննիչ կամ վճռաբեկ դատավարությունները բավարար չեն, ինչը ե՛լ 6-րդ հոդվածի 1-ին կետի «քրեական» մասի, ե՛լ 13-րդ հոդվածի շրջանակներում է (տե՛ս Կամասինսկին ընդդեմ Ավստրիայի 1989թ. դեկտեմբերի 19-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 168, էջ 45-46, կետ 110՝ Գերագույն դատարանի վճռաբեկ վարույթների վերաբերյալ):

Նման գործերում ոչ մի իրավական շահ չկա 13-րդ հոդվածի նվազ խիստ պահանջների հիման վրա կրկին քննության առնել գանգատի նույն առարկան:

147. Սակայն չկա որևէ համընկնում և, հետևաբար, ոչ մի կլանում այն դեպքում, երբ, ինչպես ներկա գործում, Կոնվենցիայի վիճարկվող խախտումը, որն անձը ցանկանում է բարձրացնել «ներպետական իշխանության» առջև, ողջամիտ ժամկետում դատավարության իրավունքի խախտումն է՝ ի հակադրումն 6-րդ հոդվածի 1-ին կետի: Այն հարցը, թե արդյո՞ք դիմողը տվյալ գործով կշահեր իր քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կամ քրեական մեղադրանքի որոշման կապակցությամբ՝ ողջամիտ ժամկետում դատավարությունից, այլ իրավական հարց է, քան այն հարցը, թե արդյո՞ք ներպետական իրավունքի համաձայն դիմողն ունեցել է պաշտպանության արդյունավետ միջոց այդ հիմքով գանգատ ներկայացնելու համար: Ներկա գործում 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված «դատարանները» պետք է որոշեին դիմողի դեմ հարուցված քրեական մեղադրանքների հարցը, մինչդեռ բողոքը, որը նա ցանկանում էր, որ քննվի «պետական իշխանությունների» կողմից, 13-րդ հոդվածին համապատասխան, առանձին թեմա է՝ դատավարությունների չհիմնավորված երկար տևողության վերաբերյալ:

Նախկին համեմատելի գործերում Դատարանը մերժել է որոշում կայացնել 13-րդ հոդվածով երաշխավորված պաշտպանության արդյունավետ միջոցի բացակայության վերաբերյալ, գտնելով, որ չկա դրա անհրաժեշտությունը՝ ելնելով 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված «ողջամիտ ժամկետի» պահանջի խախտման ճանաչումից (տես, ի թիվս այլ օրինակների, վերը վկայակոչված Պիզետիի , կետ 21, *Բոուլիի*, կետ 27, և *Գուզեպե Տրիպոդիի*, կետ 15, վճիռները):

148. Դատարանի կարծիքով, եկել է ժամանակը վերանայելու նախադեպային իրավունքն այն գանգատների շարունակվող կուտակման լույսի ներքո, որոնց միակ կամ սկզբունքային առարկան ի խախտումն է 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ ողջամիտ ժամկետում դատավարության չապահովումն է:

Այս առնչությամբ հայտնաբերվող խախտումների աճող հաճախակիությունը վերջերս ստիպել է Դատարանին ուշադրություն դարձնել այն «մեծ վտանգին», որը գոյություն ունի ներպետական իրավակարգում իրավական պետության համար, երբ «արդարադատության իրականացման չափազանց ձգձգումները» առաջանում են «կողմերից մեկի՝ պաշտպանության ներպետական միջոց չունենալու պատճառով (տե՛ս, օրինակ, *Բոտածին ընդդեմ Իտալիայի* [GC], թիվ 34884/97, կետ 22, ՄԻԵԴ 1999-V, *Դի Սաուրոն ընդդեմ Իտալիայի* [GC], թիվ 35256/96, կետ 23, ՄԻԵԴ 1999-V, Ա. Դ.-ն

*ընդդեմ Իտալիայի* [GC], թիվ 35265/97, կետ 18, 1999թ. հոլիսի 28, չիրատարակված, և *Ֆերարին ընդդեմ Իտալիայի* [GC], թիվ 33440/96, կետ 21, 1999թ. հոլիսի 28, չիրատարակված):

149. Հակառակ այս նախադրյալների, Դատարանն այժմ ընդունում է անհրաժեշտությունը՝ առանձին քննության առնելու դիմողի գանգատը՝ 13-րդ հոդվածի հիման վրա, ի լրումն ողջամիտ ժամկետում դատավարություն չիրականացնելու կապակցությամբ մինչ այդ հայտնաբերված 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման:

*2. 13-րդ հոդվածի կիրառումը ողջամիտ ժամկետում դատավարության իրավունքի խախտում ենթադրող գանգատների նկատմամբ*

150. Կառավարությունը վիճարկել է, որ 13-րդ հոդվածը չի կիրառվում այն գործերի նկատմամբ, որոնցում դատավարության տևողության վերաբերյալ դիմողի գանգատը քննության է առնվել 6-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա: Կառավարությունը նաև անդրադարձել է Պիզետիի գործով Հանձնաժողովի կարծիքին, որ 13-րդ հոդվածը կիրառելի չէ, երբ վիճարկվող խախտումը տեղի է ունեցել դատական վարույթների համատեքստում (տե՛ս վերը՝ կետեր 139-144):

151. Դատարանը 13-րդ հոդվածի ձևակերպման մեջ չի գտնում ոչինչ՝ հիմնավորելու համար այն սկզբունքը, ըստ որի չկա 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված «դատարան դիմելու իրավունքի» ցանկացած դրսևորման կապակցությամբ դրա կիրառման որևէ շրջանակ: Ոչ էլ 13-րդ հոդվածի կիրառման նման սահմանափակման արտահայտություն կարելի է գտնել դրա նախագծման պատմության ընթացքում:

Ընդունելի է, որ 13-րդ հոդվածով տրամադրվող պաշտպանությունը բացարձակ չէ: Այն համատեքստը, որում վիճարկվող խախտումը կամ խախտումների կատեգորիան տեղի է ունենում, կարող է հանգեցնել պաշտպանության միջոցին հատուկ սահմանափակումների: Նման հանգամանքներում 13-րդ հոդվածը չի համարվում ոչ կիրառելի, բայց «պաշտպանության արդյունավետ միջոցի» դրա պահանջը պետք է հասկացվի որպես «պաշտպանության միջոց, որն այնքան արդյունավետ է, որքան որ կարող է լինել պաշտպանությանը [որոշակի իմաստով] ներհատուկ սահմանափակված շրջանակների առնչությամբ (տե՛ս Քլասը և այլոք ընդդեմ Գերմանիայի 1978թ. սեպտեմբերի 6-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 28, էջ 31, կետ 69): Այնուհետև, «13-րդ հոդվածն այնքան հեռու չի գնում, որ երաշխավորի պաշտպանության միջոց, որը թույլ տա ներպետական իշխանությունների առաջ վիճարկելու Պայմանավորվող պետությունների օրենքները՝ Կոնվենցիային հակասելու հիմքով (տե՛ս Ջեյմսը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության 1986թ. փետրվարի 21-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 98, էջ 47, կետ 85): Այսպիսով, 13-րդ հոդվածը չի կարելի հասկանալ որպես պաշտպանության արդյունավետ այնպիսի միջոց պահանջող դրույթ, որն անձին իրավունք կտա բողոքել ներպետական իրավունքում՝ դատարան դիմելու հնարավորության բացակայության դեմ, ինչպես նախատեսված է 6-րդ հոդվածի 1-ին կետով:

Ինչ վերաբերում է ողջամիտ ժամկետում դատավարության ապահովման ենթադրյալ ծախսողմանը, այնուամենայնիվ, 13-րդ հոդվածի շրջանակում այսպիսի ներհատուկ որակավորում չի կարող նկատվել:

152. Ընդհակառակը, Կոնվենցիայի սահմանած՝ մարդու իրավունքների պաշտպանության համակարգում 13-րդ հոդվածի տեղը խոսում է 13-րդ հոդվածով ենթադրվող սահմանափակումների օգտին, որոնք մնացել են նվազագույնը:

1-ին հոդվածի ուժով (որը նախատեսում է. «Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի I բաժնում»:) երաշխավորված իրավունքների և ազատությունների իրականացման և կիրառման հիմնական պատասխանատվությունը ներպետական իշխանություններին է: Դատարանին դիմելու մեխանիզմն, ուստի, օժանդակ է մարդու իրավունքները երաշխավորող պետական համակարգի նկատմամբ: Այս օժանդակ բնույթն արտահայտված է Կոնվենցիայի 13-րդ հոդվածում և 35-րդ հոդվածի 1-ին կետում:

35-րդ հոդվածի նպատակը, որը սահմանում է ներպետական միջոցներն սպառելու կանոնը, պայմանավորվող պետություններին հնարավորություն է տալիս կանխել կամ

շտկել վիճարկվող խախտումները՝ մինչև դրանք կվիճարկվեն Դատարանում (տե՛ս, որպես վերջին աղբյուր, *Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի* [GC] թիվ 25803/94, կետ 74, ՄԻԵԴ 1999-V): 35-րդ հոդվածի կանոնը հիմնված է 13-րդ հոդվածում արտացոլված այն ենթադրության վրա (որին այն շատ նման է), որ գոյություն ունի պաշտպանության արդյունավետ ներպետական միջոց, որը մատչելի է Կոնվենցիայով նախատեսված իրավունքների ենթադրյալ խախտման դեպքում (նույն տեղում):

Այդ առումով, 13-րդ հոդվածն ուղղակիորեն արտահայտելով պետությունների պարտավորությունը՝ առաջինը պաշտպանել մարդու իրավունքները և առաջին հերթին իրենց սեփական իրավական համակարգի շրջանակում, անձի համար ստեղծում է լրացուցիչ երաշխիք՝ ապահովելու համար, որ նա արդյունավետորեն օգտվի իր այդ իրավունքներից: 13-րդ հոդվածի առարկան, ինչպես բխում է *travaux preparatoires*-ից (տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի «Travaux Preparatoires»-ի Ընտիր ժողովածու, հատոր II, էջ 485 և 490, և հատոր III, էջ 651), հետևյալն է՝ միջոցներ ապահովել, որոնց օգնությամբ անձինք կարող են պետական մակարդակում վերականգնել Կոնվենցիայով նախատեսված՝ իրենց խախտված իրավունքները, մինչև որ կօգտագործվի Դատարանին դիմելու միջազգային մեխանիզմը: Այս տեսանկյունից անձի՝ ողջամիտ ժամկետում դատավարության իրավունքը կլինի նվազ արդյունավետ, եթե չլինի Կոնվենցիայի առումով բողոքը նախ և առաջ ներպետական իշխանությանը ներկայացնելու հնարավորություն, և 13-րդ հոդվածի պահանջներն ավելի շուտ պետք է համարվեն 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներն ամրապնդող, քան որպես այդ հոդվածով նախատեսված՝ իրավական վարույթներում անձանց չափազանց ձգձգումների չենթարկելու ընդհանուր պարտավորությամբ կլանված:

153. Կառավարությունը, սակայն, վիճարկել է, որ դատավարության անսովոր երկար տևողության դեմ 13-րդ հոդվածի հիման վրա պաշտպանության արդյունավետ միջոցի պահանջը հավասարազոր է պետություններին՝ «բողոքելու իրավունք» ստեղծելու նոր պարտավորություն պարտադրելուն, մասնավորապես, հարցն ըստ էության բողոքարկելու իրավունք, որը, որպես այդպիսին, երաշխավորում է միայն քրեական գործերով Կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածի հիման վրա, և որ գործնականում պաշտպանության այսպիսի միջոցի կիրառումը կարող է միայն երկարաձգել գործի քննությունը ներպետական դատարաններում (տես վերը՝ կետեր 142-143):

154. Դատարանը չի ընդունում Կառավարության պնդումները:

Դատավարության չհիմնավորված երկար տևողության դեմ բողոքելու պաշտպանության միջոցը, որպես այդպիսին, չի ընդգրկում բողոքը ցանկացած քրեական մեղադրանք կամ քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ «որոշելու» դեմ: Ամեն դեպքում, Կոնվենցիայի պահանջների համաձայն՝ պայմանավորվող պետությունները, ինչպես Դատարանը որոշել է նախկին շատ դեպքերում, ունեն ազատության որոշակի շրջանակ որոշելու, թե ինչ կարգով են իրենք տրամադրում 13-րդ հոդվածով պահանջվող՝ իրավունքների վերականգնումը և կատարում Կոնվենցիայով ստանձնած իրենց պարտավորությունը՝ այդ դրույթի հիման վրա (տե՛ս, օրինակ, Կայան ընդդեմ Թուրքիայի 1998թ. փետրվարի 19-ի վճիռը, ժողովածուներ 1998-I, էջ 329-30, կետ 106):

Ինչ վերաբերում է այն մտեցմանը, որ հետագա պաշտպանության միջոց պահանջելու արդյունքում ներպետական վարույթները կդառնան ավելի դժվարաշարժ, Դատարանը նկատում է, որ նույնիսկ ներկայումս պայմանավորվող պետությունների իրավակարգում չկա որևէ գերակշռող մոդել՝ դատավարության չափազանց երկար տևողության դեմ պաշտպանության միջոցների առնչությամբ, կան ներպետական պաշտպանության միջոցների սպառնան կապակցությամբ Դատարանի սեփական նախադեպային իրավունքից բխող օրինակներ, որոնք ցույց են տալիս, որ հնարավոր չէ ստեղծել նման միջոցներ և դրանք արդյունավետորեն կիրառել (տե՛ս, օրինակ, Գոնգալես Մարինն ընդդեմ Իսպանիայի (dec), թիվ 39521/98, ՄԻԵԴ 1999-VII, և Տոմե Մոտան ընդդեմ Պորտուգալիայի (dec), թիվ 32082/96, ՄԻԵԴ 1999-IX):

155. Եթե 13-րդ հոդվածը, ինչպես պնդել է Կառավարությունը, մեկնաբանվի որպես 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ ողջամիտ ժամկետում դատավարության

իրավունքի նկատմամբ չկիրառվող, ապա անձինք անընդհատ ստիպված կլինեն Ստրասբուրգի Դատարան ներկայացնել գանգատներ, որոնք, այլապես, Դատարանի կարծիքով, ավելի ճիշտ, առաջին հերթին պետք է ուղղվեին ներպետական իրավական համակարգին: Կոնվենցիայով սահմանված՝ մարդու իրավունքների պաշտպանության համակարգի երկարատև արդյունավետ գործունեությունը՝ ե՛լ ներպետական, ե՛լ միջազգային մակարդակում, ենթակա կլինի թուլացման:

156. Վերոհիշյալ նկատառումներից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ 13-րդ հոդվածի ճիշտ մեկնաբանությունն այն է, որ այդ դրույթը երաշխավորում է ներպետական իշխանությունների առջև պաշտպանության արդյունավետ միջոց 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ գործը ողջամիտ ժամկետում լսելու պահանջի ենթադրյալ խախտման դեմ:

### *3. Համապատասխանությունը 13-րդ հոդվածի պահանջներին*

157. Ինչպես Դատարանը որոշել է մի շարք դեպքերում, Կոնվենցիայի 13-րդ հոդվածը երաշխավորում է Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների կիրառումն ապահովող պաշտպանության միջոցների առկայություն ներպետական մակարդակում, ինչ ձևով էլ որ դրանք ապահովված լինեն ներպետական իրավական համակարգում: Այսպիսով, 13-րդ հոդվածը պահանջում է ներպետական պաշտպանության միջոցի տրամադրում, որի միջոցով քննության կառավարի Կոնվենցիայի հիման վրա ներկայացված «պատճառաբանված գանգատը» և կտրվի պատշաճ բավարարում (տե՛ս, ի թիվս այլ աղբյուրների, վերը մեջբերված Կայայի վճիռը):

13-րդ հոդվածով նախատեսված՝ պայմանավորվող պետությունների պարտավորությունների շրջանակները փոփոխվում են՝ կախված դիմողի գանգատի բնույթից, այնուամենայնիվ, 13-րդ հոդվածով պահանջվող պաշտպանության միջոցը պետք է «արդյունավետ» լինի ինչպես գործնականում, այնպես էլ իրավաբանորեն (տե՛ս, օրինակ, *Լհանն ընդդեմ Թուրքիայի* [GC], թիվ 22277/93, կետ 97, ՄԻԵԴ 2000-VIII):

«Պաշտպանության միջոցի արդյունավետությունը»՝ 13-րդ հոդվածի իմաստով, կախված չէ դիմողի համար նպաստավոր ելքի որոշակիությունից: Ոչ էլ այդ հոդվածում նշված «մարմինն» անհրաժեշտորեն պետք է լինի դատական մարմին. բայց եթե այդպես չէ, նրա լիազորություններն ու երաշխիքները բավարար են՝ որոշելու պաշտպանության միջոցի արդյունավետությունը: Ինչպես նաև, նույնիսկ եթե եզակի պաշտպանության միջոցն ինքնին լիովին չի բավարարում 13-րդ հոդվածի պահանջները, ներպետական օրենքով նախատեսված պաշտպանության միջոցների ամբողջությունը կարող է դա անել (տե՛ս, ի թիվս այլ աղբյուրների, Սիլվերը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության 1983թ. մարտի 25-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 61, էջ 42, կետ 113, և Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության 1996թ. նոյեմբերի 15-ի վճիռը, *ժողովածուներ* 1996-V, էջ 1869-70, կետ 145):

158. Դատարանին մնում է որոշել՝ արդյո՞ք լեհական օրենսդրության համաձայն դիմողին մատչելի պաշտպանության միջոցները՝ բողոքարկելու իր գործի վարույթի երկարատևությունը, եղել է «արդյունավետ» այն իմաստով, որ կանխվեր ենթադրյալ խախտումը՝ կամ դրա շարունակումը, կամ պատշաճորեն վերականգնվեր արդեն խախտված իրավունքը:

159. Դատարանը նախ և առաջ նկատում է, որ Կառավարությունը չի պնդում, որ կա որևէ հատուկ իրավական միջոց, որի օգնությամբ դիմողը կարող էր բողոքել դատավարության երկարատևության դեմ, այլ ներկայացրել է, որ որոշակի միջոցների ամբողջությունը բավարարում է 13-րդ հոդվածի պահանջները: Բայց Կառավարությունը չի նշել, թե արդյո՞ք և եթե այդպես է՝ ինչպե՞ս, դիմողը պետք է բավարարում ստանար՝ կանխարգելման, թե փոխհատուցման ձևով, պաշտպանության այդ միջոցների օգնությանը դիմելով (տե՛ս վերը՝ կետ 145): Չէր արտահայտվում այն միտքը, որ վկայակոչվող պաշտպանության ցանկացած եզակի միջոց կամ դրանց ամբողջությունը կարող էր արագացնել դիմողի դեմ հարուցված մեղադրանքի որոշման կայացմանը կամ նրան տրամադրել համապատասխան հատուցում՝ արդեն տեղի ունեցած ձգձգումների համար: Ոչ էլ Կառավարությունը ներկայացրել է որևէ օրինակ ներպետական պրակտիկայից՝ ցույց տալու համար, որ օգտագործելով խնդրո առարկա միջոցները՝ դիմողի համար հնարավոր կլիներ նման հատուցում ստանալ:

Այն ինքնին ցույց կտար, որ վկայակոչվող պաշտպանության միջոցները չեն համապատասխանում «արդյունավետության» չափորոշիչին՝ 13-րդ հոդվածի նպատակների համար, որովհետև, ինչպես Դատարանն արդեն նշել է (տե՛ս վերը՝ կետ 157)՝ պահանջվող պաշտպանության միջոցը պետք է արդյունավետ լինի ե՛լ իրավաբանորեն, ե՛լ գործնականում:

160. Համապատասխանաբար, Դատարանը վճռում է, որ ներկա գործում տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում. վերջինս կայանում է նրանում, որ դիմողը չի ունեցել պաշտպանության ներպետական միջոց, որի օգնությամբ կարողանար կիրառել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված «ողջամիտ ժամկետում» դատավարության իր իրավունքը:

## V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

161. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը նախատեսում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանն, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի բավարարում է տրամադրում»:

### Ա. ՎՆԱՍը

162. Որպես նյութական վնասի հատուցում՝ դիմողը պահանջել է 480,000 լեհական զլոտի (PLN) գումար՝ իր երկարատև կալանքի պատճառով առևտրական գործունեության շահույթները կորցնելու դիմաց:

Դիմողը նաև Դատարանից պահանջել է 800,000 ԱՄՆ դոլար (USD) կամ լեհական զլոտիով դրա համարժեք գումարը Կոնվենցիայով նախատեսված իր իրավունքների խախտման արդյունքում իրեն պատճառված բարոյական վնասի և անհանգստության դիմաց:

163. Կառավարությունը գտել է, որ պահանջված գումարի չափը չափազանցված է: Կառավարությունը Դատարանին խնդրել է որոշել, որ իրավունքի խախտման ճանաչումն արդեն իսկ բավարար արդարացի բավարարում է: Որպես այլընտրանք, Կառավարությունը Դատարանին առաջարկել է արդարացի բավարարման չափը գնահատել՝ հիմք ընդունելով նմանատիպ այլ գործերով դատական նախադեպը և նկատի ունենալով պետության տնտեսական իրավիճակը:

164. Դատարանի եզրակացությունը, իրեն ներկայացված վկայությունների հիման վրա, այն է, որ դիմողը չի ապացուցել, որ մատնանշվող նյութական վնասը փաստացի պատճառվել է նրա համապատասխան ժամկետով կալանված լինելու պատճառով: Հետևաբար, այդ առնչությամբ նրան հատուցում տրամադրելը որևէ կերպ հիմնավորված չէ:

165. Մյուս կողմից, Դատարանն ընդունում է, որ դիմողին իրոք պատճառվել է ոչ դրամական վնաս, այն է՝ անհանգստություն և անբավարարվածություն, որն արդյունք է նրա կալանքի և դատաքննության ձգձգված տևողության, որը չի կարող լիարժեքորեն փոխհատուցվել Կոնվենցիայի խախտման փաստը ճանաչելով: Գնահատելով արդարացի հիմքով՝ Դատարանն այս կապակցությամբ դիմողին տրամադրում է 30,000 PLN:

### Բ. Դատական ծախսեր և վճարումներ

166. Դիմողը, որը Եվրոպայի խորհրդից ստացել է իրավաբանական օգնություն՝ Դատարանում իր գործը ներկայացնելու առնչությամբ, պահանջել է 30,400 ԱՄՆ դոլար (USD) փոխհատուցում՝ դատական ծախսերի և վճարումների դիմաց, որոնք ինքը կրել է Դատարանին դիմելու առնչությամբ:

167. Իր գրավոր բացատրություններում Կառավարությունը խնդրել է Դատարանին փոխհատուցում տրամադրել (եթե տրամադրվի) միայն այնքանով, որքանով որ պահանջվող դատական ծախսերն ու վճարումները կատարվել են փաստացի և անհրաժեշտաբար և ողջամիտ են իրենց քանակով: Լուսմների ժամանակ Կառավարությունը նշել է, որ դատական ծախսերի և վճարումների չափը չափազանց մեծ է:

168. Դատարանը պահանջը գնահատել է իր նախադեպային իրավունքում սահմանած սկզբունքների լույսի ներքո (տես *Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի* [GC], թիվ 31195/96, կետ 79, ՄԻԵԴ 1999-II, *Օզթուրկն ընդդեմ Թուրքիայի* [GC], թիվ 22479/93, ՄԻԵԴ 1999-VI, և *Վիտտլդ Լիտվան ընդդեմ Լեհաստանի*, թիվ 26629/95, կետ 88, ՄԻԵԴ 2000-III):

Ներկա գործի նկատմամբ կիրառելով վերը նշված չափանիշը և գնահատելով արդարացի հիմքով՝ Դատարանը ողջամիտ է համարել դիմողին տրամադրել 20000 PLN՝ իր ծախսերի և վճարումների դիմաց՝ գանձվելիք ցանկացած ավելացված արժեքի հարկի հետ մեկտեղ: Այս գումարից հանվում է 10589 ֆրանսիական ֆրանկ, որը դիմողը Եվրոպայի խորհրդի կողմից ստացել է որպես իրավաբանական օգնություն:

#### **Գ. Տոկոսներ՝ փոխհատուցումը չվճարելու դեպքում**

169. Համաձայն Դատարանին հայտնի տեղեկությունների, սույն վճռի ընդունման օրվա դրությամբ Լեհաստանում օրենքով սահմանված կիրառվող տոկոսադրույքները կազմում են տարեկան 21 տոկոս:

#### **ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ**

1. *Վճռում է* միաձայն, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել,

2. *Վճռում է* միաձայն, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում,

3. *Վճռում է* միաձայն, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում,

4. *Վճռում է* 16 ձայնով՝ ընդդեմ 1-ի, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

5. *Վճռում է* միաձայն, որ

(ա) պատասխանող պետությունը պետք է եռամսյա ժամկետում դիմողին վճարի հետևյալ գումարները,

(I) ոչ նյութական վնասի փոխհատուցում՝ 30 000 (երեսուն հազար) լեհական զլոտի,

(II) 20 000 (քսան հազար) լեհական զլոտի՝ ծախսերի և վճարումների դիմաց՝ գանձվելիք ցանկացած ավելացված արժեքի հարկի հետ մեկտեղ, հանած 10,589 ֆրանսիական ֆրանկ, որը կփոխարկվի լեհական զլոտիի սույն վճռի ընդունման օրվա կուրսով:

(բ) տարեկան 21 տոկոս սովորական տոկոս պետք է վճարվի այս գումարներից՝ սկսած վերոհիշյալ եռամսյա ժամկետի լրանալուց հետո՝ մինչև վճարումը,

6. *Մերժում է* միաձայն արդարացի հատուցման մասին դիմողի պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով և հրապարակվել է դռնբաց նիստում՝ Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 2000թ. հոկտեմբերի 26-ին:

Պոլ Մահոնեյ  
Քարտուղար

Լուզիուս Վիլդհաբեր  
Նախագահ

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետի և Դատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն սույն վճռին կցվում է պրն Կասադեվալի մասնակի չհամընկնող կարծիքը:

L. Վ.  
Պ. Զ. Մ.

### **ՂԱՏԱՎՈՐ ԿԱՍԱԴԵՎԱԼԻ ՄԱՍՆԱԿԻ ԶՅԱՍԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ** (Թարգմանություն)

1. Ես չեմ կիսում մեծամասնության կարծիքն այն մասին, որ Դատարանի համար անհրաժեշտ էր հեռանալ նախադեպից և սույն գործում ընդունել, որ Դատարանը պետք է որոշում կայացնէր նաև 13-րդ հոդվածի ենթադրյալ խախտման վրա հիմնված գանգատի կապակցությամբ, որ չի եղել պաշտպանության արդյունավետ միջոց, երբ Դատարանն արդեն իսկ գտել է 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, որովհետև ողջամիտ ժամկետը գերազանցվել էր միևնույն վարույթներում:

2. Ելնելով, մասնավորապես, 13-րդ հոդվածի ձևակերպումից, որն այնքան սեղմ է, որքան և լայն, ոչինչ չի կանխում դրա կիրառումը 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված «դատարան դիմելու իրավունքի» տարբեր դրսևորումների նկատմամբ<sup>1</sup>: Այդ իմաստով ես չեմ դժվարանում: Մյուս կողմից, բոլոր տեսակի բարդությունները, որոնք այս նոր նախադեպային իրավունքը հավանաբար կառաջացնի Դատարանի, մասնակից պետությունների և, առավել ևս՝ այն անձանց համար, ովքեր մտադրություն ունեն օգուտ քաղել Կոնվենցիայով վերապահված պաշտպանությունից, այն է՝ *դիմողներին*, ինձ ստիպում են վախենալ, որ պաշտպանության այդ միջոցն ավելի վատն է, քան վնասը՝ հետևյալ պատճառներով:

3. Առաջինը վերաբերում է նախադեպից շեղվելու հիմքերին: Տեսականորեն ես կարող եմ ընդունել վճռի 147-րդ կետում նշված հիմնավորումը, ըստ որի չկա ոչ համընկնում, ոչ էլ կլանում, երբ ինչպես և սույն գործում, ենթադրյալ խախտումը, որն անձը ցանկանում է ներկայացնել ներպետական իշխանությանը, ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքի խախտում է: Սակայն հիմնավորման մնացած մասը, որը հիմնված է դատավարության երկարատևության մասին գործերի շարունակվող կուտակմանը, չունի որևէ իրավաբանական հետաքրքրություն<sup>2</sup>:

1999թ. հուլիսին, վճռի 148-րդ կետում վկայակոչված դատավարության երկարատևության վերաբերյալ իտալական գործերում, Դատարանը որոշել է, որ նմանատիպ խախտումների կուտակումը հանգեցնում է տևական իրավիճակի, որը դեռևս չի շտկվել, և որի կապակցությամբ կողմերը չունեն ներպետական պաշտպանության որևէ միջոց: Խախտումների այդ կուտակումը ստիպել է որոշել, որ առկա է Կոնվենցիայի հետ անհամատեղելի պրակտիկա:

Շճմարիտ է, որ այդ ժամանակից ի վեր եղել են շատ ավելի վճիռներ այն խախտումները հաստատելու վերաբերյալ, որոնք հիմնված են եղել միայն կամ սկզբունքորեն մեծ թվով պետություններում դատավարության չափազանց երկար տևողության վրա: Բայց Կոնվենցիայի համաձայն Դատարանը պարտավոր է քննության առնել գանգատներն այնպես, ինչպես որ ներկայացրել են կողմերը: Ընդունել, ինչպես որ Դատարանն է արել 149-րդ կետում, որ հաշվի առնելով դատավարության երկարատևության կապակցությամբ գանգատների թվաքանակը եկել է ժամանակը 13-րդ հոդվածի հիման վրա ներկայացված գանգատները

<sup>1</sup> Սույն վճռի 151-րդ կետը:

<sup>2</sup> «...[Դատարանին] ներկայացվող գործերի շարունակվող կուտակման լույսի ներքո...» (տե՛ս վճռի 148-րդ կետը):

քննության առնել առանձին, ըստ իս, ավելի շուտ նպատակահարմար է, քան ըստ օրենքի:

4. Ավելին, որոշակի չէ, որ Կոնվենցիայով ամրագրվող՝ եվրոպական մակարդակում դատական պաշտպանությունը կամրապնդվի զուտ այն պատճառով, որ Դատարանն այժմ ի վիճակի է հաստատելու կրկնակի խախտում՝ առաջինը՝ դատավարության չափազանց երկար տևողության կապակցությամբ, և երկրորդ՝ դրա դեմ բողոքելու պաշտպանության արդյունավետ միջոց չլինելու կապակցությամբ: 13-րդ հոդվածի՝ լրացուցիչ խախտում հայտնաբերելն ինքնին այնպիսին չէ, որ հաղթահարվեն որոշ անդամ պետությունների դատական համակարգին հատուկ կառուցվածքային հիմնախնդիրները, առավել ևս ճանաչումը, որ առկա է Կոնվենցիայի հետ անհամատեղելի պրակտիկա: Դա չի օգնի կրճատելու Դատարանի ծանրաբեռնվածությունը՝ թերևս մոտակա ժամանակում:

5. 13-րդ հոդվածի խախտումը հայտնաբերելու նպատակը պետություններին իրենց պարտականությունների առերեսումն է՝ օժանդակության սկզբունքին համապատասխան, և նրանց խրախուսելը՝ իրենց ներպետական իրավական համակարգում ստեղծելու պաշտպանության արդյունավետ միջոց, որը կողմերին հնարավորություն կտա բողոքել դատավարության չափազանց երկար տևողության դեմ: Ենթադրենք, այդպիսի պաշտպանության միջոց ստեղծվել է. ես դժվարությամբ կարող եմ պատկերացնել, թե ինչպես պետք է դատավարության ոչ ողջամիտ երկարատևության կառուցվածքային հիմնախնդիրը լուծվի դատավարության տևողության դեմ բողոքելու հնարավորություն տալու համար Կոնվենցիայի 35-րդ հոդվածով նախատեսված պարտավորությամբ լրացուցիչ պաշտպանության միջոցն առաջինն սպառելու պարտավորությամբ:

Ոչինչ չի հանգեցնում այն ենթադրության, որ նման բողոքի քննությունը պետք է կատարվի ավելի ողջամիտ ժամկետում, քան հիմնական դատավարությունը: Ինչպես նաև ոչինչ չի հանգեցնում այն ենթադրություն, որ հիմնական դատավարության ընթացքը կարագանա նման բողոք ներկայացնելու արդյունքում: Վերջին հաշվով, *միայն դիմողը կտուժի այս իրավիճակի հետևանքներից:*

6. Ես նաև մտածում եմ, որ նախադեպից շեղվելուց հետո այլ հարցեր էլ անհրաժեշտորեն կծագեն, որոնք Դատարանին հարկ կլինի լուծել: Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն, օրինակ, 13-րդ հոդվածով պահանջվող պաշտպանության միջոցը պետք է «արդյունավետ լինի գործնականում, ինչպես նաև իրավաբանորեն»<sup>1</sup> և ի վիճակի լինի շահագրգիռ անձին «համապատասխան փոխհատուցում»<sup>1</sup> ապահովել: Այնուամենայնիվ, պարզապես ներպետական դատարաններում գտնել ողջամիտ ժամկետում դատաքննության պարտավորության կատարման փաստի ճանաչումն այն բանից հետո, ինչ պաշտպանության նման միջոցն սպառվել է, ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցում տրամադրելը հնարավոր չի դարձնում այդ պաշտպանության միջոցը համարել արդյունավետ, եթե *հիմնական դատավարությունը դեռևս չի ավարտվել:*

Այդ դեպքում, մի քանի տարի անց, դիմողն ստիպված կլինի իր գանգատը ներկայացնել Դատարանին՝ հիմնվելով 6-րդ հոդվածի 1-ին կետի և նաև այս դեպքում՝ 13-րդ հոդվածի խախտման վրա: Մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետությունն այսպիսով չի ամրապնդվի, այլ տեղի կունենա ճիշտ հակառակը:

7. Չնայած Դատարանը կրկնում է<sup>2</sup>, որ պետություններին «տրամադրված է ազատության որոշակի շրջանակ՝ սահմանելու այն կարգը, որով իրենք ապահովում են 13-րդ հոդվածով պահանջվող պաշտպանությունը», և թեև, ինչը նշանակում է «պաշտպանության միջոց, որն այնքան արդյունավետ է, որքան կարող է լինել՝ հաշվի առնելով պաշտպանության [որոշակի իմաստով] ներհատուկ սահմանափակված շրջանակը»<sup>3</sup>, արդյունավետության պահանջը նշանակում է, որ պաշտպանության նման միջոցը պետք է տրամադրվի գործն ըստ էության լուծող մարմնից առանձնացված և անկախ մարմնի կողմից, քանի որ գործն ըստ էության լուծող մարմնին է պատասխանատու գործի ողջամիտ ժամկետում լուծման և, հետևաբար, դիմողի հայտարարած խախտման համար: Այնուհետև, նման մարմնի որոշումները

<sup>1</sup> Տես, այլ հնդիսակների թվում, Աքսոյն ընդդեմ Թուրքիայի 1996թ. դեկտեմբերի 18-ի վճիռը. *Վճիռների և որոշումների ժողովածու* 1996-VI:

<sup>2</sup> Վճիռի 154-րդ կետը:

<sup>3</sup> Վճիռի 151-րդ կետը:

պետք է ունենան պարտադիր իրավաբանական ուժ, քանի որ հակառակ դեպքում արդյունավետության պահանջը չի բավարարվի<sup>1</sup>:

8. Վերջապես, ես ցանկանում եմ մատնանշել, որ բավական մեծ թվով գործերում Դատարանը գտել է ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտում, երբ գործի վարույթի տևողությունը չափազանց երկար էր անդամ պետությունների գերագույն դատարաններում<sup>2</sup>: Ո՞ւմ պետք է դիմեն կողմերը՝ կամ դատավարության ընթացքն արագացնելու, կամ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման պատճառով առաջացած կորուստների համար փոխհատուցում ապահովելու կապակցությամբ, երբ խախտումը կատարվել է պետության բարձրագույն դատարանի կողմից:

9. Բոլոր վերը նշված պատճառներով, ես չեմ կարող համամիտ լինել մեծամասնության կարծիքին, քանի որ նրանք անհրաժեշտ են համարում որոշել, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում: Ըստ իս, սովյալ գործում բավարար կլիներ գտնել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

---

<sup>1</sup> Խնդրագիր՝ ուղղված Խորհրդարանական հանձնաժողովի անդամին, որն իրավասու չէ փոխհատուցում տրամադրել (տես Սիլվերը եւ այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության 1983թ. մարտի 25-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 61, էջ 43, կետ 115):

<sup>2</sup> Տես, օրինակ, Ռուիս Մաթեոսն ընդդեմ Իսպանիայի 1993թ. հունիսի 23-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 262, էջ 23, կետ 51, եւ ավելի նորերս, *Գաստր եւ Պոփփին ընդդեմ Գերմանիայի*, թիվ 29357/95, ՄԻԵԴ 2000-II, *Սավիդուն ընդդեմ Հունաստանի*, թիվ 38704/97, 1 օգոստոսի, 2000թ. չիրատարակված, կամ *Գյուսնթն ընդդեմ Ֆրանսիայի*, թիվ 33393/96, ՄԻԵԴ 2000-IX:

**ՀԱՍԱՆԸ ԵՎ ՉԱՈՒՇՆ ԸՆԴՈՒՄ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԳՈՐԾԸ**  
**CASE OF HASAN AND CHAUSH v. BULGARIA**

**(Գանգատ No. 30985/96)**  
**Դատարանի 2000թ. հոկտեմբերի 26-ի**  
**վճիռը**

**Ստորասբուրգ**

**Հասանը և Չաուշն ընդդեմ Բուլղարիայի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատը՝ հետևյալ դատավորների կազմով՝  
պրն Լ. Վիլդհաբեր, *Նախագահ,*  
պրն Ժ.-Պ. Կոստա,  
պրն Ա. Պաստոր Ռիդրիխո,  
պրն Լ. Ֆերարի Բրավո,  
պրն Գ. Բոնելո,  
պրն Զ. Մակարչիկ,  
պրն Պ. Կ. Ռիս,  
տկն Ֆ. Թուլկենս,  
տկն Վ. Ստրագնիչկա,  
պրն Վ. Բուտկեվիչ,  
պրն Զ. Կասադեվալ,  
տկն Հ. Ս. Գրեվ,  
պրն Ա. Բ. Բակա,  
պրն Ռ. Մարուստե,  
պրն Է. Լևիտս,  
տկն Ս. Բոտուչարովա,  
պրն Մ. Ուգրեխելիձե, *դատավորներ,*

ինչպես նաև տկն Մ. դե Բոեր-Բուքիքիո, *Քարտուղարի տեղակալ:*

Դռնփակ խորհրդակցությունն անցկացնելով 2000թ. մայիսի 29-ին և հոկտեմբերի 4-ին,  
2000թ. հոկտեմբերի 4-ին ընդունեց հետևյալ վճիռը.

**ՎԱՐՈՒՅԹԸ**

1. Գործը, մինչև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») թիվ 11 արձանագրության ուժի մեջ մտնելը կիրառելի դրույթներին համապատասխան, Դատարան է հանձնվել 1999թ. հոկտեմբերի 30-ին՝ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի («Հանձնաժողով») կողմից (թիվ 11 արձանագրության 5-րդ հոդվածի 4-րդ կետ և Կոնվենցիայի նախկին 47-րդ և 48-րդ հոդվածներ):

2. Գործը հարուցվել է Բուլղարիայի դեմ՝ Կոնվենցիայի 25-րդ հոդվածի համաձայն, 1996թ. հունվարի 22-ին Հանձնաժողով ներկայացված գանգատի (N 30985/96) հիման վրա: Գանգատն սկզբում ներկայացրել են չորս դիմողներ: Երկու դիմողների գանգատներն առանձնացնելու և ցուցակից հանելու վերաբերյալ

Հանձնաժողովի որոշման արդյունքում (տե՛ս Հանձնաժողովի՝ 1998թ. սեպտեմբերի 17-ի զեկույցը՝ ըստ Կոնվենցիայի 30-րդ հոդվածի 1(a) կետի), ներկա գործը վերաբերում է մյուս երկու դիմողների գանգատներին: Նրանք են՝ Բուլղարիայի քաղաքացիներ պրն Ֆիքրի Սալի Հասանը և պրն Իսմաիլ Չաուշը՝ ծնված համապատասխանաբար 1963թ. և 1940թ., և բնակվում են Սոֆիայում («դիմողներ»):

3. Դիմողները գտնում էին, որ խախտվել են Կոնվենցիայի 6-րդ, 9-րդ, 11-րդ և 13-րդ հոդվածները և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը՝ կապված Բուլղարիայի մահմեդական կրոնական համայնքի առաջնորդներին հարկադրաբար փոխելու և դրանից հետո վարչական ու դատական գործերի հարուցման հետ:

4. Հանձնաժողովը գանգատն ընդունելի է հայտարարել 1997թ. սեպտեմբերի 8-ին: 1999թ. հոկտեմբերի 26-ի իր զեկույցում (Կոնվենցիայի նախկին 31-րդ հոդված) այն միաձայն տեսակետ է արտահայտել, որ տեղի են ունեցել Կոնվենցիայի 9-րդ և 13-րդ հոդվածների խախտումներ, և որ անհրաժեշտություն չկա առանձին քննության առնելու Կոնվենցիայի 11-րդ հոդվածի վրա հիմնված՝ դիմողների գանգատները, և որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կամ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

5. Դատարանում դիմողներին ներկայացրել է փաստաբան Յոնկո Գրոզևը՝ Սոֆիայից: Բուլղարիայի կառավարությունը («Կառավարություն») ներկայացրել է Արդարադատության նախարարության աշխատակից տիկին Վիոլինա Ջիջևան՝ համաներկայացուցիչ:

6. 1999թ. դեկտեմբերի 6-ին Մեծ պալատի հանձնախումբը որոշել է, որ գործը պետք է քննվի Մեծ պալատի կողմից (Դատարանի կանոնակարգի 100-րդ կանոնի 1-ին կետ): Մեծ պալատի կազմը որոշվել է Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի և Դատարանի կանոնակարգի 24-րդ կանոնի դրույթներին համապատասխան:

7. Դիմողները և Կառավարությունը ներկայացրել են իրենց գրավոր բացատրությունները:

8. Լսումները տեղի են ունեցել 2000թ. մայիսի 20-ին՝ Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում: Պրն Թրուսենը, որը սկզբնապես գործը քննելու համար կազմավորված Մեծ պալատի անդամ էր, ի վիճակի չէր ներկա գտնվելու լսումներին: Նրան՝ որպես Մեծ պալատի անդամ, փոխարինել է պրն Ֆերարի Բրավոն՝ փոխարինող դատավոր (24-րդ կանոնի 5 (b) կետ):

Դատարան ներկայացել էին.

ա) *Կառավարության կողմից*

տկն Վիոլինա Ջիջևան, Արդարադատության նախարարություն, *ներկայացուցիչ,*

բ) *դիմողների կողմից*

պրն Յոնկո Գրոզև, փաստաբան,

*խորհրդատու:*

Ներկա էին նաև դիմողները: Դատարանը լսել է տկն Ջիջևայի և պրն Գրոզևի ելույթները:

Պրն Ֆիշբախը, որն սկզբնապես սույն գործով Մեծ պալատի անդամ էր, լսումներից հետո անկարող էր մասնակցել գործի քննությանը: Նրան փոխարինել է պրն Լեվիթսը՝ փոխարինող դատավոր:

**ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**II. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

## Ա. Դիմողները

9. Պրն Ֆիքրի Սալի Հասանը («առաջին դիմող») 1992 թվականից մինչև վիճարկվող իրադարձությունները եղել է բուլղար մահմեդականների Գլխավոր մուֆտին: Պրն Իսմաիլ Ահմեդ Չաուշը («երկրորդ դիմող») նախկինում դասավանդել է Սոֆիայի իսլամի ինստիտուտում:

Ղատարան ներկայացված իր գանգատում երկրորդ դիմողը նշել է, որ 1995թ. փետրվարից կես դրույքով աշխատել է Գլխավոր մուֆտիի գրասենյակում՝ որպես քարտուղար և «Մահմեդական» թերթի խմբագիր: Կառավարությունը վիճարկել է այս պնդումները:

## Բ. Գործի նախապայմանները

10. 1989թ. Բուլղարիայում սկսվել է ժողովրդավարական գործընթաց: Կարճ ժամանակ անց երկրի որոշ մահմեդական հավատացյալներ և մահմեդական կրոնի աջակիցներ փորձում էին փոխել իրենց կրոնական կազմակերպության ղեկավարներին: Նրանք կարծում էին, որ պրն Գենժևը, որն այդ ժամանակ Գլխավոր մուֆտին էր, և Հոգևոր բարձրագույն խորհրդի անդամները համագործակցել են կոմունիստական վարչակարգի հետ: Հին ղեկավարությունը, պրն Գենժևի հետ՝ որպես բուլղարացի մահմեդականների Գլխավոր մուֆտի, ևս ունեցել է իր համախոհները: Այս իրավիճակը պառակտում և ներքին բախումներ է առաջացրել Բուլղարիայի մահմեդական համայնքի ներսում:

11. 1991թ. Բուլղարիայում անցկացված համաժողովրդական ընտրություններից հետո ժողովրդավարական ուժերի միության և Իրավունքների ու ազատությունների համար շարժման կողմից ձևավորված նոր կառավարությունը 1991թ. վերջին իր ձեռքն է վերցրել իշխանությունը:

1992թ. փետրվարի 10-ին Կրոնական հարցերի դիրեկտորատը՝ Նախարարների խորհրդին կից կառավարական գործակալությունը, անվավեր է ճանաչել պրն Գենժևի 1988թ. ընտրությունը՝ որպես Բուլղարիայի մահմեդականների Գլխավոր մուֆտի, և հայտարարել է նրա պաշտոնանկության մասին: 1992թ. փետրվարի 21-ին Դիրեկտորատը՝ որպես մահմեդականների կրոնական կազմակերպության ժամանակավոր ղեկավար մարմին՝ նշանակել է երեք անձից կազմված ժամանակավոր Հոգևոր բարձրագույն խորհուրդ՝ մինչև բոլոր մահմեդականների ազգային համաժողովի կողմից նոր մշտական ղեկավարության ընտրությունը:

12. Այս դեպքերից հետո պրն Գենժևը, որը պնդում էր, թե ինքը շարունակում է մնալ բուլղար մահմեդականների Գլխավոր մուֆտին, 1992թ. փետրվարի 10-ին դիմել է Գերագույն դատարան: 1992թ. ապրիլի 28-ին Գերագույն դատարանը մերժել է նրա բողոքը: Ղատարանը գտել է, որ Կրոնական հարցերի դիրեկտորատի որոշումը ենթակա չէ դատական կարգով բողոքարկման: Դրան հաջորդել է պրն Գենժևի խնդրանքը՝ վերանայելու Գերագույն դատարանի որոշումը, Գերագույն դատարանի՝ 5 անդամից կազմված պալատի կողմից: 1993թ. ապրիլի 7-ին պալատը մերժել է խնդրանքը: Պատճառաբանելով պրն Գենժևի բողոքի մերժումը՝ պալատը քննարկել է նաև գործի հանգամանքներն ըստ էության: Այն նաև գտել է, որ, inter alia, պրն Գենժևի ընտրությունն անվավեր ճանաչելու մասին Դիրեկտորատի որոշումն այդ մարմնի իրավասության շրջանակներում է: Քանի որ վիճարկվող որոշմամբ հաստատվել էր նաև պրն Գենժևի՝ որպես Գլխավոր մուֆտի «պաշտոնանկությունը», դա եղել է ultra vires: Այնուամենայնիվ, հարկ չկար չեղյալ հայտարարել Դիրեկտորատի որոշման այս մասը, քանի որ, ամեն դեպքում, այն որևէ իրավական հետևանք ունենալ չէր կարող:

13. Ժամանակավոր ղեկավարության կողմից կազմակերպված մահմեդականների ազգային համաժողովը տեղի է ունեցել 1992թ. սեպտեմբերի 19-ին: Այն պրն Ֆիքրի Սալի Հասանին (առաջին դիմող) ընտրել է որպես բուլղար մահմեդականների Գլխավոր մուֆտի, ինչպես նաև հաստատել է Բուլղարիայի մահմեդականների կրոնական կազմակերպության նոր կանոնադրությունը: 1992թ. հոկտեմբերի 1-ին

Կրոնական հարցերի Դիրեկտորատը Դավանանքների մասին օրենքի 6-րդ և 16-րդ բաժինների համաձայն գրանցել է կանոնադրությունը և նոր ղեկավարությանը:

#### **Գ. 1994թ. և 1995թ. սկզբի դեպքերը**

14. Մինչ օրն Չենժևի և օրն Հասանի միջև շարունակվում էր առաջնորդության համար մղվող պայքարը, Կրոնական հարցերի Դիրեկտորատի պաշտոնական դիրքորոշումը 1993թ. և 1994թ. առնվազն առաջին կեսի ընթացքում եղել է այն, որ բուլղար մահմեդականների օրինական Գլխավոր մուֆտին առաջին դիմողն է:

15. 1994թ. հուլիսի 29-ին Կրոնական հարցերի Դիրեկտորատը նամակ է հղել օրն Հասանին՝ պահանջելով կազմակերպել բոլոր մահմեդականների համաժողով՝ տեղական կրոնական առաջնորդների ընտրությունների հետ կապված անորոշություններից ծագող որոշակի խնդիրներ լուծելու համար: Այդ անորոշությունները, մասնավորապես, առնչվում էին մահմեդական կրոնական կազմակերպության ներքին կանոնադրության հակասություններին, և ոչ թե օրենքի խախտումներին:

16. 1994թ. նոյեմբերի 2-ին օրն Չենժևի կողմնակիցները հրավիրել են ազգային համաժողով: Համաժողովն իրեն հայտարարել է մահմեդական հավատացյալների օրինական ներկայացուցիչ, ընտրել այլընտրական ղեկավարություն և ընդունել կանոնադրություն: Պրն Չենժևն ընտրվել է Հոգևոր բարձրագույն խորհրդի նախագահ: Համաժողովից հետո նորընտիր առաջնորդները դիմել են Կրոնական հարցերի Դիրեկտորատին՝ իրենց որպես Բուլղարիայի մահմեդականների օրինական ղեկավարություն գրանցելու համար:

17. 1995թ. հունվարի 3-ին Հոգևոր բարձրագույն խորհուրդը, որի նախագահն էր առաջին դիմողը, որոշել է 1995թ. հունվարի 28-ին հրավիրել ազգային համաժողով:

18. 1994թ. վերջին Բուլղարիայում տեղի են ունեցել խորհրդարանական ընտրություններ: Բուլղարիայի սոցիալիստական կուսակցությունը խորհրդարանում ստացել է ձայների մեծամասնություն և կազմել նոր կառավարություն, որն սկսել է ղեկավարել 1995թ. հունվարից:

19. 1995թ. հունվարի 16-ին Կրոնական հարցերի Դիրեկտորատը նամակ է հղել առաջին դիմողին՝ իբրև Գլխավոր մուֆտի, պահանջելով հետաձգել համաժողովը: Նամակում, *inter alia*, նշված էր.

«Քանի որ Կրոնական հարցերի Դիրեկտորատը մտահոգված է տեղական մուֆտիների ընտրությունների հետ կապված անորոշություններով դեռևս 1994թ. կեսերից, այն բազմիցս ... պահանջել է խնդրի անհապաղ լուծում ... Ցավոք, ոչ մի կոնկրետ միջոց չի ձեռնարկվել ... Արդյունքում կրոնական ներհամայնքային բախումները խորացել են, մահմեդականների շրջանում աճել է դժգոհությունը, որը հանգեցրել է 1994թ. նոյեմբերի 2-ին ազգային արտակարգ համաժողովի գումարման: Այն բացահայտել է մի նոր հիմնախնդիր՝ կապված մահմեդականների կրոնական համայնքի կանոնադրության թերությունների հետ ... (Կանոնադրությունը) չի պարզաբանում ազգային համաժողով գումարելու գործընթացը ... Մասնակիցների հետ կապված հարցերը և նրանց ընտրության կարգը... կարգավորված չեն:

Հետևաբար, պետության գործադիր իշխանության համար իրավաբանորեն անհնարին է դառնում որոշել, թե արդյոք ազգային համաժողովը համապատասխանում է (մահմեդական կրոնի) կանոնադրությանը, և, հետևաբար, արդյոք նրա որոշումները վավեր են: Այս որոշումները, անտարակույս, կարող էին բողոքարկվել Բուլղարիայի որոշ մահմեդականների կողմից: Բացի համատեղ կոմիտեի կազմակերպած համաժողովից, ցանկացած այլ ազգային համաժողով կհանգեցներ նույն հիմնախնդիրներին: Ավելին, Հոգևոր բարձրագույն մարմնի 1995թ. հունվարի 3-ի որոշումը՝ 1995թ. հունվարի 28-ին արտահերթ ազգային համաժողով

գումարելու մասին, ստորագրել են Հոգևոր խորհրդի միայն վեց անդամներ... (և) ... չի կարող համարվել կանոնադրությանը համապատասխանող:

Կրոնական հարցերի դիրեկտորատը չի կարող հաշվի չառնել Գերագույն դատարանի 1993թ. ապրիլի 7-ի եզրակացությունները: Դրանում նշվում է, որ դիրեկտորատը գործել է *ultra vires*՝ պրն Գենժևին Գլխավոր մուֆտիի իր պաշտոնից հեռացնելով, և որ դիրեկտորատի 1992թ. փետրվարի 10-ի որոշումն իրավական հետևանքներ ունենալ չի կարող:

Խիստ անհանգստացած ներկա իրադրությամբ և խորապես մտահոգված Բուլղարիայի մահմեդականների բարօրությամբ՝ Կրոնական հարցերի դիրեկտորատը հավանություն է տալիս Գլխավոր մուֆտիի (առաջին դիմող) այն տեսակետին, թե անիմաստ է արտահերթ համաժողով հրավիրել՝ նախքան կրոնական համայնքի ներսում անհամաձայնության հարթումը ...

Դիրեկտորատը, խորապես համոզված լինելով, որ պետության գործադիր իշխանությունը չի կարող վարչական միջոցներով հարցեր լուծել կրոնական համայնքի ներսում, ... կոչ է անում բարի կամք դրսևորել և համաձայնության գալ միացյալ համաժողով անցկացնելու հարցում»:

20. 1995թ. հունվարի 27-ին Հոգևոր բարձրագույն խորհուրդը, պրն Հասանի նախագահությամբ, ազգային համաժողովի անցկացումը հետաձգել է մինչև 1995թ. մարտի 6-ը:

#### **Դ. Առաջին դիմողի հեռացումը Գլխավոր մուֆտիի պաշտոնից**

21. 1995թ. փետրվարի 22-ին Բուլղարիայի փոխվարչապետ պրն Շիվարովն ընդունել է No. R-12 հրամանագիրը, որում ասվում է.

«Համաձայն Նախարարների խորհրդի 1995թ. փետրվարի 6-ի KV-15 հրամանագրի՝ ընդունված Ղավանանքների մասին օրենքի 6-րդ բաժնի հիման վրա, ես հաստատում եմ Բուլղարիայի մահմեդական կրոնի կանոնադրությունը՝ ընդունված Սոֆիայում»:

22. Հրամանագրում նշված՝ Բուլղարիայի մահմեդական կրոնի կանոնադրությունն իրականում այն է, որն ընդունվել է 1994թ. նոյեմբերի 2-ին պրն Գենժևի կազմակերպած հակամարտ ազգային համաժողովում: Համաձայն KV-15 հրամանագրի, փոխվարչապետ պրն Շիվարովն ստանձնել է Կրոնական հարցերի դիրեկտորատի գործունեությունը վերահսկելու լիազորությունը:

23. 1995թ. փետրվարի 23-ին Նախարարների խորհրդին կից Կրոնական հարցերի դիրեկտորատն ընդունել է որոշում, ըստ որի՝ համաձայն Կրոնական հարցերի մասին օրենքի 6-րդ, 9-րդ և 16-րդ բաժինների և փոխվարչապետի R-12 հրամանագրի, գրանցվել է Բուլղարիայի մահմեդական համայնքի նոր ղեկավարություն: Վերջինիս կազմում են Հոգևոր բարձրագույն խորհրդի նախագահ պրն Գենժևը և բոլոր այն անդամները, ովքեր ընտրվել էին 1994թ. նոյեմբերի 2-ի համաժողովում:

24. Ոչ R-12 հրամանագիրը, ոչ Կրոնական հարցերի դիրեկտորատի որոշումը որևէ պատճառաբանություն կամ պարզաբանում չեն տալիս հետագա ընթացակարգի մասին: Որոշումները պաշտոնապես չեն հաղորդվել պրն Հասանին: Վերջինս դրանց ծանոթացել է մամուլից:

25. 1995թ. փետրվարի 27-ին մահմեդական համայնքի նոր ղեկավարությունը, անձնական թիկնապահների ուղեկցությամբ, ներխուժել է Գլխավոր մուֆտիի՝ Սոֆիայի գրասենյակը, բռնի ուժով վտարել է աշխատակազմին և գրավել շենքը: Դիմողները նշում են, որ այդ անսպասելի գործողություններից հետո ժամանած ոստիկաններն անմիջապես սկսել են պաշտպանել շենքի նոր տերերին: 1995թ. փետրվարի 27-ի դեպքերին հաջորդել է այն, որ նոր ղեկավարները տիրացել են բոլոր փաստաթղթերին ու գույքին, որ պատկանում էր Բուլղարիայի մահմեդական կազմակերպության՝ Սոֆիայի գրասենյակին, իսկ հետագայում նաև՝ երկրի մյուս քաղաքների գրասենյակներին պատկանող փաստաթղթերին ու գույքին: Կրոնական հարցերի դիրեկտորատը նամակներ է ուղարկել այն բանկերին, որտեղ մահմեդական կրոնական կազմակերպությունը հաշիվներ ուներ՝ տեղեկացնելով նոր ղեկավարության մասին: Հաջորդ մի քանի շաբաթների ընթացքում, Դիրեկտորատի

ցուցումով, տեղական ինքնակառավարման մի քանի մարմիններ գրանցել են նոր տեղական մուֆտիների: Աշխատանքից հեռացվել են նաև Գլխավոր մուֆտիի գրասենյակի աշխատակազմը և տասը իսլամական ուսուցիչներ, այդ թվում՝ երկրորդ դիմողը, որոնք փաստացի հեռացված էին, քանի որ նրանց արգելված էր շարունակել աշխատանքը:

26. 1995թ. փետրվարի 27-ի դեպքերից անմիջապես հետո առաջին դիմողն օգնության խնդրանքով դիմել է դատախազություն՝ հայտնելով, որ Գլխավոր մուֆտիի գրասենյակի վրա տեղի է ունեցել անօրինական բռնի հարձակում, և որ Գլխավոր մուֆտիի գրասենյակը գրաված անձինք գործում են ապօրինի և պետք է հեռացվեն գրասենյակից: Համաձայն 1995թ. մարտի 8-ի և 28-ի որոշումների, դատախազությունը հրաժարվել է միջոցներ ձեռնարկել: Դատախազությունը, *inter alia*, գտել է, որ շենքի նոր տերերն օրինական հիմք ունեին այնտեղ մնալու համար, քանի որ գրանցված էին Կրոնական հարցերի դիրեկտորատի կողմից և ներկայացնում էին երկրի մահմեդական համայնքի կրոնական ղեկավարությանը:

## **Ե. R-12 հրամանագրի բողոքարկումը Գերագույն դատարանում**

27. 1995թ. մարտի 23-ին, ի պատասխան առաջին դիմողի պահանջի, Կրոնական հարցերի դիրեկտորատը նամակ է հղել առաջին դիմողին՝ որպես մասնավոր անձի, որում ասվում է.

«Բուլղարիայի մահմեդական կրոնական համայնքը 1888թ., 1891թ., 1919թ., 1949թ., 1986թ., 1992թ. և 1995թ. պարբերաբար փոխել է իր կանոնադրության այն հատվածը, որն առնչվում է կազմակերպական կառուցվածքին, բայց ոչ իր կրոնական հիմքին: 1995թ. փետրվարի 22-ի R-12 հրամանագիրը թույլատրում է փոփոխություն (կազմակերպական), որը կրոնական համայնքն ինքն էր ցանկացել ձեռնարկել ...»:

Այս նամակը, փաստորեն, առաջին փաստաթուղթն էր՝ ընդունված պետական իրավասու մարմինների կողմից, որը հստակ ենթադրում էր, որ նախկին կանոնադրությունը փոխարինվել է R-12 հրամանագրով հաստատված՝ մահմեդական կրոնական համայնքի նոր կանոնադրությամբ, և նոր գրանցված ղեկավարությունը փոխարինել է առաջին դիմողին:

28. 1995թ. ապրիլի 18-ին առաջին դիմողը, Գլխավոր մուֆտիի գրասենյակի անունից, Գերագույն դատարանում բողոքարկել է R-12 հրամանագիրը: Նա նշել է, որ R-12 հրամանագիրը չի ամրագրում ավելին, քան նոր կրոնական կազմակերպության գրանցումը: Մինչդեռ դրան հաջորդած Կրոնական հարցերի դիրեկտորատի որոշումներից և նամակից պարզ է դառնում, որ տեղի ունեցածը կանոնադրության և գործող դավանանքի ղեկավարության փոփոխություն է: Ավելին, այդ ակտի հիմքում ընկած է այն գաղափարը, թե Բուլղարիայի մահմեդական կրոնը կարող է ունենալ միայն մեկ կանոնադրություն և մեկ ղեկավարություն: Պետությունն իրավունք չունի նման տեսակետ պարտադրել մահմեդականներին. միևնույն կրոնի տարբեր կրոնական կազմակերպությունների գոյությունն օրինաչափ է ինչպես այլ երկրներում, այնպես էլ Բուլղարիայում: Հետևաբար, Նախարարների խորհուրդը գործել է իր իրավասության սահմաններից դուրս: Մահմեդական կրոնական համայնքի ներքին տարածայնություններին միջամտելն անօրինական է: Գերագույն դատարանում բանավոր լսումների ժամանակ առաջին դիմողը նշել է նաև, որ խախտվել է Սահմանադրությամբ ամրագրված՝ մահմեդականների կրոնի ազատությունը:

29. Առաջին դիմողը հայտնում է նաև, որ 1994թ. նոյեմբերի 2-ի համաժողովը կազմակերպվել էր այնպիսի անձանց կողմից, որոնք չէին հանդիսանում իր կողմից ղեկավարվող մահմեդական կրոնական կազմակերպության անդամներ: Հետևաբար, նրանք կարող էին գրանցվել որպես նոր կրոնական կազմակերպություն, բայց իրավունք չունեին այլ կազմակերպության ղեկավարությունը փոխելու պահանջ

ներկայացնել: Երկրորդ դիմողը խնդրել է Գերագույն դատարանին՝ կամ չեղյալ հայտարարել R-12 հրամանագիրը՝ որպես իրավունքին հակասող, կամ հայտարարել, որ այդ հրամանագրով գրանցվել է նորաստեղծ կրոնական համայնք, որը չպետք է որևէ ազդեցություն ունենա գոյություն ունեցող մահմեդական կազմակերպության վրա:

30. 1995թ. հուլիսի 27-ին Գերագույն դատարանը մերժել է բողոքը: Ղատարանը նշել է, որ համաձայն Դավանանքների մասին օրենքի՝ Նախարարների խորհրդին վերապահված է լիարժեք հնարավորություն որոշելու, թե արդյոք տվյալ կրոնի կանոնադրությունը ենթակա է գրանցման, թե՛ ոչ: Գերագույն դատարանի իրավասությունն, այսպիսով, սահմանափակվում էր այն հարցի քննությամբ, թե արդյո՞ք վիճարկվող որոշումը կայացվել է իրավասու վարչական մարմնի կողմից, և արդյո՞ք պահպանվել են ընթացակարգային պահանջները: Այս առումով R-12 հրամանագիրն օրինական էր: Ինչ վերաբերում է R-12 հրամանագիրը մեկնաբանելու խնդրանքին, Գերագույն դատարանն իրավասու չէ այդ հատուկ վարույթի շրջանակներում արտահայտել իր կարծիքը, թե արդյո՞ք R-12 հրամանագրով ստեղծվել է նոր իրավաբանական անձ կամ կատարվել են փոփոխություններ, և արդյո՞ք այդ հրամանագրից հետո զուգահեռաբար գոյություն ունեին երկու մահմեդական կրոնական կազմակերպություններ:

## **2. 1995թ. մարտի 6-ի ազգային համաժողովը և դրա որոշումների գրանցումը մերժելու դեմ բողոքն ընդդեմ Նախարարների խորհրդի**

31. Պրն Հասանի կողմից կազմակերպված՝ Բուլղարիայի մահմեդականների ազգային համաժողովը, նախատեսվածի համաձայն, տեղի է ունեցել 1995թ. մարտի 6-ին: Համաժողովի արձանագրության մեջ նշված էր, որ ժողովին մասնակցել է 1553 անձ, որից 1188-ը ձայնի իրավունք ունեցող պաշտոնական պատվիրակներ էին: Նրանք ներկայացրել են 11 տեղական մասնաճյուղեր և կենտրոնական առաջնորդարանը: Համաժողովն ընդունել է մահմեդական համայնքի կանոնադրության որոշ փոփոխություններ և ընտրել ղեկավարություն: Առաջին դիմողը վերընտրվել է որպես Գլխավոր մուֆտի:

32. 1995թ. հունիսի 5-ին առաջին դիմողն, որպես Գլխավոր մուֆտի, գրավոր դիմում է ներկայացրել Նախարարների խորհուրդ՝ խնդրելով գրանցել 1995թ. մարտի 6-ի համաժողովում ընդունված՝ Բուլղարիայի մահմեդականների նոր կանոնադրությունը և Բուլղարիայում մահմեդականների ղեկավարությունը: 1995թ. հոկտեմբերի 6-ին նա կրկնել է իր խնդրանքը: Սակայն Նախարարների խորհուրդը չի արձագանքել այդ խնդրանքին:

33. Առաջին դիմողը դիմել է Գերագույն դատարան՝ 1995թ. մարտի համաժողովի որոշումների գրանցումը Նախարարների խորհրդի կողմից լռելյայն մերժելու դեմ: Դիմելու օրը ճշգրտված չէ:

34. 1996թ. հոկտեմբերի 14-ին Գերագույն դատարանը վճիռ է կայացրել: Վճռում նշվում էր, որ 1992թ. պրն Հասանի գլխավորությամբ գործող Գլխավոր մուֆտիի գրասենյակը գրանցվել էր որպես դավանանք՝ համաձայն Դավանանքների մասին օրենքի 6-րդ բաժնի, և դրանով ձեռք էր բերել իրավաբանական անձի կարգավիճակ, և որից հետագայում չէր զրկվել: Հետևաբար, Նախարարների խորհուրդը պարտավոր էր, համաձայն Օրենքի 6-րդ և 16-րդ բաժինների, քննության առնել նոր կանոնադրության և գործող դավանանքի ղեկավարության կազմում կատարված փոփոխությունները գրանցելու խնդրանքը: Այսպիսով, Գերագույն դատարանը վճռել է, որ Նախարարների խորհրդի լռելյայն մերժումն անօրինական էր, և կարգադրել է գործը հանձնել Նախարարների խորհուրդ, որը պարտավոր էր քննության առնել այն:

35. 1995թ. նոյեմբերի 19-ին փոխվարչապետ Շիվարովը մերժել է գրանցել 1995թ. կանոնադրությունը և պրն Հասանի կողմից ներկայացված՝ Գլխավոր մուֆտիի գրասենյակի ղեկավարությանը: Պրն Հասանին հասցեագրված նամակով Շիվարովը հայտնել է, որ Նախարարների խորհուրդն արդեն գրանցել է Բուլղարիայի մահմեդական համայնքի ղեկավարություն՝ հանձնիս 1994թ. նոյեմբերի համաժողովում ընտրված պրն Գենժևի՝ որպես Հոգևոր բարձրագույն խորհրդի նախագահ:

Փոխվարչապետը եզրակացրել է, որ առաջին դիմողի խնդրանքը «չէր կարող բավարարվել, քանի որ այն հակասում էր Դավանանքների մասին օրենքին»:

36. 1996թ. դեկտեմբերի 5-ին առաջին դիմողն՝ որպես Գլխավոր մուֆտի, դիմել է Գերագույն դատարան՝ ընդդեմ փոխվարչապետի մերժման:

37. 1997թ. մարտի 13-ին Գերագույն դատարանը չեղյալ է հայտարարել այդ մերժումն այն հիմքով, որ այն անօրինական էր և հակասում էր Սահմանադրության 13-րդ հոդվածին: Մերժումը հանդիսանում էր «հակաօրինական վարչական միջամտություն կրոնական համայնքի ներքին կազմակերպմանը»: Գերագույն դատարանը կրկին հանձնարարել է գործը հանձնել Նախարարների խորհրդին՝ գրանցման համար:

38. Չնայած Գերագույն դատարանի կայացրած վճիռներին, Նախարարների խորհուրդը չի գրանցել պրն Հասանի ղեկավարած առաջնորդարանը:

#### **Է. 1997թ. միասնական համաժողովը և գործողությունների հետագա զարգացումը**

39. 1997թ. փետրվարին Բուլղարիայի սոցիալիստական կուսակցությունը փլուզվել և նշանակվել է ժամանակավոր կառավարություն: 1997թ. ապրիլին տեղի են ունեցել համընդհանուր ընտրություններ, ժողովրդավարական ուժերի միությունը խորհրդարանում ստացել է ձայների մեծամասնություն և կազմավորվել է նոր կառավարություն:

40. 1997թ. մարտի 24-ին առաջին դիմողը կրկին դիմել է Նախարարների խորհուրդ՝ գրանցելու 1995թ. կանոնադրությունը և ղեկավարությունը: Դրան հաջորդել են պրն Հասանի մահմեդական առաջնորդարանի և Կառավարության ներկայացուցիչների միջև ոչ պաշտոնական բանակցությունները: Ըստ դիմողների՝ Կառավարությունը կհամաձայնեք գրանցել մահմեդականների նոր ղեկավարությունը, եթե միայն այն ընտրվեք միասնական համաժողովում:

41. Կրոնական հարցերի դիրեկտորատը կոչ է արել պրն Հասանի և պրն Գենժևի երկու հակառակորդ առաջնորդարաններին՝ հարցը լուծել բանակցությունների միջոցով: 1997թ. սեպտեմբերի 12-ին պրն Հասանի առաջնորդարանը որոշել է համաձայնել միասնական համաժողով հրավիրելուն՝ որոշակի պայմաններով: Բանակցությունները վարելու համար ընտրվել է 5 անձից բաղկացած խումբ: 1997թ. սեպտեմբերի 30-ին երկու հակառակորդ առաջնորդարանների ներկայացուցիչներն ստորագրել են համաձայնագիր, ըստ որի 1997թ. հոկտեմբերի 23-ին պետք է գումարվեք բոլոր մահմեդական հավատացյալների ազգային համաժողով: Համաձայնագիրը, որն ստորագրել էին նաև փոխվարչապետ Մեթոդիևը և Կրոնական հարցերի դիրեկտորատի տնօրենը, նախատեսում էր, որ կուսակցությունները չպետք է միջամտեն միավորման գործընթացին: Վերջինիս ձախողման դեպքում Դիրեկտորատը կձեռնարկեք համապատասխան վարչական միջոցներ: Ի լրումն, պրն Գենժևի առաջնորդարանը պարտավորվել է մինչև համաժողովը չտնօրինել մահմեդական սեփականությունը կամ միջոցները:

42. Կրոնական հարցերի դիրեկտորատն ակտիվ մասնակցություն է ունեցել համաժողովի կազմակերպման գործում: Տեղերում մի շարք քաղաքապետներ տեղական մասնաձյուղերին բաժանել են Դիրեկտորատի կնիքը կրող թերթիկներ: Այդ թերթիկները լրացվում էին տեղական մասնաձյուղերի ժողովներում, որտեղ ընտրվում էին ազգային համաժողովի պատգամավորներ, և վավերացվում էին քաղաքապետի ստորագրությամբ:

43. 1997թ. հոկտեմբերի 23-ին համաժողովին մասնակցել է 1384 պատգամավոր: Մասնակցելու իրավունք ունեին միայն այն պատգամավորները, ում ընտրությունը հաստատված էր քաղաքապետի ստորագրությամբ: Համաժողովն ընդունել է Բուլղարիայի մահմեդական դավանանքի նոր կանոնադրությունը և ընտրել նոր ղեկավարություն, որում ընդգրկված էին ինչպես պրն Հասանի առաջնորդարանի

անդամներ, այնպես էլ այլոք: Պրն Հասանը մասնակցում էր համաժողովին և հավանություն է տվել նոր ղեկավարությանը: Իր գլխավորած խմբից վեց առաջնորդ ընտրվել է Հոգևոր բարձրագույն խորհրդի կազմում: Պրն Հասանը նրանց թվում չէր: 1997թ. հոկտեմբերի 28-ին Կառավարությունը գրանցել է նորընտիր ղեկավարությունը:

44. Չնայած պրն Գենժևի ղեկավարությամբ գործող կրոնական համայնքը ներգրավված էր միավորման գործընթացին, ինքը՝ պրն Գենժևը և նրա մի քանի համախոհներ չեն ստորագրել 1997թ. սեպտեմբերի 30-ի համաձայնագիրը և չեն ներկայացել համաժողովին՝ պատճառաբանելով, որ այն ղեկավարվում է պետության կողմից: Համաժողովն ընդունել է մի բանաձև, որով նոր ղեկավարությունը լիազորվում էր իրականացնել ֆինանսական միջոցների վերստուգում և պատասխանատվության կանչել պրն Գենժևին՝ ենթադրվող անօրինական ֆինանսական գործարքների համար:

45. Պրն Գենժևը, որը պնդում էր, որ ինքը շարունակում է մնալ Գլխավոր մուֆտի, դիմել է Գերագույն վարչական դատարան՝ ընդդեմ նոր ղեկավարությունը գրանցելու վերաբերյալ Կառավարության որոշման: 1998թ. հուլիսի 16-ին Գերագույն վարչական դատարանը մերժել է դիմումը՝ համարելով այն անընդունելի: Դատարանը գտել է, որ պրն Գենժևի Գլխավոր մուֆտիի գրասենյակը չունի locus standi նման պահանջով դիմելու համար, քանի որ այն երբևէ գրանցված չի եղել: 1995թ. փետրվարի 22-ին R-12 հրամանագիրը ստորագրվել էր փոխվարչապետ պրն Շիվարովի կողմից, որը, սակայն, պաշտոնապես լիազորված չէր Նախարարների խորհրդի կողմից: KV-15 հրամանագիրը փոխվարչապետին չէր լիազորում հաստատելու դավանանքների կանոնադրությունները: Հետևաբար, պրն Գենժևի Գլխավոր մուֆտիի գրասենյակն իրավաբանորեն գոյություն չի ունեցել, իսկ 1995 թվականից մինչև 1997թ. նրա ընդունած բոլոր ակտերն առոչինչ էին:

### III. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ

46. 1991թ. Սահմանադրության համապատասխան դրույթները սահմանում են.

Հոդված 13. «(1) Կրոններն ազատ են:

(2) Կրոնական հաստատություններն անջատ են պետությունից:

(3) Արևելյան ուղղափառ քրիստոնեությունը համարվում է Բուլղարիայի ավանդական կրոնը:

(4) Կրոնական հաստատությունները, համայնքները և կրոնական հավատքները չպետք է ծառայեն քաղաքական նպատակների»:

Հոդված 37. «(1) Խղճի ազատությունը, մտքի ազատությունը և կրոնի կամ կրոնական կամ աթեիստական հայացքների ընտրությունը չպետք է խախտվեն: Պետությունն աջակցում է հանդուրժողականության պահպանմանը և հարգանքին՝ տարբեր դավանանքների, հետևորդների, ինչպես նաև հավատացյալների և ոչ հավատացյալների միջև:

(2) Խղճի և կրոնի ազատությունը չպետք է օգտագործվի ի վնաս ազգային անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության և բարոյականության կամ այլոց իրավունքների ու ազատությունների»:

47. Սահմանադրական դատարանի 1992թ. հունիսի 11-ի No.5 որոշմամբ տրված է վերոհիշյալ դրույթների պարտադիր իրավաբանական ուժ ունեցող մեկնաբանություն: Ըստ այդ մեկնաբանության, inter alia, պետությունը չպետք է միջամտի կրոնական համայնքների և հաստատությունների ներքին կազմակերպմանը, որը պետք է կարգավորվի սեփական կանոնադրությամբ և կանոններով: Պետությունը կարող է միջամտել կրոնական համայնքի կամ հաստատության գործունեությանը միայն Սահմանադրության 13-րդ հոդվածի 4-րդ կետով և 37-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում: Գնահատականը, թե արդյոք տվյալ դեպքն առկա է,

կարող է հաշվի առնվել նաև կրոնական համայնքի կամ հաստատության գրանցման ժամանակ:

48. Դավանանքների մասին օրենքն ուժի մեջ է մտել 1949թ. և այդ ժամանակից ի վեր մի քանի անգամ փոփոխվել է: Տվյալ դեպքին առնչվող ժամանակահատվածում՝ նշյալ օրենքի համապատասխան դրույթները նախատեսում են.

Բաժին 6. «(1) Դավանանքը ճանաչվում և իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում Նախարարների խորհրդի կամ այդ նպատակով լիազորված փոխվարչապետի կողմից դրա կանոնադրության գրանցմամբ:

(2) Նախարարների խորհուրդը կամ այդ նպատակով լիազորված փոխվարչապետն իրավասու են հիմնավորված որոշմամբ մերժելու դավանանքի ճանաչումը, եթե դրա գործունեությունը խախտում է օրենքը, հասարակական կարգը կամ բարոյական նորմերը»:

Բաժին 9. «(1) Յուրաքանչյուր դավանանք պետք է ունենա առաջնորդարան, որը հաշվետու է պետությանը:

(2) Դավանանքի կանոնադրությունը սահմանում է իր ղեկավար և ներկայացուցչական մարմինները, և վերջիններիս ընտրության ու նշանակման ընթացակարգը»:

Բաժին 16. «(1) Դավանանքի ազգային ղեկավար մարմինները գրանցվում են Նախարարների խորհրդին կից Կրոնական հարցերի դիրեկտորատի կողմից, իսկ տեղական ղեկավար մարմինները՝ տեղական իշխանությունների կողմից, և նրանք ներկայացնում են բոլոր այդ ղեկավար մարմինների անդամների ցուցակը»:

49. Օրենքը նախատեսում է նաև դավանանքի գործունեության վերաբերյալ կանոններ, սահմանում է պարտադիր պայմաններ հոգևորական դասի վերաբերյալ և Կրոնական հարցերի դիրեկտորատին օժտում է որոշակի վերահսկողական գործառնություն: Սահմանադրական դատարանն իր 1992թ. հուլիսի 11-ի No. 5 որոշմամբ գտնում է, որ թեև Դավանանքների մասին օրենքի որոշ դրույթներ հակասահմանադրական են, իր խնդիրը չէ չեղյալ հայտարարել մինչև 1991 թվականի Սահմանադրության ուժի մեջ մտնելն ընդունված իրավական դրույթները. ընդհանուր իրավասության դատարաններն են իրավասու դրանք ճանաչել ոչ կիրառելի:

50. Դիմողները պնդում են, որ օրենքի 6-րդ բաժնի դրույթների հետևանքով և այն պատճառով, որ գոյություն չունի ճանաչված դավանանքների պետական ռեգիստր, պրակտիկայում կրոնական համայնքը կարող է հաստատել իր գոյությունը որպես իրավաբանական անձ՝ ներկայացնելով Կրոնական հարցերի դիրեկտորատի կողմից այդ կապակցությամբ ընդունված նամակի կամ որոշման պատճենը: Նույնը վերաբերում է նաև դավանանքի առաջնորդին, երբ նա հավատարմագրման ներկայացվելու կարիք ունի:

51. Համաձայն Նախարարների խորհրդի 1990թ. դեկտեմբերի 6-ի No.125 փոփոխված որոշման, Կրոնական հարցերի դիրեկտորատի իրավասությունը ներառում է «կապերը պետության և դավանանքի միջև», օժանդակություն կենտրոնական և տեղական վարչական մարմիններին՝ կրոնական խնդիրներին առնչվող հարցերի լուծման գործում, և օգնություն կրոնական կազմակերպություններին՝ կրթության և հրատարակություններին առնչվող խնդիրներում:

52. Բուլղարիայի ներպետական օրենսդրության մեջ չկա որևէ ընթացակարգային հատուկ դրույթ, որը կիրառվի Նախարարների խորհրդի կամ փոխվարչապետի կողմից՝ դավանանքը գրանցելու մասին խնդրանքը քննության առնելիս: Վարչական վարույթի մասին օրենքի 3-րդ բաժինը, որն ընդգրկում է վարչական որոշումներ

կայացնելու և դրանք բողոքարկելու ընդհանուր իրավական ռեժիմը, նախատեսում է, որ այդ օրենքը կիրառելի չէ Նախարարների խորհրդի որոշումների նկատմամբ:

## ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ

### I. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

53. Կառավարությունը Դատարանում պնդում էր, որ գանգատը պետք է մերժել ներպետական պաշտպանության միջոցները սպառված չլինելու պատճառաբանությամբ՝ հաշվի առնելով այն փաստը, որ ներպետական դատական բողոքներն առաջին դիմողի կողմից ներկայացվել են Գլխավոր մուֆտիի գրասենյակի անունից, և ոչ թե նրա անունից անձնապես:

Դիմողները նշեցին, որ իրենք՝ որպես մասնավոր անձ գործ հարուցելու համար որևէ հիմք չունեին: Միակ հնարավորությունը համայնքի անունից արված բողոքն էր: Բացի դրանից, ապացուցվել էր, որ Գլխավոր մուֆտիի գրասենյակի անունից արված բողոքներն անարդյունավետ էին: Դիմողները հիմնվել են Կոնվենցիայի 13-րդ հոդվածի հիման վրա ներկայացրած իրենց գանգատի վրա:

54. Դատարանը կրկնում է, որ Կառավարության կողմից ներկայացված առարկությանը համանման առարկությունները պետք է ներկայացվեն նախքան գանգատի ընդունելիության հարցի քննարկումը (տե՛ս Քեմփբելը և Ֆելն ընդդեմ Միացյալ Թագավորության 1984թ. հունիսի 28-ի վճիռը, Շարքեր Ա no. 80, էջ 31, կետ 57, Արտիկոն ընդդեմ Իտալիայի 1980թ. մայիսի 13-ի վճիռը, Շարքեր Ա no. 37, էջ 13, կետ 27 և Բրունարեսկուն ընդդեմ Ռումինիայի [GC], no. 28342/95, կետեր 52 և 53, ECHR 1999-): Սակայն, Կառավարությունն իր առարկությունն առաջին անգամ ներկայացրել է 1998թ. օգոստոսի 25-ին, երբ Հանձնաժողովն արդեն որոշում էր կայացրել գանգատն ընդունելի համարելու մասին (տե՛ս Հանձնաժողովի 1999թ. հոկտեմբերի 26-ի զեկույցը, կետ 12):

### II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 9-ՐԴ ՀՈՂՎԱԾԸ

55. Դիմողները գանգատվում էին, որ 1995թ. Բուլղարիայում մահմեդական կրոնական համայնքի ղեկավարության վիճարկվող հարկադրական փոփոխությունը և դրան հաջորդած դեպքերի ընթացքը մինչև 1997թ. հոկտեմբերը հանգեցրել են Կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված իրենց իրավունքների խախտման: 9-րդ հոդվածում ասվում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատություն, այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատությունը:

2. Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի և առողջության կամ բարոյականության, կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների»:

#### Ա. 9-րդ հոդվածի կիրառումը

##### 1. Դատարանին ներկայացված փաստարկները

##### (ա) Դիմողները

56. Դիմողները պնդում են, որ սեփական կրոնն այլ անձանց հետ արտահայտելու իրավունքը նշանակում է, որ համայնքը պետք է իրավունք ունենա ինքնուրույն կազմավորվելու՝ համաձայն սեփական կանոնների: Նրանց կարծիքով, ներքին

գործերի կազմակերպմանը միջամտելը վերաբերում է ոչ միայն կազմակերպությանը, այլև կրոնական համայնքի յուրաքանչյուր անհատի, և հատկապես նրանց, ովքեր ուղղակիորեն ներգրավված են կրոնական կամ կազմակերպչական ղեկավարության կազմում:

Դիմողները նշում են, որ կրոնական համայնքի համար կազմակերպական կառուցվածքը սոսկ գոյության ձև չէ, այլ ունի էական նշանակություն: Համայնքի համար խիստ կարևոր հանգամանք է առաջնորդների ինքնությունը, քանզի պատմությունը հարուստ է այնպիսի օրինակներով, երբ հոգևոր առաջնորդներն ստիպում էին հավատացյալներին կրոնափոխվել կամ հիմնում էին նոր դավանանք: Առանձին հավատացյալների համար կարևոր է նաև այն հանգամանքը, թե ինչպես է կազմակերպությունը կառավարում երկրպագության վայրերը կամ ունեցվածքը:

Այսպիսով, ըստ դիմողների՝ կրոնական համայնքի ղեկավարության վիճարկվող հարկադրական հեռացումը ոտնահարում էր իրենց անհատական իրավունքները, որոնք պաշտպանվում են Կոնվենցիայի 9-րդ հոդվածով: Այստեղ առանձնապես շեշտվում է առաջին դիմողի պաշտոնը՝ որպես Գլխավոր մուֆտի, և երկրորդ դիմողի ակտիվ մասնակցությունը համայնքի կյանքին:

## **(բ) Կառավարությունը**

57. Կառավարությունը պնդում է, որ, համաձայն Կոնվենցիայի մարմինների պրակտիկայի, եթե զանգատում Կոնվենցիայի 9-րդ հոդվածը մատնանշվում է Կոնվենցիայի այլ դրույթների հետ մեկտեղ, ապա այն պետք է քննության առնվի՝ հաշվի առնելով նաև այդ դրույթները: Ուստի Կառավարությունը հիմնվում էր Կոնվենցիայի 11-րդ հոդվածի վերաբերյալ իր գրավոր բացատրությունների վրա: Կառավարության կարծիքով, կրոնական շարժառիթ ունեցող ոչ բոլոր ակտերը կարող են հանդիսանալ կրոնի արտահայտում՝ 9-րդ հոդվածի իմաստով:

58. Կառավարությունը նշում է նաև, որ Բուլղարիայում կրոնի ազատությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ: Կրոնական ինստիտուտներն անկախ են, պետության պարտականությունն է ապահովել նրանց միջև հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի մթնոլորտ՝ առանց նրանց ներքին կազմակերպչական կյանքին միջամտելու: Հետևապես, մահմեդական կրոնը պաշտոնապես գրանցվել է համաձայն Դավանանքների մասին օրենքի: Մահմեդական հավատացյալները հաճախում են երկրի ավելի քան 1000 մզկիթներ: Նրանք ունեն կրոնական դպրոցներ, լրագիր և ազատորեն հաստատում են միջազգային կապեր:

Այս հիմքով, Կառավարությունը պնդում է, որ դիմողների ներկայացրած փաստերը որևէ կերպ չեն առնչվում իրենց կրոնը դավանելու իրավունքին՝ լինի դա միանձնյա, թե կոլեկտիվ, մասնավոր կարգով, թե հրապարակավ, ինչպես նաև կրոնական տոներ նշելու, դպրոցներում դասավանդելու իրավունքին:

## **(գ) Հանձնաժողովը**

59. Հանձնաժողովը գտնել է, որ կրոնական համայնքի կազմակերպումը կրոնական կյանքի կարևոր մասն է, և դրան մասնակից լինելը սեփական կրոնի արտահայտման միջոց է: Հետևաբար, դիմողների զանգատները Կոնվենցիայի 9-րդ հոդվածի շրջանակներում են:

## **2. Դատարանի գնահատականը**

60. Դատարանը կրկնում է, որ մտքի, խղճի և կրոնի ազատությունը ժողովրդավարական հասարակության հիմքերից մեկն է՝ Կոնվենցիայի իմաստով: Բազմակարծությունը, որն անբաժանելի է ժողովրդավարական հասարակությունից, և

որը ձեռք է բերվել դարերի ընթացքում, հենվում է դրա վրա (տե՛ս Սերիֆն ընդդեմ Հունաստանի, no. 38178/97, կետ 49, ECHR 1999- և Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի 1993թ. մայիսի 25-ի վճիռը, Շարքեր Ա no. 260-A, էջեր 17-18, կետեր 31, 33):

Չնայած կրոնի ազատությունը հիմնականում վերաբերում է անհատի խղճին, այն նաև նշանակում է, *inter alia*, ինչպես միանձնյա, մասնավոր կարգով, այնպես էլ հրապարակավ և նույն հավատքը դավանող անձանց հետ համատեղ սեփական կրոնն արտահայտելու ազատություն: 9-րդ հոդվածը նշում է կրոնի կամ դավանանքի արտահայտման մի շարք ձևեր, այն է՝ պաշտամունք, քարոզչություն, ծեսեր և արարողություններ: Սակայն 9-րդ հոդվածը չի պաշտպանում ցանկացած գործողություն, որը պատճառաբանվում է կրոնով կամ հավատով (տե՛ս Քալաչն ընդդեմ Թուրքիայի 1997թ. հուլիսի 1-ի վճիռը, Վճիռների և որոշումների ժողովածուներ 1997-IV, էջ 1209, կետ 27):

61. Տվյալ գործով կողմերը տարակարծիք են այն հարցում, թե արդյո՞ք Բուլղարիայում մահմեդական համայնքի կազմակերպմանը և ղեկավարությանն առնչվող հարցերը վերաբերում են առանձին դիմողների կրոնի ազատության իրավունքին, և արդյո՞ք կիրառելի է Կոնվենցիայի 9-րդ հոդվածը: Դիմողները պնդում են, որ վտանգված էին իրենց կրոնական ազատությունները, մինչդեռ Կառավարությունը գանգատները վերլուծում է հիմնականում Կոնվենցիայի 11-րդ հոդվածի տեսանկյունից:

62. Ղատարանը նշում է, որ կրոնական համայնքներն ավանդաբար և ընդհանուր առմամբ գոյություն ունեն կազմակերպված կառուցվածքի տեսքով: Նրանք ենթարկվում են այնպիսի կանոնների, որոնք հավատացյալների մեծ մասի կարծիքով գերբնական ծագում ունեն: Կրոնական ծեսերը հավատացյալների համար ունեն որոշակի իմաստ և սուրբ արժեք, երբ դրանք կատարվում են այդ նպատակով լիազորված առաջնորդների կողմից՝ այդ կանոններին համապատասխան: Կրոնական առաջնորդների անձը համայնքի յուրաքանչյուր անդամի համար, անկասկած, կարևորագույն նշանակություն ունի: Ուստի համայնքի կյանքին մասնակցելը սեփական հավատքի արտահայտման միջոց է, որը պաշտպանվում է Կոնվենցիայի 9-րդ հոդվածով:

Երբ խոսքը վերաբերում է կրոնական համայնքի կազմակերպմանը, 9-րդ հոդվածն անհրաժեշտ է մեկնաբանել 11-րդ հոդվածի լույսի ներքո, որը միավորման կյանքը պաշտպանում է պետության չհիմնավորված միջամտությունից: Այս տեսանկյունից, հավատացյալի կրոնի ազատության իրավունքը ենթադրում է, որ համայնքը կարող է խաղաղ գոյատևել՝ պետության միջամտությունից ազատ: Անշուշտ, կրոնական համայնքների ինքնավար գոյությունն անբաժան է ժողովրդավարական հասարակությունում առկա բազմաձևությունից և, հետևաբար, 9-րդ հոդվածով երաշխավորվող պաշտպանության առանցքային խնդիր է: Այն անմիջականորեն վերաբերում է ոչ միայն համայնքի կազմակերպմանը, այլև համայնքի բոլոր ակտիվ անդամների կողմից կրոնի ազատության իրենց իրավունքի արդյունավետ իրականացմանը: Եթե համայնքի կազմակերպական կյանքը չպաշտպանվեր Կոնվենցիայի 9-րդ հոդվածով, ապա անհատի՝ կրոնի ազատության իրավունքի մյուս դրսևորումները կլինեին վտանգված:

63. Անկասկած, տվյալ դեպքում դիմողները կրոնական համայնքի ակտիվ անդամներ են: Առաջին դիմողը Բուլղարիայի մահմեդականների կողմից ընտրված Գլխավոր մուֆտի է: Հարկ չկա, որ Ղատարանը պարզի, թե արդյոք երկրորդ դիմողը, որը եղել է իսլամի ուսուցիչ, աշխատել է նաև որպես Գլխավոր մուֆտիի գրասենյակի քարտուղար, քանի որ անվիճելի է այն փաստը, որ պրն Չաուշը մահմեդական հավատացյալ է, որը նշված ժամանակահատվածում ակտիվորեն մասնակցել է կրոնական համայնքի կյանքին:

64. Այստեղից հետևում է, որ վիճարկվող իրադարձություններն առնչվում են երկու դիմողների կրոնի ազատության իրավունքին, ինչպես ամրագրված է Կոնվենցիայի 9-րդ հոդվածում: Ուստի այդ դրույթը կիրառելի է:

65. Ղատարանը չի գտնում, որ գործը պետք է քննել միայն համաձայն Կոնվենցիայի 11-րդ հոդվածի, ինչպես առաջարկում է Կառավարությունը: Նման մոտեցման

դեպքում դիմողների գանգատները դուրս կմնան իրենց համատեքստից և կանտեսվի դրանց էությունը:

Ուստի Ղատարանը գտնում է, որ դիմողների գանգատը պետք է քննել համաձայն Կոնվենցիայի 9-րդ հոդվածի: Քանի որ գանգատն առնչվում է կրոնական համայնքի կազմակերպման հարցերին, Ղատարանը կրկնում է, որ 9-րդ հոդվածը պետք է մեկնաբանվի 11-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության լույսի ներքո:

## **Բ. Համապատասխանությունը 9-րդ հոդվածին**

### **1. Ղատարանին ներկայացված փաստարկները**

#### **(ա) Դիմողները**

66. Դիմողները պնդում են, որ պետական մարմինները երկու անգամ միջամտել են մահմեդական համայնքի կազմակերպական կյանքին: Նրանք, նախ և առաջ, 1995թ. փետրվարին փոխել են առաջին դիմողի կողմից ղեկավարվող համայնքի օրինական առաջնորդին, և, երկրորդ, հետագա տարիներին հրաժարվել են ճանաչել առաջին դիմողի վերընտրությունն առաջնորդի պաշտոնում:

Ըստ դիմողների՝ պետության կողմից ձեռնարկված միջոցներն ունեցել են լուրջ հետևանքներ և հանգեցրել են մահմեդական համայնքի ողջ կազմակերպական կառուցվածքի փոփոխության և լիովին խաթարել են համայնքի բնականոն կյանքը: Ողջ եկամուտը սառեցվել է, բռնի ուժով գրավվել են գրասենյակները, փոփոխության է ենթարկվել մզկիթների վերահսկողությունը, անհնարին է դարձել համայնքի փաստաթղթերի և սեփականության օգտագործումն առաջին դիմողի ղեկավարած առաջնորդարանի կողմից: Այսպիսով, պրն Հասանը որպես Բուլղարիայի՝ մեծությամբ երկրորդ կրոնի առաջնորդ, իր գործունեությունը շարունակել է «փողոցում, առանց ֆինանսական միջոցների»: Դեռ ավելին, 1995թ. փետրվարից հետո, երբ Կրոնական հարցերի դիրեկտորատը գրանցեց պրն Գենժևի ղեկավար պաշտոնը, ոչ մի դատարան, ոչ մի կառավարական մարմին և, անշուշտ, ոչ մի անձ հակված չէր ճանաչելու պրն Հասանին՝ որպես մահմեդական հավատացյալների օրինական ներկայացուցիչ:

67. Այնուհետև, դիմողները պնդում են, որ պետության միջամտությունը կրոնական համայնքի ներքին գործերին հիմնված չի եղել հստակ իրավական նորմերի վրա: Նրանք գտնում են, որ Բուլղարիայում գործող՝ կրոնական համայնքների վերաբերյալ օրենքները հստակ չեն և երաշխիքներ չեն ստեղծում ընդդեմ վարչական չարաշահումների: Նրանց կարծիքով, Բուլղարիայում պետության և կրոնական համայնքների միջև հարաբերությունները կարգավորվում են ոչ թե օրենքով, այլ քաղաքականությամբ: Անշուշտ, մահմեդական կրոնի առաջնորդարանի փոփոխությունը զարմանալիորեն զուգահեռվել էր Բուլղարիայում կառավարության փոփոխությանը:

Համապատասխան օրենսդրությունը, որն անփոփոխ էր մնացել վիճարկվող իրադարձություններից հետո, Կառավարությանը տրամադրում էր լայն լիազորություններ՝ իր կամքով կրոնական ղեկավարությունը փոխելու հարցում: Այս կապակցությամբ հստակ ընթացակարգի կամ ենթաօրենսդրական ակտերի պետական գրանցման և դավանանքների ներկայացուցչության բացակայության պայմաններում Կրոնական հարցերի դիրեկտորատի կողմից ընդունված ad hoc նամակների համակարգը, որը նախատեսված էր համայնքը շահագրգիռ երրորդ կողմերին և նույնիսկ դատարաններին ներկայացնելու համար, ինքնըստինքյան, լայն հնարավորություններ է ստեղծում լիազորությունների կամայական իրականացման համար: Դիմողի կարծիքով, Կառավարությունը թերացել էր այս կապակցությամբ իրավական դաշտ ստեղծելու իր պարտականության մեջ:

68. Այնուհետև դիմողները պնդում էին, որ R-12 հրամանագիրը խախտել է համապատասխան օրենսդրությունը, քանի որ ճանաչել է այն կրոնական ղեկավարությունը, որը չի ընտրվել մահմեդական համայնքի կանոնադրությանը և նորմերին համապատասխան: Այս նորմերը նախատեսում էին Հոգևոր բարձրագույն խորհրդի, Գլխավոր մուֆտիի և Վերահսկիչ հանձնաժողովի որոշմամբ հրավիրվող ազգային համաժողովում առաջնորդների ընտրության ընթացակարգը: 1992թ. ճանաչելով այս նորմերը՝ իշխանությունները չպետք է գրանցեին դրանց խախտմամբ ընտրված առաջնորդներին:

Ավելին, ըստ դիմողների, առաջնորդների փոփոխությունն իրականացվել էր կամայական հրամանագրերի միջոցով, որոնք պատճառաբանված չէին և ընդունվել էին առանց կողմերին տեղեկացնելու: Նախարարների խորհրդի մերժումը՝ ենթարկվելու Գերագույն դատարանի երկու վճիռներին, ևս մի կամայական միջամտություն էր համայնքի ներքին կյանքին: Ներպետական օրենսդրության խախտում էր նաև այն, որ դատախազական մարմինները մերժել էին միջամտել և պաշտպանել դիմողին և աշխատակազմին՝ Գլխավոր մուֆտիի գրասենյակից 1995թ. փետրվարի 27-ին առաջին հարկադրաբար վտարումից:

69. Այնուհետև դիմողները պնդում էին, որ միջամտությունը Կոնվենցիայի 9-րդ հոդվածով նախատեսված իրենց իրավունքներին՝ օրինական նպատակ չունեցող կարող լրջորեն պատճառաբանվել, որ Կառավարությունը նպատակ ուներ մահմեդական կրոնական համայնքի ներկայացուցչության մեջ պարզություն մտցնել: Նշված ժամանակահատվածում Կառավարության գործողություններով մի ղեկավարությունը փոխարինվել էր մեկ ուրիշով:

#### **(բ) Կառավարությունը**

70. Կառավարությունը պնդում է, որ դիմողների՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին ոչ մի միջամտություն չի եղել: Կրոնական հարցերի դիրեկտորատի ակտերը դեկլարատիվ բնույթ ունեն: Դրանք իրավունքներ և պարտականություններ չեն առաջացնում, հետևաբար, չեն կարող ազդել այլոց օրինական իրավունքների վրա: Ըստ Ղատարանի նախադեպային իրավունքի՝ կրոնական դավանանքների գրանցման պահանջը՝ որպես այդպիսին, չի կարող անհամատեղելի համարվել Կոնվենցիայի հետ:

71. Կառավարությունը կարծում է, որ քննարկվող ժամանակահատվածում ոչինչ չի խոչընդոտել դիմողների մասնակցությանը մահմեդական համայնքի կազմակերպմանը: Չկա որևէ ապացույց այն մասին, որ դիմողները չէին կարող ժողովներ գումարել կամ ընտրվել մահմեդական համայնքի ղեկավարության կազմում: Ահավասիկ, 1995թ. մարտի 6-ին նրանք ազատորեն գումարել էին նոր ազգային համաժողով, որում առաջին դիմողն վերընտրվել էր Գլխավոր մուֆտիի պաշտոնում: Այն փաստը, որ 1994թ. նոյեմբերի 2-ին տեղի էր ունեցել մեկ այլ ազգային համաժողով, որում ընտրվել էին այլ ղեկավարներ, չէր կարելի վերագրել պետությանը: Այն եղել է միավորվելու ազատության իրավունքի ազատ իրականացման արտահայտություն:

Հետևաբար, Կառավարության կարծիքով, պետությունը չէ, որ փոխել է առաջին դիմողին՝ որպես Գլխավոր մուֆտիի, այլ մահմեդական հավատացյալների ազատ կամքը: Իրականում, պրն Հասանը չէր բավարարում Բուլղարիայի մահմեդական կրոնի կանոնադրությամբ սահմանված՝ Գլխավոր մուֆտիի պաշտոնին ներկայացվող ո՛չ տարիքային, ո՛չ մասնագիտական պահանջները:

72. Կառավարությունը նաև նշում է, որ պետությունը շարունակել է սուբսիդիաներ տրամադրել մահմեդական համայնքին: Այս միջոցները տնօրինելու հարցն ազատորեն լուծվում էր կրոնական համայնքի կողմից: Կառավարությունը, այնուհետև, անհիմն է համարել առաջին դիմողի այն պնդումը, թե իբր նա չի կարողացել կրոնական տոների առիթներով հավատացյալներին դիմել լրատվական միջոցներով, մինչդեռ զանգվածային լրատվամիջոցներն ազատ և անկախ են պետությունից: Կառավարության կարծիքով, այլ ղեկավարության վիճարկվող գրանցման անուղղակի հետևանքների վերաբերյալ բոլոր գանգատներն անհիմն են:

73. Կառավարության կարծիքով, դիմողները հետապնդում են իրենց անձնական կարիերայի շահը՝ վիճարկվող իրադարձությունները Ղատարանում կեղծ ձևով որպես մարդու իրավունքների հետ առնչվող հարցեր ներկայացնելով: Եթե հետևելու լինեինք նրանց տրամաբանությանը, կրոնական համայնքի յուրաքանչյուր ղեկավար, ով կորցրել է հավատացյալների վստահությունը, կարող է զանգատ ներկայացնել: Ղա կարող է վտանգավոր նախադեպ ստեղծել: Կառավարությունը փորձում է հանդգել Ղատարանին հեռու մնալ նման զուտ քաղաքական վեճերից: Կառավարությունը նշում է, որ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը փաստել է, որ Բուլղարիայում կրոնական ազատությունների առնչությամբ առկա է առաջընթաց, և տեղեկացում է Ղատարանին, որ դավանանքների վերաբերյալ նոր օրինագիծ է մշակված:

#### **(գ) Հանձնաժողովը**

74. Հանձնաժողովը միաձայն գտել է, որ տեղի է ունեցել պետության անօրինական միջամտություն մահմեդական համայնքի ներքին կազմակերպմանը և դիմողների կրոնի ազատության իրավունքին:

### **2. Ղատարանի գնահատականը**

#### **(ա) Արդյո՞ք տեղի է ունեցել միջամտություն**

75. Ղատարանը պետք է քննության առնի, արդյո՞ք տեղի է ունեցել պետության միջամտություն մահմեդական համայնքի ներքին կազմակերպմանը և դիմողների կրոնի ազատության իրավունքին:

76. Կառավարության դիրքորոշումն ամբողջովին հիմնված էր այն պնդման վրա, որ կրոնական հարցերի դիրեկտորատի վիճարկվող ակտերը չեն կարող համարվել միջամտություն համայնքի ներքին կազմակերպմանը, քանի որ դրանք սուկ դեկլարատիվ բնույթ ունեն և ավելին չեն, քան վարչական գրանցում: Դիմողները պնդում են, որ այդ ակտերն ունեցել են լուրջ իրավական և փաստացի հետևանքներ, և նպատակ էին հետապնդում հեռացնել մահմեդական համայնքի օրինական ղեկավարությանը և նրանց փոխարինել այդ ժամանակվա կառավարության հետ համագործակցող առաջնորդներով:

77. Ղատարանը նպատակահարմար չի համարում որոշել *in abstracto*, թե արդյո՞ք կրոնական համայնքների պաշտոնական գրանցումը և նրանց ղեկավարության կազմում կատարված փոփոխությունները հանդիսանում են միջամտություն Կոնվենցիայի 9-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքներին:

78. Սակայն, Ղատարանը, ինչպես և Հանձնաժողովը, գտնում է, որ այս ոլորտում իրենց լիազորություններն իրականացնելիս իշխանությունների չեզոք չլինելու մասին վկայող փաստերը պետք է հանգեցնեն այն եզրակացության, որ պետությունը միջամտել է հավատացյալների կրոնի ազատության դրսևորմանը՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի իմաստով: Ղատարանը կրկնում է, որ բացառությամբ մի քանի մասնավոր դեպքերի, Կոնվենցիայով երաշխավորված կրոնի ազատության իրավունքը բացառում է պետության ցանկացած հնարավորություն՝ որոշելու, թե կրոնական հավատքը կամ դրա արտահայտման միջոցներն օրինակա՞ն են, թե՛ ոչ: Պետության գործողություններն ի շահ պառակտված կրոնական համայնքի մեկ առաջնորդի կամ ձեռնարկված՝ համայնքը մեկ առաջնորդի ղեկավարության տակ միավորելուն պարտադրելու նպատակով, նմանապես հանդիսանում է միջամտություն կրոնի ազատությանը: Ժողովրդավարական հասարակություններում պետությունը կարիք չունի միջոցառումներ ձեռնարկել՝ երաշխավորելու համար, որ կրոնական

համայնքները ենթարկվեն մեկ միասնական առաջնորդարանի (տե՛ս Սերիֆն ընդդեմ Հունաստանի, no. 38178/97, կետ 52, ECHR 1999-):

79. Տվյալ գործի առնչությամբ Ղատարանը նշում է, որ R-12 հրամանագրի և Կրոնական հարցերի դիրեկտորատի 1995թ. փետրվարի 23-ի որոշման միջոցով Բուլղարիայի գործադիր իշխանությունը հայտարարել է մահմեդական կրոնական համայնքի ղեկավարության կազմում և կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները: Անբացատրելի է այն հանգամանքը, թե ինչու է նախապատվությունը տրվել այն առաջնորդներին, որոնց ընտրել էին պրն Պենժևի աջակիցների կողմից հրավիրված 1994թ. նոյեմբերի 2-ի ազգային համաժողովում, այլ ոչ առաջին դիմողին, ում պաշտպանում էր համայնքի մյուս մասը, որի մասին վկայում էին 1995թ. մարտի 6-ի ազգային համաժողովի արդյունքները:

Ղատարանն այնուհետև նշում է, որ Բուլղարիայում դավանանքի ղեկավարության օրինականությունը և ներկայացուցչական լիազորությունները վավերացվում են Կրոնական հարցերի դիրեկտորատի կողմից: Այսպիսով, առաջին դիմողը գրկվել էր իր ներկայացուցչական լիազորություններից՝ և իրավաբանորեն, և՛ փաստացի՝ 1995թ. փետրվարի վիճարկվող որոշման ուժով: Ղատարանը հրաժարվել էր աջակցել նրան Գլխավոր մուֆտիի իր պաշտոնից հարկադրաբար հեռացնելու առթիվ՝ իր մերժումը հիմնավորելով R-12 հրամանագրով, ըստ որի Գլխավոր մուֆտիի պաշտոնում նշանակվել էր այլ անձ: Նա, իրավամբ, անկարող էր պահպանել վերահսկողությունը համայնքին պատկանող սեփականության թեկուզ մի մասի նկատմամբ, չնայած, համայնքի անդամներից շատերն անառարկելիորեն աջակցում էին պրն Հասանին: Այսպիսով, վիճարկվող որոշումների հետևանքն այն էր, որ վերջ էր դրվել առաջին դիմողի՝ Գլխավոր մուֆտիի պաշտոնավարությանը, հեռացվել էր կրոնական համայնքի՝ մինչ այդ ձանաչված ղեկավարությունը և անտեսվել էին համայնքի կանոնադրությունն ու նորմերը:

Դրա արդյունքում ծագած իրավիճակն անփոփոխ է մնացել ամբողջ 1996թ. ընթացքում և շարունակվել մինչև 1997թ. հոկտեմբերը, քանի որ իշխանությունները շարունակաբար մերժում էին ձանաչել առաջին դիմողի կողմից կազմակերպված 1995թ. մարտի 6-ի ազգային համաժողովում ընդունված որոշումները:

80. Ճշմարիտ է, որ Պերագույն դատարանը 1996թ. հոկտեմբերի 14-ի և 1997թ. մարտի 13-ի իր վճիռներում ոչ ակնհայտորեն խուսափել է ընդունել, որ պառակտված կրոնական համայնքի նոր ղեկավարության գրանցումը նշանակում է հակառակորդ խմբավորման՝ նախկինում ձանաչված ղեկավարության գործունեության դադարեցում: Ուստի այն գտել է, որ Նախարարների խորհուրդը պարտավոր էր քննության առնել նոր կանոնադրությունը գրանցելու վերաբերյալ առաջին դիմողի խնդրանքը:

Այնուամենայնիվ, այս վճիռները որևէ գործնական հետևանք չեն ունեցել, քանի որ Նախարարների խորհուրդը հրաժարվել է կատարել դրանք:

81. Կառավարության այն փաստարկը, թե ոչինչ չի խոչընդոտել առաջին դիմողին և նրա համախոհներին ժողովներ անցկացնել, չի կարող բավարարել դիմողների գանգատները: Չի կարելի լրջորեն պնդել, որ պետության ցանկացած գործողություն, որը չի սահմանափակում միավորվելու ազատությունը, չի կարող հանդիսանալ միջամտություն Կոնվենցիայի 9-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքներին, նույնիսկ եթե այն բացասաբար էր անդրադարձել կրոնական համայնքի ներքին կյանքի վրա:

82. Հետևաբար, Ղատարանը, ինչպես և Հանձնաժողովը, գտնում է, որ R-12 հրամանագիրը, Կրոնական հարցերի դիրեկտորատի 1995թ. փետրվարի 23-ի որոշումը և Նախարարների խորհրդի կողմից պրն Հասանի ղեկավարած կազմակերպության գոյությունը ձանաչելու հետագա մերժումն ավելին էին, քան սովորական գրանցմանն առնչվող գործողություն կամ նախկինում թույլ տրված սխալների շտկում: Դրանց հետևանքներն ի շահ մահմեդական համայնքի մի խմբավորման էին. դրանց հետևանքով այդ խմբավորմանը տրվել էր միակ պաշտոնական ղեկավարության կարգավիճակ, որով ամբողջովին մերժվել էր մինչ այդ ձանաչված ղեկավարությունը: Իշխանությունների գործողությունները՝ իրավաբանորեն և փաստացի, կոչված էին պաշտոնանկ ղեկավարությանը գրկելու

ցանկացած հնարավորությունից շարունակելու ներկայացնել մահմեդական համայնքի թեկուզ և մի հատվածը և կառավարել նրա գործերը՝ համայնքի մի հատվածի կամքին համապատասխան:

Հետևաբար, տեղի է ունեցել միջամտություն կրոնական համայնքի ներքին կազմակերպմանը և Կոնվենցիայի 9-րդ հոդվածով պաշտպանվող՝ դիմողի կրոնի ազատության իրավունքին:

83. Նման միջամտությունը հանդիսանում է այդ դրույթի խախտում, եթե այն չի նախատեսվում օրենքով և անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և չի հետապնդում օրինական նպատակ ( Չագարե Շալոմ Վե Ցեդեկն ընդդեմ Ֆրանսիայի [GC], no. 27417/95, կետեր 75 և 84, ECHR 2000-):

### **(բ) Արդյո՞ք միջամտությունն արդարացված էր**

84. Դատարանը կրկնում է իր ձևավորված նախադեպը, որի համաձայն Կոնվենցիայի 8-րդ և 11-րդ հոդվածներում «օրենքով նախատեսված» և «օրենքի համաձայն» արտահայտությունները ոչ միայն ենթադրում են, որ վիճարկվող միջոցառումները պետք է որոշակի հիմք ունենան ներպետական իրավունքում, այլև վերաբերում են խնդրո առարկա օրենքի որակին: Օրենքը պետք է լինի պատշաճ կերպով թափանցիկ և կանխատեսելի, այսինքն՝ պետք է ձևակերպվի բավարար հստակությամբ, որպեսզի հնարավորություն տա անհատին, անհրաժեշտության դեպքում, կարգավորելու իր վարքագիծը (տե՛ս Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության 1979թ. ապրիլի 26-ի վճիռը, Շարքեր Ա no. 30, էջ 31, կետ 49, Լարիսիսը և այլոք ընդդեմ Հունաստանի 1998թ. փետրվարի 24-ի վճիռը, ժողովածուներ 1998-1, էջ 378, կետ 40, Հեշմանը և Հերափն ընդդեմ Միացյալ Թագավորության [GC], no. 25594/94, կետ 31 ECHR 1999 և Ռոտարուն ընդդեմ Ռումինիայի [GC], no. 28341/95, կետ 52 ECHR 2000-):

Որպեսզի ներպետական օրենսդրությունը բավարարի այս պահանջները, այն պետք է ապահովի իրավական պաշտպանության միջոցներ ընդդեմ Կոնվենցիայով պաշտպանվող իրավունքներին պետական իշխանության կամայական միջամտության: Հիմնարար իրավունքների վրա ազդեցություն ունեցող հարցերում այն հակասում է իրավական պետության սկզբունքին, որը հանդիսանում է ժողովրդավարական հասարակության՝ Կոնվենցիայով նախատեսված հիմնական սկզբունքներից մեկը, ըստ որի պետության վարչակազմն իրավասու է օրինական սահմանափակումներ նախատեսել: Հետևաբար, օրենսդրությունը պետք է բավարար հստակությամբ սահմանի իրավասու մարմիններին տրամադրվող իրավասությունների շրջանակը և դրանց իրականացման կարգը (տե՛ս վերը նշված Ռոտարուի վճիռը, կետ 55):

Ներպետական օրենսդրության հստակության աստիճանը, որն ամեն դեպքում չի կարող նախատեսել յուրաքանչյուր պատահականություն, որոշակի չափով կախված է տվյալ ակտի բովանդակությունից, դրանով կարգավորվող բնագավառից, այն անձանց թվաքանակից ու կարգավիճակից, ում այն ուղղված է (տե՛ս վերը նշված Հելմանի և Հերափի վճիռը, կետ 31, և Գրոփերա Ռադիո ԱԸ և այլոք ընդդեմ Շվեյցարիայի, 1990թ. մարտի 28-ի վճիռը, Շարքեր Ա no. 173, էջ 26, կետ 68):

85. Դատարանը նշում է, որ տվյալ գործում համապատասխան օրենսդրությունը չի նախատեսում որևէ հիմնավոր չափանիշ, որի հիման վրա Նախարարների խորհուրդը և Կրոնական հարցերի դիրեկտորատը գրանցում է կրոնական դավանանքները և փոփոխում է նրանց ղեկավարությունը՝ ներքին պառակտման և հակադիր շահերի պայմաններում: Ավելին, գոյություն չունեն ընթացակարգային պաշտպանական այնպիսի միջոցներ, ինչպիսիք են իշխանություններին տրամադրված

իրավասությունների կամայական իրականացման դեմ անկախ մարմնին հայց ներկայացնելու հնարավորությունը :

Բացի դրանից, R-12 հրամանագիրը և Դիրեկտորատի որոշումը երբեք չեն ծանուցվել այն անձանց, որոնց համար ունեցել են անմիջական հետևանքներ: Այս ակտերը հիմնավորված և պարզ չէին այնքանով, որ նույնիսկ չէին հիշատակում առաջին դիմողին, թեև դրանք միտված էին նրան Գլխավոր մուֆտիի պաշտոնից հեռացնելուն:

Դատարանն արդեն գտել էր, որ այս ակտերը և Նախարարների խորհրդի կողմից պրն Հասանի ղեկավարությունը ճանաչելու հետագա մերժումն արտահայտում էր կամայական կողմնակալ վերաբերմունք՝ ի շահ պառակտված կրոնական համայնքի մի խմբավորման: Այս համատեքստում հիշատակման է արժանի այն փաստը, որ համայնքի ղեկավարության փոփոխությունը 1995թ., ինչպես նաև՝ 1992 և 1997թթ. տեղի է ունեցել կառավարության փոփոխությունից կարճ ժամանակ անց:

86. Ուստի Դատարանը գտնում է, որ մահմեդական համայնքի ներքին կազմակերպմանը և դիմողների կրոնական ազատությանը միջամտությունը «օրենքով նախատեսված» չէր՝ այն իմաստով, որ այն կամայական բնույթ էր կրում և հիմնված էր այնպիսի իրավական դրույթների վրա, որոնք թույլ էին տալիս գործադիր իշխանության անսահմանափակ իրավասություններ և չէին բավարարում հստակության ու կանխատեսելիության չափանիշները:

87. Դատարանը նաև համաձայն է Հանձնաժողովի հետ այն հարցում, որ Նախարարների խորհուրդը թույլ է տվել բացահայտ անօրինական քայլ, երբ կրկին հրաժարվել է ենթարկվել Գերագույն դատարանի 1996 և 1997թթ. վճիռներին: Ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկը՝ իրավական պետության սկզբունքը, բխում է Կոնվենցիայի բոլոր հոդվածներից և պարտավորեցնում պետությանն ու ցանկացած պետական մարմնի ենթարկվել իր դեմ կայացված դատական կարգադրություններին կամ որոշումներին (տե՛ս Հորնսթին ընդդեմ Հունաստանի 1997թ. մարտի 19-ի վճիռը, ժողովածուներ 1997-II, կետեր 40, 41, և Յատրիդիսն ընդդեմ Հունաստանի [GC], no. 31197/97, կետ 58 ECHR 1999-):

88. Այս հիմքերով, Դատարանն անհրաժեշտ չի համարում շարունակել դիմողների՝ «օրինական նպատակ» և «ժողովրդավարական հասարակության մեջ անհրաժեշտություն» պահանջների հետ կապված գանգատների քննությունը: Նման քննություն կարելի է կազմակերպել միայն այն դեպքում, երբ միջամտության նպատակը հստակ արտացոլված է ներպետական օրենսդրության մեջ:

89. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում:

### III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 11-ՐԴ ՀՈԴՎԱԾԸ

90. Դիմողները գանգատվում են, որ մահմեդական համայնքի ներքին կազմակերպմանը պետության միջամտությունը խախտել է նաև Կոնվենցիայի 11-րդ հոդվածում ամրագրված իրենց իրավունքները: Կառավարությունը հերքում է, որ մահմեդական համայնքը «միավորում» է, և պնդում է, որ ամեն դեպքում վերոհիշյալ հոդվածով պաշտպանվող իրավունքներին պետական միջամտություն տեղի չի ունեցել: Հանձնաժողովն անհրաժեշտ չի համարում առանձին քննության առնել դիմողների գանգատը՝ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի առնչությամբ:

91. Դատարանը, ինչպես և Հանձնաժողովը, գտնում է, որ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի առնչությամբ առանձին հարց չի ծագում: Դատարանն արդեն անդրադարձել է մահմեդական համայնքի ներքին կազմակերպմանը պետության միջամտությանը վերաբերող գանգատին՝ համաձայն Կոնվենցիայի 9-րդ հոդվածի՝ մեկնաբանելով այն 11-րդ հոդվածի լույսի ներքո (տե՛ս վերը, կետ 62 և 65):

### IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 13-ՐԴ ՀՈԴՎԱԾ

92. Դիմողները գանգատվում են, որ իրենք չեն ստացել արդյունավետ պաշտպանություն՝ ընդդեմ կրոնի ազատության իրենց իրավունքի խախտման: Նրանք վկայակոչում են 13-րդ հոդվածը, որում ասվում է.

«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ, եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

## **1. Դատարանին ներկայացված փաստարկներ**

93. Դիմողները նշում են, *inter alia*, որ գործի քննությունը Գերագույն դատարանում, որն ավարտվել է 1995թ. հուլիսի 27-ի վճռով, արդյունավետ պաշտպանության միջոց չէր: Թեև Գերագույն դատարանը կարող էր պատշաճ բավարարում տալ՝ չեղյալ հայտարարելով R-12 հրամանագիրը, այն դիմողների փաստարկները քննարկել էր ոչ ըստ էության: Սրա հետևանքն այն էր, ինչը դիմողները բնութագրել էին որպես «լիակատար գործողությունների ազատության դոկտրինա»: Ըստ դիմողների, Բուլղարիայի Գերագույն դատարանը մշտապես այն դիրքորոշմանն է, որի համաձայն շատ ոլորտներում գործադիր մարմիններն օգտվում են լիակատար իրավասություններից, որոնք ենթակա չեն դատական վերահսկողության:

94. Կառավարությունը պատասխանել է, որ դիմողները որևէ գործ չէին հարուցել որպես մասնավոր անձինք: Այս պարագայում նրանք չեն կարող *in abstracto* վիճարկել, որ օրենսդրությունը չի երաշխավորում արդյունավետ պաշտպանության միջոցներ:

Կառավարության կարծիքով, դիմողները կարող էին պահանջել քրեական գործի հարուցում՝ ըստ Քրեական օրենսգրքի 164-րդ և 165-րդ բաժինների, որոնք վերաբերում են ատելություն քարոզող կոչերին և ուժի ու բռնության միջոցով կրոնի ազատ արտահայտմանը խոչընդոտելուն:

95. Հանձնաժողովը գտել է, որ դիմողները չեն ունեցել արդյունավետ պաշտպանության միջոց, և որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

## **2. Դատարանի գնահատականը**

96. Դատարանը հիշեցնում է, որ 13-րդ հոդվածը երաշխավորում է ներպետական մակարդակում իրավական պաշտպանության միջոցի առկայություն ընդդեմ այն իրավախախտումների, որոնք ըստ Կոնվենցիայի հասկացությունների կարող են համարվել «վիճելի»: Պաշտպանության նման միջոցն իրավասու ներպետական մարմինն պետք է թույլ տա քննության առնելու Կոնվենցիայի համապատասխան դրույթին առնչվող գանգատն ըստ էության և տրամադրելու պատշաճ հատուցում, չնայած մասնակից պետություններն օժտված են որոշակի ազատությամբ Կոնվենցիայի 13-րդ հոդվածով սահմանված իրենց պարտավորությունը կատարելու եղանակի ընտրության հարցում: 13-րդ հոդվածով պահանջվող իրավական պաշտպանության միջոցը պետք է «արդյունավետ» լինի ինչպես իրավաբանորեն, այնպես էլ փաստացի՝ մասնավորապես այն իմաստով, որ դրա կիրառումը չպետք է անհիմն կերպով խոչընդոտվի պատասխանող պետության իշխանությունների գործողությունների կամ թերացումների պատճառով (տե՛ս Չաքիջին ընդդեմ Թուրքիայի [GC], no. 23657/94, կետ 112, ECHR 1999-):

97. Տվյալ գործի կապակցությամբ Ղատարանը գտնում է, որ տեղի է ունեցել դիմողների՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածով նախատեսված իրավունքների խախտում: Հետևաբար, դիմողներն ունենին վիճելի պահանջ՝ Ղատարանի նախադեպային իրավունքի իմաստով:

98. Ղատարանը նաև գտնում է, որ 13-րդ հոդվածով նախատեսված պարտավորության շրջանակը փոփոխվում է՝ պայմանավորված Կոնվենցիայի՝ վկայակոչվող իրավունքի բնույթով: Ղատարանը համակարծիք է Հանձնաժողովի հետ, որ տվյալ գործի ենթատեքստում 13-րդ հոդվածը չի պահանջում, որ յուրաքանչյուր հավատացյալ, ինչպես երկրորդ դիմողի դեպքում, որպես մասնավոր անձ հարուցի գործ՝ կրոնական համայնքի ղեկավարության գրանցման վերաբերյալ որոշումը վիճարկելու պահանջով: Այս կապակցությամբ առանձին հավատացյալների շահերը կարող են պաշտպանվել իրենց ղեկավարների միջոցով և նրանց կողմից նախաձեռնվելիք ցանկացած գործողության աջակցելու միջոցով:

99. Այսպիսով, Ղատարանը գտնում է, որ 13-րդ հոդվածով նախատեսված՝ պետության պարտավորությունը կարող է իրականացվել պաշտպանության այնպիսի միջոցներ տրամադրելու միջոցով, որոնցից օգտվել կարող են միայն կրոնական համայնքի այն ներկայացուցիչները, ովքեր տուժել են համայնքի ներքին կազմակերպմանը պետության միջամտությունից: Տվյալ գործում առաջին դիմող պրն Հասանը մահմեդական կազմակերպության խմբավորման առաջնորդն էր, որն իր պաշտոնից հեռացվել էր պետության՝ վիճարկվող որոշումների արդյունքում: Հետևաբար, Ղատարանը պետք է քննության առնի, թե արդյոք առաջին դիմողի համար՝ որպես կրոնական առաջնորդի, գոյություն են ունեցել պաշտպանության արդյունավետ միջոցներ:

100. Ղատարանը նկատում է, որ պրն Հասանը, որպես Գլխավոր մուֆտի, փորձել է կրոնական համայնքի կազմակերպմանը պետության միջամտության դեմ պաշտպանությունն իրականացնել Գերագույն դատարանում R-12 հրամանագիրը վիճարկելու միջոցով: Գերագույն դատարանը չի վիճարկել պրն Հասանի locus standi-ն և գործն ընդունել է քննության: Այսպիսով, կրոնական համայնքի ներկայացուցիչը հնարավորություն է ստացել օգտվելու դատական պաշտպանությունից:

Այնուամենայնիվ, Գերագույն դատարանը մերժել է գործն ուսումնասիրել ըստ էության՝ գտնելով, որ Նախարարների խորհուրդը լիովին ազատ է որոշելու գրանցել, թե չգրանցել դավանանքի կանոնադրությունը և ղեկավարությունը, և միայն ղեկավարվել է այն ձևական հարցով, թե արդյո՞ք R-12 հրամանագիրն ընդունվել է իրավասու մարմնի կողմից:

Ուստի, R-12 հրամանագրի դեմ Գերագույն դատարան ներկայացված բողոքը պաշտպանության արդյունավետ միջոց չէր:

101. Պաշտպանության արդյունավետ միջոցներ չէին նաև առաջին դիմողի կողմից Գերագույն դատարան ներկայացված մյուս երկու բողոքներն ընդդեմ 1995թ. մարտի 6-ի ազգային համաժողովի արդյունքների գրանցումը Նախարարների խորհրդի կողմից մերժելու: Չնայած Գերագույն դատարանը բավարարել է այս բողոքները, Նախարարների խորհուրդը հրաժարվել է կատարել այդ վճիռները:

102. Կառավարությունը գտնում է, որ դիմողները պետք է պահանջեին քրեական գործի հարուցում ընդդեմ այն անձանց, ովքեր խախտել էին կրոնի ազատության իրենց իրավունքը:

Ղատարանը նկատում է, որ առաջին դիմողն, իրականում, դիմել է դատախազությանը՝ օժանդակություն ստանալու ակնկալիքով, բայց անօգուտ (տե՛ս վերը՝ կետ 26):

Ավելին, Կառավարությունը չի նշում, թե ինչպես կարող էր քրեական գործը (եթե հարուցվեր) հնարավորություն տալ քննության առնելու դիմողների բողոքները, որոնք վերաբերում էին փոխվարչապետի և Կրոնական հարցերի դիրեկտորատի կայացրած որոշումներին, և որոնք, ըստ Գերագույն դատարանի

1995թ. հուլիսի 27-ի վճռի, ձևականորեն օրինական էին: Հստակ չէ, թե ինչպես կարող էր նման քրեական գործի միջոցով շտկվել վիճարկվող իրադրությունը:

103. Կառավարությունը չի նշում պաշտպանության որևէ այլ միջոց, որից կարող էին օգտվել դիմողները կամ կրոնական համայնքի մյուս ներկայացուցիչները:

104. Հետևաբար, Ղատարանը գտնում է, որ պրն Հասանի ղեկավարած խմբավորումը չէր կարող արդյունավետորեն վիճարկել կրոնական համայնքի ներքին գործերին պետության միջամտությունը և ամրապնդել կազմակերպական ինքնավարության իրենց իրավունքը, որը պաշտպանվում է Կոնվենցիայի 9-րդ հոդվածով:

Հետևում է, որ դիմողներից ոչ մեկը չի օգտվել պաշտպանության արդյունավետ միջոցից՝ կապված 9-րդ հոդվածում նշված իրավունքների ոտնահարման հետ: Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

## V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԸ

105. Դիմողները գանգատվում էին, որ որոշ քաղաքացիական իրավունքներ պարզելու կապակցությամբ իրենք հնարավորություն չեն ունեցել դիմելու Ղատարան: Նրանց կարծիքով, R-12 հրամանագիրը նրանց առանձին քաղաքացիական իրավունքների համար եղել է վճռորոշ: Այդ իրավունքներն են՝ առաջին դիմողի իրավունքները՝ որպես Գլխավոր մուֆտի ղեկավարելու համայնքի կրոնական գործերը, տնօրինելու համայնքի միջոցներն ու գույքը և ստանալու վարձատրություն Գլխավոր մուֆտիի պաշտոնում իր ծառայության համար, ինչպես նաև երկրորդ դիմողի իրավունքը՝ շարունակելու իր աշխատանքը որպես իսլամի ուսուցիչ, որից նրան de facto հեռացրել էին: Դիմողները պնդում են, որ իրենց քաղաքացիական իրավունքների մասին որոշում կայացնելը՝ առանց հարցի քննության որևէ փուլում իրենց մասնակցության և առանց Գերագույն ղատարանի կողմից R-12 հրամանագրի դեմ բերված բողոքի ըստ էության քննության, հակասում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածին:

106. Կառավարությունը պնդում է, որ դիմողների կարիերայի անհաջողությունները չեն կարող վիճարկվող որոշումների հետևանք լինել: Դիմողները Գերագույն ղատարանում R-12 հրամանագրի դեմ հարուցված գործի կողմեր չեն եղել: Բացի դրանից, եթե երկրորդ դիմողն ունենար աշխատանքային պայմանագիր, նա կարող էր դրա դադարեցումը վիճարկել դատական կարգով:

107. Հանձնաժողովը համարում է, որ 6-րդ հոդվածի առնչությամբ դիմողների գանգատներն անհիմն են:

108. Ղատարանը նշում է, որ դիմողները չեն հիմնավորել իրենց վիճարկվող քաղաքացիական իրավունքների իրավական հիմքը և էությունը: Ավելին, նրանք չեն մատնանշել որևէ արգելք, որը խոչընդոտել է իրենց քաղաքացիական հայցով դիմելու ղատարան՝ կապված վարձատրության հետ:

Ղատարանը, հետևաբար, գտնում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

## VI. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԸ

109. Ղատարանը նշում է, որ դիմողները չեն կրկնել Հանձնաժողովին ներկայացրած իրենց գանգատները Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առնչությամբ:

Նման հանգամանքներում Դատարանը հիմք չի տեսնում այդ գանգատներն իր նախաձեռնությամբ քննության առնելու համար:

## VII. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

110. Կոնվենցիայի 41-րդ հոդվածում ասվում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի բավարարում է տրամադրում»:

### Ա. Վնասներ

#### 1. Նյութական վնաս

111. Առաջին դիմողը պահանջում է 9.240 նոր բուլղարական լեվ (BGN)՝ կապված իր աշխատավարձի կորստի հետ՝ 1995թ. փետրվարին Գլխավոր մուֆտիի պաշտոնից իրեն հեռացնելուց հետո մինչև 1997թ. նոյեմբերն ընկած ժամանակամիջոցի համար, երբ համատեղ համաժողովում ընտրված Գլխավոր մուֆտին ստանձնել էր իր պարտականությունները:

Նա նաև պահանջում է 5.500 ԱՄՆ դոլար՝ 1995թ. փետրվարից մինչև 1997թ. նոյեմբերն ընկած ժամանակահատվածում որպես Գլխավոր մուֆտի իր գործունեության համար (գրասենյակի վարձավճարը և «Մահմեդական» լրագրի հրատարակումը):

Երկրորդ դիմողը պահանջում է 6.060 BGN՝ որպես Գլխավոր մուֆտիի գրասենյակի քարտուղար և «Մահմեդական» լրագրի խմբագիր՝ 1995թ. փետրվարից մինչև 1997թ. նոյեմբերն ընկած ժամանակահատվածում իր կորցրած աշխատավարձի դիմաց:

112. Դիմողներն իրենց պահանջները հիմնավորում են՝ ներկայացնելով երկու բնակարանների վարձակալության պայմանագրերի պատճենները, «Մահմեդական» լրագրի հրատարակությանը վերաբերվող ծախսերի ստացականները, մահմեդական համայնքի տեղական ժողովների ծախսերի հաշվետվությունը, ոմն պրն Վելի հայտարարությունն այն մասին, թե ինքը ձանաչում է դիմողներին և հաստատում է, որ երկրորդ դիմողը կատարել է Գլխավոր մուֆտիի գրասենյակի «քարտուղարի պարտականությունները» և հանդիսացել է «Մահմեդական» լրագրի խմբագիրը, և, որքան հիշում է, դիմողների աշխատավարձերը համապատասխանաբար կազմել են՝ 280BGN առաջին դիմողի, և 200 BGN՝ երկրորդ դիմողի համար:

Դիմողները նշում են, որ չեն կարող ներկայացնել այլ փաստաթղթային ապացույցներ, քանի որ իրենց եկամտին առնչվող բոլոր փաստաթղթերը մնացել են Գլխավոր մուֆտիի գրասենյակում, որտեղից 1995թ. փետրվարի 27-ին իրենց բռնի ուժով վտարել էին:

113. Կառավարությունը գտնում է, որ դիմողների պահանջներն անհիմն են և չեն ներկայացվել բավարար ապացույցներ: Մասնավորապես, անհիմն են կորցրած աշխատավարձի վերաբերյալ պահանջները, քանի որ դիմողները չեն ներկայացրել գեթ մեկ վճարման թերթիկ: Ավելին, դիմողների ներկայացրած մի շարք փաստաթղթեր հստակ չեն և պարունակում են բազմաթիվ հակասություններ: Երկու բնակարանների վարձակալման պայմանագրերում նշված է, որ վարձակալները բնակարաններն օգտագործել են ոչ միայն որպես գրասենյակ, այլև բնակության նպատակով: Որևէ ապացույց չկա, թե վարձակալներն իրականում ապրել են այնտեղ կամ վճարել են վարձավճարը: Մի պայմանագրում ակնհայտորեն կեղծվել էր «1995-ը» և դարձվել «1996»:

Կառավարությունն այնուհետև, մատնանշում է, որ դիմողներն օգտագործել են հաշվարկների կամայական մեթոդներ: Մասնավորապես, առաջին դիմողն

1995թ. փետրվարի իր աշխատավարձի դիմաց պահանջում է 10.000 «հին» բուլղարական լեվ (BGL) և, ըստ նրա, այդ գումարը համարժեք է 280 «նոր» BGN-ի: Ամենայն հավանականությամբ, այս հաշվարկը կատարվել է բուլղարական լեվի՝ մեկ այլ տարադրամի փոխարկման կուրսի հիման վրա: Իրականում, 1999թ. հուլիսին 1.000 BGL-ն («հին» լեվ) համարժեք էր 1 BGN –ի («նոր» լեվ): Հետևաբար, 10. 000 BGL –ը պետք է համարժեք լինի 10 BGN-ի:

114. Ինչ վերաբերում է «Մահմեդական» լրագրի հրատարակչական ծախսերին, Կառավարությունը պնդում է, որ հակասություններ կան դիմողների նախնական պահանջների, որոնցով նրանք պահանջում էին հատուցել լրագրի երեք համարների ծախսերը, և նրանց հետագա պահանջների միջև, որոնցով նրանք պահանջում էին հատուցել նախ՝ երկու, ապա՝ չորս համարների ծախսերը: Ավելին, լրագիրը գրանցված է երրորդ անձի անունով, և դիմողների՝ լրագրի հրատարակության ծախսերի հատուցման պահանջներն անհիմն էին:

115. Երկրորդ դիմողի կապակցությամբ Կառավարությունը ներկայացնում է մի նամակ՝ 2000թ. մայիսի 8-ի ամսաթվով, Գլխավոր մուֆտիի գրասենյակից, որը հաստատում է, որ պրն Չաուշը, ինչպես ինքն է պնդում, չի աշխատել Գլխավոր մուֆտիի գրասենյակում: Նա ընդհատումներով դասավանդել է Սոֆիայի իսլամի ինստիտուտում: Ավելին, Կառավարությունն ուշադրություն է հրավիրում այն հակասության վրա, որն առկա է երկրորդ դիմողի պահանջների և 2000թ. հունվարի 30-ին կատարված նրա եկամուտների հայտարարագրի միջև, որը ներկայացվել էր իրավաբանական օգնություն ստանալու նպատակների համար: Այդ փաստաթղթում երկրորդ դիմողը նշում է միայն ուսումնական տարվա ընթացքում իր ստացած եկամտի մասին, որ տատանվում է ամսական 40-80 BGN-ի սահմաններում:

116. Կառավարությունը վերջապես պնդում է, որ 1995թ. փետրվարին առաջին դիմողը դադարեցրել է կատարել Գլխավոր մուֆտիի պարտականությունները և, հետևաբար, իրավունք չունի հատուցում պահանջել չկատարած աշխատանքի դիմաց:

117. Ղատարանը գտնում է, որ պրն Չաուշը՝ երկրորդ դիմողը, չի մատնանշել ուղղակի կապ տվյալ գործով հաստատված իրավախախտման և իր եկամտի կորստի կամ իր կրած ենթադրյալ այլ նյութական վնասի միջև: Տվյալ գործը չի առնչվում երկրորդ դիմողին՝ իսլամի ուսուցչի իր աշխատանքից հեռացնելու հանգամանքներին, այլ կրոնի ազատության նրա իրավունքին միջամտությանը, որը կրոնական համայնքի ղեկավարությանը հարկադրաբար հեռացնելու արդյունք էր, որի ակտիվ անդամ է եղել նա: Ուստի նյութական վնասի հատուցման նրա պահանջը չի բավարարվում:

118. Ինչ վերաբերում է առաջին դիմողին, ապա նրա պահանջած գումարները՝ գրասենյակների վարձակալման և լրագրի հրատարակության համար, վերաբերում են Գլխավոր մուֆտիի գրասենյակին, որը սկզբնապես գանգատ էր ներկայացրել Հանձնաժողովին, սակայն հետագայում դուրս էր եկել գործի վարույթից (տե՛ս վերը՝ կետ 2): Չնայած այդ գումարներին, Ղատարանը գտնում է, որ առաջին դիմողը պետք է որոշակի նյութական վնաս կրած լիներ անձամբ՝ որպես Գլխավոր մուֆտիի պաշտոնից իրեն անօրինական կերպով հեռացնելու և բռնի ուժով Գլխավոր մուֆտիի գրասենյակից վտարելու հետևանք: Այս կապակցությամբ, այնուամենայնիվ, նրա պահանջը հիմնավորված չէ բավարար ապացույցներով: Ինչ վերաբերում է նրա եկամտի ենթադրյալ կորստին, նա սոսկ ներկայացրել է մի անձի հայտարարություն, ով ենթադրաբար գիտի իր աշխատավարձի չափի մասին: Հետևաբար, Ղատարանը գտնում է, որ նյութական վնասի պահանջը չի կարող բավարարվել (Ազատության և ժողովրդավարության կուսակցությունն ընդդեմ Թուրքիայի [GC], no. 23885/94, կետ 54, ECHR 1999-):

Ամեն դեպքում, Ղատարանն ընդունում է, որ առաջին դիմողն անկարող էր փաստաթղթային ապացույցներ ներկայացնել այն պատճառով, որ իրեն 1995թ. փետրվարին բռնի ուժով վտարել են իր գրասենյակից, և նա գրկված էր փաստաթղթերից օգտվելու հնարավորությունից: Ուստի, Ղատարանը հաշվի կառնի այս հանգամանքները՝ առաջին դիմողի ոչ նյութական վնասի վերաբերյալ պահանջի մասին որոշում կայացնելիս:

## 2. Ոչ նյութական վնասի հատուցում

119. Առաջին դիմողը պահանջել է 50.000, իսկ երկրորդ դիմողը՝ 30.000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

Դիմողները պնդում են, որ նրանք երկար ժամանակ անհաջողություններ են կրել: Առաջին դիմողը գլխավորել է երկրի՝ իր մեծությամբ երկրորդ կրոնական համայնքը: Հազարավոր հավատացյալների առջև ունեցած նրա պարտականությունն ու պատասխանատվությունը, որոնք հավատ էին ընծայում իրեն որպես իրենց ներկայացուցչի, կրոնական համայնքի օրինական ղեկավարության գործունեության ապահովումն է: Այն փաստը, որ նա չի կարողացել հաջողությամբ իրականացնել իր այս խնդիրը՝ մահմեդական կրոնի ներքին գործերին պետության անօրինական միջամտության հետևանքով, նրան պատճառել է խիստ հուզական տառապանքներ: Այս իրադրությունն ավելի է բարդացել, երբ իշխանությունները ոտնահարել են իրավական պետության սկզբունքը՝ 1995թ. փետրվարից մինչև 1997թ. նոյեմբեր, երբ դիմողները բազմիցս փորձել էին հասնել արդարության, բայց պարզապես արհամարհվել էին: Այս ժամանակահատվածում նրանք շարունակել էին իրենց աշխատանքը՝ հանդիպելով հսկայական դժվարությունների:

120. Կառավարությունը խնդրել է Ղատարանին մերժել դիմողների պահանջները և ընդունել, որ իրավունքի խախտման փաստի ճանաչումն իսկ բավարար արդարացի բավարարում է:

Կառավարությունը նշում է, որ դիմողները չեն նշել որևէ վնաս, որը պատճառվել է իրենց հեղինակությանը կամ առողջությանը, հետևաբար, նրանք չեն կարող պահանջել ոչ նյութական վնասի հատուցում: Վիճարկվող դեպքերի առիթով նրանց հուզական զգացմունքները սոսկ սուբյեկտիվ բնույթ են կրում, և չեն կարող հիմք հանդիսանալ ոչ նյութական վնասի հատուցման պահանջի համար:

Ըստ Կառավարության՝ դիմողների պահանջած գումարները չափազանցված էին և չէին խրախուսվում Ղատարանի նախադեպային իրավունքի կամ Նախարարների կոմիտեի կողմից: Ավելին, դիմողների պահանջները գերազանցում են Բուլղարիայի կենսամակարդակի չափորոշիչները, որտեղ 1992-1998թթ. ժամանակահատվածում ամսական միջին նվազագույն աշխատավարձը կազմում էր 30 ԱՄՆ դոլարին համարժեք գումար, իսկ դատավորի ամսական աշխատավարձը՝ մոտավորապես 140 ԱՄՆ դոլարին համարժեք գումար:

121. Ղատարանը գտնում է, որ մահմեդական համայնքի կազմակերպմանը պետության անօրինական միջամտությունը, անկասկած, դժվարություններ է ստեղծել առաջին դիմողի համար, երբ նա հեռացվել է Բուլղարիայի՝ իր մեծությամբ երկրորդ կրոնական համայնքի ղեկավարի պաշտոնից: Իրադրությունն ավելի է վատթարացել նրա իրավունքների շարունակական խախտմամբ, իշխանությունների գործողությունների համար որևէ հստակ իրավական հիմքի բացակայությամբ և նրան պաշտպանության արդյունավետ միջոցներ չտրամադրելով:

Ղատարանը գտնում է, որ դիմողների պահանջները, այնուամենայնիվ, չափազանց բարձր են՝ նկատի ունենալով նախադեպը (տե՛ս Թլիմենոսն ընդդեմ Հունաստանի [GC], no. 34369/97, կետ 70, ECHR 2000-, Ջեյլանն ընդդեմ Թուրքիայի [GC], no. 23556/94, կետ 50, ECHR 1999- և վերը նշված՝

Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի, կետ 59, Սերիֆն ընդդեմ Հունաստանի, կետ 61, Լարիսիսը և այլոք ընդդեմ Հունաստանի, կետ 74):

Դատարանը գնահատելով արդարացի հիմքով առաջին դիմողին տրամադրում է 10.000 BGN:

Ինչ վերաբերում է երկրորդ դիմողին, ապա Դատարանը վճռում է, որ Կոնվենցիայի խախտումը ճանաչելը նրա պահանջի արդարացի բավարարում է:

## **Բ. Ծախսեր**

122. Դիմողները պահանջել են 3.150 ԱՄՆ դոլար՝ Դատարանում և Հանձնաժողովում գործի վարույթի ընթացքում իրենց փաստաբանի կատարած 105 ժամվա աշխատանքի համար (յուրաքանչյուր ժամը՝ 30 ԱՄՆ դոլար), հավելյալ 640 ԱՄՆ դոլար՝ Դատարանում լսումների ժամանակ կատարած աշխատանքի դիմաց, և 2.685 ԱՄՆ դոլար՝ 2000թ. մայիսի 29-ին Ստրասբուրգում կայացած լսումների կապակցությամբ կատարված ծախսերի դիմաց: Վերջինս ներառում է երկու դիմողների և նրանց դատապաշտպանի օդանավի տոմսերի գումարը՝ 1.560 ԱՄՆ դոլար, երեք օրվա ծախսերի գումարը՝ 1.080 ԱՄՆ դոլար (յուրաքանչյուր անձի համար՝ օրական 120 ԱՄՆ դոլար) և 55 ԱՄՆ դոլար՝ ֆրանսիական մուտքի արտոնագրերի համար:

Դիմողների պահանջած գումարը համարժեք է 13.500 BGN -ի:

123. Կառավարությունը նշում է, որ փաստաբանի աշխատանքի մի մասը վերաբերում էր Գլխավոր մուֆտիի գրասենյակի կողմից Հանձնաժողովին ներկայացված սկզբնական գանգատներին: Սակայն, Գլխավոր մուֆտիի գրասենյակը հետ էր վերցրել իր գանգատները: Կառավարությունն առարկում է նաև դիմողների փաստաբանի համար պահանջված ժամավճարի չափի դեմ, որը մի քանի անգամ գերազանցում է Բուլղարիայում փաստաբանների վարձատրության չափը, և պնդում է, որ փաստաբանի կողմից ներկայացված «ժամացանկը» անհիմն է: Եվ, վերջապես, ո՛չ օդանավի տոմսերի, ո՛չ հարակից ծախսերի գումարը հիմնավորված չէ ապրանքագրով:

124. Դատարանը համաձայն է Կառավարության հետ, որ պահանջվող գումարը որոշակիորեն պետք է կրճատվի՝ ելնելով այն փաստից, որ ծախսերի մի մասը կատարվել է այն գանգատների կապակցությամբ, որոնք հետ են վերցվել, և Հանձնաժողովի կողմից 1998թ. սեպտեմբերի 17-ին հանվել են ցուցակից (տե՛ս կետ 2): Ելնելով Դատարանի նախադեպային իրավունքից՝ պահանջի մնացած մասը չափավոր է թվում (տե՛ս՝ Լուկանովն ընդդեմ Բուլղարիայի 1997թ. մարտի 10-ի վճիռը, ժողովածուներ 1997-, կետ 56, Ասենովը և այլոք ընդդեմ Բուլղարիայի 1998թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, ժողովածուներ 1998-, կետեր 176-178, Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի [GC], no. 31195/96, կետ 79 ECHR 1999-, և Վելիկովան ընդդեմ Բուլղարիայի, no. 41488/98, կետ 104, ECHR 2000-):

Դատարանը համապատասխանաբար ծախսերի կապակցությամբ տրամադրում է 10.000 BGN՝ ավելացված արժեքի հարկի հետ մեկտեղ, որը կարող է գանձվել՝ նվազեցնելով որպես իրավաբանական օգնություն դիմողների ստացած 18.655.87 ֆրանսիական ֆրանկով, ինչը փոխարկելի է բուլղարական լեվի՝ հարցի կարգավորման օրը գործող փոխարժեքով:

## **Գ. Տոկոսներ՝ փոխհատուցումը չվճարելու դեպքում**

125. Համաձայն Դատարանի ունեցած տեղեկությունների՝ սույն վճռի ընդունման օրը Բուլղարիայում կիրառելի՝ օրենքով սահմանված տոկոսադրույքը կազմում է տարեկան 13,85%:

### ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴՏԱՐԱՆԸ

1. Միաձայն մերժում է Կառավարության նախնական առարկությունը,
2. Միաձայն վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում,
3. Միաձայն վճռում է, որ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի առնչությամբ առանձին հարց չի ծագում,
4. Միաձայն վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում,
5. Միաձայն վճռում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել,
6. Միաձայն վճռում է, որ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա ներկայացված գանգատն առանձին քննության առնելու անհրաժեշտություն չկա,
7. Միաձայն վճռում է, որ պատասխանող պետությունը եռամսյա ժամկետում պետք է՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում, առաջին դիմողին վճարի 10.000 (տասը հազար) բուլղարական լևվ,
8. Վճռում է՝ տասնմեկ ձայնով՝ ընդդեմ վեցի, որ երկրորդ դիմողի առնչությամբ Կոնվենցիայի խախտումը ճանաչելը հանդիսանում է արդարացի բավարարում,
9. Միաձայն վճռում է, որ պատասխանող պետությունը եռամսյա ժամկետում պետք է երկու դիմողներին կատարված ծախսերի դիմաց վճարի 10.000 (տասը հազար) բուլղարական լևվ՝ գումարած ավելացված արժեքի հարկը, որը կարող է գանձվել՝ նվազեցնելով 18.655, 87 ֆրանսիական ֆրանկով (տասնութ հազար վեց հարյուր հիսունհինգ ֆրանկ և ութսունյոթ սանտիմ), որը նրանք ստացել են որպես իրավաբանական օգնություն, և որը փոխարկելի է բուլղարական լևվի՝ հարցի կարգավորման օրը գործող փոխարժեքով,
10. Միաձայն վճռում է, որ տարեկան 13,85% տոկոսադրույքով սովորական տոկոս պետք է վճարվի՝ վճռի կայացման օրից եռամսյա ժամկետում վճարումները չկատարելու դեպքում:
11. Միաձայն մերժում է արդարացի բավարարման համար դիմողների պահանջների մնացած մասը:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով և հրապարակվել է դռնբաց լսումների ժամանակ Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգ, 2000թ. հոկտեմբերի 26-ին:

Լուզիուս Վիլդհաբեր  
Նախագահ

Մաուդ դե Բոեր Բուքիքիո  
Քարտուղարի տեղակալ

Համաձայն Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետի և Դատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ կետի, սույն վճռին կցվում են դատավորներ տկն Տուկենսի և պրն Կասադեվալի մասնակի համընկնող համատեղ կարծիքը, որին միացել են նաև դատավորներ պրն Բոնելլոն, տկն Ստրանիկան, տկն Գրեվը և պրն Մարուստեն:

Լ. Վ.  
Մ. Բ.

## ՄՏՐԱԶՆԻՉԿԱՆ, ԳՐԵՎԸ ԵՎ ՄԱՐՈՒՄՏԵՆ

1. Մենք համաձայն չենք մեծամասնության հետ՝ վճռի եզրափակիչ մասի 8-րդ կետի կապակցությամբ, որը վերաբերում է ոչ նյութական վնասի առնչությամբ երկրորդ դիմողի արդարացի բավարարմանը:

2. Քանի որ մտքի, խղճի և կրոնի ազատությունը՝ պաշտպանված Կոնվենցիայի 9-րդ հոդվածով, հանդիսանում է ժողովրդավարական հասարակության հիմքերից մեկը, մենք գտնում ենք, որ սոսկ խախտումը ճանաչելը չի կարող արդարացի բավարարում համարվել:

3. Տվյալ գործով, անկասկած, առաջին և երկրորդ դիմողները վիճարկվող չարաշահումների զոհ են դարձել, և նրանք երկուսն էլ եղել են «կրոնական համայնքի ակտիվ անդամներ ...»: Ավելին, անվիճելի է, որ երկրորդ դիմողը՝ պրն Չաուչը, որն աշխատել է որպես իսլամի ուսուցիչ, «հավատացյալ է և համապատասխան ժամանակահատվածում ակտիվ մասնակցություն է ունեցել կրոնական համայնքի կյանքին» (տե՛ս վճռի կետ 63), և նա «շարունակել է աշխատել՝ դիմակայելով մեծ դժվարությունների» մոտավորապես երեք տարի (տե՛ս կետ 119 in fine):

4. Ելնելով դրանից՝ մենք գտնում ենք, որ երկրորդ դիմողը նույնպես տուժել է և կրել ոչ նյութական վնաս, անշուշտ, ավելի պակաս, քան առաջին դիմողը, սակայն, որն արդարացի բավարարում է պահանջում պրն Չաուչի համար՝ Կոնվենցիայի 41-րդ հոդվածի հիման վրա:

### ԲՐՈՒՄԱՐԵՍԿՈՒՆ ԸՆԴԴԵՄ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԳՈՐԾԸ CASE OF BRUMARESCU v. ROMANIA

(Գանգատ թիվ 28342/95)

Դատարանի 2001թ. հունվարի 23-ի  
վճիռը  
(Արդարացի բավարարում)

## Ստորասրույզ

### **Բրունարեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ նիստ գումարելով որպես Մեծ պալատ, հետևյալ դատավորների կազմով՝

Պրն Լ. Վիլդհաբեր, *Նախագահ,*

Տկն Է. Ժալմ,

Պրն Կ. Լ. Ռոզակիս,

Պրն Ժ.-Պ Կոստա,

Պրն Լ. Ֆերարի Բրավո,

Պրն Լ. Կաֆլիշ,

Պրն Լ. Լուկադես,

Պրն Պ. Կ. Ռիս,

Պրն Վ. Ֆուրման,

Պրն Կ. Յունգվերտ,

Պրն Նիկոլաս Բրաուտցա,

Տկն Ն. Վաջիկ,

Պրն Ժ. Հեդիգան,

Տկն Վ. Թոմասեն,

Պրն Տ. Պանտիրու,

Պրն Է. Լեիտս, *դատավորներ,*

Պրն Լ. Միհայ, *ad hoc դատավոր,*

նաև տկն Ս. Ղե Բորր-Բուքիքիո, Քարտուղարի տեղակալ,

2000թ. հոկտեմբերի 18-ի և 2001թ. հունվարի 10-ի դռնփակ խորհրդակցություններից հետո,

2001թ. հունվարի 10-ին ընդունեց հետևյալ վճիռը.

## **ՎԱՐՈՒՅԹԸ**

1. Գործը Ղատարան է հանձնվել Ռումինիայի քաղաքացի պրն Ղան Բրունարեսկուի կողմից («դիմող») և Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի կողմից («Հանձնաժողով») համապատասխանաբար՝ 1998թ. նոյեմբերի 3-ին և 6-ին: Գործի համար հիմք է հանդիսացել նախկին 25-րդ հոդվածի հիման վրա 1995թ. մայիսի 9-ին պրն Բրունարեսկուի կողմից Ռումինիայի դեմ ներկայացված գանգատը:

2. 1999թ. հոկտեմբերի 28-ի իր վճռում («հիմնական վճիռ») Ղատարանը միաձայն վճռել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում: Ավելի կոնկրետ, 1-ին արձանագրության 1-ին հոդվածի կապակցությամբ Ղատարանը վճռել է, որ վիճարկվող սեփականագրվումը չի արդարացվել, և բոլոր դեպքերում խախտվել է արդարացի հավասարակշռությունը, քանի որ դիմողը կրել է և շարունակում է կրել անհատական և չափազանց մեծ բեռ, որն անհամատեղելի է սեփականության անարգել օգտագործման իրավունքի հետ ( ECHR 1999- VII, կետ 79-80):

3. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝ դիմողը հայցում է մի քանի հազար ԱՄՆ դոլարի արդարացի փոխհատուցում՝ իր կրած նյութական վնասի, ինչպես նաև դատական ծախսերի դիմաց:

4. Քանի որ 41-րդ հոդվածի կիրառման հարցը պատրաստ չէր որոշում կայացնելու համար, Ղատարանը հետաձգել է այդ հարցի լուծումը և

Կառավարությանն ու դիմողին առաջարկել եռամսյա ժամկետում ներկայացնել հարցի կապակցությամբ իրենց գրավոր բացատրությունները և, մասնավորապես, տեղեկացնել իրենց միջև հնարավոր համաձայնության ձեռքբերման մասին (/bid/ կետ 84 և եզրափակիչ մասի 4-րդ կետ): Հետագայում Նախագահը թույլատրելի ժամկետը երկարաձգել է մինչև 2000թ. ապրիլի 15-ը:

5. Կառավարությունն իր բացատրությունները ներկայացրել է 2000թ. հունվարի 28-ին և մարտի 15-ին, դիմողն իր բացատրությունները ներկայացրել է 2000թ. հունվարի 25-ին, մարտի 14-ին և ապրիլի 14-ին:

6. 2000թ. հունիսի 8-ին, Ղատարանի կանոնակարգի 61-րդ կանոնի 3-րդ կետի համաձայն՝ Նախագահը պրն Միրջե Ղան Միրեսկյուին թույլատրել է ներկայացնել գործի առանձին հարցերի վերաբերյալ իր գրավոր բացատրությունները: Այդ բացատրությունները Ղատարանն արդեն ստացել էր 2000թ. մայիսի 30-ին:

7. 61-րդ կանոնի 5-րդ կետի համաձայն՝ Կառավարությունը գրավոր պատասխանն ուղարկել է 2000թ. հուլիսի 21-ին, դիմողը՝ 2000թ. սեպտեմբերի 11-ին, հոկտեմբերի 2-ին և նոյեմբերի 17-ին:

8. Կողմերի ներկայացրած փաստաթղթերից պարզ է դառնում, որ դիմողի բողոքն ընդդեմ 1999թ. ապրիլի 21-ի վճռի (տե՛ս հիմնական վճիռը, կետ 30) 2000թ. փետրվարի 28-ին մերժվել է Բուխարեստի շրջանային դատարանի կողմից: No112/1995 օրենքի հիման վրա ներկայացված բողոքի կապակցությամբ այդ դատարանը գտել է, որ ինքն իրավազոր է փոխհատուցում տրամադրել միայն թիվ 112/1995 օրենքով սահմանված չափանիշների համաձայն: Դիմողն այդ որոշումը գանգատարկել է Բուխարեստի վերաքննիչ դատարանում՝ որպես վերջին ատյանի դատարան: Նրա գանգատը մերժվել է 2000թ. հոկտեմբերի 26-ին: Այնուամենայնիվ, նա դիմել է որոշման կատարումը 6 ամսով հետաձգելու խնդրանքով:

## **ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ**

9. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը նախատեսում է.

«Եթե Ղատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընծեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Ղատարանը, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի բավարարում է տրամադրում»:

### **Ա. Նյութական վնաս**

#### *1. Դիմողի ներկայացրած փաստարկները*

10. Դիմողը շեշտել է, որ պատճառված վնասը Կառավարության կողմից վերականգնելու պատշաճ միջոցը ողջ գույքի, այն է՝ հողամասի և շինության վերադարձնելն է իրեն:

11. Կառավարության կողմից գույքը վերադարձնելու անհնարինության դեպքում, դիմողը նշել է, որ ինքը համաձայն է ստանալու փոխհատուցում, և պահանջել է իր գույքի շուկայական արժեքը: Քանի որ նրա զբաղեցրած բնակարանը և հողամասի համապատասխան մասը Վարչական խորհրդի 1998թ. մարտի 24-ի որոշման հիման վրա արդեն վերադարձվել էր նրան (տե՛ս հիմնական վճիռը, կետ 28), միայն պետք է քննարկել ողջ գույքի արժեքի և բնակարանի ու դրան պատկանող հողամասի արժեքի միջև տարբերության հարցը:

Քանի որ տան մնացած մասը, բացի պրն Միրեսքյուի բնակարանից, չէր վաճառվել վարձակալներին, դիմողը պնդել է, որ Կառավարությունը չի կարող ներկայացնել

որևէ պատճառաբանություն գույքի վերադարձնելը մերժելու համար: Ուստի, նա պահանջում էր փոխհատուցում վճարել միայն պրն Միրեսքյուի բնակարանի դիմաց:

12. Հիմնվելով Ռումինական տեխնիկական փորձագետների ինստիտուտի փորձագետ Դ.Ս-ի զեկույցի վրա, դիմողը՝ որպես 2000թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ գոյություն ունեցող՝ գույքի արժեք նշեց 5.757.000.000 ռումինական լեյ (ROL), որը համարժեք է 250.600 ԱՄՆ դոլարի: Այդ գումարը կազմված է՝ 126.500 ԱՄՆ դոլար՝ հողամասի արժեքի դիմաց, այն է՝ 251 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր քառակուսի մետրի համար, 124.000 ԱՄՆ դոլար՝ շինության արժեքի դիմաց, այն է՝ 216 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր քառակուսի մետրի համար: Իր զբաղեցրած բնակարանի կապակցությամբ, որը կազմում է ողջ տան 39,3%-ը, նա նշել է 48.771 ԱՄՆ դոլարի գումար:

13. Դիմողը նշել է, որ իր սեփականությունը՝ բաղկացած 503 քառակուսի մետր հողամասից և 575 քառակուսի մետր տարածքով շինությունից (գրեթե 200 քառակուսի մետր շրջանաձև տարածք) գտնվում էր Բուխարեստի Կոտրոսենի շրջանում, որը հանդիսանում է՝ Բուխարեստում հողերի գների վերաբերյալ Բուխարեստի քաղաքային խորհրդի մի քանի որոշումներով սահմանված «0» գոտու մաս: Յուրաքանչյուր քաղաքում «0» գոտում գտնվող գույքի արժեքն ամենաբարձրն է: Դիմողը նշում է, որ համաձայն Բուխարեստի քաղաքային խորհրդի մի շարք որոշումների՝ իր սեփական հողամասին նման հողամասերի արժեք է սահմանված՝ յուրաքանչյուր քառակուսի մետրի համար 300 ԱՄՆ դոլար:

Ինչ վերաբերում է շինությանը, նա նշում է, որ 1930թ. կառուցված տունը բաղկացած էր կահավորված ներքնահարկից, առաջին հարկից, երկու վերնահարկից՝ ներառյալ ձեղնահարկը և երկու ավտոտնակները: Իր գույքի արժեքը որոշելու համար նրա ներկայացրած՝ փորձագետի զեկույցում որպես հիմք էր ընդունվում բաց շուկան կարգավորող ակտերով սահմանված չափանիշը: Ըստ դիմողի՝ փորձագետի գնահատումը՝ 216 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր քառակուսի մետրի համար, հաստատվում էր գույքի շուկայի կողմից, որտեղ գները հաճախ գերազանցում են մեկ քառակուսի մետրի համար 300 ԱՄՆ դոլարը:

14. Այս կապակցությամբ, դիմողը քննադատել է Վարչական խորհրդի 1998թ. մարտի 24-ի որոշումը և Կառավարության փորձագիտական զեկույցը, որոնք, երկուսն էլ, ըստ դիմումատառուի, հիմնվում էին թիվ 112/1995 օրենքով սահմանված չափանիշի վրա: Այդ չափանիշները չեն արտահայտում գույքի իրական արժեքը, այլ միայն նվազագույն արժեքը: Թիվ 112/1995 օրենքի նպատակը սեփականաշնորհվող բնակարանների վարձակալներին՝ իրենց զբաղեցրած բնակարանները ցածր գներով գնելու հնարավորություն տալն էր:

## *2. Երրորդ կողմի ներկայացրած փաստարկները*

15. Երրորդ կողմը՝ պրն Միրեսքյուն, նշում էր, որ ինքը եղել է տան առաջին հարկում գտնվող բնակարանի սեփականատերը. պետությունն այն 1973թ. վաճառել էր իր մորեղբորը, և ինքը ժառանգել էր տունը նրանից: Հետևաբար, պետության կողմից այդ տունը դիմողին վերադարձնելը կլիներ անարդարացի: Պրն Միրեսքյուն գտնում էր, որ պետությունը բնակարանի դիմաց դիմողին պետք է վճարի փոխհատուցում:

## *3. Կառավարության բացատրությունները*

16. Կառավարությունը նշել է, որ դիմողի «սեփականությունը»՝ 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, որի կորուստը, ըստ Ղատարանի, հանգեցրել էր այդ հոդվածի խախտման, չէր կարող ընդգրկել երրորդ կողմի՝ պրն Միրեսքյուի բնակարանը: Այդ կապակցությամբ Կառավարությունը վիճարկում էր, որ Բուխարեստի առաջին ատյանի դատարանն օրինական կարգով ձանաչել է, որ դիմողը ողջ տան սեփականատերն է:

17. Կառավարությունը նաև նշել է, որ դիմողը կարող էր իր գույքի վերադարձնելն ապահովել իր գույքը վերադարձնելու պահանջով հայց հարուցելով ներպետական դատարաններում:

18. Ինչ վերաբերում է գույքի գնահատմանը, Կառավարությունն առարկում էր այն տեղեկատվության դեմ, որի վրա հիմնվում էր փորձագետ Ղ.Ս.-ն, ինչպես նաև նրա նշած գումարների դեմ:

Կառավարությունը ներկայացրել է իր փորձագիտական զեկույցը՝ կազմված Ռուսիական տեխնիկական փորձագետների ինստիտուտում գրանցված փորձագետ Վ. Ս.-ի կողմից: Համաձայն փորձագետի եզրակացության, որը հիմնվում էր թիվ 112/1995 օրենքով սահմանված չափանիշների վրա, 1999թ. մարտի 1-ի դրությամբ գույքի արժեքը եղել է 108, 058 ԱՄՆ դոլար, որում 110 ԱՄՆ դոլար շինության յուրաքանչյուր քառակուսի մետրի համար էր, իսկ 87 ԱՄՆ դոլարը՝ հողամասի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար:

Ինչ վերաբերում է Վարչական խորհրդի 1998թ. մարտի 24-ի որոշմանը, Կառավարությունը նշում էր, որ Խորհուրդը դիմողին վերադարձրել էր նրա բնակարանը և հողամասը, այն է՝ 168 քառակուսի մետր: Կառավարությունը որպես այդ բնակարանի և հողամասի արժեք նշում էր 38,578 ԱՄՆ դոլար: Հետևաբար, դիմողին որպես փոխհատուցում կարող էր տրվել գույքի արժեքի (108,058 ԱՄՆ դոլար) և արդեն վերադարձված բնակարանի ու հողամասի արժեքի (38,578 ԱՄՆ դոլար) տարբերությունը, այն է՝ 69,480 ԱՄՆ դոլար:

### *3. Ղատարանի գնահատականը*

19. Ղատարանը կրկնում է, որ վճիռը, որով Ղատարանը գտել է, որ տեղի է ունեցել իրավունքի խախտում, պատասխանող պետության համար առաջացնում է իրավական պարտավորություն՝ վերջ տալ խախտմանը և վերացնել դրա հետևանքներն այնպես, որ հնարավորինս վերականգնվի մինչև խախտումը գոյություն ունեցած վիճակը:

20. Գործի կողմ հանդիսացող պայմանավորվող պետությունները սկզբունքորեն ազատ են Ղատարանի այն վճիռները կատարելու միջոցների ընտրության հարցում, որոնցում փաստվել է իրավունքի խախտում: Ղատարանի վճիռների կատարման կարգի ընտրության հնարավորությունն արտահայտում է երաշխավորված իրավունքների և ազատությունների ապահովման՝ Կոնվենցիայով նախատեսված՝ պայմանավորվող պետությունների առաջնային պարտավորությանն առնչվող ընտրության ազատությունը ( 1-ին հոդված): Եթե խախտման բնույթը թույլատրում է *restitutio in integrum*, պատասխանող պետության խնդիրն է կատարել այդ: Եթե, մյուս կողմից, ներպետական իրավունքը հնարավորություն չի տալիս կամ տալիս է խախտման հետևանքները վերացնելու մասնակի հնարավորություն, 41-րդ հոդվածը Ղատարանին լիազորում է տուժած կողմին տրամադրել պատշաճ բավարարում (տե՛ս Պապամիկայալուսին և այլոք ընդդեմ Հունաստանի 1995թ. հոկտեմբերի 31-ի վճիռը (50-րդ հոդված), Շարքեր Ա no.330-Բ, կետ 34):

21. Հիմնական վճռում Ղատարանը նշել է. «Ղատարանը... նկատում է, որ որևէ հիմնավորում չկա Գերագույն դատարանի վճռով ստեղծված իրավիճակի համար: Մասնավորապես, ո՛չ Գերագույն դատարանը, ո՛չ Կառավարությունը չեն փորձել սեփականությունից զրկելը հիմնավորել էական պատճառներով՝ որպես «ի շահ հասարակության» կատարված սեփականագրկում: Ղատարանը նաև նշում է, որ սեփականատերը չորս տարի է, ինչ զրկվել է իր գույքի նկատմամբ սեփականության իրավունքից՝ առանց փոխհատուցման վճարման, և նրա փորձերը՝ հետ ստանալու իր սեփականությունը, եղել են ապարդյուն ( կետ 79):

22. Ղատարանը գտնում է, որ տվյալ գործի հանգամանքներում գույքը վերադարձնելը, ինչպես կարգադրվում է Բուխարեստի առաջին ատյանի

դատարանի 1993թ. դեկտեմբերի 9-ի վճռով, դիմողի համար հնարավորինս կատեղծեր մի իրավիճակ, որը համարժեք էր մինչև 1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտումը եղած իրավիճակին:

Այս կապակցությամբ, Ղատարանը չի կարող ընդունել Կառավարության փաստարկը, որ դիմողը պետք է նոր հայց հարուցեր՝ գույքը վերադարձնելու պահանջով: Ղատարանը նշում է, որ Կառավարությունն այդ հարցը բարձրացրել էր ավելի վաղ, երբ առարկում էր, որ ներպետական պաշտպանության միջոցները չեն սպառվել, ինչը Ղատարանը մերժել է հիմնական վճռում (տե՛ս կետ 55):

Քանի որ դիմողը հետ էր ստացել իր զբաղեցրած բնակարանը, և այդ վերադարձը նախատեսվել էր Բուխարեստի վերաքննիչ դատարանի 2000թ. հոկտեմբերի 26-ի վճռով ( տե՛ս վերը՝ կետ 8), պետությունը պետք է դիմողի սեփականության իրավունքը վերականգներ տան մնացած մասի նկատմամբ: Սա չի խոչընդոտում որևէ պահանջի, ինչը պրն Միրեսքյուն կարող է ներկայացնել առաջին հարկի բնակարանի սեփականության նկատմամբ, որի վերաբերյալ պահանջը պետք է քննության առնվի ներպետական դատարանների կողմից:

23. Սույն վճռի ընդունումից հետո վեցամսյա ժամկետում Պետության կողմից նման վերադարձը չապահովելու դեպքում Ղատարանը վճռում է, որ պատասխանող պետությունը՝ որպես նյութական վնասի հատուցում, պետք է դիմողին վճարի տան՝ տվյալ պահին գործող արժեքը, որից պետք է հանվի արդեն վերադարձված գույքի արժեքը:

24. Ինչ վերաբերում է փոխհատուցման չափին, Ղատարանը նշում է կողմերի նշանակած փորձագետների կողմից՝ գումարը հաշվարկելիս կիրառված մեթոդների միջև առկա տարբերությունը: Հաշվի առնելով Բուխարեստում գույքի շուկայի գների վերաբերյալ իր տրամադրության տակ եղած տեղեկատվությունը՝ Ղատարանը տան և հողամասի շուկայական արժեքը գնահատում է 215,000 ԱՄՆ դոլար, որի մեջ մտնում է նաև դիմողին արդեն վերադարձված բնակարանի և հողամասի մի մասի արժեքը՝ 33,600 ԱՄՆ դոլար: Փոխհատուցումը, որը Կառավարությունը պետք է վճարի դիմողին, 181,400 ԱՄՆ դոլար է, ներառյալ՝ 42,100 ԱՄՆ դոլար՝ պրն Միրեսքյունի զբաղեցրած բնակարանի արժեքը: Այս գումարը պետք է փոխակերպվի ռումինական լեյի՝ հարցի կարգավորման պահին գործող փոխարկման կուրսով:

## **Բ. Ոչ նյութական վնաս**

25. Դիմողը նաև պահանջում էր 75,000 ԱՄՆ դոլար այն «լուրջ և անտանելի» տառապանքների համար, որը հետևանք էր Գերագույն դատարանի վճռի, որով 1995թ. դիմողը երկրորդ անգամ զրկվել էր իր սեփականությունից, այն բանից հետո, երբ 1993թ. ինքը կարողացել էր վերջ դնել քառասուն տարիների ընթացքում կոմունիստական իշխանությունների կողմից իր իրավունքի խախտմանը:

26. Կառավարությունն առարկել է այդ պահանջի դեմ՝ նշելով, որ ոչ նյութական վնասը չի կարող հաշվի առնվել: Ավելին, Կառավարությունը նշել է, որ որպես ոչ նյութական վնասի հատուցում՝ օգտագործման և տիրապետման իրավունքից զրկելու համար փոխհատուցում տրամադրելը հակասում է Ռումինիայի դատարանների նախադեպային իրավունքին:

27. Ղատարանը գտնում է, որ խնդրո առարկա իրադարձությունները լուրջ միջամտություն են պրն Բրունառեստուի՝ իր գույքն անարգել օգտագործելու իրավունքին, դատարան դիմելու և իր գործի արդարացի քննության իրավունքին, որի կապակցությամբ 15.000 ԱՄՆ դոլարը կլինի արդարացի փոխհատուցում ոչ նյութական վնասի համար:

## **Գ. Ծախսերը**

28. Դիմողը պահանջել է 2.450 ԱՄՆ դոլար, որը բաժանվում էր հետևյալ գումարների.

(ա) 1.644 ԱՄՆ դոլար՝ իր գործը Ղատարանում ըստ էության ներկայացնելու և արդարացի բավարարման հետ կապված հարցերը ներկայացնելու համար իր փաստաբանների վարձատրության դիմաց,

(բ) 50 ԱՄՆ դոլար՝ տարբեր ծախսերի համար (հեռախոս, ֆոտոպատճեններ, նոտարական ծախսեր և այլն),

(գ) 700 ԱՄՆ դոլար՝ փորձագիտական եզրակացության համար ( 500 ԱՄՆ դոլար՝ եզրակացության և 200 ԱՄՆ դոլար 2000 թ. սեպտեմբերի 1-ին գույքը գնահատելու հետագա աշխատանքների համար),

(դ) 300 ֆրանսիական ֆրանկ՝ Ստրասբուրգ մեկնելու նպատակով մուտքի արտոնագիր ստանալու համար:

29. Կառավարությունը չի առարկել այս գումարների դեմ, պայմանով, որ ներկայացվեին վճարման անդորրագրերը:

30. Ղատարանը գտնում է, որ ծախսերը, որոնց կապակցությամբ ներկայացվել են անդորրագրեր, փաստացիորեն և անհրաժեշտաբար կատարվել են: Ուստի Ղատարանը գտնում է, որ պետք է տրամադրել հայցվող 2.450 ԱՄՆ դոլար գումարը՝ դրանից հանած 3.900 ֆրանսիական ֆրանկ, որը Եվրոպայի խորհրդի կողմից տրամադրվել էր որպես իրավաբանական օգնություն: Այդ գումարը պետք է փոխարկվի ռումինական լեյի՝ հարցի կարգավորման ժամանակ գործող փոխարկման կուրսով:

#### **Դ. Տոկոսներ՝ փոխհատուցումը չվճարելու դեպքում**

31. Քանի որ տրամադրվող գումարները հաշվարկվում են ամերիկյան դոլարով, Ղատարանը գտնում է, որ նպատակահարմար է չվճարման համար տոկոսները սահմանել տարեկան 6%:

#### **ԱՅՍ ՀԻՄՔՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ**

1. Վճռում է, որ պատասխանող պետությունը պետք է վեցամսյա ժամկետում դիմողին վերադարձնի տունը և հողամասը, որում այն տեղակայված է, բացառությամբ այն բնակարանի և դրան պատկանող հողամասի հատվածի, որն արդեն վերադարձվել է,
2. Վճռում է, որ այդ վերադարձը չիրականացնելու դեպքում պատասխանող պետությունը պետք է դիմողին նույն վեցամսյա ժամկետում վճարի 181,000 ԱՄՆ դոլար՝ որպես նյութական վնասի հատուցում, որը ենթակա է փոխարկման՝ հարցի կարգավորման օրը գործող փոխարկման կուրսով,
3. Վճռում է, որ պատասխանող պետությունը պետք է դիմողին վճարի հետևյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն ռումինական լեյի՝ հարցի կարգավորման օրը գործող փոխարկման կուրսով:
  - ա) 15.000 ԱՄՆ դոլար՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում,
  - բ) 2,450 ԱՄՆ դոլար՝ ծախսերի դիմաց. այդ գումարը նվազեցվում է 3,900 ֆրանսիական ֆրանկով, որը տրամադրվել էր որպես իրավաբանական օգնություն:
4. Վճռում է, որ (2) և (3) կետերում նշված գումարները հարցի կարգավորումից հետո սահմանված ժամկետում չվճարելու համար պետք է վճարվի տարեկան 6%:
5. Մերժում է արդարացի բավարարման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով, ծանուցված է 2001թ. հունվարի 23-ին՝ Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն:

Մաուդ դե Բոեր-Բուքիքիո  
Քարտուղարի տեղակալ

Լուզիուս Վիլդհաբեր  
Նախագահ

### Լատիներեն արտահայտությունների բացատրությունը

**Actus reus** – հանցագործության օբյեկտիվ կողմը

**De facto** - փաստացիորեն

**Ejesdum generis** – միևնույն տեսակի, բնույթի կամ դասի

Նորմատիվ ակտի կառուցվածքի առնչությամբ՝ “*ejesdum generis*” կանոնը նշանակում է, որ եթե ընդհանուր բնույթի բառերը հաջորդում են կոնկրետ անձանց կամ իրերի թվարկմանը, նման ընդհանուր բնույթի բառերը ենթակա չեն լայն մեկնաբանության. դրանք վերաբերում են միայն այն նույն տեսակին կամ դասին պատկանող անձանց կամ իրերին, որին պատկանում են նշված կոնկրետ անձինք կամ իրերը

**Ex officio** – ի պաշտոնե

**In abstracto** – վերացականորեն

**Inter alia** - ի թիվս այլ հիմքերի, պայմանների, հանգամանքների կամ գործոնների

**Lex specialis** – հատուկ իրավունք

**Locus standi** - դատարան դիմելու իրավունք

**Mutatis mutandis** – հանգամանքներից բխող փոփոխություններով, անհրաժեշտ փոփոխություններ կատարելով

**Ratio legis** – օրենքի շարժառիթ, օրենքի գոյության պատճառ

**Ratione temporis** – ժամանակի հանգամանք

**Res judicata** - դատարանի մեկ այլ որոշմամբ հաստատված փաստերի կրկին ապացուցման բացառումը (նախադատելի փաստեր)

**Sine qua nom** – պարտադիր, անհրաժեշտ

**Status quo ante** - տվյալ իրադրությանը նախորդող վիճակ

**Sui generis**- եզակի, իր տեսակի մեջ միակը

**Ultra vires** – իրավասությունների, լիազորությունների շրջանակից դուրս

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,  
ՀՀ Դատավորների միության նախագահ  
Ալվինա Գյուլումյանի ընդհանուր խմբագրությամբ  
ԵՐԵՎԱՆ 2002

Տպագրվում է ՀՀ Դատավորների միության  
խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝

ՀՀ սահմանադրական դատարանի  
աշխատակազմի գլխավոր մասնագետ  
Լիանա Հակոբյան

Վճիռները անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը

Մարինա Մխիթարյանը

Սուսաննա Բաղդասարյանը

Կարինե Բալայանը

Մարդու իրավունքների եվրոպական դատարան. վճիռների ժողովածու  
(Խմբագիր՝ Ա. Գյուլումյան, ՀՀ Դատավորների միություն. Եր., 2002, - էջ)

*Ժողովածուի մեջ ընդգրկվել են Մարդու իրավունքների եվրոպական  
դատարանի 2000-2001թթ. այն վճիռները, որոնք կարող են նախադեպային  
նշանակություն ունենալ ներպետական դատական պրակտիկայի համար:*

*Ժողովածուի նպատակն է օգնել դատավորներին, մյուս իրավակիրառողներին,  
մարդու իրավունքների հարցերով զբաղվող հասարակական  
կազմակերպություններին, ինչպես նաև եվրոպական դատարան դիմելու  
մտադրություն ունեցող անձանց ծանոթանալու եվրոպական դատարանի  
պրակտիկային:*